

ԿԱՐԼԵՆ
ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՍՐՏԱԿ ՉՈՓՊԱՅԱՆ





929: 891.981 Չոլաքյան

ԿԱՐԼԵՆ
ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐԾԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

Ա II
75821



ԵՐԵՎԱՆ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1987

ԳՄԴ 83.3Հ1
Ջ 755 դ

Դալլաքյան Կ.

Արշակ Ջոպանյան։ Կյանքը և գործը.— Եր.։ Սովետ. գրող, 1987, 480 էջ։

Գրքում լուսաբանվում է 20-րդ դարի գրական, հասարակական ու մշակութային նշանավոր գործիչ Արշակ Ջոպանյանի կյանքն ու գործը։

Դ 4608010201 (42)
705(01) 86 — 86 «S» ԳՄԴ 83.3Հ1

© *«Սովետական գրող», ձևավորման համար, 1987*

Նվ ամեն հնչ, որ իմ կյանքիս մեջ կրցած եմ
Կատարել գործ մը հօգուտ մարդկութեան
Կամ միս-արյուն տալ երազի մը սիրուն,
Քեզ եմ խորհած, ու խորին իմ հոգիին
Քեզ եմ ոգած և մրմնջած եմ. «Ո՛վ դուն,
Որ կը հնհակես վրաս սիրով կաթոգին,
Տես, արժանի՞ եմ քեզի, գո՞հ ես ինձմե...»

Արշակ Չոպանյան, «Մուրս»

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Արշակ Չոպանյանը ապրեց մի կյանք և իր նպատակի ճանապարհին դրսևորեց հոգու արիութիւն, խառնվածքի ու կամքի գերհամառ ուժ՝ նույնքան մեծ ու դեղեցիկ, որքան նրա գործը նշավ։

Ասես վերածնության դարաշրջանի գործիչ լիներ կարողությունների համապարփակությամբ ու հետաքրքրությունների անսպառությամբ, և նրանից՝ մեր պատմության վերջին հարյուրամյակի ծնունդն էր, որ պաղաբերից առաջ, անհաշտում՝ միշտ դարին ու ժողովրդին կապված բոլոր նյարդերով, արտով ու մըտքով, նրա բարձր ու հիմնական շահերի ջերմ պաշտպանն ու արտահայտիչը եղավ դառն ու դժվարին ազատագրական պայքարի ուղիներում։

Հենվելով իր նախորդների կատարած գործի վրա, բայց սկսելով գրեթե նորից և գրեթե միայնակ, Արևմտյան Եվրոպայի քաղաքակիրթ ազգերի հայացքի առջև բարձրացրեց հայկական քաղաքակրթության մի ամբողջ լեռ և մի բուռ կարիկացանք չէ, այլ հպարտությամբ պահանջեց ըստ արժանվույն հիացմունք ու խոնարհում՝ իր ժողովրդի վեհ մշակույթի հանդեպ։

Պրպտող ու խանդոտ միտքը սիրառատ սրտի թևլադրանքով մեր իսկ մշակույթի ընդերքում պեղեց, վեր հանեց փոշիներից ու խլեց մոռացումի գրկից հայ միջնադարյան քնարերգության մի ամբողջ շարք դպաթներ, որոնցից յուրաքանչյուրը փառքի դափնեպսակ կարող է լինել որևէ ժողովրդի համար։

Քաղաքական ու հասարակական գործիչ, բանաստեղծ ու արձակագիր, խմբագիր և լրագրող, մշակույթի պրոպագանդիչ և ուսուցիչ-մանկավարժ, գրականագետ ու տնտեսագետ... մի ամբողջ համայնագիտարան, որ բոլոր այդ ասպարիզներում բարձրացել է վեր՝ իր բազմալար տաղանդի արդասիքը սփռելով ամենուրեք:

«Հայ գրականության մեջ հատուկ տեղ է գրավում Արշակ Զոպանյանը,— ասում է Վալերի Բրյուսովը:— Լինելով անխոնջ գործիչ և բազմաբեղուն գրող՝ նա հարազատ գրականությանը անգնահատելի ծառայություններ է մատուցել: Նա հրատարակում էր մոռացված հայ գրողների տեքստերը, ֆրանսերենի թարգմանում հայ ժողովրդական քնարերգության և միջնադարյան քնարերգության նմուշները, որոնք նա հավաքել է երկու հատորի մեջ, Փարիզում հայերեն հանդես էր խմբագրում, հայության կյանքի հետ կապված հարցերով դասախոսություններ ու զեկուցումներ էր կարդում և այլն,— առհասարակ արևմտյան հասարակությանը Հայաստանին ծանոթացնելու համար այնքան շատ գործ է արել, ինչքան ոչ ոք: Այդ ամենի համար հայ գրականությունը խորին երախտագիտությամբ պարտական է Արշակ Զոպանյանին»[1]:

Զոպանյանը չունեցավ անձնական կյանք, չհետապնդեց անհատական շահ, արժանի փառքի դափնեպսակներ տեսավ իր ճակատին և հանիրավի մոռացումի ու մերժման դառն մենակությունը ապրեց, չընկրկեց, սակայն, մնաց միշտ իր ժողովրդի լավագույն ապագայի համար պայքարի պատնեշի վրա, միշտ հայրենիքի հետ ու հայրենիքի կողքին: Ազնիվ է եղել գործունեության երկար ու ձիգ տարիների փոթորկում հոլովույթում, հաճախ ճշմարիտ և իրավացի՝ գործնականերպի թե հայացքների մեջ, սխալվել է երբեմն, սակայն, միշտ ազնիվ: Եվ բնական էր, որ սխալվեր նաև, որովհետև պատմականորեն սահմանափակ էր նրա աշխարհայացքը իր ձևավորման ժամանակաշրջանի և իր պատկանած անընդի դասակարգային գաղափարների շրջափակում:

Արշակ Զոպանյանը ժամանակաշրջանի ծնունդն էր և հենց ժամանակաշրջանն էլ դրել է նրա կյանքի ու գործի վրա իր ան-

[1] Поэзия Армении, под редакцией Валерия Брюсова. Москва, 1916, стр. 90, *(ըստ «Հայաստան» հրատարակչության, Երևան, 1966, հրատարակության)*

ջնջելի կնիքը։ Նա ապրեց շուրջ 70 տարիների գիտակցական կյանք, տարիներ, որոնք համընկնում են հայ ժողովրդի պատմության ամենակարևոր էջերին՝ իրենց պարունակած խավարով և լույսի առատ խրձով, պայքարի վերիվայրումներով և հաղթանակի հունձքով։

Այդ ժամանակաշրջանը կարելի է բաժանել հետևյալ հատվածների, պարբերացման հիմք ընդունելով Զոպանյանի գործունեությունը։ Առաջին՝ 80-ական թվականներից մինչև 1895 թվականը։ Երկրորդ հատվածն ընդգրկում է մոտավորապես տասնհինգ տարի, մինչև «Անահիտ» հանդեսի առաջին շրջանի հրատարակության դադարեցումը։ Հաջորդ հատվածը՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեից մինչև ժամանակակից սփյուռքի ձևավորումը, պարունակում է դարձյալ մեկ տասնյակ տարի, իր տրամաբանական ավարտին հասնելով Լոզանի կոնֆերանսի օրերին՝ 1923 թվականին։ Սովետական Հայաստանի նկատմամբ սփյուռքահայության քաղաքական կողմնորոշման ժամանակաշրջանը, մոտավորապես մեկ տասնյակ տարի, կազմում է հերթական հատվածը։ Եվ, վերջապես, «Անահիտ» ամսագրի երկրորդ շրջանի հրատարակության տարիները, մինչև Զոպանյանի մահը։

Այս ժամանակահատվածների սահմանազատումները ամեն դեպքում խիստ պայմանական են։ Այսուամենայնիվ, նրա հայացքների էվոլյուցիայի տեսակետից, դրանք որոշակիորեն ընդգծում են Զոպանյանի կյանքի և գործունեության փուլերը, որոնց հիմքում ընկած են եղել հայ ժողովրդի արևմտյան հատվածի պատմության օբյեկտիվ հանգրվանները։ Հենց այդ պատճառով բնական և անհրաժեշտ ենք գտնում ժամանակաշրջանի առանձին հատվածների բնութագրական գծերը բացահայտել Զոպանյանի կյանքի և գործունեության շարադրանքին միաձույլ, որով պիտի ջանանք առավել լրիվ արտացոլել Զոպանյանի հայացքների էվոլյուցիան թե՛ հասարակական, քաղաքական և ազգային-ազատագրական պայքարի խնդիրների և թե՛ մշակութային հարցերի վերաբերյալ։

Արշակ Զոպանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված մի քանի գրքույկներ[1] են լույս տեսել արտասահմանում, որոնք

---

[1] Հասլնշեան Հայկազն, Արշակ Զոպանեան։ Կենսագրական դիծեր, Հրատարակութիւն Հոբելեանական Հանձնաժողովի, Փարիզ, տպ. Ներսես, 1924։ Ցե-

հետաքրքիր են հիմնական տարեթվերի և նրա արտադրած գործերի ստեղծման ժամկետների նշումները: Այդ գրքույկներից շնորհակալությամբ օգտվել է հեղինակը: Տասնյակ հոդվածներում և հուշագրություններում, որ հրատարակվել են Սիլիցիայում ու Սովետական Հայաստանում, պարբերական մամուլի էջերում թե տարբեր հեղինակների առանձին հատորների մեջ, վեր են հանվել մեր մշակույթի երախտավորի կյանքի ու գործունեության պահպան դրվագներ և էջեր: Վերջին տարիներին Սովետական Հայաստանում հրատարակվեցին Ա. Չոպանյանի երեք գրքերը[1]:

1966 թվականի հրատարակությանը կցված «Արշակ Չոպանյան» ակնարկում հեղինակներ Վաղարշակ Նորենցը և Սողոմոն Տարոնցին թռուցիկ, բայց բովանդակալից դիտողություններ են տալիս Արշակ Չոպանյանի գործունեության հիմնական կողմերին: Իր աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրել Ա. Չոպանյանին նաև Աստղիկ Աստղյանը[2], որը հակիրճ բնութագրում է նրա գործունեությունը հատկապես քաղաքական թվականների:

Գրաքննության Չոպանյանի գործունեության համատոտ գնահատությանը էջեր են նվիրել Զվարթ Դուկասյանը իր «Գրականության կոնսակցականության լենինյան ուսմունքը և հայ գրականությունը» աշխատության[3] մեջ, Ե. Պետրոսյանը՝ «Գրական դեմքեր» գրքում[4], Էդ. Ջրբաշյանը, Գ. Սահինյանը, Վ. Կիրակոսյանը և ուրիշներ՝ մի շարք հոդվածներում և հրապարակումներում:

Այդ բոլորը, այնուամենայնիվ, փարատանելով հետու է բավարար լինելուց: Հայ ժողովրդի շահերին մինչև վերջ նվիրաբերած կյանքի, գործունեք ու հետաքրքիր առաջացնող բազմազգյուն տաղանդի, մեր ազգային մշակույթին և, այո, համաշխարհային

Ներսեհան Գեղամ, Արշակ Չոպանեան: Կենսագրական և մատենագիտական նոթեր, Փարիզ, 1938: Ալեքսանյան Տ., Արշակ Չոպանեան, Սոֆիա, 1939: Ենովք Արմեն, Արշակ Չոպանեան, Կ. Պոլիս, 1913:

[1] Արշակ Չոպանյան, *Երկեր, Երևան, 1966,* Արշակ Չոպանյան, *Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Երևան, 1967:* Արշակ Չոպանյան, *Նամականի Երևան, 1980:*

[2] Աս. Աստղյան, *Սոցիալիստական վերածննդի հայ գրականության պատմությունից, Երևան, 1959:*

[3] *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970:*

[4] Ե. Պետրոսյան, *Գրական դեմքեր, Սովետական գրող, Երևան, 1977: էջ 315—323:*

մշակույթին մատուցած ծառայությունների դիմաց անհրաժեշտ է, որ առաջին հերթին հայ ընթերցողը բաղմակողմանի ու խոր ճանաչի Արշակ Չոպանյանին: Անհատի պաշտամունքի շրջանի կրքերը ստիպողական մոռացության քսանամյա բացատ ձգեցին մեր հիշողության մեջ, որի ընթացքում նոր սերունդը պատեհություն չունեցավ ճանաչելու Արշակ Չոպանյանին:

Արշակ Չոպանյանը այն հեղինակն է, որից մեծ քանակությամբ քաղվածքներ են բերում մեր բանասերները, որի կարծիքի հետ հաշվի են նստում հայ մշակույթի պատմությունն ուսումնասիրող շատ գիտնականներ, բայց որի մասին մինչև այժմ փոքրաթիվ ուսումնասիրություններ կան:

Չեռնարկելով սույն ուսումնասիրությանը, մեր նպատակն է եղել ջանալ ինչ-որ չափով լրացնելու այդ բացը: Ասում ենք «ինչ-որ չափով», ոչ թե պատշաճ համեստությունը պահպանած լինելու համար, այլ որովհետև Չոպանյանի գործունեությունը սահման չճանաչող նյութ է հայթայթում հետազոտողի համար: Հավակնել, թե այն կարելի է լրիվ ու անթերի սպառել մեկ կամ մի քանի աշխատություններում, անխոհեմություն է: Առավել ևս, սպառիչ և անթերի լինելու հավակնությունից հեռու է մեր այս փորձը:

ՀԱՄԻԴՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ուսումնառություն

Ժողովրդական բանաստեղծության անսպառ ակունք էր Ակնը՝ Նիրատի ափին ի վեր բարձրացող այդ գեղատեսիլ քաղաքը, որ ամեն ինչից առավել բառ ու բան էր արտադրում ու շիներին ներարկում քնարական ղպացումի շունչը: Նրա գերդաստաններից են սերել Արփիար Արփիարյանն ու Գրիգոր Զոհրապը, Միսաք Մեծարենցն ու Սիամանթոն: Հովվյանց հին գերդաստանը մյուսների մեջ բացառություն չէր իր գրահմտությամբ: Արդեն, երբ ընտանքը Պոլսում էր, գրահմուտի համբավ ուներ Արշակի հորեղբայրը՝ Հարություն Զոպանյանը:

Արշակի հայրը՝ Հովհաննեսը, զգացմունք պարունակող խոսքի կերտիչ չէր, բայց նրա ճարտար ձեռքերի մեջ բանաստեղծական ձևեր էին առնում արդուզարդի առարկաները, և, Պոլսի Պեշիկթաշի շուկայի իր փոքրիկ խանութով, բավականին անուն էր շինել:

Ժամանակով Պեշիկթաշի վերին թաղը Զոպանյանների անունով էլ կոչվել է Զոպան Մահալ, քանի որ հողերի մեծ մասը պատկանել է Զոպանյան գերդաստանին: Հենց այս Մահալի մի գեղեցիկ տան մեջ էլ, 1872 թվականի հուլիսի 15-ին ծնվում է ապագա բանաստեղծն ու մշակույթի գործիչը:

Մեկ ամսական դեռ չկար, երբ մայրը, սամաթիացի Քեմհաճյան ընտանիքից սերած գեղատես գեղեցկուհի Մարիամը, հավիտենապես փակում է աչքերը:

Մայրական գգվանք չտեսած որբուկ Արշակի վիշտը մեծ էր: Տարիներ անց, երբ նրա կրծքի տակ խլրտալու է բանաստեղծի

սիրտը, տառապագին գիշերներից հետո լույս աշխարհ եկած նրա առաջին ոտանավորներից մեկը հենց այդ վշտի մարմնավորումն է լինելու...

...Վշան դրախտում է, բայց դրախտը ի՞նչ, երբ նրա գրկում իր մանկիկն է: Երջանկության այդ պատկերը ծառի հետևից դիտում է Ադամը ու տրտմությամբ խորհում.

Հանկարծ արցունքով աչքերը լեցան,
Հառաչ մը կուրծքեն բռավ բախծալիր,
Ճակտին դարկավ ձեռն ու շշտավ մը դառն՝
«Տեր,— ըսավ,— ինչո՞ւ մայր մ՝ինձ չտվիր»:

(«Ադամա վիշտը»)

Մոր մահից հետո հայրը Արշակին փոխադրում է վերին Բոսֆորի ծովամերձ Սթենիա գյուղը: Այստեղ երեխան հանձնվում է երկու կանանց՝ Զիպայի և Զոյիի խնամքին, որոնք որբուկին պահում էին այծի կաթով: Էդգար Շահինը, որ լավ ծանոթ էր Արշակ Զոպանյանի կենսագրական այդ մանրամասնությանը, կատակով ասում էր նրան. «Այծի կաթով քեզ սնուցած են, այծի բնավորություն ստացած ես, ցանկացած ես միշտ բարձունքները մագլցիլ»:

Մի քանի տարի անց Հովհաննեսը վաւակին կրկին բերում է Պոլիս: Այստեղ, Պեշիկթաշի ներքին թաղում, այրի տիկին Էլպիսի և նրա կրտսեր քույր Ագապիի տանը, հենց «Մաքրուհյան» վարժարանին շատ մոտիկ, յոթ տարեկանից ապրում է Արշակը ու տասը տարեկանից հաճախում այդ թաղային վարժարանը: Քիչ անց Ագապին դառնում է Արշակի երկրորդ մայրը, որ անձնվեր դուրգուրանքով է պաշարում փոքրիկին:

Պեշիկթաշի վերին թաղում գնեցին նոր բնակարան, որտեղ Հովհաննեսի ընտանիքի հետ ապրում էր նաև Ագապիի եղբայրը՝ Թաթոս աղբարը: Սա ոչ մի կերպ չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ փոքրիկ Արշակը, խաղերով տարվելու փոխարեն, պիտի չէր գալիս դրքերից: Նվ, երբեմն, կատաղած, կոպտում էր երեխային, հանդիմանում նրան՝ պահանջելով դեն շպրտել գրքերը. «Ջիղերուս կը դպչի կոր»:

Դեռ «Մաքրուհյան» վարժարան մտնելուց առաջ Արշակը արդեն գրաճանաչ էր, ու նրան արտոնված էր տեր ու տնօրինություն անել հորեղբորից՝ Հարություն Զոպանյանից ժառանգու-

Բյուն մնացած անդուկի մեջ: Իսկ այստեղ թաքնված էին մանկահասակ մարդու երևակայությունը փորփրող ամենախորհրդավոր գանձերը՝ գրքերը: Ո՞ր հնաոճրքրքրանքի մանուկի մեջ ընթերցանության սեր չէին առաջացնի Դյումայի «Մոնթե Քրիստոն», «Երեք հրացանակիրները» և «Դեկոմտ դե Բրաժելոնը», Հյուգոյի «Պշվառները», արևելյան «Հազար ու մեկ գիշերները», Էժեն Սյուի «Բախտագրական հրեան» ու «Փարիզի գաղտնիքները»:

Իսկ Արշակի տրամադրության տակ գրանցից բացի կային նաև Դյումա-որդու «Քամելիագարդ տիկինը», Ալիշանի «Նվագների» մի քանի հավաքածուներ և «Հուշիկքը», Խորեն Նարպեյի «Քնար պանդխտինը» և «Սովորք Հայկականքը», Լամարթինի «Դաշնակքի» գրաբար թարգմանությունը, Մկրտիչ Պեշիկթաշլյանի և Պետրոս Դուրյանի տաղերի ու գրամատիկ գործերի հավաքածուները և այլն:

Նա չէր կարդում, պարզապես կլանում էր այդ գրքերը: Փույթ չէ, թե հասկանում էր միայն մասամբ ու միայն յուրովի, կարևորը անկասելի սերն էր, որ արթնացավ նրա մեջ գրականության նկատմամբ, զարգացավ «Մաքրուհյանի» աշակերտության շրջանում և դպրոցական տարիներին հասավ կեղրոնական վարժարանի ուսանողի մեջ, մղելով նրան դեպի գրական գործունեություն:

«Մաքրուհյան» վարժարանի տնօրենը մանկավարժական իր մեթոդներն ուներ, որոնց էությունը սարսափ ազդելն էր: Ծեծն ու խոշտանգումը նա իր պարտականությունը և իրավունքն էր նկատում: Երեխաներին ֆալախկայով այնքան էին ծեծում, որ նեբաններն արյունոտվում էին, աղիողորմ ճիչեր էին արձակում և սարսափան աղերսանքով դիմում տնօրենին. «աման, մուսյո, ոտքիդ տապանը պագնիմ, հերիք է»: Արշակը խելացի, այլև խելոք աշակերտ էր, ծեծի որևէ տեսակ չճաշակեց, բայց նրա վրա տեսնելով ուրիշ տղաների վրա գործում դաստիարակության այդ միջնադարյան մեթոդները, որոնց ականատեսն էր ինքը: Բարեբախտաբար, տնօրենի փոփոխությունը փոխում է ու բարելավում նաև դաստիարակության մեթոդը:

Վարժարանի երկու ուսուցիչներ՝ Եղիազար Մուրադյանը և Սրապիոն Բղլյանը, մանավանդ վերջինը, խոր ազդեցություն են գործում Արշակի վրա: Աշակերտական նստարանից սկսած երեխան կանխահայտ շնորհքի ապացույցներ է տալիս: Սրապիոն Բղլյանը նկատում, օգնում, խրախուսում է նրան: Ինքը՝ Ս. Բղլյանը, ժամանակին մի քանի ռոմանտիկական ողբերգություն-

ներ է գրել, որոնք նույնիսկ ներկայացվել են բեմերում: Նա Իսկյութարի ճեմարանում եղել է նաև Պետրոս Դուրյանի ուսուցիչը: Հատկանշական է, որ 1895 թվականին, երբ ոմանք հարձակումներ են անում Թղլյանի ուսուցչական գործունեության դեմ, նա հրապարակային կոչ է ուղղում իր երկու աշակերտներին՝ հանդուցյալ Պետրոս Դուրյանին և արդեն գրական անուն վաստակած Արշակ Չոպանյանին, որպեսզի պաշտպանեն իրենց: Ա. Չոպանյանը փութաջանորեն եւս է մղում անարդար հարձակումները:

«Մաքրուհյան» վարժարանի ուսուցիչների շարքում ուրիշ երկուսը՝ ֆրանսուհիներ տիկին Բրաժիոթին և տիկին Բլանշ Լբսիոը, կարևոր դեր են խաղացել Արշակի մանկական մտքի կազմավորման գործում:

Տիկին Բրաժիոթին մեծ համբույրով նրան ներարկում էր ֆրանսերենի ճախություններն ու գեղեցկությունները և սիրել տալիս ֆրանսիական գրականության խոշոր դեմքերին: Նրա օգնությամբ է, որ Արշակը կատարում է հայերենից ֆրանսերեն թարգմանության առաջին փորձերը: Գրականության և արվեստի թանգարանում Ա. Չոպանյանի ֆոնդի դեռևս չմշակված բաժնում պահպանվում է մի տետր, որի ձեռագիր տողերի վրա երևում են տիկին Բրաժիոթիի ուղղումները: Դա Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Վահան» թատերգության ֆրանսերեն թարգմանությունն է, որ կատարել է Արշակը:

Տիկին Լբսիոը փոխարինում է Բրաժիոթիին: Փարիզի Փորթ Սեն-Մարթենի նախկին այդ դերասանուհին դրեթե մայրական գորովով սիրում էր փոքրիկ Արշակին: Համայում էր նա աշակերտներին, երբ, ասես բեմի վրա, արվեստով ու ղգայմունքով արտասանում էր Լամարթինի, Մյուսեի, մանավանդ Հյուգոյի քերթվածները: Հենց տիկին Լբսիոից է, որ Արշակ Չոպանյանը սովորում է բանաստեղծություններ արտասանելու արվեստը:

Հատկանշական է, որ Հյուգոյին պաշտող այդ տիկինն էլ հենց առաջին հարվածն է հասցնում դեռ ընտանեկան դաստիարակության հետևանքով Արշակի ներսում նստած հավատացյալին՝ բերելով նրան դեպի դեիզմը: Հետագայում, Կեդրոնականի ուսանողական շրջանում, Եղիա Տեմիրճիպաշյանի և Մադաթիա Գարագաշյանի ազդեցությամբ է, որ հեռանալու է դեիզմից և հարելու Բյուխների ու Սպենսերի աթեիզմին:

Ողբերգական վախճան է ունենում Արշակ Չոպանյանի աշակերտական տարիների այդ բարի հրնշտանկը: Ստամբուլից Փարիզ վերադառնալով՝ տիկին Լբսիոը ապրում է ծայրահեղ կարիքի մեջ և անձնատուրությամբ վերջ տալիս իր կյանքին, սովամահ լինելու անպատվությունից խուսափելու համար:

Օհյամուրի ծառաստանը սկսվում էր փողոցի բարձրադիր ըբոսավայրից և աստիճանաբար իջնում մինչև բավականին ներքևում գտնվող անտառակը: Բարձրադիր ըբոսավայրի հենց կատարին ցցված էր մի հսկա սոճի, որին Բուրքերը կոչում էին «ֆրատը աղաճի»: Արշակը, հայացնելով այդ անվանակոչությունը, «պիատակենի» էր դրել նրա անունը: Այս ծառի տակ, մենմենակ նստած, նա հաճախ կարդում էր սիրած հեղինակներին, դիտում նշանթաշի բարձունքի վրա վերջալույսի արևի ճառագայթների կախարդական խաղը դյութիչ սաղարթի մեջ ու ինքն էլ տալիս շարադրում: Վևոնդ Ալիշանի, որին սիրում էր Արշակը, «խորհրդածություններ ընդ եղևնավ» խորագրով շարքի օրինակով նա որոշում է կյանքի մասին իր խորհրդածությունները շարադրել՝ «Երազանքներ պիատակենիին տակ» ենթագոսվ:

Այդեն այդ շրջանում բավականին հարուստ և բեղուն արտադրանք ուներ Արշակը. դրաբարախոսան աշխարհաբարով բազմաթիվ բանաստեղծություններ՝ Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Նարպեյի, Թերզյանի, ինչպես նաև Հյուգոյի ազդեցությամբ գրված, «Մահ Մերուժանա» ողբերգությունը, որ նմանողություն էր Պեշիկթաշլյանին և Դուրյանին, Շեքսպիրի «Համլետի» և Դանթեի «Դժոխքի» թարգմանությունը (բնագրերից, ֆրանսերեն թարգմանության օգնությամբ), արկածային վիպակներ, թարգմանություններ Հյուգոյից և այլն: Այս ամբողջ աշխատանքը, որ բարձր որակի չէր և տպագրության ոչ արժանի, մեծապես նպաստեց նրա գրական խառնվածքի կազմավորմանն ու ոճի շտկմանը: Մտքի կրթման վարժություններ էին դրանք:

Այնուամենայնիվ, այդ շրջանում է, որ առաջին անգամ տպագիր թերթի էջում լույս աշխարհ է գալիս Արշակ Չոպանյանի ստեղծագործությունը: 1885 թվականին Սրապիոն Բղլյանը, ծանոթանալով մի ձոնվերի, որ Արշակը նվիրել էր իր վաղամեռիկ մորը, տպագրության հարմար գտավ և միջնորդեց Նշան Պերպերյանի «Բուրաստան մանկանց»-ում հրատարակվելու: Առաջին հաջողությունը, անսահման բերկրանքի հետ միասին, նոր սավառնումների թևեր է տալիս պատանի Արշակին: Շատ չանցած

նույն ամսաթերթում երևում է Գիրոյի «Փոքրիկ սավուացին» բանաստեղծությունը, որի հանգավոր թարգմանությունը արել էր նա, իսկ ևս մի փոքր հետո տպագրվում է արդեն իր՝ «Ոսկի բաժակ» ոտանավոր պատմվածքը:

«Մաքրուհյան» վարժարանի տարիներին, հետագայում հռչակավոր մանկավարժ Հովհաննես Հինդլյանի ղեկավարությամբ, Արշակը ուսումնասիրում է անգլերեն, ինչպես նաև ինքնակրթությամբ՝ իտալերեն: Բայց, երբ տարիներ հետո, իր ամբողջ ժամանակը տրամադրում է հասարակական-գրական գործունեությանը, Չոպանյանը չի կարողանում ընդարձակել այդ լեզուներին ունեցած իր նախնական ծանոթությունը:

Գալիս են և ավարտական քննությունները: Արշակը բոլոր առարկաներից ստանում է բարձրագույն նիշեր: Պարգևաբաշխության հանդեսին, որպես առաջին աշակերտի, հոգաբարձությունը նրան նվիրում է հայերեն ու ֆրանսերեն արժեքավոր գրքեր, թվով այնքան շատ, որ երբ գիրկն է առնում, չի կարողանում ձեռքում պահել, և մի քանիսը ցած են թափվում: Իսկ տանը նրան սպասում էր ոչ այնքան հաճելի զրույց հոր հետ:

«— Տղաս,— ասում է հայրը,— ինչ որ սորվեցար Պեշիկթաշի դպրոցին մեջ, կը բավե, հիմա վարժվելու ես գործի կյանքին, որպեսզի ապրուստդ ապահովես: Ես խոսեցա Գաբրիլ Էլիկյուզել բարեկամիս, որ տնօրենն է Հովհաննես Հակոբյան մեծ վաճառատան, և ան որոշեց քեզի պաշտոն մը հանձնել: Հակոբյան տունը Պոլսի ամենեն մեծ տուներեն մեկն է. դուն հայերենի, ֆրանսերենի մեջ ուժով ես, քիչ մը անգլիերեն ու թուրքերեն ալ գիտես, կրնաս հոն քեզի փայլուն ապագա մը պատրաստել»:

«— Հայրիկ,— պատասխանում է որդին,— շնորհակալ եմ քու հոգածությանդ համար, բայց ես բնավ փափագ ու տրամադրություն չունիմ գործի մարդ դառնալու. իմ իդեալս շատ դրամ վաստակիլը չէ, այլ ինքնատիպ բանաստեղծ մը դառնալը և մեր ազգային մշակույթին զարգացմանը իմ նպաստս բերելը: Իմ ցանկությունս է Գալաթիո Ազգային Կեդրոնական վարժարանը մտնել իբր ուսանող, ճոխացնելու համար հայերենի, ֆրանսերենի և գրականության պատմության հմտությունս»:

Հայրը, հարկավ, զարմանում է, ապա դժգոհ է մնում, բայց, բարեբախտաբար, չի պնդում իր ցանկության վրա:

«— Տղա՛ս,— դարձյալ հայրն է խոսողը,— ես իմ պարտքս կատարեցի, ըրէ, ինչ որ միտքդ դրեր ես, բայց եթե օր մը նյու-

թական նեղության մեջ իյնաս, իրավունք պիտի չունենաս դիս մեղադրելու. ես կրցածս ըրի քեզի նյութական ամուր ապագա մը ապահովելու համար»:

***

Կեդրոնական վարժարան...

Մտավորական կադրերի այս հոյակապ դարբնոցը իր կատարած դերով ամենակարևոր հաստատություններից մեկն էր արևմտահայ իրականության պայմաններում, ութսունականների:

1886 թվականի սեպտեմբերի 1-ին բացվում է Կեդրոնական վարժարանը 65 ուսանողներով: Գալաթիայում հաստատված այդ վարժարանի բնութագրական հատկանիշը ժողովրդական նկարագիրն էր: Զրկի կամ կիսավճար բազմաթիվ աշակերտներ ընդունեց նա իր պատերից ներս, Պոլսի և մանավանդ գավառների չունևոր խավերից սերած, օժտված և խանդավառ պատանիների բազմությունից: Վարժարանի գործունեության առաջին հինգ տարիներին (1886—1891) այդ հաստատություն են ընդունվել 248 ուսանողներ: 1891 թվականի հուլիսի վերջերին (ուսումնական տարվա ավարտին) վարժարանում կար 126 ուսանող, այդ թվում՝ 89 պոլսեցի և 37 գավառացի[1]:

Հոր հետ ունեցած զրույցից մի քանի օր անց Արշակ Չոպանյանը ներկայանում է Կեդրոնականի տնօրեն Մինաս Չերազին, ցույց տալիս իր «Մաքրուհյանին» փայլուն վկայականը, և 1887 թվականին տասնհինգամյա պատանին ընդունվում է առաջին կարգ, իբրև անվճար ուսանող:

Ուսանողության առաջին իսկ օրերից Արշակ Չոպանյանը մտերմանում է իրեն տարեկից մի խումբ պատանիների հետ, որոնք հետագայում մեծ դեր խաղացին արվեստների ու գիտության բնագավառում և մնացին Արշակ Չոպանյանի լավագույն բարեկամներն ու օգնականները նրա մաքառումներով լեցուն կյանքում: Դրանցից են Տիգրան Նազարյանը, Հովհաննես Արթինյանը, Երվանդ Մանվելյանը, Մաքսուտ Մխիթարյանցը և ուրիշներ:

Մասնավոր մտերմություն կար Արշակ Չոպանյանի և երկրորդ կարգի ուսանող Աստվածատուր Հարությի միջև: Երիտասարդ

[1] «Արևելք», 1891, թիվ 2332:

բանաստեղծը վերջինիս վստահում է իր «Պիտակնու...» շարքից երկու ստվար տետր բանաստեղծություններ: Հարենցն էլ, առանց հեղինակի գիտության, տետրերը ցույց է տալիս Մինաս Չերազին: Անվանի հասարակական և մշակութային գործիչը, ծանոթանալով տետրերի բովանդակությանը, հեղինակի մեջ տեսնում է մեծ ապագա և կարգադրում՝ դեռ տարին չավարտած նրան փոխադրել երկրորդ կարգ:

«Կարդացի քու բանաստեղծություններդ, դուն արդեն իսկ բավական հասուն գրական ուժ մըն ես. քու տեղդ երկրորդ կարդին մեջ է...»— ասում է նա Արշակին:

Կենդրոնական վարժարանում փայլուն ուսուցիչներ և մշակութային սպասավորներ Թումաս Թերզյանի, Եղիա Տեմիրճիպաշյանի, Մադաթիա Գարագաշյանի, Գարեգին Սրվանձտյանցի, Մաղաքիա Օրմանյանի և Չերազին փոխարինած նոր տնօրեն Հարություն Մոստիչյանի ջերմ շնչի տակ Արշակ Չոպանյանը առանց հաղնալու աստիճանաբար լրացնում է իր գիտելիքների պաշարը, ուսումնասիրելով հատկապես հայ և եվրոպական հին ու նոր գրականությունը:

Զուգահեռաբար աշխատակցում է «Արևելքին»:

Հաճախ կարելի էր տեսնել մի քնքուշ պատանու, որ վստահ քայլերով գնում էր Ղալաթիայով դեպի Նորատունկյան խան և ամեն անգամ սրտի բաբախյունով բացում խմբագրության դուռը: Պիտի հրատարակե՞ն արդյոք հերթական թարգմանությունը: «Արևելքի» խմբագրությունում, մանավանդ Լևոն Բաշալյանը, որին նա բերում էր իր գործերը, սիրով էին ընդունում նրան, գուցե և զարմանում բեղմնավոր գրչի և տարիքի անհամապատասխանությանը, բայց հրատարակում էին: Հրատարակում էին էջեր Արշակի թարգմանությամբ Ֆլոբերից, Թեոֆիլ Գոթիեից, Դոդեից, Մոպասանից, Տուրգենևից, Զոլայից, Մանդեսից, Կոբեից, Մոնթեպյուից և ուրիշներից, և, վերջապես, Մոպասանի «Մահվան պես հզոր»» վեպը ամբողջովին, իբրև թերթոն[1]: 1890 թվականին, այդպիսով, «Արևելքը» Ա. Չոպանյանի թարգմանությամբ հրատարակում է շուրջ քսանհինգ նորավեպ կամ ծավալուն հատվածներ:

«Բաշալյանն էր, որ գրական նյութը մը ջերմությամբ գնահատելով իմ սկսնակի էջերուն մեջ ինչ որ կար դրական ու ինք-

---

[1] *«Արևելք», 1891, թթ. 2182—2224, 2226—2246:*

նահատուկ, ցույց տալով նաև ձևի թերությունները զոր կը նկատեր անոնց մեջ, և հյուրընկալելով զանոնք «Արևելքի» ու հետո «Մասիսի» մեջ, մեր գրական հրապարակին վրա երևումս դյուրացուց և իմ լեզվիս ու ոճիս կազմավորման մեջ իր ազդեցության բաժինն ունեցավ»[1]։

Արշակ Չոպանյանը սիրել է Լևոն Բաշալյանին իր երեց եղբոր նման։ Երկար ժամանակ նա հետևել է Բաշալյանի խորհուրդներին, օրինակելի գտել նրա ստեղծագործությունը ձևի ու բովանդակության տեսակետից, նույնիսկ նրա կենցաղավարությունը իր ազդեցությունն է թողել Արշակի վրա։ Հենց Բաշալյանի ազդեցությամբ էլ Արշակ Չոպանյանը ծխել է սկսում։ «Կարելի է երևակայել բանաստեղծ մը, որ չի ծխում»,— ասում էր Բաշալյանը և հերթական սիգարետը հրամցնում Արշակին, որը հազալով, արտասուոտով, աչքերը ջրակալելով, այնուամենայնիվ, ընտելանում է ծխախոտին և թողնում միայն արդեն վաթսունը վաղուց անց հասակում, երբ բժիշկ Քոլոյանը սպառնագին սպառում է նրան այդ անել։

Բաշալյանը խստությամբ և հոգատարությամբ հետևում է Արշակի ստեղծագործական աճին, սոխում նրան ավելի հարատաև լինել իրականության՝ բովանդակության մեջ, և կատարելագործել արտահայտչական միջոցները։ Հատկանշական է այդ տեսակետից Լ. Բաշալյանի նամակը Արշակ Չոպանյանին, որ գրված է 1889 թվականի հունվարի 10-ին։ Բերում ենք այն ամբողջությամբ, քանի որ նրանում բացահայտվում են Բաշալյանի հայացքները գրականության բովանդակության ու ձևի նկատմամբ, և, վերջին հաշվով, այդ նամակը արտացոլում է ստեղծագործական մթնոլորտը, որի մեջ հասակ էր նետում Ա. Չոպանյանը.

«Հարգելի պարոն,

Նորավեպ մը գրել և ինձ ղրկեր էիք, «Արևելքի» մեջ նորա հրատարակությունը տեսնելու փափաքով։ Գովեստներով լեցուն էի միշտ Ձեր անունը Ձեր ուսուցիչներեն, և «Երկրագունտ»ի վերջին թիվին մեջ հրատարակյալ Ձեր նամակն այնքան հուզած էր զիս, որ Ձեր մեծանուն ուսուցիչն՝ Տեմիրճիպաշյան էֆենտիին խնդրեր էի շնորհավորությունները հայտնել Ձեզ։ Ա՛ըմբռնեք ուրեմն թե ինչ հետաքրքրությամբ առի Ձեր գրու-

[1] «Անահիտ», նոր շրջան, 6 տարի, հունվար-հուլիս 1934, թիվ 5—6, էջ 97։

թյունն և ինչ ուշադրությամբ կարդացի զայն։ Ձեր նորավեպը կ'արդարացներ այն գովեստներն, որոնց արժանացած եք բարեկամաց փոքր, այլ թանկագին շրջանակի մը մեջ։ Սակայն անկեղծությամբ կը հայտնեմ Ձեզ, թե Ձեր կաղանդի նորավեպը չպիտի հրատարակվի «Արևելքի» մեջ, և ետ կը դարձնեմ Ձեզ զայն։ Եթե այդ նորավեպն ուրիշ մը գրած և ղրկած լիներ, թերևս լույս տեսներ։ Սակայն մենք իրավունք ունինք պահանջելու, որ այնքան նպաստավոր պայմանաց մեջ սնած միտք մը առաջին անգամեն ուշադրություն հրավիրե իր վրա իր գրությանցն անակընկալ գեղեցկությամբ։ Մի՛ հետամտեք վաղահաս փառքի։ Դիտեցեք միշտ ամեն իրողություն, ամեն երևույթ և երբ մեկ, երկու, երեք, չորս տարի հետո գրիչը ձեռք առնուք և բան մը գրեք, ծող ընթերցող հասարակությունն ըսե ինքնին. «վա՜յ, այս նորե՞կը, պռավո՛, ի՜նչ լավ գրեր է»։ Մի՛ դանվեք այն մարդոց դիրքին մեջ, որք իրենց պատանեկության ժամանակ հրատարակած գրությանց վրա կը ղժջան այսօր։ Եվ միշտ կատարելության դիմեցեք։ Բշվառին Կաղանդը հուզիչ պատմության մը վրա կը դառնա, սակայն իրականությունը կը պակսի հոն։ Իրականությունն այն ամկական բառերը չեն զորս առաջին հանդիպողն իսկ կրնա մտցնել իր գրվածոց մեջ։ Իրականությունը պատմության հյուսվածքին մեջ է մանավանդ, նկարագրից և զգացմանց ճշգրիտ արտադրությանը մեջ։ Ոճին համար ալ, ջանացեք միշտ նոր բացատրություններ գտնել, գրականությունը այդ պայմանին տակ կը զարգանա. մարդկային էական զգացումները նույնն են թերևս աշխարհի սկիզբեն մինչև հիմա, սակայն անոնց նկարագրության նոր եղանակն է, որ հեղինակաց փառքը կազմած է միշտ։

Առանց ուղելու՝ վարժապետի ձևեր առի։ Պիտի ներեք ինձ, անշուշտ, որ խմբագրական հնգամյա փորձառությանս տենչով և Ձեզ նկատմամբ ունեցած համակրությունս դրդյալ համարձակեցա այս դույզն իրատները տալ Ձեզ։

Ընդունեցեք սիրալիր բարևներս
Լ. Բաշալյան»[1]

Բայց շուտով վրա է հասնում նաև գրական ճանաչումն ու ընթերցող հասարակության ուշադրությանն արժանանալը։ 1889

[1] Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Արշակ Չոպանյանի ֆոնդ (ԱՉՖ), 1-ին բաժին, № 1219։

թվականի գարնանը «Արևելքում» երևում են Արշակի «Ադամա վիշտը» ղպացմունքով տրոփող բանաստեղծությունը, «Մայր մը» և «Մեռելոց բարեկենդանը» նորավեպերը։ Քիչ անց տպագրվում է «Երկնքի Համփան» հեքիաթը, որի ֆրանսերեն թարգմանությունը տարիներ հետո լույս է տեսնում «Mercure de France» գրական ամսաթերթի էջերում, իսկ գերմաներենը՝ Վիեննայի «Die Zeit» ամսաթերթում։ Սա արդեն իր խոսքն էր, երկնային կայծով, ճաշակով, չափի ղգացումով և, որ ավելի կարևոր էր այդ օրերի համար, սահուն աշխարհաբարով։

«Արփիարյանի, Բաշալյանի, Զոհրապի ու Կամսարականի գրականությունն է, որ դիս հրապուրելով իր նորությամբ ու կենդանությամբ, վերջապես քաշեց դիս դեպի անխառն աշխարհաբարի դպրոցը»[1],— գրում է Ս. Զոպանյանը։

Երիտասարդ Արշակի գրական սկզբնավորությունը խոստումնալից էր։ Ենովք Արմենի խոսքերով ասած. «Քիչեր իրեն պես ոումբի մը նման նետված են գրական ասպարեզը, այնչափ հասուն և գրավիչ գրիչ մը շարժելով»[2]։

1889 թվականի ամռանը տեղի է ունենում մի հանդիպում, որը խոր հետք է թողնում երիտասարդ բանաստեղծի հոգում։ Դեռ նախորդ աշնանը Պոլիս էր ժամանել հռչակավոր դերասան Պետրոս Ադամյանը։ Լուրը մեծ հուզում էր առաջ բերել կեդրոնական վարժարանում, որը գեղեցիկ տողերով նկարագրում է ինքը Ս. Զոպանյանը, բացահայտելով վարժարանում տիրող բարոյական վիճակի մթնոլորտը.

«Լսած էինք համբավը, գիտեինք, որ Շեքսպիրի մեծագույն դերերուն ամենաուժեղ մեկնիչներեն մին նկատված էր նույնիսկ ռուս դժվարահաճ քննադատությունեն. երևակայությունիս գրգռված, ողբերգական հոգեցունց տեսարաններու սարսուռովը արդեն համակված, հանճարեղ հայ արվեստագետ մը տեսնելու հույսովը տոգորված, անձկագին կսպասեինք այդ մեծ դեմքին, որ մեզ պիտի հմայեր, մեզ պիտի լացներ ու մեզ պիտի հպարտացներ»[3]։

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Ե. տարի, 1934, թիվ 5—6, էջ 97։

[2] Ենովք Արմեն, Արշակ Զոպանյան, Կ. Պոլիս, 1913, էջ 11։

[3] Արշակ Զոպանյան, Երկեր, Երևան, 1966, էջ 375—376։ «Մաղիկ» հանդեսում (թիվ 9, 17 հունիս 1895) հրատարակված է «Պետրոս Ադամյան (հիշատակներ)» հոդվածը, որտեղ Արշակ Զոպանյանը գրում էր. «Թատրոնի վրա մեծ դաշափար մը չունինք դեռ, ու Շեքսպիրն ալ, որուն մեծագույն թարգման-

Անհամբեր աշակերտները խմբերով Բերա են գնում, Ֆրանսական թատրոնի ցուցափեղկերում Ադամյանի լուսանկարները զանազան դերերում տեսնելու համար։ Առաջին ներկայացումը «Օթելլոն» պետք է լիներ։ Բայց բախտը Արշակին չի ժպտում։ Հովհաննեան ու Ագապին որոշում են ճիշտ նույն օրերին Արմաշ ուխտի գնալ և Արշակին էլ «բռնի տանիլ»։ Այդ կորուստի համար երիտասարդ բանաստեղծը սրտի խորքում նզովում է «հրաշադործ Աստվածածինն» ու նրա տաճարը։ Միակ մխիթարությունը իր հետ վերցրած Ֆրանսերեն «Օթելլոն» էր, որը ծայրեծայր կարդաց ուխտագնացության ժամանակ. «Կիրակի եամիջօրեին, ուր տեղի պիտի ունենար ներկայացումը, Արմաշի փողոցներեն անցած աուենս, խորհելով՝ որ այդ միջոցին բեմին վրա կը խաղար, ղրկումիս ցավեն լալս եկաւ»։

Հուզաթաթավ, ղդացական, քնարական բնավորություն էր պատանի Արշակը։ Մեծ դերասանին տեսնելը, նրա հետ անձնական ծանոթությունը, նրա ձեռքը սեղմելը, նրա հետ խոսելը քաղցրը ու տառապագին մղձավանջ-ցանկություն է դառնում նրա մեջ, հետապնդում ու հալածում նրան։ Բայց ահա հաջողվում է տեսնել «Օթելլոն»։ Տունդարձին Ադամյանի ձայնն է որոտում նրա հոգու մեջ, և օրեր շարունակ, դպրոցում, թևերը գալարելով, մեծ ողբերգուի աղաղակն է նմանեցնել փորձում։

Ամռանը ընտանիքը Պյոյուքտերե, գյուղագնացության է մեկնում։ Ադամյանը բնակվում էր այնտեղ։ Կողմնակի դիտողի աչքին տարօրինակ պիտի երևար, թե ինչու այդ պատանին երեկոները ստվերի նման հետևում է դերասանին, երբ սա ծովեղերյա զբոսանքի է ելնում, նայվածքով փայփայում մարմնի շրջագծերը,

---

Ներսին մեկն էր Ադամյանը, կըսեին, դեռ չէինք կարդացած։ Քիչ շատ գիտցողները կըսեին, թե այդ խաղերուն մեջ հովերուն խոսող հերարձակ մարդեր կային, գերեզմաններու մեջ գանկերու վրա խոկացողներ կանցնեին, ու մեկն ալ բարձերուն տակ իր կնիկը կը խեղդեր։ Երեւակայությունիս գրգռված այդ արտակարգ տեսարաններու երազովը լեցվեցանք և անձկագին կը սպասեինք այդ տարօրինակ արվեստագետին, որ մեզ պիտի լացըններ»։ Հետագայում իր «Դեմքերին և հատորը պատրաստելիս (Փարիզ, 1924), Արշակ Ջոպանյանը ամբողջովին վերախմբագրել է այս պարբերությունը և տվել այն տեսքը, որը մենք բերում ենք տեքստում։ Հետաքրքրական է նշել, որ Արշակ Ջոպանյանը այդ խմբագրությամբ ավելի հասարակական հնչեղություն է հաղորդել շարադրանքին։ Նման փոփոխություններ նա կատարել է իր բազմաթիվ աշխատություններում։

հանցավորի պես շիկնում, երբ դերասանը հանկարծ նա էր նայում, բայց աշխարհի չափ գոհ, որ այդքան մոտ է մեծ մարդուն։

Վերջապես, մի երեկո, երբ սիրած աղջկա գալուստին սպասող պարմանու նման Ադամյանի երեսլուն էր սպասում, նա հայտնվում է իր ազգական և Արշակի դպրոցակից ու բարեկամ Տիգրան Նազյանի հետ։ Տիգրանը ներկայացնում է Արշակին։ «Իր ձեռքի հպումը ինձի ուժ ավավ ու հիացման քանի մը բառեր կակազեցի։ Գովեստներս ծայրահեղ դառավ ու խնկույն, խոսքը փոխելով՝ ակնարկություն ըրավ քիչ օր առաջ «Արևելք»-ի մեջ հրատարակված «Ադամա վիշտը» փոքրիկ ոտանավորիս, որուն հավներ էր և քաջալերական սիրուն բաներ ըսավ ինձի, որ դիս բոլորովին շվարցուցին։ Հրավիրեց դիս իր տունը երթալ դինքը տեսնել։ Իրմե բաժնված ատենս, հպարտությամբ արբշիռ, փափագ կզգայի դիմացս նկողին խրոխտալու. «Ես Ադամյանին հետ խոսեցա»[1]։

Այնուհետև, բազմաթիվ դրույցներից Ա. Զոպանյանի հիշողության մեջ առհավետ մնում են մեծ վարպետի հայացքները արվեստի մասին։ Գրականության և արվեստի մեջ նա մերժում էր նատուրալիզմը. «Իրականությունը օրինակելը,— կըսեր,— պետք է ընտրել իրականին մեջ ինչ որ նշանակալից է, ինչ որ բնորոշ է և զայն լույսի մեջ դնել, ինչ որ ըսել չէ, թե կը հարներ այն դպրոցին, որո համեմատ պետք է իրականն տարբեր, իրականեն ավելի աղվոր ցույց տալ կյանքն ու մարդիկը... գրականությունը պետք է մարդկային ըլլա,— կըսեր,— շինծու մարդկություն մը, որ ցույց տրվի անթերի և արվեստականորեն գեղեցիկ, չի հետաքրքրեր, չի հուզեր մեզ»[2]։

Հատկանշական է Պետրոս Ադամյանի դիտողությունը «Արևելքին» ընդհանրապես և մասնավորապես Արշակ Զոպանյանին, որը, ինչպես ասվեց, այդ շրջանում «Արևելքի» էջերում բարգմանություններ էր տպագրում ֆրանսիական գրականությունից։ Ադամյանի կարծիքով՝ անհրաժեշտություն չկար այդպես տարվել ժամանակակից ֆրանսիական գրականությամբ, պետք էր մեծ հսկաներին հանրաճանաչ դարձնել ժողովրդի մեջ։

«Ինչո՞ւ Փարիզի մոլուցյանց պատկերները կուզենք մեր մեջ տարածել,— ասել է Ադամյանը Զոպանյանին,— փոխանակ այդ Զոլաներուն, Քարլ Մանդեսներուն, Պուժիններուն, Դանթեն,

---

[1] Արշակ Զոպանյան. Երկեր, Երևան, 1966, էջ 378։

[2] Նույն տեղում, էջ 379—380։

Դյոթե կարդացեք, Հյուգո, Լամարթին կարդացեք, Շեքսպիր, մանավանդ Շեքսպիր կարդացեք»[1]։

Տարիներ հետո «Դեմքերի» հրատարակությունը պատրաստելիս, Արշակ Չոպանյանը իրավացի էր գտնում Պետրոս Ադամյանին այն տեսակետից, որ, այո, անհրաժեշտություն չկար ծայրահեղ հոռետեսներին ու միայն կյանքի տգեղությունները ցուցադրող նատուրալիստներին թարգմանելու և պրոպագանդելու։ Ինչ վերաբերում է հարցադրմանը առհասարակ, ապա, ժամանակի ոգու և պահանջների տեսակետից, ըստ նրևույթին, ավելի իրավացի էին «Արևելք»-ցիները։ «Անհրաժեշտ էր քալել ժամանակին հետ, ճանչնալ մեր օրերուն նոր դեղեցկությունը, օգտվիլ նոր վարպետներեն, որ եթե նվազ մեծ էին քան այդ հսկաները, ավելի հարազատորեն կարտահայտեին մեր ժամանակի հոգեբանությունն ու ճաշակը»[2]։ *Արշակ Չոպանյանի այս խոսքերը լիիսո բնութագրական են և կատարելապես արտացոլում են ութսունականների սերնդի հայացքները, սերունդ, որի դրոշին վինվորագրվեց նաև Արշակ Չոպանյանն արդեն Կեդրոնականի աշակերտական նստարանից։*

Եվրոպական գրականությունից Լեոպարդիի, Վիննիի, Բոդլերի՝ «ցավագին, տառապող հոռետես մարդոց հանճարեղ թարգմաններին» (Ա. Չոպանյան) ծայրահեղ հոռետեսությունը և մտածողներից Բյուխների[3]*, Սպենսերի մատերիալիզմը, շաղախված իր ուսուցիչների՝ Մադաթիա Գարագաշյանի ու մանավանդ Եղիա Տեմիրճիպաշյանի հառաչող հավիտենական տրտմությանը, խոր ազդեցություն էին թողել Կեդրոնականի տակավին պատանի աշակերտի վրա։ «Արևելքում» հրատարակված «Չորքոտանվո մը օրագիրը» գրական էջերի շարքը, որ ստորագրված էր «Ֆանթազիո» կեղծանունով*[4]*, Արշակ Չոպանյանի վրա այդ շնչի շոշափելի ներգործության արգասիքն էր։ Դրանք «հոռետեսությամբ մթնցած էջեր էին, մխիթարիչ հավատալիքներեն որբացած»։ Իրավացիորեն այսպես է գնահատում ինքը՝ հեղինակը, տարիներ հետո։*

---

[1] *«Արևելք», 1891, թիվ 2219։*

[2] *Նույն տեղում, էջ 381։*

[3] *Ինչպես նշում է Զապել Եսայանը իր անտիպ հուշերում, այդ օրերին «Կ. Պոլսո առաջավոր երիտասարդության ավետարանն էր Բյուխների «Ուժ և նյութ» գիրքը»։ ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, ց. 6, թ. 387։*

[4] *«Արևելք», 1891, թթ. 2110, 2127, 2151, 2174, 2213։*

Պատահական չէ, որ շատերը «Ֆանթազիո»-ի տակ նրա Տեմիրճիպաշյանին էին ակնարկում, երբեմն, նույնիսկ այն աստիճան համոզված, որ վավերշատական դրվագների առիթ էր տվել այդ գործը: Տեմիրճիպաշյանի հարազատները խիստ մտահոգվել են և ջանք չեն խնայել սթափեցնելու նրան իր համար կործանարար նկատվող այդ մտասևեռումից[1]:

Ի դեպ, արդեն վերջնականապես մահվան մահճին դամված Պ. Ադամյանը, որ միակ հույսը դրել էր աստծու վրա, «Ան Ֆանթազիո» խորագրով բանաստեղծություն է գրում և հրատարակում նույն «Արևելքում», որի մեջ բարեկամաբար հանդիմանում է Արշակին աստծո դեմ նրա ապերախտության համար[2]:

Բնականաբար, Ա. Զոպանյանն անդրդվելի է մնում իր հայացքներում, որոնց մեջ արդեն մատերիալիստական (բյուխներյան) աշխարհայացքի սերմեր էին ցանված, և նամակով պատասխանում է Պ. Ադամյանին[3]:

Կեղրոնականի արդեն վերջին կարգի աշակերտ Արշակը «Արևելքում» հրատարակում է ընդարձակ գրախոսական օրիորդ Ալիսի (տիկին Զապել Ասատուր-Սիպիլ) «Աղջկան մը սիրտը» վեպի մասին: Այդ ուսումնասիրությունը մտնում է նաև Զոպանյանի անդրանիկ՝ «Արշալույսի ձայներ» ժողովածուի մեջ: Ուսումնասիրությունը կրում է սկսնակի և իր ժամանակի համար հատկանշական գրական քննադատության կրկնակի կնիքը: Այնուամենայնիվ, Զոպանյանը հանդես է բերում գրադատական անտարակուսելի դիտողականություն և դեղարվեստական երկի ինքնատիպ ըմբռնում: Զոպանյանը, որ այլապես բարձր է գնահատում վեպը, նրա հեղինակին համարելով «ռոմանթիքներու վերջինն ու իրապաշաններու առաջիններեն մին» արևմտահայ գրականության մեջ, անում է մի շարք հետաքրքրական դիտողություններ, որոնք շահեկան են իր իսկ հայացքները պարզելու տեսակետից:

Ըստ նրա, հեղինակը արհեստական և բռնազբոսիկ կացություններ է ստեղծում, որպեսզի վեպը զարգանա: «Ասիկա մեծապես քննադատելի է,— նկատում է գրախոսը,— դեպքեր ստեղծել, որպեսզի գործողություն առաջ երթա, փոխանակ թողլու որ

---

[1] Զարուհի Գալեմքարյան, *Հատկաբաղ*, Երևան, 1965, էջ 98:

[2] «Արևելք» 1891, թիվ 2119:

[3] ԳԱԹ, Արշակ Զոպանյանի ֆոնդ, IV բաժին, № 5 և Ա. Զոպանյան, Նամականի (այսուհետև՝ Նամականի), «Սովետական գրող», Երևան, 1980, էջ 30—35:

գործողությունն ինքնին ընթանա, և ինք ծնունդ տա դեպքերուն»[1]։ Հեղինակի գեղարվեստական վարպետության պակասի արգասիք է համարում Զոպանյանը նաև այն, որ գլխավոր հերոսները անդուն են, զուրկ բնավորության տրամաբանական զարգացումից։ Եվ, վերջապես, վնասի գլխավոր դեղեցկությունը համարում է այն պատկերները, որոնք գծված են ռեալիստական դպրոցի հետևողությամբ[2]։

Արդեն այս առաջին գրադատական հոդվածից երևում է, որ Զոպանյանի հայացքներում սկսել էին ձևավորվել գրականության ռեալիստական տեսության սաղմերը, որոնք ավելի որոշակի գրսևորվում են Կեդրոնականը ավարտելուց և ամբողջովին գրական գործունեության նվիրվելուց հետո։

1891 թվականի հոկտեմբերի 27-ին, Կեդրոնականի շրջանավարտների պարգևաբաշխության հանդեսին, Զոպանյանը կարդում է իր «Բանաստեղծության վախճանը» տիտղոսով ճառը։ Այդ ճառը կարևոր է գրականություն մուտք գործող երիտասարդի հայացքները պարզելու տեսակետից և արժե մի փոքր ծանրանալ նրա վրա։

Իր ճառում Զոպանյանը խորին ցավով գուժում է բանաստեղծության մոտալուտ վախճանը։ Ըստ նրա, բանաստեղծությունը մարդկային հասարակության մանկական շրջանի օրորն էր, իսկ արդեն հասակ նետած, «պեխավոր», ամեն ինչ բանականության քննությանը հանձնող մարդը այլևս բանաստեղծության կարիքը չի զգում։ «Մեր շոգիի և էլեկտրականության դարը կը ձանձրանա բառերու երաժշտութեննեն,— ասում է նա,—ու թերևս մոտ ըլլա այն օրն, որ վերջին բանաստեղծը բանաստեղծության մահն երգե»[3]։

Նա նկատում է, որ XIX դարի բանաստեղծությունը ջանում է գիտության հետ զուգընթաց քայլել, բայց երկմտում է, արդյոք այդ բանաստեղծությունը արժանի՞ է բանաստեղծություն կոչվելու։ Հետաքրքրական է այն երևույթը, որ Զոպանյանը այնպիսում մերժում է ռեալիզմը, հանդես է գալիս ռոմանտիզմի ջերմ պաշտպանի դերում, իսկ արձակում, ընդհակառակն, նրա կարծիքով ռեալիզմը պետք է միակ գերիշխանություն վայելի։

---

[1] Արշակ Զոպանյան, *Արշալույսի ձայներ. Կ. Պոլիս, 1891, էջ 153։*

[2] *Նույն տեղում, էջ 160։*

[3] *«Արևելք», 1891, թիվ 2333։*

Որոշ իմաստով պատահական պիտի չհամարել Զոպանյանի նկատմբը: Բանաստեղծության վախճանի մասին նրա դատողությունները կատարված են ֆրանսիական դրականության նյութի վրա, իսկ այնտեղ, նրա օրերին, բանաստեղծությունը իրոք ապրում էր հոգեվարք զանազան լրջուկ «դպրոցիկների» բովանդակազուրկ ու ձևամոլական ոգևարումի լաբիրինթոսում: «Դեկադանների», «սենբոլիսթների», «էնիւեսիոնիսթների» տաղաչափական հիմար դրությունները կը բավեն,— հայտարարում է Զոպանյանը,— ցուցնելու, թե ոտանավորի վերջին բառն ըսված է»[1]:

Տանինը տարևկան էր Զոպանյանը, բայց արդեն ծանոթ անուն էր հասարակությանը, «Արևելքում», «Մասիսում», ինչպես նաև արդեն «Հայրենիքում» իր բեղմնավոր աշխատակցությամբ և իր հայացքներով կարող էր որոշակի ազդեցություն ունենալ շրջապատի վրա: Այդ է պատճառը, որ «Արևելքում» ապագրվելուց հետո նրա «Բանաստեղծության վախճանը» ճառը բուռն վիճաբանության առիթ տվեց:

Համանուն հոդվածով Զոպանյանին պատասխանեց Տիրան Զրաքյանը (Ինարա): Այս հոդվածը, առհասարակ, խիստ կարևոր է Ինարայի կյանքի ու գործունեության վաբընթաց կորագիծը հշտիվ գնահատելու տեսակետից: Ինարան փայլուն, այլև կրքոտ մերժում է Զոպանյանի՝ բանաստեղծության դամբանականը: Եթե բանաստեղծությունը պիտի վախճանվի, «սակայն կը նշանակե, թե սիրտը պիտի վախճանի»,— ասում է նա: Ինարան համամիտ չէ այն գուպահեռականին, որ տարել էր Զոպանյանը կրոնի և բանաստեղծության միջև: «Պ. Զոպանյան, իբր պատճառ գնարին մահվան, կը դնե մանավանդ սա, թե՝ կրոնական հավատքը կսկսի դիտության բոցերուն առջև առկայծիլ, մարիլ... Իրավունք ունի, այո, դիտությունը յուր փաստերով սիտի հաղթանակե օր մը... Եվ, սակայն, բանաստեղծության աղբյուրը լոկ հավա՞տքն է. ոչ, բանաստեղծությունը նախ անսահման աղբյուր մը ունի, որ է Տիեզերքը, բնությունը և անհամար աղբյուրներ՝ որք կանվանվին սեր, ընտանիք, առաքինություն, դիտություն (որովհետև դիտությունն ալ իր բանաստեղծությունն ունի), կյանք, մահ, վիշտ և այլն»: Ինարայի հոդվածը գեղեցիկ գեղոն է կյանքին՝ իր հրճվանքներով ու վշտերով ամբողջական,

[1] «Արևելք», 1891, թիվ 2333:

և քանի դեռ կա կյանքը, եղրակացնում է նա, պիտի լինի բանաստեղծությունը[1]:

Զոպանյանին պատասխանում է նաև Գառնիկ Ֆնտզլյանը «Բանաստեղծությունը չմեռնիր» հոդվածով: Ա. Զոպանյանը առարկում է նրան՝ մեկ անգամ ևս հանդես գալով «Բանաստեղծության վախճանը» խորագրով դրությամբ, առիթ ընծայելով Գ. Ֆնտզլյանին՝ տպագրելու «Գիտություն և բանաստեղծություն» տիտղոսված մի երկրորդ հոդված:

Ֆնտզլյանը հարցը փոխադրում է գիտական հողի վրա և ապացուցում, որ գիտության զարգացումը ավելի ընդլայնում է մարդու ճանաչողության սահմանները, ուստի լայն դաշտ բացում բանաստեղծության համար: «Որքան ավելի ահեղափառ է Հերշըլի և Հումբոլդի տիեզերքը, քան Անաքսիմենեսինը,— գրում է նա,— և իրավունք չունի՞նք ըսելու՝ որքան ավելի բանաստեղծական: Ավելի ճիշտ չպիտի՞ լիներ, ուրեմն բանաստեղծության դայակը կոչելու գիտությունը և ոչ դահիճը»[2]: Առարկելով Զոպանյանին՝ Ֆնտզլյանը գտնում է, որ ֆրանսիական անկումայնությունը՝ «դեկադանսը», ոչ թե բանաստեղծության բնական վախճան է նշանակում, այլ՝ շեղում, «զարտուղություն մը»:

Զոպանյանի ավարտական ճառը մասամբ բացատրում և ինչ-որ չափով լույս է սփռում նրա իսկ բանաստեղծական արտադրանքի ղգալի մասում գերակշռող հիվանդոտ զգայնության և վշտահամբույր տրտմության վրա, որը, ասես, նման լինի հիվանդ զավակի անկողնի մոտ կանգնած վշտահար մոր լացին:

Ազգային Կեդրոնական վարժարանի անդրանիկ հունձքը տասնուբ շրջանավարտներ էին: Արշակ Զոպանյանին այդ օրը հանձնվից վկայական, որով նրան շնորհվում էր «Դպրության պսակավորի» աստիճան: Բայց մինչև վկայականն ստանալը նա արդեն հուլիսին փաստորեն ավարտել էր ուսումը վարժարանում: Երիտասարդ շրջանավարտի առջև լայն ընտրություն չկար, միջոցները չէին ներում: Կսկիծով հրաժարվում է Փարիզ մեկնելու և ուսումը շարունակելու մտքից:

Ճիշտ այդ օրերին Հովհաննես Շահնազարին հաջողվում է արտոնություն ստանալ «Հայրենիք» օրաթերթ հրատարակելու վերաբերյալ, իսկ Գումգափուի ցույցի առիթով բանտ նետված

---

[1] «Արևելք», 1891, թիվ 2346:

[2] «Արևելք», 1891, թիվ 2356:

Արփիար Արփիարյանը ապատ է արձակվում և ստանձնում խմբագրապետի պաշտոնը: Խմբագրապետի և տնօրենի հրավերով Սրշակ Չոպանյանը մշտական աշխատանքի է անցնում խմբագրությունում:

1891 թվականի հուլիսի 13-ից սկսում է հրատարակվել «Հայրենիք» օրաթերթը, արևմտահայ 80-ականների մարտական օրգանը:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Արևմտահայ 80-ականները

1880 թվականի սեպտեմբերի 7-ին Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պաշտոնական ներկայացուցիչների կողմից ստորագրվեց և չորս օր անց Բուրքիայի կառավարությանը ներկայացվեց երկրորդ, այս անգամ համատեղ, նոտան: Ինչպես և նախորդը, որը ստորագրել էին նույն տերությունները առանձին-առանձին, այնպես էլ այդ համատեղ ստորագրություններով նոտան վերաբերում էր Բուրքական կառավարության կողմից Բեռլինի կոնգրեսում վերցրած հանձնառությունները կատարելուն, ավելի ճիշտ՝ չկատարելուն: Առաջին նոտային Բուրքիան պատասխանել էր, թատ էության, արհամարհանքով: Երկրորդ նոտան էլ, վերջին հաշվով, չհանգեցրեց որևէ գործնական արդյունքի: Ինորոշ է երկրորդ նոտայում բերված հետևյալ միտքը. «Այն արտահայտությունները, որոնցով Բ. դուռը իրեն իրավունք է համարել արտահայտվել բնակեցված պրովինցիաներում կատարվող ռեպրեսիաների մասին, ապացուցում են, որ նա չի ընդունում անարխիայի այն սահմանը, որը սիրաշահում է այդ պրովինցիաներում, և իրերի դրության այն լրջությունը, որի շարունակությունը, ամենայն հավանականությամբ, կարող էր հանգեցնել այդ լայնածավալ շրջանների ամբողջ քրիստոնյա բնակչության ոչնչացման»[1]:

Այսպիսով, երկու կետ միանգամայն ակնհայտ էր վեց տերություններին. ա) «այդ լայնածավալ շրջանների ամբողջ քրիս-

[1] Միջերիմբ թատ Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դ. վերջերին, Երևան, 1968, էջ 158:

տոնյա բնակչության» վիճակը լուրջ է այն աստիճան, որ բնակչության (հայերի) գլխին կախված էր ոչնչացման սպառնալիքը, բ) իրենք, վեց տերությունները, կանխել չեն կարող, մանավանդ որ չեն էլ ուզում (ինչպես պարզվեց հետագայում, 1895—96-ի ջարդերի ընթացքում) կանխել այդ բնաջնջումը, իսկ նոտայի տեքստեր պարունակող թղթերի հետ վարվելու ձևը սուլթանը հո լավ գիտեր, թող որքան ուզում են, ուղարկեն:

Նույն թվականի հոկտեմբերի 3-ին հետևեց Թուրքական կառավարության պատասխան հայտարարությունը, որով ըստ էության մերժվում էր «բարենորոգությունների ծրագիրը»:

Այսպիսով, վերջակետ դրվեց հայության վառ հույսերի ու ռոմանտիկ երազների ժամանակաշրջանին, որը իր դեպ գրականության մեջ ևս արտացոլվում էր ռոմանտիզմի տիրապետությունով: Սկսվում էր նոր շրջան արևմտահայության հասարակական կյանքում:

Հայ գյուղացու վիճակը օրըստօրե ծանրանում էր: Հողը արդեն իսկ նրա սեփականությունը չէր, իսկ նոպատիկ-քառապատիկ հարկերը պարզապես հասցրել էին սոցիալական թշվառության եզրին:

Ռուս ուսումնասիրող Գոլոբորոդկոն գույքային և եկամտային հարկի վերաբերյալ հետևյալ օրինակն է բերում Էրզրումից. «2000 հայ ընտանիքից այդ հարկը գանձվում էր 430.000 պիաստրը, իսկ 8000 մահմեդական ընտանիքից՝ ընդամենը 395.000»[1]:

Կառավարությունը ձեռնամուխ էր եղել հայկական գավառները մահմեդական հորդաներով լցնելու ծրագրին: Ի դեպ վերաբնակեցված մահմեդականներին որևէ նյութական օժանդակություն չէր տրվում, պարզապես նրանց հրահրում էին կողոպտելու և ոչնչացնելու հայ աղգաբնակչությանը, այլապես իրենք էին դատապարտված աղքատությունից ոչնչանալու[2]:

Հայ գյուղացու իրավական վիճակի մասին խոսելը նույնիսկ ավելորդ է. Ղուրանի առջև նա ոչյա էր, իսկ Ղուրանը ամենակարող ուժն էր ավատական Թուրքիայում:

Ամեն ինչից երևում էր, որ սուլթանականությունը սկսել էր դործադրել հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագիրը և արդեն

---

[1] Н. Н. Голобородько, Старая и Новая Турция, 1908, стр. 22.

[2] Տե՛ս Положение армян в Турции, 1896, стр. 67—68.

առիթներ էր փնտրում, կամ ինքն էր պրովոկացիաներ սարքում ջարդեր կազմակերպելու համար։

Աշխատանք գտնելու հույսով գավառից եկող ու Պոլսում կենտրոնացող պանդուխտների թիվը ապառնալի չափեր էր ընդունում, հասնելով արդեն 80.000-ի[1]։ Քաղաքաբնակ աշխատավոր հայության վիճակն էլ հետզհետե բավարար լինելուց։

Առհասարակ XIX դարավերջի Թուրքիան միջնադարյան արհեստագործական արտադրությամբ երկիր էր։ «Նրա հետամնացությանը համաձուլված էր եվրոպական կապիտալիզմի հետ, որը ամեն կերպ կաշկանդում էր Թուրքիայի զարգացումը դեպի կապիտալիստական արտադրական հարաբերությունները»[2]։ Սա նշանակում էր, որ քաղաքները լեցվում էին աշխատանքի ազատ ձեռքերով, բայց պահանջարկը համարյա բացարձակ զրոյի էր հավասար։ Նման վիճակը, հասկանալի է, առաջին հերթին ծանր պետք է նստեր բազմահազար հայ պանդխտության և ապա, առհասարակ, քրիստոնյա ու, մասնավորապես, հայ աշխատավորության վրա։

Բուրժուական արտադրահարաբերությունները թեպետ շատ դանդաղ, այնուամենայնիվ, աստիճանաբար մուտք են գործում երկիր։ Սրվում և մերկանում են սոցիալական հակասությունները քաղաքում։ Ավանդական «բարի» ժամանակները կարճ միջոցում սկսում են հուշ դառնալ։ Բուրժուազիան բերում է իր նոր բարքերը ընտանիքում թե հասարակության մեջ, մարդկանց հարաբերություններում, որոնք որքան էլ անմարդկային էին, որքան էլ անցանկալի նահապետական կարգուկանոնին և բարոյականին սովոր մարդկանց համար, այնուամենայնիվ բուրժուական հասարակարգի մուտքը նոր ու կարևոր քայլ էր հասարակության առաջընթաց զարգացման ճանապարհին։

Քաղաքին հետևում էր գավառը։ Ազգային-քաղաքական ճնշման դեմ պայքարող արևմտահայ գավառի, բնատնտեսությանը խարխլված նահապետական գյուղացու աչքին իրավամբ սոցիալական չարիք էր երևում ավանդականը քարուքանդ անող այդ նոր ուժի մուտքը։ Ստացվում էր օբյեկտիվ մի հակասություն, որից ելքը դժվարին էր ու հիմնականին հայ գյուղացու

---

[1] Братская помощь армянам, 1897, стр. 546.

[2] Ս. Մարկոսյան, *Արևմտահայության վիճակը XIX դ. վերջերին*, Երևան 1968, էջ 31։

համար։ Մի կողմից՝ ազգային-ազատագրական պայքարը պահանջում էր ազգի կոնսոլիդացիայի իրագործում, իսկ դա տվյալ էտապում հնարավոր էր միայն կապիտալիստական հարաբերությունների զարգացման միջոցով, մյուս կողմից՝ գյուղացին ձգտում էր կապիտալիզմից խուսափել իր բնատնտեսության ինքնուրույնությունը պահպանելու միջոցով։

Նորի, հեղափոխականի կրողը բարձրացող բուրժուազիան էր, որը առաջադիմական էր այնքան ժամանակ, քանի դեռ չէր լուծված նրա պայքարը ավատականության դեմ։ «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունը եղել են ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»... Գլխավոր դասակարգը, որն այն ժամանակ, այդ պատերազմների ժամանակ և մասնակցելով այդ պատերազմներին, գնում էր վերընթաց դծով և որը միայն ինքը կարող էր ճնշող ուժով դուրս գալ ֆեոդալական-աբսոլյուտիստական հաստատությունների դեմ՝ բուրժուազիան էր։ Զանազան երկրներում, ներկայացված լինելով ունևոր ապրանքարտադրողների տարբեր խավերի կողմից, այդ բուրժուազիան տարբեր աստիճանի առաջադիմական էր և երբեմն... նույնիսկ հեղափոխական, բայց դարաշրջանի ընդհանուր գիծը հենց բուրժուազիայի առաջադիմականությունն էր, այսինքն՝ ֆեոդալիզմի դեմ մղվող նրա պայքարի չլուծվածությունը, անավարտությունը»[1]։

Ստեղծված նոր սոցիալ-քաղաքական պայմանները պահանջում են նոր մոտեցում հասարակական-քաղաքական հարցերին և կյանքի են կոչում գրականության մեջ հայտնի «80-ականներ» անունով գործիչների խմբին, որոնք ոչ այլ ոք էին, քան բարձրացող, առաջադիմական բուրժուազիայի գաղափարախոսները, բուրժուական դեմոկրատիայի առավել արմատական սերունդը։

80-ականների գործունեությունը կենտրոնանում է քաղաքական, լուսավորական և գրական-գեղարվեստական բնագավառներում։ Ռեալիստական հայացքը իրականության նկատմամբ

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 26, էջ 172—173։

պահում է թե տնտեսական և թե գործնական ուղենիշ նրանց գործունեության բոլոր այդ ասպարեզներում:

Ազգային-ազատագրական պայքարի ռոմանտիկայի շրջանը անցած էտապ է համարվում: Շարժումն այժմ առանում է շեշտված սոցիալական բնույթ, երբ հայ բարձրացող բուրժուազիային, Թուրքիայում ոլորող ավատականության դեմ պայքարում, ինչպես նաև թուրքական բուրժուազիայի հետ մրցակցության մեջ, անհրաժեշտ էր ունենալ իր ազգային շուկան, իր ազգային հայրենիքի սահմաններում:

Այլևս հույս դնել քաղաքական-ճակատային լուծման վրա անիմաստ էր: Միջազգային դիվանագիտության մեջ «հայկական հարցը» դարձել էր Թուրքիայի նկատմամբ կապիտալիստական խոշոր երկրների ախորժակի հարց: «Հայկական հարցը» օգտագործվում էր որպես մի լայծ ավելի համեղ ու մեծ պատառներ պոկելու համար: Այդպես էր, որ Անգլիան կուլ ավեց Կիպրոսը, Ֆրանսիան նշան բռնեց Սիրիայի վրա, իսկ ցարական Ռուսաստանը հույս էր դնում ռազմական ամրոցներ կառուցել նեղուցների երկու ափերին: 80-ականների վեհապետ Արփիար Արփիարյանը դեռ 1878 թվականին քաջ գիտակցում էր հայկական հարցի դիվանագիտական լուծման անհնարինությունը: «Մշակում» Հայկակ ստորագրությամբ նա գրում էր. «Անգլիո պաշտպանությամբ և Թյուրքաց ձեռք բարեկարգություն հուսալը մի utopi *է»*[1]:

Ազգային-ազատագրական պայքարի վրա ռևալիստական հայացքը պահանջում էր հիմնովին վերակառուցվել, գալիք մարտերին նախապատրաստել ամբողջ ազգը: Իսկ դա նշանակում էր հասնել ազգային կոնսոլիդացիայի: Կոնսոլիդացիայի անհետաձգելի անհրաժեշտությունն էր 80-ականների հնարավորություններից: Նրանք, սակայն, փայլուն դեր խաղացին գաղափարախոսական ազդակի առավել լայն օգտագործման հարցում: Ժամանակի առաջավոր եվրոպական (այդ թվում և ռուսական) լուսավորության տարածմանը զուգընթաց, նրանք խրախուսում էին ազգային դասակարգային մշակույթի տարածումը, արմատավորում աշխարհաբարը, գրականության մեջ՝ ռևալիզմը, համառ պայքարում էին ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար: Գաղութացնության ծրագիրը, որ կարողացան մասամբ գործա-

[1] *«Մշակ», 1878, № 42:*

դրել, կոչված էր առավելագույն նպաստը բերելու ազգի լուսավորման, քաղաքակրթման, նրան ինքնագիտակցության հասցնելու գործին:

Ազգային-ազատագրական պայքարի վրա ռեալիստական հայացքը պահանջում էր նաև հաշվի նստել իր ու հակառակորդի հնարավորությունների հետ, գալիք ազատագրական պատերազմում փնտրել հնարավոր դաշնակիցներ: Պատահական սխալ չհամարել, որ 80-ականները շրջադարձ կատարեցին դեպի Ռուսաստան, թեպետ հասկանում էին, որ ցարիզմն էլ իր շահերն է հետապնդում «հայկական հարցում»: Այնուամենայնիվ, հենց այն հանգամանքը, որ ռուսական պետության շահերի իսկ բերումով նա կարող էր լինել հայ ազգային-ազատագրական պատերազմի բնական դաշնակից, 80-ականներին կողմնորոշեց դեպի Ռուսաստան: Այդ կողմնորոշման մեջ կար մի էական կարևորության հանգամանք: Ֆեոդալիզմի դեմ պայքարը թուրքական բազմազգ կայսրության պայմաններում անխուսափելիորեն ընդունում էր ազգային երանգավորում: Որպես կանոն կալվածատերը այդ երկրում թուրքն էր ու մահմեդականը, իսկ գյուղացին՝ քրիստոնյան ու մասնավորապես հայը: Սա էլ կազմում էր ազգային-ազատագրական շարժման դասակարգային բովանդակությունը: Այս պայքարում դեռևս թույլ հայ բուրժուազիան կանգնած էր երկընտրանքի առջև. ո՞ւմ տալ նախապատվությունը: Թուրքակա՞ն, որ անմիջական մրցակից էր, թե ռուսական բուրժուազիային: Բնական է, որ բարձրացող հայ բուրժուազիան չարիքի փոքրագույնն էր համարում՝ նախապատվություն տալ Ռուսաստանի բուրժուազիային, որտեղ բոլոր տվյալներով խոսում էին մոտալուտ բուրժուա-դեմոկրատական հեղաշրջումների մասին:

Բնավ 80-ականների մեղքով չէ, որ սուլթանականությունը հրահրեց դարավերջյան ջարդերը և դրանով իսկ, որոշակի ժամանակով, կտրեց բնական զարգացման շղթան:

Այդ վիթխարի ծրագրի գործադրման ծանրությունը համարյա ամբողջությամբ ընկավ դեմոկրատական մշակույթի վրա: Դրանով պետք է բացատրել այն ծաղկումը, որ ապրեցին արևմտահայ մամուլը և գրականությունը մոտ 10 տարիների ընթացքում՝ 80-ականներից մինչև 90-ականների կեսերը:

Սուլթանական կառավարությունը կիրառում էր հնարավոր բոլոր արգելքները: Գրաքննությունը սահման չէր ճանաչում:

Արգելված էին «Հայաստան» և հայրենասիրություն հիշեցնող բառերը: Տեսորի էին ենթարկվում ու բանտերը նետվում կասկածելիները: Ի դեպ որոշ ժամանակ արգելված էր նույնիսկ չափածո բանաստեղծությունը, որովհետև սուլթանին համոզել էին, թե չափածոն ավելի է զրգռում հայրենասիրական տրամադրությունները: Մասամբ այս զավեշտական արգելքի արդյունք էր արևմտահայության մեջ արձակ բանաստեղծության երևալը, որի հիմնադիրներից մեկը հենց Ա. Չոպանյանն է: Որոշ շրջանում արգելված բառերի թվին էր պատկանում նաև «աստղ» բառը, որի մեջ Համիդը ակնարկություն էր տեսնում իր պալատին՝ Յըլդին (Թուրքերեն՝ «աստղ»): Չոպանյանի մի բանաստեղծությունում «աստղ» բառը դանվելու պատճառով «Հայրենիք» ԹերԹը երեք ամսով փակվում է[1]:

Այս պայմաններում կյանք տալ մամուլի երեք օրգաններին՝ «Արևելքին», «Մասիսին», «Հայրենիքին», որոնք տարբեր տարիներին միմյանց գործը և դաղափարները շարունակելով կամ նրանցից դուրահան, կարողացան բարձր բռնել 80-ականների վառած ջահը և տանել ժողովրդական ազատագործների խորքերը՝ դա պարզապես հերոսություն էր:

Ռահվիրան էր, որպես մեթոդ և ուղղություն, շնչում այդ մամուլի մեջ: Նա արտացոլում էր ժողովրդի կոնկրետ կյանքը և քաղաքիով թելերով կապված էր բուն իսկ ժողովրդի հետ: Բնավ պատահական չէ, որ հիշյալ մամուլը ունենում էր մինչ այդ չտեսնված տպաքանակներ[2]:

«Արևելք» ԹերԹի 1884 թվականի գործունեության մասին, երբ այն խմբագրում էր Արփիարյանը, 1921 թվականին Հրանտ Ասատուրը վերհիշում էր. «Օրը օրին ապրված կյանքի պատկերներ, ժողովրդական բարքերու ուսումնասիրություններ միջավայրին նկատմամբ... հոդվածներ... կը բերեին հոն»[3]:

Առաջին անգամ «Մասիսի» էջերում է, որ հայ մամուլը անդրադառնում է այնպիսի մի խուլ ու մոռացված խավի, ինչպիսին պանդուխտներն էին: «Հայրենիքը» առաջին իսկ ծրագրային խմբագրականում հայտարարում է. «Գոյության իրավունք չունի

---

[1] Թովմաս Թեզլեան, *Բանաստեղծության ամրողջական հավաքածու, հ. 1, Փարիզ, 1929, էջ ԻԶ:*

[2] *Տե՛ս Հ. Մաթզարյան, Տիգրան Կամսարական, Երևան, 1964, էջ 47:*

[3] *Հր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1821, էջ 253:*

անգույն, չեզոք թերթը։ Հանրության վերաբերյալ խնդիրներուն մեջ չեզոք մնալը վատություն է»։ Եվ այնուհետև, որ այս թերթը «պիտի կրնա մտնել մեր ընկերության ամեն խավերուն մեջ. եթե պիտի ըլլա ապարանքի թերթը, պիտի ըլլա նամանավանդ խրճիթին թերթը. եթե պիտի ըլլա զարգացյալին թերթը, պիտի ըլլա նամանավանդ մտքով հետամնացին թերթը, և իր ազդեցությունը պիտի տարածվի ընկերական ամեն դասերու վրա»[1]։

Ընդհանրացնելով այդ շրջանում մամուլի դերը, Զապել Եսայանը իր անտիպ հուշերում գրում էր. «Մամուլը, հանձին «Հայրենիքի», այլևս բացահայտ կերպով կը դառնար օրգանը «հեղափոխական» բուրժուազիայի»[2]։

Այդ շրջանի մամուլի կատարած խոշոր գործերից մեկը արևմտահայ աշխարհաբարի տարածումն է, որը վերջնականապես հաղթական դուրս եկավ և վիթխարի նշանակություն ստացավ ազգի կոնսոլիդացիայի տեսակետից։

Նույն մամուլում էր, որ զարգացավ ու հասակ նետեց արևմըտահայ ռեալիստական գրականությունը։

Թե նոր մամուլի և թե նոր գրականության ակունքներում, անկախ այն բանից՝ գիտակցել են արդյոք 80-ականները այդ հանգամանքը, ընկած են Հարություն Սվաճյանի և Հակոբ Պարոնյանի դեմոկրատական ավանդույթները։ Այդպիսով, այդ մամուլն ու գրականությունը ունեին թե՛ սոցիալ-քաղաքական պարարտ հող ժամանակակից հայ կյանքում և թե՛ թռիչքի համար հարմար պատվանդան, նույնպես հայ իրականության մեջ[3]։

Անշուշտ, ռեալիզմի ձևավորումը արևմտահայ գրականության մեջ և նրա հետագա զարգացումը չէր կարող ընթանալ առանց ուրիշ գրականությունների ազդեցության։ Այս տեսակետից անհամեմատ մեծ էր դասական և ժամանակակից ֆրանսիական ու ռուսական գրականությունների այնպիսի ռեալիստ-վարպետների դերը, ինչպիսին էին Դոդեն, Մոպասանը, Ֆլոբերը, Գոգոլը, Տուրգենևը, Դոստոևսկին, Տոլստոյը։

80-ականների ամենօրյա մտահոգության առարկա էր հայ ժողովրդի երկու հատվածների մերձեցումը, նրանց հոգևոր ար-

---

[1] «Հայրենիք», 1891, թիվ 1։

[2] ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, ց. 6, թ 381։

[3] Այդ հարցը մանրամասն և ճիշտ դիրքերից լուսաբանված է Մինաս Հյուսյանի «Գիրգոր Զոհրապ» աշխատությունում, 1964 թ. էջ 66—68։

տարրանքի փոխադարձ ճանաչումը, մանավանդ արևելահայ գրականության խոշոր դեմքերի՝ Ս. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պռոշյանի, Գ. Սունդուկյանի, Րաֆֆու, Հ. Պատկանյանի, Շիրվանզադեի պրոպագանդը արևմտահայության մեջ։ Դժվար չէ նկատել, որ այս ծրագիրը նույնպես հետապնդում էր ազգի կոնսոլիդացիայի և ինքնագիտակցության գալու նպատակներ։

Ընդհանրացնելով 80-ականների հայացքները գրականության վերաբերյալ, «Հայրենիք» օրաթերթը իր խմբագրականներից մեկում գրում է. «Բարգավաճ գրականություն մը կը նպաստե ժողովրդին մեջ տարածելու զգացումի մաքրություն, արտի ազնվացում, գաղափարի ընդարձակություն, այն ամեն միջոցները, որոնցմով մարդիկ դյուրություն կունենան ապականության տարրերեն զերծ մնալով թե նյութապես և թե բարոյապես քաջառողջ կյանք վարելու։ Գրականությունը զորավոր հանճանիական մըն է ընդդեմ շատ մը հիվանդությանց, որոնք կը ջլատեն, կը սպառեն, կը մահացնեն մարդս»[1]։

90-ական թվականներին կառավարական սեղմումներն ու հետապնդումներն ավելի են կատծրանում։ «Հայրենիքը», սակայն, Արփիար Արփիարյանի, Լևոն Բաշալյանի, Երվանդ Օտյանի և մյուս աշխատակիցների ջանքերով, ինչպես նաև Գրիգոր Զոհրապի ու Տիգրան Կամսարականի «Մասիսը» կարողանում են հաղթահարել խոչն ու խոչը և առաջ տանել ժողովրդի լուսավորության և ինքնաճանաչողության գործը։

«Չի կարելի մարքսիստ լինել, առանց հարգանք չտածելով բուրժուական այն մեծ հեղափոխականների նկատմամբ, որոնք համաշխարհային-պատմական իրավունք են ունեցել խոսելու բուրժուական «հայրենիքների» անունից, որոնք ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի մեջ քաղաքակիրթ կյանքի են բերած ազգերի տասնյակ միլիոնավոր մարդկանց»[2],— ասում է Վ. Ի. Լենինը։

Իրենց ջանքերի օբյեկտիվ բովանդակությամբ և արդյունքներով արևմտահայ 80-ականները եղան իսկական «բուրժուական մեծ հեղափոխականներ», որոնց կյանքի իմաստն էր ժամանակակից քաղաքակրթության մակարդակին բարձրացնել ճնշված, հալածված ու հարատահարված հայ ազգը։ Հենց դրա համար էլ

---

[1] «Հայրենիք», 1894, թիվ 964։

[2] Վ. Ի. Լենին, Լիմ, հ. 26, էջ 272—273։

մեր ժողովուրդը նրախտագիտության և խորին հարգանքի զգացում է տածում Արփիար Արփիարյանի, Տիգրան Կամսարականի, Լևոն Բաշալյանի, Դրիգոր Զոհրապի և 80-ականների փայլուն փաղանգը կազմող բոլոր գործիչների նկատմամբ:

Արշակ Չոպանյանը մեկն էր նրանցից, որ իր բոլոր արմատներով սնվել է 80-ականների գաղափարների պարարտ հողում և իր ամբողջ գործունեության ընթացքում ջանացել իրականության վերածել դրանք: Նվ այդ գաղափարների ընթման պրոցեսը նա անցավ «Հայրենիքի» քուրայում:

«Հայրենիքի» շրջանը 80-ականների գագաթնակետն էր: Օրաթերթի ծրագրում և գործունեության մեջ խտացվել և նոր զարգացում էին ստացել շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մշակվող գաղափարները: «Հայրենիքի» ստեղծման առաջին օրերից, որպես օգնական-խմբագիր, իսկ այնուհետև որպես մշտական աշխատակից, Ա. Չոպանյանը գործուն մասնակցություն բերեց թերթի աշխատանքներին: «Արշակ Չոպանյան ամենեն բեղուն գրագետն էր այդ շրջանին, թե «Հայրենիքի», թե «Արևելքի» և թե «Մասիսի» կաշխատակցեր միանգամայն»,— վերհիշում է Երվանդ Օտյանը[1]:

Այդ տարիներին սկսում են ձևավորվել Արշակ Չոպանյանի հայացքները կյանքի և գրականության ու արվեստի վերաբերյալ, որոնք արդեն նույն շրջանում, բայց մանավանդ 1895—96 թվականների ջարդերից հետո, աստիճանաբար, ցայտուն դրսևորվում են նրա գործունեության մեջ:

Արփիար Արփիարյանի, Դրիգոր Զոհրապի, Լևոն Բաշալյանի, Տիգրան Կամսարականի և մյուսների հետ ամենօրյա աշխատակցությունը և նույն գաղափարների գործադրության համար հա-

---

[1] Երվանդ Օտյան. *Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 28: Ե. Օտյանը չի չափազանցում: Լուսաբանության համար կարելի է բերել այսպիսի վիճակագրություն. միայն 1891—92 թվականներին «Արևելք», «Հայրենիք» օրաթերթերում և «Մասիս շաբաթաթերթում Ա. Չոպանյանը տպագրել է 35 հոդված, 33 արձակ ստեղծագործություն, 54 քերթված, թարգմանական 8 գործ: Սրան պետք է ավելացնել «Հայրենիքի» 13 համարներում շարունակաբար տպագրվող «Թուղթի փառքը», ինչպես նաև այդ վիպակի առանձին հրատարակումը, «Արշալույսի ձայներ», «Թրթռումներ» ժողովածուների, «Դիպուկյուն» բանաստեղծության առանձին գրքույկով լույս ընծայումը, Դոդեի պիեսի թարգմանությունը և Մոպասանի «Մահվան պես հզոր» վեպի թարգմանությունը, որը տպագրվեց «Արևելքի» 66 համարներում շարունակաբար: Ընդ որում այս վիճակագրությունը, մեր համոզումով, սպառիչ չէ:*

մասնակ գործունեությունը, «Հայրենիք» օրաթերթի ամբողջ մբխնոլորտը կատարյալ դպրոց են դառնում Ա. Զոպանյանի համար, որտեղ նա, կարծես, լրացնում է իր կրթությունը Կեդրոնականի շրջանավարտ լինելուց հետո:

Առհասարակ այդ շրջանակի՝ իր վրա ունեցած որոշիչ ազդեցության մասին է խոսում Արշակ Զոպանյանի հետևյալ խոստովանությունը. «Արևելք»— «Մասիսի» այդ խումբին շնորհիվ է, դարձյալ որ ես մղվեցա հետանալ ռոմանտիզմեն... ու ձգտեցա դեպի իրատեսություն ու ավելի լայն բանաձևով մը՝ դեպի կենդանի, ուղղակի անձնական գրականությունը, դեպի արդիական ոգին»[1]:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գրական ակբնավորությունը

Պոլսի գրական շրջանակները վերելքի շրջանն էր: Գաղթօջաղը, որտեղ ծովախորշի ալեծփանքի մեղմիվ սոսափը, իրիկնադեմի արևի ոսկու փայլփլումով հեքիաթային շունչ էր ներարկում շուրջբոլորը, գարձել էր գրողների ժամադրավայրը: Այստեղ էին բնակվում Արփիարյանը, Տեմիրճիպաշյանը, Կամսարականը, Զոհրապը, Ալփասլանը, Մալեզյանը, Կարապետ Ոսկանը, Անայիսը, Որբերյանը: Հաճախ էր այստեղ լինում Զոպանյանը, որ մասնակցում էր Մալեզյանների տանը կազմակերպված, ինչպես նաև ժրաջան տիկին Մատակյանի գրական սալոններին:

«Զոպանյանը՝ կարելի է ըսել,— պատմողը Զարուհի Գալեմքարյանն է,— տակավին ամոթխած՝ բանաստեղծ երեցներու կողքին, ուներ քիչ մը անխնամ երևույթ, իբրև մեկը՝ որ կապրեր ամպերուն մեջ: Հետզհետե անոր լարերուն արձագանքները կուգային հայ տուներեն ներս՝ լեզվի քնքշությամբ մը, որ հոգիներ կվրդովեր: Ան կերգեր աստղերը, Ոսփորի լազվարդ ջուրերը: «Մասիսի» մեջ հրատարակված իր քերթվածները արձագանք կգտնեին ընկերական հավաքույթներու մեջ: Այսօրվա պես կհիշեմ «Ատե, բայց մի՛ մոռնար ղիս» բանաստեղծությունը...

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Ե տարի, 1934, հունվար—հունիս, թիվ 5—6, էջ 97:

Կհիշեմ նորին մեր սիրելի Զոհրապը, Օտյանը, Կամսարականը և ուրիշներ, որոնց շրթունքներու վրա հանկերդ դարձած էր «Ատե, բայց մի՛ մոռնար դիս»-ը: Անոնք Զոպանյանի բանաստեղծության այս խորագիրն էին առած իբրև դիրար բարևելու ձև մը»[1]:

Սալոններից բացի Զոպանյանի նախասիրած վայրերն էին Բևրայի ֆրանսիական թատրոնը և իտալական օպերան, որոնց վրա նա ծախսում էր խմբագրությունից ստացած ամսականի երեք քառորդը:

Մի քանի ամիս Ա. Զոպանյանը վարում է օդնական-խմբագրի պաշտոնը, մինչև Լևոն Բաշալյանի վերադարձը Փարիզից, ուր նա մեկնել էր՝ խույս տալով Գումգափուի ցույցի առթիվ ծայր առած բանտարկություններից:

Պետք է ենթադրել, որ միայն Լևոն Բաշալյանի վերադարձը չէր պատճառը, որ Արշակ Զոպանյանը թողնց մնայուն պաշտոնը «Հայրենիքի» խմբագրությունում: Արդեն այդ ժամանակ տեղ էին գտնում գաղափարական կարգի տարակարծություններ նրա և Արփիարյանի միջև: Անդրադառնալով այդ օրերին, Զոպանյանը մի քանի տարի անց գրում էր. «Մեղի պես ամեն բան կորսնցուցած ու աղգային գոյության մը հիմունքը հաստատել ճգնող ազգի մը մեջ, հրապարակագիրը պետք է որ դասակարգերու միջև բուռն անջատումներ չփորե... «Հայրենիքի» մեծ սխալներեն մեկը եղավ անհաշտ ու մոլեդին կռիվ մը մղել ամբողջ հարուստ դասակարգին դեմ, եթե «Հայրենիք» հարուստներեն մեջեն բռնվելիք կողմեր ունեցողներուն նկատմամբ բարեկամական քննադատության, անթույլ խորհրդատվության մեթոդը գործած ըլլար, անոնցմե մեկ կարևոր մասը իր բանակին մեջ պիտի ունենար...»[2]

Այստեղ խոսքը ոչ միայն տակտիկական նպատակահարմարության մասին է: Արշակ Զոպանյանը «Հայրենիքի» արմատական դեմոկրատական ուղղությունը քննադատում էր աջից: Դա էլ հենց նրա աշխարհայացքի սահմանափակության արդյունք էր:

Այս դիտողությունը, այնուամենայնիվ, չի նշանակում, թե Ա. Զոպանյանը հակառակ էր «Հայրենիքի» ամբողջ ուղղությանը: Արդեն վերը բերված քաղվածքի վերջին մասը՝ «իր բանակին մեջ պիտի ուներ», խոսում է այդ բանակի նկատմամբ նրա

---

[1] Զաւուեի Գալեմքարյան. *Հասկաբաղ*, Երևան, 1965, էջ 98—100:

[2] «Անահիտ», Գ տարի, փետրվար 1901, թիվ 2, էջ 47:

պրական վերաբերմունքի մասին։ 1908 թվականին Արփիարյանի ապանության առիթով ցաւումնալից հոդվածում նա գրում է. «...անկարելի է մոռանալ, որ առանց Արփիարյանի պիտի չհիմնվեր «Հայրենիքը», և «Հայրենիքը» Բրքահայոց հանրային ու մասնավոր կյանքին մեջ՝ ամենակարևոր երևույթ մըն էր»[1]։

Հատկանշական է, որ 1901 թվականին, երբ մեր մշակույթի այդ երկու մեծ գործիչների միջև անձնական հակամարտության դոյության ուներ, Արշակ Զոպանյանն «Անահիտում» գրում էր. «Հակառակ այդ ամենուն, «Հայրենիքը» Պոլսո հայոց մասնավորական կյանքին մեջ միակ հաստատությունն էր, կենդրոնական վարժարանին հետ, որ հարգանքի ու համակրության արժանի ըլլար։ Այդ թերթը հետաշրջում մը բերած էր տաճկահայոց բարքերուն, ձգտումներուն, գրականության ու լեզվին մեջ, և մոլեգին ու գնդակ պայքարը, զոր առանց վախենալու գրաքննության ու ոստիկանության հալածանքին ու բազմապատիկ երկարատև դադարումներուն, ան մղեց մեր էվենդիներուն, քապոհններուն ու սերպսյաններուն դեմ, տաճկահայ հասարակության մեծագույն փառքի սիրտդանեներեն մեկը կը կազմեր»[2]։

Իսկ դրանից էլ մի քանի տարի առաջ, երբ դաշնակցականները Արփիարյանին գրպարտում են իբրև մատնիչ, երբ այդ գրպարտությունից օգտվում են Արփիարյանի բազմաթիվ թշնամիները և գայթակղվում նույնիսկ ազնիվ մարդիկ, Արշակ Զոպանյանը «Մասիսի» համար մի մոլեգին հոդված է պատրաստում, ի պաշտպանություն Ա. Արփիարյանի։ Գրաքննությունն արգելում է այն։ Այդ ժամանակ նա ընդմիջում է կենդրոնականի իր պաշտոնից մեկը և աշակերտներին կարդում պատրաստված հոդվածը[3]։

Բողնելով մշտական պաշտոնը, Ա. Զոպանյանը մնում է որպես գործուն աշխատակից։ Այդ տարիներին «Հայրենիք» օրաթերթում լույս են տեսնում նրա քննական ուսումնասիրությունները Պիեռ Լոթիի, Հիպոլիտ Տենի, Մոպասանի, ինչպես նաև ընթացիկ հայ գրականության արտադրության վերաբերյալ։

1891 թվականի ամռանը նա տեսականորեն ձևակերպում է իր հայացքները գրականության էության և դերի նկատմամբ

---

[1] «Անահիտ», Ժ տարի, Հունվար—փետրվար—մարտ—ապրիլ, 1908, թիվ 1—4, էջ 44։

[2] «Անահիտ», Դ տարի, 1901, թիվ 2, էջ 37—38։

[3] Նույն տեղում, էջ 40։

«Մեր հասարակությունը» հոդվածում, որը լույս է տեսնում «Հայրենիքում»։ Գրականությունը ժողովրդին ծառայելու, բանաստեղծը ժողովրդի ձայնը, նրա առաջնորդը լինելու տեսությունը նա հայտարարում է հնացած ու մեռած։ Գրականության գործը չէ կրթել, ուսուցանել, առաջնորդել։ Բանաստեղծի պաշտոնը գեղեցիկի ղեկացումը զարգացնելն է։ Բանաստեղծը արվեստագետ է, իսկ դա, ըստ երիտասարդ Զոպանյանի, նշանակում է, որ նա բնության ձայնն է։ Բուլունը ևս մարդկության համար չի երգում, երգում է հենց իր հաճույքի համար, այդպես էլ բանաստեղծն է երգում. ժողովուրդը ցանկանում է զմայլվել նրա երգով, խնդրում, չի ցանկանում, իր գործն է, բանաստեղծին դա չի հետաքրքրում, նա գործ չունի «քարող կարդալու», «բարքեր ուղղելու», «մոլության ձաղկելու հետ»։ Եվ, վերջապես, այս ամբողջի տրամաբանական ելքնան՝ «գրականությունը, ինչպես բոլոր գեղարվեստը, էականապես ազնվապետական է, խուժանին հասկացողությունն բարձր և ընտրյալ ու սակավաթիվ մարդոց միայն մատչելի»[1] (ընտրյալ ասելով նկատի ունի ոչ թե ծնունդով կամ դրամով ընտրյալները, այլ մտքով)։

Այսպիսով, արվեստը հայտարարվում է ինքնանպատակ, ինքն իր համար. ոչ մի կապ չունի ժողովրդի հետ և, լավագույն դեպքում, մատչելի է միայն մտավորական ընտրանուն։ Անշուշտ, Զոպանյանը պարզապես կրկնում էր Արևմուտքում տարածված տեսությունը, և նույնիսկ հենց այդ շրջանի նրա ստեղծագործության մի մասը ոչ մի կերպ չի համապատասխանում այդ տեսական նախադրյալներին։ Բայց Զոպանյանի այս և մեկ-երկու առիթներով արված նման հայտարարությունները հիմք են տվել, որպեսզի նա համարվեր ղուտ էսթետ մեր գրականության մեջ։ Ինքը Զոպանյանը շատ շուտ է հրաժարվում այս տեսական դիրքերից, հետագայում արված նրա հայտարարությունները այլևս կապ չունեն «արվեստն արվեստի համար» տեսության հետ, այլ ձգտում են մաքրել գրականությունը ուտիլիտարիզմից, քարոզամոլությունից ու հռետորամոլությունից, բարձրացնել արվեստի մակարդակը, բայց, միևնույն է, «ղուտ էսթետի» այդ տխուր «փառքը» երկար ժամանակ չի լքում նրան։

Աշխատանքը իմբաստությունում շատ լարված էր։ Հաճախ էր պատահում, որ մինչև ուշ գիշեր նստում էին. որևէ, նույնիսկ

---

[1] «Հայրենիք», 1891, թիվ 4։

արթագրական սխալը, եթե այն սպրդեր կառավարության համար հետաքրքրություն ներկայացնող լուրի մեջ, սպառնում էր մեծ բարդություններ բերել: Գրաքննիչ Մինաս Կամսարին հավելյալ նյութ չտալու համար անհրաժեշտ էր լինում մեկ անգամ էլ սկզբից մինչև վերջ ուշադիր կարդալ Թարմ տպագրված համարը:

Երեմն էլ եղելությունը, երբ ազատ ժամանակ էր լինում, հաճույքով թողնում էին հատ պատերով, փոքրիկ երկաթապատ պատուհաններով, ամրոցատիպ այդ շենքը, որտեղ մի ժամանակ օսմանյան բանկն էր եղել, փոխարինելով ֆրանսիական դեսպանատունը, իսկ այժմ «Հայրենիքն» էր հաստատվել: Խմբով գիմում էին դեպի Բոքաթլյան նոր բացված սրճարանը, կամ էլ central գարեջրատունը: Լինում էին Արփիարյանը, Հովհ. Շահնազարը, Բաշալյանը, Օտյանը, Ալփիարը, Ասատուրը, Զոպանյանը և ուրիշներ: Մի գավաթ գարեջրի կամ սուրճի շուրջ զրուցում, վիճում էին օրվա անցուդարձից, գալիք ծրագրերից, բայց միշտ գրականության կամ ավելի ճիշտ «անմեղ» թեմաների սահմաններում: Լրտեսները անպակաս էին:

Գրական ու լրագրական գործունեությանը զուգահեռ Ա. Զոպանյանը սառնձնում է ուսուցչական պաշտոն: Կենդրոնականի նախակրթարանում, Գատըգյուղի և Սամաթիայի ազգային վարժարաններում և տիկին Մատակյանի կազմակերպած՝ վարժուհիների կիրակնօրյա դասընթացներում ավանդում է աշխարհաբարի և գրականության դասեր:

1891 թվականին լույս է տեսնում Զոպանյանի անդրանիկ գիրքը՝ «Արշալույսի ձայներ» խորագրով չափածո և արձակ բանաստեղծությունների ժողովածուն: Պոլսի ընթերցասեր հասարակությունը ջերմորեն է ընդունում այդ հատորը: Ներբողալից հոդվածներ են տպագրում «Արևելքում» Գառնիկ Ֆնտզյանն ու Նիկո Տեմիրճիպաշյանը: Ժողովածուի մասին դրվատական գրախոսական է տպագրվում նաև Թիֆլիսի «Արձագանքում» (1893, № 3):

Տարիներ հետո, 1906 թվականին, Ա. Զոպանյանը մի նամակ է ստանում, որից պարզվում է, թե ով է եղել «Արձագանքի» ջերմ գրախոսականի սրտացավ հեղինակը: Ահա մի քաղվածք այդ նամակից. «Կհիշե՞ք արդյոք «Արձագանքի» մեջ լույս տեսած մի գրախոսական Ձեր «Արշալույսի ձայների» մասին, այդ առթիվ դուք մի սիրալիր նամակ էիք ուղղել Տանգուցյալ խմբագիր Արտ. Հովհաննիսյանին՝ հոդվածի հեղինակին տանձնելու համար:

Այդ հեղինակը ես եմ, որ այն ժամանակ Տփխիս կբնակեի, իբր ուսուցիչ Ներսիսյան դպրոցի։ Ձեր նամակը ցայսօր իմ ձեռին է. չպատասխանեցի Ձեզ ժամանակին՝ կեղծ համեստության զգացումից դրդված չկամենալով իմ incognito-ն բանալ։ Բայց մեծ հաճույքամբ այնուհետև հետևելով Ձեր գործունեության՝ ուրախությամբ տեսնում եմ, որ չեմ սխալվել Ձեր քանքարի մասին այնպիսի բարեդուշակ մարգարե հանդիսանալով, «Արձ(ագանքի»)։ էջերում, Ձեր անդրանիկ արտադրության առթիվ»[1]։ Նամակը ստորագրել էր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը։

1892 թվականին լույս է տեսնում Ա. Չոպանյանի «Թուղթի փաթաք» վեպը, նույն տարում բանաստեղծությունների նոր ժողովածու՝ «Բրթռումներ» խորագրով։

1892 թվականին Ա. Չոպանյանը թարգմանում է Ալֆոնս Դոդեի «Ֆրոմոն կրտսերն ու Ռիսլեր ավագը» վեպից քաղված թատերգությունը, որը նույն տարվա մարտի 8-ին ներկայացվում է Գատրգյուղի մեջ ի նպաստ տեղի Աղքատախնամ ընկերության։ Ինքնին փաստը հատկանշական է։ Չոպանյանը թարգմանում է Դոդեի այն գործը, որի մեջ շոշափվում են ժամանակակից կյանքի սոցիալական խնդիրները։ Ըստ երևույթին հենց այդ գործի տպավորության տակ Արշակ Չոպանյանը 1893 թվականին գրում է «Մութ խավեր»[2] դրաման։

Այսպիսով, մինչև 1893 թվականը Չոպանյանը գեղարվեստական գրականության մեջ մուտք է գործում միանգամից չորս դռներով՝ տալիս է չափածո, արձակ, դրամատիկական ստեղծագործություններ, ինչպես նաև հանդես է գալիս գրական քննադատությամբ և տեսական հոդվածներով։

«Արշալույսի ձայներ» անդրանիկ ժողովածուն իրավամբ խրախուսանքի արժանացավ թե ընթերցողների և թե մամուլի կողմից։ Այս գրքույկում տպագրվել են 1889—1891 թվականներին Պոլսի պարբերական մամուլում (հատկապես «Ջորքոտանվո մը օրագիրը» շարքից) հրատարակված նրա գործերից մի քանիսը, ինչպես նաև դեռևս անտիպ երկեր-բանաստեղծություններ՝ չափածո և արձակ, մտորումներ, գրադատական հոդ-

---

[1] Հովհաննես Հովհաննիսյան, *Երկերի ժողովածու*, հ. 4, Երևան, 1968, էջ 135—136։

[2] «Մութ խավերը» հետագայում հրատարակվել է 1950 թվականին, Փարիզում, «Բամբասանք» խորագրով։

վածներ: «Ադամա վիշաը» պոլսրիկ բերթվածը, որով բացվում է ժողովածուն, արդեն անուն էր շահել հեղինակի համար դեռևս 1889 թվականին: Դա հոգևոր խոր ղպացումի փայլատակման արտահայտություն էր, ղպացում, որը լինելով խիստ անձնական, առանում է ընդհանուր մարդկային հնչեղություն: Եվ առհասարակ այս ժողովածուի քնարական կերտվածքների մեծ մասը քնքուշ, կարծես շշուկով արտասանվող, միայն բանաստեղծի հոգու խաղաղությանը նախատեսված կտորներ են, բայց բավական է փոքրինչ ականջ դնել այդ մենախոսությանը, որպեսզի այն հնարքերի նաև ուրիշին, առանձնահատկությունների համամարդկային լարեր: Ահա «Կաղանդի նվերը»: Ամենուրեք խրախճանք է Կաղանդի գիշերը, միայն մի որբուկ մնացել է անօթևան ու ցրվատ: Գիրքյան հրեշտակը իջնում է նրա մոտ, առաջարկում որևէ նվեր. հագուստ, պատկեր, շաքար, խաղալիք կամ մրգեր: Բայց այդ ամենը անծանոթ են որբուկին: Նա ուրիշ բան է խնդրում հրեշտակից: Երբ ողջ էր իր մայրը, տաքուկ դրրկում էր զավակին Կաղանդի գիշերը և անուշ համբույր դրոշմում նրա ճակատին: Հիմա նա խնդրում է հրեշտակին.

«Ջեմ ուզեր ձի, պատկեր, նուշ,
Մորս համբույրն ինձի տուր»:

Այս բանաստեղծությունը մտահղացման տեսակետից երկվորյակ է Զոպանյանի նույն 1892 թվականի հունվարին գրված, բայց ժողովածուի մեջ չմտած «Իղձը» բերթվածի հետ: Փոքրիկ և աղքատ աղջնակը Հարուստ խանութի ցուցափեղկում տեսնում է սքանչելի ու ճոխ հագուստներով, վառվռուն այտերով մի տիկնիկ և սրտանց հառաչում.

«...Մեզր, որ պեպեր չեմ եներ»[1]:

Երևույթին, աննյութական սեր է շնչում «Այն շրջազգեստը», «Ամենուրեք», «Միշտ, միշտ» բերթվածներում: Բայց ահա «Ճշմարիտ լավատեսը» կամ «Պզտիկ աղջկա մը» բերթվածներում անձնական մոտիվը միջում է համամարդկային հնչեղությանը: Մի դեպքում փողոցի մարդն է, որ կյանքի դաժան հարվածների տակ չի կորցնում իր մեծագույն ուժը՝ հեգնանքը և երգելու կարողությունը, մյուս դեպքում բանաստեղծն է իր պատասպարտիչ խոսքն

[1] «Արևելք», 1893, թիվ 2383:

աստմ կյանքի «վերնախաւի» հասցնին, որից սերած ու դաստիարակված սերունդը արյունախում է:

Այս բոլորի հետ և այս բոլորի կողքին, սակայն, անբացատրելի մի տրամաբյուն, շղարշի նման թևեթև կամ երբեմն թանձր մառախուղի տեսքով նստած է Զոպանյանի քնարական հերոսի հոգու խորքում: Մեկ երազում է հեռավոր ու ամայի ծովերի մեջ բյուրեղյա պալատ, «հավիտյան փակ առ մարդիկ, բույն առանձնության» («Երազ»), բայց քանի որ չի կարող այդ անել, ապա քաշվում է իր սենյակի պատերից ներս ու իրիկնադեմի արեգակի մահվան սուգն է երգում («Տրամաբյուն») և մահու չափ տրամել է ուզում («Տրամաբյան տենչ»): Գոչում է՝ «պետք է մեռնել», և կարծես, մի պահ ցնցվում է մահվան արհավիրքից, ու կյանքի անհատակ տենչն է նորից տիրում նրա սրտին. «Թողնք, սոսկալ մահվանն», բացականչում է նա այդ պահին.

«Ոչ, սահմոս են անոնք, որք հոչակեն տենչ մահվան...
...Ո՞վ ըսավ քեզ գերագույն հեշտություն
Անէացումն է, քեզ մահն է մեծ հանգիստ ու մեծ քուն:
Ինձ կը թվի, քե ոսկերքս պիտի հողին մեջ սարսռան,
Երբ ծաղիկներ բուսնին վրաս և երբ գդամ աղջկան
Մանրիկ ոտք մը, որ շիրմիս վրա կոխի և անցնի...»

(«Պետք է մեռնիլ»)

Բայց և կյանքը այս աշխարհի վրա վաղուց ի վեր դժոխք է դարձել, մտորում է Զոպանյանի քնարական հերոսը Ռուսոյին օրինակելով, սկսած դեռ այն օրից, երբ քաղաքակրթություն կոչվածը մարդկանց կտրեց բնությունից. «տակավ դասերու բաժնվեցան, ոմանք հափրեցան ոսկի ձեղուններու տակ, այլք խրճիթներու մեջ տվայտեցան. մարդիկ հետզհետե հեռացան բնությունեն» («Հանդիպում»): Ուրեմն ի՞նչ անել: Երջանկությունը որտե՞ղ փնտրել: Չէ որ «կոշտ իրականությունը, որ իր տգեղ մերկության մեջ կը կանգներ իմ առջև, ճակտին թքնելով իր ցուրտ քրքիջը»,— շարունակում է մտորել նա,— դլխապտույտ է պատճառում շողիացած բաղձանքների, գունաթափ անուրջների, ջախջախված հույսերի ավերակների շեղջակույտում: Փրկությունը երևակայության մեջ է, դերերկրային երևակայության, որ մատչելի է շատ քչերին, և նրա քույրերի՝ երկնային երաժշտության ու սուրբ բանաստեղծության մեջ («Երջանկության աշխարհը»):

Ո՛չ, կյանքից կտրված արվեստի փառաբանությունը չէ սա։ Բանաստեղծը պարզապես դեռ որոնում է։ Որոնում է և՛ կյանքի իմաստը, և՛ ինքն իրեն։ Ահա նա խոսեցնում է լուսնին։ Երկնային մարմինը հույսի և ձանձրույթի արանքում տվայտում է։ Հույս, որ սիներկրի հոլովույթի մեջ մի ընկեր կճարի իր կյանքի համար, որպեսզի վերջապես ու վերջնականապես փարատվի Ձանձրույթը։ Լուսնի միջոցով բանաստեղծն է նորից կյանքի գովքը հյուսում («Լուսնին նամակը»)։

Երիտասարդ Զոպանյանը գեղարվեստական ստեղծագործության մեջ փորձում է պատասխան տալ այն հարցին, թե ինչ հարաբերության մեջ է բանաստեղծը գործնական կյանքի հետ։ Նրա հերոսներից մեկը «իր երազողի անճարակության»-ով հարում է բանաստեղծության «մահապաշտ դպրոցին» և բնավ պիտանի չէ «գործնական կյանքին համար» ու հասել է անողոք աղքատության դուռը («Սեր ու մահ»)։ Արդյոք ինքնաբացահայտման շնշտ չի՞ կրում այս բնութագրությունը։ Պոետական արտադրանքի մի զգալի մասում Զոպանյան բանաստեղծն էլ որոշ առումով դրսևորում է «երազողի անճարակությունը»։

Արդեն «Արշալույսի ձայներում» աչքի է ընկնում քնարական և էպիկական տարր պարունակող գործերի միջև եղած հակասությունը։ Եթե քնարերգության մեջ երիտասարդ բանաստեղծը քնքշորեն եթերային է ու աներական, ապա երկրորդ դեպքում նա նույնքան քնքշորեն, այլև ջղուտ շոշափում է ռեալ հողը, հասարակական կյանքը և ձգտում չկտրվել նրանից։ Գուցեև պայմանական կլինի այդ սահմանազատումը, բայց մնում է այն տպավորությունը, թե քնարական ստեղծագործություններում դործ ունենք ռոմանտիզմին հրաժեշտ տված, բայց նոր ուղու վրա դեռ խարխափող բանաստեղծի, իսկ էպիկական գործերում՝ արդեն հաստակորեն դեպի ռեալիզմ գնացող դրողի հետ[1]։ Մեր միտքը լուսաբանող օրինակներ են «Պատուհանին քերթվածը» և «Պատկերներ» շարքը։ Գրողը դիտում է պատուհանները և նրանց արտաքին տեսքից անում իր ընդհանրացումները, սևիսկան ապրումները և դաղափարները դնելով դրանց մեջ։ «Տես, սա աղտոտ պզտիկ պատուհանը. փայտերն որդոտած են և ապակիները

[1] Սկսնակ Զոպանյանի բանաստեղծության ռեալիստական բնույթի գնահատման շահեկան փորձ է Վ. Կիրակոսյանի «Ռեալիզմի սկզբնավորումը արևմտահայ պոեզիայում» հոդվածը, «Սովետական գրականություն», 1976, № 3, էջ 138—146։

փոշոտ, կոտրտած, վարագույրի ստվերն իսկ չկրնր... Խրճիթի մը նայվածքն է ան, թշվառության նայվածքը»: Եվ այսպես, հերթով, պատուհան կա, որ ավերակի նայվածքն է, որ մահվան նայվածքն է, պատուհան կա, որ եկեղեցունն է, և կա, որ «ինչ փայլ, ինչ շքեղություն այդ պատուհանին մեջ, որ շենքին մարմնույն վրա կարծես ծաղիկ մըն է փթթում... Ապարանքի մը նայվածքն է ան, կենսախայտ նայվածքը»:

Զոպանյանը հակադրություններով հասնում է սոցիալական վերքի ընդհանրացման էֆեկտին: Պոլսի սոցիալական կյանքի փոքրիկ դրվագներ են համախմբված «Պատկերներ» շարքում: Դրանք ավելի շուտ լուսանկարչական կադրեր են, որ արված են հեղինակի շրջագայությունների ժամանակ կենդանի բնատիպարներից, որ նատուրալիստական վերլուծության որոշակի տարրեր են պարունակում, բայց և շահեկան են սոցիալական անարդարության մերկացումների ուժով:

Նման ոճով գրված «Պատկերների» երկար շարք Զոպանյանը հրատարակում է «Արևելքի» 1892 թվականի դարնանային համարներում, «Հայրենիք» օրաթերթի 1891, 92, 93 թվականների համարներում: Ըստ երևույթին պատահականության հետևանք պիտի չհամարել իրականության նատուրալիստական նկարահանման այդ մեթոդի առկայությունը երիտասարդ գրողի մոտ: 80-ականների անցումը ռեալիզմին չկատարվեց միանգամից: Հատկապես ֆրանսիական ժամանակակից գրականության ազդեցությունը բավականին հզոր էր: Իսկ այդ գրականությունը, որի մեջ զորավոր էր նատուրալիզմի դպրոցը, իր ժամանակահատվածով միջանկյալ մի ջրբաժան էր արևմտահայ 80-ականների և ֆրանսիական դասական ռեալիզմի միջև: Էմիլ Զոլայի գործնական, մանավանդ տեսական դրույթները, ճիշտ է, կարճատև ժամանակով, տեղ էին գտել 80-ականների դրոշին:

Գրիգոր Զոհրապը գրում էր. «Ու գրականության մեջ մանավանդ, նոր լրագրությունը իր մեծ բաժինը բերավ, հեղաշրջելով առջի կարգն ու կանոնը, ընկալյալ ձևերը, հին քերականներու հաստատատիպ ոճն ու տարազը, որդնակեր արմատներն այդ խարխուլ ծառին, որ իր հյութը չէր առներ ժողովրդին սրտեն, այն միայն որ կուտա առողջ հյութն ու անթառամ բողբոջումը:

Գրականությունը, նոր լրագրության համար, պարտի այն անխարդախ հայելին ըլլալ, որուն մեջ հասարակության բարքը կը ցոլանա, մութ սենեկի մը մեջ պահված ապակին, որուն վրա

անոր կյանքին հարատառ լուսանկարը կը գծագրվի հետզհետե վայրկենական պատկերներու անհատնում շարք մը ձևացնելով, ու անոր հարափոփոխ դիմքին ամեն կծկումները մատնանիշ կըլլան, կը վերլուծվին»[1]:

«Ակնարկ մը բնապաշտ պարոյին վրա» խորագրով հոդվածում Երվանդ Օտյանն էլ, իր հերթին, գրում էր, թե «բնապաշտությունը պրծել ոտքից մեր գրականությունը»[2]:

Նույն «Մասիս» շաբաթաթերթում Ա. Զոպանյանն էլ հանդես է գալիս «Մեր գրականությունը» հոդվածով, որում հեղինակը, փայլուն բանավեճ մղելով հին պարոյենների ներկայացուցիչների դեմ և ապացուցելով նոր պայմաններում նրանց անանկությունը, քան էության ապպարարում է նատուրալիզմի մանիֆեստը, ուժեղ հարված հասցնելով մեկ տարի առաջ իր իսկ քարոզած «արվեստն արվեստի համար» տեսական դրույթներին:

Կրքոտ պաշտպանելով Արփիարյանի, Բաշալյանի, Զոհրապի, Կամսարականի, բոլոր «նորերի» գրականությունը, Ա. Զոպանյանը պարզաբանում է իր դիրքերը. «Գրականություն բառով մենք կը հասկնանք գործիք մը որ ճշգրտորեն կը թարգմանե մարդկային հոգվույն բոլոր վիճակ-փոփոխությունները, հավատարմապես կարձագանքի բնության բոլոր ձայներուն, կատարյալ պատկերը կուտա առարկայի մը, պատկերի մը, տեսարանի մը, մանրակրկիտ կերպով կարտահայտի մարդին ամենեն խուսափուկ քմահաճույքներն ու արտին ամենեն տարտամ զգացումներն»: Զոպանյանը ծաղրում է հեներին, որ աննյակի փակ պատուհանից դուրս չեն նայում և, եթե երբեմ պիտի նկարագրեն, բացում են դրքերը, տեսնելու համար, թե նախորդները ինչ են ասել այդ մասին: Իսկ նորերը. «կերթան, կը պատին փողոցները, ամեն ծակուծուկ կը մտնին, դաշտերը, անտառները, լեռները կայցելեն, կը նշանակեն և կուսումնասիրեն, հետո կերթան իրենց գրասենյակն ու կը գրեն... Բերես շատ բանաստեղծական չըլլա գրելու այս երկրորդ եղանակը, որովհետև ներշնչման մահն է ատիկա, բայց տեսական գործերը, անոնք որ անմիջ բառերու վրա չեն հենուր, այլ ուսումնասիրության և դիտողության վրա, այդ կերպով ծնած են»[3]:

---

[1] «Մասիս», 1892, թիվ 3965, էջ 158—159:

[2] «Մասիս», 1893, թիվ 4003, էջ 483:

[3] «Մասիս», 1892, թիվ 3959, էջ 67:

Ուրեմն, ըստ Զոպանյանի, նոր դպրոցը գործ չուներ ներշընչման հետ, այսինքն՝ հեղինակի անձը որևէ մասնակցություն չէր ունենում ստեղծագործական պրոցեսին, բացի այն, որ ծառայում էր որպես լուսանկարչական ապարատ, կամ էլ մի գործիք, որը տարրալուծում է ստացված նյութը և այդպես արտադրում: Նատուրալիզմի տեսության այս դրույթները կիրառվել են Զոպանյանի կողմից իր գեղարվեստական պրակտիկայում: Կարելի է հիշատակել «Պատկերներ» շարքը: Նատուրալիստական տարրեր է պարունակում նաև «Անկում» արձակ բանաստեղծությունը նույն ժողովածուից:

Այս ամենի հետ, սակայն, պետք է շեշտել երկու կարևոր պարագա: Նախ, որ նույնիսկ նատուրալիզմի տեսական դրույթների պաշտպանությունը տվյալ ժամանակաշրջանի արևմտահայ իրականության համար ուներ առաջադիմական իմաստ և նշանակություն, որովհետև հասարակական մտքի և նոր գրականության ձևավորման այդ էտապում ուշադրությունը բևեռում էր կենդանի իրականության, սոցիալական կյանքի հարցերի վրա: Եվ ապա, չնայած տեսության մեջ նատուրալիզմի պաշտպանությանը, 80-ականները իրենց գեղարվեստական պրակտիկայում դրեթե խուսափեցին նատուրալիզմից և գնացին ռեալիզմի ուղիով: Այդ իրողությունը շուտով արձանագրվեց նաև տեսության մեջ, «բնապաշտությունը» փոխարինելով լիարյուն «իրապաշտությամբ»:

Արդեն Ա. Զոպանյանն էլ հիշյալ հոդվածում, տեղ-տեղ հակասելով իր իսկ դրույթներին, ռեալիստական տեսության պահանջներ է առաջ քաշում: «Գրականությունը,— ասում է նա,— կը ծնի արվեստագետին տպավորական հոգիին վրա արտաքին ու ներքին աշխարհներուն բրած կրկին ազդեցություններ» (ընդգծումն իմն է—Կ. Դ)[1]: Իսկ, այդ դեպքում, ո՞ւր մնաց «ներշնչման մահը», ինչպես նա պնդում էր նույն հոդվածում:

Ահա և առողջ ռեալիզմի տեսության մի հիանալի նմուշ.

«Պիտի ըսեն, որ գրականությունը սփոփանք մըն է մարդուն համար, պետք չէ որ զայն իրականության մեջ թաթախվի, այլ անկից վեր բարձրացնի և «իդեալականին մաքուր վերնագավառաց մեջ տանի սավառնեցնի»,— հեգնում է իր ընդդիմախոսներին Ա. Զոպանյանը:— Ո՞ր վերնագավառը, խնդրեմ, մարդ կրնա՞ իր

---

[1] «Մասիս», 1892, թիվ 3959, էջ 67:

կյանքին, իր հոգիին, ինք իրմե դուրս ելլել։ Երևակայությունն ալ ուղեղին՝ միսի կտորն մը չը՞ ծնիր (այստեղ Բյուխների մատերիալիզմի հետ է փչում, բայց այս դեպքում մեզ հետաքրքրող հարցի համար դա էական չէ։— Կ. Դ), միշտ կապված իրականության։ Կներևակայի՞ք գուտ երևակայական գործ մը, կը կարծե՞ք որ գործ մը ապրի առանց հիմ ունենալու մարդկային զգացում մը։ Վերացման պիտքը, տեսլականի բաղձանքը, թռչելու մարմաջը, ասոնք կը հասկնանք, և ո՞վ ըսավ, որ մենք բևեր չունինք, ո՞վ ըսավ, որ մենք ցեխին ելած չունինք, այն ի՞նչ ողորմելի զրականություն պիտի ըլլար, եթե ամեն օր և միայն փողոցները նկարագրեինք... բայց եթե երբեմն աչքերնիս դեպի աստղերը կամ կապույտը կը վերցնենք, միշտ հողին վրա ենք, միշտ մարդերու մեջ, միշտ կյանքին մեջ։ Եվ կըսեն թե մենք հոգի և փիլիսոփայություն չունի՞նք, «հոգի» ըսելով ի՞նչ կը հասկնան, բացատրությունն՞ը, անոնք պոռոտախոսություն են հոգվույն, մենք անոր պերճախոսություն ունինք. մեր նկարագրությունները կը զգան, մեր պատկերները կը խոհին և զանոնք գծելու համար մեր վրձինը արցունքի, արյունի մեջ կը թաթխենք։ Ի՞նչ կը հասկնան «փիլիսոփայություն» ըսելով, շնչակո՞ւտ մը բնաղանցական բացատրություններու, պատճառաբանության, խորհրդածության ու նշանավոր հնդինականե հիշատակության, որի ապուշ ու ցուրտ ցուցամոլությունը մենք չունինք, բայց ունինք փիլիսոփայություն մը, որ ոչ միայն գիրքերի առած ենք, այլ մեր դիտողություններին, ուսումնասիրություններին. մեր գրվածներուն մեջ ամեն վայրկյան ընթերցողը չենք ձանձրացներ խորհրդածություններով, բայց մեր նկարուն ածականներուն, մեր կենդանի բացատրություններուն մեջևն տակն ու խոր փիլիսոփայություն մը կարտաշնչե, ավելի տակն, քանի որ խտացած է, ավելի խոր, քանի որ թաքուն է»[1]։

Ս. Զոպանյանը գտնում է, որ կարևորը ժողովրդի կարիքներն են, որ սոցիալական խնդիրները արդեն մտնում են վեպերի, լրագրության և նույնիսկ բանաստեղծության մեջ, որ «գրագետները ժողովրդին կը խոսին և ժողովուրդն ալ կը սիրե գրականությունը»։

Զոպանյանի համարձակ ելույթը կրքեր բորբոքեց։ Նույն «Արևելքում» հանդես եկավ մշակութային և կրթական հայտնի

[1] «Մասիս», 1892, թիվ 3959, էջ 68—69։

գործիչ Ռ. Պերպերյանը «Նոր գրողները» վերտառությամբ հոդված[1]: Դա, ըստ էության, ոչ այնքան գործնական պատասխան էր Զոպանյանին, որքան՝ հավակնոտության և սարծենկոտության մեջ մեղադրանք: Պերպերյանի հոդվածում խոսում էր վիրավորված ինքասիրությունը, թեպետ Զոպանյանը «հներից» ոչ մեկին չէր հիշատակել: Պերպերյանը հեգնանքով նկատում էր, որ այդ նոր՝ «բնապաշտ» դպրոցը կյանքը նկարագրում է հանուն նկարագրության: Ըստ էության այս մեղադրանքը նատուրալիստական ուղղության հասցեին առանց հիմքի չէր: Հետաքրքրական է, որ Զոպանյանը պատասխանում է այդ մեղադրանքին, պաշտպանում իր դիրքերը, բայց նա ոչ թե նատուրալիզմն է պաշտպանում, այլ ռեալիստական դրականությունը:

«Գալով այն կետին, թե նորերը նկարագրել միայն գիտեն և թե առանց հայտնված նպատակի նկարագրությունը ձանձրալի է, ճիշտ հոդ է, որ մեր և մեր նախորդներուն գեղեցկագիտության տարբերությունն ամենեն ավելի հզոր կերպով երևան կելլեանոնք կը քարոզեին, հետևություններ, բարոյականներ կը հաներին, մենք կը նկարենք, նկարին խորը կը դնենք մեր հոգին, մեր դաղափարը և ընթերցողին կը թողունք դուշակել ինչ որ թաքուն մնացած է, ավարտել գրվածը: Կը կարծեք, թե Զոհրապի «Ներսեսը», աղքատ տղու մը պատմությունը, որուն մեջ հազիվ քանի մը պզտիկ խորհրդածություններ սպրդած են, շատ ավելի ազդեցիկ չէ՞, քան աղքատության վրա երկայն ճառեր»[2]:

Էնգելսը Մինա Կաուցկուն և Հարկնեսին ուղղված նամակներում խոսում է ռեալիստական արվեստում տենդենցի քողարկման անհրաժեշտության մասին[3]: Մենք հիմք չունենք կարծելու, թե Զոպանյանը ծանոթ էր մարքսիստական էսթետիկային, բայց հենց այն հանգամանքը, որ Զոպանյանը առաջ է քաշում և համառությամբ պաշտպանում ռեալիզմի յուրահատկությունը կազմող այդ թևը, խոսում է երիտասարդ տեսաբանի գաղափարական առաջադիմական նկրտումների մասին:

«Մեր գրականությունը» հոդվածի շուրջ ծագած վեճը սրանով չավարտվեց: Զոպանյանի դեմ հանդես է գալիս «Մասիսի» արտոնատեր Յուիուճյանը, որի հույսը Զոպանյանը նույնպես ան-

---

[1] «Արևելք», 1892, թիվ 2448:

[2] «Արևելք», 1892, թիվ 2454:

[3] К. Маркс и Ф. Энгельс об искусстве, М., 1957, т. I, стр. 9, стр. 11.

պատասխան չի թողնում[1]: Միջամտում է վերջապես նաև Գրիեր Զոհրապը, սկզբում «Մասիսում», ապա և «Արևելքում»: Նա, ըստ Լուիյան, չի առարկում Զոպանյանին, բայց ձգտելով մերմել կրքերը, պաշտպանության տակ է վերցնում «վաստակավոր գրականներին» ու մշակույթի «երևանյա» փորձով գործիչներին:

Զապել Եսայանը իր անտիպ հուշերում գրում է, թե դեռ մատաղ հասակում ինքը ունեցել է գրական իր ըմբռնումները, որոնք հիմնովին տարբերվել են Զոպանյանի «էսթետիզմից»: «Ես որոշակի կլզայի, որ գրականությունը զարդ մը, պերճանք մը չէ,— գերագույն ծառիկ մը— ինչպես կըսեր Զոպանյան, այլ զորավոր միջոց մը, զենք մը, որուն կուզեի սիրանալ պայքարելու համար այն բոլոր բաններու դեմ, որ կը համարեի անարդար»[2]:

Զոպանյանի «Մեր գրականությունը» հոդվածը և գրական արտադրանքի որոշ մասը, որտեղ նա ֆրանսիական ժամանակակից գրողների ազդեցության տակ ձգտում է ձևը հասցնել պճնամոլության, խոսում են այն մասին, որ Զ. Եսայանի հայտարարությունը առանց հիմքի չէր: «Մեր գրականությունը» հոդվածի կարևոր նշանակությունը հենց Զոպանյանի համար էր: Այդ հոդվածը երիտասարդ Զոպանյանի տեսական հայացքների ձևավորման մեջ երկրորդ կարևոր էտապն է նշանավորում և անցման օղակ է «արվեստն արվեստի համար» տեսությունից դեպի ռեալիզմ:

1892 թվականին հրատարակված բանաստեղծությունների երկրորդ ժողովածուի մեջ, որ կրում է «Թրթռումներ» տիտղոսը, երիտասարդ բանաստեղծը դեռ շարունակում է սեփական ձայնի որոնումները: Դեղեցիկ ու ինքնատիպ «Ատե, բայց մի մոռնար վիս» բանաստեղծության կողքին կան կտորներ, որոնք ասես բանալրոսիկ վիճակների և արհեստական տողերի կուտակումներ լինեին՝ ոչ սրտից բխած, ոչ սրտին խոսող: Ճիշտ է նկատել Գաբրիել Ֆնտզյանը, երբ կասկածով հարց է տալիս, թե դրանք «ճարտարության ճգունք» չե՞ն արդյոք[3]: Բայց ահա Ե. Տեմիրճիպաշյանը, խիստ չափազանցության մեջ ընկնելով, շռայլ ներբող է հյուսում այդ ժողովածուին[4]:

---

[1] «Արևելք», 1892, թիվ 2469:

[2] ԳԱՄ, Զապել Եսայանի ֆոնդ, ց. 6, թ. 370—371:

[3] «Մասիս», 1892, թիվ 3965, էջ 163:

[4] «Հայրենիք», 1892, թիվ 2520:

Այս նիհարիկ գրքույկում էլ բավականին շատ նրևակայական էակներ են ապրում, որոնք իրենց երազներն են համբուրում և գրկախառնվում քամածին տեսիլների հետ, ծծում «երանությունը տրտմության», անրջում «փախուստ» և մեռնություն։ Բայց մեկ էլ հանկարծ մի խայտաման պատկեր նորից իրականության է կոչում ընթերցողին.

«Ինչ որ մերն է, մերը համակ,
Ներկան է, որ ջինջ է հիմա...
Ի՞նչ փույթ, թավ չէ՞ որ այս պահուն
Երջանկությունն ունինք մեր ջով.
Մոռնանք ավուտն ու իրիկուն,
Աբրենանք այդ շիթ մ'հեշտանքով»

(«Այս պահը»)

Եվ կամ բանաստեղծական զգացողության մի քնքուշ թարմություն չնմանցնում է Հոգիդ. ննջարանում քնած է դեռատի գեղեցկուհին, այնքան գեղեցիկ ու այնքան խաղաղ, որ այգը, ահա, բացվել է, պետք է այս սենյակը ևս մտնի, բայց նրա տեսքից

«...Առավոտն, հափշտակված, հորդառատ
Իր լուսացայտերը ներս թափել կվարանի»։

(«Ձեռնամակ ննջյակ»)

«Երթուղիներ» ժողովածուի կարևոր արժանիքը, իր ժամանակաշրջանի շահերի տեսանկյունից դիտած, այն էր, որ Զոպանյանը չափածոյի մեջ հաջողությամբ օգտագործել էր աշխարհաբար արձակի լեզուն։

Զոպանյանի գրական սկզբնավորությունը բնութագրող էջեր են նրա «Մշուշին մեջ» արձակ բանաստեղծությունը և «Լեռան ծաղիկը» քերթվածը, որ տպագրվել են «Մասիսում»[1]։ Այդ գործերը գրված են նույն օրերին՝ համապատասխանաբար 1892 թվականի սեպտեմբերի 20-ին և սեպտեմբերի 24-ին։ Բայց ոճական միասնության խորքում որպիսի՜ հակադիր դաղափարական հակումներ են պարունակում։ «Մշուշին մեջ»-ի քնարական հերոսը տենչում է թողնել իր «ամենօրյան կոխած հողը», իր «ամենօրվան ապրած կյանքը», որը շատ դառնահատիկներ կուլ տալու

[1] «Մասիս», 1892, թիվ 2968, և 2970։

ափթներ է պատճառել, և փոխադրվել մշուշապատ, նիհարային մի աշխարհ, հեռու կյանքի ցավերից: «Լեռան ծաղիկը», հարազատ միջավայրից պոկված մի աղջիկ, իր երկրի, հայրենի լեռների անդիմադրելի կարոտի բեռան տակ, չի կարողանում տանել նոր կյանքը, նույնիսկ փարթամ միջավայրը և ընդմիշտ փակում է աչքերը սեգ լեռների պատկերը սրտում: Ապրումների և լուծումների այս հակադրությունը առավել ընդգծում է երիտասարդ բանաստեղծի հոգում մակընթացությունների և տեղատվությունների հերթափոխը. մի կողմից մշուշ, մյուսից՝ ռնալ իրականություն: Մի կողմից նիհարային կյանքի փառաբանություն, մյուս կողմից՝ նիհարայինի մերժում.

«Այդ երջանկությունը անհամ է և կեղծ,
Ջեմ ուզեր ապրել այդ աշխարհին մեջ,
Թող ինձ իմ արցունքս և կյանքս տխեղծ,
Ես երջանիկ եմ իղձերովս անվերջ[1]:

(«Չէ»)

Կյանքը, մի ափթով ասում է բանաստեղծը, բաղմագույն է, ունի և՛ ևը, և՛ ճերմակը, ուրեմն բանաստեղծությունը հարազատ արտահայտությունը կլինի կյանքի, նիհ արտացոլի երկուսն էլ: Այս միտքը, որ Զոպանյանը հայտնել է 1893 թվականին Ռուբեն Որբերյանի սկզբնավորության շրջանի բանաստեղծական ժողովածուի մասին գրախոսության մեջ[2], լույս է սփռում նրա ամբողջ բանաստեղծական արտադրության վրա, որի մեջ իրոք նրփնեբանդում են տարբեր գույները: Այդ գրախոսականը, սակայն, շահեկան է նաև ուրիշ տեսակետից: Զոպանյանը չի թաքցնում, որ իրեն սրտենդություն է պատճառում, երբ երիտասարդ բանաստեղծը, հավիվ դեռ կյանքի սեմի վրա, ուժերի թարմության մեջ, «կելլե լալկան ոտանավորներով մահ երգել ու կանչել Նիրվանան... ինչ հիմար ունակություն է, որ մեր մեջ մտավ այդ անիմաստ լալկանության մոլությունը, որով գրականության մեջ մտնող ամեն ոք պարտավորություն կը զգա կարծես կյանքին վրա ողբերով սկսելու...»: Այդ հուսահատական գրականությունը, թե էսթետիկական և թե փիլիսոփայական տեսակետից, ասում է Զոպանյանը, սխալ է, կեղծ և անիմաստ: «Կյանքը սեփ սև

---

[1] «Մասիս», 1893, թիվ 3974, էջ 23:

[2] «Հայրենիք», 1893, թիվ 567:

տեսնել, ասիկա առո՞ղջ աչքի գործ է. դրականությունը միօրինակ ողբերգ մը ընել, ասիկա լա՞վ ճաշակի արդյունք է»: Հետաքրքրական է, որ Զոպանյանը այս հոդվածում խոստովանում է, որ ինքն էլ ունեցել է այդ հիվանդությունը[1]:

«Թուղթի փառք» վիպակը, ըստ էության, նույնպես դրսևորում է սևի ու ճերմակի հակադրությունը և միասնությունը ծավալուն արձակի կտավի վրա: Որոշակիորեն ինքնակենսագրական բնույթ է կրում գործը: Եվ ահա թե ինչպես է բնորոշում հեղինակը իր հերոսին. նա «տարամերժ պաշտումով մը հարած» է գեղեցիկի դավանանքին և գրականությունը սիրում է «ինքն իրեն համար»[2]: Ահա թե որն է այդ հերոսի էությունը: Բայց պարզվում է, որ դա ընդամենը «Թուղթի փառք» է, որը իրականության հետ առաջին իսկ բախումից հետո փլվում է հերոսի իսկ համար ու նրա ներսում: Զոպանյանը ինքնակենսագրական այս վիպակում էլ ինչ-որ չափով անդրադառնում է իր առաջին շրջանի հայացքների էվոլյուցիային:

Վիպակը, ինքնին, արվեստի թույլ գործ է, թեպետ հեղինակը ջանք չի խնայում հյութեղ ոճեր կիրառելու, լեզվական հարստությունը առատաձեռն սփռելու, տպավորիչ պատկերներ կերտելու համար: Թույլ է, սակայն, արվեստով հենց այն պատճառով, որ հեղինակը վրիպել է բովանդակությունը հասարակական հնչեղության, սոցիալական ընդհանրացման աստիճանին բարձրացնելու հարցում:

Ըստ վիպակի մտահղացման գրողի փառքը ժամանակի սոցիալական կյանքի բերումով պետք է երևար սոսկ որպես թղթի փառք, բուրժուական գործնական խավերի տեսակետից՝ որպես անբովանդակ ու ոչ պիտանի փառք: Սոցիալական իրականության և հերոսի ձգտումների բախումն էլ պիտի ծնունդ տար վերջինիս դրամային: Բայց Զոպանյանին չի հաջողվում հասնել այդ ընդհանրացմանը: Սոցիալական իրականության հենքը նրա մոտ աստիճանաբար փոխակերպվում է պարզ բարոյական-սիրային հիմքի: Եվ, եթե Վերժինը իր սերը տալիս է ոչ թե տաղանդավոր, բայց տգեղ բանաստեղծին, այլ սովորական մտավոր կարողությունների տեր, բայց գեղեցիկ մի մարդու, ապա ընթերցողը դրա համար չի կարող մեղադրել սոցիալական իրականությունը,

---

[1] «Հայրենիք», 1893, թիվ 567:

[2] Աւշակ Զոպանյան, Թուղթի փառք, Կ. Պոլիս, 1892, էջ 8:

ավելին, ընկալում է կատարվածը սոսկ որպես «անիմանալի» սիրո հերթական մի խաղ: Այսպիսով, կիսատ է մնում մտահղացման դրծադրումը և «Թուղթի փաթաթ» դաղափարը կախվում է օդում: Թղթի փաթաթը այստեղ որևէ կապ չունի, պարզապես աղջիկը ուրիշին է սիրում, թեպետև այդ ուրիշը իր կարողություններով շատ ցածր է բանաստեղծից: Այսպիսի տպավորության է հանգում ընթերցողը: Հետաքրքրությունից զուրկ չէ նկատել, որ Զոպանյանը նույն այդ դաղափարը նախապես մշակել է «Զորքոտանվո մը օրագիրը» շարքում: Այստեղ էլ խնդացին, բայց արտաքինից տպհղն ու տկարը մերժվում է[1]: Ըստ երևույթին շատ խոր էին տպավորվել հեղինակի սրտում իր սիրած ու պաշտած բանաստեղծի՝ Պետրոս Դուրյանի տողերը.

«Շատերը պիս մերժեցին,
«Քընար մ'ունի սոսկ»— ըսին,
Մին՝ «դողդոջ է, ցուն չունի»—
Մյուսն ալ ըսավ—«կը մեռնի»:

Հերոսի և հասարակության բախման խնդիրը շատ ավելի հաջող է լուծված «Մութ խավեր» պրամայում: Եթե ուշադիր դիտելու լիներ, ապա վիպակի և պիեսի մտահղացումները գրեթե կրկնվում են: Առաջինում հեղինակը ձգտում է ապացուցել, որ անհնարին է սերը տարբեր հասարակական խավերի և ձգտումների պատկանող անհատների մեջ՝ սոցիալական իրականության պատճառով, երկրորդում նա ջանում է համոզել, որ հասարակական տարբեր խավերի ու ձգտումների պատկանող անհատները, եթե նույնիսկ սիրում էլ են միմյանց, ապա, միևնույն է, սոցիալական իրականության մեղքով դատապարտված են անջատման: Վերջին երկում այդ մտահղացումը գտնում է իր հաջողված կենսագործումը:

«Մութ խավերի» գործողության տեղի է ունենում Պոլսում, 80—90-ական թվականներին: Սա արդեն ինքնատիպ կարևոր դրական քայլ էր արևմտահայ թատրոնի ասպարեզում, որի ժամանակակից թեմայով խաղացանկը գրեթե դատարկ էր մնացել Հ. Պարոնյանից հետո: «Մասիսում» տպագրված իր «Թատերգությունը մեր մեջ» հոդվածում Ա. Զոպանյանը բարձր է գնահատում Պետրոս Դուրյանի «Բշխտանների» առաջաբանը հենց այն պատճառով, որ «ամենեն առաջադիմական քայլն է որ առած է

[1] «Արևելք», 1891, թիվ 2127:

բանաստեղծը, վերջին հրաժեշտը տալով պայմանադրության և առասպելներուն, և իր հանդուգն ձեռքով բանալով իրական կյանքի լայն ճամփան»[1]:

«Մութ խավերի» Արմիկը ողբերգականորեն ղոհ է գնում այն պատճառով, որ համարձակվել է սիրել վերնախավի ներկայացուցիչ Օննիկին ու փորձել մուտք գործել հասարակության այդ ունևոր դասը: Ինալիստական փայլուն գույներով է գծում Զոպանյանը այդ խավի զանազան անդամների հակադրությունը: Նվ առաջին տեղում է քահանան՝ տեր Զաքեոսը: «Արմիկը իր դասու մեջ փնտրելու է... իրեն հարմար կյանքի ընկեր մը... Այսօր Օննիկին... խրատ տալու ենք, որ իր կյանքը իրեն բոլորովին անհարմար աղջկան մը չկապե»,— ասում է վերնախավի այդ համոզված պաշտպանը: Ահա և անբարոյական, դատարկամիտ, բայց ազդային գործերը վարելու հավակնող Օննիկ էֆենդին, որի կերպարը, ի դեպ, նկարված է շատ կենդանի ոճով. «Օննիկ էֆենտին հմուտ արհեստավոր մը, բարձր դիրք և ազնիվ նկարագիր ունեցող անձ մըն է, անոր տեղը պատրաստ է մեր քաղաքական խորհուրդին մեջ, անոր պես մարդիկ պետք է մտցնել մեր ղեկավար մարմիններուն մեջ, որպեսզի մեր ազգը հառաջադիմե: Լավ չէ, որ ան երթա կորավիլ խոնարհ ու տգետ մարդոց դասակարգին մութ խավերուն մեջ: Անոր կողակիցը ուսյալ կին մը ըլլալու է, անոր շրջապատը ոչ թե դատարկապորտ գինովներն և անուս կոպիտ կնիկներն կազմված ըլլալու է, այլ նուրբ ու գիտուն անձերն, զարդացած միտքով կիներն»:

Ամբողջ այս վերին դասի ոհմակը կրքով ու խանդով աշխատում է «խելքի բերել» Օննիկին, կանգ չառնելով միջոցների առջև: Արմիկին զրպարտում են: Օննիկը լքում է նրան և ամուսնանում «հավասարի» հետ: Բայց սեր չկա: Ասենք սերը այդ դասի ամուսնությունների մեջ որևէ գործ չունի: Զոպանյանը դիպուկ մերկացնում է հաշվի վրա կառուցված բուրժուական ընտանիքի անբարոյականությունը. «Մարդ էրիկ կառնե՞ն՝ սիրելո՞ւ համար կառնեն: Փարա, հասկցա՞ր, փարայի համար կառնեն էրիկը»:

Արմիկը ինքն էլ գիտակցում է կատարվածի իմաստը: Նա, որ ամբողջ կյանքը ապրել է ծայրաստիճան թշվառության մեջ,

---

[1] «Մասիս», 1893, թ. 3975, էջ 40:

բայց սեփական ճակատի քրտինքով, հասկանում է, որ իրավունք չուներ «Օննիկի պես» մարդու հետ նշանվելու. «Ես ո՞վ, աստանկ մարդուն նշանվողը ո՞վ: Աստիկա չննիցին»:

Հատկանշական է այն ջերմ ու արտասուշ վերաբերմունքը, որ արտահայտում է Զոպանյանը «աղորին» խավի մարդկանց նկատմամբ: Արդեն «Արևելքում» 1889 թվականին տպագրված «Մայր մը» նորավեպում նա ամեն էր ունենալ դրսևորելու իր վերահատանքը հասարակ ու աղքատ մարդկանց մարդկայնության նկատմամբ: Այստեղ էլ, երբ բոլորը լքում են Սրմիկին, մնում են միայն նրանք՝ աղքատ մարդիկ, որ «բամբասանք չեն գիտեր և չեն ալ հավատար բամբասանքին. անոնք բարեսիրտ ու պարզամիտ կըլլան»: Դրամայի հեղինակը չի բավարարվում միայն իրերի ռեալիստական պատկերը դծելով: Նա պայքարի կոչ է անում անարդարության դեմ: Բժշկի բերանով Զոպանյանը ասում է. «Դարերի ի վեր գայլ-մարդը գառնուկ-մարդը կուտե. խնդճ աղջիկ, գառնուկ մըն է նկեր... պետք է գառնուկ չըլլալ, պետք է կռվիլ, պետք է գայլին դեմ գայլ ըլլալ»:

«Մութ խավեր» դրաման ունի էական բնություններ թե բովանդակության և թե ձևի տեսակետից. պայքարի անորոշ ու տարտամ ծրագիրը, Օննիկի կերպարի զարգացման մեջ անհամոզիչ փոխակերպումները, անհարկի երկար և գործողության տրամաբանությամբ չարդարացված մենախոսություններ և այլն, և այդ իսկ պատճառով դրաման այսօր միայն ճանաչողական արժեք է պարունակում: Կարևորը, սակայն, Զոպանյանի կոնցեպցիայի բովանդակությունն է, որ մենք աշխատեցինք վեր հանել: «Մութ խավերից» հետո սկսել, թե Ա. Զոպանյանի «զուտ էթնոտիպը» տեսական է եղել՝ այլևս անկարելի է:

Հետաքրքրական է, որ «Մութ խավերը» բեմադրելու պատվությունն են ընդունել կովկասահայ սրվեստագետները: Դերասան Արմեն Արմենյանը վրույի թելադրանքով նույնիսկ որոշ ջանքեր է տարել այդ ուղղությամբ[1]:

«Մութ խավերի» ներկայացումը Պոլսում տեղի ունեցավ Բերայի Օդեոն թատրոնում, հայ դրամատիկ թատերախմբի բեմադրությամբ, ապա կրկնվեց Գաղտիդուզում, Իսկյուտարում,

---

[1] Ա. Զոպանյանի թատերական գործունեության վերաբերյալ համառոտ ակնարկ տե՛ս Հովակիմյան Հրայր, Գրողը և թատրոնը, գիրք 2-րդ, «Հայաստան», Երևան, 1974, էջ 100—112։

նորից Բերայում, և գտավ մեծ ընդունելություն, ինչպես վկայում է Երվանդ Օտյանը։ Լևոն Բաշալյանը, ոգևորությունից չափազանցության մեջ ընկնելով, նույնիսկ այն համարեց «հանգրվան մը... հայ թատրոնին պատմությունը գծող ելևէջավոր ճամբուն մեջ, սահմանաքար, որ երկու ուղիներու ճիրար կտրած տեղը կանգուն, ալաքով մը ցույց կուտա ճամբան ուսկից ևկած են և այն, որուն հետևելու է»[1]։

Երվանդ Օտյանը իր հուշերում մի զավեշտական միջադեպ է բերում, կապված առաջին ներկայացման հետ, որը ցայտուն կերպով բնութագրում է արևմտահայ գրագետի նյութական անձուկ կացությունը։ Ներկայացումից ստացված հասույթը կազմակերպիչ հանձնախմբի գանձապահ Վահան Եսայանը մի քանի օր անց հանձնում է Զոպանյանին, հաշվի հետ միասին։ Ոսկիները փաթաթված էին երկու թղթերի մեջ։ Զոպանյանը առանց հաշվելու գրպանն է դնում։ Տուն գալով, թղթերը մի կողմ է նետում և համրում դրամը. «...տրված հաշիվնեն 10 ոսկի պակաս կը համրե։

Նկավ մեղի պատմեց։

— Դիմե Վահան Եսայանին։

— Կամչնամ կոր...»։

Վերջապես համոզում են Զոպանյանի դիմումին Վահան Եսայանը պատասխանում է.

«— Բայց թուղթե՞րը։

— Ո՞ր թուղթերը։

— Երկու հատ հինգ ոսկինոց պանքնոթներ, որոնց մեջ ծրարված էին ոսկիները։

— Այդ թուղթերը դրա՞մ էին, կը հարցնե ապուշությամբ Զոպանյան, որ բնավ գաղափար չուներ պանքնոթի վրա։

— Հարկավ, այդ երկու թուղթի կտորները 10 ոսկիի արժեք ունին։

Բանաստեղծը կը վազե տուն, ուր, բարեբախտաբար, սենյակին մեկ անկյունը կը գտնե պանքնոթները»[2]։

***

Ներկայացումներից ստացվում է մոտ 100 ոսկի, հայրն ու մի քանի մտերիմ բարեկամներ փոքրիկ օժանդակություն են անում

---

[1] «Հայրենիք», 1893, թիվ 431։

[2] Երվանդ Օտյան, երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962, էջ 28—29։

նույնպես, դրանց ավելացրած «Հայրենիքի» աշխատակցությունից ստացված հոնորարը, և ահա, 1893 թվականի հոկտեմբերի 7-ին Արշակ Չոպանյանը հասնում է Փարիզ, ապրում այնտեղ մեկ տարի, այցելում Լոնդոն, Բրյուսել, Անվերս։

Փարիզի մտավորական ու գեղարվեստական միջավայրը մեծ ազդեցություն է գործում երիտասարդ բանաստեղծի վրա։ Նա հոգնության չափ լարված հետևում է տեղի գրական շարժմանը, երաժշտության, գեղանկարչության, թատրոնի նորություններին։ Փարիզում ավարտում է «Պետրոս Դուրյանի կենսագրությունը» ծավալուն աշխատությունը, որը 1894 թվականին լույս է ընծայում Թիֆլիսի հրատարակչականը։

Դեռ «Բանաստեղծության վախճանը» խորագրով երկրորդ հոդվածում Չոպանյանը վերապահություն է անում հայ բանաստեղծության նկատմամբ, նրա մոտավոր ապագայի վրա չտարածելով իր դուշակությունը։ Այս վերապահությունը, մեր կարծիքով, բխում էր Չոպանյանի այն համոզմունքից, թե հայ նոր բանաստեղծությունը միայն առաջին քայլերն էր անում ու դեռ ասելիք ուներ իր ժողովրդին։ Պատահական պիտի չհամարել այն հետաքրքրությունը, որ նա նույն օրերին սկսեց դրսևորել Պետրոս Դուրյանի ու Մկրտիչ Պեշիկթաշլյանի նկատմամբ, վերջ ի վերջո, երկու բանաստեղծների մասին էլ տպագրելով քննական մենագրություններ։ Արդեն 1892 թվականին «Մասիսում» տպագրած իր «Մեր գրականությունը» հոդվածում Չոպանյանը Դուրյանին համարում էր նոր ժամանակների բանաստեղծության հիմնադիր[1]։

Դուրյանից՝ սկիզբ առած այդ բանաստեղծությունը, որ նրա քնարից շնչում էր լիաթոք կյանքով, համիդյան ռեակցիայի խավարում, սակայն, գնաց դեպի աստիճանական անկում, հանդելով «մահապարտ պարոյին», ինչպես Չոպանյանի արձակ բանաստեղծություններից մեկի հերոսն է բնութագրում։ 90-ական թվականների սկզբում հասարակական ընդհանուր հետաքրքրություն առաջացավ Դուրյանի ժառանգության նկատմամբ։ Այդ հետաքրքրությունը օբյեկտիվ պահանջի արդյունք էր. Դուրյանի կենսախնդ պոեզիայի վերհանումով անհրաժեշտություն էր զգացվում ուղիներ ցույց տալ նոր բանաստեղծությանը։ Պետրոս Դուրյանի կյանքին ու գործին անդրադարձավ մամուլը։ Հրանդը

[1] «Մասիս», 1892, թիվ 3959։

(Մելքոն Կյուրճյանը) մատնացույց արեց Դուրյանի նամակների բանաստեղծական բույրը և խնդիր դրեց դրանց հրատարակության։ Հրազդանը (Արփիար Արփիարյան) խոսեց 1872 թվականի հրատարակության մեջ Ս. Ֆելեկյանի կատարած ձախավեր սրբագրությունների մասին։ Բարսեղ Էքսերճյանը ձեռնարկեց և ապա 1893 թվականին հրատարակեց երկերի նոր, մշակված ժողովածուն, իսկ այնուհետև տպագրեց իր հիմնական «Ընդարձակ կենսագրություն բարեհիշատակ Պետրոս Դուրյանի»։

Այս բոլորի հետ, սակայն, Դուրյան բանաստեղծի կենսասեր ոգու վերհանման, նրա ժառանգության գիտական արժևքավորման գործը, որ հասարակական պահանջ էր դարձել, բաժին ընկավ քսան տարին նոր բոլորած Արշակ Չոպանյանին, որը դեռ ոչ շատ առաջ «բանաստեղծության վախճանն» էր գուժում։

Դժվարին, բայց քաղցր պարտականություն էր կատարում Ա. Չոպանյանը՝ հյուլե առ հյուլե հավաքելով քսան տարի առաջ կյանքին հրաժեշտ տված բանաստեղծի կենսագրության պատառիկները։ Չոպանյանը շփումներ է ունենում բազմաթիվ մարդկանց հետ, ժամանակակիցներից նյութեր քաղում, նամակագրություն է անում բանաստեղծի եղբորից՝ Եղիշե Դուրյանից, լուսաբանություններ՝ թե կենսագրությանը և թե գործին վերաբերող, հանձնարարում Կեդրոնականի իր բարեկամ Մաքսուտ Մխիթարյանցին Արմաշում, որտեղ Ե. Դուրյանի մոտ գտնվում էին որոշ ձեռագրեր, ընդօրինակումներ և ճշտումներ անել։ Դուրյանը Չոպանյանի համար միշտ մնաց պաշտելի պատվանդանի վրա, հետագայում քանի՛-քանի տարիներով արդեն ծերունազարդ Չոպանյանը հարց է դրել Դուրյանի ամբողջական գործի հրատարակության վերաբերյալ, պահանջելով Երուսաղեմի «Ս. Հակոբա» միաբանությունից՝ կատարել այդ գործը (Եղիշե Դուրյանի պատրիարքության օրերին իր եղբոր ձեռագրերը փոխադրվել էին Երուսաղեմ)։

1892 թվականի հոկտեմբերին Չոպանյանը հայտնում է, որ արդեն պատրաստել է Դուրյանի կենսագրության մի ստվար մասը[1] և «Մասիսի» նույն տարվա հոկտեմբերի 31-ի համարում լույս է ընծայում այդ աշխատության մի հատվածը՝ «Պետրոս Դուրյանի մահը» խորագրով[2]։ Սրան հետևում է «Պետրոս Դուր-

---

[1] «Հայրենիք», 1892, թիվ 258։

[2] «Մասիս», 1892, թիվ 3970։

յանի վերջին տարին» տիտղոսով հատվածը «Հայրենիքի» 1893 թվականի մայիսի 2-ի համարում: Այսպիսով, Ա. Չոպանյանը Դուրյանի կենսագրության վրա աշխատում էր Բ. Էքսերճյանի գործին զուգահեռ:

Դուրյանի մասին գրած մենագրությունը միևնույն ժամանակ նշանավորում էր Չոպանյանի մուտքը գրականության պատմագրության ասպարեզը: Գրականության պատմագրության ու գրաքննադատության կուլտուր-պատմական մեթոդի սկզբունքները, որոնց նա տիրապետել էր Հիպոլիտ Տենի կատարյալ ուսումնասիրության շնորհիվ, դարձան գրաքննադատ և գրականության պատմագիր Չոպանյանի հիմնաքարերը: Միջավայրը և ժամանակը այն բանալիներն էին, որոնցով նա բացահայտում և բացատրում էր գրական երևույթները, նրանց կապը տվյալ հասարակության, կյանքի հետ:

«Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը»[1] մենագրությամբ սկիզբ դրվեց բանաստեղծի ժառանգության գիտական ուսումնասիրությանը, դուրյանագիտությանը: Այն բաղկացած է երկու մասից՝ «Կենսագրություն» և «Քննադատություն»: «Կենսագրությունը», ինչպես վկայում է գրականագետ Ա. Շարուրյանը իր «Ա. Չոպանյանի «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը» ուսումնասիրության մասին» հոդվածում, որը կցված է երկրորդ հրատարակությանը, համեմատաբար առավել գիտականն է:

«Քննադատություն» բաժնում Չոպանյանը թուրքիկ վերլուծում է բանաստեղծի ժամանակի ու միջավայրի պատկերը: Համիդյան ռեակցիայի տարիներին հեղինակը չէր կարող ուղղակի նշել այն սոցիալ-քաղաքական պատճառները, որոնք բնորոշում էին XIX դարի վաթսունական թվականներին արևմտահայ քաղաքական ու մշակութային զարթոնքը: Այնուամենայնիվ ակնարկները բավականին են. «Արտաքին ազդակներու հետևանք եղող համատարած տգիտության նախկին շրջանն մը հետո, բավական տարածուն մտավոր զարթման մը շրջանն էր, և այդ շրջանին ալ զգալինակներն օրերը, ուր ոգևորությունը մերթ կհասներ նույնիսկ ռևնդային ծայրահեղության, որոնց պիտի հաջորդեր քիչ հետո, արտաքին ու ներքին պատճառներով, անկման նոր շրջան մը»[2]: Դա քաղաքական հույսերի ռոմանտիկ

---

[1] Թիֆլիս, 1894: Երկրորդ հրատարակությունը՝ Երևան, 1967:

[2] Ա. Չոպանյան. Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը, Երևան, 1967, էջ 89:

շրջանն էր, որ տևեց մինչև Բեռլինի կոնգրեսը և 80-ական թվականների սկիզբը: Ընդհանուր բարոյա-քաղաքական վերելքը զգալի էր կյանքի բոլոր մարզերում: Զոպանյանը թվարկում է մշակույթի բոլոր օղակները. լրագրություն, հրատարակչական գործունեություն, թատրոն, գրականություն և այլն, ցույց տալով տիրող բուռն խանդավառության մթնոլորտը: Հատկանշական է, թե Զոպանյանը բանաստեղծության մեջ ինչն էր համարում հիմնականը: Նա գրում է. «Այսպես,— ինչ որ ամենեն կարևորն է դիտելու (ընդգծումը իմն է—Կ. Դ.),— բանաստեղծությունը անջատ չէր ժողովրդեն, իր մեկ որոշ մասով՝ անոր համար և անոր մեջ կերկնվեր, անով կապրեր, անորն էր»[1]: Եվ եթե բանաստեղծությունը անջատ չէր ժողովրդից ու հենց նրա համար էր, նրան էր պատկանում, ապա բնական է, որ Զոպանյանը գտներ, թե Դուրյանի գործը «իր ժամանակի ոգին խտացումն է»:

Ոչ միայն բանաստեղծության, այլև արձակի ու դրամատուրգիայի մեջ Զոպանյանը Դուրյանին համարում էր նոր գրականության հիմնադիրներից մեկը: «Իր արձակը ծայրն ծայր բոլորովին նոր ու անձնական է և տարիներ հետո երևան եկող գրական նորագույն սերունդի մը արձակին նախատիպարը կհանդիսանա»[2],—գրում է նա: Իսկ «Թատրոն կամ թշվառներ» թատերգության առթիվ նա ասում է. «Այս խաղը դարագլուխ մը կբանա մեր գրականության մեջ, իրապաշտ թատրոնի դարագլուխը»[3]:

Թվարկելով Դուրյանի գործի վերաբերյալ Զոպանյանի ուսումնասիրությունների եղրակացությունները, գրականագետ Ա. Շարուրյանը իրավացիորեն գրում է. «Այսօր դրանցից շատերը կարող են թվալ հանրահայտ, դասագրքային ճշմարտություններ, բայց եթե կուզենք, Զոպանյանի մեծագույն ծառայությունը դուրյանագիտությանը հենց այն է, որ նա առաջինը բացահայտեց այդ ճշմարտությունները»[4]: Եվ իրոք, մինչև Զոպանյանի աշխատությունը, ինչպես խոստովանում է «Մշակը», Դուրյանը քիչ ծանոթ էր արևելահայ հասարակությանը[5]:

---

[1] Ա. Զոպանյան, *Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը*, Երևան, 1967, էջ 91:

[2] Նույն տեղում, էջ 99—100:

[3] Նույն տեղում, էջ 145:

[4] Նույն տեղում, էջ 214:

[5] «Մշակ», 1894, № 15:

Իր ուսումնասիրությունը, ինչպես նշեցինք, Չոպանյանը ավարտեց Փարիզում և ուղարկեց Թիֆլիս։ Հեղինակը մեծ հույսեր էր կապել այդ աշխատության հրատարակման նաև դրամական կողմի հետ։ Նա ակնկալում էր ստացված հոնորարով ևս գոնե մի քանի ամիս մնալ Փարիզում, բայց բավականին տևական ու անպտուղ քաշքշուկ առաջ եկավ, և Չոպանյանի հույսերը հօդս ցնդեցին[1]։

Մեկ տարվա ընթացքում Չոպանյանը բազմաթիվ թղթակցություններ ուղարկեց «Հայրենիքին» և մի քանիսը՝ կովկասահայ մամուլին։ Թղթակցություններում արտացոլվում է այն երկակի տպավորությունը, որ երիտասարդ Չոպանյանը ստանում է Փարիզից։ Այդ քաղաքը «Հայրենիքի» էջերում Չոպանյանը ներկայացնում է որպես սոցիալական հակասությունների մայրաքաղաք, որտեղ անօթևան մարդիկ կեսգիշերին ստվերների նման այս ու այն կողմ են թափառում, իսկ սրճարանում բոհեման այրում է բարոյականության վերջին հասկացությունները, որտեղ խնդճությունը «ծայրահեղ, անհավատալի ըմբոստացուցիչ բան մըն է,... Եվ ինչ որ անոր մթնոլորտին ավելի բանձր կը ցուցնե, այն է, որ երջանկության լիրը հորդումի մը տակ կը սողանցի։ Հոս անջրպետը զարհուրելի է կյանքի անժառանգներուն և նպաստավորվածներուն միջև։ Պևքճանքով շողացող դռան առջև է, որ անթությունն մնռնողներուն դիակները կը պառկին։ Եվ ասոնց չարչարանք է հաճախ, որ անոնց վայելքին գործիքը կըլլա»[2]։

Այդ քաղաքը նաև մտավորական և մշակութային կյանքի համաշխարհային վատարան էր, որի ջերմությունը Չոպանյանը իրեն հատուկ տաղանդով հաղորդում է «Հայրենիքի» ընթերցողներին, բայց թեմանների ընտրության և մատուցման հարցում, հաճախ, մոռանում էր լսարանի հնարավորությունները, և այդ

---

[1] Փարիզում երիտասարդ Արշակը ապրում է նյութական խիստ անձուկ պայմաններում. սենյակի համար վճարում է ամսական 20 ֆրանկ (ԳԱՄ, ԱՉՖ, IV բաժին, № 455) և գրական վաստակից եկած հասույթով հազիվ ապահովում անունդի վճարը։ Իր հորը՝ Հովհաննես Չոպանյանին գրած նամակները բացահայտում են Արշակի ծանր նյութական կացությունը։ Ամիսներ շարունակ նա խնդրում է իրեն 6 ոսկի ուղարկել նոր զգեստներ գնելու համար (վերարկուն, կոստյումը շատ հին էին և պարզապես անհարմար էր զգում մարդկանց մեջ երևալ)։ Ըստ երևույթին հայրը չի կարողանում օգնել որդուն։ (ԳԱՄ, ԱՉՖ, IV բաժին, №№ 455—465)։

[2] «Հայրենիք»։ 1894, թիվ 813։

պատճառով Լևոն Բաշալյանը բարեկամաբար կշտամբում է նրան։ «Ես հաճույքով, խիստ մեծ հաճույքով կը կարդամ գրածներդ,— 1893 թվականի դեկտեմբերի 28-ի նամակում ասում է Բաշալյանը,— և, եթե դուտ գրական ու գեղարվեստական հանդես մը ունենայինք՝ միայն զարգացած միտքերու համար, իրենց հարմար շրջանակին մեջ կըլլային հոն։ Բայց ըսեմ, որ «Հայրենիքի» կարգացողներուն հարյուրեն իննսունը չհասկնար կոր քեզի, շվարած կը մնա կոր։ Ինքը ո՞ւր է, և դուն դինք ո՞ւր տանիլ կուզես կոր»[1]։ Թղթակցություններում մեծ տեղ են գրավում Զոպանյանի անձնական տեսակցությունները Զոլայի, Դոդեի, Քոբեի, տիկին Սևռինի, թատերական քննադատ Հանրի Պոերի, բանաստեղծ և քրոնիկագիր Ժան Լոռենի հետ։ Զոպանյանը կարծես նախազդում է, թե իր կյանքի հետագա հանգրվանը Փարիզն է և արդեն այդ մեկ տարվա ընթացքում աշխատում է օգտակար շատ կապեր հաստատել։

Հենց բանաստեղծ Ժան Լոռենն էլ Echo de Paris-ի իր քրոնիկներից մեկում հրատարակում է Զոպանյանի «Երազ» բանաստեղծության թարգմանությունը, այն դնահատելով որպես «Զմայլելի եղերերգ մը, որ կարծես Անդերսընի կաթիլով մը տոգորված է»[2]։

1894 թվականի ամռան վերջերին վերադառնում է Պոլիս և Կեդրոնական վարժարանում ստանձնում հայ գրականության պատմության դասերը։ Քիչ հետո նրան հանձնվում է նաև ֆրանսիական գրականության պատմության առարկան։ Զոպանյանը, դուգահեռաբար, որպես գրականության ուսուցիչ, աշխատում է նաև Մեղպուրյան աղջկանց բարձրագույն վարժարանում, ինչպես նաև դասեր է տալիս մասնավոր անձանց։

Նույն 1894 թվականի վերջերին էր, որ Արշակ Զոպանյանը ձախողված փորձ է անում հրատարակելու «Հայրենիքի» կիսամյա գրական հավելված և, այնուհետև, ձեռնարկում է «Ծաղիկ» հանդեսի հրատարակությանը։

---

1 ԳԱՔ, ԱԶՑ, I բաժին, № 1291։

2 Հապեշեան Հայկազն, Արշակ Զոպանեան, կենսագրական գիծեր, Փարիզ 1924, էջ 9։

«Ծաղիկ» հանդեսը

1

«1894-ին «Ծաղիկ» կիսամյա գրական հանդեսը հիմնելով, մը ջանայի լրացնել, նոր ու ինքնահատուկ ձևի մը մեջ, այն գործը, որ «Արևելք»— «Մասիս»— «Հայրենիքի» մեջ սկսված էր,— հայ նոր գրականության մը կերտման, արևմտահայ աշխարհաբարի զտման ու սևեռման գործը»[1]:

Այսպիսի հատկանշական տողեր է գրել Արշակ Չոպանյանը, որոնց մեջ բնավ պատահական չէ երեք պարբերականների միացումը: Չոպանյանը իր «Ծաղիկով» ձգտում էր շարունակել 80-ականների գործը գրականության զարգացման և աշխարհաբար լեզվի արմատավորման բնագավառներում:

Կիսամյա հանդեսի առաջին թիվը Չոպանյանի խմբագրությամբ լույս է տեսնում 1895 թվականի մարտին: Հանդեսն ունենում է համեմատաբար կարճատև կյանք: Չոպանյանի խմբագրած վերջին՝ թիվ 17-ը հրատարակվել է 1895 թվականի վերջերին, սխտղոսաթերթի վրա կրելով՝ «15 հոկտեմբերի»:

«Ծաղիկի» ուղեգիծը» խորագրով ծրագրային հոդվածում խմբագիրը նոր համոզմունք է հայտնում, որ ազգի հոգևոր պատմությունը միայն նրա գրականությունն է կատարում, ահա թե ինչու նոր հանդեսը իր առջև նպատակ է դնում ընդարձակել ճանապարհը հայ ժամանակակից գրականության, որը մի քանի տարի շարունակ ծաղկեցրել և ժողովրդին սիրել է տվել «Հայրենիք» օրաթերթը:

Լուսավորական-քաղաքակրթական ծրագրի մյուս հիմնական մասը՝ արևմտահայությանը եվրոպական գրականության, գիտության և արվեստի գլխավոր շարժումներին հաղորդակից դարձնելն էր և մարդկության պատմության ընթացքում անուն թողած մեծ մտածողներին ծանոթացնելը[2]:

---

[1] «Անահիտ», նոր շրջան, 6 տարի, հունվար—հունիս 1934, թիվ 5—6, էջ 98—99:

[2] «Ծաղիկ», նոր շրջան, 1895, թիվ 1, էջ 1—2:

Խմբագիրը բազմազան միջոցներով է ձգտել իրագործել իր ծրագիրը, և, եթե այն ինչ-որ չափով թերի է մնացել, ապա որոշ առումով էլ դուրս է եկել նախանշված սահմաններից։ Հանդեսում տպագրվել են մի շարք կարևոր հոդվածներ, ինչպես Զոպանյանի ուսումնասիրությունները Նարեկացու, Էդմոն և Ժյուլ դը Գոնկուրների, հյուսիսի գրականությունների, Հակոբ Պարոնյանի, Պետրոս Ադամյանի (Հիշատակներ), Վագների և Իբսենի վերաբերյալ, Տիգրան Եսայանի «Դամբարանները և Պոլսո կայսերական թանգարանը» և այլն։

Հետաքրքրական գրական բանասիրական էջեր են հրատարակել Միքայել Շամտանճյանը՝ «Մելամաղձությունը նոր գրականության մեջ», «Գերհարդ Հաուպտման», «Իրապաշտության հոգեբանություն», Արմեն Գնունին՝ «Պայրըն և Վենետիկի հայոց վանքը», Ստեփան Քարբուքյանը՝ «Ջոն Քից»։

Ընթերցող հասարակությանը որոշակի տեղեկություն է տրվել եվրոպական գրականության դասական և ժամանակակից գործերի մասին, նրան ներկայացնելով թարգմանված պատառիկների կամ հոդվածների տեսքով Դանթեին, Շեքսպիրին, Բայրոնին, Գոնկուրներին, Ռոնիին, Լոռենին, Վեռլենին, Հաուպտմանին, Միցկևիչին, Գյոթեին, Անդերսենին, Բյուրգերին, Քիլեաուին, Քիցին, գեղանկարիչներից՝ Լեոնարդո դա Վինչիին, դը Շավանին։

Տակավին երիտասարդ խմբագրի կարևորագույն գործերից մեկը «Ծաղիկի» շրջանում նրա հոգատար վերաբերմունքն է գրական նոր սերնդի առաջքաշման նկատմամբ։ «Ինծի համար ամենամեծ հաճույք մըն է,— գրում է Արշակ Զոպանյանը մի նամակում,— տաղանդավոր և աշխատասեր սկսնակներ առաջնորդել և իրախուսել իրենց առաջին խարխափող քայլերուն մեջ»[1]։

Այստեղ առաջին անգամ հեքիաթներ է տպագրում Ռուբեն Զարդարյանը[2], «Ակումիտ» ծածկանունով դեբյուտ է անում Մրմրյանը, Վահան Թեքեյանը նույնպես հաճույքն է վայելում տեսնելու իր հրատարակված առաջնեկը՝ «Ծովեղերքին վրա»։ Իսկ Զապել Հովհաննիսյանը (Եսայան) իր հուշերում գրում է.

---

[1] ԳԱԹ, Գարեգին Լևոնյանի ֆոնդ, № 2804։

[2] Ռուբեն Զարդարյանը բղխակցություններ և պատմվածքներ սկսել է տպագրել Պոլսի մամուլում 90-ական թվականների սկզբներին։

«...Սրշակ Զոպանյանի հրատարակած «Ծաղիկ» շաբաթաթերթի առաջին թիվին մեջ նրևցեր էր իմ մեկ արձակ բանաստեղծությունս։ Սա եղավ իմ գրական առաջին երևումս հրատարակավ։ Այդ բանաստեղծությունը և հետո վիպականներ, որ երևցան նույն թերթին մեջ, անմիջապես ուշադրություն գրավեցին, և ես դարձա մեկ օրեն մյուս ծանոթ անուն»[1]։

«Ծաղիկում» հրապարակվել են Մախոխյանի և Պողոս Փոլոլյանի հոդվածները բժշկական հարցերի շուրջ, նաշկյանի ուսումնասիրությունը հայության մեջ կրոնների վերաբերյալ։ Հեղինակները ձգտել են գիտական նյութը ներկայացնել հանրամատչելի լեզվով և օրինակներով։

Հանդեսի կարճատև գործունեության արդյունավետ կողմերից մեկը ազգային ֆոլկլորի հավաքման ուղղությամբ կատարված ճիգն է։ Սրշակ Զոպանյանը կոչով[2] դիմում է գավառի մտավորականությանը՝ առաջարկելով հավաքել, գրի առնել ժողովրդական ստեղծագործության նմուշները և առաքել «Ծաղիկին»։ Կոչը արձագանք է գտնում։ Նյութեր են ուղարկում Շաքարը, Հմայակ Նարլյանը, Ղազար Փշիկյանը։ Հին օրերի մասին մի պատմվածք է ուղարկում Թլկատինցին։ Ամհասարակ գավառի վերաբերյալ նյութեր են երևում հանդեսում։

Հետևելով «Հայրենիքի» օրինակին, «Ծաղիկը» լայն բղթակցական կապեր է հաստատում գավառի հետ, հետաքրքրվում գյուղի կյանքով, առիթի դեպքում արտացոլում այն իր էջերում։ Գավառի հետ կենդանի շփման նպատակով է, որ հանդեսի խմբագիրը մի քանի օրով մեկնում է Պարտիզակ և իր նոթերը հրապարակում հետևյալ ակնարկի մեջ։ Այստեղ է, որ Ա. Զոպանյանին առիթ է տրվում առաջին անգամ հրապարակային դասախոսությամբ հանդես գալու լեփ-լեցուն լսարանի առջև և առաջին անգամ ղգալու, թե ինչ բան է կենդանի խոսքի ուժը։

Հետաքրքրական է Զոպանյանի համար այն եռանդը, որով նա նոր ձևեր ու մեթոդներ է որոնում ընթերցողների հետ կապեր հաստատելու, առհասարակ իր լսարանն ընդարձակելու ուղղությամբ։

«Ծաղիկի» մեջ նա մտցնում է «Մեր հարցարանը» բաժին։ Հարցեր է ընդունում ընթերցողներից և լուրջ պրույզի նստում

---

[1] ԳԱՄ, Զապել Եսայանի ֆոնդ, ց. 6, թ. 386։

[2] «Ծաղիկ», նոր շրջան, 1895, թիվ 10։

նրանց հետ։ Հետաքրքիր է, օրինակ, հետևյալ հարց ու պատասխանը։ Պոլսից Կ. Մ.-ն հարցրել է, թե արդյոք կյանքը երբևէ իր իդեալին հասնելո՞ւ է։

Խմբագրությունը պատասխանում է. «Երբե՛ք։ Եվ դժբախտություն մը պիտի ըլլար որ օր մը հասնեինք վերջնական իդեալի մը իրագործման։ Մարդկային գործունեությունը պիտի կասեր այն օրը... Մարդուն նպատակը իդեալի մը հասնիլը չէ, այլ իդեալներ ստեղծել, վայելելը չէ, այլ աշխատիլ. իր երջանկությունը կը կայանա իր ձգտումին մեջ դեպի կատարելության մը, որ պիտի միշտ խուսափի, քանի որ իր կատարելության ըմբռնումն իսկ պիտի փոփոխվի միշտ՝ քանի հառաջանա»[1]։

Երբեմն խմբագրությունն ինքն է հարց առաջարկում, օրինակ, «Ի՞նչ է կնոջ դերը կյանքին մեջ», և ընթերցողներից ստացված լավագույն պատասխանները հրապարակում։

Վերջապես, այդ աշխատանքի մի երրորդ ձև, որը նախատեսված է հատկապես ուսանողության համար։ Խմբագրությունը հրատարակում է Գյոթեից մի փիլիսոփայական էջ՝ «Բնություն» ոիտղոսով, և մրցույթ հայտարարում։ Ընթերցողներին առաջարկվում է մեկնաբանել այդ հատվածը։ Հերթական համարներից մեկում տպագրված է Կեդրոնականի ուսանող Արտաշես Ճիզմիճյանի գործը, որը լավագույնն է նկատվել մրցույթի մեջ։

Թեպետ ամենօրյա լրագիր չէր «Ծաղիկը» և ուներ իր ուրույն գրական լուսավորական խնդիրները, այնուամենայնիվ, խմբագրությունը ձգտում է արտացոլել արևմտահայությանը հուզող առօրյա հարցեր ևս և իր ելույթով խթանել դրանց շուտափույթ լուծումը։ Այդ նպատակով է, որ տպագրվում են ակնարկներ հիվանդանոցի ծանր վիճակի վերաբերյալ, որոնց մեջ սուր քննադատություն կա պատասխանատուների հասցեին։

Պոլսի հիվանդանոցի հարցը բավականին ծեծված հարց էր առհասարակ և նրանով շատ էր զբաղվել «Հայրենիքը»։ Այնուամենայնիվ, խնդիրը չէր լուծվել և, «Ծաղիկի» սուր մերկացումներից հետո, «Հայրենիքը» պաշտպանում է այդ ելույթը[2]։ Նույն առիթով խիստ հատկանշական և խոսուն է Արփիար Արփիարյանի ընդհանրացումը։ «Ծաղիկի» այդ ելույթի մեջ նա տեսնում է հասարակական կյանքում «Հայրենիքի» գործի շարունակու-

[1] «Ծաղիկ», նոր շրջան, 1895, թիվ 6, էջ 231։

[2] «Հայրենիք», 1895, թիվ 1290։

թյունը: Հենց այդպես էլ՝ «Շարունակություն» ենթագլուխը իր հոդվածը, նա գրում է. «Մեզի համար մխիթարական երևույթը ան է, որ նոր հասածները մեր դպրոցին թշնամիները չեն. լեզվի, գրականության, հանրային կյանքի մեջ կարծես կա տեսակ մը շարունակություն, որը կատարելագործության պայմաններեն մեկն է»[1]:

Օրվա հասարակական կյանքին համընթաց քայլելու մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ Զոպանյանը մի քանի անգամ անդրադառնում է դպրոցների վիճակին և առհասարակ կրթության դրվածքին:

Բոլոր այս մեթոդների ու ձևերի խնայցի կիրառումը հանդեսին ապահովում են ընդարձակ լսարան և լավ ընդունելություն հասարակության մեջ:

Հատկանշական է մի պարագա ևս:

«Ծաղիկի» հրատարակության առիթով դաշնակցության տեղի ղեկավարները ձգտում են օգտագործել Արփիարյանի և Զոպանյանի միջև եղած անձնական սառնությունը և դրդել Զոպանյանին՝ հանդես գալու «Հայրենիքի» դեմ: Յուսուֆյանը «կուզեր վիս «Հայրենիքի» թշնամի դարձնել»,— գրում է Զոպանյանը մի քանի տարի անց[2]: Երիտասարդ խմբագիրը զայրույթով մերժում է այդ առաջարկությունը և ոչ մի տող չի տպագրում «Հայրենիքի» դեմ, թեպետ վերջինիս մեջ «Ծաղիկի» առաջին համարի առթիվ Զոպանյանի կարծիքով ոչ բարենպաստ խմբագրական էր տրվել[3]:

2

Արշակ Զոպանյանի կրտսեր հորեղբայրը՝ Ալեքսանը, դինամոլ էր և շատ տառապանքներ էր պատճառել ընտանիքին: Այդ մարդը սակայն, երբ խմած չէր լինում, ջերմ հիացում էր զգում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի նկատմամբ ու անընդհատ հատվածներ էր կարդում պատանի Արշակի համար: Ըստ երևույթին նա զգում էր իր ախտերը և այդ աղոթքների մեջ սփոփանք էր փնտրում: Ոչ «Մաքրուհյան» վարժարանում և ոչ իսկ Կեդրոնականում ոչ մի ուսուցիչ դասերի

---

[1] «Հայրենիք», 1895, թիվ 1321:

[2] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 2, էջ 37:

[3] Տե՛ս՝ «Հայրենիք», 1895, թիվ 1100: Արփիարյանի «Նոր բույներ» հոդվածում, իրոք, հիշնախատն արհամարհանք կա նոր հանդեսի հասցեին, որը իրր միայն պիտի դրազվի դեղեցիկով և լինի սկսնակների օրգան:

նյութ չէր արել Նարեկացուն։ Զոպանյանի ուշադրությունը մեծ քերթողի վրա ակամայից հրավիրել է նրա հորեղբայրը։ Նարեկացու պիրքը դարեր շարունակ աղոթագիրք և հիվանդություններ բուժող հրաշագործ մատյան էր համարվել, միա՛յն։

Արշակ Զոպանյանն էր, որ «Ծաղիկի» երկու հաջորդական համարներում[1] հրատարակեց իր ուսումնասիրությունը, «ամենեն կարևորը, ամենեն ուշադրություն գրավողը» Գրիգոր Նարեկացու վերաբերյալ, վեր հանելով նրա մեջ բանաստեղծը, «գերագույն կատարը հայ դասական բանաստեղծության»։ Մի քանի տարի հետո ինքն իսկ թարգմանեց իր ուսումնասիրությունը ֆրանսերեն և տպագրեց «Մերքյուր դը Ֆրանս» ամսագրում (1900 թվ. նոյեմբերին), այդպիսով Նարեկացի բանաստեղծի պրոպագանդը անելով թե հայ ժողովրդի և թե եվրոպայի առջև։ Նույն ուսումնասիրությունը աննշան վերախմբագրությամբ հրատարակվեց Զոպանյանի «Դեմքերի» Ա հատորում, 1924. թվականին։

Զոպանյանի անգնահատելի ծառայությունը մեր մշակույթի պատմության այն էր, որ նա առաջինը եկեղեցու սրբերի շարքերը դասված և ժողովրդի մեջ որպես այդպիսին հռչակ ձեռք բերած Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը լայնորեն ու խորությամբ վերլուծեց որպես բանաստեղծություն[2]։

---

[1] «Ծաղիկ», 1895, թիվ 4, 5։

[2] Այդ հանգամանքն ընդգծում է նաև Էդ. Ջրբաշյանը իր «Դարաբակղի հայ քննադատները» հոդվածում։ Ջրբաշյան Էդ. Գեղագիտություն և գրականություն։ Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983. էջ 331, 332։

Մինչև Զոպանյանի ուսումնասիրությունն էլ, անշուշտ, հայտնի էր, որ Նարեկացին նաև բանաստեղծ է, բայց դեռ ոչ ոք Զոպանյանի խորությամբ ու բանիմացությամբ այդ բանը ցույց չէր տվել։ Պոլսի «Արևելքում», օրինակ, 1893 թվականին երկու փոքրիկ նյութեր են տպագրվել Կալիպսոյի և Դասպար Նեմցիի ստորագրություններով (ԲԲ. 2727 և 2737)։ Երկու հեղինակներն էլ նշում են Նարեկացու բանաստեղծական հմայքը, նրա կրոնական ու վարդապետական կողմերի հետ միասին։ Բայց դա արվել է դեկլարատիվ և խիստ տարտամ ձևով։ Լուսաբանության համար բերենք այդ հոդվածների սերտուքը, որը երկու նախադասության մեջ է ամփոփվում. «Այս մատյանը թե կյանքը, թե փիլիսոփայությունը, թե բանաստեղծությունը կը մարմնացնէ հինքյան։ Կրոնասերն հոն կը գտնէ ջերմ ու եռանդուն աղոթքներ առ աստված, փիլիսոփան՝ ողջ ու ճշմարիտ մտածումներ, բանաստեղծը՝ վսեմ երևակայություն մը և ղգայուն ու պերճ իմաստներ», «Գրիգոր վարդապետն, որ իր երկնատուր տաղանդով հայ գրականության անզուգական նվեր մը ըրավ իր «Նարեկ»-ով, և մեզ, կրոնասերներուս ալ, վսեմ ու ազդեցիկ աղոթքներ սովրեցուց»։

Ինքը, Զոպանյանն էլ, 1893 թվականին Նարեկացուն անվանում է «մեր ամենեն վսեմ գրողը» («Հայրենիք», 1893, թիվ 431)։

«Գործը դեր Նարեկացին թողած է, ամբողջ մըրիկ մըն է անհունի մեջ գալարվող զգացման մը, և չեմ գիտեր գործ, որ անկից զորավոր ըլլա։ Էջեր կան հոն, որ մեր բանաստեղծը մարգարեներուն ուժին հավասարած է, և էջեր, ուր Շեքսպիրի հով մը կանցնի։ Ամբողջ միստիքականություն է այդ գործը և ամբողջ քնարերգություն»[1],— այսպես է նախասիս ընթերցողին ներկայացնում Ս. Զոպանյանը։

Հեղինակը շարադրում է Նարեկացու միջավայրը և կենսագրությունը, որքանով հայտնի էին դրական աղբյուրներից, այնուհետև մանրակրկիտ քննարկում Նարեկացու ստեղծագործությունը։ Նա գտնում է, որ «Մատյան ողբերգության» գիրքը հեղինակի հոգու ամենաճիշտ արտահայտությունն է, որովհետև այն, նրա մյուս գործերի համեմատ, ամենից քիչ ասմունքաբանականն է և ամենից շատ քնարերգականը։ «Մայրենյայր այդ գիրքը երգն է միակ հոգիի մը, անոր ցավերուն, անոր զմայլանքներուն, դողերուն, բոլոր հուզումներուն։ Եվ ինչ որ այդ երգը կը լայնցնե, մեծ արվեստի այն էական հատկանիշն է, որով գործը ընդհանուր և մասնավոր է միանգամայն, մարդկային և միանգամայն անհատական»[2]։

Առանձին հատվածների, «բան»երի վերլուծությունը, որ կատարում է Զոպանյանը բանաստեղծական ներշնչանքով, ընթերցողի աչքե կանգնեցնում է միջնադարյան քնարերգուին իր ողջ հասակով, «հոգին նկարող» զգացմունքներով, «հրաշեկ երկաթի պես» շշացող, կարմրին տվող ու հալվող բառերով։

Հատկանշական են Զոպանյանի մտքերը Նարեկացուն ձևավորող «նախանյութի» մասին։ Այդ «նախանյութը» բաղկացած է երկու բաղադրիչ մասերից՝ բովանդակությունից և ձևից։ Բովանդակությունը արդեն նախասիս կար «Աստվածաշնչում». «Ինչ որ Նարեկացին կը վերաբերի, այն ուժն է որով այդ զգացումները յուրացուցած է... և մանավանդ այն ձևը որով արտահայտած է զանոնք»[3]։ Նարեկացու ոճի մեջ Զոպանյանը բնութագրական է համարում կրկնությունը, որի հրապույրը ոչ թե կրոնական գրականության հոհստորական ցուրտ ձևն է, մտքի ճարտարախոսությունը և համոզյան ցույցը, այլ անսպառ ներշնչման բնական բխումը։

---

[1] «Մագիկ», 1895, թիվ 4, էջ 130։

[2] Նույն տեղում, թիվ 5, էջ 172։

[3] Նույն տեղում, էջ 181։

«Այս կրկնության եղանակը, որ ձանձրալի և նույն իսկ ծիծաղելի պիտի ըլլար ուրիշ ամեն պարագայի մեջ, հոս՝ այն հուզմունքով, զոր Նարեկացին կը դնե անոր մեջ և բացառության ստեղծման արտակարգ ուժով՝ գեղեցկություն մը կը դառնա, և գեղեցկություն մը, որ իր նմանը չունի որևէ ուրիշ բանաստեղծի մեջ. ահավասիկ բան մըն է այն բեղունությունը, որով բացառությունները կը դարբնվին նաև է նաև: Երբեմն կը կարծենք, երկայն շարքեր մը հետո, որ ալ հատավ աղբյուրը և թե բանաստեղծը, ուժասպառ պիտի հանգչի. և ապշություն մըն է, երբ կը տեսնենք, որ նոր համարի մը մեջ՝ նորեն նույն թվումն է, որ կը շարունակվի միշտ նույն ուժեղ ժայթքումով: Երևակայեցեք, որ հիասնմանկ բառ դիպած է (բան է) մեղքին բյուրապան ձևերը նկարելու, հարյուր չորս նմանություն՝ իր մեղավորությունը հայտնելու (բան ՍՋ) և քառասուն պատկեր՝ մահվան ավերը պատմելու համար. և ջախջախող բան մըն է, երբ խորհիք, որ այդ նմանություններն ու պատկերները ամենն գեղեցիկներն են հայ գրականության»[1]:

Իրերի և դպացումների բազմակողմանի պատկերումը Նարեկացու կողմից, Զոպանյանը «ջղուտ իրապաշտություն» է կոչում: Դա դիտելու անօրինակ կարողության հետևանք է. «Ոչ միայն բնության մեծ պատկեր մը հրաշալի կենդանությամբ կը գտնենք նկարված Նարեկացիի մեջ (օրինակ՝ նավաբեկության պատկերը Բան ԻԵ.-ին մեջ), այլ երբեմն ամենաչնչին իրերն իսկ կը տեսնենք հոն մանրամասնության զարմանալի առատությամբ մը և արտահայտության գրեթե դիտական ճշտությամբ մը նկարված»[2]:

Մեկը մյուսի հետևից բացահայտելով Նարեկացու բանաստեղծական դպացումի արտահայտման մասնահատկությունները, Զոպանյանը դրանք, մի քանի գեղեցիկ շարականների և գողթան երգերի հատուկտորների հետ միասին, համարում է մեր հին բանաստեղծության գանձ: Երբեք հայ միտքը այդչափ նրբորեն բանաստեղծ և արվեստագետ չէր դրսևորել իր մեջ, որքան Նարեկացու ստեղծագործությունում, ասում է Զոպանյանը:

Բևեռելով մի քանի վառ պատկերներ, Զոպանյանը շատ կարևոր միտք է հայտնում, Նարեկացու արմատները կապելով առավել հին շրջանի հայ ժողովրդական բանաստեղծության հետ:

---

[1] «Մասիկ», 1895, թիվ 5, էջ 184:

[2] Նույն տեղում, էջ 185:

Նա գրում է. «Նվ այս վառ պատկերները, ծաղիկներու, արևի և բուրմանց այս ուրախութիւնը, վանկերու այս լուսավոր երաժըշտութիւնը, որոնք «Նարեկ»-ին ոդբերուն տառապագին մթութիւնեն հետո հանկարծ գարնան գույներու բողբոջում մը կը ծածանեն բառերուն մեջ, ասիկա գարձ մը չէ՞ արդյոք դեպի բուն հայ բանաստեղծութիւնը, դեպի լույսի, վաւիկութեանց, խրոխտ գեղեցկութեան ու հրեղեն քնարերգութեան բանաստեղծութիւնը մեր գողթան երգերուն. անգիտակից բնազդական գարձ մը, որ այդ քրիստոնեական տրտմութեամբ մթնած հոգիին մեջ, հնամաւոր առհավութեան ձայներուն զարթումովը, զանի կը մղի նորեն իր ցեղին պայծառ ներշնչումին մեջ, զանի կը տանի նորեն ծովուն ու երկնքին մեծ արևուտ բանաստեղծութեան՝ «Երկներ երկին, երկներ երկիր, երկներ և ծով ծիրանի...»[1]:

Ընթերցողի ուշադրութիւնն ենք հրավիրում այս մեջբերումի վրա նաև ուրիշ տեսակետից: Արդյոք չի՞ բնութագրում հենց իրեն՝ Ս. Զոպանյանին, այդ խանդավառ գովերգութիւնը վառ պատկերների, ծաղիկների, արևի, ուրախութեան, լույսի, գարնան գույների հրեղեն բանաստեղծութեան:

Զոպանյանը կոչ է անում հպարտութեամբ, ուրախութեամբ և հիացումով ողջունել Նարեկացի բանաստեղծին: «Հանենք զԱնիկա աղոթք գրողի կրոնական գույնեն, ուր սահմանափակված էր, և դնենք իր տեղը, գրական մեծ հանճարներուն օգակարկառ բարձունքին մեջ: Ալ չըսենք, որ մեր բանաստեղծութիւնը հսկա չունի»[2]: Նա գտնում է, որ Նարեկացին, իր միստիկական կացարից հանված, մեր ժողովրդի հոգին է մարմնավորում, նրա ստեղծագործական և արվեստագետ ղգայնութեան հոգին:

«Գրիգոր Նարեկացի» հոդվածը, ինչպես և պետք էր սպասել, բավականին հուզում առաջ բերեց: Բնականաբար, դժվար էր գարերով սրբագործված «աղոթագրքի» հեղինակին մեկ օրից մյուսն ընդունել որպես հայ դասական բանաստեղծութեան գագաթը: Նույնիսկ Արփիարյանի նման առաջադեմ մտածողը փորձություն ունեցավ առարկել «Հայրենիքի» էջերում: Նա հեգնում է Զոպանյանին, թե «եղական աղոթագիրքը կը քննի կուսումնասիրի իբր գեղարվեստական գործ»: Այնուամենայնիվ, Արփիարյանն էլ վարանում էր իր մերժման մեջ: «Եթե իրավ է,

---

[1] «Մաղիկ», 1895, թիվ 5, էջ 188:

[2] «Մաղիկ», 1895, թիվ 5, էջ 185:

որ ամեն հանճար իր արենակիցներուն ցեղական հատկութեանց ամփոփումն է,— շարունակում է նա,— այն ատեն կը սկսինք տարակուսանքներ ունենալ, կամ մենք մեզի լավ չենք ճանչնար, կամ Նարեկացին մենն չէ, կամ թե անոր հանճարը մեր աչքին կ'երևի տարապայման մեծութեամբ մը, որուն չափը ճշմարտութեան վրա չէ առնված»[1]։

Բոլոր դեպքերում, Արփիարյանի մոտեցումը այս հարցին եղել է ուտիլիտար, իր կոնկրետ ժամանակի անմիջական պահանջներից ելնող։ Նա գտնում էր, որ ժամանակակից գաղափարները, փիլիսոփայությունը, գեղեցկագիտությունը չեն ընդունում գրագիտության այդօրինակ մեթոդը և չի կարելի այդ գիրքը տալ դպրոցականների ձեռքը։ «Ու մենք չի փափագի՞նք քաջառողջ, պայծառ, ուրախության ու կորովի գրականությամբ մը միայն ամրապնդել մեր տղաքներուն սիրտն ու միտքը»,— ոչ առանց հիմքի եղրակացնում է նա։

Այդ ուտիլիտար մոտեցումով, սակայն, նա աչքաթող էր անում շատ ավելի խոր ու կարևոր գործոնը, մեր ժողովրդի մշակույթի գագաթներից մեկի վերհանումը թե ազգային, թե հետագայում միջազգային մասշտաբով, որ սիրտ ծառայեր նաև ավյալ ժամանակի առջև կանգնած ամենակարևոր խնդիրների՝ ազգային ինքնաճանաչման և ազգային կոնսոլիդացիայի իրականացման նպատակին։

Պատասխանելով Արփիարյանին՝ Զոպանյանը գրում է. «Քննադատության հին ձևն էր ան, ուր քննադատը կը դատապարտեր և կ'արհամարհեր գործ մը զոր իր անձնական վարդապետության ու գեղեցկագիտության համաձայն չէր գտներ... Քննադատությունը այսօր իրեն պաշտոն կը համարի բացատրել գործերը, անոնց կազմությունը, իրենց ժամանակին հետ ունեցած կապերը, զանոնք ծնուցանող միջավայրին և զանոնք ձևակերպող հոգիին հատկանիշը ցուցնել, գործին պատմությունն ու վերլուծումն ընել»։ Քննադատության հնացած ձևը սխալ է գործում, «երբ կուզե աղոթող մը միայն տեսնել, ուր որ մենք բանաստեղծ մը կը գտնենք։ Քննադատությունը, սակայն, բանաստեղծը կը տեսնե միշտ, ինչպես ըրավ՝ այնչափ ատեն միայն աղոթք համարված Վեդային կամ Ավեստային համար և ինչպես պետք է ըներ՝ Նարեկին ալ համար»[2]։

[1] «Հայրենիք», 1895, թիվ 1170։

[2] «Մաղիկ», նոր շրջան, 1895, թիվ 7, էջ 261—262։

Այս դիտողությունը ինքնին հետաքրքրական է քննադատության ձևի և բովանդակության բացահայտման տեսակետից: Արդեն քաննելնքամյա Չոպանյանը, որ բավականին լավ յուրացրել էր Հիպոլիտ Տենի գրականագիտական սկզբունքները, լավին դիտակցում էր գրականության և արվեստի ստեղծագործության նկատմամբ պատմական հայացքի, ժամանակի և միջավայրի հետ եղած կապերի բացահայտման անհրաժեշտությունը: Մնաց որ ըստ էության էլ Չոպանյանը իրավացի էր: Եթե «Ծաղիկը» և նրա իմբապրատևնը այլևս ուրիշ ծառայություն մատուցած չլիներին, նորևկացու բանաստեղծության վերլուծությունը արդեն բավական էր, որ սերունդները արժանին հատուցեին այդ գործի հեղինակին:

3

Արշակ Չոպանյանի՝ «Ծաղիկում» հրատարակած հոդվածների մեջ կարևոր տեղ է գրավում նրա ուսումնասիրությունը Հակոբ Պարոնյանի կյանքի և գործունեության վերաբերյալ, որը հետագայում հրատարակվել է «Դեմքերի» Բ հատորում: Մինչ այս հոդվածի ստեղծությունն էլ Ա. Չոպանյանը պահպան տուիթներով և, մասնավորապես, «Մեր գրականությունը» հոդվածում անդրադարձել է Հ. Պարոնյանին, փորձեր արել գնահատելու նրա գործը: «Ծաղիկում» տպագրված հոդվածը, որ նվիրված է Պարոնյանի մահվան հերթական տարելիցին, ըստ էության (Բնական Չոպանյանը ուղղակիորեն չի շոշափում այդ հարցը) պատասխան է Չոպանյանին իսկ հետող կարևոր մեկ հարցի՝ ինչպիսի՞ն էր նրա վերաբերմունքը 80-ականների գրականության անմիջական նախորդների նկատմամբ: Արդեն Պետրոս Դուրյանի վերաբերյալ աշխատությունը, նույնպես, ինչ-որ չափով այդ հարցի պատասխանն էր հետամտում: Բայց, եթե Պ. Դուրյանի գործի գնահատության հարցում երիտասարդ Չոպանյանին հաջողվել է գտնել օբյեկտիվ չափանիշը, Դուրյանի ստեղծագործությունը դիտելով ժամանակի առաջ քաշած խնդիրների տեսակետից և, ըստ այնմ էլ, գնահատելով բանաստեղծի նաև պատմական դերն ու արժանիքը, Պարոնյանի ժառանգության հարցում Չոպանյանը մեր կարծիքով վրիպել է հենց նույն կետում. Պարոնյանի դերը չի դիտել այն ժամանակաշրջանի խնդիրների բարձրության, որոնց լուծմանն էր նպաստում Հ.

Պարոնյանի գործը, և, հետևաբար, չի կարողացել հասնել տեսական ընդհանրացման ու Պարոնյանի ճիշտ տեղի բնորոշմանը մեր գրականության պատմության մեջ։

Հավատարիմ իր գրադատական մեթոդին, ըստ որի Զոպանյանը միշտ ձգտում է որևէ հեղինակի գործը դիտել միջավայրի և ժամանակաշրջանի հետ սերտ համագործակցության մեջ, այստեղ էլ նա վերլուծում է ժամանակաշրջանը, հիշում, թե «ոչ մեկուն գործը մեր մեջ, այնչափ իր ատենին, իր միջավայրին, իր հասարակության գործը եղած, անկից հասկցված, անոր մեջ տարածված, անկից սիրված է, որչափ իր գործը», թե Պարոնյանի գործը «ժամանակակից հայության և, մասնավորապես, Պոլսո հայ համայնքին ամենեն ներքին ու հավատարիմ արտահայտությունն էր», թե հատկապես էնաֆ դասակարգն էր կլանում երգիծաբանի ստեղծագործությունը[1]։ Որպես ապացույց, Զոպանյանը վերհիշում է իր ուսանողական տարիները, երբ «ձանձրանալի դասերուն, դարակին մեջ պահած՝ Պարոնյան կը կարդայինք»։

Բայց, ճշտիվ ըմբռնելով, որ Պարոնյանը հավատարիմ արտահայտությունն էր իր ժամանակակից հայության, Զոպանյանը հենց դրա մեջ էլ տեսնում է Պարոնյանի թերությունների աղբյուրը։ Պարոնյանը, ասում է հեղինակը, «շուկայի տարրին» արտացոլողն էր, «պարոտք» և «պարտատեր» բառերը ամենեն շատ հեղհեղվածներն են իր լեզվին մեջ, իրեն համար «անանկանալը» այնչափ հատկանշական բառ մըն է, որչափ «մխալը» Դուրյանին»[2]։ Հենց այդ շուկայի կյանքն էլ, ըստ Զոպանյանի, «աղդեցություն ըրած է Պարոնյանի ոչ միայն ձևին, այլ (և հոտ է իր մեծագույն թերությունը ինծի համար) իր ոգիին ալ վրա»[3]։

«Պարտքը» և «պարտատերը», «անանկանալն» ու «հարբատանալը» սիմվոլներն էին այն նոր հասարակության, որը համառորեն գալիս էր հաստատելու իր իրավունքները կյանքում, բ՛երելով իր հասկացություններն ու բարքերը՝ առաջադիմական թե հոռի։ Պարոնյանի մեծությունը հենց այն բանում էր, որ նա ժամանակին զգաց, տեսավ, ապրեց ու նկարագրեց այդ հասարակության մուտքը, կանգնեց «էնաֆ» դասակարգի շարքե-

---

[1] «Դեմքեր», 1929, էջ 31։ «Ծաղիկում» տպագրված հոդվածը «Դեմքեր» հատորում որոշ փոփոխության է ենթարկվել հեղինակի ձեռքով և այդ պատճառով մեջբերումներն անում ենք ըստ հիշյալ հատորի։

[2] Նույն տեղում, էջ 34։

[3] Նույն տեղում, էջ 33։

րում։ Չոպանյանը իր ամբողջության մեջ չի տեսնում այդ երևույթը և թերություն է համարում այն, ինչ առավելություն պետք է ակնարկվեր։ Բնականաբար, Պարոնյանի գործի նման ընկալումից հետո Չոպանյանը պիտի գոներ, թե մեծ երդիծաբանը «դերապանծապես ծաղրանկարիչ մըն է» և նրա գործը «իբր ծաղրանկար նկատվելով, այդ բոլոր էջերը իրենց ճշմարիտ նշանակությունն ու արժեքը կը տառանան, կոշտությունները բնական կը դառնան, չափազանցությունը կ'արդարանա և հատկություն մը կըլլա և վիպասանական մտածում, ճարտ դիտողություն և նշգրիտ ոճ փնտրելու; դոհ կըլլանք այդ անակնկալ ու հարուստ հեգնությունը գտնելով, որ մեզ տղու պես կը խնդացնե և որ այնչափ բնականորեն կը բխի»[1]։

Մեր ընդգծած տողը և առհասարակ ամբողջ այս մեջբերումը, որ Չոպանյանի եղրափակիչ միտքն է, մատնացույց է անում, թե ինչ տեղ էր հատկացնում երիտասարդ Չոպանյանը Հ. Պարոնյանին մեր գրականության պատմության մեջ։ Այդ տեղը անհավատալիորեն ցածր էր և, ըստ նրա, պարունակում էր պարզապես հարուստ հեգնություն, որը «տղու պես» ծիծաղեցնում է ընթերցողին։

Այս բոլորի հետ, սակայն, Չոպանյանը արել է մի շարք արժեքավոր դիտումներ, որոնք երբեմն-երբեմն նույնիսկ հակասում են նրա եղրակացություններին։ Չոպանյանը հմտորեն վերլուծում է Պարոնյանի մի շարք գործերը, հատկապես մատնացույց անելով երդիծաբանի սերը էնաֆ դասի և «անկից ավելի վար մեր «մութ խավերուն» նկատմամբ։ «Բոլոր այս պատկերները գծված են բարքերու ամենաճիշտ դիտակցությամբ մը, տիպարներու կատարյալ իրականությամբ և պատմվածքի այնպիսի համով արագությամբ մը, որ կարելի է զանոնք վերջնական վճռական պատկերները համարել Թուրս հայ էնաֆ դասին, թանկագին անով, որ ատոնք ճշտությամբ պիտի պահեն միշտ կյանքը այդ դասին»[2]։

Չոպանյանը իրավացիորեն նշում է, որ Պարոնյանը ամբողջությամբ, իր պատկերներով, դաղափարներով, համակրություններով ու հակակրություններով, բարոյականով ու լեզվաոճական միջոցներով դերապանծապես հասկանալի էր ժողովրդին և ժողո-

---

[1] «Դեմքեր», 1929, էջ 47—48։

[2] «Դեմքեր», 1929, էջ 39։

վրդի աչքին եղել է անպարտելի խոշոր ուժ։ Քննադատը Պարոնյանի մեջ կարևոր արժանիք է համարում, որ նա աշխարհաբարի հաստատման գործում ներդրել է մեծ լումա։

«Մեծապատիվ մուրացկանները» Զոպանյանը համարում է հայերեն լավագույն կատակերգությունը և առհասարակ Պարոնյանի՝ կատակերգականի զգացումը գնահատում որպես մի հատկություն, մի զորություն, մի մասնավոր ուժ, «որուն վրա խոսած առեննիս պետք է գլխարկնիս շատ բարձր հաննենք»[1]։

«Ծաղիկ» հանդեսը տպագրում է Հակոբ Պարոնյանի գործերից մի քանի կարևոր և բնութագրական հատվածներ։ Հետագայում ևս Զոպանյանը պահպանում է Հ. Պարոնյանի նկատմամբ հետաքրքրությունը, ղանազան առիթներով կարծիքներ հայտնում, իսկ «Անահիտում» դարձյալ տպագրում որոշ էջեր։

Հակոբ Պարոնյանին նվիրված հոդվածում Զոպանյանը չի պատասխանում այն հարցին, թե ո՞րն էր Պարոնյանի նշանակությունը 80-ականների գրականության զարգացման համար։ Ըստ երևույթին, պիտի պատահական չհամարել այդ «բացթողումը»։ Զոպանյանը, հետևելով իր ժամանակակից որոշ գործիչներին, այն սխալ տեսակետին էր, թե արևմտահայ նոր գրականությունը արմատներ չունի հայ իրականության մեջ։ Այդ միտքը նա առաջ է քաշել 1891 թ. «Հայրենիք» օրաթերթում[2], իսկ հետագայում մեկ անգամ ևս պնդել «Ծաղիկում»։ Այստեղ հրատարակված «Հյուսիսի գրականությունները» հոդվածում այդ մասին արդեն բացահայտ ասված է. «Մեր արդի գրականությունը, աշխարհաբարի գրականությունը, այն որ լրջորեն այս դարուն կեսեն հետո կը սկսի, ամբողջապես ծնունդ է ֆրանսիական ազդեցության»[3]։ Կամ Զոպանյանը այս ձևակերպումով նկատի ունի ներառնել նաև Պարոնյանին (ինչպես նաև Դուրյանին), իսկ այդ դեպքում նա պիտի հակասի իր իսկ կարծիքին, թե Պարոնյանի արմատները ամբողջապես «պոլսահայ համայնքի» մեջ էին ու նրա արտահայտությունն էին հանդիսանում, կամ Պարոնյանին այդ ձևակերպումի սահմաններից դուրս թողնելու դեպքում պիտի մերժի նրա ազդեցությունը ժամանակակից գրականության վրա։

---

[1] «Դեմքեր», 1929, էջ 46։

[2] «Հայրենիք», 1891, թիվ 8։

[3] «Ծաղիկ», 1895, թիվ 7, էջ 233։

Անշուշտ, ֆրանսիական և առհասարակ եվրոպական (այդ թվում ռուսական) մշակույթի ազդեցությունը շատ մեծ էր արևմտահայ նոր գրականության ձևավորման ու զարգացման վրա։ Արդեն իսկ սոցիալ-քաղաքական խնդիրների բերումով, եվրոպական մշակույթի, եվրոպական լուսավորության տարածումը ժամանակի ոգու առաջադիմական պահանջն էր։ Բայց դա չէր կարող բավարար հիմք ծառայել Զոպանյանի ընդհանրացումների համար[1]։

4

Եվրոպական մշակույթի և լուսավորության տարածումը «Ծաղիկ» հանդեսի ծրագրի էական կետերից մեկն էր։ Համեմատաբար կարճատև կյանքի ընթացքում այստեղ տպագրվել են բազմաթիվ թարգմանություններ և մի քանի հոդվածներ։ Զոպանյանի հայացքների կայունացման և հետագա խորացման տեսակետից խիստ կարևոր են նրա ուսումնասիրությունները Գոնկուր եղբայրների, Իբսենի և Վագների վերաբերյալ։

Վագների «Բանհատուլերի», ինչպես նաև նրա ամբողջ ստեղծագործության ազդեցությունը ֆրանսիական դարավերջյան գրականության վրա Զոպանյանը դիտում է բացասական։ Ֆրանսիական գրականության մեջ ռեալիզմի ընկրկումին և միստիկականության հիվանդոտ ձգտումների տարածմանը նպաստեց Վագները, ասում է Ս. Զոպանյանը։ «Ոչ մեկ արվեստի գործ արդեն այնչափ ուժով արտահայտած է քրիստոնեական տրտմությունը, անդրաշխարհյան երազանքին միստիքական անձնատվությունը, որչափ Վագների գործը։ Հիվանդ գործ, աշխարհեն անջատող կյանքին դուրսին ծարավը ծնուցանող, ամբողջ թերթլուռն՝ երկնքի կարոտով։ Հիվանդ այնչափ, և այնչափ հանճարեղորեն հիվանդ, որ արվեստի հիմարություն մը տարածեց քանի մը սերունդի մեջ»[2]։ Սրան հակառակ, Զոպանյանը Իբսենի «Բրանդը» դիտում է «թերևս նույնչափ տխուր, ավելի կաղդուրիչ, առողջ»[3]։ Ո՛չ, զեմարդը չէ, որ գրավում է Զոպանյանին,

---

[1] Եվրոպական մշակույթի ազդեցության հարցը արևմտահայ նոր գրականության վրա հանգամանորեն քննարկված է սովետահայ գրականագետների աշխատություններում (Դ. Սահինյան, Մ. Հյուսյան և ուրիշներ) և լուսաբանված հիշյա դիրքերից։

[2] «Ծաղիկ», 1895, թիվ 11—13, էջ 466։

[3] Նույն տեղում։

այլ մարդկային կամքի անկոտրումության դրսևորումը, իդեալին հասնելու անսասանելի վճռականությունը:

Այս հոդվածը, ինչպես նաև Գոնկուրներին նվիրված ուսումնասիրությունը վկայում են, որ Զոպանյանը «Մաղիկի» շրջանում կանգնած էր կենսասեր, կյանքը հաստատող արվեստի պաշտպանության դիրքերում և քնավ երբեք փորձ չի անում կուրորեն խոնարհվելու եվրոպական հեղինակությունների առջև: Գրականության և արվեստի կոչման այս ճշտումը Զոպանյանի համար դեռևս չէր նշանակում, թե նա հասարակական կյանքի հետ գրականության և արվեստի կապի հարցում նույնպես կարողացել էր հասնել ճիշտ պատկերացման: Ինչպես 1891 թվականին կրոնի և բանաստեղծության զարգացման մեջ նա կապ էր տեսնում, այժմ էլ հասարակության զարգացման պատմությունը կապում է կրոնական զգացումի և սիրո զգացումի հետ: «Այդ երկու մեծ ուժերը եղան... որ մարդուն բարձրացնել տվին անհուն ու բյուրատան ձայներով բզկացող փոթթակին իր քաղաքակրթության: Կրոնական զգացումը մարդը մղեց տիեզերքի անպատում գեղեցկությունը դովաբանելու կամ տիեզերքին խորհուրդը մեկնելու, և ծնան դեղարվեստներն ու իմաստասիրությունը, և անկե հետո՝ գիտությունն ալ: Բայց սիրո զգացումը, զուգահեռաբար իր ազդեցությունը դնելով մարդուն մեջ, զայն մղեց գեղեցիկը սիրելու, գեղեցիկն հասկնալու և ինքն ալ իր կարգին գեղեցիկն արտահայտելու»[1]:

Զոպանյանի այս մտքերը գալիս են հասարակության նկատմամբ նրա իդեալիստական հայացքներից: Բյուխներյան գռեհիկ մատերիալիզմը, որով ըստ էության սահմանափակվել էր Զոպանյանի փիլիսոփայական ուսումը, բնականաբար լայն դաշտ պիտի թողներ իդեալիզմի համար հասարակության պատմությանը վերաբերող հարցերում:

Սակայն դառնանք եվրոպական գրականության չոպանյանական դնահատումներին:

«Պիեռ Քիյեռ» ուսումնասիրության մեջ Զոպանյանը նորից անդրադառնում է ֆրանսիական դարավերջի բանաստեղծության վերլուծությանը և ջանում լուսավոր կետեր գտնել նրանում: Սոցիալական իրականության տգեղությունները և հոգու «ժանգոտումը կյանքին մեջ», խուճապի են մատնում ֆրանսիական

[1] «Մաղիկ», 1895, թիվ 2, էջ 34:

բանաստեղծությունը՝ Բոդլերից մինչև Վեռլեն։ Հետաքրքրական է, արդեն այդ ժամանակ, Զոպանյանի գնահատականը «պառնասյան» դպրոցին. «Հրախաղության սին ու շլացնող փայլ», «ձևին զվարթ և անզգա հայելին փաղփեցնելև հոգնած» («պառնասյանների» ավելի խոր ու սպառիչ քննադատությունը Զոպանյանը շարադրելու է «Անահիտում»)։ Եվ այդ համատարած հիվանդ հուսահատության մեջ խոստումնալից կայծ է համարում Քիչեառին, որի «մեջ հետաքրքիր ու զորավոգին համակրություն մը կը գտնենք մարդուն կյանքին ու գործին համար»[1]։

«Գեղարվեստի մեջ մտածումը, գեղարվեստ՝ կյանքի բացատրություն» բանաձևը, որ ըստ Զոպանյանի կազմում է Բյուվիոն դը Շավանի գեղեցկագիտական տեսությունը, միանգամայն մոտ է իր սրտին, և «Ծաղիկի» հենց առաջին համարում նա այդ բանաձևն է կարևոր գտնում շեշտել արվեստագետի գործի մեջ։

Եվ, վերջապես, Գոնկուր եղբայրներին նվիրված ուսումնասիրությունում Զոպանյանը հայտնում է մի քանի կարևոր մտքեր, որոնք այլևս կասկած չեն թողնում, թե տեսության բնագավառում Զոպանյանը դեմ է կանգնում «արվեստն արվեստի համար» բանաձևին։

Ուսումնասիրությունը կառուցված է արվեստի ու գրականության նկատմամբ սեփական հայացքները Գոնկուրների հայացքներին հակադրելու ձևով։ Ըստ Զոպանյանի, գրականությունը գերազանց միջոց է ժողովուրդների կյանքն ու միտքը բարեփոխելու (համեմատեցնք 1891-ին հայտնած տրամագծորեն ճիշտ հակառակ կարծիքի հետ), մինչդեռ Գոնկուր եղբայրները կատարյալ արհամարհանքով են վերաբերվել ժողովրդին։

«Վա՜յ արվեստի այն արտադրության, որոնց գեղեցկությունը արվեստագետներու համար է միայն»,— ասում է Դ'Ալամբերը։ Գոնկուրները սա համարում են ամենաապուշ խոսքերից մեկը,— ավելացնում է Ա. Զոպանյանը։ Իսկ ի՞նքը։ Ո՞րի հայացքն է իր սրտին մոտ։ Բայց ահա և իր տեսակետը. «Դ'Ալամբերն է նորին, որ իրավունք ունի, որովհետև մարդկության մեծագույն գրագետներն անոնք եղած են, որոնց գործին մեջ ընկերության բոլոր դասակարգերը սնունդ կրցած են գտնել. Հոմերոս, Դանթի, Շեքսպիր, Սերվանտես, Մոլիեռ, Բալզակ, Տոլստոյ»։

---

[1] «Ծաղիկ», 1895, թիվ 15, էջ 529։

Այս համաստեղությունը թվարկելուց հետո Արշակ Չոպանյանը ավելացնում է նաև ժամանակակիցներից Զոլային, Մոպասանին, Դոդեին և կոչում նրանց գրագետներ, իսկ Գոնկուրները, ասում է նա, արվեստագետներ են։ Հենց եղրերի օգտագործման այս ոչ հպտակությունն է շատ անգամ առիթ տվել խոսելու Չոպանյանի զուտ էսթետիզմի մասին։ Միանգամայն ակնհայտ է, որ նա առանց կասկածի հակադրում է իր հայացքները Գոնկուրներին, բայց և այնպես, նրանց անվանում է արվեստագետ, իսկ թվարկած մնծերին՝ գրագետ։ Եթե փորձենք հասկանալ, թե ինչ իմաստ է նա դնում «արվեստագետ» եղրի մեջ, ապա ամեն ինչ իր տեղը կգտնի։

Չոպանյանը շարադրում է Գոնկուրների արվեստի էությունը. «...նկարագրողն ալ հիվանդ է, գործն ալ հիվանդ է, ոճն ալ հիվանդ է. արդ հիվանդ մը իր ախտին շատ մը թաքուն, ներքին, անծանոթ մանրամասնությունները դիտե և կրնա ըրուցել, բայց չկրնար ամբողջական պատկերի մը մեջ ցուցնել իր ախտը, ճիշտ ատոր համար է, որ Գոնկուրներու արվեստը, ինք ալ հիվանդ, պակասավոր է. և իրենց հոգեբանությունը՝ բաց տեղեր ունի, անկատար է և սակայն ավելի արյունոտ, բարախուն-հիվանդի խոստովանության մը պես»[1]։

Մեր ընդգծած այս բառերը, որ սկսվում են գրագետներին հակադրվող «սակայն ավելիով», բացահայտում են Չոպանյանի միտքը։ Գոնկուրների մեջ նա շեշտում է սուր զգացմունքի գունեղ պոռթկումը, անկախ այն բանից, որ այդ զգացմունքը հիվանդ է։ Այսպիսով, Գոնկուրներին «արվեստագետ» անվանելով, նա այդ եղրի մեջ դնում է նեղ, անհամեմատ նեղ իմաստ, դիտելով այն միակ դրականը և հակադրելով ամբողջին ամենակարող «գրագետը»։

Վերը շարադրվածը խոսում է այն մասին, որ տեսության բնագավառում Չոպանյանը այս շրջանում արդեն ամբողջովին հեռացել էր նատուրալիզմից և կանգնել ռեալիզմի պաշտպանության դիրքերում։ Նրա կյանքի և գործունեության այդ առաջին ժամանակահատվածը եղրափակող և, որոշ իմաստով, հետագա էտապը պայմանավորող կարևոր իրողություններ են «Հայրենիք» օրաթերթի 1895 թվականի տարեվերջյան համարներում տպագրված «Դյումա որդին» և «Օսկար Ուայլդ» հոդվածե-

[1] «Ծաղիկ», 1895, թիվ 3, էջ 83։

նները, որոնք նա գրել էր Փարիզ մեկնելուց անմիջապես առաջ։ Այդ հոդվածներում նա ճշտում է դիրքերը բուրժուական հասարակության նկատմամբ և շարադրում իր հայացքները նույն հասարակության մեջ գրականության դերի վերաբերյալ։

«Պուրժուաներին» նա «խոշոր Թարթյուֆ» է համարում, որոնք ինչնամի են բանաստեղծությանը, արվեստին, մտածմանը[1]։ Ահա հենց այդ տարտյուֆային հասարակության սոցիալական արմատների մերկացում է պահանջում Զոպանյանը գրականությունից իր «Դյումա որդին» հոդվածում։ Ո՞րն է, ըստ նրա, Դյումա որդու սխալը։ «Ըմբռնացող մը չէր, հաշտեցնող մըն էր»,— գրում է Զոպանյանը Դյումա որդու մասին և ավելացնում. «վտանգ չկար իրմե։ Նվ ընկերությունը զինք սիրած է»։ Հետապա մտքերը գալիս են ապացուցելու, որ Զոպանյանը դեմ է գրականության մեջ բուրժուական հասարակության հակասությունների հաշտեցմանը և պահանջում է «ըմբռնտանալ», «վտանգ» լինել նրա համար։ Ահա այդ շահեկան մտքերը.

«...Բայց իրերուն խորը նրթալու չափ հանդուգն չէ եղած։ Ընկերական կյանքին ամբողջությունը իր բոլոր փուռթյամբ չէ հասկցած... Ընդունած է ընկերական կազմածքը պղտիկ շըտկըտուքներով։ Չէ տեսած, որ այդ շտկրտուքները ավելի կը սքողեն փուռթյունը, և առով ավելի վնասակար են»։ Այսպիսով, Զոպանյանը Դյումա որդու թերությունն է նկատում այն հանգամանքը, որ նա ընդունել է գոյություն ունեցող սոցիալական սիստեմը իր ամբողջության մեջ և միայն պստիկ շտկումներ առաջարկել, դրանով ավելի ամրապնդելով այն։ Ահա թե ինչու այդ հասարակությունը «զինք սիրած է»։ Դյումա որդին տեսել է պոռնիկ կնոջ դժբախտությունը, ասում է Զոպանյանը, բայց միայն «ընկերության առջև անոր ունեցած բարոյական դիրքի անկումին, անոր ամուսնանալ չկարենալուն մեջ, և չէ երբեք առաջ գացած քննելու այն զզվելի իրերու վիճակը», որը պոռնկության «գոյությունը առաջ կը բերե»։ Դյուման չի տեսել, շարունակում է Զոպանյանը, որ այդ «վերջնապես աղտոտած կնիկներու... հանցավորը ընկերությունն է»։ Դյումա որդուն համեմատելով Իբսենի և Տոլստոյի հետ, քննադատը գրում է. «Անոնք ահավոր առաքյալներն են նոր, մեծ բարոյականի մը։ Դյումա հին բարոյականին ոսկեզօծիչը միայն եղավ»[2]։

[1] «Հայրենիք», 1895, թիվ 1359։

[2] Նույն տեղում, թիվ 1352։

«Մաղիկում» հրատարակվել են մի քանի հոդվածներ, որոնք թեպետ չեն պատկանում Ա. Ջոպանյանի գրչին, բայց ինչ-որ չափով բնորոշ են թե հանդեսի ուղղության և թե նրա խմբագրապետի հայացքների համար: Դրանցից հատկանշական են Միքայել Շամտանճյանի «Մելամաղձությունը նոր գրականության մեջ», «Գերհարդ Հաուպտման» և մասնավորապես, «Իրապաշտության հոգեբանությունը» գրությունները:

Շամտանճյանը մատերիալիստ է: Նա, ինչպես և կեդրոնական վարժարանի իր սերունդը, մատերիալիզմին հասել է Բյուխների նյութի և ուժի հավասարության տեսությունից և կանգ առել այդ սահմանագծում: «Ուղեղի բջիջներու գործունեությունեն հառաջ են եկեր մեր գաղափարները, իսկ ներքին աշխարհի գործունեությունեն (որ սերտ հարաբերություն ունի արյան շրջանի հետ) իդեալները հառաջացել են»[1],— կրկնում է նա Բյուխների գուհիկ մատերիալիստական մակաբերությունը: Բնական է, որ նա հասարակության զարգացման օրինաչափությունները պիտի ըմբռներ իդեալիստորեն. «Յուրաքանչյուր ժամանակի մեջ գտնված է հանճար մը ուրվականի մը չափ ուժեղ, սկսած է միջոցին մեջ իրավունքներ հանել և գոռալ, և անկարող դիմադրելու այդ ուրվականին՝ հասարակությունը, ինքզինք այդ ուրվականին ուղղության մեջ նետած է»[2]: Մարդկային հասարակության պատմությունը ուժեղ անհատի գործունեության արդյունք է,— այս է Շամտանճյանի թեզի իմաստը, որից արդեն նիցշեի «գերմարդու» հոտն է փչում:

Նվ թեպետ անառողջ ու խոտելի տեսական հիմքի վրա, Շամտանճյանը շարադրում է ճանաչողության մատերիալիստական ըմբռնումը և հանդում այն եզրակացության, որ ռեալիզմն է միակ իրական հնարավորությունն ընձեռում արտաքին աշխարհի գեղարվեստական ճանաչման համար: Արտաքին աշխարհի իրողությունների ազդեցությամբ առաջացած մարդկային առողջ ու բնական մտավորական գործողությունը Շամտանճյանը համարում է ռեալիզմը: Բայց կա նաև մտավորական գործողությունը, որի դրդիչները արտաքին աշխարհի օբյեկտիվ իրակա-

---

[1] «Մաղիկ», 1895, թիվ 11—13, էջ 390:

[2] Նույն տեղում:

նության հետ կապ չունեն։ Դա արդեն հիվանդ գործողություն է և դատապարտելի։ Այս կարգի մտավոր գործունեության հեղինակներին Շամտանճյանը համարում է հոռետեսներ և բնապաշտներ, որ արտաքին աշխարհի «մեկ մասը միայն տեսնելու ընդունակ են» և հակված են «ամեն իրողություն դեջ տեսնելու»։

Այսպիսով, Շամտանճյանը սահմանափակում է թե հոռետեսությունից և թե նատուրալիզմից։ Ըստ նրա «Իրապաշտությունն է գրականության ճանապարհը, իր իդեալն է իր շուրջը բնական դարձնել ու այդ բանին կարենալ հասնելու համար նախ պետք է մաքառի ամեն խոտորումներու դեմ, ամեն դասակարդերու ցավերն և ուրախությունները վերլուծե, և ճանչցունն ինչոր բնականին մեջ առողջն և ուժեղն է, բանաստեղծությունն ու ոգևորությունն է և համաձայնեցնել մարդուն, հասարակության գնացքը բնության գնացքին հետ»[1]։

Չխոսենք այն մասին, որ սույն հոդվածներում Շամտանճյանը հավասարության նշան է դնում բնության և հասարակության զարգացման օրենքների միջև, դա գալիս էր նրա աշխարհայացքի սահմանափակությունից։ Կարևորը այստեղ ռեալիստական սինթեզող արվեստի պահանջն էր և գրական իդեալի առաջադրումը։

Ռեալիստական արվեստի պաշտպանության դիրքերից Շամտանճյանը քննադատում է իմպրեսիոնիզմը որպես մելամաղձոտ, միգային տրամադրություն, որը, քաղաքակրթության բերած ախտավոր պալարների քննադատության փոխարեն, մերժում է ամբողջ քաղաքակրթությունը և ձգտում գլուխը թաքցնել բնության գրկում[2]։ Մինչդեռ ռեալիզմը, որը մերկացնում է հասարակական կյանքի ախտերը, մնում է պողպատի պես կարծր, թարմ և ուժեղ, նկատում է Շամտանճյանը։ Բայց, բավական է, որ ռեալիստը քայլ անի դեպի տպավորականություն (իմպրեսիոնիզմ), որպեսզի անմիջապես հանդես գա մելամաղձությունը։ Շամտանճյանն այդ դրույթը լուսաբանելու համար բերում է շատ հաջող օրինակ՝ Հաուպտմանի «Մենավորները», որով արդեն սկիզբ էր դրվում Հաուպտմանի ստեղծագործական նահանջին՝ ռեալիզմից դեպի սիմվոլիզմ։

Անհատապաշտական հատկանշական է Հաուպտմանի վերհանումը

---

[1] «Մագիկ», 1895, թիվ 11—13, էջ 393։

[2] Նույն տեղում, թիվ 2, էջ 49—50։

«Ծաղիկ» հանդեսի էջերում, նկատի ունենալով մանավանդ, որ խոսքը կարող էր վերաբերել միայն Հաուպտմանի առաջին շրջանի (մինչև 1895 թվականը) ստեղծագործությանը, որի համար բնորոշ էր հարցադրումների սոցիալական սրությունն ու արդիականությունը, ժողովրդական ղանգվածների, այդ թվում բանվորության ընդվզման պատկերումը, բուրժուազիայի բարոյալքման մերկացումը։ Պետք է նկատի առնել՝նաև, որ «Ծաղիկի» ու հոդվածագրի համար դժվար էր ճիշտ և ամբողջական գնահատական տալ դեռևս նոր բարձրացող գրողի ստեղծագործությանը։ Այնուամենայնիվ, գնահատելի է, որ Շամտանճյանը առանց վարանման գրում է Հաուպտմանի «Ջուլհակների» մասին. «1892-ին Հաուպտման հրապարակ կը հաներ իր գործերեն ամենեն տոկունը, թերևս մին իր ապագա գլուխգործոցներեն՝ «Ոստայնագործները», ամենեն նշանավորը գերմանական իրապաշտ գրականության»[1]։

Պետք է նշել, սակայն, որ Շամտանճյանը Հաուպտմանի, ինչպես և նրա կապակցությամբ Իբսենի ստեղծագործությունը վերլուծելիս շատ հաճախ չի կարողանում թափանցել երևույթների խորքը և վեր հանել դրանք ծնող իրական պատճառները։ Նրա համար, օրինակ, Իբսենի «Ուրվականները» և Հաուպտմանի «Արևի ծագելուց առաջ» գործերը ոչ թե բուրժուական հասարակության սոցիալական չարիքն են մերկացնում, այլ սոսկ բողոք են մոլությունների դեմ։ Հաուպտմանի այդ դրաման, օրինակ, անվանում է «ալքոլականության ավերումներու հիշատակարան»։

6

«Ծաղիկ» հանդեսի էջերում Ա. Չոպանյանը տպագրել է իր մի քանի պատմվածքները և ակնարկները, որոնք հետաքրքրական են ոչ միայն գրողի ստեղծագործական աճի պրոցեսը ճանաչելու, այլև այն իմաստով, որ նրանցից մի քանիսը պահպանում են գեղեցկագիտական արժեք նաև այսօր։

«Տղու հոգիներ» շարքը Չոպանյանը ձեռնարկել է արդեն 1895 թվականին և մի փոքրիկ ու գողտրիկ պատմվածք՝ «Ես ի՞նչ ընեմ հոգիով» տիտղոսի տակ, հրատարակել «Ծաղիկում»։ Կյանքի և մահվան մշտնջենական պրոբլեմն է պատմվածքի նյութը՝

[1] «Ծաղիկ», 1895, թիվ 6, էջ 216։

բնկված երևույթի հոգեբանության մեջ: Նույն պրոբլեմը փիլիսոփայական խոհերի ձևով Զոպանյանը արծարծում է «Թոթովումներ» խորագրով դրական էսյուդում:

«Ես ի՞նչ ընեմ հոգիով»-ի մանուկ Տրդատը, առաջին անգամ կյանքում տեսնելով հուղարկավորության թափորը, իմանում է, որ մարդը մահկանացու է, և այդ հայտնությունը նրան անսփոփելի վիշտ է պատճառում: Վիշտը ավելի ևս խորանում է, երբ մայրը նրան մխիթարելու համար հայտնում է, թե հանդերձյալ աշխարհում նրա հոգին հավիտյան պիտի ապրի: Ինչպե՞ս: Առանց պլխի՞, թևերի՞, ոտքերի՞:

«— Ի՞նչ... ըսել է ալ պիտի մայրիկ չտեսնե՞մ, ալ հայրիկիս ձեռքը պիտի չբռնե՞մ, ալ պիտի չքալե՞մ, ալ կերակուր պիտի չուտե՞մ... է՜, ինչ ընեմ: Հոգիով ի՞նչ ընեմ ես»:

«Թոթովումների» մտածողն էլ արդեն անվարան մերժում է հանդերձյալ աշխարհն ու արարիչը: Նա միահյուսված է բնության հետ, ինքը բնության մի հյուղեն է, և բնությունը իր մեջ է: Նրան ապրեցնող զորությունը նույնն է, ինչ տիեզերքն է ապրեցնում: Եվ այդ զորությունը բխում է տիեզերքից, բխում է մարդուց իսկ: «Եվ դուն կը հավատաս,— ասում է մտածողը իր անլրևույթ զրուցակցին,— թե միսին կյանքեն վեր հոգիի կյանք մը կա, ու թե մեր խղդուկ մթնոլորտեն բարձր կա այդ Անդին, ուր մահը կը մեռնի ու բուն կյանքը կը ծագի»: Ո՛չ, ինքը չի հավատում: Զգում է, այո՛, ճանաչել տիեզերքը, նոր արևներն ու լուսատունները, բայց գիտի, որ վերջը՝ մահը անխուսափելի է: Դա ահավոր է, տրտմությամբ է լցնում, բայց նյութի գոյության օրենքն է: Թե «Ես ինչ ընեմ հոգիով»-ում, թե «Թոթովումներ»-ում տրտմություն է տիրում, բայց կյանքը հաստատող, կյանքի կարոտով ու լույսով, միստիկականությունը մերժող տրտմություն:

Նման մոտիվ է ընկած «Լացող աղջիկը» պատմվածքի հիմքում: Այստեղ էլ հերոինակը անծանոթ գեղեցկուհու սև քողի տակից երևացող արցունքներում բնկված է տեսնում կյանքի տենչը, դեղեցիկ, գույն անիրագործելի երազների փշրումից առաջացած վիշտը: Պատմվածքը, ըստ էության, մի քանի տող է, բայց որքան հուզաթաթավ կյանք կա ու թաքնված արև այդ արցունքների, մթնած երկնքի և ծփացող ջրերի պատկերի մեջ:

Այս պատմվածքներին հատուկ կենսահաստատ համանվագից դուրս է մնում «Ապաստանը» նորավեպը, որի լուծումն ավելի շուտ բարոյախոսական է, քան ոևալիստական ընդհանրացման

հետանք: Տանինը տարեկան էլիզան, ընտանիքի հոգսով ծանրաբեռնված, ընդունում է զվիվի և հիվանդ ծերունու առաջարկությունը: Սոցիալական դրությունը և «տգետ ու միամիտ աղջկան նախապաշարումները» ստիպում են նրան այդ քայլին գիմել: Հետո հայտնվում է մի վաուդուն երիտասարդ: Նրանք սիրում են միմյանց: Էլիզան, սակայն, հրաժարվում է իր սիրուց, նախընտրելով իր «տաքուկ ու ապահով բույնը», իր երեխայի հետ միասին: Այլևս արդեն նախապաշարումներին արված ակնարկը չի փրկում նորավեպը: Այո՛, էլիզան Իբսենի Նորան չէ, նա ոչ միայն չի կարող, այլև չի ուզում, չի էլ մտածում պայքարել իր երջանկության համար: Առավելագույնը, որին նա ընդունակ է, սրտի մեջ իր անբարոյական ամուսնու նկատմամբ ատելություն սերմանելն է:

«Ծաղիկ» հանդեսում Զոպանյանի տպագրած գեղարվեստական գործերից առավել արժեքավորը նրա «Քանի մը օր Պարտիզակի մեջ»[1] ակնարկն է, որի կողքով անտարբեր չի կարող անցնել հայ գեղարվեստական ակնարկի պատմությունն ուսումնասիրողը: «Ծաղիկում», հետագայում նաև «Անահիտում», Զոպանյանը հրատարակել է նաև ուրիշ ակնարկներ, որոնք, արձագանքելով ժամանակի առաջ քաշած այս կամ այն անմիջական հարցին, դատապարտվել են այդպես էլ մնալու մոռացության գրկում: «Քանի մը օր Պարտիզակի մեջ»-ը, սակայն, գեղարվեստական կատարյալ երևույթ է, որը ունի ոչ միայն ճանաչողական, այլև էսթետիկական արժեք: Այս ակնարկում երիտասարդ հեղինակին հաջողվել է ընդհանրացնել ժամանակաշրջանը բնորոշող հատկանիշները և հասնել անհատականությունների գեղարվեստական շեշտավորման:

Ակնարկը արտացոլում է այն ժամանակաշրջանը, երբ բուրժուական հարաբերությունները սկսում են մուտք գործել Թուրքահայ գյուղը՝ տակնուվրա անելով նրա ավանդական կարգն ու սարքը: Հնավանդ սովորույթները, որ օրենքի ուժ էին ստացել դեռ դարեր առաջ, մեկը մյուսի հետևից դեն են նետվում: Առաջադիմական պրոցեսը ընթանում է հնի հզոր դիմադրության պայմաններում: Այդ դիմադրությունն էլ ավելի է զորանում, երբ բուրժուական քաղաքը (Պոլիսը) նոր հարաբերությունների հետ ներմուծում է նաև նրա սոցիալական ախտերը, հոռի բարքերը:

---

[1] «Ծաղիկ», 1895, հավելվածական թիվ, 9 սեպտեմբերին:

Ներմուծված բացասականը օբյեկտիվ դաշնակից է դառնում նահապետական-պահպանողական տարրերին՝ առաջադիմական պրոցեսի դեմ նրանց մղած պայքարում:

Հեղինակը հանդես է գալիս նորի, հեղափոխականի պաշտպանի ու ջատագովի դերում, ընդդեմ պահպանողականության, և իր «ես»-ի գործոն միջամտությամբ ավելի գեղարվեստական հնչեղություն, անձնականության դրոշմ հաղորդում ակնարկին:

Այս գործում գերազանց է լուծված տվյալ գեղարվեստական ժանրի հիմնական ստեղծագործական պրոբլեմը՝ «ես»-ի և շրջապատի փոխհարաբերության խնդիրը: Այդ «ես»-ը միշտ ներկա է, գործում է, միջամտում, դատողություններ անում, հրապարակախոսական ընդհանրացումներ կատարում, խնդիրներ դնում, և միշտ նրկի գեղարվեստական պահանջի բերումով ու չափի ղեկավարմամբ: Իսպառ բացակայում է «Ես»-ի ինքնացուցադրումը, որով տառապում են մեր շատ հին ու նոր ակնարկներ, բացառվել է «Ես»-ի անիմաստ ու անտեղի օգտագործումը:

Հենց առաջին տողերից զգացվում է հեղինակի լայն հրապարակախոսական շունչը: Նա Պարտիզակ գյուղ է գնում հանգըստանալու և ոչ թե «թաղականի խնդիրներ քրքրելու», որովհետև նման բանի համար հետու գնալու կարիք չկա. «Պետք կա՞ տատր համար մինչև Պարտիզակ քաշկռտվելու»: Ուզում է գնալ ինկոգնիտո, բայց հենց նավի վրա նրան շրջապատում է պարտիզակցիների բազմությունը և ստիպում, որ խոստանա ճառ խոսել պարգևաբաշխության հանդեսին:

Ահա և մոտ է Պարտիզակը: Ծովից երևացող պատկերը այնքան գեղեցիկ է գծված, որ անհնարին է դիմադրել գայթակղությանը և գոնե հատվածաբար չբերել այստեղ.

«Նուրբ ու սուր ժանեկացումով մը բլուրներու սարերը կը կարտուին երկնքին վրա, և արևուն մեծ լույսին մեջ անոնց կողերը, իրենց ամպի երերուն ստվերներով, մացառի ու ծառի մութ արատներովը և ցցվածքի ու փոսացման լույս ու շուքերով մշտափոփոխ կնրպասի հարուստ փողփողումներ կառնեն: Նեղերը կ'երկարին ժայռերու, մացառուտի, ծառաստանի կամ տափաստանի քմահաճ պատկերաշարքը, երբեմն-երբեմն կտրված դյուղերով, որոնց տունները ծառերով կ'եղբայրանան ու ծովին մեջ կը կրկնվին՝ ավանդական դաշտանկարին համեմատ...

...Իրիկուն է արդեն, եռևնիս ծովը բռնված է արևևն, որ ջուրերուն վրա, հրեղեն գոլորշիներու ծոցը կախված է, ու լույսին

ոսկի պերճության մեջ, որ ծովուն վրա կայրի ու երկինքն ի վեր կը հևա, հորիզոնին գիծը կը շոգիանա ու դեղին պարապի մը մեջ կը կորավի»։

Երգեհոնի ստեղների համար կարծես ստեղծված այս պատկերը, սակայն, մեջբերեցինք ոչ ինքնանպատակ. ստորև առիթ կունենանք Զոպանյանի գրիչով հակադրելու կյանքի սևն ու բնության այդ լազվարթը, որը կարծես ստեղծված է միայն այն բանի համար, որ կյանքն իր սևը չունենա։

Մեկը մյուսին հետևում են գյուղական կենցաղի, ավանդական նիստ ու կացի նկարագրության փաստագրական, այլև գեղեցիկ կտորներ։ Բայց այդ հովվերգության ռոմանտիկայի իդեալականացումը չէ հեղինակի միտքը։ Նա կայցելի եկեղեցի, դպրոց (պարգևաբաշխության հանդեսին, որը տեղի է ունենում եկեղեցու շենքում), լսարան, կլինի ժողովրդական տոնախմբության, կմտնի մետաքսի գործարան, կշրջի գյուղում և այգիներում, զրույցներ կունենա գյուղացիների հետ, ամենուրեք ու բոլոր առիթներով կպաշտպանի նորը, հեղափոխականը, իսկ ավանդականի մեջ այն, որը դաշնակից է այդ նորին, սատարում է նրա հաղթանակին։

Յուրատեսակ գլուխգործոց է պարգևաբաշխության հանդեսի նկարագրությունը։ Շրջանավարտները յոթն են, նրանցից յուրաքանչյուրը իր ճառն է արտասանում, իսկ հեղինակը վրձնի մեկ-երկու հպանցիկ, այլև դիպուկ հարվածով ուրվանկարում է յուրաքանչյուրի անհատականությունը, ղուգահեռաբար, ընդհանրացված ու խոր գծում կրթական գործի դառը վիճակը։

«Առաջին շրջանավարտը կուգա թևերը կը բանա, աչքերը դեպի երկինք կը բարձրացնն և ներշնչվածի ձևով մը կը կենա. կը կարծեմ, որ աղոթք պիտի ընե. չէ՛, փիլիսոփայական ճառ մըն է, որուն մեջ կը բացատրե, թե երկինքը գեղեցիկ է, Աստված մեծ է և մարդը ոչինչ է, այս ամենը՝ խորդացող ոճով մը, ածականներով հերարձակ, խուլ ձայնով մը, ու մինչև ձեղունը բարձրացող ձևերով, զոր իրեն սորվեցուցած են»։ Եվ ահա, հենց այստեղ հեղինակի «Ես»-ի հրաշալի միջամտությունը. «Ով հռետորություն, քեզ Պարտիզա՞կ ալ պիտի գտնեի»։ Երկրորդ շրջանավարտը ֆրանսերեն է խոսում,— «զոր արտասանել անգամ չգիտեր դեռ»,— ազատ փոխանակության տնտեսական խնդրի մասին։ Լսարանը, հարկավ, ոչինչ չի հասկանում։ Կանայք, մասնավորապես, սկսում են բզզալ, իսկ տեր Կարապետը սաստում

է նրանց, «Նզովից ծնունդներ, կը պոռա, աւա եղեք»: Սկեղեցու ներսում խիստ շոգ է: Հեղինակի «Ես»-ը դեռ զավեշտական է պատմաղրված. «Ամենքս ալ ուսման սիրուն քրտինք կը թափենք»: Բայց ահա, զավեշտականը մի կողմ է դրված. «Այդ անիմաստ, սխալ ու վնասակար խաղը, որ դիմացս կը խաղան, կը զայրացնի զիս»: Ու հետո, երբ հերթը իրեն է հասնում, հեղինակը դառնապարտում է հոգաբարձուներին, վարդապետին ու մնացած մեծամեծներին, որոնց քիչ առաջ խունկ էին ծխում ուրիշները, անիմաստ է գտնում, որ գյուղի տղաներին զարգացած գյուղացիներ դարձնելու փոխարեն, նրանցից վիժված քաղաքացիներ են պատրաստում: Գոհ է հեղինակը իր խոսքից, մանավանդ, երբ իմանում է, թե «այդ զաղափարները ունեցող երիտասարդներու խումբ մը կա եղեր գյուղին մեջ, որոնք սակայն դեռ չեն կրցեր իրենց ձեռքն ունենալ դպրոցի վարումը,— ամբողջ հետևանք ձեռքերու մեջ մնացած»:

Այդ խումբը հոգեհարազատ է դառել իրեն հեղինակի հետ, հրավիրում է նրան բանախոսության: «Տեսնելով ուշիմ ու խանդավառ ժողովուրդ մը դիմացս, ժողովուրդ մը, որ նոր սերունդին հետ հինն ալ կար՝ նույն եռանդով ու սիրով հոտ հավաքված, ամեն ինչ որ կրնար մեջս մնացած ըլլալ հիմար ու վնասակար սկեպտուքենեն՝ թոթվեցավ, ու հոտ հանկարծ տեսա, որ ամբոխին վրա խոսքին միջոցով զաղափարին ցայտումը ամենեն մեծ բանը, ամենեն ազվոր բանը պետք էր ըլլար, պայմանով, որ ճառը չըլլար այն, այլ ընտանի, եղբայրական խոսակցությունը մարդի մը և ժողովուրդին»:

Խիստ շահեկան է Ա. Զոպանյանի բանախոսության նյութը՝ կրթությունը գյուղում: Այս հարցը, նկատում է հեղինակը, որչափ կրթական է, «այնչափ ու թերևս ավելի ընկերական խնդիր մըն է»: Այսպիսով, երիտասարդ Զոպանյանը կրթության հարցը դնում է սոցիալական հողի վրա: Ըստ նրա գյուղացին պետք է իր կյանքի ուսումը առանար. «ծանոթություններ արհեստներու վրա, այն արհեստներուն մանավանդ, որոնք գյուղին հատուկ են. ծանոթություններ կյանքի ու բնության գլխավոր երևույթներու վրա... ու գյուղի դպրոցը այդպես ըմբռնված... պիտի ըլլար փրկարար միջոցը գյուղը ինֆիռմով զարգացնելու»:

Լուսավորական այս ծրագիրը, ըստ Ա. Զոպանյանի, կոչված էր վերափոխելու, նոր ժամանակների ոգուն համապատասխանեցնելու գյուղը, միևնույն ժամանակ փրկելու գյուղը բուրժու-

ական հոսի բարքերից, այն «ինքիրմով զարգացնելու» միջոց դառնալու: Այս կետում երիտասարդ հեղինակը, օբյեկտիվորեն, տուրք է տալիս այն բանին, որի դեմ պայքարում է իր ամբողջ էությամբ՝ պահպանողականությանը: Նա դեռ չի տեսնում, որ գյուղը առհասարակ չի կարող «ինքիրմով» զարգանալ նոր հարաբերությունների թափանցման պայմաններում: Ոչ միայն չի կարող, այլև պատմական առաջադիմությունը պահանջում է, որպեսզի նա դադարի «ինքիրմով» զարգանալուց և ավելի սերտ տոցիալ-տնտեսական կապեր հաստատի քաղաքի հետ:

Հետաքրքրականը, սակայն, այն է, որ տեսական թյուրըմբռնումը բնավ չի խոչընդոտում գործնականում հանդես գալու պահպանողականության համոզված քննադատի դերում: Հենց նույն բանախոսությունից հետո հանդիպում է վարդապետին, որը պարզևաբաշխության ձախավեր ճառերը արդարացնելու միտումով նկատում է, թե «իրենք տղոցը գործնական կրթություն կուտան եղեր, բայց գյուղը բանաստեղծական տնօրք ունենալուն տղաքը այդ ոճով կը գրեն եղեր... Միայն թե՝ տղաքը գրաբարախառն աշխարհաբարով մը կը գրեին. և ես չտեսա, որ Պարտիզակի լեռները պրաբար գիտնային...»,— ավելացնում է հեղինակը:

Գույներ չի խնայում Զոպանյանը քննադատելու համար հետադիմության պարագլուխներին: Նրանցից մեկն է Առաջնորդը: «Մարդ մը, որ հինգլուխներու, հարուստներու շրջանակին մեջ ամրափակված, անոնց վրա կրթնած և զանոնք իրեն գործիք ըրած, իր կամքը գործադրել կուտա իբր ճշմարտություն ու արդարություն: Նվ մարդ մը որ չի քաշվիր բացեի ի բաց հայտարարելու ուսման համար իր ունեցած արհամարհանքը...»

Գյուղի երիտասարդության բողոքներին ուղղություն է տվել Ա. Զոպանյանը, որպեսզի ավելի համախմբվեն, ճանաչեն իրենց ուժը, ճանաչեցնեն ժողովրդին իրենց իրավունքները և «գոնե դպրոցն իրենց ձեռքն առնեն»:

Մի դողտրիկ նորավեպ է մեկուկես էջի մեջ սեղմած մետաքսի գործարան այցելելու պատմությունը: Գործարանատիրոջ հետ զրույցի պահին տխուր երեցողություն է լսվում: Ա. Զոպանյանին բացատրում են, թե նախկինում բանվորուհիները «սիրո երգեր կերգեն եղեր աշխատած ատեններին, մինչդեռ հիմա եկեղեցիի երգեր միայն կ'երգեն, և ասիկա բարոյականի տեսակետով մեծ հառաջադիմություն մը կը նկատեն ինքը»: Այդ մահու երգին չի

ախորժում հեղինակը և խորհում է, թե ավելի հարմար և ավելի անուշ կլինեին սիրո երգերը այդ մետաքսի թելերի վրա, մետաքսի մաղերի տակ և մետաքսի ձայնների համար։

Գործարանում «խաշած լուբիայի անուանելի հոտ մը կ'ելլէ խողակով լիցուն ջուրենն։ Ջանձրալի գոլորշիին վրա ծռած, աղջիկները կ'աշխատին միշտ ու մետաքսին հետ, որ իրենց մատներեն կը խուսափի կ'երկննա կը շողա, իրենց բերնեն միշտ կը ծավալի, լուսավոր սրահին մեջ ավելի տրտում, վարդ բերաններուն մեջ՝ ավելի չարագույժ, անհուն լացող երգը, մահու երգը «Հույս իմ ես դու, Տեր...»

Արվեստագետի սրտաուռչ զայրույթն է հետևում այն բանին, երբ հեղինակն իմանում է, որ բանվորուհիներն աշխատում են արևածագից մինչև մութը։ «Տասնվեց ժամ,— ընդգծում է Ս. Զոպանյանը,— այդ խաշած լուբիայի մթնոլորտին մեջ՝ մատներու ապուշ ու մեքենական շարժումին դատապարտված, այդ թարմ աղջիկները։ Նվ օրական հարյուր փարայով։ Խնդճերը... Հիմա կըմբռնիմ որ Մահու երգը երգեն՝ մետաքսին վերև,— չարագործ մետաքսին, որուն բարակ փայլունին մեջ իրենց կյանքը կը ժժդունի»։

Նվ վերջապես, նորավեպին հատուկ վերջաբանը ու դեղարվեստական ակնարկի համար տապանդը այնքան շեշտող վերջին ընդհանրացնող և ուժգին խոսքը հեղինակի «ես»-ի. «Նվ կը խորհիմ երջանիկ ու անհոգ կուրծքերուն, որոնց վրա պիտի փռվի այդ մետաքսը, անոնք պիտի չդիտնան, թե ատ թելերուն մեջ մանկամարդ աղջիկներու չարշարանք կա ու մահու երգեր...»

Ահա և հակապատկերը. երկրամասի սքանչելի բնություն, որ կարծես ստեղծվել է միայն անհոգ ու երջանիկ կյանքի համար, և... մահվան երգեր։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հասարակական գործունեության ակիզբը Փարիզում

Վրա են հասնում 1895 թվականի ջարդերը։

Սուլթանական Թուրքիան սկսում է գործադրել «հայկական հարցի» լուծման մարդակեր ծրագիրը։ Արշակ Զոպանյանի համար այդ դեպքերը ունենում են վճռական նշանակություն նրա

հետագա ամբողջ գործունեության իմաստով։ «95-ի Պոլսո ջարդին է, որ կը սկսի իմ մուտքս ազգային գործունեության մեջ։ Մինչև ջարդը մտավորական կյանք մի անցուցած էի ազգային գործերուն հետևելն միայն հետաքրքրվելով։ Ջարդերը ինձ ցնցեցին, իմ մեկուսացած գաղափարականի հանդարտությունը ամոթալից ու հանցապարտ ցույց տվին ինձի. կյանքիս ամենեն խորին կերպարանափոխություններեն մեկը կրեցի...»[1]։

Բնկումը արմատական էր և առմիշտ։ Այլևս կարծես մի նոր, իմաստավորված կյանք ապրեց Արշակ Չոպանյանը. իր տաղանդի բոլոր լարերը կոչված էին սպասարկելու միակ նպատակին ու գաղափարին՝ ժողովրդի ազգային աղատագրությանը։

Եվրոպական մամուլի շատ օրգաններ այդ ժամանակ հակահայկական տրամադրություններ էին սերմանում, չուսաբանվածության պատճառով, երբեմն էլ թուրքական պաշտոնական շրջանակներին հաճոյանալու համար։ Եվ ահա Արշակ Չոպանյանը նպատակ է դնում լուսաբանել օտար հանրային կարծիքը նույն եվրոպական մամուլի միջոցով։ Դեռևս Պոլսում գտնված ժամանակ նա նամակներ է գրում տիկին Սևռինին, Հանրի Պոեբին, Ռոշֆորին և Դրյումոնին։ Պոեբն ու Ռոշֆորը հրապարակում են նրա նամակը, առանց ստորագրությունը դնելու։ Սևռինն ու Դրյումոնը, նրա նամակի մեջ բերված փաստերից ու պատկերից ցնցված, լրագրական հարձակում են գործում սուլթանի կառավարության դեմ։

Պոլսում Արշակ Չոպանյանը մտերմանում է Քիչեաոի հետ, որին կեդրոնականի խնամակալությունը հրավիրում է, Արշակ Չոպանյանի միջնորդությամբ, ստանձնելու փիլիսոփայության, իսկ Չոպանյանի Փարիզ մեկնելուց հետո՝ նաև ֆրանսիական դրականության պատմության դասերը։ Քիչեաոը «Մերքյուր դը Ֆրանսում» հրատարակել էր Ա. Չոպանյանի մի քանի բանաստեղծություններ և «Երկնքի ճամփան» հեքիաթի թարգմանությունները։

Նույն Քիչեաոի միջոցով Արշակ Չոպանյանը «Ռըվյու Բլանշում» հրատարակում է Լաստիվերտցու մի հատվածի թարգմանությունը, որը նկարագրում է հին հայկական ջարդերը, իսկ Քիչեաոը իր հերթին «Ռըվյու դը Պարի»-ում կեղծանունով ընդարձակ հոդված է տպագրում Սասունի ջարդերի մասին։

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1901, թ. 2, էջ 40։

Ֆրանսիական մամուլի մի քանի օրգանների կրակոտ ելույթները սուլթանական կառավարության քաղաքականության դեմ որոշ իմաստով անսպասելի էին Պոլսի հասարակական առաջադիմական գործիչների համար։ «Հայրենիքի» շրջանակում, օրինակ, չեն կարողանում կռահել, թե ով է այդ դիմադարձությունը հրահրողը։ Իսկ նրբ տեղեկանում են, քաջալերում են Զոպանյանին և ճիշտ գտնում նրա որոշումը Փարիզ փոխադրվելու վերաբերյալ։

Այդևս անհնարին էր խոսել Պոլսում ազատ մտքի դոյության մասին։ Կառավարությունը հարձակման էր անցել ամբողջ ճակատով։ Արդեն շուտով ցրվում է 80-ականների համարյա ամբողջ շրջանակը, նրանց գաղափարներով դաստիարակված նոր սերնդի շատ ներկայացուցիչներ նույնպես անցնում են արտասահման։

«Միրքյուր դը Ֆրանս» հասցեով Քիլիաոի հանձնարարական նամակը գրպանում, մի բարեկամից մի քանի հարյուր ֆրանկ փոխ առնելով, Արշակ Զոպանյանը դադարեցնում է «Ծաղիկի» հրատարակությունը և իրեն նետում է շոգենավ։ Դա 1895 թվականի աշնանն էր։

Փարիզում Արշակ Զոպանյանը հաստատվում է Լատինական Քվարտաի Մոնժ փողոցի մի փոքրիկ պանդոկում։

Սկսվում է բուռն հրապարակախոսական գործունեության մի շրջան, որի ընթացքում Զոպանյանը գրում է տասնյակ հոդվածներ «Ռըվյու Բլանշ», «Ռըվյու դը Ռըվյու», «Միրքյուր դը Ֆրանս», «Ռըվյու Ենսիքլոպեդիք», «Փուրկուր Սրուխեեն», և այլ պարբերականներում, ունենում է բազմաթիվ հրապարակային ասպարեզություններ, հրատարակում մասչելի գրքույկներ՝ Ֆրանսիայում և Ֆրանսատառ մամուլի միջոցով Եվրոպայում տարածելով ու պրոպագանդելով հայ ժողովրդի պատմությունը, հատկապես նրա մշակույթը։ Նրա անձնական դիմադրիկային ջանքերին ևնք նաև պարտական, որ մի քանի տարիների ընթացքում Եվրոպայի առաջավոր մտավորականության կարծիքում կատարվում է բեկում՝ հայ ժողովրդի տառապանքների դիմաց արհամարհանքին փոխակերպող խղճահարությունից դեպի հարգանք ու հիացում նրա քաջարի ոգու և բարձր մշակույթի նկատմամբ։

Փարիզ ժամանելու առաջին օրերից Ա. Զոպանյանը նախաձեռնում է ֆրանսերեն լեզվով «Հայկական ջարդեր» գրքի հրատարակությանը, թարգմանում է իր հետ բերած մի շարք վավե-

րագրեր, թղթակցությամբ խնդրում է բարեկամներին՝ ուղարկել նոր, խարմ նյութեր: 1896 թվականի ամռանը լույս է տեսնում այդ գիրքը՝ «Հայաստանի ջարդերը»[1] խորագրով, հայտնի հասարակական, իսկ հետագայում նաև պետական գործիչ Ժորժ Կլեմանսոյի առաջաբանով: Վավերագրերի այդ ժողովածուն գտնում է լավ ընդունելություն: Մեկ տարի անց, 1897 թվականի մարտի 9-ին, բացելով հայ մշակույթին նվիրված երեկոն, Անատոլ Ֆրանսը անդրադառնում է այդ ժողովածուին հետևյալ խոսքերով. «Պ-ն Զոպանյան 1896 հունիսին Փարիզ հրատարակեց հավաքածո մը Հայաստաննն գրված նամակներու, պարզ և ահավոր նկարագրություններ, որոնք պ-ն Ժորժ Քլեմանսոյի մեկ վեհանձն հոդվածով հատաջաբանված, զարհուրանքով ու զայրույթով ցնցեցին հասարակությունը ղոր իր կառավարությունը և լրագիրներուն մեծագույն մասը դևպքերուն գրեթե անտեղյակ պահած էին»[2]: Այդ հրատարակությունը դարավերջի Ֆրանսիայում, «Էվենման» թերթի հոդվածագիր Ալբեր դը Ռուանի բնորոշմամբ, ընդունվեց որպես ամենից ցնցող գիրքը Բիչեր Սթոուի «Քևոի Թոմասի տնակը» վեպից հետո:

1897 թվականին, Զեյթունի ապստամբության հետքերով, Ա. Զոպանյանը թարգմանում և տպագրում է Աղասու «Հայր Սալվատորի սպանությունը»[3], Պիեռ Քիյեառի առաջաբանով, և նույն հեղինակի «Զեյթունի պատմություն» աշխատությունը Վիկտոր Բերարի առաջաբանով[4]:

Նույն 1897 թվականին Արշակ Զոպանյանի գործուն մասնակցությամբ կազմվում է ֆրանկո-հայկական կոմիտե, որի մեջ մտնում են Էռնսթ Լավիսը, Ալպեր Վանդալը, հայր Շառմթանը, պրոֆեսոր Մարինն, Պիեռ Քիյեառը, Դրնի Քոշենը և ուրիշներ:

Այս կոմիտեի նախաձեռնությամբ 1897 թվականին Մադրլենի եկեղեցում կազմակերպվում է պատարագ, նվիրված հայ նահատակներին, և բազմության մեջ ցրվում է հայկական հարցի վերաբերյալ մի բրոշյուր, որը խմբագրել էր Ա. Զոպանյանը:

---

[1] Les Massacres d'Arménie, préface de G. Clémenceau, Paris, 1896.

[2] *«Նոր կեանք», 1898, թիվ 11, էջ 166:*

[3] L'Assassinat de Père Salvator, Paris, 1897: *Սալվատորը իտալացի կրոնավոր է եղել, որ սպանվել է Թուրք զինվորների կողմից Զեյթունի ապստամբության օրերին:*

[4] Zeitoun, depuis les origines jusqu'à l'insurrection de 1895, par Aghassi, préface de Victor Bérard, Paris, 1897.

Նույն այդ ֆրանկո-հայկական կոմիտեն աշխույժ գործունեություն է ծավալում 1898 թվականին Հոլանդիայի Լա Հեն քաղաքում հրավիրված խաղաղության կոնգրեսում։ Լավիսը ընկերության անունից հայկական հարցին վերաբերող հուշագիր է ներկայացնում Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելքասեին, «Էքլեռ» և «Օռոռ» թերթերում հրատարակվում են տիկին Սևռինի հոդվածները Բրքահայաստանի հայ աղգաբնակչության վիճակի վերաբերյալ։ Ֆրանսիական մամուլի մի քանի օրգաններ հրապարակում են այն հուշագիրը, որը կոմիտեն ուղարկում է Լա Հեի ժողովին։

Արշակ Չոպանյանի հետագա գործունեության հաջողության և ունեցած արձագանքի տեսակետից խիստ կարևոր դեր խաղաց Փարիզում նրա առաջին հրապարակային բանախոսությունը 1897 թվականի մարտի 9-ին, «Աշխարհագրական ընկերության» սրահում։ Նախագահում էր և բացման խոսք ասաց Անատոլ Ֆրանսը. դա առհասարակ մեծ գրողի անդրանիկ հրապարակային քաղաքական արարքն էր, որից հետո և ընդմիշտ մնաց մեր ժողովրդի ջերմ բարեկամը։

Անատոլ Ֆրանսը ներկայացնում է Արշակ Չոպանյանին, հայտնում, որ աղատությունը սիրելը, իր ժողովրդի հարազատ զավակը լինելը, նրա մտածումներն ու ձգտումները կրքոտությամբ մարմնավորելը եղել են այն «ոճիրները», որոնց համար Արշակ Չոպանյանը տարագրված է Ֆրանսիա[1]։ «Պ. Չոպանյանը մեղ ծանոթացնելու է այն երկրի գրականությանը,— շարունակում է Ա. Ֆրանսը,— որի մասին մենք այնքան քիչ բան գիտենք և որին մենք հանաչում ենք միայն իր դժբախտություններով։ Նա մեղ բացահայտելու է դարերից եկող հայկական մտածողությունը և մեղ լսելի է դարձնելու մերթ էպիկական ու մերթ ողբագին ձայնը մի այնպիսի ժողովրդի, որը դարեր ամբողջ իր հայրենիքից այրիացած՝ գոյատևում է, համբերում, ապրում առանց հուսահատվելու։ Մեղ հայտնի է դառնալու, որ հայերը իրոք մի ժողովուրդ են իրենց լեզվի և կրոնական հավատալիքների ընդհանրությամբ, նույն հիշատակների և նույն հույսերի հաղորդակցությամբ, զգացմունքների եղբայրակցությամբ, նույն կյանքով ապրելու, նույն հոգով մտածելու իրենց ուժեղ ու կա-

[1] L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient, par A. Tchobanian, Paris, 1897, p. 5—6.

յուն կամքով։ Եվ մենք պիտի հաստատենք ու խոստովանենք, որ այս խելացի ու հերոսական ժողովուրդը, որն ընդունակ է հաղորդակից լինելու արևմտյան աշխարհի բարձրագույն դաղափարներին, իրավունք ունի որքան իր հանճարով, նույնքան իր դժբախտություններով, արժանի լինելու բոլոր այն ժողովուրդների համակրանքին, որոնցից ծնունդ են առել արդարության և ազատության դաղափարները»[1]։

Լոնդոնում, Արփիարյանի և Բաշալյանի հրատարակած «Նոր կեանքը», 1898 թվականին մի շարք համարներում շարունակաբար տպագրելով Զոպանյանի բանախոսությունը, իր հիացմունքն է հայտնում, որ առաջին անգամ եվրոպական հանրային կարծիքի առաջ հայ ժողովուրդը ներկայացվում էր այդպես տիրաբար, նրա պահանջները հիմնելով ոչ թե նվաստացնող ողորմության, այլ իր կատարած դերի վրա, մարդկության մեջ նրա գրաված և, մանավանդ, գրավելու ընդունակ տեղի վրա։

Բանախոսության թեման էր «Հայաստանը, նրա պատմությունը, նրա դրականությունը, նրա դերը արևելքում»։ Բանախոսը հակիրճ շարադրում է հայ ժողովրդի պատմության ազատագրական պայքարի հերոսական էջերը, վեր հանում նրա հին ու նոր դրականությունները, բարձր ու խոր գնահատականներով ներկայացնում Խորենացուն, Եղիշեին, Նարեկացուն, Շնորհալուն, Աբովյանին, Նալբանդյանին, Րաֆֆուն, Ստ. Ոսկանյանին, Հ. Սվաճյանին, Պեշիկթաշլյանին, Դուրյանին և ուրիշների, խոսում հայկական խնդրի էության և նշանակության մասին։ Այդ ամբիոնից Զոպանյանը մեղադրում է պաշտոնական Եվրոպային, որը իր անտարբերությամբ քաջալերել էր վիթխարի ոճիրը։

Հատկանշական է Զոպանյանի տված գնահատականը ժամանակակից հայ գրականությանը, որը նա դիտում է, որպես հայ ժողովրդի սոցիալական վիճակի արդյունք, հրաժարվելով և՛ իր, և՛ համախոհների այն կարծիքից, թե այդ գրականությունը ներմուծված էր, չուներ հող հայ իրականության մեջ։ Նա ասում է. «Գրականությունը (հայ—Կ. Դ.), մանավանդ այս դարում, ժողովրդի սոցիալական կացության արդյունքը եղավ, ինչպես նաև նրա հոգու և ճակատագրի վրա ներգործող բարոյական հզոր ազդակ»[2]։

[1] L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en orient, par A. Tchobanian, Paris, 1897, p. 7.

[2] Ibid., p. 12.

Ի դեպ, թվարկելով և գնահատելով հայ գրականության կարևոր գործիչներին, ծանրանալով մանավանդ իր ժամանակի վրա, նա խիստ հատկանշական խոսք է ասում 80-ականների շարժման գլխավոր Արփիար Արփիարյանի մասին, դրանով իսկ ընդհանրացված ձևով բացահայտելով ամբողջ շարժման մի քանի հիմնական գծերը. «Ապատամբ մտքով մարդ մը, ամենապայմանադրության և ամեն նախապաշարման թշնամի Արփիար Արփիարյանը,— ասում է բանախոսը,— մեծ աշխուժով զարգացուց այս ընկերական գրականությունը, հուզմամբ և հեղնությամբ լեցուն բարքերի նկարիչ մը եղավ, կծու քննադատ մը և հայ մտքին կարևոր լծարձակիչներեն մեկը»[1]:

Բանախոսությունից հետո հանդիսականների մեջ դռնվռնջ Ժան Ժորեսը մոտենում է Զոպանյանին և ասում. «Այս բանախոսությունը բոլորովին նոր գույներ մը ցույց կուտա մեզի հայկական հարցը, տպագրեցեք զայն և բոլոր մեր երեսփոխաններուն ղրկեցեք»[2]: Թե Ժորեսը՝ միջազգային սոցիալիստական շարժման ակնառու գործիչը և պառլամենտի դեպուտատը, թե Անատոլ Ֆրանսը՝ ժամանակի եվրոպական գրականության ամենախոշոր դեմքերից մեկը, դեռ նոր էին ունենում «հայտնություն հայ «ժողովրդի» մը և հայ «գրականության» մը գոյության» (Ա. Զոպանյան):

Շուտով Արշակ Զոպանյանը առանձին գրքույկով և Անատոլ Ֆրանսի առաջաբանով լույս է ընծայում իր բանախոսությունը[3] և մեծ տպաքանակով ցրում ֆրանսիական մտավորականության մեջ: «Ռըվյու դը Պարին» անդրադառնալով այդ հրատարակությանը, գրում է.

«Կ. Պոլիսեն հասած հրամաններուն վրա օսմանյան բարձրաստիճան պաշտոնատարներու միջոցով կազմակերպված կոտորածները՝ դեպի այդ դժբախտ երկիրը քաշեցին գրեթե տիեզերական համակրանք և կարեկցություն: Բայց աշխարհը կանգիտանա, թե հայ ժողովուրդը փոքր Ասիո ազգաբնակչության ցեղապրական զանազան խմբերուն ամենեն գործունյան, ամենեն խելացին, ամենեն արդյունաբերն է: Իր պատմական դերը նշանավոր եղած է անցյալին մեջ և կը խոստանա ապագայի մեջ

---

[1] «Նոր կեանք», 1898, թիվ 14, էջ 215:

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 10—12, էջ 198:

[3] L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient, introduction d'Anatole France, Paris, 1897.

ալ ըլլալ, բավական է, որ Թույլ տրվի իրեն ապրիլ։ Իր հին հեթանոսական դրականությունը, որմե հատուկտորներ ունինք միայն, ծանր ու առատաշնորհ գեղեցկություն մը կը փայլեցնեն։ Երկար ատեն գետինը խոնարհած Թրքական լուծեն, հայկական ցեղը այս դարուս մեջ գլուխը վեր կառնե, և նոր գրականություն մը եկավ անոր հարստություն առած հոգիին խանդավառությունները դրավիչ արտահայտությամբ երևան բերել։ Ահա այս ամենը պ. Զոպանյան այս պզտիկ հատորին մեջ նկարած է ուժեղ ու դունագեղ լեզվով մը, ուր կը զգաս հայրենասերի մը ու բանաստեղծի մը կրակոտ ու վշտահար հոգիին Թրթռումը»[1]։

Փարիզյան կյանքի այդ շրջանում, հասարակական-հրապարակախոսական գործունեությանը զուգահեռ, Զոպանյանը զբաղվել է նաև գրականագիտությամբ, գրել մի քանի հոդվածներ, որոնք հատկապես դնահատելի են, այն իմաստով, որ Զոպանյանը տեսության բնագավառում վերջնականապես հրաժարվում է նատուրալիզմը պաշտպանելուց և մեկ անգամ ևս ճշտում իր ռևալիստական հայացքները։ Այդ կետը ցցուն արտահայտված է 1897 թվականի նոյեմբերին գրված «Հենրիկ Իբսեն և իր ժան Գաբրիել Բորքմանը» հոդվածում, որը տպագրվել է «Մուրճ»-ում։

Արդեն «Ծաղիկ» հանդեսում Զոպանյանը բարձր էր գնահատում Իբսենի կազդուրիչ գրականությունը։ Այժմ նա ավելին է ասում։ Իբսենի երևույը կարծես հարված էր ֆրանսիական «արդի ընկերության Թուլցած փտության վրա։ Եվ այս խոովիչ ու արտակարգ գրականությունը կուգար այնպիսի ատեն մը, ուր, վերջին պատերազմին բերած բարոյական անկումովը, Ֆրանսիայի մեջ գվարճալի գրականություն մը կը տիրեր, երգեցիկ-սրճարանի լղճուկ երգերով, պոռնկագրական վեպերով և ցածոգի վոդվիլներով. բնապաշտ վեպը (որուն, սկիզբեն իսկ, Տուրգենև... Միեղադրած էր հոգեկան ու մտավորական ձգտումի պակասը, անհոգ ընդօրինակության, անամեջ ձևամոլության ուղղությունը) հետզհետե հեռացած էր Բալզակի և Ֆլոբերի մեծ ճամփաեն և հազվագյուտ բացառություններով,— բոլորովին իննկած էր կարճատես դիտողության, կյանքի մանրամասնության աննշանակ ու դյուրին հավաքման ու նկարագրական կատաղության սխալ ըմբռնումին մեջ»[2]։

---

[1] Ըստ «Նոր կեանք», 1898, թիվ 1, էջ 57։

[2] «Մուրճ», 1897, № 11—12, էջ 1566։

Տարակույս չկա, որ Զոպանյանը Բալզակի ու Ֆլոբերի ճանապարհն է համարում ճշմարիտը, «մեծ ճամփան», որ նա միանդամայն համաձայն է նատուրալիզմի տուրգենևյան քննադատությանը:

Շարունակենք հետևել Զոպանյանի մտքին:

«Իբսենի գործին մեջ դարուն բոլոր տենդերը, բոլոր բնապանցական և ընկերական խնդիրները կը ցոլանան: Այդ ստեղծագործը մաքառող մըն է միանդամայն... արդի կյանքը, արդի ընկերությունը տևած է իր ամբողջությամբը, իր կեղծիքներովն, իր տգեղությամբը և իր ղվվանքն անոր երեսին պոռցած է»[1]: Ինչպես դյուրությամբ կարելի է նկատել, Զոպանյանը այլևս Իբսենի գործի, թեպետ և կարևոր, բայց միայն մեկ կողմը չի տեսնում, ինչպես «Ծաղիկում» էր: Այժմ նա տարբերաժեշտում է գրողին և նորից սինթեզում: Իբսենը նրա համար կատարյալ ռեալիստ է. «Բայց փոխանակ, սովորական իրապաշտներուն պես, կյանքը նույնությամբ իր արտաքին գծերովն ու գույներովը ընդօրինակելու (Զոպանյանը, անտարակույս, նկատի ունի նատուրալիստներին), ինքը անոր մեջ ամենեն հատկանշական տարրերը կը տեսնէ, և զանոնք միայն կ'ընդլայնի և կը լուսավորե... մանրաքննին ճշտությամբ ուսումնասիրած ըլլալով հանդերձ ընկերական ճշմարիտ միջավայրերը և մարդկային ճշմարիտ տիպարներ, Իբսեն անակնկալ ու հանդուգն ընդհարումներ կը ստեղծե այդ տիպարներուն և այդ միջավայրերուն միջև... ներքին և արտաքին մղումներուն տակ՝ անհատին այլափոխումը քայլ առ քայլ կը պատկերացնե... մեկի ղպայությունը կուտա կեանքին խորքը կազմող անծանոթին վայրկյան մը դպած ըլլալու»[2]:

Այսպիսով, ռեալիզմն է, որ հնարավորություն է ընձեռում ծանոթանալ սոցիալական կյանքի բովանդակությունը կազմող երևույթներին, որոնք այլապես խորհրդավոր, անծանոթ ևմնում. սա է Զոպանյանի մխոքը և ռեալիզմի տեսությանը վերջնականապես փարելու իմաստը:

«Մուրճ» ամսագրում 1898 թվականին Զոպանյանը տպագրում է մի ուրիշ ծավալուն ուսումնասիրություն՝ «Հանրի Հայնե» տիտղոսով: Նյութի խոր իմացությամբ, պիտելիքների պաշարով և ընդհանրապես էրուդիցիայի ընդարձակությամբ Զոպանյանը

---

[1] «Մուրճ», 1897, № 11—12, էջ 1573:

[2] Նույն տեղում, էջ 1574:

հաճախ է ի հայտ գալիս իր գրաքննադատական հոդվածներում։ Մի այդպիսի նմուշ է «Հանրի Հայնե» ուսումնասիրությունը, որի մեջ համադրված են բազմաթիվ գաղափարներ ու նյութեր հին հունական ու հռոմեական, նոր շրջանի գերմանական, ֆրանսիական և անգլիական փիլիսոփայությունից ու գրականությունից։ Մեր խնդիրը չենք համարում մանրամասն վերլուծել այդ շահեկան հոդվածը, որի միայն ընթերցումն արդեն կարող է էսթետիկական հաճույքի հետ մեկտեղ լրիվ պատկերացում տալ Զոպանյանի գրչի թափի մասին։ Անհրաժեշտ ենք գտնում, այնուամենայնիվ, շեշտել, որ Զոպանյանը Հայնեի մեջ ամենից ավելի գնահատում է պայքարի ոգին։ «...Ոչ մեկ բանի խնայելը, բարքերուն կոշտությունը, գրականության դանդաղ ճոռոմությունը, գրաքննական ծիծաղելի խստությունները, դպրոցներու թմրած իմաստակությունը, ժողովրդի մեջ ամրացած անձկամիտ հայրենամոլությունը, պաշտոնյաներուն ամբարտավան անբարոյականությունը, կառավարության ճնշողական կազմակերպությունը, ամբոխին անգիտակից համբերությունը...»[1]։

1897 թվականի դեկտեմբերի 20-ին Ա. Զոպանյանը գրում է «Օրոր մայր Հայաստանին» բանաստեղծությունը, որը նոր էջ էր նշանավորում իր պոեզիայի մեջ, շրջադարձ կատարելով դեպի հայրենասիրական-քաղաքացիական թեման։ Ըստ երևույթին հենց այս բանաստեղծությունը և հետագա գործերը, որոնք ամփոփվեցին 1908 թվականին հրատարակված ժողովածուի մեջ, նկատի ուներ «Անի» ամսագրի խմբագրությունը, երբ իրավացիորեն արձանագրում է, թե առանց Արշակ Զոպանյանի պոեզիայի ստեղծած հիմքի «հետագա մեր քնարերգությունը պիտի չկարենար այնքան նեղ ժամանակի մը մեջ հասնիլ արտահայտչական այն ճոխության և հորինումի երջանիկ այլազանության, որոնցմով մեղեդիացան խորապես մարդկայնական ու հարազատորեն հայադրոշմ հուզումներն ու տեսիլքները՝ պայքարող, որքան գեղապաշտ սերունդի մը»[2]։

«Օրորը» դարավերջյան արևմտահայ քնարերգության մեծ ալիքի ամլության պայմաններում, որ ստեղծվել էր Համիդյան հալածանքների ու 94—96 թվականների ջարդերի հետևանքով,

---

[1] «Մուրճ», 1898, № 6, էջ 827։

[2] «Անի», Դ տարի, 1951, թիվ 9, էջ 518։

լուսարձակի նման լուսավորից պոեզիայի հնաոտպ վերելքի ճամփան իր պայքարի կոչով շնչով և լավատեսական ոգով։

Մութին մեջեն պիտի ցցվիս հաղթական,
Աչերդ աստղեր պիտի դառնան ու ցոլան.
Վերքերդ վարդ պիտի ըլլան հոտավետ,
Ու լույս պիտի բափի ճերմակ մազերեդ։
Պիտի կանգնիս համփաններուն բերանը,
Պիտի բանդես Բռնության սև խորանը,
Ասրի՛ նվիր, ցավերդ երկունքն են հսկա,
Ով մա՛յր, աշխարհ մը ծոցիդ մեջ կը խլրտա։

Բանաստեղծությունը տպագրվեց «Նոր կյանքի» առաջին համարում, 1898 թվականի հունվարի 1-ին։ Իսկ երեք ամիս անց, մարտի 10-ին, արդեն Ֆրանսերեն բարգմանված տեքստը հնչեց Փարիզում ի նպաստ հայ ուսանողների կազմակերպված երեկույթում։ Ամենքդուն էր Օդեոն թատրոնի նշանավոր դերասան Ռամոն։

Հայ մշակույթի պրոպագանդմանը նվիրված կարևոր ձեռնարկումներից մեկն էր ապրիլի 1-ին Օթել դե Սոսիեթե Սալանդի սրահում տեղի ունեցած երեկոն՝ Փարիզի համալսարանի պատմության, փիլիսոփայ և գրական քննադատ Գաբրիել Սեայլի նախագահությամբ։ Արշակ Չոպանյանը հանդես եկավ Գրիգոր Նարեկացու մասին բանախոսությամբ։ Օգոստոսի 27-ին և սեպտեմբերի 3-ին «Ռըվյու էնսիքլոպեդիքը» տպագրեց նրա հոդվածը հայ հին գրականության մասին։

Նույն թվականներին Արշակ Չոպանյանը բանասիրական և գրականագիտական աշխատանքների լայն ծրագիր է հղանում։ Նա թղթակցում է զանազան անձանց հետ, ձգտելով նյութեր հավաքել Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքի վերաբերյալ, ինչպես նաև մեկնում է Վենետիկ և Վիեննա, որտեղ ամբողջ իր ժամանակը տրամադրում է հայ միջնադարյան ձեռագրերի մեջ գրչագրություններ կատարելուն։

Մխիթարյանների Սուրբ Ղազար կղզում է, որ առաջին անգամ նա իր համար անում է Նահապետ Քուշակի հայտնությունը։ Չոպանյանի աչքերին բացվում է հայ միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության մի ամբողջ գանձարան և, իր իսկ ասելով, նրա ապրած հոգևկան ցնցումը աննկարագրելի է լինում։

Վերադառնալով Փարիզ, Զոպանյանը տենդագին նախապատրաստական աշխատանքներ է տանում «Անահիտ» հանդեսի հրատարակության համար, անում անհրաժեշտ ձևակերպությունները, թղթակցում գանազան հեղինակների հետ՝ ապահովելու համար նրանց աշխատակցությունը:

«Զոպանյան այդ թվականին կը բնակեր Օտեոնի հրապարակը գտնված պանդոկի մը վերնահարկը, նեղ ու աղտոտ սենյակ մը, գիրքերով ու թերթերով խճողված»,— վերհիշում է Երվանդ Օտյանը: Սենյակում շարժվելը գրեթե անկարելի է եղել: Նվ երբ պատահեր, որ 5—6 հոգի լինեին ներսում, ապա եղած մեկ-երկու աթոռը, անշուշտ, չէր բավականացնում և կեսը անկողնի վրա էր նստում: Իսկ 5—6-մարդ համարյա միշտ լինում էր: «Այդ սենյակը ժամադրավայր մըն էր հայ «պոհեմ»ներուն, որ գրեթե ամեն օր հոնտեղ կը հավաքվեին խոսելու և երբեմն ալ սուրճ խմելու համար, եթե կարելիություն ըլլար խահվե, շաքար և լամպարը վառելու համար ալթոլ ճարել»: Մշտական այցելուներն էին Զապել Հովհաննիսյանը (Եսայան), Տիգրան Եսայանը, Վահե Սրվուչյանը, Աւոտ Յարճանյանը, Օննիկ Խարիպյանը, Վահրամ Սվաճյանը, Երվանդ Օտյանը, Էդգար Շահինը, դոկտոր Քոլոլյանը, Երվանդ Մանվելյանը, Մաքսուտ Միհրդատյանը, Սուրեն Պարթևյանը, Արտավազդ Հանըմյանը, Ֆնտզյան եղբայրները և ուրիշներ:

Զոպանյանի նյութական կացությունը շատ հեռու էր փայլուն լինելուց, վկայում է Երվանդ Օտյանը: «Այսուհանդերձ, անհոգ-դողդ կորովով մը կյանքի պայքար կը մղեր առանց երբեք հուսահատելու, ընդհակառակն, մեծ, մեծամեծ ծրագիրներ ուներ մտքին մեջ, որոնց իրականացումին կ'աշխատեր օրն ի բուն»[1]:

Պոլսից հեռանալիս Զոպանյանը վճռել էր նվիրվել ազգային գործունեության և հրապարակով հանդես գալ իր խոհերն ու կարծիքները ազգային-ազատագրական պայքարի ուղիների մասին հայտնելու համար: Այդ ծրագիրը նա որոշում է իրագործել «Նոր կեանք» երկշաբաթաթերթի էջերում, ընդունելով Լ. Բաշալյանի առաջարկությունը: Զոպանյանը հնչակյան կուսակցության անդամ չէր և «Նոր կեանքին» իր աշխատակցության պայման էր համարում ամսաթերթի ճակատից «օրգան հնչակյան կուսակցության» բառերը հանելը: Արփիարյանը և Բաշալյանը ընդառաջ

[1] Երվանդ Օտյան, *Երկերի ժողովածու*, հ. 4, Երևան, 1962, էջ 155—156:

չգնացին այդ ցանկությանը։ Այնուամենայնիվ, Զոպանյանը շարունակից աշխատակցել, որովհետև կարևոր էր համարում իր հայացքների հրապարակումը։

Արդեն հիշատակված նյութերից բացի «Նոր կյանքում» տպագրվել են Ա. Զոպանյանի մի քանի հոդվածները, որոնց հիմնական նյութը ժողովրդի ազատագրական պայքարի հետագա ուղիների փնտրումն է։

«Հերոսները» խորագիրը կրող հոդվածում նա «վարպետանց օրվա» առիթով փորձում է գնահատական տալ դարավերջյան անցքերին, դիտելով դրանք հայ ժողովրդի մաքառման տեսանկյունից։ Արդեն այս հոդվածում նա հարևանցի նշում է, որ մի շարք սխալներ են թույլ տրվել վերջին շարժումներում, սխալներ, որ նույնիսկ ոճիր կարող են կոչվել։ Ո՞րն էր նրա տեսակետից հատկանշականը։

«...կրնանք ըսել որ մեր պատմության ամենեն նշանակալից և ամենեն կարևոր մեկ շրջանն էր ան... մեռած կոչված ժողովուրդ մը հինգ տարվան անշարժության հետո, որու միջոցին անճոռնի բռնավորներու զարշապարին տակ ամենեն անարգ ստրկության դատապարտված էր, կրցավ հանկարծ, պրականության բերած ցնցումեն արթնցած, եվրոպական նոր գաղափարներու շունչեն նորոգված, դպրոցին ծնուցած վիտակցությամբը ամրացած, համակերպության համիճեն ցցվիլ, ոտքի ելլել, արհավուն տակ իր արդար իրավունքները պահանջել, ինքնապաշտպանության ջանքի մը ուրվածքովը իր առնությունը ապացուցանել»[1]։

Հոդվածագիրը, այնուամենայնիվ, գտնում է, որ հերոսությունը ժողովրդի և անհատի կյանքում ժամանակավոր վիճակ է, իսկ բնականոն վիճակը պահանջում է լավ նախապատրաստություն պայքարի ու հերոսության համար։ Ուստի այդ արյունոտ փորձը շարունակել քարոզողները ազգը տանում են ինքնասպանության։ Հոդվածը լավ ընդունելություն է գտնում մի շարք վայրերում և աշխուժություն առաջ բերում։ «Հերոսները» շատ սիրով կարդացվեցավ բովանդակ Բնության երիտասարդությունեն. ամենքն ալ համամիտ են քեզի»[2],— գրում է Արամ Անտոնյանը։

Հետաքրքրական է Զոպանյանի «Իմ հայրենասիրությունը» հոդվածը, որի մեջ նա կարծես տեսականորեն հիմնավորում է

---

[1] «Նոր կեանք», 1898, թիվ 5, էջ 67։

[2] ԴԱՐ, ԱԶՁ, I բաժին, № 480։

իր այդ օրերի գործունեությունը Փարիզում և առհասարակ իր գալիք ամբողջ կյանքի ուղին։

«Ինձի միշտ անսահման երևցած են դափով Եմբուկով «հայրենիք» կանչող մարդիկը, անոնք, որ «մեր փուշը օտարին վարդն ալ մեր է» կը մտածեն, դրախտին, Արցարին ու Հայկին առասպելներուն վրա կրթնած աշխարհիս բոլոր ազգերը կարհամարհեն և իրենց միջակությունեն քայլ մը վեր ելլելու պետք չեն զգար»[1]։

Զոպանյանի հայացքները հարազատորեն բնութագրող տողեր են սրանք, որ հետագայում նա բազմաթիվ առիթներով առավել զարգացնում, խորացնում և ամբողջացնում է, դառնապարտելով Բունոտ ու այլամերժ ազգամոլությունը։

Եթե մենք փշեր ունենք, պիտի չզուրկրանք նրանց վրա այն բանի համար, որ մերն են, ասում է Զոպանյանը, այլ պիտի փրցնենք, դեն նետենք և ջանանք մեր վարդերը տեսնել, երևան հանել, աճեցնել ու զարգացնել։

«Ջենք իսկ հետամտած հարկավոր խնամքով ի վեր հանել և աշխարհի ճանչցնել այն քիչը, որ ըրած է մեր ցեղը... Հայրենասերը ան է, ըստ իս, որ այս դառն ճշմարտությունը կը տեսնե և կաշխատի միջոցը գտնելու, որ մարդկությունը մեզ ճանչնա[2]»։

Նվ այնուհետև, Բաֆանցիի ակնարկ անելով պրովոկացիաններ հրահրող ազգայնական կուսակցությունների ղեկավարությանը, գրում է. «Հայրենասերները, կը կրկնեմ, ասոնք են (ժողովրդին լուսավորողները, մշակույթը պրոպագանդողները— Կ. Դ.), և ոչ թե այնպիսինները, որոնք իրենց ծուլությանը մեջ ընկողմանած՝ «կեցցե՛ Հայաստան» կը բացականչեն, կամ այն տեսակ մը մարդակերպերը, որոնք հետեւեն ջարդեր կը սարքեն և սքանչելի անձնվիրություններ անիմաստ և անօգուտ կերպով կը գործածեն, որպեսզի խնդճ միամիտներ «կենտրոն»-ին դրամ դրկեն»[3]։

Զոպանյանը ըստ էության գտնում է, որ ոչ թե պետք էր զենք վերցնել, այլ տանել լայն լուսավորական աշխատանք. «Եթե հայերը ավելի զարգացում, ինքնաճանաչողություն, բարոյական մշակույթ ունենային, թուլացումը, ստրկացումը, հա-

---

[1] «Նոր կեանք», 1898, թիվ 8, էջ 113։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 115։

մակերպությունը ինքնին անհնազանդ կըլլային, ամեն հայ պետք եղած առնը վնաս մը գործածել կը պիտնար, և աշխարհիս առջև ինքզինքը պաշտպանելու անկարող ողորմելի ժողովուրդի մը տխուր պատկերը չէինք ներկայացնի»[1]:

1905 թվականին, դրախտանալով դ-ր Դաբրիելյանի «Ճնշաժամ հայոց ու ազգային վերածնություն» գիրքը, նա մի կարևոր խոստովանություն է անում այդ առթիվ: Զոպանյանը գրում է. «Դ-ր Դաբրիելյան կառաջարկե իբր միակ դարման մեր ցավերուն և իբր միակ ուղին որմե պետք է ընթանա ազգը այսուհետև, դարբնեցնել բոլորովին և անկեղծորեն հեղափոխական գործունեությունը, հրաժարիլ մեր քաղաքական ծրագրեն և կրթական ու անհատական զարգացման նվիրել մեր բոլոր ուժերը: Այս գաղափարը ղոր ես իսկ հայտնած եմ տարիներ առաջ «Նոր կյանքին» մեջ, սխալ է»[2]:

Իր սխալն ուղղելը և նոր ուղու վրա կանգնելը համընկնում են «Անահիտի» հրատարակման առաջին տարիներին: Այդ հանդեսի գործունեությունն էլ մենք կքննարկենք հաջորդ բաժնում:

---

[1] *«Նոր կյանք», 1898, թիվ 8, էջ 116*

[2] *«Անահիտ», է տարի, 1905, թիվ 10—11, էջ 214: «Նոր կյանքում» հայտնած այդ գաղափարը նա զարգացնում է նաև 1897 թվականին Ասլահին ուղղված նամակներում, ԴԱՐ, ԱԶՖ, IV բաժին, № 499, Նամականի, էջ 51—53:*

«Պետք է ամեն գործ նկատել իր ժամանակին ու միջավայրին մեջ և իր կատարած դերին համեմատ»։

(Ա. Զոպանյան)

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«Անահիտի» ծրագիրը

«Անահիտ» հանդեսի հրատարակությանը ձեռնարկելիս Արշակ Զոպանյանն արդեն պարզորոշ տեսնում էր գործունեության այն լայնահուն, բայց դժվարին ուղին, որի վրա ոտք էր դնում քսանվեցամյա խմբագիրը։ Այդ ուղին կոչված էր նպաստելու հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հաղթանակին։ Ահա սա էր Ա. Զոպանյանի բազմաբեղուն գործունեության հիմնական նպատակը, նրա հավատո հանգանակը։ Այլևս Զոպանյանի թե դրականությունը, թե բանասիրությունը, նրա ջանքերով հայ մշակույթի տարածումը Եվրոպայում և օտար մշակույթի տարածումը հայոց մեջ, թե նրա անխոնջ քաղաքական-հասարակական գործունեությունը, թե լրագրությունը, բոլորը և ամբողջովին այդ հիմնական նպատակի ծառայողներն էին. և իրագործման կարևոր միջոցներից մեկը դարավերջին և մեր հարյուրամյակի առաջին տասը տարիներին՝ «Անահիտ» հանդեսը։

«Այնպիսի ատեն մը, ուր նույնիսկ մեր ազգային գոյությունը վտանգի մեջ է, բնական է, որ մտավորական, գեղեցկագիտական բոլոր ճիգերն ու ձեռնարկներուն առաջ, ամեն հայու ամենակենսական մտահոգությունը պետք է ըլլա այն խնդիրը, որ հայ ազգին մահու և կյանքի խնդիրն է, և շատ բնական է, որ այդ խնդրույն քննությունը ամենամեծ և ամենակարևոր տեղ մը բռներ ուսումնասիրությանցը մեջ «Անահիտի» պես ամսաթերթի մը, որուն նպատակն է իր ուժերուն չափովը հայ ցեղին զորացմանն ու զարգացմանը նպաստել»[1]։

[1] *«Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 12, էջ 390։*

Համիդյան ջարդերից հետո սկսող ընդհանուր հուսահատությունը ոչ մի լավ բան չէր խոստանում հայ ժողովրդին, որը ուղևորություն նավակի նման տատանվում էր «մի կողմից պոռոտախոս ստապատիր հավակնություններն և մյուս կողմից ողբալից շվարումների մեջտեղ»։ «Թուրքիո հայոց մտավորական կեդրոնը պիտոր լույս մը կարձակե այս վայրկյանիս»[1]։ Սրա այսպիսին էր Պոլսի վիճակը, ապա ջարդի չսպիացած վերքերը մարմնին դավառի մասին խոսելը ավելորդ է։

Արշակ Չոպանյանն այն քչերից էր արևմտահայության մեջ, որ ուներ վառ լավատեսություն ժողովրդի ապագայի նկատմամբ։ Նրա աչքը հետուն էր նայում, տեսնում փրկարար լույսը, ցավի միջից հառնած, գեղեցկացած հայ մարդուն՝ «նոր ու ավելի մեծ ճամփու մը սեմին վրա»։ Երկար ու դժվարին էր դեպի այդ ապագան տանող ճանապարհը, որի սկզբնակետում, Ա. Չոպանյանի կարծիքով, անհրաժեշտ էր վերաքննել արդեն անցած ուղին։ «Մենք պիտի ուզենք, որ թերությունները միշտ ցուցվին մեր ժողովուրդին, և սխալներն ու ոճիրները չարաչար դատափետվին... մեր թերությանց ու սխալներուն աղբյուրները, անոնց արմատական պատճառները երևան հանվին անկողմնակալ ոգով, որպեսզի ժողովուրդը... կարենա հետագա տեսնել և ինքզինքը արթնցրել»[2]։

«Անահիտի» ծրագրային կետ դարձավ այդ ուղու քննությունը և ազգային-ազատագրական պայքարի հետագա ուղիների որոնումը։

Բացահայտ քաղաքական դիրքորոշման պատճառով հանդեսը ունեցավ շատ դժվարություններ։ Նրա առջև փակվեցին սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի դռները։ Ընդ որում Թուրքիան, առհասարակ, ոչ միայն մերժում է «Անահիտն» ընդունել, այլև ֆրանսիական դեսպանի միջոցով պահանջում է Ֆրանսիայից արտաքսել Ա. Չոպանյանին[3]։ Ռուսաստանում բռնադրավվում են «Անահիտի» Ա տարվա 1, 3, 4 թվերը։ Այնպես որ թիվ 7-ից սկսած խմբագիրը ստիպված է լինում քաղաքական հոդվածները հրատարակել վերջին մասում և միայն առաջին մասը՝ գրական բաժինը, ուղարկել Ռուսաստան։ Արգելքներն ու

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 4։

[2] Նույն տեղում, էջ 5։

[3] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 12, էջ 392։

հալածանքները խոչընդոտներ են հարուցում հանդեսի տարածմանը և նյութական ծանր կացություն ստեղծում, մանավանդ, երբ բաժանորդների մեծ մասից «բաժնեգինները դանձելը Սրևելյան նեղիրը լուծելեն ավելի դժվար է»:

Մի տոհմով Ա. Ջոպանյանը գրում է, որ «Անահիտը» պիտի հաջողություամբ կարողանար նյութական թնջուկը լուծել, եթե բավարարվեր զուտ գրական գործունեությամբ: «Բայց ես չէի կրնար անտարբեր և լուռ մնալ մեր ցեղին ամենեն կենսական խնդիրներուն առջև: Այդ խնդիրներու մասին կարծիքս հայտնելս «Անահիտին» նյութապես վնասակար եղավ»[1]:

Թուրքիայի պայմանները նկատի առնելով, արդեն դժվար էր ապասել, թե «Անահիտի» ծրագրով հանդեսը կարող էր արտոնվել երկիր մուտք գործելու: Պատասխանելով Ա. Ջոպանյանին, Սրամ Անտոնյանը 1898 թ. սեպտեմբերի 24-ին գրում է Կ. Պոլսից. «Անահիտը» կարծեմ կը հանենք նոյեմբերին սկիզբը, մեծ հույսեր կան վրան, շատ համակիրներ ունինք հոս, բայց չեմ գիտեր թե ազատորեն կրնա՞ տարածվիլ Պոլսո մեջ, գավառներու համար բացարձակորեն անկարելի է, մի հուսաք որ նույնիսկ մեկ թերթ մը ուրիշ միջոցով կարելի ըլլա ներս մտցնել»[2]:

Համբարձի մահհղացմամբ հանդեսը պետք է լիներ ժամադրավայր ժողովրդի՝ աշխարհի տարածքով մեկ ցրիվ մտավորական ուժերի, որպեսզի մի տեսակ ազգային մտավորական միություն կազմեին և իրենց համախմբված ճիգերով ժողովրդին հավատ ներշնչեին ապագայի նկատմամբ և լուսավորություն բերեին նրան: Բազմազան միջոցներով գործադրվող և իրագործվող լուսավորական ծրագիրը «Անահիտի» հիմնական խնդիրներից մեկն էր:

«Զարգացնել ինքնաճանաչությունը, ցուցնել թե մեր բոլոր թերությունները կուգան գիտակցության չգոյությունեն, զգացնել, թե փրկության մեծագույն լծակը բարոյական կրթությունն է՝ զոր լուրջ հիմերու վրա հաստատված Դպրոցը և անկեղծությամբ, ուսումնասիրությամբ ու խանդով շինված Գրականությունը միայն կրնան տալ մեզի, հարստացնելով հայ միտքը մաքուր, կենսական, գիտնական տարրերով, աշխատիլ մանավանդ, որ մեր գրականությունը՝ բարձրագույն արտահայտությունը ցեղին հոգվույն, հնագիտեն հոխանա, պայծառանա, ձևացնի

---

[1] «Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 3, էջ 96:

[2] ԳԱԹ, ԱՋՖ, I բաժին, № 484:

տաճար մը վիհութեան ու շնորհի, որ կարենա պատրաստել մեր ունենալ Մարդկային Ոստանին մէջ և որմով հպարտանան մեր վաղվան սերունդները, ջանալ, վերջապես, որ ամբողջ ազգը, հակառակ ամեն պատուարի և անջրպետի, ամուր կապերով եղբայրանա և ներդաշնակվի մեծ ազնիվ գաղափարի մը շուրջը, այն է՝ կամքը մարդկութեան մէջ գեղեցկութիւն և կյանք ծնուցանող տարր մը ըլլալու. ահավասիկ ինչ որ կը նկատենք նվիրական պարտքը մեր այսօրվան մտավորական դասին և այդ պիտի ըլլա գործը, որուն «Անահիտ» պիտի ձգտի նպաստել»[1]:

Դարավերջին արևմտահայութեան համար առնձնված պայմաններում Արշակ Չոպանյանի և, մասնավորապես, «Անահիտի» կատարելիք դերի ու խնդիրների մասին հետաքրքրական փաստաթուղթ է թողել ինքը՝ հանդեսի խմբագրապետը: Նրա նամակներից մեկում, որ գրված է 1899 թվականի հունվարին, կարդում ենք.

«Անշուշտ, իրավունք ունիք մտածելու, թե հայ ազգը այսօր ողբալի վիճակի մեջ է և կարելի չէ իրապես լավատես հայեցվածք մը ունենալ անոր կացութեան մասին: Բայց, որովհետև այդպես է, մի՞թե պետք է թաղվիլ մնալ վհատեցուցիչ, կործանարար հոռետեսութեան մը մեջ—ամատթերթ մը մանավանդ, ինչպես «Անահիտը», որ կուղղվի ամեն կողմ օտարութեան մեջ ըսված հայերու, պարտք ունի սիրտ տալ, հույս ներշնչել, չեմ ըսեր, որ պետք է ասել, թե պետք է ծածկել իսկութիւնը, ո՛չ, այդ վտանգավոր կըլլար, պետք է հայտնել կացութիւնը իր բոլոր դառնութեամբ, և այդ ըրած եմ, կընեմ, բայց նույն ատեն պետք է ի վեր հանել և շեշտել այն բոլոր կենդանութեան, կորովի նշանները, զոր մեր ժողովուրդը ցույց կուտա այս միջոցիս, քաջալերել զինքը իր անվհատ, համառ կենսականութեան ու հավատքին մեջ, և մանավանդ, հղել հայը, որ օտար մեծ երկիրներու մեջ հայուն նկատմամբ ծնած համակրութիւնեն օգտվիլ գիտնա: Այս է, որ կընեմ և պիտի շարունակեմ ընել «Անահիտին» մեջ: Եվ, եթե գիտնաք, պարոն, ինչպես հաջողած եմ արդեն նպատակիս մեջ, եթե գիտնաք, թե ինչ նամակներ ընդունած եմ շնորհակալութեան այդ կազդուրիչ խոսքերուն համար, ինծի համախոհ պիտի ըլլայիք»[2]:

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 5—6:

[2] ԳԱԹ, Խաչատուր Հովհաննիսյանի ֆոնդ, № 64:

Այսպիսի լայն դեմոկրատական, լուսավորական ծրագրով «Ժամադրավայրը», բնականաբար, պիտի արժանի հայացքների ու մտքերի աղատ շարադրում, ավելին, Ա. Զոպանյանը քաջալերում էր հանդիսի էջերում տարբեր հայացքների տեր հեղինակների հայտնվելը: Այնուամենայնիվ, «Անահիտը» զարմանալիորեն կարողանում է պահպանել իր ուղղությունը և կուռ ամբողջականությունը ու հավատարիմ մնալ նախանշված ծրագրին: Պիտի պատահական չհամարել, որ առաջին իսկ համարից, որը լույս տեսավ 1898 թվականի նոյեմբերին, «Անահիտը» մեծ ընդունելություն է գտնում ընթերցողների շրջանում և տարածվում բազմաթիվ երկրների հայկական գաղթօջախներում:

Արշակ Զոպանյանը ջանքեր չի խնայում, որպեսզի հանդիսին աշխատակցեն ժամանակաշրջանի հայ մշակույթի նշանավոր դեմքերը: Արխիվում պահպանվել են բազմաթիվ վկայագրեր, որոնք պատմում են տարբեր անձանց հետ Զոպանյանի բղթակցությունների մասին, որոնցում նա խնդրում է աշխատակցել «Անահիտին»:

Իմանալով «Անահիտի» ծրագրի մասին, Լևոն Բաշալյանը Լոնդոնից խանդավառությամբ գրում է. «Անահիտ» հայտարարությունը լրած եմ: Պատվո, և հաջողություն: Շատ գեղեցիկ ծրագիր մըն է, և տարակույս չունիմ, որ պիտի հաջողիս»[1]:

Աշխատակցության հրավեր է Ալեմիք Բահաքյանին 1899 թվականի մայիսի 13-ին գրված նամակը, որի մեջ, ի դեպ, հիշատակվում է նաև «Անահիտի» մեծ տարածումը:

«Ես Ձեզի շատոնց գրած էի պ. Արտաշեսյանցին ուղղելով նամակս: Կը ցավիմ որ կորավեր է այդ նամակը: Ձեզի գրելու փափաք ղպացի պ. Աղբալյանի քննադատականին մեջ հիշատակված Ձեր կտորները կարդալն հետո: Ես չափազանց սիրուն կը գտնեմ Ձեր բանաստեղծությունները: Թերևս ամենեն ինքնատիպը, ամենեն տաքն ու շնորհալին եք Կովկասի հայ բանաստեղծներուն: Կուզեմ ունենալ Ձեր հատորը: Նամակս գրած էի այդ հատորը խնդրելու համար, և միանգամայն խնդրած էի, որ աշխատակցեք «Անահիտին»: Հիմա Դուք կուգաք ինծի առաջարկել նույն բանը: Շատ ուրախ պիտի ըլլամ Ձեր քերթվածները ընդունելով: «Անահիտը» անկանոն կերպով մտավ մինչև հիմա Կովկաս, կը հուսամ, որ այսուհետև ավելի կանոնավոր ըլլա

[1] ԳԱՐ, ԱՋՖ, I բաժին, № 1257:

մուտքը, պիտի ջանամ այդ բանը դյուրացնելու համար, որ կարելի եղածին չափ դուռ դրական ըլլա ինքը[1]։

Ամեն պարագայի մեջ, «Անահիտին» մեջ հրատարակելով Ձեր բանաստեղծությունները հայության ամեն հատվածներու ծանոթ կը դառնան, որովհետև այժմ «Անահիտը» տարածված է ամենուր, որ հայ կա»[2]։

«Անահիտի» հեղինակության, աշխատավորական խավերի մեջ խոր արմատներ նետելու մասին է վկայում Զրուխանի նամակը։ 1900 թվականի աշնանը լուր է տարածվում, թե «Անահիտը» նյութական դժվարություններից պատճառով դադարում է։ Հենց այդ առիթով էլ Զրուխանը գրում է Վառնայից հոկտեմբերի 12-ին. «Ես ու բոլոր բարեկամներս, որոնք ջերմ համակրողներն են քեզ ու «Անահիտին», ամենախոր վշտով իմացանք այս լուրը։ «Անահիտի» անհետացումով հայ գրականության մեջ լայն խրատ մը կը բացվի, զոր բան մը չի կրնար զոցել։ Վառնայի մեջ ժողովրդական էնաֆի գաղափարը պաշտում մը կը տածե «Անահիտին» համար»[3]։

Եթե Ա. Զոպանյանը այլևս ոչինչ կատարած չլիներ, միայն «Անահիտ» հանդեսը բավական պիտի լիներ որպես մնայուն հուշարձան մեր մշակույթի բազմավաստակ գործչին։ «Անահիտը» հանրագիտարանային հետաքրքրություններ ունի և անպատճառելի նյութ է պարունակում հետազոտողի համար։ Գրել «Անահիտի» պատմությունը, նշանակում է շարադրել ժամանակի «ընկերական ու գրական բոլոր հարցերու» (Ա. Զոպանյան) վերլուծությունը։ Հետու լինելով բոլոր այդ խնդիրները մանրամասնորեն և պատճառ քննարկելու միտումից, սակայն հակիրճ կներկայացնենք պիտի անդրադառնանք հանդեսի գործունեության մի քանի ուշագրավ կողմերին։

---

[1] «Անահիտի» Ա տարի թիվ 7-ից սկսած Ա. Զոպանյանը հանդեսը բաժանում է երկու մասի։ Առաջին մասում տպագրում է գրական բաժինը և այնուհետև միայն այդ բաժինը առաքում կովկաս, որտեղ ցարական գրաքննությունը խիստ խոչընդոտներ էր հարուցել հանդեսի քաղաքական բաժնի դեմ։ Ակնարկը այդ մասին է։

[2] ԳԱԹ. Գ. Լևոնյանի ֆոնդ. № 2801։

[3] ԳԱԹ, ԱԶՖ, I բաժին, № 1914։

Հետադարձ հայացք հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ուղու վրա

1898 թվականին, ձեռնարկելով «Անահիտ» հրատարակությանը, Արշակ Չոպանյանը նոր ժամանակներում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման էվոլյուցիան տեսնում էր երեք փուլերի մեջ: Ըստ նրա, առաջին փուլը սկսվում էր լայն լուսավորական զարթոնքով, որի ահվիրաններն էին «Աբովյաններն ու Նալբանդյանցին մինչև Արծրունի», Մխիթարից մինչև Սվաճյան: Ազգային մտավորական այս զարթոնքը պայմանավորում է «սիրձ ու հզոր ծաղկևորումը, որուվ հայ ժողովուրդը կը հաստատուն դպրոց, թատրոն, գրականություն, մամուլ, տահմանադրական բարքեր և հավատքն ու կամքը՝ քաղաքակիրթ և անկաշկանդ կյանքի մը»[1]:

Չոպանյանը բնական է գտնում, որ նման զարթոնքից հետո և, մանավանդ, իրեն բախտակից ուրիշ ժողովուրդների ազատագրական պայքարից ոգեշնչված, հայ ժողովուրդը «ցանկաց այդ բարոյական-ազգային շարժումը իր տրամաբանական եզրակացությանը հասցնել... Երկրին մեջ, ամեն կողմ հրիտասարդությունը իր սիրտը, կյանքը դրավ այդ ճամփուն մեջ և կազմվեցավ ուժ մը, խուլ, խորին, հարաճուն. առնականության կոհակ մը բարձրանալ սկսավ՝ լճացած զանգվածն. հանդգնության, անձնազոհության, արության օրինակներ երևցան, որոնք պատիվ կը բերեն զանոնք արտադրող ժողովրդին և զոր պարտականություն մըն է մոռացումն փրկել ու անկորուստ արձանագրել պատմության համար»[2]:

Երկրորդ փուլը, ըստ Չոպանյանի, սկսվում է այն պահից, երբ հայկական հարցը դառնում է միջազգային դիվանագիտության հարց, և, վերջապես, երրորդ փուլը՝ սուլթանական կառավարության կողմից հայ ժողովրդի ծրագրված բնաջնջման գործադրումով:

Ազատագրական պայքարի էտապների չոպանյանական պարբերացումը բնավ նկատի չունի Թուրքիայի, հետևաբար և արև-

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 2:

[2] Նույն տեղում, էջ 3:

«Մտահայության սոցիալ-անտեսական վիճակի պրոբլեմները, այլ ամբողջովին բխում է քաղաքական ու բարոյագաղափարական նախադրյալներից: Կարևորը, սակայն, մեր կարծիքով այն է, որ Զոպանյանը սկզբից ևեթ հստակ ու որոշակի հայտարարում է, թե ինքը արդարացի, ճիշտ և բնական է գտնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օտար բռնատիրության դեմ: Նրա քննադատությունը ուղղված է ոչ թե շարժման էության, այլ գործադրման և ղեկավարման տակտիկայի, թույլ տված սխալների դեմ, որոնց մի մասը նա ոճրագործություն է համարում հայ ժողովրդի ազգային իղձերի և ազատագրական պայքարի շահերի նկատմամբ: Բնականաբար, նրա քննադատությունը վերաբերում է հիմնականում վերջին երկու էտապներին: Այդ քննադատությունը, իր կարծիքով, կոչված է վերանորոգիչ դեր կատարելու. «Իր թերությունները տեսնելը առաքինություն մըն է անշուշտ՝ ազգի մը, ինչպես անհատի մը համար, բայց իր թերությունները պրպտելու գործողության մեջ ուշանալն ու անկից ախորժիլը վտանգավոր հիվանդություն մըն է»[1]: Զոպանյանն էլ հենց շտապում է այդ գործը կատարել, «Անահիտի» էջերում հրատարակելով իր առաջին խոշոր ուսումնասիրությունը՝ «Պատասխանատվությունները» տիտղոսով:

«Ապշեցուցիչ բան մըն է,— գրում է Զոպանյանը, անցնելով Բեռլինի կոնգրեսի դեպքերի քննարկմանը,— որ քսան տարին ի վեր, ոչ մեկ հայ պաղափարն ունեցած չէ մանրամասնաբար քննել Բեռլինի վեհաժողովին միջոցին հայոց ձեռնարկած գործունեության պատմությունը: Եվ, սակայն, վիթխարի սխալներ գործված են այդ միջոցին և այդ սխալները երևան հանելը պետք էր առաջինն ըլլար մեր ջանքերուն»: «Անահիտի» խմբագրի համոզմունքն է, որ եթե այդ սխալները մատնացույց արված լինեին, վերջին շրջանում (իննսունական թվականները նկատի ունի) գործված սխալների մեծ մասը տեղի չէր ունենար[2]:

Իր պարբերացման առաջին էտապում, որի ընթացքում, ըստ նրա, նույնպես թույլ էին տրվել սխալներ,— ժողովրդի միակողմանի ոգևշնչումը նախնիների փառքով, առանց ժամանակակից Հայաստանի մասին որոշակի գաղափար տալու, առանց հայ մարդուն նախապատրաստելու զինված ինքնապաշտպանության

---

[1] «Անահիտ», Ա. տարի, 1898, թիվ 1, էջ 3:

[2] «Անահիտ», Ա. տարի, թիվ 3, էջ 87:

համար,— այնուամենայնիվ ստեղծվել էր մեծ վերելք, որը պսակվեց ռուս-թուրքական պատերազմի ավարտին Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով: Ըստ Զոպանյանի, այդ շրջանի հիմնական բովանդակությունը այն էր, որ արևմտահայությունը կարուկ շրջադարձ կատարեց դեպի Ռուսաստան: Սան-Ստեֆանոյի ժողովին ուղղած դիմումով Ներսես պատրիարք Վարժապետյանը իր «փառքի տիտղոսը» ստեղծեց, «նոր թվական» մը բացավ հայ ժողովրդին, կրոնական գոյություն ունեցող ազգը քաղաքական կռվանի վրա մը դրավ, հայուն շահերուն եվրոպական հզոր պաշտպան մը գտավ, Ռուսը»[1]:

Ինչպես պիտի տեսնենք և ստորև, Զոպանյանը հայ ազգային-ազատագրական պայքարում թույլ տված սխալների հիմնական բովանդակությունը կապում է ժողովրդի և շարժման ղեկավարության քաղաքական կողմնորոշման հետ: Եվ, եթե ճիշտ է համարում Վարժապետյանի առաջին քայլը, ապա զայրույթով արձանագրում է նրա հետագա քայլերի ճակատագրական հետևանքները հայ ժողովրդի ֆիզիկական իսկ գոյությունը պահպանելու տեսակետից:

«Բայց այդ առաջին քայլը միակ ուղիղ քայլը եղավ: Անկից հետո, ամեն ինչ որ Վարժապետյան ըրավ, և ամեն ինչ որ իրեն հետ և իրմե ետք հայերը ըրին, այդ քայլին ջնջումը եղան և սխալներ էին... Սան-Ստեֆանոյի դիմումեն հետո Ներսեսի ընթացքը քրեական սխալներու շարք մը եղած է»[2]:

Սան-Ստեֆանոյից հետո մինչև Բեռլինի կոնգրեսը անցած մի քանի ամիսների ընթացքում թուրք կառավարությունը ճարպիկ քաղաքականությամբ հաջողացնում է համոզել Ներսեսին և նրա մերձավոր խորհրդականներին՝ Գրիգոր Օտյանին ու Սերվիչենին, թե Թուրքիան շատ ավելին է աներու հայության համար, քան Ռուսաստանը, որի հովանավորությունը խնդրել էին հայերը: Թուրքական դիվանագիտական այդ խաղի հաջողության մեջ մեծ դեր են ունենում «կառավարական պաշտոն ունեցող քանի մը հայեր, ինչպես Հովհաննես Նուրյան և այլն, որոնք պիտակցաբար միջնորդի և մատնիչի դեր կատարեցին»[3]: Իսկ վարժապետյանը, Օտյանը, Սերվիչենը և ուրիշներ անգիտակցաբար ծուղակնընկան, գրում է Զոպանյանը:

---

[1] «Անահիտ», Ա տարի, թիվ 3, էջ 89:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Նվ ահա, դեկավար այդ շրջանակը որոշում է Ռուսաստանի փոխարեն դիմել եվրոպական վեց տերություններին, որոնց օժանդակությամբ ձգտում է ստանալ հայկական անկախություն: Ժամանակին դանվեցին սակավաթիվ հայեր «ժողովրդական կուսակցությունից», գրում է Չոպանյանը, որ բողոքեին և զգուշացրին Ներսեսին՝ նման քայլ չանել: Բայց Ներսեսը դործից առանց նրանց կարծիքը հաշվի առնելու, ժողովրդի կարծիքն էլ չհարցրեց և «իր էֆենտիներուն հետ պլուս պլիսի որոշեց ամեն բան և դործադրեց անկախաբար»:

Երիտյան Հայրիկի պատգամավորությունը մեկնում է Բեռլին, իսկ նրա մի անդամը պաշտոն է ստանում՝ անցնել Պետերբուրգ և ռուս կառավարությունից խնդրել հովանավորություն: Բայց Վարժապետյանը, արձանագրում է Չոպանյանը, այդ «աքանչելի գաղափարը» ձախողում է: Հետագրով նա զրկում է Նարպեյին իր լիազորություններից, այդ մասին հրապարակում «Մասիսում», որից էլ եվրոպական մամուլին է անցնում: Սա արվում է Թուրք կառավարության դրդումով: «Նվ ահա, առաջին անիրը հայ ազգին դեմ դործված: Հայոց կողմն ասիկա նախասահնք մըն էր Ռուսիո դեմ: Ռուսիո բանակը երթալն և ռուսական պաշտպանությունը խնդրելն հետո Ներսես պաշտոնապես նո կասներ իր դիմումը, կուրանար իր նախկին ընթացքը»[1],— ասում է Չոպանյանը:

Չոպանյանը մեղադրում է, թե Պոլսի շրջանակին և թե պատգամավորությանը, որը անվերապահ կատարում էր Պոլսից եկած հրահանգները: Պատգամավորությունը հայտարարում է, թե հայերը ուղղակի դժգոհություն չունեն Թուրք կառավարությունից և իրենց խնդրածը միայն բարենորոգություններ են: Միևնույն ժամանակ զբաղվում են ինքնախաբեությամբ, գաղտնի շփումներ ունենում Անգլիայի դեկավար դեմքերի հետ, հուսալով, թե «իրենց այդ գոհողության, այդ հանդգնության (Ռուսաստանի դեմ լինելը— Կ. Դ.) փոխարեն, Անգլիա և Անգլիո հետ ամբողջ Արևմտյան Եվրոպան, հայոց պիտի շնորհեր թագավորություն մը, Ռուսին առջև պատնեշ կանգնելու համար»[2]: Դրանով վիրավորվում էր Ռուսաստանը, այսինքն՝ «այն զորությունը, որ հայոց պաշտպանությունը ստանձնած էր դրական հոդվածով մը, և

---

[1] «Անահիտ», Ա տարի, թիվ 3, էջ 80:

[2] Նույն տեղում:

այն զորությունը, առանց որուն կամքին անհնար է որ հայոց բախտը վճռվի»[1]:

Հատկանշական է, որ Զոպանյանը ինքն է ընդգծել վերը բերված տողերը, շեշտելով, որ թե 1878 թ. և թե իր «Պատասխանատվությունները» հոդվածը գրած օրերին առանց Ռուսաստանի կամքի «անհնար էր» հայոց բախտի որոշումը:

Զոպանյանի քաղաքական հայացքների համար առհասարակ բնորոշ է, երբ նա դեպքերի օբյեկտիվ վերլուծության ընթացքում մերթ ընդ մերթ անում է հետևություններ կամ մտահղումներ, որոնք սուբյեկտիվ տարրը առաջին դիրքի վրա են դնում այս կամ այն պատմական, հասարակական կամ քաղաքական եղելության ճակատագրում: Այս դեպքում էլ նա մեծ տեղ է հատկացնում Ռուսաստանի «վիրավորված լինելու» սուբյեկտիվ հանգամանքին և, Բեռլինի կոնգրեսում ռուս դիվանագիտության վրած պարտությունը (մասնավորապես հայկական հարցում), ինչպես նաև հետագա տասնամյակներում ցարիզմի հակահայ քաղաքականությունը ջանում է բացատրել միայն այն փաստով, թե Ռուսաստանը վիրավորվել էր հայ ղեկավարության հակառուսական ընթացքից: Սուբյեկտիվ տարրի գերագնահատման միտում է նաև այն, որ Զոպանյանը համոզված էր, որ եթե Բեռլինի կոնգրեսում հայոց պատվիրակությունը բաղկացած լիներ ճկուն դիվանագետներից, ինչպիսին էր Նուպար փաշան, որի թեկնածությունը մերժել էր Ներսեսը, ապա հարցերը ավելի նպաստավոր լուծում կստանային: Հասարակության պատմության նկատմամբ իդեալիստական աշխարհայացքի այս սահմանափակության դրսևորումը, սակայն, բնավ չէր խանգարում, որպեսզի հայ աղգային-ազատագրական պայքարի քաղաքական կողմնորոշման հարցում Զոպանյանը կանգներ միանգամայն ճիշտ և առողջ դիրքերի վրա:

1907 թվականին, անդրադառնալով իր «Պատասխանատվությունները» հոդվածին, Ա. Զոպանյանը արդեն որոշակիորեն ավելի ռեալ է նայում հարցին: «Ինչ որ անվիճելի կը թվի ինձ, այն է, որ Ներսեսյան խումբը Անգլիո վրա չափազանց հույս դնելու սխալը գործած է: Երբեք չեմ խորհած, թե հայք այդ պահուն ոչ մեկ կարևորություն ընծայելու չէին Անգլիային, անհրաժեշտ էր ի նկատի ունենալ այդ ահագին կշիռ ունեցող տարրը,

[1] «Անահիտ», Ա. տարի, թիվ 3, էջ 80:

բայց պետք էր ըմբռնել թե անգլիական դիվանագիտությունը «թշնամի» էր հայոց ներքին ամենեն սուրբ բաղձանքներուն, մինչ ռուսը իր շահերուն բերմամբ՝ դաշնակից էր հայուն»[1]:

Նույն առիթով նա խստորեն պատասխանում է «հայ պոլիտիկոաններին», որ «կը նախընտրեին թուրքը ռուսեն, որը արդեն Արևելյան Հայաստանի մի կարևոր մասում հաստատել էր «ապահովություն պատվո, կենաց և ընչից»: «Սպասկուլ» ռուսեն միթացուական վախն է միշտ, որ այդ դգացման խորը կը թաքչի,— գրում է Զոպանյանը,— և ծայրահեղ օգային, անհիմ հույս Անգլիո վրա դրված և, որու համեմատ, այդ պոլիտիկոանները կերազեին ունենալ ինքնավարություն մը շնորհիվ Անգլիո և մինչև իսկ հավանությամբ թուրքին»[2]:

Բևռլինի կոնգրեսում հայերը ստանում են բարենորոգությունների տարատամ խոստումներ: «Գիտենք, թե Բ. Դուռը ինչպես դործադրից իր խոստումը,— գրում է Զոպանյանը:— Եվ ինչո՞ւ գործադրեր, քանի որ 61-րդ հոդվածը չէր ըսեր, թե այն պարագային, ուր Բ. Դուռը պարտադանց մնար, Եվրոպան ինչ պիտի ըներ: Բ. Դուռը, որ կը սոսկար տեսնելով թե Ռուսիան անձնապես հայոց գործը վրան առնել կուզե, անհոդ էր, երբ այդ գործը կանցներ եվրոպական վնց պետության ձեռքը, որոնք պիտի չկրնային համաձայնիլ այդպիսի խնդիր մը լուծելու համար»[3]:

Զոպանյանը մանավոր վրդովմունք է հայտնում այն առիթով, որ Վարժապետյանի խումբը Բևռլինի կոնգրեսի արդյունքները ժողովրդին ներկայացնում է որպես հաղթանակ, ըստ էության ապակողմնորոշելով և դեմոբիլիզացնելով նրան: Ներսես պատրիարքը ոգևորված ճառ է ասում՝ ավետիս տալով հայությանը: Դանվելցին, սակայն, մարդիկ, նույն «ժողովրդական կուսակցությունն», պոհունակությամբ արձանագրում է Զոպանյանը, որ ծառացան այդ ապօրինի դործի և ոգևորության դեմ: «Ներսեսի ճառին վրա շաբաթ մը չանցած, թուրք կառավարությունը իր բարենորոգումները կը սկսեր, ձերբակալելով Եղիա Տեոնեսյանի պես անձեր, որոնց միակ հանցանքը ազգային երգարան հրատարակած ըլլալն էր: Քիչ հետո հայկական թատրոնը կը փակ-

---

[1] «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 10—12, էջ 165:

[2] Նույն տեղում, էջ 162:

[3] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 3, էջ 91:

ել եր, հայ լրագրությունը կը սեղմվեր, դպրոցները քննության կը ենթարկվեին և գավառներուն մեջ հալածանքը կը շեշտվեր։ Թե Համիդ ինչ խղճմտությամբ կատարելագործության հասցուց այդ բարենորոգումները և թե Անգլիա որ աստիճան անտարբեր աչքով դիտեց այդ ամբողջը, դիտենք, և դառնապես դիտենք»[1]։

Հետագայում Ներսեսը և իր շրջապատը պղծում են, բայց արդեն ուշ է լինում։ Զոպանյանը բերում է Գրիգոր Օտյանի և Սերվիչենի խոստովանությունները։ Օտյանը, օրինակ, ասում է. «Տարի մը աշխատեցանք սա 61-րդ հոդվածը դնել տալու համար, երանի թե հիմա երկու տարի աշխատեինք և կարենայինք ջնջել զայն. այդ հոդվածը վնասակար պիտի ըլլա մեր ազգին»[2]։

Զոպանյանի անխախտելի համոզմունքն էր, որ հայ ազգի ֆիզիկական ոչնչացումը սուլթանական Թուրքիայի կառավարողների հղացած ու մշակած ծրագիրն է, որի դործադրությունը պարզապես ժամանակի հարց էր։ Ուրիշ խնդիր է, որ անխոհեմ արկածախնդրությամբ որոշ հայ տարրեր առիթներ ընծայեցին Թուրքիային՝ փութացնել այդ ծրագրի դործադրությունը։

«Բաց նամակ դ-ր Բելքին» հոդվածում Զոպանյանը հենց այդ հարցերն է պարզաբանում։ Նա ցույց է տալիս, որ ջարդերի հիմնական պատճառը «հայ խռովարարներու մեկ քանի ապըստամբական շարժումները» կամ քրդական Համիդիե զորագնդերի դոյությունը չէր, ինչպես կարծում էր Բելքը։ «...Այդ երկու իրողությունները ուրիշ բան չեն բայց եթե ճակատագրական արդյունքը սկզբնական պատճառներու, որոնք նույն ինքն մահմեդական բռնապետության վրա հիմնված Թուրք ռեժիմին իսկությանը մեջ կը կայանա. ատոնք բերթ արտահայտություններն են հիվանդության մը, որուն արմատները կը կայանան ոչ հայ տարրին, ոչ իսկ քուրդ տարրին, այլ Թուրք կառավարական դրության մեջ»[3]։ Եթե երկիրը լավ կառավարված լիներ, շարունակում է Զոպանյանը, եթե կառավարությունը մտադրություն չունենար օգտվել առիթից, ապա հիշյալ «մեկ քանի փոքրիկ ապստամբ շարժումները» չէին կարող զանգվածային ջարդեր առաջացնել։

Զոպանյանը նկարագրում է Թուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումները՝ չնչքնել և Թուրք տարրի ավելա-

---

[1] «Անահիտ» Ա տարի, 1898, թիվ 3։

[2] Նույն տեղում։

[3] «Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 3, էջ 88։

ցումը հայկական նահանգներում, քրդերին ազատություն տալը հայությանը հարստահարելու, կողոպտելու և բռնաբարելու գործում, համիդին հնձելազորի ստեղծումը, մամուլի և դպրոցների հետագա սեղմումները և այլն, որով գործադրվում է հայատյաց ծրագիրը։

Եվ ահա այս միջնորդում, ի տարբերություն նախորդ սերընդի, որը «հրապոյր, ճառախոս, խանդավառ էր... կը կարծեր թե ազգը ֆրազներով, մաքուր մարդասիրությամբ Եվրոպան պիտի փրկեր Հայաստանը», առաջ եկավ «անգլիական հույներով օրորուն» նոր սերունդ, որը ֆրազների փոխարին ուզեց գործի դիմել, բայց նրա ճիղերից ծնվեց միայն արկածախնդրություն։ «Եվ ծագեցավ «Հայկական հեղափոխությունը»։

«Հայկական հեղափոխություն» բավածը անհիմ ու օդային նկարագիրն ունի անտանելի և առնվի 61-րդ հոդվածին, անորոշակ է»[1],— գրում է Արշակ Զոպանյանը։ Ներսես Վարժապետյանի խմբին Զոպանյանը համարում է «առաջին պատասխանատուները», որոնց քաղաքականությունը հայ ժողովրդին դնում էր վտանգավոր կացության մեջ և փութացնում «Թուրքին կողմն հալածանքներու ծրագրի մը գործադրությունը»։ Բայց առաջին սխալը ծնունդ է տալիս երկրորդ սխալին։

«Հայկական հեղափոխություն» ասելով այս պարագայում Զոպանյանը նկատի ուներ ժամանակի կուսակցությունների տարանջատ տակտիկական լուծումները. ինքը լիովին պաշտպանում էր ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը որպես խորությամբ նախապատրաստած ժողովրդական ամբողջական վինված ելույթ։ Այդ կուսակցությունները հաշվի չնատեցին ոչ ժողովրդի ներքին և ոչ էլ միջազգային հնարավորությունների հետ։ Նրանք «ժամանակ չէին կորսնցներ ուսումնասիրություն, բազդատություն, խորհրդածություն ընելով։ «Ոտքի ելնք» կը գոչեին, և այսչափ։ Ինչպե՞ս, ո՞ւր, ի՞նչ հույսով, ինչի՞ վրա կրթնելով, ինչի՞ հանգելու համար։— Ասոնք ավելորդ հարցումներ էին»[2]։

Զոպանյանը սքանչացման ու հարգանքի զգացումներ ուներ այն երիտասարդության հանդեպ, որը, արհամարհելով բոլոր արհավիրքները, կյանքը զոհելով դնում էր «երկիր»՝ դնքը

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 3, էջ 93։

[2] Նույն տեղում։

ձեռքին մասնակցելու այդ գործողություններին: Նրանք ալնվորեն հավատացած էին, թե հայրենիքն են փրկում: Ժողովրդի ծոցից սերած այդ դյուցազնական ուժը վկայում էր այն մասին, թե հայ ժողովուրդը «իր գոյության հարցը լուծելու համար հարկավոր բաքուն կորովն ուներ»: Բայց դա հերոսների ողբերգությունն էր, որ վստահելով իրենց ղեկավարներին, հավատալով նրանց «հեռատեսությանը», ըստ էության արյուն թափեցին, ցանկալի արդյունքի չհասնելով: Դա «վարիչներուն ոճիրն» էր,— այսպիսին է Ա. Չոպանյանի եզրակացությունը:

Չոպանյանը հանգամանորեն անդրադառնում է դարավերջյան բոլոր դեպքերին: Նա սիրալ է համարում Գումգափուի ցույցը, Սասունի ապստամբությունը որպես վաղաժամ և անպատրաստ[1] փորձ, որանից հետո Պոլսում կազմակերպած ցույցը:

Տարանջատ ելույթների տակտիկան քննադատելով, Չոպանյանը գտնում է, որ դրանք ջլատում էին ժողովրդի ուժերը, նույնիսկ ինքնապաշտպանության պարագայում անհրաժեշտ միջոցներ այլևս չէին գտնվում: Հետաքրքրական է այդ տեսակետից նրա վերաբերմունքը Սասունի և Զեյթունի դեպքերի առթիվ: Նա դատապարտում է Սասունի կազմակերպիչների քաղաքական կուրությունը և դրվատում, որպես գտնում Զեյթունի ինքնապաշտպանությունը:

«Սասունի մեջ դիմադրություն մը կազմակերպեցին, որ ջարդի մը հանդեցավ: Քաղաքական այնպիսի կացության մը մեջ, ուր ոչ ոք կուզեր և կրնար Հայաստանով զբաղիլ, Ռուսիո ճիշտ ոտքին տակը, Անգլիացին նկած ափ մը մարդով, հինգ հրացանով ու տղայական հույսերով այդ ապստամբությունը մահացու սխալ մըն էր»,— գրում է Չոպանյանը: Հատկանշական է, որ նա միանգամայն ճիշտ է գնահատում Անգլիայի դիվանագիտության խաղերը Սասունի ապստամբության առթիվ. «Սասունի դեպքը օգտակար եղավ Անգլիո տեսակ մը շահերուն: Անգլիա ահագին վայնասուն փրցուց, տաճկին դեմ զայրույթի մրրիկ մը հանեց. «պետք է Թուրքը վռնդել Եվրոպայեն» ըսելու չափ առաջ գնաց, անուղղակի կերպով դրդռեց հայերը և վերջին բոլոր դեպքերուն և աղետներուն շարժառիթ եղավ,— և անտին Սուլթանի գործը կարգադրեց ու Եվրոպոսի գրավումը ապահովեց»:

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 9, էջ 238:

Դարավերջյան դեպքերի շղթայում Զոպանյանը ճիշտ է գտնում Զեյթունի ապստամբությունը։ Այստեղ պատահածը, ըստ նրա, ուրիշ տեղերում սարքված դեպքերի նման արյուն թափել տալու համար արված խոովություն չէր։ Զեյթունը, տեսնելով, որ «տաճիկը իր վրա կուգար», որոշից զննքը ձեռքին պաշտպանվել և վեց ամիս դիմադրից։ Հենց այստեղ էր, որ պետք էր գործ աներին ազգայնական կուսակցությունները։ Բայց «երբեք հայ հեղափոխության վարիչներուն ընթացքը այնքան ապիրատ, այնքան բացարձակորեն, աննկուղելիորեն ոճրագործ չեղավ, որքան այդ դեպքին»[1]։ Հնչակյան կուսակցության դեկավար նպատակը բավարարվում է պարծենալով, թե այդ ապստամբությունը ինքն է կազմակերպել։ Դաշնակցությունը գործը նկատում է հնչակյան և մատը մատին չի խփում.«տիկա ղիրինք չէր հետաքրքրեր»։

Դաշնակցությունը, որ նախանձով էր նայում հնչակյաններիե «հաջողություններին», որոշում է ինքն էլ «ազմուկ հանող բան մը ընել»։ Եվ դրավճին «Բանկ Օտոմանը»։ «Ատոնք կուզեին «Եվրոպան վախցնել»։ Կուզեին եվրոպական շահերը վտանգել, որպեսզի բռնի եվրոպան տուրքվիր հայերուն փափագը կատարել։ Եվ վեց հազար հայ ալ պակսեցավ աշխարհեն. Ալ Սուլթանը չէր, որ իրենց առջև ծնրադիր կդողար։ Ամբողջ Եվրոպան սարսափեցուցեր էին...»[2]— դառն հեգնանքով գրում է Զոպանյանը։

Բևռլինի կոնգրեսում որդեգրված սխալը ավելի ևս խորացվեց դարավերջյան քաղաքական դեպքերի ընթացքում, նկատում է Զոպանյանը։ Պատասխանատու գործիչները մոռացան, որ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով Ռուսաստանն էր դրեր հայկական խնդրի հիմնաքարը, և ծայրահեղ անգլիամոլություն դրսևորեցին։ Այդ սխալը շարունակվում է մինչև այսօր էլ, գրում է «Անահիտ» խմբագիրը 1901 թվականին և պաշտպանում ու քաջալերում բոլոր նրանց, ովքեր ջանում են դարմանել թույլ տրված սխալը. «Այդ ուղղությամբ ամենեն կարևոր դերը խաղացողը և ամենեն մեծ արդյունքն առաջ բերողը Ջանշյանը եղավ իր հոյակապ հայամատյանով, ուր Ռուսիո բոլոր ուժերը հաջողած էր կապել հայկական դատին»[3]։

---

[1] «Անահիտ», Ա տարի, թիվ 3, էջ 97։

[2] Նույն տեղում, էջ 98։

[3] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 9, էջ 235։

Չոպանյանի ելույթից հետո զանազան կուսակցությունների մամուլում սկսուկ բարձրացավ, թե «Անահիտի» խմբագրապետը «դավաճանում է» «հայկական հեղափոխությանը», իր քննադատությամբ ջլատում նրա ուժերը: Արդեն ճիշտ նման տիպի բնութագրություններ էին տրվում այդ մամուլում բոլոր նրանց, ովքեր համարձակվում էին քննադատել ազգակործան արկածախնդրությունը: Չոպանյանի քննադատության իմաստը ոչ թե այն էր, որ նա առհասարակ իբր դեմ էր ազգային-ազատագրական շարժմանը, ինչպես նրան մեղադրում էին հակառակորդները, այլ որ, ըստ նրա, այդ շարժումը առաջնորդվում էր սկզբունքային սխալ ճանապարհով, գնքերը հրահրվում էին անխմաստ, անժամանակ և անպատրաստ: «Պիտի ըգա՞նք թե ազգային դատին դեմ որքան աննկարելի հանցանք մը գործեցին անոնք, որ պատասխանատվություններն ունին (և ամենքն ալ, ասանց խտիրի, Սասունի դեպքը կազմակերպողներեն սկսյալ մինչև վանի խոռվության նախաձեռնակները), տարտղնելով ու տեղափոխելով մեր խնդիրը, զայն տհաս կազմակերպությամբ և անպատեհ շրջանի մը երևան հանելով, և մանավանդ անխորհուրդ և անհաշիվ հանդգնություններու ձեռնարկելով, որոնք մեր վրա բերին ահարկու աղետքներ»[1]:

Պատասխանելով իր քննադատներին, Չոպանյանը գրում է, թե հայկական դատը չլուծվեց ոչ միայն այն պատճառով, որ արտաքին պայմանները աննպաստ էին, այլև ու մանավանդ, որովհետև «մենք իսակ էինք, գեշ պատրաստված էինք մեր գործին, անիրագործելի, տարտամ ու հակասական ծրագիր մը ունեինք (եթե կարելի է ծրագիր մը անվանել զայն)... Ճնշված ժողովուրդներուն դատը կը լուծվի երկու պայմանով, նախ՝ երբ այդ դատը որոշապես գծված է... երկրորդ՝ երբ այդ ժողովուրդը իր դատը շահելու համար չէ թե մարտիրոսի արյուն, այլ հերոսի արյուն կը թափի և կը ցուցնի, թե տերն է այն հողին, ուր ազատ ապրիլ կուզե»[2]:

Բաղմիցս և տարբեր առիթներով Ա. Չոպանյանն ընդգծել է, որ ինքը դատապարտում է հայտնի կուսակցությունների տակտիկան. «Կատեմ (երբեք պիտի չդադրիմ կրկնելե) գործելու

---

1 «Անահիտ», Ա տարի, թիվ 2, էջ 83:

2 «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 7, էջ 225:

այն անբարոյական մեթոդը, որով գործիչներ գողունի կը մանեն վան կամ որևէ քաղաք մը, գնդը մը կը բռնկցնեն ու կը փախչին, թողուվ, որ ժողովուրդը ջարդվի և կարծելով, թե այդ ջարդը եվրոպական միջամտության հառաջ պիտի բերե։ Այդ պայմաններուն մեջ, եթե նույնիսկ օտար միջամտության հառաջ գա, ջարդվողին իրապես նպաստավոր որևէ ձև չի կրնար առնել ապիկա հասկնալու ենք»[1]։

Շատ կարևոր և բովանդակալից է վերջին պիտույքությունը։ Զոպանյանը այդ բնդը զարդացնում և պարզաբանում է այն իմաստով, որ մարտիրոսի արյունով Եվրոպայի միջամտությունը ապահովելու դեպքում էլ հայ ժողովուրդը որևէ շահ պիտի չունենար։ Եթե եվրոպական ուժերի գալու օրը մենք նրանց ընդառաջանանք ընդի վրա կռնած, ապա նրանք «մեզ պիտի կոխկրտեն, մեզ պիտի ձուլեն, մեզ պիտի հալեցնեն իրենց մեջ»[2]։

Հետագայում, մեկ-երկու տարով, Զոպանյանը անդրադարձել է «Անահիտի» առաջին տարիներին գրված իր հոդվածներին և, մասնավորապես, «Պատասխանատվությունները» հոդվածին ու հայտարարել, թե որոշ հարցերում ինքը սխալվել է։ Նա նշում է այդ հարցերը, որոնք խիստ մասնակի բնույթ են կրում ու ոչ մի կերպ չեն դիպչում իր սկզբունքային դիրքորոշմանը, որի վրա հաստատ մնաց մինչև վերջ։ Դրա ապացույցն է նաև 1933 թվականին գրված մի հոդվածը, որտեղ, ավելի քան երեսուն տարի հետո, պատմության դառը փորձով ամրապնդված, նա գարձյալ նույնն է հաստատում։

«...Ես հպարտ եմ այդ դպաստացուցիչ ուղղության առաջին արտահայտիչներին մին եղած ըլլալուս... Այդ ձևով Հայաստանն աղատելու կարելիությունը երբեք չէի տեսած և ատոր համար ոչ հնչակյան, ոչ դաշնակցական կուսակցության անդամ եղած էի։ Երբ հարյուր հազար հոգի պարտք տենը կորսնցնելնեն հետո, պարտականություն էր կոչ ընել այս ժողովրդին, որ ջախջախվելու դատապարտված մահնական ցույցերու սիստեմին մեջ համառելով ջարդերու պատրվակ հայթայթելու տեղ, իր ուժերը խնայեր և պատեհ րոպեի մը, լուրջ պատրաստությամբ, որոշ ու նպաստավոր շրջանի մը մեջ (և ոչ թե ամեն տեղ) ապստամբու-

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 7, էջ 225։

[2] Նույն տեղում, էջ 226։

թյուն մը հարուցանելու հաւակացներ իր զոհվելու պատրաստ· կորովները և հասներ դրական ու տևական արդյունքի մը։

Ժողովուրդ մը՝ դարերից ի վեր մեծապանգված կուտրածք· իր կառավարական միջոց գործածող բարբարոս իշխանության մը զարշապարին տակ նևնելն ու այդ արյունահեղություններեն· հուզվելով միջամտող ու հայկական հարցը դրապես լուծող «եվ· րոպական վեց տերությանց» ցնորական հույսին կառչիլը հեղա· փոխություն չէր ինծի համար, այլ ինքնասպանություն»[1]։

Չոպանյանի նյութները սվիններով դիմավորեցին տարբեր· կուսակցությունների մամուլում, բայց գտան նաև լայն դրա· կան արձագանք ու ջերմ կողմնակիցներ շահեցին։ Բանաս· տեղծ Վահան Թևքեյանը, օրինակ, 1900 թվականի մայիսի 12-ի նամակում գրում էր Չոպանյանին. «Ինչ որ «Անահիտին» մեջ կը· սիրեմ մասնավորապես՝ քաղաքական ուղղություն է ամբողջո· վին և Ձեզ այդ մասին ամբողջ սրտով կը շնորհավորեմ»[2]։ Ֆրանսիացի հրապարակախոս Վիկտոր Բերարը նամակ է ուղղում խմբագրությանը, որի մեջ հայությանը խորհուրդ է տալիս չտար· վել անհիմն գործերով, այլ նախապատրաստվել հարատև աշխա· տանքով, համբերատարությամբ և ճշգրիտ հաշված ճիգ գործա· դրել[3]։ Հանդեսում տպագրված մի թղթակցության մեջ կարդում ենք. «Արդեն Ձեզ կը բզկտեն կարգ մը լրագիրներու մեջ։ Ցա· վակցության արժանի չեք ատոր համար, շնորհավորության ար· ժանի եք»[4]։ Եվ, վերջապես, լուսաբանող օրինակների ցանկը· փակած լինելու համար, բերենք նաև Լեոյի շահեկան մի գրու· թյունը, որը վերաբերում է Բեռլինի կոնգրեսի շրջանում հայերի· քաղաքական կողմնորոշմանը։ 1908 թվականի հունիսի 11-ին Լեոն գրում է Չոպանյանին. «Էջմիածնի դիվանատունը ևս գտա փոշիների մեջ... կարևոր քաղաքական դոքյումաններ, որոնք վե· րաբերում են հայոց հարցի ծագման ժամանակներին։ Ապա· ցուցվում է Ձեր հայացքի ճշտությունը, որ ռուսները ամեն կերպ աշխատում էին հայկական հարցն էլ իրանց ձեռքն առնիլ, բայց· հայերը խուսափում էին ռուսներից»[5]։

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Ե տարի, 1933, թիվ 1—2, էջ 77։

[2] ԳԱԹ, ԱՉՖ, I բաժին, № 2317։

[3] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 4, էջ 125։

[4] Նույն տեղում, էջ 145։

[5] ԳԱԹ, ԱՉՖ, I բաժին, № 2835։

Հայության քաղաքական կողմնորոշման հարցը, ինչպես ասացինք, Չոպանյանի քննադատության առանցքն էր հանդիսանում։ Չոպանյանը, բնականաբար, դիտակցում և գնահատում էր, որ արևմտահայությանը՝ դեպի Ռուսաստան քաղաքական կողմնորոշման հարցում մեծ դեր են խաղացել արևմտահայ 80-ականները, ինչպես նաև առանձին մտավորական-հասարակական գործիչները։ Նա, օրինակ, դրական է գնահատում Զևրալի գործունեությունը այդ ուղղությամբ «Լ'Արմենի» թերթում։ Միևնույն ժամանակ անհերքելի է հենց իր՝ Չոպանյանի դերը, մանավանդ նկատի ունենալով, որ «Անահիտը», ի տարբերություն Զևրալի ֆրանսերեն թերթի, բավականին լայն տարածում ուներ հայ ընթերցողների շրջանում։

Գնահատելով այդ քննադատության արդյունքները, Չոպանյանը 1907 թվականի վերջերին գրում էր. «Անհրաժեշտ էր աչք մը նետել 1878-ի կարևոր շրջանին հայ գործունեության վրա և հարցական նշան մը դնել անոր դիմացը, քանի որ այդ շրջանին ժառանգություն ձգված անգլիամոլությունն ու ռուսաոյացությունը կը շարունակվեին մնալ անփոփոխ և վնասել մեր դատին. պետք էր սխալը իր աղբյուրին մեջ մատնանիշ ընել։ Այդ գործը կատարվեցավ և ապարդյուն չմնաց։ Այսօր հայոց մեծամասնությունը ըմբռնած է, թե առանց Ռուսիո աջակցության հայոց հարցը չի կրնար լուծվիլ»[1]։

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Դարասկզբի միջազգային հարաբերությունների գնահատականը և Չոպանյանի հայացքները ազգային-ազատագրական պայքարի հետագա ուղիների վերաբերյալ

Չոպանյանը չբավարարվեց նախորդ էտապներում թույլ տրված սխալների քննադատությամբ, որով նա ըստ էության մերժում էր թե քաղաքական կողմնորոշման մինչ այդ եղած ուղղությունը և թե գործադրված տակտիկական մեթոդները։ Բնականաբար, նա պարտավորություն էր զգում շարադրելու իր հայացքները հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի

[1] «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 10—12, էջ 177։

զարգացման հետագա ուղիների մասին և ինչ-որ չափով իր ան-հատական գործուն ճիգերը ներդնելու այդ պայքարի հաջողութ-յան գործում: Ազատագրական պայքարի ուղիների որոնումը կապված էր թե ներքին և թե արտաքին հնարավորություննե-րի օբյեկտիվ վերլուծության հետ, որպեսզի տեսանելի լիներ ժողովրդի պոտենցիալ ուժերը և արտաքին աշխարհում նրա հնարավոր դաշնակիցները: «Անահիտ» հանդեսում Զոպանյանը կատարից այդ գործը իր գաղափարական-քաղաքական ըմբռնումների կարողության սահմաններում:

XX դարն սկսվում էր միջազգային խառնակ իրադրությունում, երբ իմպերիալիստական պետությունների խմբակցությունները տենդագին նախապատրաստվում էին աշխարհի նոր վերաբաժանման, երբ կապիտալիստական երկրներում առավել սրվում էին կապիտալի և աշխատանքի հակասությունները, իսկ Ռուսաստանում հեղափոխությունն արդեն օրակարգի հարց էր դարձել: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում իր ջանքերը ներդնող որևէ լրջմիտ գործիչ, նթե նա չէր ուզում արկածախնդրությամբ պարապել, պարտավոր էր հաշվի նստել այդ գործոնների հետ:

«Անահիտը» արևմտահայության շրջանում եղավ այն բացառիկ պարբերականներից մեկը, որ ուշի ուշով հետևում էր միջազգային կացությանն ու բովանդակալից հոդվածներով, քրոնիկներով և այլ նյութերով արձագանքում նրան:

Ուշագրավ է, որ դեռևս 1898 թվականին Զոպանյանը, թափանցելով քաղաքական անցուդարձերի խորքը, դուշակում էր մոտալուտ համաշխարհային պատերազմը, մեղադրելով կապիտալիստների «անկուշտ ծարավը»: «Անահիտի» երկրորդ համարում նա գրում էր. «Հակայական պատահարներ կը պատրաստվին, տիեզերական դղրդումի մը երկարատև ու տաժանելի նավակատիքին մեջ ենք և գիտության բերած բոլոր հանդարտացումեն, մարդկային եղբայրության մեծ քարոզեն հետո, զոր այնքան ազնիվ մտածողներ հնչեցուցին այս հակասական դարուն մեջ, բոլոր այն վսեմ ջանքերեն հետո, զոր գիտությունը, դրականությունը և գեղարվեստը թափեցին սահմանները ջնջելու և զենքը մուսեոնի առարկա մը դարձնելու համար, ահա կը տեսնենք, որ դիվանագիտությունը, պրամատևրներուն անկուշտ ծարավեն մղված, տիրապետելու նորանոր և առավել քան երբեք մեծ տենչանքով մը կը գալարվի, ու կը ղգանք հասունանալը պա-

«տերազմներու ամենեն վիրխարին, որ աշխարհս բովանդակ թատերաբեմ պիտի ունենա»[1]:

Դարասկզբի միջազգային խաչմերուկներում Չոպանյանը տեսնում է երկու գլխավոր ուժեր՝ Անգլիան և Ռուսաստանը, ինչպես նաև աստիճանաբար իրենց պարտադրող Գերմանիան ու Ֆրանսիան: «Անահիտի» խմբագիրը գտնում է, որ հայ ժողովուրդը միայն իր ուժերով ժամանակակից կացության մեջ չի կարող թոթափել Թուրքական վայրագ լուծը և պարտավոր է բնական դաշնակիցներ փնտրել: Բնականաբար, Չոպանյանը այդ դաշնակիցը փնտրում է հիշյալ չորս տերությունների մեջ: Անգլիայի քաղաքականության վերաբերյալ Չոպանյանի կարծիքին մենք արդեն տուիլ ենք ծանոթանալու: Այդ կարծիքը մնում է անփոփոխ նաև դարասկզբին: Վիլհելմյան Գերմանիայի նկատմամբ Չոպանյանի հայացքները նույնպես տարակուսելու տեղիք չեն տալիս. Գերմանիայի արևելյան քաղաքականությունը նա անվանում է «պագդաթնականին հասած թրքամոլություն»: «Պատմությունը պիտի չմոռնա,— գրում է նա,— որ Գերմանիո կայսրը գուրգուրանքով ու հիացումով դիտեց իր բարեկամ սուլթանին հիմարական քանդումին գործն ի Հայաստան, ի Կրետե և ի Հունաստան և, թե փլատակներու վրա կոխելով, ան դնաց անեմել արյունթաթախ ձեռքերը «մեծ մարդասպանին», անոնցմե ընդունելու համար իր մեղսակից լռության փոխարժեքը: Եվ որքան ալ գերման ժողովուրդը անպատասխանատու ըլլա իր վիճակագեներուն գործած հանցանքին, այդ ամոթը անջինջ պիտի մնա Գերմանիո ճակատեն»[2]:

Գործելով Փարիզում և բազմաթիվ կապեր ունենալով Եվրոպայի և հատկապես Ֆրանսիայի թե պաշտոնական և թե մտավորական շրջանակներում, որոնց միջոցով հետապնդում էր հայկական գաղթ, սերտհարված ֆրանսիական գաղափար և ժամանակակից առաջադիմական մշակույթին, Արշակ Չոպանյանը, այնուամենայնիվ, «Անահիտի» էջերում հաճախ տրամաբանությամբ և սառը դատողությամբ կարողանում է ճշտել իր քաղաքական դիրքերը, որոշել այդ երկրներից իր ժողովրդի սպասումների սահմանները: Երբեմն «Անահիտում» կարելի է հանդիպել «գրավել Եվրոպայի ուշադրությունը» դարձվածքին: Սա արտա-

---

[1] «Անահիտ», Ա. տարի, 1898, թիվ 2, էջ 79:

[2] Նույն տեղում, էջ 82:

գծորեն հակառակ է ազգայնական կուսակցությունների կողմից «Եվրոպայի ուշադրությունը գրավելու» գաղափարին, որին վերջիններս հանում էին զանգվածային ջարդերի առիթներ տալով: «Անահիտի» մեջ այն նշանակում էր քաղաքական-մշակութային գործունեության վիճակարի ծրագրի իրականացում, որի հետևանքով Եվրոպան պետք է ճանաչեր հայ ազգին, որպես մշակութային դանձեր արտադրած և արտադրող ազգի: Կանխատեսելով Մեծ եղեռնը, դեռ 1903 թվականին, «Անահիտը» գրում էր. «Թրքական Հայաստանը ընդհանուր կոտորածին սարսափին տակ կը հարնդա նորին... կը պատրաստվի եղեռնական նոր մեծ խնջույք մը, որ անխուսափելի է և մոտալուտ, եթե Եվրոպա չփութա մարդասաններու բաղուկը բռնել»: Եվ հենց նույն հոդվածի մեջ, բյուրմացությունների տեղիք չտալու համար, Ա. Զոպանյանը ավելացնում է. «Ինչ որ Արևմտյան Եվրոպայի պետությունները «կրնան» ընել, արդիլելն է որ ջարդերը տեղի ունենան Հայաստանի մեջ, ատկից անդին չեն կրնար անցնիլ, և ատկից անդին անցնելու ոչ մեկ դիտավորություն չունին, ասի ակներև է... Եվ ատիկա հայկական հարցին լուծում մը ըլլալե հեռու է»[1]:

Բազմաթիվ առիթներով Զոպանյանը շեշտում է «Անահիտում», որ ինքը կտրականապես դեմ է, երբ պաշտոնական Եվրոպան շփոթում են մտավորական Եվրոպայի հետ[2], որ հենց պաշտոնական Եվրոպան է իր լռությամբ խրախուսում սուլթան Համիդին ու սանձազերծում նրա արյունոտ կրքերը, իսկ մտավորական Եվրոպան կարող է և պետք է պաշտպան կանգնի հինավուրց քաղաքակրթություն ունեցող ազգին, եթե ժամանակին և մեծ ծավալով այդ քաղաքակրթությունը դառնա նրա սեփականությունը:

Դրեյֆուսի գործի առիթով Ա. Զոպանյանը գրում է, թե ինքը կույր ֆրանսամոլ չէ, որ Ֆրանսիան նկատի «իբրև ամենեն «առեղծագործ» երկիրը նոր քաղաքակրթության», նա փոքրամասնության Ֆրանսիայի հետ էի, հայտարարում է նա, Զոլայի և մյուսների Ֆրանսիայի հետ, որոնք փոքրամասնություն լինելով փառք էին բերում Ֆրանսիային: Սուր քննադատական աչքով դիտելով իմպերիալիզմի դարաշրջանը թևակոխած Ֆրանսիան՝ Զոպանյանը գրում է.

---

[1] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 8, էջ 10 և էջ 13:

[2] «Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 6—7—8:

«Անկման նշանները կը շեշտվեին ցեղին բարոյական ըմբռնումին, մտավորական արտահայտութեանը մեջ. գրականութիւնը, ավելի երկրաքարշ, ավելի հոռետես, ավելի աղբապաշտ, ավելի մորթամոլ, քան երբեք, ծայրահեղութեան հասցուց մեծիդեալներուն, ազնիվ հավատքներուն գծուծ ծանակումը, կամ շլմորեցավ հիվանդագին ու հեշտախտավոր միստիքականութեան մը մեջ, կամ մանավանդ անձնատուր եղավ «բնապաշտ» սխալ տիտղոսով որակված վնասին, որ կարճատես կանխակալ կարծիքով մը կը նևրկայացնևր մարդկութիւնը. բացարձակորևն անդիտակից, ցած կրքևրու խաղալիք, տգեղ, չարագործ ու խղճալի և որ, հուսկ ուրեմն, մտածման վևրջին նշույլևն ալ կրկված, եղավ բոլորովին անկողնարանի առարկա մը, ցնծավայրի գործիքը մը, շնութեան միակևրոյ ու տխմար պատմութիւնը»: «Թատրոնին մեջ կը կանգնևր վոդվիլը, տխմար, լղճուկ ու վնարճալի, և քիչ հետո անկից ալ ավելի մեծաղոր դարձավ քաջին շանթանը, փողփողուն ու ապուշցնող դպրոցը մարդկային խոզութեան,— շարունակում է Զոպանյանը:— Դիլետանտիզմը իբր ճաշակ, ժըմանֆիշիզմը իբր բարոյական, վայելամոլութիւնը իբրև իմաստասիրութիւն տիրապետեցին: Լրագրութեան մեջ տարածվեցավ շահատենչ ստախոսութիւնը, գրգռիչ և անխղճամիտ կուսակցամոլութիւնը և ամոթալի շանթաժը»:

Ս. Զոպանյանի կարծիքով Ֆրանսիական հասարակութեան դարավևրջյան այսպիսի պատկերը արդյունք էր դրամի նկատմամբ չափն անց սիրո, դրամի տարածման, ինչպես նաև կղերականութեան հզորացման: Կարևորը այստևղ բուրժուական հասարակութեան նևխման ժամանակաշրջանի ճիշտ ընկալումն ու պատկերումն են հանդեսի էջևրում և, միևնույն ժամանակ, այն, որ ըստ հոդվածագրի, այդ ախտի բուժիչ միջոցներից մեկը գիտական կոմունիզմի տեսութեան տարածումն էր: «Ընկերավարականութիւնը,— կարդում ենք նույն հոդվածում,— որ գերման Քարլ Մարքսեն ընդունած էր գիտական կազմակերպութիւնը, ծավալեցավ Ֆրանսիայի մեջ և առողջության ուժ մը ավելցուց»[1]:

Այսպիսով, «Անահիտը» և նրա խմբագիրը հստակ գիտակցում էին, թե որևէ պատրանք չի կարելի ունենալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում պաշտոնական Եվրոպայէ

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 5—6, էջ 153—154:

«օժանդակության» վերաբերյալ։ Այդ հանգամանքը, բնականաբար, չէր խոչընդոտում, որպեսզի Եվրոպայում կատարվող հայանպաստ և հակաթուրքական բոլոր անցուդարձերը արտացոլվեին «Անահիտի» էջերում։

Հետաքրքրական է, այս տեսակետից, սուլթանի դատի գործը Փարիզի «Օտոմ» լրագրի դեմ, որը հայտնի էր որպես դրեյֆուսյան ճակատի լրագիր։ «Օտոմում» տպագրվել է էջերի շարք՝ «Մեծ մարդասպանը» ընդհանուր տիտղոսով։ Սուլթանը վիրավորվել և դատի է տվել լրագրին։ 1899 թվականի դեկտեմբերի 13-ին թերթը գրում է, թե դատը սուլթան Համիդի դատը պիտի լինի, որի վայրագությունները մինչ այդ քիչ հայտնի, եվրոպական կառավարությունների ջանքերի շնորհիվ քողարկված, այժմ երևան պիտի գան և ամենուրեք հրապարակվեն։ «Օտոմին» պաշտպանում են փարիզյան մամուլի մի քանի ուրիշ օրգաններ, այդ թվում պահպանողական «Օթորիթեն»։ Դեկտեմբերի 16-ին նրա խմբագիր Պոլ դը Քասանյակը գրում է. «Կառավարությունը «Օտոմին» դեմ դատ կը բանա Աբդուլ Համիդը «մարդասպան» կոչած ըլլալու համար և, սակայն, դժվար է ուրիշ բառ մը գտնել, եթե մարդ ուզե ճշտորեն որակել այն վագրը, որ իր սարսային խորեն, ուր վախեն կը քրտնի, երկու հարյուր հազար քրիստոնյա հայեր պաղարյունորեն մեռցնել տվավ։ Մենք վերջիններեն չեղանք այս անսահման ոճիրը նշավակելու... և բոլոր պարկեշտ մարդոց հետ... զայրույթով բողոքեցինք ջիրենք քաղաքակիրթ կոչելու հավակնող եվրոպական պետությանց դեմ... Հիմա, ինչքան ալ մեծ ըլլա անդունդը, որ մեզ «Օտոմեն» կը բաժնեն, մեզի հաճելի է հայտարարել, այն բարոյական համերաշխությունը, որ մեզ կը միացնե մեր պաշտոնակցին՝ արյունաթաթավ ձեռքերով սուլթանը անգամ մը ևս նշավակելու այս առիթին մեջ»[1]։ Հաջորդ համարում «Անահիտը» հայտնում է, թե սուլթանը խոհեմաբար ետ է առել իր դատը[2]։

Այս բոլորի կողքին, Չոպանյանը, այնուամենայնիվ, որոշակի դիպլոմատական խուլություն է ունեցել Ֆրանսիայի նկատմամբ, մերթ ընդ մերթ անհիմն հույսեր կապելով ֆրանսիական պաշտոնական շրջանակների քաղաքականության հետ։

---

[1] «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 1—2, էջ 42։

[2] Նույն տեղում, Բ տարի, 1900, թիվ 3։

1901 թվականին ֆրանկո-թուրքական վեճի բորբոքման առիթով Փարիզի «Ժողովրդին համար» թերթը կանխագուշակում է, թե այդ վեճը պիտի անմիջապես ավարտվի, երբ դրամական խնդիրը լուծվի, և թե Ֆրանսիան հայկական հարցը իր վեճի օպտին չարաշահելուց հետո պիտի թողնի, որ սուլթանը հանդարտ ավարտի հայերի բնաջնջումը: Զոպանյանը բողոքում է այդ «տարապայման հոռետեսության» դեմ, հույս ունենալով, թե Դելքասիեն (արտաքին գործերի մինիստրը) լավ դպացմունքներ է տածում հայության հանդեպ և գործը տեղից կշարժի[1]:

Մի բանում միայն իրավացի էր Զոպանյանը. ընդհանրապես մոայլ հոռետեսությամբ չէր կարելի խախտել հայ ժողովրդի հավատը աղատագրական պայքարի հաղթանակի հանդեպ և դրանով թուլացնել պայքարելու ոգին ու կորովը: Բայց հենց ինքն իրեն հակասում էր Զոպանյանը, երբ սկզբունքորեն մերժում էր եվրոպական պետություններից որևէ միջամտության հույսը, իր մերժումը կատուցելով օբյեկտիվ փաստերի անառարկելի հիմքի վրա, և, հանկարծ, որևէ «բարի տրամադրված» պետական անձի հետ թափանցիկ հույսեր էր կապում: Հասարակական խնդիրներում սուբյեկտիվ նախադրյալի գերագնահատության այդ փաստն էլ ունենում է մի վախճան, որը ոչնչով մխիթարական չէր Զոպանյանի հույսերի համար (թեկուզ և այդ հույսերը երիզված լինեին այն սահմաններում, թե իբր Ֆրանսիան պիտի պահանջեր ջարդերի դադարեցումը և բարենորոգումների իրագործումը, այլ ոչ թե հայոց ինքնավարություն): Ավելին, ֆրանսիական պառլամենտի նիստում Դելքասիեն հայտարարում է, թե «Մուշի մեջ ջարդի մը լուրը հնչված է» (մինչդեռ երեք հարյուր մարդ էր կոտորվել), և կրկնում է սուլթանի ձևակերպումը. «Արևելքի այդ մասը, ըսավ, անպատշաճորեն Հայաստան կոչված է, քանի որ իրոք հայկական համախմբում չկա ոչ մեկ տեղ, և հայերը կը դանվին Փոքր Ասիո հարյուր կետերուն վրա առանց մեծամասնություն մը կազմելու»[2]:

Անհրաժեշտ ենք դտնում հիշատակել նաև Զոպանյանի 1904 թվականի օգոստոսի 18-ի նամակը ԱՄՆ-ի պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտին, որում նա խնդրում էր ստիպել սուլթանին՝ «կանոնավոր ու քաղաքակիրթ վարչություն մը մտցնել պետության այն

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1901, թիվ 9, էջ 236:

[2] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 1, էջ 13:

մասերուն մեջ, ուր կը գտնվի հայ ժողովուրդը»[1]։ Այդ նամակով և, հատկապես, «Անահիտի» էջերում այն հրապարակելով ու հանրության ուշադրությանը հանձնելով՝ Զոպանյանը ինքն արդեն թույլ էր տալիս վրիպում, որից զգուշացնում էր անընդհատ։ Նա այն կարծիքին էր, որ չէր կարելի Եվրոպայի (այս դեպքում նաև Ամերիկայի) միջամտության սին հույսերով կերակրել հայ ժողովրդին[2]։ Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը կանգնած էր արտաքին աշխարհում բնական դաշնակից ընտրելու անհրաժեշտության առջև, և այդ դաշնակիցը օբյեկտիվորեն ու Զոպանյանի իսկ խորին համոզմամբ կարող էր լինել միայն Ռուսաստանը։

Ռուսաստանի նկատմամբ քաղաքական կողմնորոշումը Զոպանյանը հիմնավորում է թե պատմականորեն և թե ընթացիկ պահի անհրաժեշտությամբ։ Առարկելով իր ժամանակներում տարածված այն կարծիքին, որը վտանգ էր տեսնում, թե Ռուսաստանը Արևմտյան Հայաստանին ինքնուրույնություն տալու փոխարեն մտադիր է պարզապես զավթել այն, Զոպանյանը գտնում է, որ նույնիսկ այդպիսի նլքը նախընտրելի է։ Ինչո՞ւ։ Որովհետև արևելահայությունը, հենց միայն այն պատճառով, որ գտնվում է Ռուսաստանի իշխանության տակ, որքան էլ քաղաքական սեղմումները աննպաստ են, այնուամենայնիվ «ստրկության ելած» է։ Հենց այդ պատճառով էլ, ըստ Զոպանյանի, արևելահայերը մեր ազգային վերածնության ճիգերում ունեցել են «ամենակարևոր բաժին մը, ավելի հանդուգն, ձեռներեց, կազմակերպչական գործունեություն ցույց տված են միշտ»։

Զոպանյանը զգուշացնում է, որ չի կարելի շփոթել ռուս կառավարողներին և ռուս ժողովրդին, և, եթե դարասկզբին ռուս կառավարության հակահայ քաղաքականության դեմ բուռն պայքար էր ծավալվել, ապա դա չի նշանակում, թե պետք է մոռանալ «Ռուսիո անցյալին մեջ մեզի մատուցած ծառայությունները»[3]։

«Ռուսիա և հայերը» տիտղոսով ծավալուն ուսումնասիրության մեջ Զոպանյանը այդ առթիվ հետևյալ հատկանշական տողերն է գրում. «Ապուշություն է «ռուս» ըսելով չինովնիկները, կնուտը, Սիպերիան, կախաղանը և բանտերը միայն տեսնել,

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 2, էջ 46։

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 75։

[3] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 10—11, էջ 223։

ատոնք բոլորը ռուս ոգիին բացառական կողմն են... «Ռուս» ըսելով ես կը հասկնամ ամեն ինչ որ ռուս է, Դոստոյեվսկին, Տուրգենևը, Տոլստոյը, Գորկին, որոնք մտավորական բարեբարներն են ամբողջ մարդկության համար... կը հասկնամ ռուս ժողովրդին խանդոտ, զաղափարապաշտ, մարդասեր հոգին, կը հասկնամ ռուս ղորության կատարած անուրանալիորեն դեղեցիկ ու մարդկօդուտ դերը՝ մահմեդականությունը զսպելու և Թուրքիո դերի ազդության ազատման նպաստելու, կը հասկնամ ռուս դիտությունը, գեղարվեստը, կը հասկնամ ռուս ազատագրական շարժման բոլոր հանդուգն ու հոյակապ հիգերը, բոլոր այն անբաղդատելի հերոսները, զոր ստած է ռուս տարրը՝ ազատության դատին համար ու վերջապես «ռուս» ըսելով ես միշտ կը հիշեմ բարիքը, զոր Մեծն Պետրոսի ցեղը ըրած է՝ անցյալին մեջ՝ հայության և կը տեսնեմ օգուտը, զոր իմ ազգս կարող է ապագային մեջ քաղել ռուս ղորությունեն»[1]:

Հաստնացող բուժուա-դեմոկրատական հեղափոխությունը դարասկզբին նոր կացության առջև էր դրել Ռուսաստանը: Հայ ազգային-ազատագրական պայքարը անհրաժեշտաբար պետք է հաշվի առներ այդ կացությունը դևպի Ռուսաստան կողմնորոշվելու հարցում: Բնականաբար, Ա. Զոպանյանն էլ քննության է ենթարկում այդ հարցը: Ռուսաստանի «բարենորոգության» հարցի նկատմամբ բռնելիք դիրքը նա համարում է ամենաէական կետը: Նրա կարծիքով, տարբերություն պիտի դնել XIX դարի առաջին քառորդի Ռուսաստանի, որը պարսիկների ու թուրքերի լծից ազատեց Հայությանը, և XX դարի սկզբի պաշտոնական Ռուսաստանի միջև, որը հակահայկական անդամությունները հասցրել էր պետական քաղաքականության աստիճանին:

Նրա ցարական Ռուսաստանը պատերազմի դեպքում մոնի Թուրքիա, ապա, նրա ներկա քաղաքականությունից ելնելով, Զոպանյանը գտնում է, որ Հայությունը պիտի չեզոք մնա: Իսկ եթե կատարվի «բարեշրջություն», ցարին փոխարինելու գա «ազատական Ռուսաստանը», ապա Թուրքիայի դեմ ունեցած պայքարում հայ ժողովուրդը, ըստ Զոպանյանի, պետք է ուժերը ներածին չափով օգնի այդ նոր Ռուսաստանին, որովհետև դրանով նա օժանդակած պիտի լինի ազատականության պայքարին ընդդեմ բռնության, որովհետև «այն ատեն, երբան ալ մեզի համար

---

[1] *«Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 70:*

«հասուկ տուն մը շինելու» հույսը գոյություն չունենա, դեթ մեծ, առողջ ու հզոր տան մը մեջ ապահով ու հանգիստ սենյակ մը ունեցած կըլլանք մեր գոյությունը պատսպարելու և զարդացնելու համար»[1]։

Ամեն դեպքում, Զոպանյանը գտնում է, որ Ռուսաստանի «ներքին վերանորոգումը» «մեծագին կարևորություն» ունի հայ ժողովրդի համար, և հույս է հայտնում, թե ռուս-ճապոնական պատերազմից խարխլած ցարիզմը շուտով իր տեղը պիտի զիջի ազատական ռեժիմին։

Ռուս-ճապոնական պատերազմի ապրիլ 1905 թվականի մարտի 14-ին Զոպանյանը գրում է մի ուշագրավ հոդված, որը հրատարակում է առանձին գրքույկի ձևով «Հորիզոն» խորագրի տակ։ Ճապոնիան, գրում է նա, ջախջախելով այդ երևութական ուժը, «ներքնապես խախուտ ու փուտ» գորությունը, վիթխարի ծառայություն պիտի մատուցի մարդկությանը և հենց ռուս ժողովըրդին, «զոր պետք չէ շփոթել ռուս կառավարության հետ»։ Այդ ծառայությունը կայանալու է այն բանում, որ համաշխարհային ժանդարմ ցարիզմը, կամ, ինչպես Զոպանյանն է ասում, «տիեզերական ազատականության դեմ ցցվող ցարականությունը» այլևս պիտի չկարողանա նույն չափով կատարել այդ «տխուր և վտանգավոր դերը»։ Բուն իսկ պատերազմից ավելի շահեկան և բեղմնավոր նա համարում է երկրի ներսում սկսված պայքարը, այսինքն՝ 1905 թվականի հեղափոխությունը։

Զոպանյանը մտահոգություն է հայտնում, որ եթե պատերազմը շուտ ավարտվի ցարիզմի պարտությամբ, ապա նա դեռ բավականին ուժ կունենա ջախջախելու համար հեղափոխությունը. «Ահա ինչու անհրաժեշտ է, որ ռուս-ճապոնական պատերազմին ավարտումին առաջ կամ դեթ անկից անմիջապես վերջը, օգտվելով պարտության առաջ բերած ընդհանուր տարակուսումեն, ցարականության վարկին նույն իսկ ռուս ժողովուրդին մեջ դունատումեն, հարյուր հազարավոր ռուս կյանքերու ունայն փճացումին տղած կատաղություններն, հեղափոխական շարժումը իր բոլոր ուժը բաժին վճռական հարձակումն ընելու և հին ռեժիմը հիմնովին քանդելով ազատական ռեժիմ մը հաստատելու համար»[2]։

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 10—11, էջ 225։

[2] Արշակ Զոպանյան, Հորիզոն, Փարիզ, 1905, էջ 1։

Ուշագրավ է ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ազդեցության փաստը Զոպանյանի վրա, որը քայլ է անում մինչև հին ռեժիմը հիմնովին բանդելու պահանջը: Պետք է շեշտել նաև այն հանգամանքը, որ Զոպանյանը, անդրադառնալով Կովկասում ծայր առած ազգամիջյան ընդհարումներին, ճիշտ կերպով հասկանում է, թե կառավարությունն է դրանց կազմակերպիչը և ընդգծում է ազգամիջյան կոտորածների դադարեցման և ընդհանուր ուժերը ցարիզմի դեմ ուղղելու անհրաժեշտությունը. «...այդ դեպքը պիտի ուններ ռուս իշխանություններուն հուսացածին ճիշտ հակառակ արդյունքը. Կովկասի այլևայլ ցեղերը փոխանակ իրար հետ կռվելով ցարական հաշիվները դյուրացնելու, պիտի միանան և իրենց ուժերը ազատության դատին ի նպաստ պիտի կենտրոնացնեն»[1]:

Զոպանյանի աշխարհայացքի սահմանափակությամբ և հակասություններով պետք է բացատրել, որ նա ռուսական առաջին հեղափոխության պրոբլեմներում միշտ չի մնում գնահատման և արմատական պահանջների հեղափոխական բարձրության վրա:

Նրա հիմնական միտքը և նպատակը ռեֆորմներն են («բարեշրջումները», «վերանորոգումները»): Նույն երբ եվրոպական հեռագրական գործակալությունները բերեցին հոկտեմբերի 17-ի մանիֆեստի լուրը, Զոպանյանը հայտարարեց, թե իր գրածները հաստատվել են[2]: Այսպիսով, հետու լինելով Ռուսաստանից և լավ չպատկերացնելով այնտեղ տեղի ունեցող դեպքերը, չճանաչելով հեղափոխության շարժիչ ուժերը, Զոպանյանը բռնեց համաձայնողական դիրք, մի բան, որ նա չարեց, ինչպես կտեսնենք ստորև, երբ Թուրքիայում «վերականգնվեց» սահմանադրությունը, որովհետև շատ լավ էր ճանաչում թուրքական «հեղափոխության» շարժիչ ուժերը և չէր կարող համակերպվել համաձայնողական քաղաքականության հետ:

Այստեղ մենք հակասություն չենք տեսնում: Զոպանյանի քաղաքական իդեալը արևմտաեվրոպական տիպի բուրժուա-դեմոկրատական հանրապետությունն էր: Նրա երիտթուրքերը իրենց ազգային ծրագրում ճանաչեին միայն ազգությունների որոշակի ինքնավար իրավունքներ, ապա Զոպանյանը դեմ պիտի չլիներ պաշտպանելու նրանց ծրագիրը[3]:

---

[1] Սուրշակ Զոպանյան, *Հորիզոն, Փարիզ, 1905, էջ 5:*

[2] *«Անահիտ», է տարի, 1905, թիվ 10—11, էջ 225:*

[3] *«Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 69:*

Շատ շուտով Զոպանյանը համոզվում է, որ ցարական մանիֆեստը «չիրականացուց այն հույսերը, զոր արթնցուց առաջին վայրկյանին», և նրա համար այդ հույսերը չիրականացան, որովհետև «հետադիմական կուսակցությունը» երկրի բոլոր կողմերում կոտորածներ ու խռովություններ կազմակերպեց։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ձախողումից հետո Ռուսաստանի հետագա զարգացման նկատմամբ նրա հայացքներում դարձյալ որոշակի լիբերալիզմ է դրսևորվում։ Նա անտարակուսելի է գտնում, որ ազատականությունը պիտի հաղթանակի, բայց միևնույն ժամանակ մաղթում է, որ «հին ռեժիմին դեմ պայքարող տարրերը մեկդի դնեն ծայրահեղ պահանջները և ճգնին իրագործելու ինչ-որ այժմ կարելի է, և այդ «կարելին» արդեն բավական է դնելու համար ուսս պետությունը ասիճանական հառաջխաղացման բնաշրջման ճամփուն մեջ»[1]։ Ռևֆորմների ցանկալիության մասին է խոսում նրա այն միտքը, թե հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո, այնուամենայնիվ, «բան մը փոխված է» Ռուսաստանում, և թե վաղը երևան կգա դումա կամ պառլամենտ, որտեղ, եթե նույնիսկ ազատականները փոքրամասնություն կազմեն, այնուամենայնիվ առաջադիմության դրդիչ և լծակ կլինեն[2]։

Զոպանյանը լավ չի ճանաչել Ռուսաստանի բանվորական շարժումները և, ինչպես երևում է նրա այդ շրջանի գործունեությունից, ծանոթ չի եղել բոլշևիկյան տեսությանը, մասնավորապես այն կարևոր հայեցակետին, որով աղգային-ազատագրական շարժումները դիտվում են որպես պրոլետարական հեղափոխության ռեզերվ ու դաշնակից ուժ։ Սոցիալիստական տեսության քննադատությունը, հատկապես ազգային հարցում, նրա կատարում էր փաստորեն ծանոթ լինելով սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության քարոզած սոցիալիզմին և մեկ էլ դաշնակցության «սոցիալիստական» լարախաղացությանը։

Հետաքրքիր է նրա պատասխանը հնչակյան ղեկավար Սապահ-Գուլյանին։ Վերջինս գանում է, որ Թուրքիայի տիրապետության դեմ ազգային-ազատագրական պայքարում չի կարելի առաջնորդվել «զուտ աղգայնական նացիոնալիստական» դաղափարներով, թե սոցիալիզմը պիտի լինի հայկական դատի մղիչ ուժը, որովհետև հայ գյուղացին, գյուղական պրոլետարը «ի՞նչ մի

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 1—2, էջ 26։

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 65—66։

պրոպագանդա պիտի ունենան ազդակ հանդիսանալ մի դասի, որ իրենց լավագույն ոչինչ ունի բերելիք բացի չծից, որ ունին արդեն, անվան տարբերությունը նշանակություն չունի այդտեղ»:

Սապահ-Գուլյանը այնուհետև գրում է, թե ֆրանսիական, գերմանական, իտալական, իսկ Զոպանյանն էլ ավելացնում է՝ հունական, սերբական, կրետական և այլն, հեղափոխությունների իրական ազդակը եղել է բուրժուազիան, որին աջակցել են բոլոր խավերն ու դասակարգերը: «Բայց ո՞ւր է այդ հարուստ, ունևոր, բուրժուա դասակարգը, որ հանձն պիտի առնի ազդակ հանդիսանալ հայկական դատին»,— հարցնում է Սապահ-Գուլյանը և պատասխանում. «Հայկական խնդրին ծնունդ և կյանք տվողը եղել է և է հայ գյուղացին, հայ արհեստավորը, հայ սևիականաղուրկը, և այլն»[1]:

Զոպանյանը փորձում է նախ ապացուցել, թե սոցիալիզմն էլ «բացարձակ» հավասարություն չի բերում (մարդկանց ֆիզիկական տարբերությունները միշտ մնում են), ուրեմն ավելորդ է այն քարոզել. այսուհետ նա մեկ անգամ էլ դրսևորում է հասարակության պատմության նկատմամբ իր աշխարհայացքի իդեալիստական սահմանափակությունը: Հետաքրքրություն է ներկայացնում, սակայն, ուրիշ կետ:

Սապահ-Գուլյանը գտնում է, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը բուրժուական դասակարգային բնույթ չունի: Զոպանյանը փորձում է ապացուցել հակառակը և, մեր կարծիքով, դա նրան հաջողվում է:

«Ճիշտ չէ, որ հայկական խնդրին ծնունդ տվողը եղած է հայ «իրուլեթները», հայկական խնդրին,— այսինքն՝ հայության քաղաքական ազատագրությունը ձեռք ձգելու խնդրին,— հիմնադիրները եղած են, գրեթե տարամերժորեն, ոչ թե սևիականազուրկ մարդաբաններ, այլ «ջոջեր», Իսրայել Օրի վաճառականը, պարսկահայ մելիքները, Դավիթ Բեկ, Արղությանց, Աշտարակեցի, Մխիթարյան քերթողները, Խրիմյան, Վարժապետյան, Պեշիկթաշլյան, Օտյան, Զեյթունի «իշխանները», և այլն, և այլն, բոլորն ալ տեսակ մը «քափիթալիսթներ» դրամական կամ մտավորական տեսակետով և բոլորն ալ՝ զուտ ազգային զգացումներ առաջնորդված: Իսկ հեղափոխական նոր գործունեության մեջ հայ

---

[1] Սապահ-Գուլյանից մեջբերումները արվում են ըստ «Անահիտի», Թ տարի, 1907, թիվ 1—2, էջ 44—45:

դյուղացին ու փրոլեթարը իրոք մեծ դեր է կատարած, անձնազոհության ամենաստվար բաժինն ստանձնելով, բայց հանուն «ազգային գործման», իսկ իրենն հետ՝ մաքառած են հայեր, որ ոչ քափիթալիստ են, ոչ փրոլեթար— պետք չէ մոռնալ այդ դասակարգն ալ, որ ամենախոշոր զանգվածներեն մին է ազգի մը, այսինքն փոքրիկ հողատերներ, արհեստավորներ, համեստ առևտրականներ, ուսուցիչներ, կղերականներ, ամեն կարգի մտավորականներ»[1]:

Բարձրացող բուրժուազիայի գաղափարախոսությանը հավատարիմ Չոպանյանը ոչ միայն ապացուցում է շարժման բուրժուա-դասակարգային բնույթը, այլև խոսում է ամբողջ ազգի անունից «զուտ ազգային գործումներն առաջնորդված», ինչպես որ պատմականորեն այդ անում էին հեղափոխական բուրժուազիայի գաղափարախոսները Արևմտյան Եվրոպայում: Պատահական չէ, որ Չոպանյանը գտնում է, թե ազատագրական պայքարի ելած սորուկ ազգը պետք է ուննենա միայն «ազգային կուսակցություն»[2], այսինքն՝ բարձրացող բուրժուազիայի դասակարգային նպատակները հետապնդող կուսակցություն, որը այդ նպատակները ներկայացնում է որպես ամբողջ ազգի նպատակներ և համախմբում ազգի բոլոր խավերին օտար լծի դեմ պայքարում: Այսպիսով, նա ինքն էլ ակնհայտորեն հավատացած էր, թե ամբողջ ազգի, այլ ոչ թե դասակարգային շահեր է պաշտպանում, բայց դրա օբյեկտիվ բովանդակությունը դասակարգային էր:

Քննադատելով նման «սոցիալիստական տեսությունը», որը, ինչպես տեսանք բերված օրինակով, ուրիշ ժողովուրդների համար ընդունում էր ազգային-ազատագրական պայքարի բուրժուական-դասակարգային բնույթը, բայց չէր ընդունում նույն բանը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համար, որը չէր կարողանում բարձրանալ ազգային-ազատագրական պայքարը բանվոր դասակարգի հեղափոխական շարժման ուղերվ ու դաշնակից նկատելու աստիճանին, Արշակ Չոպանյանը պատկերավոր դրում էր. «Այդ պարոնները պետք է ըմբռնեն, թե իրենց «ազգայնական» համարած հայերը շատ ավելի իրական սեր և ըմբռնում ունին ազատության, թե իրենց չափ և ավելի ուշիմ կերպով կը ցանկան ամբողջ մարդկության երջան-

---

[1] «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 1—2, էջ 45:

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 74:

կութիւնը, բայց անոնք համոզված են, որ ամբողջ մարդկութեան վերջնական ազատագրումին քայլ առ քայլ միայն կարելի է հասնիլ (այդ է բնութեան անհեղելի օրէնքը) և թէ այդ քայլերուն ամէնեն անհրաժեշտներեն և առիպողականներեն մին սարկացած ազգայնութեանց ազատումն է։ Երբ մարդ կը տեսնէ իր մայրը՝ պաշարված ավազակներե, որ կուզեն զայն խոշտոնել, և երբ այդ մարդը, անօգնական ծողով իր մայրը, որուն իր կեանքը կը պարտի, կը վազէ դիմացի սրահին մէջ՝ ամբողջ իգական սեռին ազատագրութեան վրա ճառ մը արտասանելու, այդ մարդը վարված կըլլա իբր շոշորդ մը և անպիտա մը[1]։

«Անահիտի» խմբագրապետի կարծիքով սոցիալ-տնտեսական և քաղաքական տարբեր կացութիւններ գոյութիւն ունեին իր ժամանակի Ռուսաստանում և Թուրքիայում, ուստի տարբեր խնդիրներ էին դրված նաև Կովկասի Հայութեան և արևմտահայութեան առջև։ Ժամանակակից տերմինաբանութեամբ ասած, նրա միտքը հետևյալն է. Կովկասում կա զարգացած արդյունաբերութիւն («Եվրոպական ձևով ճարտարարտադրութիւն»), հետևաբար կա նաև բանվորական հարց, գոյութիւն ունի ռուսական սոցիալիստական կուսակցութիւն։ Ուստի բնական է, որ Կովկասի հայ բանվորութիւնը մասնակցի սոցիալիստական շարժմանը «իրերի անդիմադրելի և արտաքսական մղումով»։ Տաճկաստանում չկա այդ ամենը։ Արևմտահայութիւնը սարկացած վիճակում է օտարի լծի տակ։ Ուստի այստեղ խնդիրը ոչ թե բանվորական-սոցիալիստական է, այլ ազգային-ազատագրական, այսինքն՝ բուրժուական, իսկ քանի որ բուրժուազիան իր բարձրացման շրջանում խոսում է ամբողջ ազգի անունից, ապա Չոպանյանի տեսակետով էլ այդ պայքարը պետք է տարվի ազգի «բոլոր դասակարգերուն միացյալ ջանքերով»[2]։

«Ազգայնական» տերմինի բացատրութիւնն էլ նա կապում է ազգային-ազատագրական պայքարից ելնող խնդիրների հետ։ Ըստ նրա, «այդ բառը՝ ազատել ուզող սարսուռ ազգի մը բերնին մէջ, միմիայն ու միշտ ազնիվ նշանակութիւն կրնա ունենալ ...ազգայնականութիւնը հակակրելի կրնա ըլլալ,— պարզաբանում է նա,— երբ ազգ մը իր ուժը չարաչար կը գործածէ, ավազակորեն, ըրացի ազգերի իրավունքները հափշտակելով, մեր

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 66։

[2] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 8, հավելված, էջ 8։

ազգայնականության մեջ ո՞վ կրնա այդպիսի հանգամանք մը տեսնել»[1]:

Հանգամանորեն քննարկելով ազգային-ազատագրական պայքարում հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցը ու եվրոպական չորս մեծ տերություններից նախընտրությունը անվերապահորեն տալով Ռուսաստանին, Զոպանյանը անդրադառնում է նաև դրացի ժողովուրդների հետ հայության հարաբերությունների հարցին: Նա ջերմորեն պաշտպանում է վրաց ժողովրդի հետ բարեկամական հարաբերությունները ամրապնդելու գաղափարը[2], *ինչպես նաև հատուկ ուշադրություն է դարձնում արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին աջակցելու գործին: «Ես այն սակավաթիվ հայերեն եղա, որ ուշադրություն հրավիրեցին արաբական ապստամբության վրա և հայոց օգնությունը անհրաժեշտ նկատեցին այդ ապստամբության»*[3],— *գրում է Զոպանյանը: Պարսկաստանի հետ նույնպես նա անհրաժեշտ է գտնում շարունակել հաշտ, դրացիական համակեցությունը, որով պարսկահայության համար Թուրքիայի հետ հանմեամասած կյանքի և գոյատևության շատ ավելի նպաստավոր պայմաններ էին առնջվել*[4]:

Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում Զոպանյանի տեսակետը Թուրքիայի և Թուրք ազգության նկատմամբ: Ըստ նրա՝ կրոնական խավարամոլությունը պահել է այդ երկիրը դեռևս դարերի խորքում, քաղաքակրթությունից շատ հետու, և հայ ժողովրդի պայքարը նրա դեմ է՝ հանուն ազատագրության: Բայց «վերջնական ու անվերապահ ատելություն մը չէ, որ կուզեմ քարոզել Թուրքին դեմ,— ասում է Զոպանյանը:— Ոչ մեկ ցեղ ատելու չէ մարդ... Թուրքն ալ պիտի ըլլա օր մը քաղաքակիրթ ազգ մը,— երբ «ազգ» մը ակսի ըլլալ, փոխանակ վրանը զարկած ապառաղն վաչկատունները ջոկ մը ըլլալու, ինչպես է ցարդ, երբ լրջորեն բանա իր միտքն ու հոգին ազատության, քաղաքակրթության, արդարության, մարդկայնության սկզբունքներուն»: Հայ ժողովուրդը ազատության ձեռք բերելուց հետո ինքն իսկ պիտի օգնի Թուրք ժողովրդին նրա մտավոր ու բարոյական զարգացման

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 67:
[2] Նույն տեղում, էջ 72:
[3] Նույն տեղում, էջ 71:
[4] Նույն տեղում:

դործում. «Մեր... շահը կը պահանջե արդեն, որ մեր դրացի բոլոր ցեղերը քաղաքակրթվին»[1]:

Դրացի ցեղերից էր նաև քուրդը, որին հատկապես XIX դարի երկրորդ կեսում սուլթանական Թուրքիան օգտագործում էր իր հայաջինջ քաղաքականությունը դործադրելիս: Արշակ Չոպանյանը անդրադարձել է նաև քրդական ցեղերի հետ հայության հարաբերությունների հարցին: Անշուշտ, քրդական ասպատակությունների առթիվ Չոպանյանը պահանջում է դիմադրական կարողություն դրսևորել, բայց հարցը այստեղ կարևորություն է ստանում սկզբունքային տեսակետից: Նա ձգտում է տարածել այն դաղափարը, թե երկու դրացի ժողովուրդները ընդհանուր շահեր ունեն, ուստի պետք է դաշնակից լինեն նույն բռնապետության դեմ մղվող պայքարում: «Հայուն քուն թշնամին թուրք բռնապետական ռեժիմն է,— գրում է Չոպանյանը,— որուն հավասարապես դերի են քուրդը և հայը»: Նա խորհուրդ է տալիս օգնել քրդերի ազգային ինքնագիտակցության զարգացմանը, աղբյուրյուն կազմելուն և քուրդը «ճակատագրականապես բախտակից մը և դաշնակից մը պիտի սկսի տեսնել հայուն մեջ և փոխանակ հայուն դեմ դարձնելու իր դանակը, «բռնավորին» դեմ պիտի դարձնեզայն»[2]:

Այս ծրագրի դործադրման համար է, որ «Անահիտը» շարունակաբար ծավալում ուսումնասիրություններ է տպագրում քրդերի ու եզիդիների մասին, ինչպես նաև նյութեր՝ կահիրեում հրատարակվող «Քուրդիստան» երկշաբաթաթերթից: «Անահիտը» տպագրում է այդ թերթի անօրեն Աբդուռահման Բեդրխանի նամակից մի քաղվածք, որի մեջ ասված է. «...Գիտեմ, թե քուրդերուն և հայերուն շահը միևնույնն է, և ասոր համար է, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով ջնջել այն տեսլությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներուն միջև»[3]: Հատկանշական է նույն Աբդուռահման Բեդրխանի մի կոչը՝ ուղղված իր ցեղակիցներին.

«Ո՛վ քուրդեր, որ միշտ հռչակավոր եք եղած ձեր քաջասրտությամբ, խնդրե անվնաս հայերը ջարդելու ելեր եք հիմա, մինչևոր ընդհակառակն, անոնց օգնության հասնելու էիք և զանոնք ձեր

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 72—73:

[2] «Անահիտ», Բ տարի 1900, թիվ 4—5, էջ 131:

[3] Նույն տեղում, էջ 132:

պաշտպանության տակ առնելու էիք։ Ինչպե՞ս պիտի սրբեք այդ արատը, որով ձեզ աղտոտեցիք, այդ խնդճ մարդիկը սպանելով և Աբդուլ Համիդի պաշտոնյաներուն մեղսակից հանդիսանալով։ Ա՞յդ էր ձեր քաջությունը, ձեր պատվո և վեհանձնության համբավը»[1]։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում արտաքին գործոնների հարցում պարզություն մտցնելուն զուգահեռ Արշակ Չոպանյանը զանազան առիթներով շարադրում է իր տեսակետները նաև պայքարի ներքին, սկզբունքային և տակտիկական հարցերի վերաբերյալ։ Նրա հիմնական սկզբունքային նախադրյալն այն է, որ հայ ժողովուրդը ամենից առաջ ինքն իր վրա պիտի հույս դնի։ «Մեր իդեալին չենք կրնար հասնիլ ուրիշին ձեռքով»— ասում է Չոպանյանը[2], նկատի ունենալով այն հանգամանքը, որ եթե հայ ժողովուրդը վենքը ձեռքին չկարողանա պայքարի և հերոսության, այլ ոչ թե անզեն նահատակության, կորով ցույց տալ, ապա նույնիսկ արտաքին միջամտության դեպքում ոչինչ չի շահելու[3]։

Ինչպես տեսանք նախորդ գլխում, Չոպանյանը ժամանակավրեպ էր գտնում իննսունական թվականներին հարուցված դեպքերը և նույնիսկ ոճիր համարում։ Բայց քանի որ արդեն դեպքերը կատարվել էին, նրա կարծիքով, այլևս անհնար էր կանգ առնել, անհրաժեշտ էր շարունակել պայքարը, միայն թե ոչ այն ձևով, ինչպես դա անում էին վերոհիշյալ կուսակցությունները[4]։

«Կը հուսամ, որ ոչ ոք այլևս պիտի կրնա սխալ մեկնել «գործունեություն» բառս,— գրում է նա,— անոր մեջ տեսնել, օրինակի համար, Պոլիս նոր ցույցի մը կամ վան նոր հրոսարշավի մը տեսիլը»[5]։

Չոպանյանը «գործունեություն» ասելով հասկանում էր ընդարձակ և կոմպլեքսային մի ծրագիր, որի մեջ մտնում էին լուսավորական, պրոպագանդիստական, քաղաքական, դիվանագիտական, նյութական և ռազմական կարգի հարցեր։ Ըստ նրա, ծրագիրը պահանջում էր արագ, դաղտնի (ոչ թե լրագրերում

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1901, թիվ 1, էջ 25, Ը տարի, 1909, թիվ 3—5 էջ 81։

[2] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 1, էջ 17։

[3] «Անահիտ,», Ա տարի, 1899, թիվ 7, էջ 225—226։

[4] «Անահիտ», Է տարի, 1905, թիվ 10—11, էջ 214—215։

[5] «Անահիտ, Ա տարի, 1899, թիվ 5, էջ 128։

պարծենկոտությամբ մատնում տվյալները հաղորդել) նախապատրաստություն և պատճ վայրկյանի ճիշտ ընտրությամբ միանգամայն ու կարևոր մի շրջանում հանդես գալ։ Ծրագրի որոշ կետերին արդեն ծանոթ լինելով, քննարկենք մյուսները (լուսավորական և պրոպագանդիստական հարցերին կանդրադառնանք հաջորդ գլուխներում)։

Նախ անհրաժեշտ է նշել, որ Զոպանյանը տարբերություն էր դնում ինքնապաշտպանության և քաղաքական կուսակցությունների հրահրած դեպքերի միջև։ Եթե նա դատապարտում էր վերջինը, ապա ամբողջովին պաշտպանում էր առաջինը։ Ոչինչ պիտի չխանգարեր հայ ժողովրդին, որպեսզի նա, ասում է Զոպանյանը, «քուրդերուն և թուրք պաշտոնյաներուն դեմ ինքզինքը (մանավանդ իր մասնավորապես կեղեքվող հատվածները) պաշտպանելու համար միջոցներ ձեռք առներ, ուրիշ բան է անհատական կամ հատվածական ինքնապաշտպանությունը՝ կրված հարձակմանց դեմ, ուրիշ բան է՝ ազատման համար ոտքի կանգնիլ ազգովին»[1]։

Այս վերջինը պահանջում է մեծ պատրաստություն, որը զանց առան ժամանակին և զանց էին առնում նաև դարասկզբին դաշնակցականները։ «Յառաջից» իմանալով, որ դաշնակցությունը որոշել է Կովկասի հայ-թուրք ընդհարումները ավարտվելուց հետո վերադառնալ «իր բուն նպատակին, այն է թրքահայ եղբայրներուն օգնելուն», Զոպանյանը գրում է. «Բայց եթե դաշնակցությունը նորեն պիտի տաճկահայոց օգնության հասնի այն ձևով, որով ըրավ ցարդ, կը հավատամ այդ կուսակցության վարիչները, որ լավագույն բան մը ըրած կըլլան այդ տեսակ օգնությունն մը զրկելով տաճկահայերը»[2]։

Իսկ ինքնապաշտպանության հարցում Զոպանյանը հանդես է գալիս պահանջելով կազմակերպել այդ գործը. «Պետք է աշխատիլ, որ, երբ ճարձակում կրեն, Թուրքիո հայերը զգացումն ունենան ինքնապաշտպանության, գիտնան գեթ պատվով մեռնիլ։ Յուրաքանչյուր գյուղի մեջ, մեկ երկու մարդ, անաղմուկ հաստատված,— իբր բժիշկ, քահանա, վարժապետ,— կարող են խուզ և տևական պրոպագանդով մը այդ զգացումը արթնցնել բնակ-

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 10—11, էջ 214։

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 73։

չության սրտին մեջ, և հարձակման ոտքին՝ ինքնապաշտպանության օրինակը իրենք իսկ տալ»[1]:

Ա. Չոպանյանը գտնում էր, որ ազատագրական պայքարի հաջողության համար անհրաժեշտ է ապահովել նախ՝ ազգային բոլոր հոսանքների և կուսակցությունների համախմբումը: Այս ուղղությամբ նա բավականին և տևական աշխատանք տարավ, ջանալով համաձայնության եղրեր գտնել և միավորել կուսակցությունները: Չոպանյանի ջանքերը արդյունք չտվեցին[2]: *Տարիներ հետո ինքը՝ Չոպանյանը, անդրադառնալով կուսակցությունների միավորման ուղղությամբ իր թափած ջանքերին, չի վարանում դա միամտություն կոչել*[3]: *Ապա՝ ստեղծել նյութական միջոցներ հայթայթող ազգային ընկերություն: Այս գաղափարը նորություն չէր հայության շրջանում և արդեն շատ վայրերում գոյություն ունեին տեղական բարեգործական հաստատություններ: 1906 թվականին հիմնվեց հայ բարեգործական ընդհանուր Միությունը, որի ստեղծումը ոդջունեց Չոպանյանը: Բարեգործականը, սակայն, սկզբից ևեթ իր ծրագրում փութաց հրաժարվել քաղաքական հարցերից և ըստ էության կարողացավ միայն որոշակի նպաստ հատկացնել դաղթահայության մշակութային օջախներին:*

Հատկանշական է, որ սուլթանական Թուրքիայի դեմ պայքարում Չոպանյանը ձգտում է ոչ միայն միասնության և համախմբման՝ քաղաքական հոսանքների և կուսակցությունների միջև, այլև աշխատում է ամուր պահել ազգային բոլոր հիմնարկությունները, այդ թվում կարևորագույն դեր հատկացնելով եկեղեցուն, թեպետ ընդհանրապես նա կրոնն ու եկեղեցին համարում է բռնության հենարան: 1902 թվականին նա հանդես է գալիս սուլթանական քաղաքականության դեմ, որի նպատակն էր արևմտահայության կապերը խզել արևելահայությունից: Այդ նպատակի գործադրության լավագույն միջոց էր նկատվում Սսի կաթողիկոսության հակադրումը էջմիածնին: «Սուլթանը կուզեր, որ տաճկահայ եկեղեցականներն այլևս էջմիածին չերթան ըստ հնավանդ սովորության՝ եպիսկոպոս ձեռնադրվելու, այլ Սիս երթան այսուհետև: Սուլթանը կուզեր ատով տաճկահայոց բարո-

---

[1] «Անահիտ, Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 74—75:

[2] Տե՛ս «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 4; «Վերջին բառ մը» հոդվածը:

[3] «Պայքար», Ե տարի, 1927, թ. 23:

յական կապերը խզել Մայր Աթոռին հետ: Մտածողներ կրնան ըլլալ, որ Սսո աթոռը պատմական որոշ շրջանի մը՝ ունեցած է գերակշռություն, և թե այդ գերակշռությունը վերստանալը կրնա այլևայլ տեսակետներով մեզի օգտակար ըլլալ թերևս: Դիտել պիտի տանք, որ այդ սիրուն անցյալին մեջ Սսո աթոռը գերակշռություն ստացած է հայ ժողովրդին կամքովը և քաղաքական որոշ և արդեն հաստատված պայմաններու բերմամբ, մինչդեռ այժմ այս կիրպարանափոխությունը սուլթանին հայաջինջ քաղաքականության մեկ խաղն է միայն, որ պիտի ձգտի հայոց բարոյական մեծ ուժերին մին, էջմիածինը չեզոքացնելու, առանց Սսո աթոռին ալ տալու «իրական» հեղինակություն մը»[1]:

1903 թվականի օգոստոսին, վերլուծելով միջազգային կացությունը, Ս. Չոպանյանը գտնում է, որ արտաքին պայմանները նպաստավոր են ազատագրական պայքարի հաջողության համար: «Վայրկյանը» եկել է, ասում է նա: Պատրա՞ստ է արդյոք հայ ժողովուրդը: Այս հարցի պատասխանը նա «տարամերժորեն վճռական» է գտնում: «Ղեկավարները», որ պոռոտախոսությամբ խաբում էին ժողովրդին, այժմ անցել են գործի... տեսորիստական արարքներ կազմակերպելով այս կամ այն գործիչի կամ մեծահարուստի դեմ, որը «ղևանում» է ազգին, այսինքն՝ կուսակցության դրամարկղին միջոցներ հատկացնել: Իսկ այնտեղ, Հայաստանում, ոչ մի պատրաստություն, նույնիսկ ինքնապաշտպանության անկարող զանգվածը մնացել է նույն վիճակի մեջ: Մինչդեռ դաշնակցության «գարշելի «Հայրենիքը» (Ս. Չոպանյան), Բոստոնում հրատարակվող այդ օրգանը անընդհատ խաբում է ժողովրդին, «ապազակելով, թե ահագին պատրաստություններ տեսնված են Սասունի մեջ, թե ամբողջ ժողովուրդը զինված է, թե հրոսակախումբերը մեծապես բազմապատկված են և այլն, և այլն,— ինչ որ Սասունի և շրջակայից վրա թուրք կառավարության մահաբեր ուշադրությունը կեդրոնացնելեն ուրիշ բանի չէր կրնար ծառայել»[2]:

Չոպանյանի ծրագրի այն կետերը, որոնք վերաբերում էին արևմտահայության անմիջական գործունեությանը թուրք բռնակալության դեմ, դատապարտված էին մնալու «Անահիտ» հանդեսի և ուրիշ հրատարակությունների էջերում, որևէ քիչ թե շատ

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 6, էջ 131:

[2] «Անահիտ», Է տարի, 1903, թիվ 8, հավելված, էջ 6:

լուրջ ազդեցություն չգործելով դեպքերի ընթացքի վրա: Այդ ծրագրի և նրա հայացքների պարզաբանությունը բանալի է տալիս Զոպանյանի գործունեության մյուս բնագավառների ճիշտ ընկալման համար: Բայց հայ ժողովրդի արևմտահայ հատվածի քաղաքական կողմնորոշման, ինչպես նաև ծրագրի լուսավորական ու պրոպագանդիստական բնագավառներում Զոպանյանի կատարած դերը բավականին մեծ կշիռ ունեցավ:

1908 թվականը նոր իրադրության առջև կանգնեցրեց արևմտահայությանը: «Երիտասարդ Թուրքերի» կառավարությունը հասավ երկրում սահմանադրության «վերականգնման»: Այդ ակտը, որ հորջորջվեց «հեղափոխություն», բուռն էության կոմպրոմիս էր թուրքական բուրժուազիայի և միապետության միջև, որով սուլթանական Թուրքիայի նեխող մարմնին նոր հագուստներ էին հագցնում, համաշխարհային հասարակական կարծիքի աչքին թող փչելու համար, թե «հիվանդ մարդը» այլևս առողջացել է:

Բնութագրելով «Երիտասարդ Թուրքերի» այդ սերնդին, թուրք մշակութային գործիչ Աբդուլ Հալիմ Մեմդուհը գրել է. «Այն անհատները, որ այժմ ինքզինքին Երիտասարդ Թուրք կանվանեն օտար երկիրներու մեջ, երեք տեսակի կը բաժնվին. ոմանք, ամենեն բազմաթիվները, միանգամայն... խաչապող, իրենց բարեկրոնական եռանդը կսահմանափակեն իրենց լրտեսական գործունեության ձգած պարապ ժամերուն մեջ—տարտամ պարսավագրեր հրատարակելու, որոնք սահմանված են իրենց դրպանի դրամ հայթայթելու կամ շահաբեր պաշտոններ՝ երբ Արևելք դառնան, այլք պարզապես գժդոհներ են, զոհեր համիդական վարչության, որ կծիկը դրած են անարդարության մը խայտելու համար և այլևս Քարթին Լաթենի սրճարաններուն մեջ կը սլքտան՝ մոռնալով իրենց շահերը, իրենց ընտանիքը, իրենց հայրենիքը. ուրիշներ վերջապես, արդի սուլթանին օրով հաջողության հասած՝ չըլլալով, կը ջանան վաղվան սուլթանին բարեկամության այժմեն վաստկիլ, կես ձայնով, խիղճերնին հանդարտեցնելու համար սահմանադրության վերահաստատում պահանջելով..... Անոնցմե ոչ մեկը թուրքերը կը հրավիրե ընկերական հառաջադիմության...»[1]:

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 3, էջ 65:

Դեռևս 1900 թվականին, կա Հնի խաղաղության կոնգրեսում «Երիտասարդ Թուրքերի» ղեկավար դեմքերից մեկը՝ «Մեշվռութիի» խմբագիր Ահմեդ Ռիզան բացահայտորեն ցույց տվեց իր բշնամական դեմքը հայ ժողովրդի արդարացի պահանջների հարցում, որոնք արդեն իսկ խղճուկ տեսքով տեղ էին գտել Բեռլինի կոնգրեսի որոշումներում: Հանդես գալով այդ որոշումներով նախատեսված բարենորոգումների դեմ, Ռիզան հայտարարեց, թե՝ «Հայաստան չկա», ուստի և բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտություն չկա:

Արշակ Զոպանյանը, որ մասնակցում էր նույն կոնգրեսին, զայրույթով հակահարված է տալիս Ռիզայի ելույթին: Հայաստան կա, ասում է Ա. Զոպանյանը, և հայերը եվրոպային դիմում են ոչ թե խնդրելու համար, որ հանձն առնի հայերի կյանքի և ունեցվածքի մշտական պահապանի՝ հայերի համար իսկ նվաստացուցիչ դերը, այլ որպեսզի, գործադրելով Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, ապահովի ազատության այն անհրաժեշտ պայմանները, որոնցով հայ մարդը «ինքն իսկ իր ձեռքովը կարող ըլլա իր գավակներուն կյանքն ու ինչքը պաշտպանելու»[1]:

Դեռևս դարասկզբին արևմտահայ մտավորական շրջանակներում սթափության և զգոնության կոչող ձայներ են բարձրանում, որոնք պահանջում են հայկական կազմակերպություններից՝ չվստահել «երիտթուրքերին», համաձայնություն չհայտնել նրանց հետ: Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան) «Շավիղում» գրում է, որ Ահմեդ Ռիզան և իր նմանները նախանձելի մրցակիցները պիտի լինեն Պոլսի փողոցներում երեմնի արյունկզակ շահատակների[2]:

1902 թվականի փետրվարին «Երիտասարդ Թուրքերը» Փարիզում գումարում են «օսմանցի ազատականների» համագումարը, որին մասնակցելու հրավերն ընդունում են վիրակազմյալ հնչակյաններն ու դաշնակցականները, ուղարկելով երեքական ներկայացուցչից բաղկացած պատվիրակություններ: Չվինելով կուսակցության անդամ, Ա. Զոպանյանն ընդունում է վերակազմյալների առաջարկությունը և անդամակցում նրանց պատվիրակությանը: Այդ համագումարը հայերի համար կարևոր էր այն իմաստով, որ «Երիտթուրքերը» պետք է պաշտոնական փաս-

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1900, թիվ 9—11, էջ 238:

[2] Տե՛ս «Անահիտ», Թ տարի, 1901, թիվ 1, էջ 22:

տաթուղթ ընդունելին, ձևակերպելով իրենց դիրքորոշումը նաև հայերին հետաքրքրող հարցի նկատմամբ։

Հանդիպումը արդյունքի չհանգեց։ Հայկական երկու պատվիրակություններն էլ հետացան համագումարից, որովհետև «հայերը կը բաղձային Տաճկաստանը դաշնակցային (ֆիդերալ) ուժիմի մը տակ տեսնել, մինչդեռ սղատական օսմանցիներու որոշողությունները կեդրոնական ձուլման, նույնացման ուժիմի մը հաստատման կը ձգտեին»[1]։

Համագումարը այլևս որևէ կասկած չի թողնում «երիտթուրքերի» ծրագրերի նկատմամբ, և Ս. Զոպանյանը, այնուհետև, պայքար է ծավալում այդ կուսակցության հետ հայկական կազմակերպությունների հնարավոր շփումների և գործակցության դեմ։ «Ճշմարտապես «նոր» թուրք տարր գոյություն չունի դեռ,— գրում է նա 1906 թվականին։— «Երիտասարդ թուրքերը» այնքան մոլեռանդ են, որքան «հինները», «ընդհանուր բարենորոգում» կազաղակեն միշտ՝ հայոց մասնավոր բարենորոգումները անկատելի դարձնելու համար»[2]։

«Անահիտի» խմբագրատեսը զայրույթով ու ցավով է դիմավորում «երիտթուրքերի» և դաշնակցության համաձայնությունը։ «Փարիզի վերջին կոնգրեսին մեջ սպանվեցավ կամ դեթ սպանման ճամփուն մեջ դրվեցավ... Հայկական Դատը», գրում է նա[3]։ «Երիտթուրքերի» ու դաշնակցության այդ գրկախառնությունը Զոպանյանը համարում է անակնկալ և տարօրինակ եղելություն։ Նա զոհունակություն է հայտնում, որ արտասահմանի հայ մամուլի շատ օրգաններ դատապարտել են այն։ Զոպանյանը մասնավորապես ընդգծում է Սապահ-Գուլյանի քննադատությունը, անվանելով այն «հոյակապ ուսումնասիրություն», դրանով շեշտելով իր զոհունակությունը, որ հնչակյանները խելամտություն էին ունեցել հրաժարվելու «երիտթուրքերի» հետ գործակցությունից։

Ի՞նչ պատահեց, հարցնում է Զոպանյանը, որ 1902 թվականին դաշնակցությունը հրաժարվեց գործակցել երիտթուրքերի հետ, իսկ վեց տարի անց՝ ընդունեց։ Այդ ընթացքում «երիտթուրքերը» մի շյուղի չափ անգամ չէին շեղվել իրենց ծրագրից։ Ուրեմն՝ այդ

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 2, էջ 40։

[2] «Անահիտ», Է տարի, 1906, թիվ 3—5, էջ 71։

[3] «Անահիտ», Ժ տարի, 1908, թիվ 1—4, էջ 44։

գործակցությունը վկայում է հայ ժողովրդի ազատագրական պայքարին դաշնակցության դավաճանության մասին: «Այն օրը, որ դաշնակցության «հայ» ուժերուն աջակցության շնորհիվ, բռքական արդի ռեժիմը տապալի և սահմանադրության մը հաստատվի, ժնոն Թուրքերը ոչ մեկ ազգի դոյությունը պիտի ընդունին Տաճկաստանի մեջ բացի օսմանյան ազգեն, ու նույն իսկ հայ արյունով հաստատված այդ սահմանադրությունը պիտի իբր վնաք գործածեն «հայկական դատը» վերջնապես ոչնչացնելու համար... Այն ատեն պետք պիտի լլա հայկական պայքարը ա. բ. դ.-են վերսկսիլ, և այս անգամ մաքառիլ ոչ թե Համիդ անուն անհնարապես դարշանք ազդող բռնավորի մը դեմ, այլ ազատականության երևույթ ունեցող խորհրդարանական կառավարության մը դեմ... ինչ որ տասնապատիկ ավելի դժվար պիտի կացուցանե»[1]:

Դեպքերը, դժբախտաբար, շատ շուտով ապացուցեին Զոպանյանի իրավացիությունը: «Սահմանադրության վերահաստատման» կատակերգությանը հաջորդեց Կիլիկյան հայերի ահավոր ջարդի ողբերգությունը: «Հեղափոխության» միրաժից խաբված ու արբած արևմտահայության դեմին «վիշապը» (Ս. Զոպանյան) թափեց իր ահավոր կրակը, որը համապատասխանեց Զինգիզխանի և Լենկթեմուրի օրերի սարսափներին: «Անարյուն հեղափոխությամբ, մոգական արագությամբ ազատական ռեժիմի մը բռնապետական Թուրքիային մեջ հաստատումը,— գրում է Զոպանյանը,— որ քաղաքակիրթ աշխարհը իբր եղած վերջացած իրողություն մը ընդունեցավ ու փութկոտ սրանչացմամբ մը ծափահարեց, և որը հայոց իսկ ամենեն բնահավատները, իրենց շվարման ու հուսահատության մեջ ակնկալական իանդամատությունն համակված ու հաղթված, վավերական կարծեցին, ահա կը հայտնվի մորեմերկ իր ահռելի պատրանքի չարագործ երևույթը»[2]: Այսպիսով, կատարված «հեղափոխությունը» միայն ահռելի պատրանք էր ու խաբեբայություն, որը կոչված էր վերնեղման դնելու հայ դատը: Իսկ գերեզմանափորների դերում հանդես եկան «հներից» առավել մոլեռանդ «երիտասարդ Թուրքերը» և հայ ազգի ու հայրենասիրության անունից պոռոտախոսող դաշնակցությունը:

---

[1] «Անահիտ», Ժ տարի, 1908, թիվ 1—4, էջ 46:

[2] «Անահիտ», ԺԱ տարի, 1909, թիվ 1—2, էջ 43:

Ռուսական, եվրոպական և արևելյան մշակույթների պրոպագանդը հանդեսում

1

Հայության մեջ եվրոպական և ռուսական մշակույթի տարածման գաղափարը Ա. Չոպանյանը հղացել էր դեռ տարիներ առաջ, «Հյուսիսափայլի», «Փորձի» և 80-ական շրջանի մամուլի տիրական ազդեցության տակ, և ձեռնարկից այդ գործին արդեն «Մաղիկ» հանդեսում: Նպատակը հայ ժողովրդի լուսավորությունն էր, նրա մեջ եվրոպական քաղաքակրթության տարածումը. վերջին հաշվով հնգաշրջիչ մի գործ, որին ձեռնարկել էին բարձրացող բուրժուազիայի դեմոկրատ գաղափարախոսները, որպես բուրժուական ազգի ստեղծմանն ու նրա կոնսոլիդացիային նպաստող հզոր ազդակի:

«Մաղիկի» կարճատև կյանքն էր դուցե պատճառը, որ այդ գործը նրա էջերում ամբողջականության չհասավ: Ա. Չոպանյանի հրատարակած առաջին հանդեսում արդեն նկատվում է խմբագրի ձգտումը. հայ ժողովրդին եվրոպական մշակույթը ներկայացնել՝ դասականը և ժամանակակիցը զուգորդված. Գյոթեի, Անդերսենի, Միցկևիչի կողքին էլիզաբեթ Դրուինգ, Ժան Լոռեն, Բյուրգըր: Այնուամենայնիվ, այստեղ դեռ չի տրոփում մատուցման տրամաբանական զարկերակը և, որ խիստ թերի է, օտար մշակույթը ներկայացվում է, որպես կանոն, միայն թարգմանությունների ձևով, առանց ուսումնասիրությունների և մեկնաբանող խոսքի: Բացառություն են, թերևս, Ա. Չոպանյանի հոդվածը Հյուսիսի պրականության վերաբերյալ և Ստեփան Քարբությանինը՝ Ջոն Քիլի գործունեության մասին: Սրանք էլ, սակայն, կրում են պատահական ընտրության բնույթ և, որ գլխավորն է, չունեն անհրաժեշտ խորություն:

Շարունակելով «Մաղիկի» ավանդույթը, «Անահիտը» առավել ծավալում, զարգացնում և խորացնում է այդ գործը: Հատկանշականը այստեղ մեզ ներկայացվող հեղինակների մտածված ընտրությունն է և, որպես կանոն, այդ հեղինակների, նրանց գործերի, նրանց ծնունդ տված ժամանակաշրջանի վերաբերյալ խմբագրության լուսաբանող խոսքը: Այսպիսով, «Անահիտը»

ավելի մատչելի և առավել դյուրամարսելի է մատուցում օտար գրականությունը հայ ընթերցողներին:

Պիտի պատահական չհամարել, որ «Անահիտի» մեջ տպագրված օտար գրականության առաջին նմուշը Պուշկինի ստեղծագործությունից է վերցված: Նրա «Պոեմա» բանաստեղծությունը Ալ. Ծատուրյանի թարգմանությամբ տպագրված է Ա տարվա թիվ 1-ում: Ա. Չոպանյանը, առհասարակ, շատ բարձր էր գնահատում ռուսական գրականությունը, շեշտելով նրա համամարդկային նշանակությունը: Մի առիթով նա հայտարարում է, թե Գոգոլը, Դոստոևսկին, Տոլստոյը, Տուրգենևը, Գորկին մտավորական բարերարներ են ամբողջ մարդկության համար[1]: Ա. Չոպանյանը իր լուրջ անհանգստությունը և վրդովմունքն է հայտնում, որ ռուս գրականությունը դեռևս վատ է մատուցվում հայ ընթերցողներին: 1904 թվականին նա գրում էր. «...ապշեցուցիչ բան մըն է, որ դեռ կովկասյան հայ մամուլին մեջ լուրջ, մանրամասնյալ ուսումնասիրություններ չեն կատարված Դոստոևսկիի, Տուրգենևի, Գոգոլի, Լերմոնտովի, Տոլստոյի, Գորկիի պես գրողներուս վրա»[2]: Իրավունք ուներ Չոպանյանը, երբ ռուս գրականության պրոպագանդման գործում կովկասահայ մամուլի և մտավորականության դերը համարում էր վճռական[3]: Այստեղ ոչ միայն ռուսերեն լեզվին լավ տիրապետելու հարցն է, որ բնականաբար

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—4—5, էջ 70:

[2] «Անահիտ, Ջ տարի, 1904, թիվ 9—10, էջ 137:

[3] «Մուրճ» ամսագրի 10-ամյակի առիթով Ա. Չոպանյանը հոդված է տպագրում («Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 5—6), որի մեջ դրվատելով հանդեսի գործունեությունը բոլոր ուղղություններով, մասնավորապես կանգ է առնում «Մուրճի» և կովկասահայ մամուլի միջոցով հայ ժողովրդի մեջ ռուսական և գերմանական մշակույթի պրոպագանդման և տարածման անհրաժեշտության վրա: Այդ հարցի առաջքաշումը պատահական չէր և ընտել երբեք չէր նշանակում, թե Չոպանյանը կարևորություն չէր տալիս ինքնուրույն գրականության զարգացմանը: Չոպանյանի՝ ինտուիտիվական թվականների գործունեությունը Պոլսի մամուլում ու «Մաղիկ» հանդեսում, թե «Անահիտում» ու մանավանդ եվրոպական լսարաններին առջև հայ մշակույթի անխոնջ պրոպագանդման փաստը խոսում են նման ենթադրության անհերքելիության մասին:

«Մուրճի» խմբագիր Ավետիք Արասխանյանցը, սակայն, հենց այդ դրով ընկալեց Չոպանյանի հոդվածը ու բավականին սուր քննադատական ելույթով պատասխանեց նրան («Մուրճ», 1899, № 4—5): Չոպանյանի մտահոգությունն էր հայ ժողովրդի ընդհանուր և բազմակողմանի լուսավորությունը, այդ թվում նրան քաղաքակիրթ աշխարհի, մասնավորապես ռուսական և գերմանական առաջավոր մշակույթին հաղորդակից դարձնելը: Պատահական չէ, որ նա Գոգո-

Վոլկասի հայության մեջ անհամեմատ բարձր մակարդակի վրա էր, այլև հատկապես միջավայրը դերազանց իմանալու և համապատասխանաբար ոդին լավ արտացոլելու հարցը: «Ռուսահայը նախ պարտավոր են ռուս դրականության հրաշակերտները հայացնել, որ մը դոր միայն իրենք կարող են կատարել և որով օգտակար եղած ալիտ ըլլային ընդհանուր հայության. ռուս գաղաքակրթությունը Ասիո վրա տարածվող մտավոր տիրական զորությունն ըլլալու սահմանված է, և ռուս մտածումն ու ռուս

լին, Դոստոևսկուն, Տուրգենևին, Տոլստոյին, Դոնչարովին, Չեխովին թարգմանելու խնդրի հետ մեկտեղ դնում էր, թե «թարգմանություններեն զատ «Մուրճը» կրնար ավելի ընդարձակ տեղ մը նվիրել Ռուսիո, ինչպես Գերմանիո մտավորական ու ընկերային կյանքին բոլոր երևույթները մանրամասնաբար նայ ճասարակությանը ծանոթացնելու» (ընդգծումը իմն է՝ Կ. Դ.): Մինչդեռ «Մուրճը» Չոպանյանին վերագրում է այն միտքը, թե ըստ նրա՝ հայ դրականության ու մամուլի հիմնական խնդիրը իբր թարգմանությամբ զբաղվելն է: «Ձեր հասկացողությամբ թարգմանականը պետք է կազմի մի դրականության և մանավանդ մի ամսագրի էական մասը»,— Չոպանյանին պատասխանում է Արասխանյանցը (էջ 485) և ուսուցանում, թե «Ամսագրի դլխավոր արժանիքը պետք է որոնել ուղղության և ինքնուրույն գրվածքների մեջ... նաև հայոց դրականության մեջ էականը, գնահատելին, թե հայերի և թե ամբողջ մարդկության համար՝ նորա իսկական ստեղծագործություններն են» (էջ 491): Այս մտքերն ինքնըստինքյան անառարկելի են, և նարեկացու մասին առաջին լուրջ ուսումնասիրության հեղինակը արդեն վաղուց դիտակցում էր այդ:

Չոպանյանը խոսում է նաև այն մասին, որ օտար դրականությունների լավագույն նմուշների թարգմանությունը ընդհանուր լուսավորական նպատակի հետ կարող է ուննենալ նաև անմիջական նշանակություն հայ գրողների ոճի կատարելագործման տեսակետից: Արասխանյանցը Չոպանյանին վերագրում է այն միտքը, թե նա թարգմանությունների խնդիր է դնում միայն ոճի կատարելագործման նպատակով և, բնականաբար, հեշտությամբ քննադատում է այդ դրույթը: «Մինչդեռ թարգմանական գրականության մեջ,— դրում է Արասխանյանցը,— դուք ոճ զարգացնելու միջոց եք տեսնում, մենք՝ դեռ այդ թարգմանական գրականությունը նախ և առաջ ազգի կրթության օժանդակ միջոց ենք ընդունում: Մեր հայացքների մեջ այդ մասին ահագին տարբերություն կա, Ձեր տեսությունը տանում է դեպի թարգմանությունները անխտիր. Ձեր տեսությունը Ձևված է գրագետներին ոճի մեջ կրթելու համար, մերը՝ թարգմանությունները ժողովրդի պահանջներին ծառայեցնելու համար: Ձեզ համար կարելի է ասել, թե ժողովուրդ չկա, այլ կա «գրագետներու» դասակարդ, դուք ավելի սորանով եք զբաղված քան ժողովրդի կարիքների խնդրով» (էջ 486):

Սրե մի կողմ թողնենք Արասխանյանցի զգացական ալոռիկումը, որը, ի դեպ, բացատրվում է «Մշակի» դեմ ունեցած պայքարով և այն փաստով, որ Չոպանյանի հոդվածից «Մշակը» նյութ էր քաղել «Մուրճին» քննադատելու համար, ապա ըստ էության Չոպանյանն ու Արասխանյանցը նույն բանն են պնդում. «թարգ-

արվեստը պետք է ծանոթ դառնան հայերու ամբողջության»[1]։ *Դուցե և հենց այն պատճառով, որ նա ոտս գրականության հայերեն թարգմանությունը համարում էր պիտավորապես կովկասահայության պարտականությունը, Ա. Զոպանյանը «Անահիտում» համեմատաբար քիչ թարգմանական գործեր է տպագրել*[2]*,*

մանական գրականությունը նախ և առաջ ազգի կրթության միջոց է» (Արասխանյանց), քաղաքակիրթ երկրների գրականության լավագույն արժեքները, ինչպես նաև մտավորական և սոցիալական կյանքի «բոլոր երևույթները մանրամասնորեն հայ հասարակությանը ծանոթացնել» (Զոպանյան)։ Մի տարբերությամբ, սակայն, որ Արասխանյանցը Զոպանյանի հոդվածում չի ուզում տեսնել այն, ինչ նա գրել է, և անիրավի կեղծել նրան մեղադրանքներ է ներկայացնում («Ձեզ համար կարելի է ասել, բեն ժողովուրդ չկա» և այլն)։

Արասխանյանցը, օրինակ, Զոպանյանին ասում է. «Դուք արդեն սարսափելի ոճամոլ եք։ Ոճին դուք զոհում եր միտքը և ճշմարտությունը» (էջ 486)։ Բայց բնավ չի անդրադառնում նրան ոչ Զոպանյանի գործունեությանը, ոչ էլ ձևի և բովանդակության հարաբերության վերաբերյալ Զոպանյանի պոլսահայ մամուլում արտահայտած մտքերին։ Արասխանյանցին պատասխանելով, Զոպանյանը մեկ անգամ ևս շարադրում է իր հայացքները այդ կետի մասին։ Ահա այդ հատվածը.

«Ձևի գրականություն» մը, այսինքն գրականություն մը, ուր գաղափար չկա և միայն զարդարուն ոճ կա, «գրականություն» չի կրնար կոչվիլ, սին խաղալիք մըն է, և այդ չէ, որ «դեղնագիրքական գրականություն» կանվանեմ ես. դեղնագիրքական գրականությունը այն է, ուր գաղափար ու ձև հավասարապես հասուն ու խնամված, ներդաշնակորեն միրար կգրկեն» («Անահիտ», Ա տարի, 1899, թ. 11, էջ 326)։

Արասխանյանցի հոդվածը միակողմանի դիտած՝ բավականին համոզիչ է։ Եթե նկատի ունենանք Արասխանյանցի հեղինակությունը և 90-ական թվականների «Մուրճի» ծանր կշիռը կովկասահայ իրականության մեջ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Անահիտը» (մանավանդ Ա տարվա) համարյա մուտք չուներ Ռուսաստան, հետևաբար ընթերցողը հնարավորություն չուներ համադրելու երկու հոդվածները ճշմարտությունը վեր հանելու համար, ապա միանգամայն բնական պետք է լիներ, որ Զոպանյանին փակցված ժողովրդից կտրված ոճամոլի պիտակը երկար ժամանակով քաղաքացիության իրավունք ստանար կովկասահայ մտավորականության շրջաններում։

Այս միջադեպը ավելորդ անգամ լույս է սփռում այն դժվարին ու ծանր մթնոլորտի վրա, որի պայմաններում գործունեություն էր ծավալել Ա. Զոպանյանը։

[1] *«Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 5—6, էջ 179։*

[2] *Ա. Պուշկինի «Գյուղը» բանաստեղծությունը, Բ, տարի, 1899, թիվ 1—2, Տուրգենևի «Համլետ և Դոն Քիշոտ» ուսումնասիրությունը, է տարի, 1905, թիվ 6, Մաքսիմ Գորկու նամակը Կովկասի դեպքերի մասին, է տարի, 1905, թիվ 12, Չեխովի «Շան հետ կինը» («Дама с собачкой») վիպակը, ժ տարի, 1908, թիվ 5—12։*

աշխատելով ուս հեղինակներին ներկայացնել առավելապես խմբագրության խոսքով։

Հանդեսում տպագրված առաջին լուրջ գրականագիտական ուսումնասիրությունը, որ պատկանում է Ա. Զոպանյանի գրչին, կրում է «Պուշկին և Միցկևիչ» տիտղոսը։ Հեղինակը համեմատական վերլուծություն է անում սլավոնական ժողովուրդների երկու մեծ բանաստեղծների գործունեության, ճշտում նրանց դերն ու տեղը ազգային և համաշխարհային գրականության մեջ։

Պուշկինի ծննդյան 100 ամյակի առթիվ կառավարությունը, որ «Տոլստոյի հոբելյանին առթիվ այնքան ցուրտ ու նույնիսկ թթված դեմք մը ցուցուց», պաշտոնական աղմկոտ հանդիսություններ է կազմակերպում։ Բանաստեղծի հիշատակի համար չկա ավելի աղարտող, ավելի երկդիմի պատիվ, քան բռնապետական կառավարության մեծարանքը, նկատում է Ա. Զոպանյանը։ Պուշկինը, սակայն, «խառնվածքով ու դաստիարակությամբ ազատասեր մըն էր, դպրոցին մեջ սնած էր ֆրանսական տասնևութերորդ դարու հեղինակներովը և իր առաջին փորձերուն մեջ... ազատության ուղղված գեղոններ հորինած էր, նույնիսկ մասնակցած էր ազատական գաղտնի ընկերություններուն... հրատարակած էր բազմաթիվ հակակառավարական պարսավագրեր ու երգիծանքներ»[1]։

«Անահիտը» հայ ընթերցողներին Պուշկինին ներկայացնում է որպես «բռնության դեմ մը»։ «Օնեգինի» քերթողը ճշմարիտ ուս գրականության հաստատման եղավ եթե ոչ հիմնադիրը,— գրում է Ա. Զոպանյանը,— ու ուս գրական լեզուն ստեղծողն ու մեկ հարվածով գեղարվեստական բարձրագույն կատարելության հասցնողը»[2]։ Հանդեսում հատկապես շեշտվում է Պուշկինի ստեղծագործության ժողովրդայնությունը, նրա մեջ արտացոլված ուս ժողովրդի ուրույն հոգին, ուրույն հրապույրը, ուրույն գեղեցկագիտությունը։ Արշակ Զոպանյան խիստ կարևոր է համարում ընդգծելու, թե Պուշկինը հող պատրաստեց ուսական ռեալիզմի համար, որը Գոգոլից հետո («Նիկոլա Գոգոլ, որ ուսական գրականության ճշմարիտ հիմնադիրը եղավ, կը խոստովանի թե իր համբան գտավ շնորհիվ Պուշկինի օրինակին ու

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 9—10, էջ 293։

[2] Նույն տեղում, էջ 294։

մանավանդ անոր խորհուրդներուն») պիտի տար աշխարհին «այն երեք հսկաները, որ կը կոչվին Դոստոևսկի, Տուրգենև ու Տոլստոյ»[1]:

Արշակ Չոպանյանն իր բարձր կարծիքը ռուս գրականության վերաբերյալ մեկ անգամ ևս շեշտում է Գոգոլի ծննդյան հարյուրամյակի առիթով հղած ուղերձում «Ռուս դպրության բարեկամների ընկերության» հասցեով, որը նրան հրավիրել էր Մոսկվա, հանդիսություններին մասնակցելու համար: Նա գտնում է, որ ռուս գրականության հավաքական հատկանիշներն են՝ վեհանձն դիմության ոգին, մարդկային եղբայրության բուռն ծարավը, բացարձակ արդարության բաղձանքը, կյանքի ռեալիստական արտահայտությունը, առանց արվեստականության բարձր արվեստը: Չոպանյանը շեշտում է, որ հենց այս գծերով է ռուս գրականությունը խոր ազդեցություն թողել հայ գրականության վրա, ուստի. «Իմ հիացման հարկս մատուցանելով ռուս գրականության հայր ու հիմնադիր Նիկոլա Գոգոլի հիշատակին, ուրախ եմ ուրևմն, որ կարող եմ այս առիթով հայտնել միևնույն ատենս հայ դպրության երախտագիտությունը հանդես ռուս մտածման վարպետներուն»[2]:

Ռուսաստանում առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության յուրատեսակ արձագանքն է «Անահիտի» էջերում Մաքսիմ Գորկու՝ Կուվկասի դեպքերի մասին նամակի տպագրությունը: Հետաքրքրական է խմբագրության առաջաբանի ծանո-

---

[1] «Անահիտ», Ա. տարի, 1899, թիվ 9—10, էջ 294:

1909 թվականին Պոլսի «Ազատամարտում» հրատարակված մի հոդվածում Ռուբեն Դարբինյանը գտնում է, թե գրական տեխնիկան նոր և ավելի բարձր աստիճանի է հասել «սիմվոլիստների» և «իմպրեսիոնիստների» դպրոցում և այդ պատճառով էլ Տուրգենևի ոճը իր արդեն թույլ և ցածր է այդ դպրոցի նույնիսկ միջակ գրողների ոճի համեմատ: «Անընդունելի է,— պատասխանում է Չոպանյանը,— որ այժմյան որևէ միջակ գրող՝ բնթնիքի հառաջադիմությանց շնորհիվ, որպես թե խնդիրը հաղորդակցության միջոցներու վրա ըլլար,— Տուրգենևէ մը ավելի բարձր համարվի: Տաղանդը իր թնթնիքին մեջ ալ կհայտնվի: Եվ թնթնիք մը, որ որևէ գործի մեջ՝ իր ժամանակին ոգվույն և հաշակին համեմատ, ու մանավանդ հեղինակին անձնական տաղանդին շնորհիվ, կատարյալ է եղեր, կը մնա ընդմիշտ կատարյալ ու գեղեցիկ... Մինչև այսօր զմայլելի է Տուրգենևը և նույնիսկ իբր ոճ գերազանց է «խորհրդանշականության ընկղմող» մառախլապատ, բռնապրոսիկ և անկենդան գրողներեն» («Բյուզանդիոն», 1910, թիվ 4078):

[2] Այս հարցերը հակիրճ արտացոլում են գտել Մ. Մալխասյանի «Традиции» обязывают հոդվածում: «Литературная Армения», 1983, № 8:

թուքյունը, որով հայտնվում է, թե այդ նամակը ուղարկված է եղել կովկասյան մի լրագրի և չի տպագրվել: Անդրադառնալով ցարիզմի կողմից հրահրվող աղգամիջյան ընդհարումներին՝ Գորկին այդ նամակում մերկացնում է ցարիզմը որպես ժողովուրդների բանտի, ցույց է տալիս, որ աղգամիջյան կոտորածների կազմակերպումը ցարիզմի կողմից՝ միրող դասակարգի քաղաքականության հետևանք է: «Մարդկային պատմության ամբողջ տարածության վրա, ոչ մի երկրում դևևավարող դասակարգի կռիվը իր իշխանությունը ժողովրդի վրա պահպանելու համար այնչափ խայտառակ, անամոթ և լրբաբար դաժան չի տարվել, որչափ մեր երկրում և մեր արյունալի օրերում»[1]: Մաքսիմ Գորկին կոչ է անում բոլոր ճնշված ազգություններին՝ միանալ ռուս աշխատավորության հետ ընդդեմ ընդհանուր և միակ թշնամու, հանուն աղատության:

Այս հոդվածի տպագրության և հայության մեջ տարածման փաստը ինքնին խոսում է «Անահիտի» դեմոկրատական ուղղության, «աշխատավորական էնաֆ խավերի» (Երուխան) շահերն արտահայտելու ձգտման մասին:

Տիրող բռնապետության դեմ պայքարի շահերից ելնելով էլ հանդեսում գնահատվում է Ադամ Միցկևիչի ստեղծագործությունը: «Միցկևիչը,— գրում է Ա. Զոպանյանը,— մեր հիացմանքը մեջ տեղ պետք է ունենա իբրև բարձրագույն հերոսներեն մեկը մարդկային բանաստեղծության, և մեր սրտին մեջ ամենեն կաթոգին անկյունը՝ մեր աղգային քերթողներուն անմիջապես քովը՝ իբրև գերագույն երգիչը մարտիրոս ժողովուրդներուն»[2]: Խանդավառ տողերով գնահատելով Ադամ Միցկևիչի արվեստը՝ Զոպանյանը գտնում է, որ նրա ու Շոպենի շնորհիվ, քաղաքական ինքնուրույնությունը կորցրած Լեհաստանը պահպանեց իր բարոյական-աղգային ինքնատիպությունը, մնաց որպես աղատության գլխավոր հեղափոխական ուժերից մեկը ընդդեմ ցարիզմի:

Հատկանշական է Զոպանյանի դիտողությունը Միցկևիչի «Հավատի» հարցում: «Իր «Հավատը»,— գրում է նա,— ոչ մեկ առնչություն չունի պաշտոնական ճնշողական եկեղեցիին հետ,

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 12, էջ 248:

[2] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 9—10, էջ 293:

որ բանութեան նեցուկը կը պահնա»[1]: Հետևաբար, Միցկևիչին համեմատելով «Պուշկինի գավակների»՝ Դոպել, Դոստոևսկու, Տուրգենևի հետ, հեղինակը պնդում է, որ նրանք և «բոլոր ռուս նոր գրագետները... ավելի ճիշտ տեսան, ավելի հավատարիմ եղան գարուն ոգիին, կրոնքն ու բանութիւնը նուիրագործին ու աղատութեան հաղթանակը ցուցուին քաղաքական, կրոնական, բարոյական, ընկերական բովանդակ հին կարգուսարքին տապալմանը մէջ: Եվ ռուս ժողովուրդը, որ ամենեն վայրագ բռնավորներեն մեկ քանին արտադրած է, տվաւ միանգամայն ամենեն անկաշկանդ ու բուռն հեղափոխականներ: Այդ ժողովուրդը անտարակուսելի կերպով կոչված է մարդկութեան ընդհանուր աղատագրութեան գործին մէջ ամենակարևոր դեր մը կատարել»[2]:

«Անահիտը» տպագրում է Բոլիժ դը Ֆրանսի սլավոնական լեզուների և գրականութեան դասախոս Լուի Լեժնի ընդարձակ ուսումնասիրութիւնը Միցկևիչի վերաբերյալ: Այս հոդվածը իր հարցադրումներով և ընդհանրացումներով շատ ավելի վիջում է Սրշակ Զոպանյանի հակիրճ, բայց բովանդակալից գրութեանը: Հանդեսում հրապարակվել են նաև Միցկևիչի ստեղծագործութեուններից երկու նմուշներ[3], որոնց ընտրութեունը կատարվել է խնամքով և մտածված, ցուցադրելու համար միանգամայն՝ թե՛ արվեստի շողշողումը և թե՛ քաղաքական-հայրենասիրական նպատակասլացութեունը: Հայ ընթերցողի վրա, օրինակ, խիստ տպավորիչ պետք է լիներ Կոնրադի հուչակավոր մենախոսութեունը, որից սառև բերվող մի փոքրիկ հատվածը կարող է լուսաբանել «Անահիտի» նպատակամղումը.

«Հոն՝ իմ հայրենիքիս մէջ է, որ սիրած եմ, հոն մնաց սիրածս... Բայց իմ սնոս, աշխարհիս մէջ միակ էակի մը վրա չի հանգչիր՝ ինչպես միջատը վարդի մը վրա, ոչ ալ ընտանիքի մը, ոչ իսկ դարու մը վրա... Ես ամբողջ ազգ մը կը սիրեմ... բազուկներուս մէջ ընդգրկեցի անոր բոլոր անցյալ ու ապագա սերունդները, հոս՝ սրտիս վրա սեղմեցի, բարեկամի մը, սիրահարի մը, ամուսնի մը, հոր մը պես... կուզեմ իմ սիրելի հայրենիքիս

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 9—10, էջ 296:

[2] Նույն տեղում, էջ 298:

[3] Հատված «Նախահայրերից», Ա տարի, 1899, թիվ 9—10, «Ֆարիսը», Ա տարի, 1899, թիվ 11:

դարձնել կյանքն ու երջանկությունը, կուզեմ աշխարհիս հիացման առարկան ընել ձայն»[1]:

«Անահիտում», ծավալի տեսակետից, շատ ավելի տեղ է զբաղեցնում եվրոպական մշակույթը, և դա բնական պիտի համարել: Եվրոպական կյանքի հետ ամենօրյա շփումը արևմտահայ մտավորականության գերակշռող մասի հետաքրքրությունների անմիջական շրջանակը կազմում էր եվրոպական գրականության և, ահա տարակ, եվրոպական մշակույթի հետ:

Նյութերի մատուցման ձև ու ձև և ոճ բովանդակության մեջ նկատելի է կանոնավոր ծրագրված կերպը: «Անահիտը» ձգտում է ուղղորդել դասական մշակույթի գանձերի տարածումը ժամանակակից ստեղծագործողներին ներկայացնելու հետ: Ըստ որում, դասականը ներկայացվում է որպես արդեն ժամանակի քննության ենթարկված, մնայուն արժեք, իսկ ժամանակակիցը շատ հաճախ մատուցվում է ծանոթության, ընթացիկ, առօրյա կյանքին համաքայլ ընթանալու միտումով: Բնական է, ուրեմն, որ առաջին դեպքում ընթերցողների սեփականության են դառնում բարձրարվեստ գործերը, իսկ երկրորդ դեպքում միշտ չէ, որ մատուցվող գործը լինում է ձևի ու բովանդակության բարձր մակարդակի վրա: Եվ կարևորը այստեղ այն է, որ հանդեսը բոլորաոիթներով ասում է իր խոսքը, ուղղություն տալով ընթերցողին: Ամեն դեպքում «Անահիտում» տպագրված թարգմանական նյութերը նոր որակ են «Հայրենիքի» շրջանի թերթոնային արվեստի համեմատ, որը շատ հաճախ հետապնդում էր ուղղակի ուտիլիտար նպատակ՝ հնարավորին չափ մեծ քանակությամբ բաժանորդներ շահել:

Ա. Զոպանյանի փոքրածավալ գրությունը՝ «Ճոքոնտանց խորագրով, առաջին նյութն է, որով սկիզբ է դրվում եվրոպական մշակույթի տարածման գործին «Անահիտի» էջերում: Լեոնարդո դա Վինչիի այդ հանճարեղ ստեղծագործությունը, «այն խուսափուկ անսահմանելի հրապույրովը, զոր արվեստագիտանելուն ամենեն մոգականը դրած է հոն բոլոր դարերուն համար... այդ անպատում կերպարանքին մեջեն ժպտելով գերագույն այն ժպիտը, զոր աստված պատճ չէր և զոր ինքը ստեղծեց», այդ երկը շատ բարձր է գնահատվում հանդեսում. նրա նշանակությունը

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 9—10, էջ 303:

«Շեքսպիրի «Համլետի» նման, ասում է Զոպանյանը, դուրս է գալիս իր ժամանակի սահմաններից և դնում հավիտենության:

Սա «Անահիտի» առաջին թվի մեջ էր: Հաջորդ համարում, Բոիլեք դործելով վերածննդից մինչև 19-րդ դար, հանդեսը ընթերցողներին է ներկայացնում ռևալիստական արվեստի մի ուրիշ մեծի՝ Գուստավ Ֆլոբերին: Այո, ռոմանտիկներից ոչ մեկը, նույնիսկ ոչ «Հյուգո հայրիկը», որի պաշտամունքը ուներ Ս. Զոպանյանը իր ամբողջ կյանքի ընթացքում, չարժանացավ առաջնության: «Ֆլոպեր, շատ ավելի հառաջ երթալով Բալզակեն, որ արդեն սկսած էր իր հսկայական վիպերուն մեջ արդի ընկերության արյունոտ սիրմը քրքրել, արտադրեց դործ մը անգութ դիտողության... անհավասարելի կատարելություն ունեցող ձևով մը: «Տիկին Բովարի», «Զգայնամոլ դաստիարակություն» դյուցազնական հեգնության գլուխդործ էջեր են, ուր արդի ընկերությունը կը պատկերվի իր բոլոր ղղվելի և ծիծաղելի գծերովը, ադամանդի պես ամուր, հստակ ու թանկագին ոճի մը մեջ»[1]: Արշակ Զոպանյանի այս խոսքերից պարզ է, որ հանդեսը առաջին հերթին ձգտել է հանրությանը ներկայացնել ռևալիզմի բարձրարվեստ խոշոր ներկայացուցչին: Այնուհետև, մի քանի համարում շարունակաբար, Ա. Զոպանյանի իսկ թարգմանությամբ, տպագրվում է Ֆլոբերի «Հերովդիա» վեպը, որտեղ «Ֆլոպեր միշտ կը պահե իր անագորույն դիտողի ձգտումը: Միշտ երևան կը բերի, պատմական ծիրանիին տակեն, մարդկային անասնության վայրագ պայթումները, բաց պատկերները, բարքերը՝ հինավուրց պարզությամբ, կրքերը հզոր, սանձարձակ ու անդիմակ, պայքարը բիրտ ու անկեղծ...»[2]:

Մասնավոր սիրով և ջերմությամբ «Անահիտի» էջերում հայ ընթերցողներին է ներկայացվում Գյոթեն: 1899 թվականին հանդեսում տպագրվում են այդ պահին Բուլինում ուսանող, Արամ Չարըգի նոթերը Գյոթեի մասին, նրա ծննդյան հարյուր հիսուներորդ տարեդարձի առթիվ: Հուզաթաթավ այս խոսքը առավելապես թարգմանն է հոդվածագրի հիացական զգացմունքների, այնուամենայնիվ, Չարըգը անում է մի քանի ուշագրավ դիտողություններ: «Գյոց ֆոն Բուլիխինգենին» առթիվ, օրինակ, նա

---

[1] «Անահիտ», Ա. տարի, 1898, թիվ 2, էջ 63—64:

[2] Նույն տեղում:

ընդգծում է Գևոնդեանցի միավորման գաղափարի արծարծմանը այդ դրամայի բերած մեծ նպաստը[1]:

Ավելի դրծնական և առավել բովանդակալից բնույթ է կրում Մամբրե Մատևոսեանի ուսումնասիրությունը Գյոթեի «Հերման և Դորոթեայի» ու այդ գործի հայերեն թարգմանության վերաբերյալ: Հոդվածագրի մանրամասն քննությունը ընթերցողի համար միանգամայն մատչելի է դարձնում Գյոթեի ստեղծագործության ընկալումը: Գնահատելի է հատկապես, որ Մատևոսեանը ընդգծում է ֆրանսիական հեղափոխության գաղափարների արտացոլումը դրամայում: «...Այս պատկերը, որ սկիզբ է առնում գավառական քնաւանիթի պարզ հարկից, հետզհետե անցնում է Հռոմոս էլ և հասնում ոսկեզօծ ու հնաոլոր հորիզոնը, ուր գեռ լսվում են ֆրանսիական հեղափոխության ավետաբեր ձայները, հավասարության կանչը, ուրիշ խոսքով՝ Գյոթեն միաժամանակ ընդգրկում է և հայրենիքը, և իր ամբողջ դարու երկունքը, և բոլոր մարդկանց»[2],— ընդհանրացնում է Մատևոսեանը:

Հետաքրքրական է, որ նույնիսկ օտար հեղինակի երկը քննելիս հանդիսը օգտագործում է առիթը՝ հայ ընթերցողի մտքում թարմացնելու սեփական ժողովրդի ու երկրի հարցերը: Խոսելով Հերմանի մասին, որ գնում է օգնելու գաղթականներին, հոդվածագիրը մի պահ վերհիշում է իր հայրենիքի ավերակները, Արարատյան դաշտում ցրված տաճկահայ տարագիրներին, որոնց օգնում են նրանց արևելահայ եղբայրները:

Այդպիսի մակաբերումները բնավ պատահական պիտի չհամարել «Անահիտի» համար: Նրա խմբագիրը, օրինակ, եվրոպական մշակույթի խոշոր գործիչներին նվիրված իր գրավոր ճի բանավոր խոսքում, բազմակողմանի և օբյեկտիվ գնահատությանը զուգահեռ, գտնում է նաղդր առարկա գործը կամ անձը նաև մեր ժողովրդի ընկալման տեսանկյունից:

Նման բանախոսության փայլուն օրինակ է վիկտոր Հյուգոյի 100-ամյակի պատվին Փարիզի Բազալետության կազմակերպած հանդեսին Արշակ Զոպանյանի ելույթը: Գնահատելով Հյուգոյի գործը՝ Զոպանյանն ընդգծում է, որ մեծ ֆրանսիացու անունը հայերի համար նշանակում է արդարություն, ազատություն, վեհանձնություն, քաջասրտություն, գաղափարի համար պայքար տա-

---

[1] «Անահիտ», Բ տարի, 1899, թիվ 1—2, էջ 17:

[2] «Անահիտ», Զ տարի, 1904, թիվ 9—10, էջ 145:

ռապանք[1]: Համանման բովանդակություն ունեն նաև «Անահիտ» ամբաստասեան երգիծանքը Չելմա Բրայտի և Պոլ Ադանի պատվին տրված ճաշկերույթներում, որոնց տեքստերը այնուհետև տպագրվել են Հանդեսում[2]:

Հայ ընթերցողներին «Անահիտ» կողմից խորհրդամբ և բազմակողմանիորեն ներկայացված խոշոր գրողներից մեկը էմիլ Զոլան է: Հանդեսի 1902 թվականի 10—11-րդ միացյալ համարում Արշակ Չոպանյանը տպագրել է իր ուսումնասիրությունը, որը խիստ շահեկան է Զոլայի ստեղծագործությունը խորհրդամբ վերլուծելու տեսակետից, ինչպես նաև Անատոլ Ֆրանսի դամբանական խոսքը[3] էմիլ Զոլայի գերեզմի վրա:

Թե՛ Չոպանյանը և՛ թե Ֆրանսը ընդգծում են Զոլայի՝ կապիտալիստական հասարակության հրեշավոր կողմերի խիստ քննադատության անողոք բնույթը, մերժելով Զոլայի հասցեին նետված մեղադրանքը, թե նա, խրվելով նատուրալիզմի մեջ, կորցրել է ամեն լավատեսություն կյանքի նկատմամբ:

«Կուզեր, որ երկրիս վրա միշտ ավելի բազմաթիվ մարդիկ երջանկության հասնեին: Շատ բան կը հուսար մատածումեն, գիտությունեն: Նոր ուժեն, մեքենայեն կը սպասեր աշխատավոր մարդկության ևս քան զևս ազատագրումը»,— շեշտում է Անատոլ Ֆրանսը[4]:

Իսկ Ա. Չոպանյանն ընդգծում է. «Ու այդ բոլոր աղբի ու ցավի մեայլ շինքը կը լուսավորվի իորին հավատքի մը ճառագայթովը, այն հավատքին, թե կյանքի բոլոր ոգեղությունները ու ազնեւուն մեջ կա բան մը գերօրհնյալ ու գերազնիվ՝ Աշխատությունը, թե այն օրն, ուր արդի ընկերության եղեռնական անիրավությունները պիտի քայքայվին ընդվզումին հերոսներուն ձեռքովը և մարդիկ պիտի կարենան իրենց բոլոր ուժն ու հոգին նվիրել ամենայն ազատությամբ աշխատելու, արտադրելու և իրենց աշխատության արդյունքը արդարորեն վայելելու, աշխարհը պիտի ըլլա իրոք դրախտ, ուր աստվածաբանները սխալմամբ մարդկային պատմության սկիզբը դրած են»[5]: Հետաքրքրական չէ նշել, որ նույն օրերին, Զոլայի մահվան

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 2, էջ 35:

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 1—2, Թ տարի, 1907, թիվ 1—2:

[3] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 9:

[4] Նույն տեղում, էջ 202:

[5] Նույն տեղում, թիվ 10—11, էջ 217—218:

տարիի կովկասյան հայ մամուլում հրատարակված հոդվածների մեծ մասում նույնպես ընդգծվում էր Աշխատանքը՝ որպես Զոլայի իդեալ, որպես նվիրական, սրբագործող, կենդանացնող, կյանքը վերափոխող ուժը[1]:

Զոպանյանը գտնում է, որ Զոլան կյանքը բացատրելու մեթոդի մեջ սխալվում էր, երբ ձգտում էր գիտության օրինակով ամեն ինչ նույնությամբ հայելիացնել գրականության մեջ: «Ասոր համար է, որ հակառակ խնամքով հավաքված իրողությունների կուտակումին, Զոլայի գործը հաճախ նվազ հավատարիմ ցոլացում մըն է իրական կյանքին, քան Ֆլոբերի ու Մոպասանի գործը»[2]: Այնուամենայնիվ, ինքը Զոլան հաճախ չէր հետևում իր մեթոդին, գտնում է Զոպանյանը, նա բարձրանում էր փաստերի արձանագրումից մինչև իսկական ռեալիզմի արվեստը ու կերտում հրաշալիքներ:

Միևնույն ժամանակ դրսևորելով նաև իր համակրական վերաբերմունքը, Զոպանյանը գրվատում է, որ Զոլան ամենից պերճախոս և ամենից կարծր է քննադատել «կեղծ գրականությունը», «բնությանը կնսակ դարձուցած ու իրենց գործը կյանքի որևէ տարրի վրա չհիմնող գրագետները»:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում «Անահիտում» տպագրված ուսումնասիրությունները Միսթրալի, Ալֆրեդ դը Վինիի, Ժոզե-Մարիա դը Հերեդիայի և Բևնար Լազարի մասին: Եթե Ֆլոբերին, Հյուգոյին, Զոլային ավելացնենք նաև վերը հիշված հեղինակներին և նրանց ստեղծագործությունների թարգմանությունները, ինչպես նաև Թեոֆիլ Գոթիեից, Սյուլլի Փրիդոմից, Լը Քոն դը Լիլից, Ժան Մորեասից, Էմիլ Վերհառնից, Պոլ Վեռլենից, Շառլ Բոդլերից և մի քանի ուրիշ ֆրանսիական բանաստեղծներից կատարված թարգմանությունները, ապա կարելի է միայն զարմանալ, թե ինչպես Ա. Զոպանյանին համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հաջողվել է, այլևայլ գործերին (ընդորում ոչ պակաս կարևորության և աշխատատարության) զուգահեռ, հայությանը ներկայացնել ամբողջ 19-րդ դարի ֆրանսիական գրականությունը իր բոլոր հիմնական ուղղություններով՝ ռեալիզմ, ռոմանտիզմ, նատուրալիզմ, «պառնասականներ», սիմվոլիստներ, դեկադենտներ:

---

[1] Տե՛ս «Մուրճ», 1902, № 10, էջ 212:

[2] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 10—11, էջ 216:

Հենց այդ ծրագրին էլ հետամնում էր Ա. Զոպանյանը՝ տալ ֆրանսիական գրականության վերջին դարի ընդհանուր պատկերը հիմնական գծերով։ Պատահական պիտի չհամարել, որ Հելենիային նվիրված հոդվածում «Անահիտ» ամբողջը ֆրանսիական գրականության պատմության մասնակի ակնարկ է անում։ Ըստ Ա. Զոպանյանի 19-րդ դարի ֆրանսիական գրականությունը «դասական» և «ռոմանտիկ» ուղղությունների իրար հերթափոխող շրջաններից է բաղկացած։ Ընդ որում «դասական» տալով նա հասկանում է ըստ էության ակադեմը։ «Դասական արվեստը,— գրում է նա՝ հակադրելով ռոմանտիզմին,— հղացման, շարադրության և ոճին մեջ տրամաբանությունը, կյանքի հավատարիմ թարգմանությունը, կարգը, համակությունը, ժուժկալությունը, խոսքյունը, ամենամաքուր կատարելությունը կը փնտրե... դասականը կը ձգտի արտահայտել ինչ որ կա հիմնական, հավիտենական, տիեզերականորեն մարդկային՝ կյանքին մեջ... Դասականը կը խորշի հերիաթին անձը տեսարանին վրա դնելե, ընդհակառակն կը ջանա զայն բոլորովին ծածկել, զայն հալեցնել իր հղացած անձնավորություններուն մեջ, զայն երևցնել մարդկային ընդհանուր զգացումներու հայտարերումին մեջ»[1]։ Եվ այնուհետև՝ «...ճշմարիտ դասականները խորասին ու բարձրորեն իրապաշտ են իրենց առավել կամ նվազ խորհրդանշական ձևին տակ»[2]։

«Դասականի» նման մեկնաբանության դեպքում, անշուշտ, դժվար է համաձայնել Ա. Զոպանյանի հետ, երբ նա «դասականին» շարքում է դնում «պատնառականը» դպրոցը, որի «արվեստն արվեստի համար» տեսությունը շատ հեռու էր ունակից կոչվելուց։ Սրտին ինքը Ա. Զոպանյանը մի ուրիշ հոդվածում «պատնառականներին» այսպիսի դիտողական է տալիս, «Պատնառականները» ռոմանտիկներուն հոգեվարքը կը նկարագրեին, հոգեվարք մը, ուր ձևին կատարելության ու նրբության հետ միասին մեռցած էր, նույնիսկ ծայրահեղության տարված, մինչ շունչը, որ անհրաժեշտ է ամեն բանաստեղծության, հոգեկան մեծ հուզումը, առանց որուն ոևէ գրական գործ որքան ալ սիրուն ձևով ըլլա հորինված՝ անկենդան է, կը պակսին»[3]։

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 8—9, էջ 145։

[2] Նույն տեղում, էջ 147։

[3] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 11, էջ 194։

Շարունակելով իր բնութագրումները՝ Ա. Չոպանյանը շատ ավելի դիպուկ է բնորոշում դեկադենտներին, որոնց արվեստը, ասում է նա, «պարզապես ամանոթի «անձնական» բնաբերության վերածնունդն էր, ավելի նուրբ, ավելի հիվանդ, ավելի ներքնատարտաս, ավելի ծայրահեղորեն անկարգ ու անհավատար, նվազ մեծաթռիչ ու նվազ վեհաշունչ ձևի մը մեջ»[1]:

Ֆրեդերիկ Միսթրալի ստեղծագործության մասին Ա. Չոպանյանը հատուկ ուսումնասիրություն է տպագրել «Լումայում»[2]: «Անահիտում», Միսթրալի «Միրեյի» 50-ամյակի առիթով տպագրած հոդվածում Չոպանյանը իրավամբ բարձր է գնահատում պրովանսական պոեմայի դազաթին և նրա ստեղծագործության մեջ կարևորը նկատում այն, որ այնտեղ ամեն ինչ բխում է կյանքի աղբյուրից, իրականության տողջ ղպացումից, որտեղ երևակայությունն իսկ իրական է, որովհետև հորինվել է ժողովըրդի հոգուց[3]:

Գրադատական խորհրդատու աշխատանք է Ալֆրեդ դը Վինիի «Նլոայի» վերլուծությունը: Չոպանյանը հանդես է բերում իրեն հատուկ բարձր ճաշակ և ամենախորաթափանց ներքամտություն, վեր հանելով հռչակավոր պոեմի իրական դանձերը և շատ դեպքերում հակադրվելով 19-րդ դարի ֆրանսիացի մեծ գրողների ստեղծագործությանը նվիրված «գրական ուսումնասիրությունների» հեղինակ Էմիլ Ֆակեին:

Հրեշտակ Նլոայի մեջ Չոպանյանը գնահատում է հոգեկան պայքարը, որը Քրիստոսի արցունքից ծնված այդ աղջկա բուն մարդկային տարրն է: «Առանց այդ տարրին որևէ հզացում անկենդան կը մնա ու ցուրտ,— գրում է Չոպանյանը,— հին աշխարհին բոլոր դիցաբանական հզացումները, քրիստոնեության բոլոր ըմբռնումներն Աստծո, հոգիներու, հրեշտակներու, Սատանի, արքայության, դժոխքի, մեր հոգիին ու մեր կյանքին առավել կամ նվազ տևական արտարձակումներն են անհունին մեջ, եթե Հոմերի աստվածները կամ Միլտոնի Սատանը և կամ Գյոթեի Մեֆիստոֆելը տարօրինակ կենդանի են, «մարդկային» ըլլալնուն համար է, որ կենդանի են. բնազանցական

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 8—9, էջ 148:

[2] «Լումա», 1905, օգոստոս—սեպտեմբեր—հոկտեմբեր, 1908, հունվար—ապրիլ:

[3] «Անահիտ», ԺԱ տարի, 1909, թիվ 3—4, էջ 50:

միակատար կանոնը զուրկ պիտի լլային շարժման և տարածյունն, ոչ մեկ հուզում պիտի չպղպջին մեզի, պիտի լլային սովորները, որ չեն ապրիր»[1]:

Հատկանշական է նաև այն, որ Զոպանյանը Սասունի կեդրոնի մեջ գնահատում է հասատամած սասվածային կարգ ու սարքի դեմ նրա ընդվզումն ու բողոքը, նրա արժանապատվության զգացումի վիրակյությունը, պատասխանությունը, խրոխտությունը: Եվ դարձյալ՝ քննադատը զվարճի է գտնում հեղինակի լուծումը, որը սոիպում է Սասունին զրկել և բոզճանք հայտնել նորից սասծու ծառա դառնալու: Այս սրանչելի վերլուծությանը հաջորդում է պոեմի ամբողջական հրատարակությունը Արշակ Զոպանյանի խմբագրությամբ:

Զոպանյանը հայ հասարակությանը ծանոթացնում է դրնյֆուսյան հակատի հիմնական գործիչներից մեկին, վաղամեռիկ գրող Բենոար Լազարին: Սիմվոլիստական դպրոցի ներկայացուցիչ Բենոար Լազարի մեջ Զոպանյանը հատկապես գնահատում է նրա գայրույքը սոցիալական վիճակների և բյուրոկռ անարդարության դեմ և նրա խորին համոզումը, թե այդ անարդարացի հասարակությունը մի օր պիտի տապալվի, երբ տառապողները գիտակցեն իրենց իրավունքը ու ելնեն վճռական պայքարի[2]: «Անահիտում» էլ հենց տպագրված են Արշակ Զոպանյանի խմբագրությամբ Բ. Լազարի մի քանի գործերը[3], որոնց մեջ հեղինակը հեքիաթային սիմվոլների ձևով պատկերում է սերտ սոցիալական անարդարացի և հակամարդկային կարգերը և «Ավետյոզում» ժողովրդին ապստամբության է հանում այդ կարգերի դեմ:

Դարանակալը հայ մամուլում յուրովի մոդային էր դարձել ժամանակակից իտալական երկու բանաստեղծահիների երեսը՝ Ադա Նեգրի և Վիտտորիա Ադանուր: Ադա Նեգրին առավելապես այն պատճառով, որ նրա շոշափած սոցիալական թեման, բանվոր դասակարգի և աշխատավորության դառն վիճակի նկարագրությունը համահնչյուն էր ժամանակի դարպիարական և գործուն պայքարի պահանջներին: Վիտտորիա Ադանուրը, որ կարծես շարունակելու եկավ Ադա Նեգրիին, եթե ոչ դարպիարապես, այլ գրավելու համար առաջին բանաստեղծուհու իտալական թափուր

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 7—8, էջ 144:

[2] «Անահիտ», ե տարի, 1903, թիվ 11, էջ 195:

[3] «Ողջակեզ», ե տարի, 1903, թիվ 10, «Ավետյոզ», թիվ 11, «Առնոլդ դատավորին պատահարը», թիվ 12:

ամբողջ, մեր ընթերցողների հետաքրքրությունն էր շարժել իր քնարական ձիրքով և հայկական ծագումով (հայրը հայ էր):

«Անահիտում» նույնպես երեացին հոդվածներ Ագա Նեգրիի[1] (Մամբրե Մատնեճյան) և Վիտտորիա Ագանուրի[2] (Արշակ Զոպանյան) մասին ու տպագրվեցին նրանց որոշ բանաստեղծությունները:

Մամբրե Մատնեճյանի «Ագա Նեգրի» ուսումնասիրությունը թևակոտ մակերեսային, այնուամենայնիվ, որոշ պատկերացում է տալիս բանաստեղծուհու հոնձքի վերաբերյալ և, մանավանդ, բերված առանձին բանաստեղծությունների ամբողջական տեքստերը լրացնում են պատկերը: Հոդվածագիրը Ագա Նեգրիի ստեղծագործության մեջ շեշտում է սոցիալական կյանքի հետ սերտ կապը, նրա «ճակատագիրը» պոեմը համարում է բանվորական դասը պաշտպանող սոցիալիստական գրականության նմուշ, ընդգծում, որ բանաստեղծուհին ամբողջ հոգով աոում է բուրժուազիային, մերակում նրա մոլություններն և, ընդհակառակն, փառաբանում բանվորներին:

Այնուհետև Մատնեճյանը պիտողություն է անում բանաստեղծուհուն. «Այսպիսով, նրա համար, կարծես միայն երկու դասակարգերից է բաղկացած ժամանակակից հասարակությունը՝ բուրժուազիա և բանվորություն. առաջինը փչացած, անհոգ ու աոևի, իսկ երկրորդը՝ տանջված ու սիրելի: Թե նա որչափ իրավացի է ժողովրդի առորին դասակարգը պաշտպանելու իբր աշխատասիրության ու առաքինության տիպար, իսկ դրա փոխարեն ձաղկելու ունևորին, իբր բոլորովին ագահ ու փչացած առար, այդ մասին չեմ ուզում երկար կանգ առնել այստեղ. միայն թե, բարի կը լինի բանաստեղծուհին նկատելու ինձ, եթե նկատեմ, որ աշխարհում չի կա ոևէ ազգ, որի մեջ կարելի լինի ցույց տալ երկու այդպիսի ծայրահեղություններ, այսինքն՝ բանվորությունը լինի ամբողջապես առաքինի, իսկ բուրժուազիան՝ ամբողջապես փչացած»[3]:

Բանաստեղծուհին շատ ավելի բարձր է կանգնած դասակարգերի փոխհարաբերությունների ըմբռնելու հարցում, քան նրա քննադատը, որը պարզապես շփոթում է հարցը: Խոսքը այս կամ

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 8—9:
[2] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 2—3, Զ տարի, թիվ 12:
[3] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 8—9, էջ 162:

այն դասակարգին պատկանող առանձին՝ առաքինի կամ ոչ, անհատների մասին չէ, այլ իր դարն ապրածի և հեղափոխականի, և Ադա Նեգրիի արժանիքն էլ հենց այն է, որ նա տեսել է նորը ու կանգնել նորի պաշտպանության դիրքերում:

«Անահիտում» հիշյալ ուսումնասիրություններից բացի տպագրվել են մի քանի տանդյակ թարգմանական գործեր, որոնցից մի մասին անդրադարձինք վերը: Բացի այդ, Գ. Փանոսի (Գառնիկ Ջնտալյան) թարգմանությամբ հրատարակվել է Շեքսպիրի «Անտոնիո և Կլեոպատրան» ամբողջական տեքստը[1]: Արշակ Չոպանյանի թարգմանությամբ՝ Ալֆրեդ դը Վինիի «Չևիըրը-նը»[2]: Լոնգֆելլոյի «Իրկվան երգը» (թարգմանությունն անդրադարձնից), Սուինպըրնի «Հակոդնները դիշերուն մեջ» (ֆրանսերեն առաջին թարգմանությունից): Արտեն Գալիկյանի թարգմանությամբ՝ Տասոյի «Երուսաղեմ ազատյալի» 4-րդ երգը, Լեոպարդիի «Առ Իտալիա», «Երազ», Քարատչիի «Մարտի երգը» և «Թուրքին հունձքը» բնութագծերը: Տիրայր վարդապետի թարգմանությամբ՝ Լորդ Բայրոնի «Դորան»: Տպագրվել են նաև քաղվածքներ Էմերսոնի աստվածներից և մի հատված Սերվանտեսի «Դոն Կիխոտից»:

Եվրոպական մշակույթը հայությանը ներկայացնելուն նվիրված հանդեսի գործունեությունը ապատիշ չի լինի, եթե չհիշատակենք Չոպանյանի մատհղացումը «Անահիտի» մատենաշար հրատարակելու վերաբերյալ:

«Մեր նպատակն է այդ գրքերի շարքով մեր ժողովրդին մատչելիորեն ու բարոյական դաստիարակմանը նպաստել»,— հայտարարում է Ա. Չոպանյանը: Մտահղացումը լայն էր և ծավալուն՝ տալ առնվազն չորս գրքույկ տարեկան և առաջին հերթին սկսել Անատոլ Ֆրանսով, Էմիլ Զոլայով, Պոլ Ադանով, Էքսիլեսով, Ռընանով, Դանթեով, Շեքսպիրով: Յավոք, «Անահիտի» մատենաշարի գաղափարը, նյութական միջոցների պակասու-

---

[1] «Անահիտ», ԺԱ տարի, 1909, թթ. 5—6, 7—8, 9—10, ԺԱ տարի, 1909—1910, թիվ 11—12, ԺԲ տարի, 1911, թիվ 1—2:

[2] «Անահիտ», ԺԲ տարի, 1911, թիվ 7—8: Արխիվում պահպանվել է դերասան Սբմին Արմենյանի ընդունագրությունը Ա. Չոպանյանի հետ, ըստ որի անվանի դերասանի խնդրանքով նրան է ուղարկվում «Չևիըրընի» թարգմանությունը՝ ներկայացման համար: Ըստ այդ նամակների պետք է ենթադրել, որ «Չևիըրընի» թարգմանությունը Ա. Չոպանյանը կատարել է մինչև 1907 թվականը (ԴԱԲ, ԱՉՅ, I բաժին, № 797):

Բյան պատճառով, լրիվ չիրագործվեց։ 1901 թվականին լույս ընծայվեց Ա. Ֆրանսի «Էպիկուրի պարտեզի» մի քանի գեղեցիկ հատվածների թարգմանությունը, ինչպես նաև «Ալֆրեդ դը Վինիի «Քերթվածներ» խորագրով գրքույկը։

Կատարված այս վիթխարի գործի յուրահատուկ ամփոփումն է Սրշակ Զոպանյանի «Հելլեն քաղաքակրթությունը Հայոց մեջ» հոդվածը, որտեղ նա պատմական ակնարկ է նետում հայ-հելլենական գրական կապերին և հետո եզրակացնում, որ հայ ժողովուրդը պարտավոր է քաջատեղյակ լինել հելլեն գրականության ու արվեստին, եթե ուզում է ժամանակակից քաղաքակիրթ ազգերի շարքում լինել։ Սրշակ Զոպանյանը ցավ է հայտնում, որ հին հունական գրականությունից դեռևս հայերեն աշխարհաբար թարգմանություններ չկան (հոդվածը գրված է 1908 թվականին) և խնդիր է առաջ քաշում, որպեսզի բարձրագույն դպրոցներում ուսանողներին լիակատար ծանոթություն տրվի հելլեն գրականության մասին, դեռևս եվրոպական թարգմանությունների միջոցով, մինչև որ լինեն աշխարհաբար հայերեն թարգմանությունը։ Նա հայտնում է, որ «Անահիտ» մեջ պիտի իր իսկ թարգմանությամբ (ֆրանսերենից) տպագրի մի շարք գործեր։ Այդ ծրագիրը ամբողջությամբ գործադրել նրան չի հաջողվում, այնուամենայնիվ Էքիլեսի «Պարսիկները» լրիվ թարգմանում և տպագրում է[1]։

«Հելլեն գրականության ծանոթությունն ու սերը մեր նոր սերունդներուն մեջ տարածելու ձգտող այս ջանքերս,— եզրափակում է նա,— կը լրացնեն իմ մարիս մեջ՝ այլազան ճիգերը, զոր գրած եմ «Անահիտ» մեջ կամ այլուր՝ մեր ժողովրդյան մեջ գրական դաստիարակության ճոխացման ու բարվոք ղեկավարման ի նպաստ։ Կը ցանկայի, որ տպագրա հայ գրագետը կամ գրասերը, այն շրջանին ուր ինքզինքը կազմելու կը պատրաստվի, նախ և առաջ իր սրամտության տակ ունենար գրականության ամենեն ցայտուն էջերը՝ դասական հնդինականը, աշուղական գրականություն, ժողովրդական բանաստեղծություն և ժամանակակից գրականություն, հետո՝ այդ առաջին ու զուտ հայկական խառը իր մարին ու պզայնության մեջ տեղավորելն ետքը, խորասին ճանչնար, ըմբռներ ու վայելեր հելլեն գրականության էական գործերը, հետո հռոմեական գրականությունը, հետո՝

---

[1] «Անահիտ», Ժ տարի, 1908, թիվ 5—12։

Արևելքի մեծ պրականության կարևոր գործերը, հետո ժամանակակից եվրոպական պրականության գլուխգործոցները։ Այն ատեն է, որ հայը պիտի արտադրեր լիակատար պրական պարգացումով պրպետներ»[1]։

Այս ծրագիրը, որին Արշակ Չոպանյանը փարել էր ըստ էության դեռ 1895—96 թվականներին Փարիզում մշտապես հաստատվելու և հայ ժողովրդի քաղաքական դատին ու նրա լուսավորության նվիրվելու վճռով, ինչպես տեսանք, արդեն իսկ սկսում է գործադրվել «Անահիտի» առաջին համարից։ Բուն հիմնական արվեստին ծանոթացնելու համար հանդեսում տպագրվում է Հիպոլիտ Տենի «Հունական արձանագործության» հոդվածը[2]։ «Արվեստի էջեր» ընդհանուր խորագրի տակ մի շարք նյութեր են տպագրվում, որոնցից առաջինը նվիրված է հունական արվեստին։ Հատկանշական է հետևյալ համարներից մեկում Գևակրատի «Հունաստանը ոգևար» կտավի լուսանկարի տպագրությունը։ Դա արդեն օսմանյան տիրապետության շրջանն է։ Գեղեցիկ կինը՝ Հունաստանը, թևատարած օգնության է հայցում ավերակների վրա կանգնած, իսկ նրա հետևում երևում է յաթաղանը սպառնալիորեն վեր բարձրացրած Թուրքի ուրվականը[3]։

«Քրոնիկ», «Մտավորական կյանքեն», «Արվեստի էջեր» ընդհանուր խորագրերի տակ «Անահիտը» հաճախ լուրեր է հաղորդել ժամանակակից եվրոպացի մշակութային կյանքի՝ ցուցահանդեսների, թատերական նոր բեմադրությունների, պրական ասուլիսների և երևույթների վերաբերյալ, անընդհատ տեղյակ պահելով իր ընթերցողներին կուլտուրական մեծ կենտրոնների մշակութային անցուդարձին։

2

«Անահիտի» առաջին համարներից մեկում Արշակ Չոպանյանը հանդես է գալիս, կոչ անելով բոլոր գաղթօջախների մտավորականներին՝ աշխատանք տանել ավյալ երկրի մշակույթի գանձերը հայերենի վերածելու և առհասարակ ուսումնասիրելու

[1] «Անահիտ», Ժ տարի, 1908, թիվ 5—12, էջ 55։
[2] «Անահիտ», Դ տարի, 1901, թթ. 4—5, 6—7, 8, 9։
[3] «Անահիտ», Դ տարի, 1901, թիվ 12, էջ 287։

ուղղությամբ: Ներկա պայմաններում հայրենասիրությունը մեր ժողովրդի մտավորական հարստացումն է,— ասում է նա և պահանջում մամուլի օրգաններում ձեռնարկել այդ ուսումնասիրություններին: «Պարսկահայերը կրնան մեզի ճանչցնել հին Պարսկաստանը իր պատմությամբ և գրականությամբ, նոր Պարսկաստանը իր բարքերով, աղանդներով ու կացությամբ»[1], նույնը նա նշում է մնացած բոլոր գաղթօջախների համար: Մասնավորապես Պարսկաստանի համար արված կոչը Ա. Չոպանյանը կրկնում է նաև իր «Պարսկաստան և հայեր» հոդվածում[2]: Այնուամենայնիվ, այդ կոչերին որևէ արձագանք չի տրվում: 1902 թվականի օգոստոսին Արշակ Չոպանյանը նորից ծավալուն հոդվածով անդրադառնում է հայ ժողովրդի մեջ արևելյան մշակույթի տարածման անհրաժեշտությանը:

20-րդ դարասկզբին, երբ արևմտյան բարձր քաղաքակրթությունները խիստ շահագրգռություն են ցուցաբերում Արևելքի մշակույթի նկատմամբ, Ա. Չոպանյանը պարզապես «տխմար ու տգետ» է գտնում, որ հայությունը հետամուտ չի լինում արևելյան մշակույթի յուրացմանը: «Անահիտը» ցավալի է նկատում, որ բնագրից զեռևս հայերեն թարգմանված չեն «Ջենդ-Ավեստան», «Շահնամեն», «Մեսնեվին», Հաֆեզի, Սաադիի, Նիզամիի, Խայամի քերթվածները: «Ժողովուրդ մը այնքան ավելի զորեղ կըլլա մտավորապես, որքան ավելի այլազան և ընդարձակ ծանոթություններ կամբարե իր մեջ՝ աշխարհիս բոլոր ազգերու կատարած գործին վրա... Այժմ, որ քրիստոնեական տարամերժությունը այլևս մեզ չի կաշկանդեր, պետք է որ մեր մտավոր գործունեության մեջ լայն բաժին մը հատկացնենք Արևելքի քաղաքակրթություններուն մեր ժողովրդին լրջորեն ճանչցնելու»[3]:

Չոպանյանը լայն ծրագիր է մշակում, որը մտադիր էր գործադրել «Անահիտում»: Նա ձգտում էր հայ ընթերցողին ծանոթացնել հնդկական, պարսկական, եգիպտական, ասորական, արաբական, նույնիսկ ճապոնական քաղաքակրթություններին: «Մենք պետք ունինք... ճանչնալ մինչև իսկ Թուրքը իր նյութական ու բարոյական անցյալ և ներկա կյանքին մեջ (որովհետև պետք է խոստովանինք, որ չենք ճանչնար Թուրքը, նույնիսկ

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 4:

[2] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 1:

[3] «Անահիտ», Գ տարի, 1902, թիվ 8, էջ 168—169:

թուրքը, որուն հետ ամենօրյա անմիջական հարաբերության մեջ ենք, որուն հետ կուծք կուծքի կռվելու վրա ենք հիմա)»[1]:

Գործը տեղից շարժած լինելու համար «Անահիտը» տպագրում է խայամի 14 քառյակներ[2], *որոնք ֆրանսերենից թարգմանում է Ա. Զոպանյանը: Հանդեսը բարձր է գնահատում խայամի փիլիսոփայական խորությունը և գեղեցկագիտական հմտությունը: Նրան համարում է մարդկության արտադրած ամենախելոք և ամենաշարադացած մարդկից մեկը*[3]:

«Անահիտում» հնչած կոչը այս անգամ արձագանք է գտնում: Համուտ բանասեր և թարգմանիչ Գառնիկ Ֆնտոլյանը պարսկերենից թարգմանում և «Անահիտում» հրատարակում է խայամի քառյակներ[4]:

Թարգմանիչը՝ Գ. Փառնակ ստորագրությամբ, հանդես է գալիս «Օմար խայամ» քննական ուսումնասիրությամբ: Փառնակը բերում է բանաստեղծի համառոտ կենսագրականը, բնորոշում նրա ստեղծագործության ժամանակաշրջանը, ընդգծելով Իբն-Սինայի (Ավիցեննա) հզոր ազդեցությունը նրա վրա: Գնահատելով խայամի ստեղծագործությունը՝ Գ. Ֆնտոլյանը գրում է. «Արդարև, Օմարի պես արևելքի և ոչ մեկ բանաստեղծ թափած է աստկահույզ բողոք և սուր երգիծանք չարամիտ, անխղճոտ և անխելք երկնքի՝ «ֆելեքի» դեմ: Իր ջախջախիչ հեգնությունը դարձուցած է նաև, առանց վախնալու մահմեդական կրոնի անեղող խստությունեն, կրոննելու և աղանդներու մոլեռանդության ու ձևապաշտության դեմ, որոնցմով կը կաշկանդեն, կահավեկեն մարդկային հոգին»[5]:

Հոդվածագիրը վեր է հանում խայամի՝ կյանքի նկատմամբ փիլիսոփայական հայացքի իմաստը, նրա կողմից անդրշիրիմյան «երանությունների» բացասումը և կյանքի վայրկյանից երջանկություն քամելու ձգտումը, «հաճույքի կրոնքի» քարոզը: Բարձր է գնահատում Փառնակը խայամի այն հատկանիշը, որ նա շատ սակավ դեպքերում է, «Քերևս հալածանքի սուր սպանալի մը

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 8, էջ 172:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թիվ 9, էջ 193:

[4] Նույն տեղում, թիվ 9, թիվ 10—11, Ե տարի, 1903, էջ. 1, 4, 5, 8, 11, 12:

[5] «Անահիտ», Զ տարի, 1904, թիվ 2, էջ 36:

առանը», համակերպություն ցույց տալիս տիրող իշխանությանը և նրանին ու միշտ «ազատ դերվիշության կապերտը սուլթանական շրեղությունն... վեր կը դասե»[1]: Ընդհանուր դիտողություններից հետո Գ. Ֆնտպլյանը բանիմաց ու խոր վերլուծում է Օ. Խայամի քառյակները ըստ թեմաների և բանաստեղծության կառուցվածքի, ինչպես նաև քննարկում Խայամի՝ եվրոպական լեզուներով թարգմանությունները[2]: Խայամի քառյակները, սույն ուսումնասիրության հետ միասին, Գ. Ֆնտպլյանը լույս է ընծայում առանձին գրքույկով, 1904 թվականին:

Ֆնտպլյանի ուսումնասիրությունից հետո «Անահիտ» էջերում պարբերական բանաստեղծություններից երևում են բազմաթիվ թարգմանություններ, որոնք կատարվել են Մեսրոպ վարդապետ Մաքսուտյանի կողմից: Այսպիսով, համարից համար հանդիսում հրատարակվում են Սաադիի, Հաֆեզի, Ջալալեդդին Ռումիի, Աբու Սաիդ Միհնեի, Շեյխ Ֆերիդուդին Ադդարի և ուրիշների քերթվածները: Նշանակալից է Ֆիրդուսու «Շահնամեի» Ս. և Բ գրվագների հրատարակությունը դոկտոր Հ. Թիրաքյանի թարգմանությամբ[3]:

«Անահիտ» ծրագրի իրականացման մեջ մեծ ներդրում է անում Գաւոնիկ Ֆնտպլյանը, հրատարակման հանձնելով նաև իր մեկ ուրիշ հոդվածը՝ «Խայամ և պարսիկ գրականությունը» տիտղոսով: Սա պատասխան էր «Մուրճում» հրատարակված Ա. Սափ. ստորագրությամբ մի գրախոսականի: «Մուրճը» գրախոսել էր Փաոնակի լույս ընծայած գիրքը և մի շարք դիտողություններ արել, ընդ որում, շարադրելով Խայամի ու պարսիկ գրականության իր ընկալումը: Ըստ «Մուրճի» հոդվածների, եվրոպական գիտությունը ուսումնասիրել է պարսիկ գրականության միայն մի նեղ մասը, բայց այդ նեղ մասը իր որակով դասվում է պատկառելի բարձրության վրա, «պարունակելով իր մեջ երեք մեծություններ՝ այս բառի եվրոպական նշանակությամբ. Ֆիրդուսի-էպիկ բանաստեղծ, Հաֆեզ-լիրիկ բանաստեղծ և Խայամ-միստիկ բանաստեղծ»[4]: Եվ, այնուհետև. «Խայամը մնում է մի

---

[1] «Անահիտ», Ջ տարի, 1904, թիվ 2, էջ 39:

[2] Նույն տեղում, թիվ 3:

[3] «Անահիտ», Ը տարի, 1906, թթ. 1—2, 3—4—5, 6—7, 12, Թ տարի, 1907, թթ. 1—2, 3—4—5:

[4] «Մուրճ», 1904, № 5, էջ 162:

առաջնակարգ մնծություն, շատ բնորոշ ու օրիգինալ գեմք պարսկական գրականության մեջ իբրև միստիկ բանաստեղծ»[1]:

Դանիել Ճնտպլյանի առարկությունը հիմնականում երկու կետում է: Առաջին հերթին նա դիտել է տալիս, որ իր ընդդիմախոսը մոռացության է մատնել պարսիկ և առհասարակ համաշխարհային գրականության խոշորագույն միստիկ բանաստեղծներից մեկին՝ Ջալալեդդին Ռումիին: Երկրորդ կետը կրում է արդեն իսր սկզբունքային բնույթ: «Անահիտը» և իր հոդվածաշարը սուր վեճի են բռնվում «Մուրճի» հետ, ապացուցելով, որ նայամը միստիկ բանաստեղծ չէ:

Դ. Ճնտպլյանը դիտում է, թե իր ընդդիմախոսը կիրառում է գեղագիտական քննադատության ժամանակավրեպ մի բանաձև, ըստ որի բնորոշվում է այս կամ այն գործչի ժամանակաշրջանը և այդ ժամանակաշրջանի տիրող գաղափարականը մեխանիկորեն տարածում նաև տվյալ մտածողի վրա: Բայց «Հարկ էր ժամանակի ոգին հետ ուսումնասիրել նաև հեղինակին անձնական հոգին, իր զգայնությունը, իր մտավորական հակումը, իր խառնվածքը, իր կրած ազդեցությունը, իր կյանքը, վերջապես, այն ամենը, որ կուգան կը կազմեն յուրաքանչյուր անհատի ինքնությունը... որ կը տարորոշեն զայն ուրիշներե, և կուտա իրեն այդ ներքին ուժը, որով երբ մանավանդ գերազանց մտավորականությամբ օժտված էակ մըն է, կը ներգործե, կը հակադրի հաճախ իր շրջակային դեմ ու կը փոխարկե զայն՝ իր այս թանկագին ինքնության մեջեն դիտելով ամեն բան, նոր հայացք մը կը բերե, նորոգ շունչ մը կը դառնա, իր կարգին նոր մեկնակետ մը կը հայթայթե իր ժամանակի մտավորական շարժումին»[2]: «Մուրճը», սակայն, այդ ուղիով չի գնացել, ըստ Դ. Ճնտպլյանի: «Մուրճի» հոդվածագիրը գտնում է, որ XI—XII դարերը Պարսկաստանի համար միստիկական գրականության դարեր էին, ուրեմն՝ նայամը միստիկ բանաստեղծ էր: Հոդվածագիրը միանգամայն համոզված է այդ հարցում և վիճում է Փառնակի հետ[3]:

«Պ. հոդվածագիրը չկասկածեր իսկ, թե ԺԱ դարը՝ որքան ալ միստիկ գրականության տիրած դարն էր, ղուրկ չէր մտավորական ուրիշ ևոթահոսանքներե, որոնք միստիկությունեն բոլորովին

---

[1] «Մուրճ», 1904, № 5, էջ 162:

[2] «Անահիտ», 2 տարի, 1904, թիվ 11, էջ 165—166:

[3] Նույն տեղում, էջ 165:

տարբեր ուղղությամբ կրնթանային դևպի ազատախոհություն»[1],— գրում է Ֆնտզլյանը և վկայակոչում հռչակավոր մոտածող Աբու Իբն Սինային:

Բազմաթիվ օրինակներով Ֆնտզլյանը համոզիչ ապացուցում է, որ խայամը մերժում է միստիկությունը, որ նա ազատախոհ էր, սկեպտիկ, մտածող, ըմբռնում, որ նա խորշելի է գտնում տիրող առիթական գաղափարախոսությունը և դրան հակադրում իր կենսահաստատողությունը. ոչ թե չքանալ աստծո մեջ, այլ վայելել կյանքի յուրաքանչյուր պահը:

Խայամը երբեք միստիկ չի եղել, ընդգծում է Ֆնտզլյանը, քացի իրական միստիկների նկատմամբ, որոնք ջանացել են «փրկել» խայամի բանաստեղծությունը իր ամբարիշտ գաղափարներից և մեծ հակամիստիկին դարձնել կրոնական ուղղափառ վարդապետության արբանյակ[2]:

Այս փաստն հոդվածի մեջ կարևորը այն չէ, թե «Անահիտը» ճի՞շտ է արդյոք հասկացել «Մուրճին» և մեկնաբանել: Շահեկանը «Անահիտի» հոդվածագրի մոքերի դրական շարադրությունն է և այն կերպը, որով նա պաշտպանում է խայամի ազատախոհությունը միստիկության դեմ: Արդեն իսկ հայ միջնադարյան բանաստեղծությունը վերուծելիս Ա. Զոպանյանը ինքը խանդով և կրթով տարանջատում է աշխարհիկը միստիկականից, բարձրացնում, դրվատում, հանրությանը ներկայացնում առաջինը՝ որպես հայ ժողովրդի հոգուց ծնված անանց արժեքի: Այս տեսակետից միանգամայն համահնչյուն են Ֆնտզլյանի և Զոպանյանի հայացքները, ուստի «Անահիտ» հանդեսն էլ «Մուրճի» հետ վեճում մնում է իր սկզբունքային դիրքերի վրա:

1904 թվականին, «Արևելք և հայ միտքը» խորագրով երկրորդ հոդվածում Ա. Զոպանյանը մի հայտարարի է բերում որոշ աշխատանքը, որ կատարվել էր «Անահիտի» էջերում, իր առաջին հոդվածում արձակած կոչից հետո: Նա խրախուսում է պարսիկ գրականությունից արվող թարգմանությունները և ուսումնասիրությունները: Բայց Արևելքը չի սահմանափակվում պարսիկ մշակույթով: Զոպանյանը սխալ է գտնում, որ հայությունը իր օրերին դեռ ինչպես հարկն է չէր ճանաչում օսմանյան գրականությունը: Այդ երևույթը նա «սխալ հասկացված հայրենասիրու-

---

[1] «Անահիտ», Զ տարի, 1904, թիվ 11, էջ 166:

[2] Նույն տեղում, թիվ 12, էջ 184:

թյուն» է անվանում: «Մարդ պետք է իր թշնամին ինքնինքին չափ եթե ոչ ավելի, լավ իմանա... Մենք ոչ միայն համառած ենք անպիտանալ օսմանցվոց մտավոր գործունեությանը, այլև, առանց պիտանալու, արհամարհած ենք զայն»[1]:

Իբրև «Անահիտ» մեջ սկզբնավորություն, Չոպանյանը հրատարակում է ֆրանսիացի Բաուերական քննադատ Ադոլֆ Բալասայի «Թրքական ժամանակակից Բատրոնը» տիտղոսով ուսումնասիրությունը[2]: Չոպանյանի մտահոգումը Բալասայի աշխատության անքննադատ չէ, միևնույն ժամանակ, հենց Բալասայից իսկ ելնելով, նա ասում է, թե թուրքական գրականությունը բավականին «հառաջացել» է:

Ս. Չոպանյանը, այնուհետև, հայ ընթերցողներին է ներկայացնում ֆրանսերեն լույս տեսած «Թրքական սիրո ծաղկաքաղ» ժողովածուն, գրախոսելով այն և մի քանի սիրային բանաստեղծություններ իր իսկ թարգմանությամբ հրատարակելով: Այդ գրախոսականում, դատելով ֆրանսերեն լույս տեսած հատորից, Չոպանյանը բարձր կարծիքի չէ թուրքական ժամանակակից «եվրոպական» և «ասիական» դպրոցների քնարերգության վերաբերյալ: Ջնտղված ստեղծագործությունների մեծ մասը նա գրոնում է թույլ, հատկապես մտածման ու բովանդակության տեսակետից:

Բնութագրական է Ս. Չոպանյանի համար՝ յուրաքանչյուր առիթը օգտագործել առաջադիմական քաղաքական խնդիրներ հարուցելու: Գրախոսվող հատորում լույս տեսած գործերից առավել բարձր գնահատականի նա արժանի է դանում Նափի պիկի մի քնարվածը, որի մեջ այսպիսի տողեր կան.

«Մեր երկրին մեջ կան շատ մը քաղաքներ՝ ավերակ դարձած, անոնցմե յուրաքանչյուրին հորիզոնին վրա՝ ալպի մը արվականը կը հածի: Հնծնծյաններ, հուսահատություն, սրբուհած, ագռավներու կառանչներ, ահա այդ տեղանքներուն զարդերը:

Իսկ ես մեկ դժբախտ խնդագարն եմ այդ երկրին...»

«Բնական շատ հակիրճ— գրում է այդ առիթով Ս. Չոպանյանը,— բայց շատ խորապատ և անկեղծ շեշտով մը, սիրող ցեղին այդ զավակը հնչեցուցած է ցավը, զոր իրեն կը ներշնչի Թրքական այլանդակ ռեժիմեն ավերակ դարձած, ագռավներ

---

[1] «Անահիտ», 2 տարի, 1904, թիվ 9—10, էջ 138:

[2] «Անահիտ», 2 տարի, 1904, թթ. 9—10, 11, 12, 4 տարի, 1905, թիվ 1:

հավաքող, վիակներով շնչակուտակված դժբախտ այդ երկիրների և անոնց մեջ թափառող ճղմված, բայց ապրիլ ուզող ազգերու «ուրվականներու» տեսքը: Երիտասարդ Բուրքերը Հայկական ջարդերեն ի վեր, երբեք հառաչորեն, աներկդիմի կերպով չեն հայտնած այդ ցավը, իրենցմե շատերը նույնիսկ իրենց բոլոր նանդը կը թափեն՝ ավերակներու մեջեն հառնող ազգերու ուրվականները դատափետելու, անոնց ողբի ու բողոքի ձայները խեղդելու»[1]: Չոպանյանը ցավալի է գտնում, որ Նապիի պես նման մտածողները շատ սակավաթիվ են, իսկ նաձն էլ բավարարվում է արցունք թափելով: Պետք է այդ «արցունքը» փոխարինել կորովի գործերով, որպեսզի Բուրքիան դառնա իրոք ազատ երկիր, ասում է նա, այն ժամանակ ավերակները կվերականգնվեն, ուրվականները կվերադառնան և արցունք թափելու անհրաժեշտություն չի լինի:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հայ հին ու նոր գրականության պրժեքները ժողովրդին

1

Հայ միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության վերհանումն ու ստրածումը «Անահիտի» ծրագրի ամենաէական կետերից մեկն է եղել: Ա. Չոպանյանը դեռևս «Ծաղիկի» էջերում սկսել էր այդ գործը, «Անահիտում» այն ստացավ իսկական մեծ թափ:

«Բավական է, որքան մութի ու մոռացության մեջ ենք ձգած մեր նախնյաց քնարին ցարդ անարդարորեն արհամարհված, քիչ կարևոր նկատված այդ արտադրությունները, որոնք, ընդհակառակն, ըստ իս, ամենեն ինքնատիպ, հայադրոշմ էջերն են մեր հին բանաստեղծության,— գրում է Ա. Չոպանյանը:— Այն պահուն, ուր փրոֆեսոր Մառի և պ. Թորամանյանի աքանչելի ջանքերուն շնորհիվ, երևան կուգան Անիի թաքուն մնացած հրաշալիքները, զոր մեր ոճրագործ անտարբերությունն ու ապիտու-

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 3, էջ 68:

թյունը ցարդ խավարի մեջ էր թողած, թող լույս արևուն էլլեն նաև մեր հին բանաստեղծության բոլոր անծանոթ մնացած գանձերը։ Վերջապես, ատեն է, որ ճանչնանք ամեն ինչ, որ մեր հայրերը եղած են և ըրած են, ատեն է, որ մենք մեզ ճանչնանք, որովհետև մենք, որ օտարներուն կը մեղադրենք մեր մասին ունեցած տգիտությունին, անոնցմե շատ վար չենք մնար մեր տգիտության մեջ»[1]։

Զոպանյանի սրտին ջերմորեն խոսող ծրագիր է եղել՝ գծել հայ բանաստեղծության համայնապատկերը սկզբից մինչև նորագույն շրջանը, վեր հանելով, մանավանդ, այն ամենը, ինչ հատուկ է ազգային խառնվածքին։ Իր ժամանակի մի զգալի մասը Զոպանյանը տրամադրում է այդ երախտաշատ աշխատանքին։ Երբ կազմավորվում էր իմ գրական մտավորական խառնվածքը, պատմում է նա, ես տառապում էի նիհար ու աղքատ տեսնելով իբրև «հայ» գրականություն մեզ ներկայացվածը։ Օտար մշակույթի տարրերն էին, հիմնականում, նպաստում նրա սերնդի ձևավորմանը։ Կենդրոնական վարժարանում նույնիսկ հայ գրականության դասընթաց գոյություն չի ունեցել, միայն ուսման վերջին ամսին Գարագաշյանը ուսանողներին անուններն և տարեթվերի ցանկ է հանձնել։ Եվ ահա հատուն տարիքում ներթաքնելով իրեն հայ միջնադարյան գրականության տարածման գործին, Զոպանյանն գրում է հոգևկան անչափելի բավարարություն։ «Նարեկացիի գյուտիս հաջորդեցին ուրիշներ,— գրում է Զոպանյանը։— Եվ յուրաքանչյուր անգամ, որ մեր հին կամ նոր գրականության մեջ կը հայտնվեր ինծի՝ իմ եվրոպական վերելակագիտությամբ անած մտքիս սքանչացում պատճառել կրցող տարր մը, հաճույքս անհուն կըլլար, շատ ավելի մեծ, տարբեր կերպով սուր, քան այն հաճույքը, զոր օտար հրաշակերտի մը առաջին ընթերցումը կուտա, որովհետև այդ հայտնությունները «հայ» վերելկության, վիս կը մխիթարեին ազգային ուժով և ինքնատիպ գրականություն մը չունենալու դատափարտն զգացած ներքինի խոր ցավեր»[2]։

«Շովինական» (Զոպանյանի բառն է) ոչինչ չկր հետապնդում նա, այլ առողջ, լուսավոր ու համոզված հիացում էր ձգտում սերմանել հայ սերունդների մեջ իրենց նախնիների նկատմամբ։

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 9, էջ 189։

[2] Նույն տեղում, թիվ 10—11, էջ 201։

Դա կոչված էր զորացնելու ազգային զգացումն ու հպարտությունը, հետևաբար՝ զորացնելու ազգային ինքնապահպանությունը:

Գրականությունը, ըստ Ա. Զոպանյանի, ազգի պատիվն է, մեծության և փառքի աղբյուրը և նույնիսկ «կյանքի հիմունքը, ինքնապահպանության ամենեն ապահով միջոցը»[1]: Անշուշտ, մարդկային հասարակության կյանքում գրականության դերի խիստ չափազանցում է թույլ տալիս հեղինակը, ավելին, հասարակության նկատմամբ իդեալիստական հայացքի արտահայտություն է գրականությունը ազգի կյանքի հիմք դիտելը[2], բայց այդ հարցի վրա չէ, որ այժմ հրավիրում ենք ընթերցողի ուշադրությունը: Էականը Զոպանյանի պայքարն էր հանուն հայ հին թե նոր գրականության առավելագույն տարածման մեր իսկ ժողովրդի մեջ: Այդ խնդիրը օրակարգի հարց էր դարձել XIX դարի վերջին և XX դարասկզբին մեր ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքի զարգացման բերումով նրա ազգային ինքնագիտակցության գալու և կոնսոլիդացիայի ճանապարհին[3]: Զոպանյանի արժանիքը հենց այն է, որ նա ժամանակին ըմբռնեց կյանքի առաջ քաշած պահանջը և նվիրվեց առաջադիմական այդ պրոցեսի իրականացմանը:

---

[1] «Անահիտ», ԺԱ տարի, 1909—1910, թիվ 11—12, էջ 241:

[2] Նույն հայացքն է զարգացնում Ա. Զոպանյանը իր «Խաչատուր Աբովյան» ուսումնասիրությունում: «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 2, էջ 50:

[3] Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ ժամանակագրական տեսակետից ուղղակի համընկնում են Նահապետ Քուչակի վերաբերյալ Ա. Զոպանյանի՝ «Անահիտում» (1902, հունիս) տպված և Հովհաննես Թադևոսյանի՝ «Լումայում» (1902, մայիս—հունիս) հրատարակած հոդվածները: Անշուշտ. Հովհ. Թադևոսյանի հոդվածը, ըստ էության ընդարձակ վերաշարադրությունն է Տեկանցի ու Կ. Կոստանյանի դրամների և բնավ միտում չունի «նոր» բանաստեղծ հայտնագործելու, ինչպես Հ. Թադևոսյանն էլ արդեն նկատում է Քուչակի աշխարհիկ տարրերը: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Մանուկ Աբեղյանը 1898—99 թվականներին էջմիածնի ճեմարանում իր դասախոսության ժամանակ Նահապետ Քուչակին վերագրված սիրո երգերը համեմատել է Ակնի, Վանի ժողովրդական երգերի հետ և Նահապետի մոտ շատ բան ժողովրդական գտել: Հենց նրա իսկ հանձնարարությամբ ճեմարանի ուսանող Հովհ. Թադևոսյանը գրել և «Լումայում» տպագրելուց առաջ, 1901 թ. ապրիլի 20-ին ուսանողական գրական սեմինարում կարդացել է իր աշխատանքը: (Մ. Աբեղյան, Հին դուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 5, 6):

Ժամանակագրական այս համընկնումները արդյո՞ք չեն խոսում այն մասին, որ իրոք դարաշրջանը իր պահանջներն էր դնում նաև հայ հին գրականության մեջ «պեղումներ» կատարելու ուղղությամբ:

«Անահիտ» առաջին իսկ համարում նա նկատում էր, որ մեզանում այդ ասրիններին մեր նախնիների ժառանգությունից հիմնականում հրատարակված էին միայն պատմական ու կրոնական գործերը, այն պատճառով, որ հրատարակողներն ընդհանրապես վանականներ են եղել: Բայց նույնիսկ հրատարակված գրականությունն էլ անմատչելի է մնացել ժողովրդին, որովհետև գրաբար բնագրով էր: Այդ դանձերը աշխարհաբարով ժողովրդական զանգվածներին ներկայացնելու անհրաժեշտությունը առաջինը զգացին «ուսահայերը», ասում է Զոպանյանը: «Իրենց բազմարդյուն «Հյուսիսափայլին» մեջ Նալբանդյան քանի քանի անգամ հայտնած են հին մատենագրության կարևոր գործերը աշխարհաբարի վերածելու փափաքը, և արդեն փափաքն ալ իրականացուցած են»[1]:

Պատմական գրականությունը արդի հայերենով ներկայացնելը նա համարում է գործի միայն մի մասը: Երկրորդ մասը, ըստ նրա, նույնչափ, թերևս ավելի կարևոր էր՝ տարածել հին մատենագրության մեջ այն ամեն գուտ գրականն ու աշխարհականը, որ մշակութային արժեք է ներկայացնում: Զոպանյանը մերժում է այն կարծիքը, թե մեր հին գրականությունը միայն կրոնական և ժամանակագրական է եղել, և պնդում, որ հին ձեռագրերում բավականին աշխարհական զգացումներ պարունակող կտորներ կան:

«Անահիտը» հայ հին գրականության տարածման ծրագիրը սկսում է գործադրել աշխարհաբար թարգմանությամբ հրատարակելով Երևանցի Զաքարիա Մարգար Խոջենցի «Վարդ և սոխակ» այլաբանությունը[2]: Երկու տարի անց, վերջնականապես պարզելով «Վարդ և սոխակի» արմատները, Արշակ Զոպանյանը չի խուսափում խոստովանել, որ տպագրել է այդ գործը որպես «հայկական». «իբրև էջ մը, որ մանավորապես շահեկան և ընդհանրանալու արժանի էր սա տեսակետով, որ մեր նախնյաց «կրոնական» գրականության քիչ մը մոայլ ու միօրինակ ամբողջության մեջ բացառություն կազմող միակ ծաղիկն էր, որ... բնության ու սիրո վառ գույներովը կը խայտար»: Պարզվել է, որ

---

[1] «Անահիտ», Ա տարի, թիվ 1, էջ 10:

[2] «Անահիտ», Ա տարի, թիվ 1, այնուհետև շարունակաբար՝ մինչև Բ տարի, 1900, թիվ 12:

«Վարդն ու սոխակը» պարզապես նույլ ընդօրինակություն է XVI դարի օսմանցի Ֆազլը բանաստեղծի համանուն ընթվածի[1]:

1901 թվականի վերջերից «Անահիտն» սկսում է սիստեմատիկաբար, պրոֆեսիոնալ մոտեցում հանդես բերել միջնադարյան հայ բանաստեղծության լավագույն նմուշները, «Հայ էջեր» ընդհանուր խորագրով: Դրանք մեծ մասամբ ընդօրինակված են Ս. Չոպանյանի կողմից վենետիկի և վիեննայի մատենադարանների ձեռագրերի հարուստ հավաքածուներից, ինչպես նաև Փարիզի ազգային մատենադարանի ձեռագրերից: Թիվը չէ կարևորը, թեպետ քանակով էլ պատկառազդու են (այդ թվում երկարաշունչ գործեր, ինչպես օրինակ՝ «Պատմություն Ֆարմանի Սամանին»): Էականն այն է, որ «Անահիտը» միջնադարյան աշխարհիկ բանաստեղծությունների հրատարակումը դարձնում է խիստ անհրաժեշտ մի գործ և, կանգնած լինելով այդ գործի ակունքի մոտ, բնականաբար, հանդեսը շատ հաճախ տպագրում է դեռևս անհայտ մնացած ստեղծագործություններ, երբեմն վերծանելով նաև դրանց արևմտահայ աշխարհաբար թարգմանությունները: Հանդեսը ապացուցում է գործնականում, որ ժամանակակից հայ գրականությունը ունեցել է իր ազգային բանաստեղծական ավանդույթը, ժողովրդական արմատները: «Անահիտի» էջերում հառնում է պեղումներից եկած մի նոր բանաստեղծական աշխարհ, որը իր գույնով, համով ու հոտով բնիկ հայկական է:

Միայն միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության նմուշների տպագրությունը դեռևս խնդրի չնչին մասը լուծած կլիներ: Մինչև «Անահիտում» լույս տեսնելն էլ որոշ քանակություն արդեն տպագրվել էր պարբերական մամուլում և առկախվել հավաքածուների մեջ, այնուամենայնիվ, մնացել էր մոռացության գրկում: Խնդիրը այդ ժառանգությունը մեկնաբանելն էր, գիտականորեն բացատրելը, նրա գանձերը բացահայտելը և ժողովրդին մատուցելը: Այդ գործին էլ ձեռնամուխ եղավ Հանդեսը, հրատարակելով քննական փայլուն ուսումնասիրությունների մի ամբողջ շարք միջնադարյան լավագույն բանաստեղծների վերաբերյալ: Եվ այդ շարքի առաջին տեղում կանգնում է Նահապետ Քուչակը:

Ս. Չոպանյանը իր համար Քուչակի հայտնությունն արել է 1898 թվականին, երբ վենետիկում ուսումնասիրում էր ձեռա-

---

[1] «Անահիտ», Բ տարի, թիվ 12, էջ 249—259:

գրկել։ Նրա ուշադրությունն են գրավում Համար 1371 տապանի քաղաքները և վերջակները, որոնք զմայլում են երիտասարդ Չոպանյանին նեղշնչման մեծ թարմությամբ և ինքնատիպությամբ, ձևի գունագեղությամբ ու արտակարգ անմիջականությամբ, շնչառի անկեղծությամբ ու զորությամբ[1]։ «Ինչպե՞ս համարձակած էին հայոց հին մատենագրությունը չոր, միօրինակ, միմիայն միտիկական հոչակել,— մտածում է Չոպանյանը այդ շարքի տպավորության տակ,— քանի որ արտին երգը այդքան ստվածային կերպով դեղդեղող էջեր մնացած էին մեզի մեր նախնիքներեն, էջեր, որոնց մեջ գեղեցկության տարամերժ սերը, կյանքի տարփանքը, հեշտանքին պաշտումը, համակ հեթանոս առողջությամբ մը ծաղկած, զմայլելիորեն անպատկառ ժեսթեր կուրվագծեն երբեմն»[2]։

Տաղաչինջների վրա հեղինակի անունը ճշտող որևէ ակնարկություն չի լինում և Չոպանյանը վճռում է ընդօրինակել ու հետագայում հրատարակել իբրև հին ժողովրդական անանուն երգեր։ Փարիզ վերադառնալուց հետո ծանոթանում է Արիստակես Տեկանցի «Հայերգին», որտեղ գտնում է նույն տաղաշարքը, հեղինակի անվան հիշատակումով։

«Գործը ուրեմն անտիպ չէր բոլորովին, բայց շատ քիչ ծանոթ հավաքածուի մը անկյունը կորսված, առանց որ քննադատ ձևոք մը անոր արժեքն ի վեր հանած, զայն իր բուն լույսին մեջ դրած և անոր տված ըլլար հայ գրականության մեջ այն տեղը,— ամենաբարձրը,— որուն իրավունք ուներ»[3]։

Գրականագիտական-բանասիրական աշխատանքի այդ պատիվը բաժին է ընկնում Արշակ Չոպանյանին։ Հավելյալ և հետաքրքրին չափ մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո նա հրատարակում է նախ հոդվածներ Նահապետ Քուչակի մասին և նրա որոշ առնչագործություններ, ապա 1902 թվականին՝ «Նահապետ Քուչակի դիվանը» աշխատությունը, որով, վերջնականապես, Քուչակը հայ գրականության պատմության մեջ գրավում է իրեն վայել դիրքը։

Վեր հանելով Քուչակին՝ Չոպանյանը մի անուն էլ էր ավելացնում հայ ժողովրդի ազգային հպարտությունը կազմող անուն-

[1] Արշակ Չոպանեան, *Նահապետ Քուչակի դիվանը*, Փարիզ, 1902, էջ 9։

[2] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 6, էջ 117։

[3] Նույն տեղում, էջ 118։

Ների ցանկին: Այս իսկ տեսակետից շահեկանությունից զուրկ չէ տեսնել, թե ինքը՝ Զոպանյանը ինչ հայացքներ ուներ ազգային հպարտության մասին: Քուչակի առթիվ նա գրում է. «Մենք հայերս երկու հակընդդեմ ու նույնքան վնասակար չափազանցությանց միջև տարուբերված ենք սկիզբեն ի վեր. կամ մեր ցեղը կեղեւակալենք իբրև մարդկության ամենեն հին, ամենեն ազնիվ, ամենեն քաջ, ամենեն խելացի ցեղը, և կամ զայն կը նկատենք իբրև ամենեն ողոմելի վիժուկը մարդկային ընտանիքի»[1]: Այսպիսով, երկու ծայրահեղություններն էլ նա համարում է վնասակար: Զոպանյանը պահանջում է օբյեկտիվ չափանիշով նայել մեր ժողովրդի ստեղծագործական արդյունքին, ահա թե ինչու նա Քուչակի հայտնությունը իրավամբ համարում է բերկրանքի և կազդուրիչ դեպք հայ ժողովրդի կյանքում[2]:

Քուչակի ստեղծագործության խոր ուսումնասիրությունը տոհմ է ծառայում Զոպանյանին՝ վերջնականապես հրաժարվելու համար իր այն սխալ դրույթից, թե հայ գրականությունը առհասարակ ազգային արմատներ չի ունեցել, այլ եղել է հետևողություն հույների, ասորիների, լատինացիների, արաբների, իսկ նոր շրջանում՝ եվրոպական գրականության[3]: Քուչակին նվիրված աշխատության մեջ նա արդեն քննադատում է այն «նորերուն», այդ թվում և ինքն իրեն, որոնք «կը հավակնին մտածել, թե հայ ցեղը մինչև այսօր ոչ մեկ ինքնուրույն, ոչ մեկ տոնականորեն դեղեցիկ գործ մը արտադրելու անկարող եղած է»[4]:

Քուչակի գործի ուսումնասիրությունում, բնականաբար, Զոպանյանը չի հավատում, թե այն ամենը, որ իբրև Քուչակի գործ է ներկայացվում, այդ միակ բանաստեղծի ստեղծագործությունն է: Հնարավոր է, որ Քուչակն ինքը հավաքել է նախորդող շրջանի ժողովրդական, ինչպես նաև հայ աշուղների լավագույն երգերը, կամ այդ գործերը պարզապես հայ ժողովրդական նույն ոճի ստեղծագործությունների ծաղկաքաղ է, «որուն հեղինակը ոչ թե անձ մը, այլ հավաքական ընարն է հայ ժողովրդի»,— պդուշացնում է բանաստեղծը: Ակնշուշտ, կարևոր է հեղինակի ճիշտ անունն ունենալ, նրան արժանին հատուցելու համար, բայց առավել

---

[1] Արշակ Զոպանեան. *Նահապետ Քուչակի դիվանը, էջ 21:*

[2] *Նույն տեղում, էջ 38:*

[3] *«Հայրենիք», 1891, թիվ 8:*

[4] Արշակ Զոպանեան. *Նահապետ Քուչակի դիվանը, էջ 22:*

կարևոր է, որ այդ գործերը հայտնաբերվել են, դարձել հայ ժողովրդի սեփականությունը, նրա հանճարի վառ ապացույցը:

«Իլիականն» ու «Ոդիսականն» էլ ավանդությամբ են վերագրվում Հոմերոսին, նկատում է Ս. Զոպանյանը, և վեճը այդ էպոսների հեղինակի վերաբերյալ չի դադարում, այդ հանգամանքը, սակայն, չի արգելում, որպեսզի մարդկությունը ըմբռշխնի «Իլիականի» և «Ոդիսականի» անմահ գեղեցկությունը և Հոմերոսին մեծարի դրանց մեջ: «Մենք ալ այդպես պիտի ընենք Քուչակյան բանաստեղծության համար»[1]:

Ս. Զոպանյանը Քուչակի մեջ գնահատում է նրա «ապրյուրե պես բխող, լեռան ծակկի պես մեկ ցայտքով ժայթքող, ամոան գիշերվան աստղի պես խաղաղ ու պարզ ցոլացող» «սրտի» երգերը, որ անբռնադրոսիկ են, ուղղակի ընթերցողի սրտին են հասնում առանց որևէ ավելորդ ձևախաղության[2]: Քուչակի մեջ, ասում է նա, ոչ մի տող չենք գտնի այն պալատական շողոքորթ գեղոններից, սուլթաններին, խաներին, կեսարներին, մեկենասներին ձոնված սոզացող երգերից, որոնք երևում են Սաադիի, Վիրգիլիոսի ստեղծագործություններում և նույնիսկ «գոռոզ Նայամի մեջ»: «Քուչակի քնարը ոչ մեկ սուլթանի, ոչ մեկ խանի, ոչ մեկ ամիրայի, հայ կամ օտար որևէ մեծավորի առջև չի խոնարհվիր, միակ սուլթանը, որուն կերկրպագե և որուն գովքը կերգե, «յարն» է, «ազվոր աղջիկը»[3]:

Զոպանյանը Քուչակի ստեղծագործության մեջ վեր է հանում նրա արիությունը, ոգու առնականությունը: Բանաստեղծը բերում է հետևյալ քառյակը.

«Յաշխարհս ես ի ժուռ եկայ, չզրտայ ըզորդ սիրելի,
Չխնչես ի վրաս բերի, զբազուկս արի սիրելի,
Քանի բազուկս ի բան կենա, շատ նզոյր ու շատ սիրելի.
Բազուկս ի բանն ընկնի, ոչ նզոյր, ոչ սիրելի»,

«Զբազուկս արի սիրելի» արտահայտությունը ընդգծված է Զոպանյանի կողմից: Պատահական չէ, որ նա այդ քառյակի մասին ասում է, թե կուզենար այն «ամբողջ Հայության նշանաբանը դարձած տեսնել»[4]: Պատահական չէ նաև, որ բանաստեղծը Քուչակի

---

[1] «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 6—9, էջ 111:
[2] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 9, էջ 194:
[3] Նույն տեղում, էջ 194—195:
[4] Նույն տեղում, էջ 195:

մեջ շեշտում է նրա հեգնանքը երկնային կյանքի նկատմամբ, որպես «ամենեն հանդուգն ճիչը... զոր մեր հին բանաստեղծությունը արձակած ըլլա», ընդգծում նրա հակակրությունը «կրոնքի պաշտոնական դերատաններուն հանդեպ»[1]:

Զոպանյանը Քուչակին համեմատում է Վեռլենի և Հայնեի հետ և պնդում, որ վերջիններս չեն պերազանցում առաջինին «նույնիսկ ձևի գեղեցկության մեջ, երբ բաղդատենք այդ մեծ վարպետներուն հրաշակերտներուն հետ մեր աշուղին գեղեցկագույն տողերը, որոնք հանքեր են ապշեցուցիչ «դյուտերու», որոնց մեջ մտածումը միշտ ինքնատիպ է պատկերը՝ միշտ ուշագրավ, նոր, զորեղ ու իր արտահայտել ուզած զաղափարին կամ զգացման ճիշտ ու ճիշտ համապատասխան»[2]:

Ընդհանրացնելով Քուչակի ստեղծագործության նկատմամբ իր վերաբերմունքը, Զոպանյանը եզրակացնում է.

«Պաշտում ամեն բանի, որ պարզ է և անսեթևեթ, անսահման չեմության, անկեղծության, քնքշության՝ գորովի մեջ,— ըլլա գորով մայրական, եղբայրական կամ տարփական,— բուն սեր՝ հակառակ քրիստոնեության բերած մեծ տխրության՝ բնության գունագեղ ու առույգ ճոխությունները, կյանքի առողջ արբեցությունները, զոհաբերության հակում, ամեն բանի մեջ գուրգուրազին խանդաղատանք՝ որևէ ցավով չարչարվածին համար, նախասիրություն՝ խաղաղ, բարի, արդյավանդ, աշխատության և սիրով տոգորուն կյանքի մը, ահա տարրեր, որոնք գոյություն ունին հայ հոգիի մեջ, որոնք նույնիսկ տիրականները են հոն, բայց որոնք շատ մը խոշոր ու ծանր թերությունները մացառուտին մեջ թաղված, հաճախ անտեսանելի են դարձած, երբեմն այ իրոք ժժդունած են ու թառամած, բայց երբեք ջնջված: Ատոնք են, որ կը կազմեն հողը, ուր բուսած է Քուչակի երդերուն հոյակապ ծաղիկը»[3]:

Կրկնակի շահեկան է այս ընդհանրացումը, նախ, որ մատնացույց է անում Քուչակի հայկական, ազգային արմատները, և ապա՝ ինքնըստինքյան հիանալի բնորոշում է հայ ժողովրդի ազգային նկարագրի գծերը:

Բնականաբար, Քուչակին նվիրված առաջին այդ ուսումնա-

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 9, էջ 195:

[2] Նույն տեղում, էջ 197:

[3] Նույն տեղում, էջ 195:

սիրությունը չէր կարող անթների լինել: Տեղ էին գալիս մի շարք սխալներ, ոչ ճիշտ մեկնաբանություններ: Այդ առթիվ Նորայր Բյուզանդացուն գրած նամակում Զոպանյանը ինքն է նշում իր կատարած գործի հիմնական իմաստը: «Ես բանաստեղծ չեմ,— գրում է նա,— գրականության մարդ եմ. իմ գրական մարդու գիրս կատարելցի, Քուչակի տաղաշարքին գրական արժեքն ի վեր հանելով»[1]:

Նահապետ Քուչակի հայտնագործությունը համապատասխան էր սիրանքի: Կարճ ժամանակում թարգմանվելով տարբեր լեզուների, Քուչակը հայտնի դարձավ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին և իր արժանի աթոռը գրավեց համաշխարհային գրականության մեծերի շարքում: Ա. Զոպանյանի գործը գտավ լայն արձագանքներ օտար և հայ հասարակության շրջաններում:

1902 թվականի մայիսի 28-ին արտասանած բանախոսությունում Գաբրիել Մուրն իր հիացմունքը հայտնեց, որ Հայնևից հինգ-վեց դար առաջ Քուչակը կանխել է նրա արևելյան «ինտերմեցցոյի» տպավորությունը, որ հայ քնարերգուի գործը Սողոմոնի «Երգ երգոց» ավելի արտաբուխ է, ավելի խանդակաթորեն տարփոտ[2]:

Գ. Մուրի բանախոսության առթիվ Զոպանյանը մեկ անգամ ևս շեշտում է իր կատարած աշխատանքի քաղաքական նշանակությունը. «...Հանչնանք մենք մեզ ու ճանչցնենք օտարին: Ասիո պիտի բազմապատկի մեր կորովը և մեր կամքը քանդող տանկին դեմ մեր կռվին մեջ»[3]:

Առաջիններից մեկը հանդես գալով դրախոսությամբ՝ Գառնիկ Ջնտգյանը գրեց. «Եվ ահա Զոպանյան... երևան կը բերե մեզի այս ցանկալի տաղերգուին՝ Քուչակի փոշեթաթախ դեմքը, մատենադարաններու լքված ձեռագիրներեն՝ ցանուցիր հրատարակություններու մեջեն գտնելով, գտնելով, վերծանելով, համեմատելով, դասավորելով և... ի վեր հանելով նշանակությունը մեծ բանաստեղծին, որ կար Քուչակին մեջ»[4]:

Քուչակի հայտնագործումը մեծ ոգևորությամբ է դիմավորում Թիֆլիսի «Լուման», որի էջերում կարդում ենք. «Ո՞վ կարող էր

---

[1] Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, արխիվային բաժին, Նորայր Բյուզանդացու արխիվ, թղթ. 235, վավ. 16 ա:

[2] Արշակ Զոպանեան, Նահապետ Քուչակի դիվանը, էջ 39:

[3] Նույն տեղում:

[4] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 12, էջ 252:

Ներևակայել, թե հայեր ունեցել են մի բանաստեղծ այն էլ տասնվեցերորդ դարում, որի անունով այսօր պիտի պարծենա ամբողջ հայությունն անխտիր»: «Նվ ահա մի նորը գրագետի ջանքով հրատարակ է ձգվում հազիվ 100 երեսից բաղկացած մի տետր, որ ուժ ունի հեղաշրջում առաջացնելու մեր հայացքների մեջ հայի ստեղծագործական ընդունակության վերաբերմամբ[1]:

Համեմատաբար ավելի ղուսպ և գործնական է արտահայտվում «Մուրճը»: Զոպանյանի հրատարակությունը մեր գրականության պատմության համար նա համարում է մի հետաքրքրական վավերաթուղթ, որը «կատարյալ անակնկալություններ» է պարունակում: «Նահապետ Քուչակը մինչև այժմ շատ քիչ էր հայտնի իր երգերով: Այժմ պ. Զոպանյան հրատարակում է նրա անունով հայտնի բոլոր երգերը և դրանով միջոց է տալիս, որ նա իր պատշաճավոր տեղը բռնե մեր հին երգիչների շարքում»[2]:

Կարծիքների և դրախոսականների առատություն կա այս հարցի շուրջը, մենք պիտի սահմանափակվենք բերելով նաև Մանուկ Աբեղյանի կարծիքը, որ նա հայտնել է ավելի ուշ շրջանում: «Անշուշտ, Զոպանյանը գուր է կարծում,— գրում է Աբեղյանը,— թե մինչև 1902 թ., այսինքն՝ մինչև իր հրատարակությունը, Քուչակի «գործը, ինչպես և անոր հեղինակին անունը», անծանոթ է մնացած եղել «նույնիսկ մեր գրականագետներուն»: Թիֆլիսում տպված «Հայերգը» շատ լավ ծանոթ է եղել մեր գրականությամբ հետաքրքրվողներին: Բայց և այնպես այդ տաղերն ընդարձակ շրջանի հասարակության ծանոթացնողը եղել է նա, միաժամանակ նա եղել է, սակայն, և «մեծ բանաստեղծ» Նահապետ Քուչակի համբավի տարածողը»[3]:

Նվ վերջապես, որպես եզրափակում, պիտի միանանք Վաղարշակ Նորենցի և Սողոմոն Տարոնցու գնահատականին. «Այսօր Նարեկացին ու Քուչակը բաղմել են համաշխարհային գրականության մեծերի շարքում: Դրա համար առաջին մեծ ջանքերը գործադրել է Արշակ Զոպանյանը»[4]:

Մեծ է Արշակ Զոպանյանի ծառայությունը նաև Ֆրիկի ստեղծագործության վերհանման և տարածման գործում: Ֆրիկի տա-

---

[1] «Լումայ», 1903, № 2, էջ 213:

[2] «Մուրճ», 1903, № 3, էջ 172—173:

[3] Մ. Աբեղյան. Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 7:

[4] Ս.ր.շակ Զոպանյան. Երկեր, Երևան, 1966, էջ 12:

ղերին Չոպանյանը ծանոթացել էր Տևկանցի «Հայերգից» (1882 թ.), ինչպես նաև Կոմիտասյանի «Նոր ժողովածուի» Ա. (1892 թ.) և Դ (1896 թ.) պրակներից: Ֆրիկը մինչ այդ լսել էր 1513 թվականին Վենետիկում հրատարակված «Տաղարանում», Գևոնդ Ալիշանի «Հուշիկք հայրենյացում» (1870), Երուսաղեմի «Սիոն» հանդեսում (1876), Պոլսի «Բիւրակնում» թերթում (1885)[1], բայց այս հրատարակություններից և ոչ մեկում Ֆրիկը չէր տեսնատեսել ու փաստորեն մնացել էր մոռացված: «Ես եմ, որ,— գրում է Չոպանյանը 1937 թվականին,— անոր բնագիրն («Գանգատի»— Կ. Դ.) ամբողջությամբ արտատպեցի այժմյան աշխարհաբարի մը հետ, և այդ հրատարակության ընկերացուցի գրական վերլուծման ընդարձակ հոդված մը, ուր ի վեր կը հանեի ինչ որ հայկական միջին դարուն գրեթե համատարած համակերպական ու փառաբանական ասմունքապաշտության մը ատահայտիչ գրականության մեջ այդ քերթվածը կը բերեր նոր ու հանդուգն իր ընդվզման տողերով»[2]:

Իրոք, Չոպանյանը առաջին բանասերն էր, որ ուշադրություն դարձրեց «Գանգատի» աշխարհիկ-սոցիալական բովանդակությանը: Դեռևս Քուշակի մասին գրած հոդվածներից մեկում Սրշակ Չոպանյանը, հենվելով Տևկանցի «Հայերգի» վրա, Ֆրիկին վերագրված տաղերը անվանում է «վարդապետական»[3]: Առաջին առիթով ծանոթանալով «Հայերգի» Ֆրիկյան տաղերին՝ Չոպանյանը ուշադրություն չի դարձնում «Գանգատի» վրա, որովհետև, ինչպես ինքն է ասում, առաջին տողերը սովորական կրոնական «տափակություններ» էին պարունակում: Որոշ ժամանակ անց նորից է անդրադառնում և ավելի ուշադիր կարդում այդ գործը: «Այն օրը, որ Արխատակես Վ. Տևկանցի «Հայերգ»-ին մեջ գտա այդ քերթվածը, ամենեն երջանիկ օրերես մին կը համարեմ»,— գրում է նա հետագայում[4]:

1905 թվականի հունվարյան «Անահիտում» Չոպանյանը հրատարակում է «Կայծ մը» խորագրով հոդված, ինչպես նաև լույս ընծայում Ֆրիկի «Գանգատը» բնագրով և արևմտահայ աշխարհաբարի վերածած:

---

[1] Տե՛ս «Արարատ», 1918, № 1—4 (Տիրայր Եպիսկոպոս, «Մոռացված մը հայ երգիչ» հոդվածը):

[2] «Անահիտ», նոր շրջան, Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 122:

[3] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 6, էջ 118:

[4] «Անահիտ», Է տարի, 1905, թիվ 1, էջ 5:

Մեր հին պրականությունը, ասում է նա այդ հոդվածում, ամենամեծ մասամբ կրոնական է իր նյութով և ոգով, քանի որ կրոնականներն են դարեր շարունակ եղել պրականության մշակողներն ու դիկտատորները: Դրանով է բացատրում Հովհաննիսյանը, որ մեր հին պրականության մեջ պակասում է ազատ մտածումը, կյանքի լայն և անկաշկանդ ըմբռնումը: Այդ բանում մեղավոր են քրիստոնեության պաշտոնական ներկայացուցիչները, ասում է հեղինակը, որոնք «Աստվածաշնչի» միայն բացասական տարրերն են վերցրել, ընդլայնել ու «իրենց բարոյականին և արվեստին հիմ են դրած, ավելցնելով անոնց վրա բոլորովին նոր և ավելի վնասակար տարր մը, որ գոյություն չունի «Աստվածաշունչին» մեջ, այն է աստվածաբանությունը, օրի մեջ օրով պղյակներ շինելու ունայն, ամուլ ու վիճաբանչական աշխատություն մը»[1]:

Բայց մի ամբողջ ժողովուրդ չէր կարող հավիտյան թմրած մնալ այդ «աստվածաբանական շինծու և հեղձուցիչ մթնոլորտի մեջ»: Միջնադարյան քնարերգությունը նկատել ստացնելու, «թե պաշտոնական մատենագիրներուն «վանական» պրականության քով՝ «ժողովրդական» ազատ պրականություն մը, կյանքի բուռն և կյանքը նրգող պրականություն մը արդեն ծայր տված էր»: Պարզունակ էր այդ ժողովրդական պրականության քնարը, «բայց որքան ավելի կենդանի և աղբյուրի քան «վանական» վաստառյալ ունայն ճիճաբանությունները»:

Այնուամենայնիվ, այդ քնարերգությունը չէր լրացնում կարևոր պակասը, շարունակում է իր միտքը Ս. Զոպանյանը, որը բնության օրենքները քննելու և դատելու, մարդկային ճակատագրի անարդարությունները մատնանշող, ազատ և ըմբռնող մտածման պրականության պակասն էր: Եվ ահա՝ Ֆրիկը:

Զոպանյանը «Անահիտում» հակիրճ վերլուծում է «Գանդատը», վեր հանում էականը և հիմնականը, ցավ հայտնում, որ արվեստագետը չի դանվել մտածողի բարձրության վրա, որ մտածողները էլ մերթ ուրբ է տալիս կրոնական ատրին: Միևնույն ժամանակ շեշտված ընդգծում է էականը, որը Զոպանյանը հարցերի երկու խմբի մեջ է տեսնում՝ հայ ժողովրդի վիճակի և համամարդկային խնդիրների:

«Ֆրիկ մատնավորապես կը տրտնջա այն տառապանքներուն համար, զոր հայ ժողովուրդը կը կրե «անօրեններուն ձեռքեն»,—

[1] *«Անահիտ», է տարի, 1905, թիվ 1, էջ 1:*

պրում է Ս. Զոպանյանը և յուրովի, հնդնախառն ու գեղեցիկ վերարտադրում «Գանգատի» այդ մասը. «Դուն, ով քրիստոնյաներու Աստված, կըսեն (կամ ըսել կուզեն), դուն ես ճշմարիտ Աստվածը, շատ լավ, ահա մենք հայերս դարերն ի վեր կը հավատանք քեզի, կը պաշտենք քեզ, կը դավանինք երրորդությունը, կը հավատանք Մարիամի անարատ հղության, բոլոր ուղածդ կընենք վերջապես, և դուն մեզ կը թողուս անոնց ձեռքը, որ քեզի չեն հավատար, դուն կը թողուս, որ այդ «անհավատները» մեզ տանջեն, գերեն, արհամարհեն, այս ի՞նչ արդարադատական բան է»[1]:

Հարցերի երկրորդ խմբի համար Զոպանյանը հատկանշական է գտնում շեշտել, որ Ֆրիկը գծում է մարդկային կյանքում լրբաբար փուզող, տիրապետող անարդարությունների պատկերը, որ քանատեղծը իր զարմանքը և զայրույթն է հայտնում «հանդեպ այն բնական և ընկերական ահավոր անարդարության, անհավասարության, որոնք կը տեսնվին բովանդակ մարդկության կյանքին մեջ. ինչո՞ւ կան հարուստներ ու աղքատներ, գեղեցիկներ ու տգեղներ, առողջներ ու հիվանդներ, ապրիվներ ու ի ծնե անապրիվներ. ինչո՞ւ դիրքի հասած ապուշները կը փառաբանվին, մինչ դիրք չունեցող ուշիմն ու ապրիվը կը քամահրվի. ինչո՞ւ անոնք, որ ժողովուրդներու գլուխն են անցած՝ կը վարվին ինչպես պայլեր, որ ոչխարներու գլուխն անցած ըլլային»[2]:

Բնութագրական է, որ Զոպանյանը ոչ միայն շարադրում և վեր է հանում «Գանգատի» սոցիալական բովանդակությունը, այլև իր դրական վերաբերմունքն է ճշտում նրա նկատմամբ: «Ահա այս հարցումներուն մեջ է, որ երևան կուգա հանդգնություն մը, աշխարհայեցողության լայնություն մը, բողոքական ոգիի մեծություն մը, զոր չեմ հիշեր տեսած ըլլալ որևէ հին հայ մատենագրի մեջ: Եվ ատոնք են, որ «Ֆրիկ» անունով մեզի հասած այս քերթվածին կուտան անգին նշանակություն մը»[3]:

«Գանգատի» տպագրությունից հետո, պատմում է Ս. Զոպանյանը, Կարապետ Կոստանդյանի «Նոր ժողովածուի» մեջ նրա ուշադրությունը գրավում է Ֆրիկի «Ընդդեմ ֆալաքին» տաղը: Նախապես Զոպանյանը կարծում էր, թե «Գանգատը» բացառիկ էջ է

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 1, էջ 6:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Ֆրիկին վերապրված տագնապում։ Բայց ավելի լուրջ ծանոթությունը այդ տագնապին և, մանավանդ, «Ֆալաքը» համոզում են նրան, «որ այդ ամենուն մեջ հայ բանաստեղծության մեկ կարևորդեմք կը գտնվեր, անծանոթ մնացած, չգնահատված»[1]։

Չոպանյանը այնուհետև հնարավոր բոլոր ուժերով հավաքում է Ֆրիկի անտիպ տագնապի օրինակությունները էջմիածնի, Երուսաղեմի, Փարիզի, Լոնդոնի ձեռագրերից՝ առանձին հատորով տպագրելու մտադրությամբ։ Բայց, ընդառաջելով Տիրայր վարդապետի խնդրանքին, իր օրինակություններն էլ տրամադրում է նրան, հուսալով, թե նա լույս կընծայի Ֆրիկյան հատորը[2]։ Հրաժարվելով Ֆրիկը առանձին հատորով հրատարակելու մտքից, Չոպանյանը 1912 թվականին իր հրատարակած «Հայ էջերում» տեղադրում է Ֆրիկի մի քանի տագնապ, այդ թվում՝ «Ընդդիմ ֆալաքին» գործը։ Ճակատագրի դեմ Ֆրիկի ընդվզումը, ասում է Չոպանյանը, «Գանգատի» ոգով հորինված ուժեղ բողոքի ճիչերը է պարունակում։ «Բաղդին անարդարությանց դեմ դառն ու հանդուգն բողոք մը կը բարձրացնեն իր երկու տագնապը... բողոք, որ Հաղվադեպ, կարելի է ըսել նույն իսկ անօրինակ երևույթ մըն է մեր ամբողջ հին գրաբար թե ամկաբարբառ բանաստեղծության մեջ»[3]։

Ֆրիկի գործի չոպանյանական գնահատության մեջ կարևոր տեղ ունի լեզվի հարցը։ «Քուչակի տագնապն և անանուն հին երգերն հետո այս բանաստեղծությունները, լեզվի և կարգ մը էջերու մեջ, ոճի տեսակետով ցեղային ամենեն հարազատ արտադրությունն են միջնադարյան հայ քերթության մեջ»,— գրում է Ս. Չոպանյանը և ապա ավելացնում, թե Ֆրիկն ու Կոստանդին Երզնկացին առաջիններից են եղել, որ իրենց բոլոր գործերը գրել են ժողովրդական լեզվով[4]։

Խիստ հատկանշական է, որ Ֆրիկի ստեղծագործության սոցիալական հիմքը վերհանելով, Չոպանյանը գարձյալ առաջին պլանի վրա տեսնում է օրվա քաղաքական խնդիրները։ «Այսօրվան Ֆրիկ մը,— գրում է նա,— հայկական բազմամյա ողբերգու-

---

[1] «Հայաստանի կոչնակ», ԻԳ տարի, 1923, թիվ 1, էջ 19։

[2] «Անահիտ», նոր շրջան, Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 122։ Տիրայրը նախ հոդվածներ տպագրեց «Արարատի» 1918 թվականի միացյալ երկու համարներում, ապա 1952 թվականին Նյու Յորքում տպագրվեց այդ հատորը։

[3] «Հայաստանի կոչնակ», ԻԳ տարի, 1923, թիվ 2, էջ 42։

[4] Նույն տեղում, էջ 21։

թյան այս հիմնական պատճառը ըմբռնելով, ուր տեղ իր գանգատով Սասնած պիտի չնեղացներ, այլ պիտի մտածեր գանել, անվհատ ու անխոնջ ճիգով, այն իմաստուն միջոցները, որ հայ ցեղին ներկայացուցած բարոյական ուժին պիտի տան զայն պաշտպանող ու պահպանող նյութական զորության նեցուկը, առանց որուն ան նորին միշտ կենդանի, բայց միշտ ալ նահատակ պիտի մնա»[1]:

Ֆրիկի, ինչպես նաև Քուչակի, Կոստանդին Երզնկացու և ուրիշ ընտիր էջեր Զոպանյանը հրատարակում է իր «Les Trouvères Arméniens» գրքում, որից մեծապես օգտվել է Վ. Բրյուսովը իր «Поэзия Армении» հատորում: Բրյուսովը Ֆրիկի գնահատության հարցում հենվում է Զոպանյանի վրա և մեջբերում անում նրանից[2], ինչպես և շատ ուրիշ առիթներով հիշատակում է Զոպանյանին ու նշում, որ իր հիմնական աղբյուրներից մեկն է եղել նա:

Տիրայր արքեպիսկոպոսն էլ իր աշխատության մեջ բազմաթիվ մեջբերումներ է անում Զոպանյանից, ինչպես նաև արժանին հատուցում Ֆրիկի վերհանման և տարածման գործում Զոպանյանի մատուցած ծառայությանը[3]:

1937 թվականին Զոպանյանը ուրախությամբ ընդունում է այն լուրը, թե Սովետական Հայաստանում հրատարակվելու է Ֆրիկի ժողովածուն[4]: Ողջունելով այս նախաձեռնությունը, նա գրում է. «Ֆրիկի հատորին ներածության մեջ արդյոք գեթ երկու տողով պիտի հիշատակվի՞ Ֆրիկի գործին ծանոթացման համար իմ կատարած դերս»[5]: Ոչ, չի հիշատակվում: Այդ ցավալի և անարդար «մոռացության» պատճառներին մենք կանդրադառնանք իր տեղում:

«Կայծ մը» հոդվածից, որով Ֆրիկն էր կրկին հայտնագործվում, հինգ ամիս անց Զոպանյանը հայությանը ծանոթացնում է սակայն մնացած մի կարևոր անուն ևս՝ Կոստանդին Երզնկացի: 1866 թվականին «Բազմավեպը» հիշատակել է Երզնկացու անունը, հրատարակելով նրա չորս քնարերգությունները: Բայց այդ

---

[1] «Հայաստանի կոչնակ», Իգ տարի, 1923, թիվ 2, էջ 44:

[2] Поэзия Армении, Ереван, 1966, стр. 54, որը համապատասխանում է Les Trouvères Arméniens, Paris, 1906, p. 121:

[3] Ֆրիկ, Դիվան, Յյու Յորք, 1952, էջ 234:

[4] Ֆրիկ (Ժողովածու), Երևան, 1937:

[5] «Անահիտ», նոր շրջան, Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 123:

հրատարակությունը անցնում է կատարելապես աննշմար, քանի որ բնագրագիտական վերլուծությամբ վեր չի հանվել Կոստանդին Երզնկացու արժանիքը: Միջնադարյան այդ բանաստեղծի մասին իր հոդվածում Ա. Զոպանյանը գրում է. «Ահա անուն մըն ալ, որ բացարձակապես անծանոթ է մնացած մեր գրական հասարակության (գրագետներն ալ մեկտեղ հաշվելով), և որ պետք էր շատոնց քաջահայտնի դարձած ըլլար մեզի՝ իբրև մեր հին աշուղական բանաստեղծության ամենեն թանկագին անուններեն մին»[1]:

Կոստանդին Երզնկացու բնարական կտորների թեման, նշում է Ա. Զոպանյանը, քրիստոնեական աշխարհայեցողության մի քանի էական մոտիվներն են, բայց այդ մոտիվները ցայտում են սրտաբուխ և լուսավոր բնաբերգությամբ, որը իր մեջ «բանաստեղծացնում» է այն ամենը, ինչ քերթողի ներսում նստած աստվածաբանն է դնում դրանցում: Իր հոդվածում Զոպանյանը առաջարկում է վենետիկյան միաբանությանը՝ հրատարակել Կոստանդին Երզնկացու ամբողջ հավաքածուն:

«Բազմավեպը», ի պատասխան այդ կոչին, հայտարարում է, որ միաբանությունը պիտի հրատարակի առաջարկված ժողովածուն Պոտուրյանի կենսագրական ու բանասիրական ուսումնասիրության հետ միասին[2]: 1905 թվականի վերջերին հատորը իրոք լույս է տեսնում: «Բազմավեպում» հրատարակված հոդվածի և հիշյալ հատորի առթիվ գրված իր հոդվածներում[3] Ա. Զոպանյանը նոր նյութերի առիթով ավելի է խորացնում և հիմնավորում Կոստանդին Երզնկացու վերաբերյալ իր գնահատականները:

Հետաքրքրական է «Հաղար ավազ տամ ես...» տողով սկսվող կտորի վերլուծությունը: Կոստանդին Երզնկացին դանդաղում է, որ իր օրերում հայ ժողովուրդը մնացել է առանց դեկավարի, և շատ դայլեր են հարձակվել նրա վրա. «Ի մեջ ծովու ծփինք, ոչ նավ ունինք, ոչ նավավար» Այս առթիվ Զոպանյանը բացականչում է. «Ու խորհիլ, որ այսօր իսկ, դեռ նույն խավարին մեջ է, որ կը խարխափենք, նույն լուծը գլխնուս վրա ծանրացած, շատ ավելի դժբաղդ ու հալածված, նույնքան և ավելի պատակա-

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 5, էջ 93:

[2] «Բազմավեպ», 1905, հուլիս—օգոստոս:

[3] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 9, Ը տարի, 1906, թիվ 6—7:

ված ներքնապես. ու այսօր ալ կրնանք, ավաղ, կրկնել Երզնկացիին տրտում աղաղակը.

Ոչ նավ ունինք, ոչ նավավար»[1]։

1898 թվականի ամռանը, Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում աշխատելիս, Արշակ Զոպանյանը ծանոթանում է Նաղաշ Հովնաթան աշուղի տաղերին և մտադրվում առաջին իսկ հնարավորության դեպքում հրատարակել դրանք։ Փարիզ վերադառնալուց հետո վարդապետ Սուրենյանցը և Փանոս Թերլեմեզյանը նրան հայտնում են, թե էջմիածնի տաճարի որմնանկարները Նաղաշ Հովնաթան անունով վարպետի գործն են։ Զոպանյանը հետաքրքրվում է իր մտադրության իրագործումը, ցանկանալով անձամբ տեսնել այդ որմնանկարները։ 1908 թվականին պատահ առիթը ներկայանում է։ Էջմիածնում նա համոզվում է, որ բանաստեղծ Նաղաշ Հովնաթանը, թեպետ ինքն էլ նկարիչ, բայց էջմիածնի որմնանկարների հեղինակը չէ։ Գարեգին Հովսեփյանի կողմից «Արարատ» ամսագրում հրատարակված մի վավերագրից[2] նա իմանում է այդ որմնանկարների հեղինակի անունը՝ Հովնաթան Հովնաթանյան, և վերլուծությամբ գալիս այն եզրակացության, թե երկուսն էլ պատկանում են նույն Հովնաթանյան գերդաստանին։ Որմնանկարչի գործը Ա. Զոպանյանի վրա թողնում է նույնպիսի տպավորություն, ինչ աշուղի բանաստեղծությունը։ Երկուսն էլ մնացել էին մոռացության մեջ։ Նաղաշ Հովնաթանի անունը մինչ այդ հիշատակվել է մի քանի ժողովածուներում և մասնավորապես Գ. Լևոնյանի «Հայ աշուղներ» գրքում, բայց միշտ հարևանցի։ Հովնաթան Հովնաթանյանի գործի վերաբերյալ Զոպանյանը ցավով դիտում է. «Ոչ միայն ոևէ հայ մը չէ գտնված, որ մտածեր զանոնք ուսումնասիրությամբ մը ծանոթացնել հայության, այլև գտնված է հայ մը— Խրիմյան կաթողիկոսը, որ անոնց մեկ ստվար մասը քանդած փճացուցած է...»[3] (ակնարկը վերաբերում է Խրիմյանի օրոք ձեռնարկված վերանորոգություններին[4]— Կ. Դ.)։

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 6—7, էջ 106։

[2] «Արարատ», 1901, № 5—6։

[3] Արշակ Զոպանեան, Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 8։

[4] Զոպանյանը չի կարողանում ներել Խրիմյանին՝ էջմիածնի տաճարում կատարածի համար։ Խրիմյանի նկատմամբ նա ուներ խոր ակնածանք, բարձր

Չոպանյանը որոշում է դարմանել մոռացության անարդարությունը և 1910 թվականին հրատարակում է իր «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» հատորը։ «Ահա հատորով,— գրում է հեղինակը,— ես կուզեմ ծանոթացնել մեր հասարակության այդ երկու մոռացվածները միասին քովքով։ Երկու ուշագրավ հայ տաղանդներ են, որ պիտի երևան գան՝ միևնույն անունը կրկնակ փայլով մը հավերժացնելու և հայ արվեստի պանթեոնին մեջ երկու նոր արձան կանգնեցնելու»[1]։

Չոպանյանի հատորը պարունակում է Նաղաշ Հովնաթանի տաղերը և Հովնաթան Հովնաթանյանի որմնանկարների լուսանկարային վերարտադրությունները։ Առաջաբանում հեղինակը մանրամասն վեր է հանում և գնահատում թե բանաստեղծի և թե նկարչի ստեղծագործությունների արժանիքները։

Հետաքրքրություն է ներկայացնում այն պարագան, որ Չոպանյանը Նաղաշ Հովնաթանի գործի վերլուծությունը կատարում է հաճախ համեմատություններ անելով և դուպահևներ տանելով Քուչակի և Սայաթ-Նովայի հետ։ Նա շեշտում է, որ բանաստեղծի ներշնչման աղբյուրը կյանքի հրճվանքն է. «երջանիկ արևոտ խառնվածք մը, որուն համար կյանքը քաղցր եղած պետք է ըլլա և որ իր երախտագիտությունը կը հայտնե կյանքին՝

էր գնահատում նրա գործունեությունը մինչև կաթողիկոս ընտրվելը և, ինչպես կտեսնենք հետագա գլուխներում, Խրիմյանի մասին հոդված է տպագրում ֆրանսիական մամուլում, պրոպագանդելով նրան և նրա անձի միջոցով՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերը։

Այնուամենայնիվ, չնայած իր հարգանքին, Չոպանյանը էջմիածնից վերադառնալուց անմիջապես հետո 1909 և 1910 թթ. երկու անգամ հանդես է գալիս Պոլսի «Բյուզանդիոնում», քննադատելով էջմիածնի տաճարի արվեստի գործերի ոչնչացումը։

«Ձաղկելով այդ հանցանքը նույնիսկ տիեզերահռչակ հայու մը կողմն գործված,— գրում է Չոպանյանը,— իմ նպատակս է հայ ժողովրդին ուղեղին մեջ մացնել տեղավորել սա դաղափարը, թե մեր հայրերուն թողած գեղարվեստական արտադրություններն ամբողջ ազգին պատվույն ու վարկին համար էական կարևորություն ունեցող սրբություններ են և թե զանոնք խնամքով պահպանել, ուսումնասիրել և ծանոթացնել՝ պարտականություն մը պետք է ըլլա ամեն հայու. իսկ այն գեղարվեստական հնությունները մանավանդ, որոնք կը գտնվին ազգային շենքերու մեջ, ոչ միայն բարոյապես, այլև նյութապես, հայ ազգին սեփականությունն են ու ոևէ անհատ, ամենեն փոքրեն մինչև ամենեն բարձրաստիճանը իրավունք չունի ինք իր գլխուն անոնց դիպչելու»։ («Բյուզանդիոն», 1910, թիվ 4056)։

[1] Աբշալ Չոպանեան, *Նաղաշ Հովնաթան...* էջ 9։

խանդավառական անուշութիւնով մը երգելով անոր հաճոյքները, որ բնութեան գոյար գեղեցկութեանց ծոցը կը փթթին»[1]:

Շահեկան է նաև Զոպանեանի դիտողութիւնը բանաստեղծի տաղերի ձևի, մասնավորապես; լեզւա-ոճական առանձնահատկութիւնների վերաբերեալ. «Ներդաշնակութեան զգացումը շատ խոր ու փափուկ է Հովնաթանի մոտ (ինչպես և Սայաթ-Նովային, ինչպես մեր հին աշուղներուն մեծ մասին ու մանավանդ աննման Քուչակին մոտ): Այդ տեսակետով մեր նոր բանաստեղծները շատ բան ունին սորվելու մեր հին աշուղներեն: Բառերը ընտրված ու դասավորված են երաժշտականութիւն առաջ բերելու ամենեն ու գրեթե միշտ զմայլելիորեն հաջողած դիտումով մը. նկատելի է, որ մեր լեզվին երկայն ու ծանր խժալուր բաղաձայններով խճողված կարգ մը բառերը վտարված են ընդհանրապես այդ երգերեն. կը տիրեն հոն քաղցրահնչյուն, կարճ ու սահուն բառերը, ձայնավորներով լեցուն»[2]:

Հովնաթան Հովնաթանյան նկարչին անդրադառնալով[3], *Զոպանյանը բազմաթիվ հարցեր է առաջ քաշում, որոնց պատասխանը ինքը տալ չի կարողանում, թողնելով դրանք մասնագետների տեխնիկական և մանրակրկիտ քննութեանը: Իր դերը նա տեսնում է այդ արվեստագետի վրա հասարակութեան ուշադրութեունը հրավիրելու մեջ:*

Ինչպես միշտ, այս անգամ էլ Ա. Զոպանյանի աշխատութեունը շնորհակալութեամբ է ընդունվում հայ մտավորականութեան կողմից: Ջիվան Սարաֆը գրում է. «Նահապետ Քուչակեն վերջը, ահա դուք մը Հովնաթաններու դեմքերն ու գործերը երևան կբերի մութին մեջեն իր վերջին հատորով և ոչ միայն պանոնք մոռացումն կփրկե, երախտիքի հարկ կը մատուցանե, այլ հայ ժողովրդին կընծայե գոհունակութեան առիթ մը ու գեղեցկագիտական վայելք մը»[4]:

Զոպանյանի աշխատութեան լույս ընծայումը դրվատանքի է արժանանում Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստում»: Լևոնյանն այն կոչում է «հոյակապ աշխատութեուն»[5]:

---

[1] Արշակ Զոպանեան, *Նոպաշ Հովնաթան...*, էջ 13:

[2] *Նույն տեղում*, էջ 16:

[3] *Հովնաթան Հովնաթանյանի գնահատության առաջին փորձը Զոպանյանը անում է «Բյուզանդիոնում», 1909, թիվ 4021:*

[4] *«Բյուզանդիոն», 1910, թիվ 4279:*

[5] *«Գեղարվեստ», 1911, № 4, էջ 179:*

Շահեկան է Հովհաննես Թումանյանի հիացմունքը: «Երբ ասում են, թե Ա. Չոպանյանի ձեռքի տակից դուրս է եկել մի որևէ գիրք,— գրում է Թումանյանը,— նա միշտ երևակայում եմ սիրով ու խնամքով կատարված մի գործ, ճաշակով ու գեղեցիկ նույնիսկ գրքի շապիկին ու շապկի գույնը: Այս տեսակ գիրք է նրա վերջին գործը... Եվ ահա այսօր Ա. Չոպանյանի շնորհիվ հարուցյուն առած, կամ ինչպես ինքն է ասում, անարդար մոռացումի խավարին հանած, մեր առաջն են այս երկու ազնիվ ու հարազատ դեմքերը...»[1]: Թումանյանը մանրամասն վերլուծում է Չոպանյանի գիրքը, համեմատություններ կատարում Քուշակի, Սայաթ-Նովայի, Նապաշ Հովնաթանի միջև, որոշ կետերում առարկում կամ ուղղում Ա. Չոպանյանին: Հետաքրքրական է, որ մեծ բանաստեղծը անվերապահ պաշտպանում է Չոպանյանին՝ Երիմյանին քննադատելու հարցում:

Թումանյանը եզրափակում է հոդվածը հետևյալ մտքով. «Ա. Չոպանյանը, որ այնքան սեր ունի դեպի մեր հին գեղարվեստը և նույնքան ճաշակով ու հոտառությամբ միշտ հետամուտ է որոնելու, գտնելու մեր մեռած տաղանդների կենդանի գործերը և հանդես դնելու ամենայն զգուշությամբ ու խնամքով, Նապաշ Հովնաթանի վերաբերությամբ էլ արել է նույնը»[2]:

Այս բաժինը եզրափակելուց առաջ բերենք նաև գրող Արտաշես Հարությունյանի կարծիքը: Նա Պոլսի «Ազատամարտում» գրում էր. «Ա. Չոպանյան, Նարեկացին,— չվարանինք ըսելու, այո՛, Նարեկացին ու Քուչակեն հետո, դուռը կբնի այս երկու բանկագին հայերու, որոնց գործը սահմանված է նպաստի բաժին մը բերելու հայ գեղարվեստական Մուսեոնին»[3]:

Այսպիսով, տասնհինգ տարվա կարճ ժամանակամիջոցում, 1895-ից մինչև 1910 թվականը, Արշակ Չոպանյանը վճռակատորեն նպաստեց, որպեսզի հայ ժողովուրդը վերագտնի իր մշակույթի փառքը կազմող հինգ խոշոր բանաստեղծների, որոնք մինչ այդ հայտնի էին որպես լոկ կրոնավորներ, կամ էլ ծածկվելով հնության փոշիների տակ, մոռացության էին դատապարտվել: Նարեկացին, Քուչակը Ցրիկը, Կոստանդին Երզնկացին, Նապաշ Հովնաթանը փայլեցին բոլորովին նոր լույսով, տառապ-

---

[1] «Հորիզոն», 1911, № 90:

[2] Նույն տեղում, № 99:

[3] «Ազատամարտ», 1911, 1/14 մայիսի:

յալ ժողովրդին ազգային ամենավեհ հպարտության անսպառելի աղիք տալով նրա պատմության ամենադառն ժամանակաշրջաններից մեկում: Բացի դրանից, Չոպանյանը «Անահիտում» հրատարակեց տասնյակ հայտնի և անհայտ բանաստեղծների լավագույն կտորներ, որոնցից շատերը ընթերցողներին էր մատուցում իր հմուտ մեկնաբանություններով: Դա ոչ միայն դիտական-բանասիրական, այլև խոշոր քաղաքական նշանակություն ունեցավ:

Չոպանյանը, սակայն, չէր կարող բավարարվել նվաճածով: Շարունակելով բանասիրական աշխատանքները՝ նա զանազան աղիքներով հանդես է գալիս և հայտնում իր կարծիքը այս կամ այն հատվածի, կտորի, քառյակի վերաբերյալ, գնահատում, ճշտումներ անում: Նա խորին հրճվանքով ողջունում և խրախուսում է «Էմինյան ազգագրական ժողովածուի» հերթական հատորները, ջերմորեն պաշտպանում է «Մշակի» նախաձեռնությամբ և Ստ. Մալխասյանցի կողմից գործադրվող ծրագիրը՝ բոլոր հայ պատմագիրներին հրատարակելու վերաբերյալ:

Չոպանյանի պրպտող միտքը նոր պեղումներ է անում հայ հին գրականության խորքերում, ձգտելով գտնել այն ամենը, ինչ իր կարծիքով պետք է որ լիներ, բայց պակասում էր մեր գրականության ցանկում: Նա կոչ է անում Վենետիկի, Վիեննայի, Էջմիածնի, Երուսաղեմի միաբանություններին՝ հրատարակել բոլոր ձեռագրերը, և խնդրում է ուշադիր լինել, որպեսզի այդ ձեռագրերում հայտնաբերվեն նաև դյուցազնական, փիլիսոփայական ու գործողություն պարունակող էջեր, այսինքն՝ իր կարծիքով այնպիսի էջեր, որոնք պակասում են մեր միջնադարյան գրականությանը:

Բայց նախքան անտիպ գործերի հրատարակումը և այդ աշխատանքին ձեռնարկելը, նա հարց է բարձրացնում ձեռագրերի պահպանության մասին: Պետք է, ասում է Չոպանյանը, ցրված ձեռագրերը ժողովել մի քանի մեծ մատենադարանների մեջ, հրատարակել այդ ձեռագրերի ցուցակները, որպեսզի դյուրին լինի ուսումնասիրությունն ու նրանց հրատարակումը: Բնականաբար, ազգային պետականության չգոյության պայմաններում այդ գործի կազմակերպման պատասխանատվությունը, Չոպանյանի կարծիքով, պետք է վերցնեին միաբանությունները, որոնց և նա ուղղում էր իր հրապարակային դիմումը:

Հայ նոր գրականությունը ժողովրդի մեջ տարածելը, արևելահայ և արևմտահայ հատվածների արտադրած մշակույթը փոխադարձաբար իրար ծանոթացնելը ոչ միայն տեսական դրույթ է, որ առաջ էր քաշում Զոպանյանը գանազան առիթներով, այլև նրա մշտական գործունեության, առօրյա պրակտիկայի ուղենիշը: Սիստեմավոր, «մեթոդական» ձևով «Անահիտը» մեկը մյուսի հետևից վեր է հանում, ժողովրդական գանգվածին մատչելի ոճով լուսաբանում հայ նորագույն գրականության կարևոր էջերը:

Ողբալի է, ասում է Զոպանյանը, որ ժամանակակից արևելահայերը և արևմտահայերը շատ ավելի ծանոթություն ունեն ռուսական, ֆրանսիական, գերմանական կամ իտալական գրականության մասին, քան մեկը մյուսի: Այսպիսի կացությունը վնասում էր ազգի կոնսոլիդացիայի գործին: Դրա հիմնական պատճառը, ըստ Զոպանյանի, Համիդյան ռեժիմն էր, որը աստիճանաբար թանձրացնում էր պատվարը երկու հատվածների միջև, արգելում արևելահայ մամուլի և գրականության մուտքը Թուրքիա, պատժվելու ամենօրյա սպառնալիքի տակ պահում արևմտահայ այն գործիչներին, որոնք համարձակվում էին աշխատակցել արևելահայ մամուլին:

Այդպիսին չէր կացությունը դեռ որոշ ժամանակ առաջ, արձանագրում է Զոպանյանը. «Ատենով, Նազարյանցի, Նալբանդյանցի, Ոսկանյանի և Սվաճյանի օրերուն, ավելի մոտություն կար երկու կողմի գրական գործիչներուն միջև... «Հյուսիսափայլը» կը հետևեր Պոլսո ազատական մամուլին ջանքերուն, նույնպես և «Մեղուն» «Հյուսիսափայլին» կաջակցեր, անոր գործունեությունը կը ճանչցներ Թրքահայոց»[1]:

Հայ նոր գրականության ուսումնասիրության և տարածման խնդրում «Անահիտի» սկզբունքը աներկբա է: Առաջնությունը և կարևորությունը տրվում է այն գրողների ստեղծագործությունների, որոնց բովանդակության և ձևի մեջ տրոփում է հայկական, ազգային «նոթը» որպես ամբողջ ստեղծագործության բնորոշ էություն: Ինքը՝ Զոպանյանը, շատ մեծ տեղ հատկացնելով Րաֆֆուն, գտնում է, սակայն, որ նրա գործերում խիստ պակա-

[1] «Անահիտ», ԺԱ տարի, 1909—1910, թիվ 11—12, էջ 247:

սում է «դուռ «հայկական» գեղեցկափիտական նոթը»։ «Աբովյանին մեջ է ան, հնչելով հոն ամենեն հարուստ, ամենեն հզոր, ամենեն սուր ու պաշտելի ձևովը, որ լսած ըլլա արդի հայության մեջ։ Աբովյանեն հետո, Պռոշյանին քով կարելի է դանել զայն»։ Բագրատունուն նույնպես համարում է «գրական հսկա դեմք», բայց գտնում է, որ նա իր ոճով մեծ մասամբ եվրոպական է։ Արևմտահայ գրողներից Զոպանյանը ամենից ավելի հայկականության է գտնում Դուրյանի, Պարոնյանի, Ալիշանի, իսկ նորագույններից՝ Բլկատինցու և Զարդարյանի մեջ։ «Դուրյան պոլսահայոց աշուղն է, Վոսփորի Քուչակը,— ինչպես Պարոնյան պոլսահայոց բնիկ ժողովրդական սրամտության արտահայտիչը։ Ալիշան ունի, իսանովածքով, հայկական գրոշմ, զոր գիտակցաբար զարգացուցած ալ է, հին աշուղները կարդալով»[1]։

Զոպանյանի այս դրույթները լույս են սփռում նրա գրականագիտական գործունեության մեջ ցուցաբերած նախասիրությունների վրա։ Առաջին լուրջ գրականագիտական գործերը, նոր գրականությունը նկատի առնելով, նա նվիրեց Պետրոս Դուրյանի (1894), Հակոբ Պարոնյանի (1895, «Մասիկ»), Խաչատուր Աբովյանի (1898, «Անահիտ»), Պերճ Պռոշյանի (1899, «Անահիտ») ստեղծագործությունների քննական վերլուծությանը։

1898 թվականին «Անահիտը» տպագրում է «Խաչատուր Աբովյան» հոդվածը, բացի գրանից հանդեսը բազմիցս անդրադարձել է Աբովյանին և, վերջապես, նրա ծննդյան 100-ամյակի առթիվ դարձյալ ուսումնասիրություն է տպագրում, հրատարակելով նաև «Ջանդի» հատվածը։

Զոպանյանը Աբովյանի գործունեության մեջ տեսնում է մի ամբողջ ժողովրդի բարոյական զարթոնք։ Իր հիացումը և երախտագիտությունն է հայտնում Աբովյանին, որովհետև «Աբովյան ժողովրդին ձայնը եղավ, ուղից լույսը տանիլ խոնարհ խավերուն մեջ, որոնք դեռ հետու մնացած էին դասական գրականությունեն՝ սակավաթիվ զարգացյալ դասակարգի մը մատչելի։ Աբովյան ժողովրդին, ամբողջ ժողովրդին խոսեցավ, ժողովրդին լեզվովը, ժողովրդին վրա։ Ինքը նոր հայերենին կյանքը հաստատեց և առջի փորձեն իսկ հաղթանակը տարավ, որովհետև իր գործը կատարեց գրական հրաշակերտով մը»[2]։

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 1—2։

[2] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 2, էջ 50—51։

Այդ հրաշակերտը՝ «Վերք Հայաստանին», Չոպանյանի գրչի տակ տարրալուծվում, ապա նորից սինթեզվում է պրոզաական մեծ վարպետությամբ: «Վերքը» նա համարում է ժողովրդական դյուցազնեպոեմություն, որտեղ ժողովրդի կյանքն է բաբախում, տառապում, հևում: «Թող ինծի չվերագրուին որևէ շովինություն, զոր անկարող եմ ունենալու,— գրում է Ա. Չոպանյանը,— եթե ըսեմ, որ այդ վեպը, իր տեսակին մեջ, մեկ հատիկ է ամեն ազգի, ամեն ժամանակի գրականություններուն մեջ»[1]:

Չոպանյանը շեշտում է, որ վեպը միայն եղերերգություն և դյուցազնեպոեմություն չէ, այլ նոր ուղղություն, նոր կյանք մատնացույց անող ստեղծագործություն է: Աբովյանի լուսավորական ծրագիրը արտանց ողջունում է Չոպանյանը: «Պահպանում ու զարգացում հայ ցեղին, հայ լեզվին, հայ գրականության, մուտք հայ տարրին՝ եվրոպական քաղաքակրթության մեջ, ահա ճամբան զոր Աբովյան կը ցուցներ...— գրում է Ա. Չոպանյանը:— Եվ Աբովյան անգին արժանիքն ունի այդ ճամբան առաջին ու դժնդակ ճիգով մը բացած ու լայն բացած ըլլալու... Եվ եթե ռուսահայ գրականությունն ավելի հայ գույն, ավելի բնիկ շեշտ ունի, ավելի ներծ է հանճարեն և դասական ազնցութենն, ատի կը պարտին Աբովյանին»[2]:

Աբովյանի ցույց տված քաղաքական ճանապարհը նվազ պերճությամբ չէր խոսում Ա. Չոպանյանի սրտին, որը ինքն էլ, քաղաքական-հասարակական գործունեության հենց ամենասկզբից կանգնել էր դեպի Ռուսաստան կողմնորոշման հողի վրա: Նկարագրելով Աբովյանի «ռուսասիրությունը», Չոպանյանն ավելացնում է. «Տարօրինակ է նույնիսկ, որ մեր «ազգասերներուն» ոմանք այս վերջին շրջանին մեջ բոլորովին մոռցած ըլլան այդ կարևոր իրողությունը. այն բոլոր ահագին հատաջադիմություն՝ մտավորական, բարոյական, տնտեսական, զոր արևելյան հայությունը կատարեց ԺԹ դարուն մեջ, ռուսական տիրապետության հետևանքն է: Այն հայ գործիչները, որ այս վերջին շրջանին մեջ, բոլորովին մոռանալով ինչ որ հայությունը կը պարտի ռուս ղորության, հայ քաղաքականության ամբին որոշապես հակառուս ընթացք մը, թե ապերախտ վարմունք մը ունեցած եղան

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 2, էջ 56:

[2] Նույն տեղում, էջ 61:

հանդեպ բարիքի մը... և ի ծանրորին վնասեցին հայ ժողովրդին շահերուն»[1]:

Աբովյանին արևմտահայության ժողովրդային զանգվածների մեջ տարածելը Զոպանյանը գտնում էր առաջնահերթ խնդիր:

Ժողովրդական կյանքի բազմակողմանի և հարազատ վերարտադրության մեջ է տեսնում Ս. Զոպանյանը Պերճ Պռոշյանի արժանիքը: Ժամանակակից գեղեցկագիտության ակնոցով դիտած, ասում է նա, Պռոշյանի գործերը թերություններ շատ ունեն, բայց անհրաժեշտ է ամեն գործ դիտել իր ժամանակի ու միջավայրի մեջ և իր կատարած դերի համեմատ: Եվ հենց իր ժամանակին կատարած դերի համար էլ Զոպանյանը շատ բարձր է դասում Պռոշյանին, համարելով նրան Աբովյանի գործի շարունակողը: Պռոշյանի վեպերը ըստ նրա «դոքյումաններ» են, որոնց մեջ պահպանվում է ժողովրդական գանձի մի ճոխ հատվածը: Զոպանյանը հատկապես գնահատում է, որ «Պռոշյանցին վեպերը ատելությամբ կը փրփրան կեղեքիչներուն, կեղծավորներուն դեմ, ու գորովանքով լեցուն են աղնիվ ու ճնշված տակրություններուն... համար»: Պռոշյանի գեղեցկությունը նրա ըմբռնած ու ջերմ հոգին է[2]:

Եթե Աբովյանի մեջ Ս. Զոպանյանը տեսնում է ռոմանտիկը, ապա Պռոշյանին ժողովրդական դրականության ռեալիստն է համարում: «Պռոշյանց հավատարմաբար կը նկարե հայ կյանքը ինք իր մեջ, նույնչափ անկեղծությամբ երևան բերելով անոր տգեղություններն ու արժանիքները»[3]: Ըստ Զոպանյանի, Պռոշյանի վեպերի սյուժեն հաճախ փոքրիկ է («Սոս և Վարդիթեր»), բայց հեղինակը այդ սյուժեն օգտագործում է «պրեթե միշտ որպես պատրվակ» գյուղական կյանքի պատկերների ու տիպարների ցուցադրության համար, միշտ իրականության վրայից կատարված, առանց որևէ իդեալականացման:

Բայց Պռոշյանը անկողմնակալ դիտող չէ, նկատում է Ս. Զոպանյանը: «Հեղինակին անձնականությունը կը հայտնվի այն խանդաղատանքով, զոր կը ցուցնե ճշմարիտներուն, սիրողներուն համար: Բայց նույն իսկ այդ զոհերը, այդ սիրուն ու բարի հոգիները, զոր մեր համակրանքին ու գթությանը կընծայե, որևէ

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 1—2, էջ 10:
[2] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 8, էջ 230—231:
[3] Նույն տեղում, էջ 231:

գեղեցկացում չեն կրած իր ձեռքեն, ու կերևան այնպես, ինչպես են իրականին մեջ, կոպիտ, միամիտ, անճարակ և սրտաշարժ, հրապուրիչ՝ իրենց նախնական տարփանքովը, միանգամայն քնքուշ ու բիրտ, այնքան հզոր, որքան պարզ»[1]*: Չոպանյանը դիտել է տալիս, որ Պռոշյանի վերաբերմունքը իր հերոսների և նկարագրած կյանքի նկատմամբ դրսևորվում է նաև հումորի մեջ, «հանդարտ ու չարաճճի, քիչ մը թանձր բայց համեղ» հեգնության մեջ: Հատկանշական է, որ այդ հեգնությունով խարազանելը Ա. Չոպանյանը գտնում է շատ կարևոր, Պռոշյանի գործի բարոյական նշանակությունը բնորոշող: Ահա թե ինչու ցեցերը՝ «սաքոներն ու բալասաններն մոլեգնաբար սուած ըլլալու են Պռոշյանցը, և սոր մեծագույն պատիվն է, զոր գրող մը կրնա վայելել իր կյանքին մեջ»*[2]*:*

Նոր ժամանակներում հայ ժողովրդի լուսավորության, նրա մեջ եվրոպական քաղաքակրթության տարածման գործում Ա. Չոպանյանը խոշոր տեղ է հատկացնում Մխիթարին և Մխիթարյան միաբանությանը՝ իր երկու կենտրոններով:

Չոպանյանը վեր է հանում Վենետիկի Մխիթարյանների կատարած՝ իր ժամանակի համար մեծ աշխատանքը հայ ժողովրդի պատմության, Հայաստանի աշխարհագրության, հայ լեզվի բազմաթիվ բառարանների ստեղծման, հին ձեռագրերի հրատարակության, մեծաթիվ թարգմանությունների, որոնցում մեծ տեղ էին գրավում աշխարհիկ գրականության համաշխարհային գանձերը, մատենագրական կապրների պատրաստման և ուրիշ բնագավառներում: Այս գործին զուգահեռ, Վենետիկի միաբանությունը նշանակալի գործունեություն էր ծավալում հայությանը եվրոպային ներկայացնելու ուղղությամբ:

Մխիթարը և նրա հետևորդները՝ Չամչյանը, Ավգերյանը, Բադրատունին, Հյուրմյուզը, Ալիշանը, իրոք որ կատարելին ծավալուն գործ, որի նշանակությունը կասկածից վեր է: Չոպանյանը, սակայն, Վենետիկի Մխիթարյաններին վերաբերող իր առաջին հոդվածում արդի հայության մտքի զարգացման գործում նրանց դերը չափազանցում է: Ըստ Չոպանյանի՝ Մխիթարյաններն են ներշնչել և հարուցել նոր ժամանակների ազգային վերաշարժումը թե արևմտահայության և թե արևելահայության

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 8, էջ 232:

[2] Նույն տեղում:

մեջ: Ստացվում է, օրինակ, որ Զամչյանի «Հայոց պատմությանը» միանգամայն... կը պարտինք ամեն ինչ, որ ենք այսօր, մեր բարձրացումը դարավոր լուծի տակ ստրկացումեն, մեր ամբողջ այս դարուն մեջ ունեցած ձգտումը դեպի ազնվացում, դեպի աղատագրում, դեպի մեծություն, և Թուրքին ու պարսիկին գարշապարին տակ տափակացած, ամբած, սրված հայը որպեսզի ցնցվելը իր անկումեն ու ոտքի կարենար ելլել ու դեպի լույսը ցցվել, այդ մեծ հպարտության, այդ խոշոր հավատքի շնշուլը անհրաժեշտ էր (ակնարկում է Զամչյանի գրքում հայ ժողովրդի անցյալի պատմության դյուցազնապատկան մեծարումը— Կ. Դ.)»: Այսքանը դեռ բավական չէր, Զոպանյանը Զամչյանին համարում է «արդի հայության ստեղծող», ճիշտ է, Աբովյանի հետ միասին[1]:

Չմոռանք այն մասին, որ որևէ ժողովրդի բարձրացումը «դարավոր լուծի տակ ստրկացումեն» հիմնված է լինում մի շարք նախադրյալների նպաստավոր պարագայման վրա, և որ միայն բարոյագաղափարական ազդակը, ինչպիսին է տվյալ դեպքում Մխիթարյանների գործունեությունը, բավարար լինել չէր կարող, որ նրան Աբովյանն էլ չունենար օբյեկտիվ նպաստավոր հող, որի մեջ նրա նետած սերմերը պիտի արագորեն ծլարձակեին, նրա գործունեությունը ժամանակավրեպ ու անպտուղ կլիներ:

Անշուշտ, Զոպանյանը Զամչյանի «Հայոց պատմությանը» վերագրել է դեր և նշանակություն, որը մեծապես դուրս է չափի զգացումի սահմաններից, նկատի չառնելով նույնիսկ, թե որքանով էր այդ գիրքը և առհասարակ Մխիթարյանների գործը մատչելի, հետևաբար, տարածված և հայտնի «Թուրքի ու պարսիկի ոտքի տակ տափակած» հայ մարդուն, որը իր կերակրող մասով անպրաճանաչ դյուղացի էր:

Նույն հոդվածում, սակայն, Զոպանյանը մի քանի իրավացի գնահատականներ է տալիս թե Մխիթարյաններին և թե արևելահայ գործիչներին:

«Իրենց ամբողջ գործունեության մեջ,— գրում է նա,— Մխիթարյանք, հակառակ իրենց ոգիի, հաշակի, ձգտումներու ընդարձակության և ազատության, «վանքի», «դպրոցի», «գրքի» սպիցությունը կը պահեին: Վերջապես «վանականներ» էին, մեծ մասամբ Պոլսեն, հայրենի երկրին անձամբ անծանոթ, Հայաս-

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 12, էջ 359—360:

տանն ու հայ ժողովուրդը գրքերու մեջին տեսնող և ժողովրդական կյանքեն անջատ: Իրենց աշխատությունը գրասենյակի աշխատություն մըն է, ուղեղի արտադրություն մը»[1]: *«Ուսահայերը,— շարունակում է նա,— ժողովրդի մարդիկ, ժողովրդի մեջ կազմված և ուղղակի ժողովրդի համար աշխատելու ձգտող, ընդունելով միանգամայն ազդեցությունը գերմանո-ռուս օգտապաշտ, իրապաշտ դաստիարակության, մեկի տվին մեր հայրենիքին և մեր ժողովրդին արդի կացության «իրական» պատկերացումը, այդ կացության վերանորոգման դրական միջոցները փնտրեցին և ջանացին ցուցանել, կազմակերպեցին լրագրությունը, իրապաշտ վեպը, ժողովրդական ու ձգտումնավոր բանաստեղծությունը, ընդդրկեցին մանկավարժական նոր մեթոդներ, «հայ» եկեղեցիին, «հայ» ավանդություններուն, վերջապես դուռ հայ տարրին ներկայացուցիչները եղան, մինչդեռ Մխիթարյանք «կաթոլիկ ու եվրոպական հայություն մը» կը ներկայացնեին, ու ճարտասանական, պատմական և դիվանագիտական հայրենասիրությանը հանդեպ, որ էր Մխիթարյանցը, հեղափոխական, գործուն, կենդանի հայրենասիրություն մը քարոզեցին»*[2]:

Այսօրինակ մտքերից հետո էլ Զոպանյանը պնդում է, որ Մխիթարյանները թե ժամանակագրական և թե գործի կարևորության տեսակետից առաջնություն ունեին, օբյեկտիվորեն ընկնելով հակասության մեջ:

Այդ հակասությանը որոշակի լուծում է բերում հետագայում գրած նրա մի ուրիշ հոդվածը, որտեղ Զոպանյանը հայտնում է այն միտքը, թե առանց Եվրոպայում մատենագրական կենտրոն ունենալու էլ հայ ժողովուրդը պետք է, անտարակույս, կարողանար արթնանալ իր բարոյական թմրությունից, վերականգներ իր լեզուն և գրականությունը, բայց այդ զարթոնքը ավելի դանդաղ կգնար: Մխիթարյանների դերը, ուստի, այն էր, որ «դյուրացուց ու կանոնավորեց հայ ազգին ճիգը»[3]: *Կրկնելով իր վերը բերած միտքը Մխիթարյանների «գրքայնության», ժողովրդից կտրված լինելու մասին, Զոպանյանը նկատում է, որ արևմտահայ գործիչները՝ Չամուռճյան, Միսաքյան, Գրիգոր Օտյան, Ոսկանյան, Հարություն Սվաճյան, Պարոնյան, Դուրյան, Չիլինկիրյան, Կոս-*

[1] *«Անահիտ», Ա. տարի, 1899, թիվ 12, էջ 363:*

[2] *Նույն տեղում, էջ 364:*

[3] *«Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 8, էջ 178:*

տանյան, Տեոնյան, և արևելահայ գործիչները՝ Աբովյան, Նազարյան, Նալբանդյան, Բարխուդարյան, Րաֆֆի, Արծրունի, Գամառ-Քաթիպա, Քերովբե Պատկանյան, Մկրտիչ Էմին, «կատարած են գործ մը, որ ոչ նվազ կարևոր է, քան Մխիթարյանց գործը, և ուրիշ տեսակետով մը ավելի իսկ կարևոր... Մոսկվայի, Պոլսո, Թիֆլիսի և Իզմիրի գործիչները, ժողովրդին մեջ ապրած, կրոնական կամ վարդապետական ոևէ կապ ղներ, եվրոպական քաղաքակրթությունն ընդունած՝ ոչ թե կղերական, դիտական-աշխատանոցական սահմանի մը մեջ լոկ, այլ իր ամենեն կենսախայտ ու «նոր» ձևին մեջ, կատարած են գործ մը ավելի կենդանի, ժողովրդին ամբողջական պետքերուն ավելի դոհացում տվող»[1]:

1948 թվականին, «Բազմավեպի» հարյուրամյակի առիթով անդրադառնալով նույն հարցին, Զոպանյանը գրում է, որ ինքը միշտ սիրել է Մխիթարյաններին, բայց երբեք այն կարծիքին չի եղել, որ նրա Մխիթարը հիմնած չլիներ իր միաբանությունը, հայ մշակույթը պիտի խավարեր և հայ ազգն էլ ձուլվեր ու անհետանար: «Ատիկա դատապարտելի չափազանցություն մըն է, բազմավաստակ միաբանություն մը փառաբանելու դիտումով հինավուրց ազգ մը անպատվել է»[2]:

Նույն հոդվածում Զոպանյանը մի էական նշում էլ է անում: Հիշատակելով, որ նախատուր Աբովյանը մի պահ ցանկացել է գնալ Վենետիկ և միաբանությանը դինվորագրվել, ասում է. «Բարեբախտաբար, ան չդործադրեց իր այդ բաղձանքը, որովհետև անիկա կոչված էր ուրիշ ամենակարևոր գործ մը կատարելու, այն է հիմնադիրը հանդիսանալ կովկասահայոց դրականության և իր կյանքովն ու գործովը ժողովրդին մատնացույց ընել քաղաքական ճշգրիտ ու բեղմնավոր ուղղություն մը»[3] (ընդգծումը իմն է— Կ. Դ.):

Զանազան առիթներով Ա. Զոպանյանը դրվատել է «Բազմավեպի» գործունեությունը, այդ հանդեսը «Հյուսիսափայլի» հետ մեկտեղ համարելով հայ «բանասիրական, աղդասիրական, դրասիրական» մամուլի իսկական սկիզբը:

Բոլոր դեպքերում, համեմատելով Վենետիկի Մխիթարյանների անցյալ գործունեությունը իր ժամանակաշրջանում նրանց ծավա-

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 8, էջ 179:

[2] «Անահիտ», նոր շրջան, ԺԴ տարի, 1948, թիվ 1, էջ 1:

[3] Նույն տեղում, էջ 3:

ված գործունեության, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյանների գիտական արտադրանքի հետ, Ա. Չոպանյանը խիստ դժգոհություն է հայտնում իրերի կացությունից: Նա դատապարտում է վիեննահիկցիների մեծամտությունը և հին փառքի վրա համենալը: Նա ցավոտությամբ է խոսում 1895—97 թվականների աղետների շրջանում վիեննական միաբանության քար լռության մասին. «գոնե սուգի նրգ մը...»:

Չոպանյանը հարցեր է առաջ քաշում, որոնք, իր կարծիքով, միանգամայն սուզական կլինեին Վիեննահիկի Մխիթարյանների համար որպես գործունեության դաշտ: Այդ հարցերն են՝ համաշխարհային հին ու նոր դասական գրականագործոցների աշխարհաբար թարգմանությունը՝ Դանթե, Սերվանտես, Շեքսպիր, Ռասին և այլն. աշխարհաբարի վերածել Խորենացուն, Սղիշեին, Ագաթանգեղոսին, Բուզանդին, Լաստիվերտացուն, Համբրոնացուն, Շնորհալուն, Նարեկացուն, հրատարակել անտիպ ձեռագրերը, մանավանդ բանաստեղծական գործերը, շարունակել նոր պայմաններին մեջ առավել մեծ թափով Եվրոպային ներկայացնել հայ մշակույթը և, վերջապես, մտավորական կադրեր հասցնել հայությանը: Չոպանյանը ռեալիստորեն էր նայում իրերին և գիտեր, որ իր օրերի քաղաքական կացության մեջ նման ծրագիր կարող էր գլուխ բերել Վիեննահիկի միաբանությունը, որը ուներ դրա համար բոլոր հնարավորությունները:

Բաղմաթիվ առիթներով Չոպանյանը խոստովանել է, թե իր պատանեկան հասակում, ուրիշ գրողների ու մտածողների թվում Վևոնդ Ալիշանն է եղել, որ խոր ազդեցություն է թողել իր կազմավորման վրա: Այս տեսանկյունց հետաքրքիր է քննարկել, թե ինքը՝ Արշակ Չոպանյանը, Ալիշանի անձնավորության և ստեղծագործության ո՞ր կողմերն է բարձրացնում ու գրվատում: Ալիշանի անձը նա բնորոշում է այսպիսի հատկանիշներով. անխոնջ աշխատասիրություն, մշտավառ ու բեղմնավոր հետաքրքրություն, կամքին ու խանդոտ զգայնություն, գողտր ու թևավոր երևակայություն, և այս բոլորը հայրենասիրության հրայրքով անցած: Ալիշանի գործը բաղմաճյուղ էր, ասում է Չոպանյանը, բայց ամենից առաջ դա բանաստեղծի գործ էր, նույնիսկ նրա տեղագրական, պատմագրական երկասիրությունները որոշ առումով «գիտական հանգամանք չունին», բայց «բանաստեղծություն են միշտ, այնչափ, որչափ իր «Նվագները»:

Զոպանյանն ընդգծում է Ալիշանի վաստակների մեծությունը և մանկականորեն անկեղծ ակնածությունը թե Տաճատի և թե հայրենիքի սիրո մեջ։ «Հայաստանը աշխարհիս կենտրոնն էր իրեն համար», հայ պատմական դրվագները՝ մի-մի անգնահատելի գյուտագոհություններ։ Նրա գլխավոր նպատակն էր՝ «հայ ժողովրդին ներշնչել կազդուրիչ ու ակնածացուցիչ նախարարությունը մեծ ու փառավոր անցյալ մը ունենալու»[1]։ Ըստ Զոպանյանի, հայ պատանիների համար, որ նոր են սկսում պարզանալ ու կազմավորվել, և որոնք «պետք ունեին իրենց ազգին ու հայրենիքին վրա իրենց խոսող տաք ու ակնիվ ձայնի մը, չկա ավելի կազդուրիչ, ավելի հրահանգիչ ու հրապուրիչ մատենադարան»[2], քան այն, որ Ալիշանն է թողել։

Ալիշանի որոշ գործեր, հատկապես «Խորհրդածություններ ընդ եղևնյավ», «Հուշիկներ» և «Նահապետի երգերի» մի քանի հատվածներ, Ա. Զոպանյանը համարում է բանաստեղծական մաքուր ու բարձր ներշնչման և հոգեթով ոճի հրաշալիքներ։ «Որքան ալ Աբովյան, Պեշիկթաշլյան, Դուրյան կը գերազանցեն Ալիշանը գրական այս կամ այն տեսին մեջ, ուր իրենք մասնավոր ուժ մը ցույց կուտան, Ալիշան զանոնք ամենքն ալ կը գերազանցե իր տաղանդին անհուն բազմազանությամբը, լեզվին հարստությամբն ու ճարպկությամբը, տաղաչափության անվերջ պնդությամբը»[3]։

Զոպանյանը նկատում է, որ Ալիշանը որոշակի ազդեցություն է ունեցել XIX դարի երկրորդ կեսի հայ գրականության զարգացման վրա, բայց արձանագրում է նաև, որ նա անմատչելի մնաց ժողովրդական զանգվածներին «գրաբար լեզվով—ու շատ խրթին գրաբարով մը— գրած ըլլալուն համար», և այդ պատճառով ազգային շարժման վրա նրա ազդեցությունը «նվազ մեծ ու անմիջական» է եղել։

«Անահիտ» հանդեսում հատուկ տող է գրավում արևմտյան 80-ականների շարժմանը նախորդող շրջանի բացահայտումը և նույն շրջանի գործիչների գնահատությունը։ Սա էական կարևորություն ունեցող հարց էր առհասարակ, և մասնավորապես, այն պատճառով, որ 80-ականներն իրենք հաճախ անգիտա-

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 4, էջ 71։

[2] Նույն տեղում, էջ 73։

[3] Նույն տեղում, էջ 75։

նում էին, թե իրենց գործունեության հողը նախապատրաստվել ու պարարտացվել է նախորդող շրջանի մի խումբ դեմոկրատ գործիչների ջանքերով:

Հանդեսի երեք համարներում շարունակաբար տպագրվում է Ա. Չոպանյանի «Հարության Սվաճյան» հոդվածը: «Անահիտի» խմբագիրը իրեն հատուկ խորությամբ քննարկում է հարցը, մասնավոր խորաթափանցություն դրսևորելով և ընդհանրացումներ անելով ժամանակաշրջանը դնահատելիս: Չոպանյանը չի ասում, թե դա բուրժուական հարաբերությունների ստեղծման նախադուռն էր Թուրքիայում, բայց նրա վերլուծությունը հանգեցնում է այդ եզրակացության: Սուլթանական Թուրքիայում բարձրացող բուրժուազիայի ճնշման տակ նոր հասարակարգի հաղթանակի համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվում և զարգանում, որոնք բիչ հետո պիտի զարնվեին Համիդյան ռեակցիային ու երկար ժամանակով ետ ախալվեին: «Տաճկաստան, Սուլթան Մահմուդի օրով, նոր փուլի մը մեջ մտավ,— գրում է Ա. Չոպանյանը,— որ շարունակեց մինչև Համիդի չարագուշակ գալուստը. եվրոպական քաղաքակրթությունը, որուն առջև օսմանյան պետությունը պատնեշ էր կանգնած մինչև այդ ատենը, այդ շրջանին հաջողեցավ կործանել այդ պատնեշը և ներս խուժեց, ծավալիլ սկսավ ամբողջ երկրին մեջ»[1]:

Բնականաբար, արևմտահայությունն էլ, նույնիսկ առավել արագ տեմպերով, ենթակա էր հասարակության զարգացման այդ օրինաչափ պրոցեսին, որ տեղի էր ունենում Թուրքիայում: «Հայ ժողովրդին մտավոր վերածնության մեջ այդ շրջանը ամենեն վճռականն է և ամենեն բեղունը»[2],— գրում է Ա. Չոպանյանը և նկարագրում մշակութային այն մեծ շարժումը, որ ծայր առավ թե արևելահայության և թե արևմտահայության մեջ դարի կեսերին: Այնուհետև Չոպանյանը անում է սկզբունքային կարևորություն ունեցող ընդհանրացում. «Այո, ատի «վճռական» շրջանն էր հայ վերածնության. մինչև այդ վայրկյանը հայոց մեջ կային զարդացած, քաղաքակրթված, «եվրոպացած» քանի մը անհատներ կամ քանի մը խմբակներ միայն, այդ վայրկյանին է, որ «հայ ժողովուրդ» մը կազմվիլ սկսավ, իր անցյալին գիտակցու-

---

[1] «Անահիտ», ե տարի, 1903, թիվ, 8, էջ 111:

[2] «Անահիտ», ե տարի, 1903, թիվ 6—7, էջ 86:

թյունը ունեցող, իր ներկային որոշ ըմբռնումովը տոգորված, լավագույն ապագա մը կերտելու մտահոգությամբ լեցված»[1]:

Երկու պարագա հատկանշական է այստեղ. նախ, որ Զոպանյանը ճիշտ այդ շրջանն է համարում ազգի կազմավորման շրջան և ապա, որ նա ազգի կազմավորումը դիտում է որպես հետևանք քաղաքակրթման, «եվրոպականացման»: Այդ դույզ պարագաները ուրիշ բան չէին կարող նշանակել, քան ազգի կազմավորումը կապել բուրժուազիայի հետ: Եվ որ կարևոր է, Զոպանյանը այդ երևույթը համարում է նոր և առաջադիմական, ինչպես դա կտեսնենք ստորև:

Զոպանյանը բարձր է գնահատում նույն այդ «վճռական շրջանի» գործիչների խմբին՝ Խաչատուր Միսաքյանին, Ստեփան Ոսկանյանին, Հարություն Սվաճյանին, Նիկողոս Զորայանին, Օգսեն Խոճասարյանին, Գրիգոր Օտյանին և համարում նրանց անհրաժեշտ մոռացված: Այդ խմբի անդամների մեջ հավասարության նշան չի դնում, սակայն: Հարություն Սվաճյանը Զոպանյանի մոտ գրավում է առանձնահատուկ և առաջնակարգ տեղ: Հատկանշական է, որ Ոսկանյանին համարելով ֆրանսիական 1848 թվականի հեղափոխության ոչ միայն մասնակիցը, այլև գաղափարների տարածողը հայության մեջ, Զոպանյանը Սվաճյանի մասին գրում է, թե նա «Ոսկանյանի գործակիցն է այդ վեհ գործի մեջ»[2] (ընդգծումը իմն է— Կ. Դ.):

Ոսկանյանին և Սվաճյանին Զոպանյանը համարում է հայ հրապարակագրության հիմնադիրները «բառին եվրոպական իմաստով, այսինքն՝ հանրային հարցերու, ինչպես և գրական, բարոյական, իմաստասիրական խնդիրներու քննության՝ որոշ աշխարհայեցողության մը տեսակետեն նկատված անաչառ, հետևողական, անկախ ոգեղության մը պայծառորեն պարզված»[3]:

Հրապարակագրությունը կոչված էր դուրս գալ սենյակից, վար իջնել Պառնասից, նետվել հրապարակ ու խառնվել ժողովրդին, նպատակ դնելով զբաղվելու միայն նրա առօրյա կյանքով, նրան կյանքի նոր ճանապարհը ցույց տալ պարզ ու հստակ, ժողովրդի իսկ լեզվով արտադրված գրականությամբ[4]:

---

[1] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 6—7, էջ 88:

[2] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 6—7, էջ 86:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 88:

1856-ին Պոլսում հիմնվեց Սվաճյանի «Մեղուն», իսկ երկու տարի անց Մոսկվայում լույս տեսավ «Հյուսիսափայլը»։

«Ոսկանյան, Սվաճյան, Նաղարյանց, Նալբանդյան այդ բարոյական տունը կանգնողները եղան, իրենց ճիգը անհունապես արդյունավոր հանդիսացավ՝ քիչ տունի մեջ. նոր բարոյականը ղոր կը քարոզեին այդ եվրոպացած հայերը, քայքայից հինը և կերպարանափոխեց հայ ժողովուրդը»[1]։

«Անահիտում» երկար քաղվածքներ են արված Սվաճյանի «Մեղվից»։ Ահա մի հատված. «Սակայն հիմա քաղաքակրթությունը աշխարհը նվաճելու ուխտ ըրած, ահավոր և զորեղ թռիչներ առած, ամեն կողմ կը հարձակի, ամեն երկրի կը տիրե. իրեն դեմ կենալ ուզողը կը կործանի ի գետին։ Ազգ մը, եթե կուզե ասկե հետ ալ ապրիլ՝ կամա ակամա անոր առջև խոնարհելու է, թեպետ լավագույն կըլլա իրեն համար կամավ անոր հնազանդիլը կամ զանի ինքը հրավիրելը... ասկե հետ գոնե աշխատինք զանի ընդունելու»[2]։

Ընդհանրացնելով այդ գիծը, որ վարում էր Սվաճյանը, Զոպանյանը գտնում է, որ նրա ծրագիրն էր՝ տարածել եվրոպական քաղաքակրթության սկզբունքները հայ ժողովրդի բոլոր խավերի մեջ և հայկական բարքերի թերությունների քննադատությամբ վերանորոգել ժողովրդին։ Դրա համար հասունացել էր պահը, վրա էր հասել նոր «վճռական վայրկյանը»։ «Անհրաժեշտ էր,— գրում է Զոպանյանը, միանգամայն դրսևորելով իր դրական վերաբերմունքը,— ամեն պարագայի մեջ, որ հայերը օգտվեին այդ նոր փուլեն... Սվաճյան մին եղած է անոնցմե, որ այդ «պետքը» ցույց տված է հայ ժողովրդին, իր հրավերը լսելի եղած է և օգտակար հանդիսացած»[3]։

Զոպանյանը լիովին համամիտ է Սվաճյանի հետ, որպեսզի հայ ժողովուրդը «այդ շրջանին մեջ», օգտվելով նպաստավոր հանգամանքներից, նախ իր բարոյական, մտավոր ու տնտեսական վերանորոգումով զբաղվեր, քանի որ առանց տնտեսական և բարոյական ուժի անհնարին էր ազգային ու լուրջ արդյունքի հասնել ազգային գերադույն բաղձանքների իրականացման ճանապարհին[4]։

---

[1] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 6—7, էջ 88։

[2] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 8, էջ 109—110։

[3] Նույն տեղում, էջ 111։

[4] Նույն տեղում։

Սվաճյանը, ըստ Զոպանյանի, մեծ կրթություն չէր ստացել, և նրա գրական արտադրանքը չի փայլում գեղեցկագիտական տեսակետից, բայց նրա գեղեցկությունը իրը գործիչ կատարած դերի մեջ է. «Իրը գործիչ Սվաճյան իրավունք ունի առաջին տեղերեն մեկը բռնելու մեր ժամանակակից պատմության մեջ»[1]: Զոպանյանը Սվաճյանին համարում է հայ գրականության մեջ երգիծական ժանրի հիմնադիրը, Պարոնյանի նախակարապետը. «Պարոնյան բավական բան կը պարտի իրեն»: Սվաճյանին նա համարում է նաև արևմտահայ գրականության մեջ ռեալիստական միտպրության առաջին փորձողներից մեկը («Պանդուխտն ի մահիճ»): Այդ բոլորից վեր, սակայն, Սվաճյանի գլուխգործոցը նրա «Մեղուն» էր, որ մտնում էր ժողովրդի աշխատավորական խավերը, խոսում նրանց հետ իրենց հասկանալի լեզվով, պարզում, պարզաբանում և կյանքի ուղի մատնացույց անում նրանց: «Մեղուի» հոդվածները կարդացած ատեն,— գրում է Ս. Զոպանյանը,— մարդ կը զգա, որ այդ հոդվածները կը լափվին ժողովրդին անուս գասեն, կը հասկցվին, կը մարսվին, և կը սնուցանեին, կը նորոգեին, կը զորացնեին զայն»[2]:

Առաջինը Սվաճյանն էր, Նալբանդյանից, Նալարյանից ու Մամուրյանից էլ առաջ, գրում է Զոպանյանը, որ անաշառ ու պարզ հայացքով քննեց հայ ազգի անցյալը և հերքեց Մխիթարյանների կառուցած վարդապետն պատկերները, որոնք թեպետ գեղեցիկ էին, բայց ունեին միայն մի թերություն՝ ճիշտ չէին: Սվաճյանի, Նալբանդյանի, Նալարյանցի և «Անգլիական նամականու» մեջ Մամուրյանի գծած պատկերը գեղեցիկ չէր, բայց ուներ միակ հատկանիշ՝ ճիշտ էր[3]:

Հասարակության նկատմամբ Զոպանյանի ունեցած հայացքների համար բնական էր, որ նա լիովին համաձայներ Սվաճյանի հետ, թե հայ ժողովրդի դժբախտությունների գլխավոր պատճառը իր իսկ անմիաբանության մեջ է թաքնված, կարծես թե այդ անմիաբանությունը բնական, մարդաբանական հատկանիշն էր հայ ցեղի: Պատահական պիտի չհամարել ուրիմն, որ հոդվածի վերջում Զոպանյանը, այո՛, ցավով, նշում է իր ժամանակ գոյություն ունեցող անմիաբանությունը:

---

[1] «Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 8, էջ 109:

[2] Նույն տեղում, էջ 106:

[3] Նույն տեղում:

Սվաճյանին և նրա ժամանակաշրջանին տված այս գնահատականները մեկ անգամ ևս լուսաբանում են, որ Զոպանյանը արդեն «Անահիտի» առաջին տարիներին հրաժարվել էր իր իսկ ինչից, ին նորագույն շրջանի սոցիալ-հասարակական շարժումը և մանավանդ գրականությունը իրր նախընթաց հիմքեր չունեին հայ իրականության մեջ։ Այդ տեսակետից մոտենալով՝ պարզ կդառնա, թե ինչու «Անահիտը», առհասարակ, հատուկ կարևորությամբ անդրադարձել է Սվաճյանին և, մասնավորապես, Պարոնյանին, որից՝ «Հայ էջեր» ընդհանուր տիտղոսի տակ, «Մեղվից» արտատպել է «Զորս վարագույրով կատակերգության մը» երգիծական էջը[1]։

1904 թվականին Զոպանյանը ավարտեց Մկրտիչ Պեշիկթաշլյանի վերաբերյալ իր աշխատությունը։ Պեշիկթաշլյանը այն հեղինակներից է, որոնց նկատմամբ մասնավոր հակում է դրսևորել Զոպանյանը դեռևս երիտասարդական տարիներին։ Արդեն Պ. Դուրյանի մասին իր աշխատության մեջ Զոպանյանը մի քանի չերմ տողերով բնութագրել է Մկրտիչ Պեշիկթաշլյանին, իսկ 90-ականների վերջերից ձեռնարկել է նրա կյանքի ու գործունեության ուսումնասիրությանը, նամակագրական կապեր հաստատելով ժամանակակիցների և այն անձանց հետ, որոնք կարող էին օգտակար լինել այդ գործում։

1904 թվականին Զոպանյանին հաջողվեց տպագրել Մ. Պեշիկթաշլյանի գործերի ժողովածուն[2], բայց իր ուսումնասիրությունը[3] մինչև 1907 թվականը մնաց անտիպ, նյութական միջոցների բացակայության պատճառով։ Մկրտիչ Պեշիկթաշլյանին անդրադառնալով՝ Զոպանյանը նպատակ ուներ ոչ միայն հայ գրականության համաստեղության խոշոր ներկայացուցիչներից մեկին վեր հանել, որը ինքնին անհրաժեշտ էր ու շահեկան, այլև նոր սերնդին «հրահանգիչ ու ոգևորություն» զգացումներ ներարկել, քանի որ Մ. Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը «դաս մը կարող է լլլալ»։

Աշխատության առաջին գլուխը Զոպանյանը, ինչպես իր ուսումնասիրությունների մեծ մասում, նվիրում է միջավայրի

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 4—5։

[2] Մկրտիչ Պեշիկթաշլյանի հատորն ու քերթվածները, ծանոթագրություններով հրատարակեց Ա. Զոպանեան, Փարիզ, 1904։

[3] Աբշալ Զոպանեան, Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907։

մանրամասն վերլուծությանը, մանավանդ որ Պեշիկթաշլյանի ժամանակաշրջանը խիստ բնութագրական էտապ էր թե Թուրքիայի և թե արևմտահայության կյանքում. «միջավայր մը քաոսային, որ դեպի լույս և դեպի կարդ կը ձգտեր, բայց դեռ անհունապես ծանրաբեռն էր խավարով ու խառնաշփոթությամբ»[1]: Հիշենք, որ ճիշտ նույն օրերին Զոպանյանը աշխատում էր նաև Հարությյուն Սվաճյանին վերաբերող ուսումնասիրության վրա: Պատահական չէ, որ ժամանակաշրջանի գնահատականը շատ դծերով համընկնում է այդ երկու ուսումնասիրությունների մեջ:

Այդ շրջանի էական հատկանիշը եվրոպական քաղաքակրթության թափանցումն էր դեպի Թուրքիա և Հայության համար «ժողովրդի մը վերածվելու», ինչպես Զոպանյանն է ասում, բուրժուական ազգի ձևավորման պրոցեսն էր: Զոպանյանը նկարագրում է մինչ այդ դոյություն ունեցած ժամանակաշրջանի՝ «սարկախտի» ժամանակաշրջանի, տխուր պատկերը և ապա այն նոր սերնդի՝ Ոսկանյանի, Սվաճյանի, Մամուրյանի, Օտյանի, Սերվիչենի և ուրիշների գործունեությունը, որի արդյունքը եղավ ամիրայական ռեժիմի տապալումը, «որ Թրքական ռեժիմին տեսակ մը մանրանկարն էր»:

«Անոնց կատարած գործը կը մնա կարևոր ու թանկագին, հայ հոգին իր նեխությունններեն մաքրել ջանալով, կրոնական պատակտումները ջնջելու ձգտելով, ազգային զգացումն իր անխառն ու մաքուր ձևովն արթնցնելով ու զարգացնելով հայոց մեջ, եվրոպական բարքերն և աշխարհայեցողությունները փոխանցելով հայոց, անոնք պատրաստեցին հայ ազգը ապագային մեջ ավելի գիտակցությամբ, ավելի միությամբ, ավելի լրջությամբ կատարելու իր էական ճիգը, որուն առաջին հիմնաքարն ալ սոին՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածն ստանալով»,— այսպես է եզրափակում Զոպանյանը, ավելացնելով, որ այդ գործիչների թվում ամենաբազմակողմանի դեմքերից մեկը Մկրտիչ Պեշիկթաշլյանն էր՝ «դեղեցկության քարոզիչը, եղբայրության ավետարանիչը... հայոց մեջ»[2]:

Զոպանյանի աշխատանքային «խոհանոցը» պատկերացնելու տեսակետից հետաքրքիր է համեմատել նրա արխիվում պահպան-

---

[1] Ս.ոշակ Զոպանեան, *Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը*, Փարիզ, 1907, էջ 9:

[2] Նույն տեղում, էջ 36—37:

ված Մկրտիչ Պեշիկթաշլյանին նվիրված ուսումնասիրության ծրագիրը բուն իսկ աշխատության հետ: Բերում ենք այդ ծրագիրը, որը գտնվում է Չոպանյանի արխիվի դեռևս չմշակված բաժնում.

«Մկրտիչ Պեշիկթաշլյան. մեծ բանաստեղծ, մեծ ազգային գործիչ, մեծ ուսուցիչ, հայ թատրոնի ստեղծողներեն մին:

Կյանքը:

Միջավայրը:

Բառերդությունները:

Ճառերը:

Տաղերն ու քնթվածները՝

1 հայրենասիրական

2 բնության գեղեցկություններու գովք,

3 զանազանք (... մահվան վրա ողբ, երգիծականներ, զվարճալիք, սիրային երգեր քնքուշ շնորհալի, շարք մը անհույս սիրո երգերու)»:

Այս ծրագիրը թվագրված չէ, ըստ երևույթին կազմվել է նյութերը հավաքելու շրջանում: Ինչպես երևում է հրատարակված ուսումնասիրության հետ բաղդատումից, Չոպանյանը նախընտրել է սկսել ժամանակաշրջանի ընդհանուր գծերի բնորոշումով: Սկզբում հեղինակը մտադրություն է ունեցել պատմելու Պեշիկթաշլյանի մանրամասն կենսագրությունը, բայց, երբ հավաքված նյութերը բավարար չեն եղել, հրատարակության մեջ հակիրճ պատմել է նրա մանկության ու պատանեկության մասին, որից արդեն միայն մեկ-երկու փաստ է մատուցվում, դերադասելով հասուն կյանքն ու գործը ներկայացնել միատեղ, առանց մեկը մյուսից անջատելու: Այդ մեթոդը հակառակ է Չոպանյանի նախասիրություններին: Դուրյանին նվիրված աշխատությունում, ինչպես նաև նրա ուսումնասիրությունների մեծ մասում, Չոպանյանը գերադասում է կյանքն ու գործը մատուցել զատ զատ: Կա նաև ուրիշ հանգամանք, որը, ինչպես կարելի է դատել հրատարակված աշխատությունից, ըստ երևույթին նկատի է ունեցել Չոպանյանը: Պեշիկթաշլյանը բավմասլար է եղել նաև իր գործունեության մեջ. ուստի աննպատակահարմար էր, եթե ոչ անհնարին, անջատել «գործիչը» «կյանքից»: Այդ պատճառով է, որ ծրագրում նախատեսված «Ճառեր» բաժնի փոխարեն աշխատության մեջ երևում է «Պեշիկթաշլյան գործիչ» գլուխը, որը իր մեջ «Բառերդություններ» բաժնից առաջ է գրվել:

Հետաքրքրական դիտումներ ունի Զոպանյանը «Պեշիկթաշլյան գործիչ» գլխում։ Մինչ Պեշիկթաշլյանի հանդես գալը, հայ մտավորականությունը Պոլսի հայության հասարակական կարծիքում դիտվում էր որպես սոսկ ծառա ամիրաներին համար, ասում է Զոպանյանը։ Բայց ժամանակը իր պահանջներն էր դնում, և «Պեշիկթաշլյան եղավ ճիշտ այն մարդը, որ պետք էր այդ վայրկյանին, մարդը, որ իր շուրջը պիտի համախմբեր այդ բոլոր արդեն պատրաստ կամ կիսապատրաստ տարրերը, զանոնք ալ ավելի առաջ մղեր եվրոպացումի ճամփուն մեջ»[1]։ Պեշիկթաշլյանի դերը Զոպանյանը գնահատում է նախ իբրև ուսուցիչ, որը թե աշակերտներին, թե հասարակությանը սիրել էր տալիս մաքուր հայերենը, «իրենց ազգը... պրականությունն ու գեղարվեստը, սիրել համերաշխությունը, վայելուչ ու շնորհալի բարքերը»։ Թե ուսուցչական գործունեությունը և թե մասնակցությունը զանազան ձեռնարկներին և ընկերություններին (օրինակ՝ «Համազգայց ընկերություն», «Բարեգործական ընկերություն»), հետապնդել են լուսավորական նպատակ, որը միանգամայն ժամանակի խնդիրների պահանջն էր։ Հատկանշական է, որ Զոպանյանը գերազանց է պատկերացնում այդ պահանջը և հենց հարցի այդ կողմն է շեշտում։ Պատահական չէ, որ այդ «ընկերությունների» գործունեության խորքում նա միշտ «ազգային-քաղաքական ներքին նպատակ մը» տեսնում էր։ «Բարեգործական ընկերության» մասին, օրինակ, նա ասում է. «Զարգացնելով երկրագործությունը հայոց մեջ, Հայաստանի գյուղերուն բարօրությունն աճեցնելով, գյուղացիները ավելի ամուր կապերով կապելով իրենց հողին, անոնց մեջ խրախուսելով աշխատության ոգին, այդ ընկերության հիմնադիրները կը ձգտեին զորացնել հայ տարրը իր հողին վրա, ու հայ գյուղացին զորացնելով հայ ազգության հիմունքն ամրացնել»[2]։

Այն հանգամանքը, որ Զոպանյանը լոկ օբյեկտիվ շարադրողի դերում չէր հանդես գալիս, այլ իր գործունեությամբ հետապնդում էր կոնկրետ և հետևյալ նպատակ, ցույց է տալիս նաև Պեշիկթաշլյանի հասցեից նրա արած քայվածքները։

---

[1] Առշակ Զոպանեան, *Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, 1907, Փարիզ, էջ 53։*

[2] *Նույն տեղում, էջ 63։*

«...բայց սրտահատաչ ձայնիվ կը հրավիրեմ զձևդ,— քաղում է նա Պեշիկթաշլյանի մի ճառից,— կը հրավիրեմ բոլոր ազգը, և ծունր դնելով մեր պատմության անհուն դամբանին առջին, կը հորդորեմ զամենքն ալ մեկդի դարձնել աչքերը ավերակաց վրայեն, վեր առնուլ գլուխներն անցելոց վհեն ու դիմաց նայիլ ու առաջ քալել... հառաջ առ զարդացումն և առ լույս, ու այդ աննկր ճամբորդության դժվարության ու վտանգացը մեզ պիտար ավելի աղեկ ճանչնալու համար «եղբայր» անուն տվեք, ավելի զորավոր և աննկուն ըլլալու համար ամենքնիդ ալ մեկ սիրտ եղեք և եթե փորձանք և արգելք բուռն զորությամբ կանգնին ձեր դիմացը, մի՛ երկնչիք անոնցմե, ալեկոծմունք ու փոթորիկք ավելի հառաջ պիտի մղեն զմեզ ժամանակաց ճամբուն վրա»[1]:

Նույն «ազգային-քաղաքական ներքին նպատակով» է Զոպանյանը բացատրում Պեշիկթաշլյանի գործունեությունը՝ տաճկական մեղեդիների փոխարեն, որ հայ ընտանիքներում ու հանդեսներում գերազանցապես երգում էին, իր բանաստեղծությունների վրա եվրոպական եղանակով դրված երգերը տարածելու ուղղությամբ: «Պեշիկթաշլյան կուզեր ցնցել դարավոր սարկության հետևանքով հայոց երակներուն մեջ մտած թմրածությունը, էլեկտրականացնելով զանոնք ազատ ու շարժուն Եվրոպային զգացումներովն ու արվեստովը տոգորված երգերով: Այդ էր իր բուն նպատակը, և բնական է, որ իր ջանքերը դեպի հող ուղղված ըլլան»[2]:

Հիացմունքի խոսքերով է Զոպանյանը բնութագրում Պեշիկթաշլյանի գործունեությունը 1862 թվականի Ջեյթունի ապստամբության օրերին, երբ բանաստեղծը «կը սիրեր քաջությունը ոչ միայն երգերու մեջ ու թղթի վրա, այլ մանավանդ գործի մեջ»:

Խոսելով նախապեշիկթաշլյանական շրջանի հայ թատրոնի մասին, Զոպանյանը մի շարք դիտողություններ է անում, որոնք շահեկան են այդ շրջանում արվեստի ու գրականության դերի վերաբերյալ Զոպանյանի իսկ հայացքները բացահայտելու տեսակետից: 1845 թվականին Պետրոս Մինասյանը հրատարակում է իր «Խոսրով Մեծ» ողբերգությունը, որի առաջաբանում դատապարտում է ժամանակի եվրոպական «աշխարհական» թատ-

---

[1] Արշակ Զոպանեան, *Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը*, Փարիզ, 1907, էջ 65:

[2] Նույն տեղում, էջ 63:

րոնը: Ըստ մխիթարյան այդ գործչի, Եվրոպայի «աշխարհիկ» թատրոնը քանդում է ամուսնական դաշինքները, անբարոյականացնում մատաղ սերնդին, անհավատարմություն քարոզում ամուսնական կյանքի մեջ, արհամարհանք սերմանում դևպի կրոնը, մերժում աստվածապաշտությունը և այլն: Այս առթիվ Չոպանյանը պատկերավոր դիտում է, թե թատրոնը և ամբողջ գեղարվեստը նման են կրակի. կրակը կյանքի պահպանիչն է և աղբյուրը, բայց կրակը հանցավոր չէ, երբ նրանից օգտվել չիմացողները այրվում են, ուստի տրամաբանական չէ այդ այրվողների ցանկությունը՝ վնասից զերծ մնալու համար կրակը դնել այնպիսի վիճակի մեջ, որ նա դադարի կրակ լինելուց: Բնութագրական է, որ թատրոնի դերը բացահայտելու համար Ս. Չոպանյանը ընդարձակ քաղվածքներ է անում Միքայել Նալբանդյանի՝ «Արևելյան թատրոնի» բացման առթիվ գրած հոդվածից:

Թատրոնի բնագավառում վեր հանելով Պեշիկթաշլյանի դերը, Չոպանյանը նշում է նրա մեծ ծառայությունը աշխարհաբարի օգտագործմամբ թատրոնը կենդանի, տևական և ճշմարտապես օգտակար դարձնելու համար: Թատրոնի հետագա զարգացումը արևմտահայության մեջ Չոպանյանը համարում է հետևանքը «Պեշիկթաշլյանի հիմնական ճիպին», որը վերջին հաշվով հետապնդում էր դարձյալ նույն լուսավորական նպատակը. «վայելուչ հայերենով գրված կամ թարգմանված այդ բոլոր խաղերը,— կարդում ենք Չոպանյանի եղրակացության մեջ,— Պոլսո տաճկախոս հայության մեջ մտցուցին մաքուր հայերեն խոսելու ձգտումը, տարածեցին հայրենիքի, ազատության, քաջության, միության, անձնվիրության սկզբունքները, ներմուծեցին մեր միջավայրին մեջ «եվրոպական» բարքեր, զգացումներ, ժեսթեր, վերջապես, քով քովի համախմբելով և աղնիվ խանդավառության մեջ իրարու մոտեցնելով ամեն դավանանքի պատկանող հայեր, ազգային միության իրականացումը փութացուցին»[1]: Հենց դավանական պատակտումի դեմ պայքարում Պեշիկթաշլյանի մատուցած մեծ դերի վերհանմանն է նվիրված Չոպանյանի աշխատության հաջորդ գլուխը, որի մեջ Չոպանյանը շեշտում է որևէս ազգ ձևավորվելու պրոցեսում ազգային միասնության անհրաժեշտությունը, առանց կրոնական խտրության:

---

[1] Ս. Չոպանեան, *Մկրտիչ Պեշիկթաշլեան կեանքն ու գործը*, Փարիզ, 1907, էջ 118:

Այս առթիվ, Պեշիկթաշլյանի «Նըբայր եմք մեք» երգը Չոպանյանը կոչում է հայկական միության «Մարսելյոզ»։

Պեշիկթաշլյանի ստեղծագործությունների գնահատությունը շահեկան է այն տեսակետից, որ Չոպանյանը հերքում է բանաստեղծի անինքնատիպ, «աննման նմանող» (Գր. Օտյանի ձևակերպումը) լինելու վերաբերյալ տարածված կարծիքը։ Այդ ինքնատիպությունը «կը կայանա անոր ղգալու եղանակին և արտահայտելու ձևին մեջ, և գլխավոր հրապույրը կը կազմե այդ գրական գործին, որ առանց անոր պիտի չունենար այն շեշտի միությունը, ղգայնական ներդաշնակությունը, որ հոն կը նկատվի ծայրե ծայր»[1]։ Այնուհետև, իրեն իսկ՝ Չոպանյանին են բնութագրում այն խանդավառ տողերը, որոնցով նա մեկնաբանում է Պեշիկթաշլյանի հայրենասիրական քերթվածները. «Ի՞նչ հոյակապ են այն տունները, որ Ազատություն կը պանծացնեն», բացականչում է նա «Հայ քաջուհին» քերթվածի առթիվ, իսկ «Ծերն Վանա»-ն վերլուծելիս շեշտում է լավատեսական վերջաբանը. «բայց «լալկան» մը չէ Պեշիկթաշլյան, երբ իր աղգին կուղղվի, երբեք պիտի չուզեր վհատության երգիչ մըլլալ, իր վանցին ողբը կավարտե հույսի ազաղակով մը»։

Պեշիկթաշլյանի քնարական գործերի առթիվ Չոպանյանը բանավիճում, պարզում է իր հայացքները այսպես կոչված մշտական թեմաների՝ սեր, մահ, գեղեցկություն և այլն, և ազգային-սոցիալական թեմաների հարաբերության վերաբերյալ։ Նա գըտնում է, որ չի կարելի առաջինը թերագնահատել և բարձրացնել միայն երկրորդը։ «Ազգային հարցերը, ինչպես և ընկերական բոլոր խնդիրները մեծապես կարևոր են, անշուշտ, բայց գաղափարներու բարձրագույն ոլորտին մեջ՝ անոնց կարևորությունը հարաբերական ու ժամանակավոր է, մահը, գեղեցկությունը և սերը հավիտենական գերագույն հարցերեն են. օր պիտի գա, որ մարդկությունը պիտի լուծե թերևս ազգային ու ընկերական խնդիրները. մահվան ու սիրո առնղծվածները և գեղեցկության ծարավը մշտնջենապես պիտի տագնապեցնեն մարդկությունը»[2]։

---

[1] Արշակ Չոպանեան, *Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը*, Փարիզ, 1907, էջ 229։

[2] Նույն տեղում, էջ 248։

* * *

Արևմտահայության արևելահայ գրականության կարևոր դիմքերին ծանոթացնելու նպատակով «Անահիտը» երբեմն դիմել է արևելահայ գրողների գործերը արևմտահայ լեզվով հրատարակելուն: Այդպես, օրինակ, տպագրվել է Րաֆֆու «Խալփուշը», իր ժամանակին առաջ բերելով «Մուրճի» դժգոհությունը: Այնուամենայնիվ, այս դեպքում, նպատակը արդարացնում է միջոցը: Կարևորը Րաֆֆուն արևմտահայ ընթերցող զանգվածին մատուցելն էր, որը շատ հաճախ արևելահայ լեզուն ամբողջությամբ չէր ընկալում:

Նույն ծրագրի գործադրությանն է նվիրված Ալ. Ծատուրյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի բանաստեղծությունների հրատարակումը, ինչպես նաև «Ղազարոս Աղայանց» խորագրով հոդվածը, որը Թիֆլիսից առաքել է բժիշկ Բ. Աղասարյանը: Հանդեսում տպագրված այդ գրությունը վեր է հանում Աղայանի հատկապես մանկական գրականությունը և դաստիարակության խոսքեր ուղղում հայ «հասարակությանը», որը պետք է նյութական նպաստավոր կացություն ստեղծել վաստակավոր գրողի համար[1]:

Այս բոլորով հանդերձ, «Անահիտին» բնորոշող փաստ է, որ Աբովյանից հետո նրա էջերում արևելահայ նորագույն գրականությունից առավել տեղ ու դնահատություն տրվել է Շիրվանզադեին: Ոչ միայն հրատարակվել է նրա «Կործանվածը» պիեսը[2], տպագրվել է Գ. Վանցյանի հոդվածը «Ելգինեի» առթիվ[3], այլև խորամիտ դիտումներով հանդես է եկել Ա. Զոպանյանը: Շիրվանզադեի գործը նա համարում է մեր հին ու նոր գրականության ամենից հարուստ և ամուր կոթողներից մեկը: Եվ ահա թե ինչու. «Շիրվանզադեն մեր ամենեն իսկական «իրապաշտն» է»[4]: Շիրվանզադեի տպագործի մեջ Զոպանյանը նշում է նրա տենդենցի խիստ թաքնվածությունը: «Հեղինակին անձը կը թաքչի ևս իր ստեղծած բազմաթիվ մարդկային տիպարներուն մեջ»: Տենդենցի («անանձնականության») բացարձակ բացակա-

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 6, էջ 127—128:

[2] «Անահիտ», ԺԱ տարի, 1909, ԹԹ. 3—4, 5—6, 7—8:

[3] «Անահիտ», Դ տարի, 1902, ԹԹ. 3—4:

[4] «Անահիտ», ԺԱ տարի, 1909, թիվ 7—8, էջ 146:

յութիւնը Զոպանեանը անհնարին է համարում, իսկ արտաքին կեանքի մեխանիկական ընդօրինակութիւնը, հեղինակի աշխատասէրների և անձնական ուրուն հոգեբանութեան չգոյութիւնը, ասում է Զոպանեանը, հանգեցնում են լուսանկարչական արտահայտութեան, որը հնարաւ է արվեստ լինելուց: Բայց բնաւ այդպիսին չէ Շիրվանզադեն Զոպանեանի պատկերացմամբ: «Ուշադիր ընթերցողը կը նկատի, ուսումնասիրելով Շիրվանզադեի գործը իր ամբողջութեան մէջ, որ այնտեղ կան քանի մը ընդհանուր գծեր, հեղինակին հոգեկան ձգտումները մատնող. զղվանք կեղծիքին, խարդախութիւնին, իմաստակութիւնին, կոպիտ շահամոլութիւնին, պայմանադրամոլութիւնին, կեղեքումին, խոր գթութիւն դէպի ընկճվածներն ու դժբախտները, դէպի բնութեան և ընկերութեան անարդարութեանց զոհերը, սէր՝ ամեն բանի, որ բնականորեն գեղեցիկ է ու մաքուր: Բայց ասոնք կարտաշնչվին գործին իբր անոր գերագոյն բուրմունքը, հեղինակը ասոնք իբր սկզբունքներ, վարդապետութիւններ քարոզելու ձգտում չէ ունեցած երբեք»[1]:

Շիրվանզադեի ռեալիզմի մէջ Զոպանեանը գնահատում է նրա հնարաւ լինելը նատուրալիզմից, նրա գործի առողջ ոգին, որը առանց բարոյախոս լինելու, «բարոյացուցիչ ու շինիչ է»: Ռեալիզմի այդ գծերն են նպաստել Շիրվանզադեին, շարունակում է Զոպանեանը, որպեսզի նա լինի մեր դրականութեան երկրորդ դրամատուրգը: «Հայերը, իսկապես, երկու թատերգակ միայն ունին՝ Սունդուկեանցը և Շիրվանզադեն. Շիրվանզադե շարունակած, ընդլայնած և կատարելագործած է ինչ որ Սունդուկեանց սկսած էր»[2]:

Հատկանշական է նաև Շիրվանզադեի ոճին տրված գնահատականը, որը ըստ Զոպանեանի, պարզ է, բնական, հստակ, ճշգրիտ, ամուր, առանց ավելորդ պճռուճանքի, առանց ճոռոմաբանութեան, բայց վայելուչ և շնորհալի՝ երբ պէտք է. հոգեբանութիւնը արտահայտող հատվածները՝ երբեմն, քնքուշ, առանց նրբամոլութեան ու անհարկի մանրամասնութիւնների մէջ ընկնելու:

Զոպանեանը Շիրվազանդեին անդրադարձել է բազմիցս և զանազան առիթներով: Շիրվանզադեի մասին ծավալուն ուսում-

---

[1] «Անահիտ», ԺԱ տարի, 1909, թիվ 7—8, էջ 146:

[2] Նույն տեղում, էջ 147:

նախրությունն տեղ է գտել նրա «Դեմքեր» հատորում։ Հիշատակության արժանի է Պոլսի «Ազատամարտի» դեմ Զոպանյանի պայքարը՝ ի պաշտպանություն Շիրվանզադեի ռեալիստական արվեստի։

1910-ական թվականների սկզբներին, երբ պատրաստվում էին նշել Շիրվանզադեի գրական գործունեության երեսնամյակը, Ռուբեն Դարբինյանը «Ազատամարտում» հանդես է գալիս մեծ գրողի վաստակը նսեմացնելու ձգտող հոդվածով, քննադատության առարկա ընտրելով, մասնավորապես, «Կործանվածը»։ Դարբինյանը այլևայլ «մեղքերի» թվում Շիրվանզադեին կշտամբում է նաև այն բանի համար, որ նա, ապրելով Փարիզում, չի ջանացել «սովորել» գարի մոդային դպրոցներից և, իբր, նա է մնացել եվրոպական արվեստի մակարդակից։

Այդ առիթով Շիրվանզադեն հոդված է տպագրում «Բյուզանդիոնում», որի մեջ զգուշացնում և ծաղրում է հայ մամուլի որոշ օրգանների ձգտումը՝ մոդային լինելու համար, զանազան հնչինակությունների, տարբեր դպրոցների՝ «սիմվոլիզմ», «իմպրեսիոնիզմ», «դեկադանս», անունները տեղին թե անտեղի օգտագործելու համար, շատ հաճախ առանց լուրջ իմացական պաշարի այդ ուղղությունների իսկ էության մասին։

«Ես միայն մի մարդ եմ ճանաչում հայ մամուլի գնահատողների մեջ,— գրում է Շիրվանզադեն,— որ իր մատո ուսումնասիրել է սիմվոլիզմը և իմպրեսիոնիզմը և դեկադանս և ուրիշ շատ եվրոպական գրական ուղղություններ։ (Գուցե կան և ուրիշներ, ես նրանց մասին ոչ կարդացել եմ, ոչ լսել)։ Այդ մարդը ևթե կամենար, կարող էր հայ գրականությունը հարստացնել մի հոյակապ աշխատությամբ այդ ուղղությունների մասին։ Այդ մարդը Արշակ Զոպանյանն է, որ Եվրոպայի սրտում նստած ունեցել է և ունի բոլոր հարմարությունները և, որ գլխավորն է, տաղանդ ու ճաշակ՝ գրական և գեղարվեստական երևույթները հասկանալու և զգալու»[1]։

Իր հերթին Զոպանյանը, նույն օրաթերթի հինգ համարներում շարունակաբար, անառարկելի տրամաբանությամբ և համոզկերությամբ ցույց է տալիս Դարբինյանի «մեղադրանքների» վարժապետական սնանկությունը։ Զոպանյանը հայտարարում է,

[1] «Բյուզանդիոն», 1910, թիվ 4040։

որ Շիրվանզադեն կարիք չուներ հետևելու նորաստեղծ գրական ուղղություններին։

«Մեր մեջ մենք այսօր ունինք շատ մը համակ ու զորեղ տաղանդներ,— գրում է Ա. Զոպանյանը,— որոնք ոևէ հետք ցույց չեն տար «սիմպոլիզմի»։ Հովհաննես Թումանյան, Թլկատինցի, Զոհրապ, Վրթանես Փափազյան, Դանիել Վարուժան՝ աքանչելի գրողներ են, մեր արդի գրականության առաջնակարգ դեմքերեն, և սակայն ոչ մեկ կապ ունին «սիմպոլիզմի» հետ... Մեղադրե՞նք իրենց։ Ես, ընդհակառակն, վիրենք շնորհավորելի կը դտնեմ, որ իրենց համփան պիտցած են ճանչնալ և անոր մեջեն կը քաղեն հաղթականորեն»[1]։

Նվ ապա, վերադառնալով Շիրվանզադեին, շեշտում է, որ նա պարզ, հստակ, «ուղղակի» արվեստի մարդն է, ինչպիսին էր Մոպասանը։ «Կը պատկանի դպրոցի մը, որ հավիտենական է, իրապաշտ դպրոցին, որ հիմնված հոգեբան դիտողության և պարզ, անսեթևեթ, խոր ղդացման վրա, պետք է հավատարապես խորշի քնարերգական պինդվություններեն ու լուսանկարչական մակերևութականություններ»[2]։

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Արևմտահայ ժամանակակից գրականությունը «Անահիտում»

Դարասկզբի արևմտահայ գրականությունը զարգացնելն ու խրախուսելը «Անահիտի» գործունեության ամենօրյա հոգսն է եղել։ Հանդեսի էջերում հյուրընկալվել են բազմաթիվ բանաստեղծներ ու արձակագիրներ, որոնց մի մասի արտադրանքը, չդիմանալով տարիների քննությանը, վաղուց մոռացված է և այսօր արդեն միայն պատմական, ճանաչողական արժեք է ներկայացնում։ Դրա հետ մեկտեղ և դրան զուգահեռ «Անահիտը» սիրով տեղ է տվել հեղինակների, արդեն հայտնի թե սկսնակ, որոնց անունները քիչ հետո պիտի մտնեին հայ գրականության մեծերի շարքը։

---

[1] «Բյուզանդիոն», 1910, թիվ 4076։

[2] Նույն տեղում։

Այսպիսով, ժամանակակից արևմտահայ գրականությունը հանդիսի էջերում ունի բավականին ընդարձակ, այլև խայտաբղետ պատկեր՝ թե ձևի և թե բովանդակության տեսակետից. Երվանդ Օտյանի, Լևոն Բաշալյանի, Երուխանի, Ռիկատինցու առանձին ստեղծագործությունների հետ միասին հաճախ տպագրվում են Զապել Հովհաննիսյանը (Եսայան), Ռուբեն Զարդարյանը, Ատոմ Նարճանյանը, Վահան Թիքեյանը, Արտաշես Հարությունյանը, Դանիել Վարուժանը, հանդեսին մշտապես աշխատակցում են Վահրամ Սվաճյանը, Վահան Մալեզյանը, Ահարոն Տատուրյանը, Արամ Զարդը, չափածո և արձակ գործեր են տպագրում մի շարք ուրիշ հեղինակներ և ինքը՝ Արշակ Զոպանյանը, «Արշակ Զոպանյան» կամ «Տերվիշ» ստորագրությամբ:

Ոճերի, ձևերի, գաղափարների, հեղինակների այդ բազմազանության մեջ, այնուամենայնիվ, կա մի խիստ նշմարելի ընդհանրություն: «Անահիտի» էջերում հյուրընկալված գրականությունը 1895—96 թվականների հայկական ջարդերից մազապուրծ գրականություն էր, որ պանդուխտի ցուպը ձեռքին դեգերում էր դեռևս հիշողության մեջ թարմ մնացած դաժան պատկերների ու սահմռկեցուցիչ տեսարանների բավիղներում: Համապատասխանաբար, և բնականաբար, խավարի և մահվան տրամադրություններն էին թևածում այդ կարծես հավիտյան մթնած երկնքում, որտեղ երբեմն-երբեմն, թույլ առկայծում էր ինչ-որ տարտամ լույսի մի շող, մինչև որ Սիամանթոյի և ապա Վարուժանի հզոր լուսարձակները պիտի պայծառ գեղարվեստական մտածման խավարը պատռելու:

Նախքան գեղարվեստական գրականության արտադրանքին անցնելը, սակայն, անհրաժեշտ է համառոտ ծանոթանալ «Անահիտում» հանդես եկած հեղինակների տեսական որոշ դրույթների հետ:

«Անահիտի» էջերում արվեստի էության հարցի շուրջ հոդվածներ են տպագրում Տիգրան Եսայանը և Վահան Նալբանդյանը (վերջինս այն ժամանակ դեռևս ուսանող էր Գերմանիայում, իսկ հետագայում Կովկասի հայ մամուլի երիտասարդ ու շնորհալի գրական քննադատներից մեկը դարձավ): «Անահիտի» խմբագրականը ոչ միայն հետապնդում էր հայ գեղագիտական մտքի զարգացումը, երբ հրապարակում էր այդ հոդվածները, այլև ինչ-որ չափով համախորհուրդ էր հայտնված մտքերին:

Բնութագրական է Նալյանի հոդվածի խորագիրը՝ «Գեղեցկին ընկերական դերը», որի մեջ ինչ-որ չափով արդեն իսկ շեշտվում է հասարակության զարգացման գործում արվեստի դերը: Նալյանն այն կարծիքին է, թե նախամարդը իր աշխատանքային գործունեությունից առաջ նախապես «գեղեցկի պետքին» է յուրովի արձագանքել (մարմնի վրա զանազան պատկերներ դծել, քարե հավունքներով զարդարվել և այլն) և, որ «մարդկային ցեղին համար... գեղեցկին պետքը կանխած է մեր մյուս պետքերը և մեր զգացմունքները առաջին անգամ իրմի ազդվելով կազմած են մեր առաջին սպասավորությունները»[1]: Անշուշտ, եթե մի կողմ դնենք զարգացման այն աստիճանը, որ մարդն էլ մյուս կենդանիների նման սոսկ բնության մասնիկ էր, անընդունելի է առաջնության տալ «գեղեցկի պետքին» հասարակական մարդու կազմության հարցում, ինչպես փորձում է անել Հեղինակը:

Այս եզակետը Նալյանին չի խանգարում, սակայն, գեղարվեստների ծագումը կապել որոշակի զարգացած հասարակական միջավայրի հետ և համարել դրանք այդ միջավայրի ծնունդ: Կարևոր է նաև, որ Նալյանը, ընդունելով օբյեկտիվ գեղեցիկը, մերժում է բացարձակ գեղեցիկը: Նա գտնում է, որ գեղեցիկը փոփոխական է հասարակական զարգացման տարբեր աստիճաններում, տարբեր հոգևոր խառնվածքով ժողովուրդների ըմբռնումներում և նույնիսկ նույն հասարակության տարբեր խավերում ու անհատների մոտ: Եվ, վերջապես, կարևոր է նաև այն, որ Նալյանը «գեղեցկի ընկերային դերը» տեսնում է մարդկանց բարոյական դաստիարակության հիմքերն ամրացնելու մեջ: Գեղեցիկով սնված մարքերը, եզրակացնում է Հեղինակը, շատ ավելի ընդունակ են հասկանալու և կատարելու «մտքի և զգացումներու այն ճակատագրական հեղաշրջությունը», որը անխուսափելի կերպով պիտի վրա հասնի, որպեսզի մարդկությունը ապրի ներդաշնակ հասարակական կյանքով[2]: Թեպետ խիստ մշուշապատ է այդ «հեղաշրջությունը», և ապագայի «ներդաշնակությամբ լեցուն ընկերական կյանքը», այնուամենայնիվ մի բան ակնհայտ է. Նալյանը ըստ էության կրկնելով ֆրանսիական լուսավորիչ-էնցիկլոպեդիստներին, առաջին բնագիծ է քաշում արվեստի հասարակական-դաստիարակչական դերը:

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 27:

[2] Նույն տեղում, էջ 29:

Նույնպիսի դեր է վերապահում պրակտիկայինն ու արվեստին նաև Վ. Նալբանդյանը իր «Գեղարվեստի էության ու նպատակը» հոդվածում, բայց մի էական լրացումով: Նա այնքան պարզապես չի խոսում գեղարվեստի էության վերաբերյալ, իսկ Նալբանդյանը դրան է նվիրում իր ուսումնասիրության գլխի մասը, ձգտելով ապացուցել, թե գեղարվեստը «ինքնանպատակ է»: Այստեղ նա որոշակիորեն զատում է էությունն ու հետևանքը: Այո, նա էլ պնդում է, որ իր օրյինակով ինտեգրվելով գեղարվեստը վիթխարի դեր է խաղում մարդկային հասարակության առաջընթացի գործում: Բայց նա զգուշացնում է, թե հետևանքը պիտի չխառնել էության հետ: «Գեղարվեստի էությունը բնորոշելիս պետք է անպայման հեռու մնալ նրա ինտեգրվելու կամ ազդեցության խնդրից, որովհետև նա մի այնպիսի հանգամանք է, որ ոչ մի կապ չունի գեղարվեստի ներքին էության հետ, որը կայանում է մարդկային բնության մի անխուսափելի պահանջի մեջ՝ վերստեղծել ստացված տպավորությունները»[1]: Ահա թե ինչու, որպես սկզբունք Վ. Նալբանդյանը ժխտում է գեղարվեստի «ձգտումնավորությունը» (տենդենցիոզությունը), ցույլատրելով այն միայն առանձին գործերում: Նա գրում է. «Գեղարվեստական այս կամ այն երկը կարող է շատ բնական կերպով ձգտումնավոր լինել, բայց պահանջել, որ գեղարվեստն առհասարակ պետք է ձգտումնավոր լինի, սա է անբնականը, սա է սխալը»[2], և անմիջապես ավելացնում է շատ կարևոր մի դիտողություն, կարծես զգալով իր կատեգորիկ հայտարարության խախուտ լինելը: «Գեղարվեստական երկերի ձգտումնավոր լինելը բնական ենք համարում ահա թե ինչու. թեև գեղարվեստի նպատակն է «գործնական շահից անկախ հաճույք առաջացնել», բայց նրա կապը իրական կյանքի հետ երբեք չպետք է անուշադիր թողնել, ժամանակի ոգին և նրան համապատասխանող պահանջներն ու աշխարհայացքը ընծայում են գեղարվեստին նաև իրենց խորհիքը»:

Ստեղծագործական պրոցեսն էլ հոդվածի հեղինակին պատկերանում էր որպես վայրկենական ներշնչումների, աննախատեսված ու հանկարծակի գործունեության արդյունք: Գեթ այդպես են ստեղծվում, ըստ նրա, գեղարվեստի ամենաուժեղ

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 12, էջ 339:

[2] Նույն տեղում:

ստեղծագործությունները, ու այդ ստեղծագործական պրոցեսում բացարձակապես իշխում է միայն երևակայությունը «առանց կամքի տիրապետության»[1]:

Այսպիսով, մի կողմից՝ արվեստագետը դուրս է դրվում մարդկային հասարակությունից, ստեղծագործական պրոցեսը դիտվում է միայն որպես մարդկային բնության անխուսափելի պահանջ, աննախամտածված ու հանկարծակի գործունեություն, որտեղ նույնիսկ ստեղծագործողի կամքը որևէ նշանակություն չունի. բացարձակապես մերժվում են հասարակական կապերն ու ազդեցությունները, բնականաբար, նաև գեղարվեստի տենդենցիոզությունը: Մյուս կողմից՝ ընդունվում է դրականության և արվեստի «հետևանքների» դերը հասարակության առաջընթացում, ընդունվում է ժամանակի ոգու, պահանջների ու գաղափարների ազդեցությունը («խոր կնիքը») դրականության ու արվեստի գործերի վրա, և, բնականաբար այդքանով ընդունվում է նաև տենդենցիոզությունը:

Զոպանյանը ինչ-որ չափով համակարծիք էր իր երիտասարդ աշխատակցի հետ և, վերջինիս վաղաժամ մահվան առիթով, դրվատանքով է խոսում հիշյալ հոդվածի մասին: Զոպանյանի տեսական հայացքներում էլ այդ շրջանում որոշակի հակադրություն կա գեղարվեստի «էության» և «հետևանք» հասկացությունների միջև, բայց այդ հակադրությունը առավել ցայտուն դրսևորվել է «քաղաքացու» և «բանաստեղծի» դերի մասին նրա տեսական դրույթներում:

* * *

Դործչի կամ քաղաքացու և բանաստեղծի՝ հասարակության մեջ ունեցած դերի հարցում Զոպանյանի հայացքներում դրսևորվող հակասությունը գալիս է դեռևս նրա վաղ շրջանի տեսական դրույթներից: Անմիջապես, սակայն, պետք է վերապահություն անել, որ այդ հակասությունը բնորոշ է հատկապես Զոպանյանի՝ պոզիտիվի վերաբերյալ տեսական մտածումներին ու ձևակերպումներին: Գեղարվեստական պրակտիկայում, քննադատական ու խմբագրական գործունեության մեջ Զոպանյանը հիմնականում վերծ է մնում «գործիչ» և «բանաստեղծ» հասկացություններն

[1] «Անահիտ», Ա տարի, 1899, թիվ 12, էջ 340:

իրար հակադրելուց, ընդհակառակն, շատ հաճախ պրանք պրսևորվում են իբր մեկը մյուսին լրացնող գործոններ:

Տևական հայացքներում, սակայն, հակադրությունը ակընհայտ է... Ըստ Զոպանյանի, բաղաքացին պարտավոր է իր հայրենիքի և ժողովրդի համար գործել, իսկ բանաստեղծը կարող է և վեր կանգնել այդ հասկացություններից: Նվ ահա մի կողմից անդուլ, ժրաջան, իր գործի արդարացիության նկատմամբ անխորտակելի հավատ, նպատակին հասնելու ճանապարհին անսպառ եռանդ, կյանքի նկատմամբ բուռն սեր.— այսպիսին է պատկերը հասարակական գործչի, որը կյանքի իմաստը տեսնում է իր ժողովրդի ապագայի համար պայքարի մեջ: Մյուս կողմից՝ ճակատագրի առջև անօգնականություն, վիշտ ու տրամություն որպես միակ սփոփանք, հետանկարի բացակայություն.— այսպիսին է «Անահիտի» էջերից մեզ նայող բանաստեղծի ընդհանրացված պատկերը, որը կյանքի իմաստը տեսնում է փախուստի և մեկուսի հանգստի մեջ: Ըստ երևույթին հենց իրեն՝ Զոպանյան գործչին դուր չեն եկել ամսագրի էջերում տեղ գտած Զոպանյան բանաստեղծի գործերը, որի պատճառով նրանց տակ դրել է «Տերվիշ» ստորագրությունը:

Աշխարհը բանաստեղծի համար մի անսկիզբ ու աննեղր «Ցավի տուն» է, անթափանցելի խավարի մեջ ընկղմված, կամ «Հիվանդանոց», որտեղ մահվան սպասումի մեջ կողք կողքի պառկած են տարկույսն ու բռնույունը, Տգեղությունն ու Գեղեցկությունը, Ապուշությունն ու Հիմարությունը, Սուգն ու Նախանձը, Սերը և Աղքատությունը, Մոլությունները, Ոճիրները, Զանձրույթը, բոլոր Ախտերը և այս ամենի միջև տևելության, անվերջանալի և անհաշտ տևելությունն է բորբոքվում: Ցավի տուն է աշխարհը թե հիվանդանոց, միևնույն է, կա եղակի և միակ սփոփանք. պիություն է նրա անունը, որը Ցիլլայի («Ցավին տունը») հրաշագեղ երգի մեջ մարմնավորված, կամ «ուրիշ աշխարհն» եկող, ճակատագրի խղճի խայթի ձև առած, տարածում է թևերը՝ հանդարտեցնելու, թմրություն բերելու, ցավերը մոռացնել տալու համար:

Գեղեցիկ պատկերներով, երբեմն հասցված լեզվով կերտված արձակ բանաստեղծությունը՝ «Ցավին տունը», ճակատագրական բախումն է իդեալի և իրականության, որտեղ առնական և հզոր, բայց կյանքից կտրված Ջավինը, իրականության հետ առաջին իսկ լուրջ շփումից պարտվելով, ընկրկում է, մեռնում, համակերպվում. իդեալը անզոր է իրականության խավարի առջև:

Բնական է, որ հոգևկան փակուղու առջև կանգնած քնարական հերոսի ականջին

«Կը սուլէ Ձանձրոյթին հովը կապարեա»։

Այդ ձանձրույթը ընդհանրական է, բայց և շատ կոնկրետ։ Հարազատ միջավայրից ստիպողաբար զրկված և եվրոպական բոհեմական կյանքին անծանոթ, անիմաստ, աղմկոտ, «սրճարանային քրտնած օդի» հնշտալիր ոլորտներն ընկած քնարական հերոսն է, որի հոգու

«...պաղ պարապին մէջ ազոտ
Ձանձրոյթ մը խուլ կը հոնդա»։

Ջունի որևէ դրական ծրագիր, դատարկ, պարապ է հոգին, կյանքն արդեն անիմաստ է դարձել, մահվան նայվածքն է շոշափում իր մարմինը, դեմքերը պաղ ու դեղին են դառնում, ուրվականներ թվում, օդում դիակների հոտ է տիրում.

«Ու կը փախչիմ, առանձնութեան ու խաւարի
անոթի»։
(«Յայգերգ»)

«Տերվիշի» քնարական հերոսին օտար չէ սերը, բայց այն էլ տարտամ է ու անստույգ, աղջիկ է անմարմին, թե երկնային ոգի, որի դեմքի ցոլքը անորոշ քաղցրություն է ծորում իր հոգու մեջ.

«Մեծ ցաւի ժամերուն, երբ սև բիռը կեանքին
Անողորմ ծանրութեամբ ուսերս կը փշրեր»։

Ամեն ինչ փշրվել է զարնվելով իրականության դաժանին, հավատը, իդեալը, խանդը, տարփանքը, խինդն ու ցավը, ամենուրնք տիրել է բիրտ ուժը, սուտը, «սերն իսկ դևրասան» է դարձել, «գորովն իսկ՝ շահադէտ».

«Օրերն ինձ հիմա լոկ կսկիծ կը բերեն,
Կըղձամ հեռանալ ապարդիւն պայքարեն,
Ուր Չարը միշտ հաղթ, միշտ հզոր կը ցցվի,
Կը բաղձամ մեկնիլ, մեկնիլ հավերժորեն»...

(«Ձանձրոյթ»)

Պայքարի որևէ ձգտում չի մնում քնարական հերոսի մեջ. մանավանդ երբ իդեալի «աղվոր լույսն ալ» ավրվում է ամբոխի հոգում բնկվելիս։ («Հնչյակ»)։

Քաղաքացու և բանաստեղծի՝ հասարակության մեջ ունեցած դերի ըմբռնումը Չոպանյանը բացահայտում է իր որոշ հոդվածներում, որոնցում փաստորեն մի կողմից հանդում է «բանաստեղծ կարող ես չլինել, բայց քաղաքացի՝ պարտավոր ես» դասական ձևակերպմանը, մյուս կողմից՝ հենց նույն ձևակերպման մեջ հակադրում միմյանց այդ երկու հասկացությունները։

«Անշուշտ իմաստակ և անարդար պիտի ըլլար պահանջել ամեն քնարն հանրային գործը երգել և միայն միշտ անով թրթռալ,— գրում է նա 1902 թվականին,— ամեն հոգի իր ինքնությունը պետք է ձգտի արտահայտել, և բանաստեղծությունը պետք է ամեն բանե առաջ անկեղծ ըլլա և ինքնաբուխ, ու օգտակարին չղոհե երբեք գեղեցիկը, որովհետև գեղեցիկը ինքնին շատ բարձր տեսակի օգտակարություն մըն է. բայց կարելի է պահանջել ամեն անհատե, ինչ ալ ըլլա իր խառնվածքը, որ անտարբեր չմնա իր ազգին ու ամբողջ մարդկության, որուն մեկ օղակն է ինքը, մեծ հուզումներուն. ամեն անհատ պարտավոր է իր չափովը և իր կրցած եղանակովը հետաքրքրվիլ հանրային գործով և աջակցիլ անոր. փղոսկրե աշտարակի մեջ կամ անձնական ցավերու երգին մեջ կղզիացած մնալու համառիլը ոչ միայն դատապարտելի է բարոյական տեսակետով, այլ և գեղեցկագիտական տեսակետով, որովհետև «տգեղ» է տեսնել հոգի մը, որ գեղեցկություն արտադրելու կարող, բարոյական հուզում ստեղծելու ատակ ըլլալով հանդերձ, իր մտավոր հնոցին ոչ մեկ կայծ չի նետեր մարդկային պայքարին սրբազան վառարանին մեջ»[1]։

Իր իսկ անձի մեջ Չոպանյանը անջատում էր քաղաքացին բանաստեղծից։ Այդ բանը առավել հստակ դրսևորվում է 1908 թվականին հրատարակած բանաստեղծությունների հերթական հատորի[2] ներածությունում։ Այստեղ Չոպանյանի կարծիքով, արվեստը և ազգային հայրենասիրական գործը իբր իրար հետ զուգահեռ գնալ չեն կարող, որովհետև գործչի «էական ձգտումը պետք է ըլլա իր բոլոր ճիգերը կեդրոնացնել որոշ նպատակի մը,

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 3, էջ 48։

[2] Արշակ Չոպանեան, Քերթվածներ, Փարիզ, 1908։

իր արտադրության ու արարքներուն մեջեն վտարել ամեն ինչ, որ ավելորդ զարդ է, շեղում է, պչրանք է»: Իսկ արվեստագետը իբր պիտի նկատի ունենա «միմիայն, ամենայն անկախությամբ, ոչ մեկ դիջում ընելով հանրային շարժումներուն, հավաքական հակումներուն կամ շահերուն, արտահայտել տիեզերական կյանքը իր խառնվածքին մեջեն: Եվ ահա ինչու ջանացած եմ դիլետանտ չըլլալ իբր գործիչ և հրապարակագիր չըլլալ իբր բանաստեղծ»[1]:

Մեր ընդգծած բառերը ակնարկ են Զոպանյանի այն տեսության, ըստ որի արվեստը «զարդ» է կամ «պչրանք», և, որը նա քարոզում էր 90-ական թվականների սկզբին: Բայց Զոպանյանի վերջին միտքը («հրապարակագիր չըլլալ իբր բանաստեղծ», ինչպես նաև՝ «օգտակարին չզոհել գեղեցիկը, որովհետև գեղեցիկը ինքնին շատ բարձր տեսակի օգտակարություն մըն է») լույս է սփռում նրա ըմբռնումի ողջ իմաստի վրա: Նա նկատի ունի արվեստի բարձր մակարդակը, մերկապարանոց բարոյախոսությունից, ուտիլիտարիզմից և հրապարակախոսությունից զտված արվեստը, որը ինքն արդեն խոսելու է իր մասին, առանց նրա էությունը հատուկ մատնացույց անելու անհրաժեշտության: Այնուամենայնիվ, չի կարելի համաձայնել Զոպանյանի «ամենայն անկախության» թեզի հետ, որը կոչված է բացարձակապես մերժելու միտումնավորությունը (տենդենցիոզությունը): Չկա և չի եղել «ամենայն անկախությամբ» և միտումնավորությունից բոլորովին զտված արվեստ: Բայց եղել է նման տեսություն, որը քարոզել են պատնաշյանները՝ Թևոֆիլ Գոթիեն, Բանվիլ, Մենդես և այլն, և սիմվոլիստները վերլենից մինչև Մալարմե և Ռոդենբախ, երկու դարերն էլ տեսական նախանյութը քաղելով Բոդլերից: Այդ տեսության իդեալը պոեզիայի ձևի կատարելությունն է, բառերի երաժշտական ներդաշնակությունը, որը հենց ինքն էլ պետք է ներկայացներ բովանդակությունը և ստեղծեր բանաստեղծական տպավորություն: Այդ պոեզիան, ըստ նրանց, պետք է բացարձակորեն աղատ լիներ հասարակական բովանդակության տարափոփոխ տրամադրություններից և ձգտեր արտացոլել «տիեզերական» «անփոփոխ» մարդու հավիտենական զգացումները՝ սերը, մահը, տրտմությունը, ուրախությունը և այլն: Այդ տեսության արդյունքը պոեզիան պատմական դեր ունեցավ արվեստի ձևի մշակման ու հետագա կատարելագործման տե-

[1] Արշակ Զոպանեան, Քերթվածներ, Փարիզ, 1908, էջ Բ:

սակնից և կերտեց առանձին դրույթներ։ Բայց այդ պոեզիան, որքան էլ ձգտում էր բացարձակ անմիտումնավորության, ըստ էության միտումնավոր էր իր իսկ ձգտման մեջ, արտացոլելով կապիտալիստական հասարակության զարգացման երկրորդ՝ վարընթաց էտապը, քայքայումի և անկումայնության ժամանակաշրջանի տրամադրությունները։

Պոեզիայի էության վերաբերյալ Զոպանյանի դրույթները հարատար պատճենավորումն են հիշյալ տեսության։ Քաղաքացու և բանաստեղծի դերի հակադրումը Զոպանյանի հայացքներում գալիս էր Արևմտյան Եվրոպայի հողում ծլարձակած տեսությունը արհեստականորեն արևմտահայ իրականության փոխադրելու երևույթից։ Բոդլերի և նրա հետևորդների տեսությունը ունել հող ուներ դեպի անկում գնացող ֆրանսիական հասարակության մեջ։ Իսկ արևմտահայությունը նույն էտապում ապրում էր ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջանում, որը ուրիշ բան չէր, քան ամատականության դեմ բարձրացող բուրժուազիայի պայքարի շրջանը։ Եվրոպական լուսավորության ներմուծումը հայ իրականության մեջ ընդհանրապես խիստ կարևոր և առաջադիմական երևույթ էր և իր համար պարարտ հող էր գտնում, բայց ֆրանսիական բուրժուական հասարակության անկումն արտացոլող տեսությունը արևմտահայ իրականության մեջ արհեստականորեն ներմուծելիս մնում էր օդում կախված, իրականությունից և նրա առաջ քաշած պահանջներից կտրված։ Այստեղից էլ Զոպանյանի հայացքների հակասականությունը. ժամանակաշրջանը պահանջում էր գործուն պայքար հասարակության վերափոխման համար, իսկ պոեզիայի նկատմամբ իր տեսությունը՝ «ոչ մեկ ղիջում ընել հանրային շարժումներուն, հավաքական հակումներուն կամ շահերուն» և միայն «արտահայտել տիեզերական կյանքը»։ Այլ խոսքով, որպես քաղաքացի՝ նա արտահայտում էր արևմտահայ իրականության շահերը, որպես բանաստեղծ՝ արտացոլում էր ֆրանսիական իրականությունը, որտեղ և ապրում էր, և այդ իրականությունից ծնված գաղափարները։ Ինքն էլ հասկանալով այդ հակասությունը, նա գերադասում է «պատն ի վար կախ ձգել» քնարը, իր էությամբ ղգալով, որ պոեզիայի վերաբերյալ այդ տեսությունը վնասակար է տվյալ ժամանակաշրջանում հայ ժողովրդի հիմնական շահերին։

«Գործչի և բանաստեղծի այդ ուրույն, որոշ ու հակասական ըմբռնումներուն պայքարը տաժանելի եղած է ինծի համար,— գրում է նա «Քնքշվածներու» առաջաբանում։— Կը խոստովանիմ որ արվեստագետը հաճախ ահավորապես տառապած է իմ մեջս, տառապանք, որ սակայն իր սփոփումը կը գտնէր այն համոզման մեջ, թե այդ զոհողությունը հանձն առնելով, դժբախտ ցեղի մը փրկության գործին աջակցելու քնքշվածն ապրելով, նորեն, առավ ալ, շափով մը կապված կը մնայի բանաստեղծության»[1]։

Պատահական չէ, որ «Անահիտում» հրատարակած իր գեղարվեստական ստեղծագործությունները Զոպանյանը ստորագրել է կեղծանունով, «որովհետև չէի ուզեր Արվեստ և ազգային Գործը իրարու խառնել»,— ասում է նա[2]։ «Տերվիշ» ստորագրությամբ ստեղծագործությունների մի մասում, որոնք տպագրվել են «Անահիտում», բանաստեղծը իրոք հակադրվում է գործչին, ինչպես տեսանք վերը. գործիչը անվեհեր է կռվի մեջ մտնում ու լավատես, բանաստեղծը երկչոտ է, աշխարհից փախուստ տվող և հոռետես։ Բայց երկչոտությունը և հոռետեսությունը դեռ չի նշանակում «ամենայն անկախություն», ու նաև, եթե բանաստեղծը իր քնարով մշտապես օգներ գործչին, ինչպես երբեմն արել է «Անահիտում», դա նույնպես չէր նշանակի, թե բանաստեղծը իր կոչման բարձրության վրա չէ։

Նկատի պետք է առնել, սակայն, և հարցի մի ուրիշ կողմը, որով այդ հակասությունը, լինելով բանաստեղծի և քաղաքացու հարաբերության ուրույն ըմբռնված օտարածին տեսության արդյունք, դառնում էր նաև ավելի ժամանակի արևմտահայ իրականության օբյեկտիվ արդասիքը։ Այստեղ արդեն Զոպանյանի տեսությունը էական դեր չէր խաղում և, լավագույն դեպքում, կարող էր միայն նպաստող գործոն լինել։

Զոպանյանի ստեղծագործությունների մի որոշակի մասում քնարական հերոսը դարասկզբի հասարակական կյանքի բարդ իրադրության մեջ ուղեկորույս է, այնպես, ինչպես մեր ժողովրդի զանգվածներն էին ափից ափ նետվում, և ոչ մի տեղ հույսի արև չէր ճառագում նրանց գլխավերը։ Այո, նա էլ ունեցել է իր իդեալները, իր «սերերը», ինչպես իր ժողովուրդն էր փայփայել երազներ, բայց բոլոր այդ «սերերը» նա չորացած թիթեռնիկների

---

[1] Արշակ Զոպանեան, Քնքշվածներ, Փարիզ, 1908, էջ ժ։

[2] Նույն տեղում, էջ Բ։

նման փակել է սրտի խոր տուփի մեջ ու, երբ բացում է այդ տուփը, բացում է, որպեսզի իր «արևապուրկ զավակներու» նըշխարների վրա «սուգին օրորը» երգի:

Այդ «սուգին օրորը» տրամադծորեն հակառակ է Չոպանյանի «Մայր Հայաստանի» օրորի հետ: Լավատեսությամբ, պայքարի ու կռվի անշեջ կրակով շնչող քնքշվածը, որը նոր էջ էր բացում արևմտահայ պոեզիայի մեջ, հող նախապատրաստելով Սիամանթոյի և հետո Վարուժանի գալստյան համար, գրված էր բանաստեղծական կամքի, կորովի, հույզերի վերելքի շրջանում, եղեռնական դեպքերին հենց հաջորդող օրերին, միանգամայն հարազատորեն արտացոլում էր թե բանաստեղծի և թե դեռ տաք վերքերի մեջ թպրտացող հայ ղանգվածների սրտի հույզերը: Ժամանակի հետ, քաղաքական պայքարի ու դիվանագիտական խաղերի մութ ոլորտներում աստիճանաբար սպանվում էր, մորթվում ժողովրդի ազատագրության հույսը, համապատասխանաբար, թրթռուն հույզերն էլ, մերթ ընդ մերթ կայծկլտալով, անթևղվում էին, մոխիրների տակ պահելու համար կենսատու կայծերը: Չոպանյանի՝ դարասկզբին գրած բանաստեղծությունների մի մասը հարազատ թարգմանություն էր ժողովրդի քաղաքական կացության և նրա հույսերի այդ տեղատվության: Ահա սրանով էլ բացատրվում է այդ հակասության օբյեկտիվ կողմը: Չոպանյան հասարակական գործիչը հոգնություն չճանաչող, լավատես հավատով տոգորված, աննահանջ անհատ մարտիկ էր, որը ձգտում էր իր հետևից պայքարի տանել ժողովրդին ու դրա համար նախապայմաններ էր ստեղծում իր գիտեցած և ըմբռնած ձևով: Չոպանյան բանաստեղծի քնարական հերոսը տվյալ ժամանակաշրջանի ժողովրդական որոշ զանգվածների հույզերի ու մտքերի ընդհանրական թարգմանն էր, դրանով իսկ նույնքան իրական իր զգացմունքների մեջ, որքան իրական էր անհատ գործիչը իր մղձգին պայքարի ձգտման մեջ: Որոշ իմաստով դա այլևս ոչ թե հակասություն էր բացարձակ առումով, այլ միասնություն, ժամանակակից հայ կյանքի երկու կողմերի միասնությունը, որը հայելիացել էր Չոպանյան գործչի և բանաստեղծի մեջ:

Այդ միասնության դրսևորման, տարբեր կողմերի փոխադրելության համար պետք է, ըստ երևույթին, բացատրել քաղաքական գործունեության որոշ պահերին Չոպանյանի ապրած հիասթափությունները, որոնք նա, բարեբախտաբար, հաղթահարում էր արագ,

առանց տևական ճգնաժամի, և դարասկզբին նրա արտադրած գեղարվեստական արժեքների որոշ մասում մերթ ընդ մերթ առկայծող լույսը:

Արդեն «Անահիտում» մենք հանդիպում ենք նման առկայծումների: Եթե «Մեկնում» քերթվածի քնարական հերոսը իր ժողովրդի նավով մեկնում է ծով, թեպետ դատարկ խավարով պատած ու տխուր ծով, այնուամենայնիվ սա արդեն մի քայլ էր ձանձրույթից դուրս գալու: Ապա, երբ պատիկ հայ գեղջուկը գնում է աստծո մոտ բողոքի, Չոպանյանի ձայնը այստեղ ստանում է առնականություն, ընդհանրացման խտացած հյութեղություն, ընդվզման կիրք: «Պատիկ հայ գեղջուկին պատահարը» հեքիաթը, որը, ի դեպ, թարգմանաբար տպագրվել է «Մերքյուր դը Ֆրանսի» 1899 թվականի մարտի համարում, Չոպանյանի լավագույն գեղարվեստական գործերից մեկն է: Այն գրվել է «Մայր Հայաստանին» քերթվածից անմիջապես հետո և որոշ չափով արձագանքում է «Օրորի» արտահայտած տրամադրություններին ու գաղափարներին:

Այստեղ էլ բռնադատված ու սրի քաշված հայրենիքի, դիակների ու որբացած սովալլուկ մանուկների պատկերն է: Ու եթե «Օրորի» մեջ բանաստեղծը խավարը ծվատող հայացքով դիտում է վաղվա վառ այգաբացը, ապա «Պատահարում» մատնացույց է անում դեպի այդ լուսավոր օրը տանող ճանապարհը, որը հողագնդի վրա հաստատված անարդարացի կարգն ու սարքը՝ «աստծո տունը» կործանելն է:

Պատիկ գեղջուկը, որ հազիվ տասներկու տարեկան է, դառնացած է կյանքից, տեսել էր թուրքերին, որ իր հոր գլուխը կտրելով դնդակի պես իրար են նետել ու ղվարճացել, որ տարել են իր տասներեքամյա քրոջը, փողոցում դիակների կույտի վրա են թքել, տեսել էր... Իսկ մինչ այդ հարցասեր և ուշիմ տղա է եղել: Հորը հաճախ հարցեր էր տալիս. «Ինչո՞ւ իրենց գյուղին ծեր վաշխառուն, այդ այնքան տգեղ ու չար մարդը, երջանիկ կյանք մը կանցներ, մինչդեռ իր հայրը, որ բարի մարդ մըն էր, օրն ի բուն իր արտի բրգուճին վրա կքած, հազիվ կտոր մը հաց կը գտներ իրեն ու իր ընտանիքին համար», «Ինչո՞ւ մարդիկ տաճիկներու և հայերու բաժնված էին և ինչո՞ւ առաջիններուն... վերջիններուն ճակտին քրտինքովը կապրեին»: Հայրը պատասխանում էր, թե երկնքում նստած ծերունի պապիկը՝ Աստվածն է այդպես կամեցել, նա արդարամիտ է և իմաստուն: Բայ ահա, աշխարհից

դառնացած պատիկը, որի աչքի առաջ քաղցից մահանում է կրտսեր եղբայրը ու մայրն էլ խելագարվում, որոշում է դնալ աստծո մոտ, բողոքի: Հաջողվում է ընկնել երկինք կապանդի գիշերը: Հրեշտակը նրան սրահից սրահ է առաչնորդում: Սեղանները ծանրաբեռնված են զարմանալի խորտիկներով, պատիկի աչքերը նման բան երբեք չեն տեսել: Ըստ նրա պատկերացումների, այդ սեղաններից վայելելու են միայն արդարամիտները, երկրային կյանքում կեղեքվածները: Գուցեև սրտի խորքում սպասում է, թե պիտի հանդիպի հայրիկին: Բայց սեղանի շուրջ տեսնում է իրենց նախկին դյուղապետին՝ «խարդախ, բիրտ, հափըշտակիչ, կեղեքիչ, կեղծավոր» մարդուն, հետո վաշխառուին, որի մասին հարցեր էր տալիս իր հորը: Քիչ անց երևում են տաճիկները, որ ագահ-ագահ կլանում են մեծ-մեծ պատառները, ասես «մորթված մարդու գլուխներ լափելին»: Հրեշտակը բացատրություններ է տալիս. մեկը սեղանավոր է, մյուսը՝ նախկին սուլթան:

Սոցիալական տիրող անարդարության և կրոնի քարոզած պատրանքների քննադատությունը Զոպանյանի այս գործում հնչում է նրա իսկ գեղարվեստական ստեղծագործության համար աննախընթաց ուժով: Հատկանշական է նաև այն պարագան, որ հեղինակը ազգային հալածանքը դիտում է սերտ գործակցության մեջ սոցիալական հարստահարության հետ: Աստծո կապանդի սեղանի շուրջ նա նստեցնում է հավասար աթոռների և նախկին սեղանավորին, վաշխառուին ու դյուղապետին, որ հայ էին, և արյունռուշտ տաճիկներին ու սուլթանին:

Պատիկը ընդոստ բողոքում է Աստծուն իր նախկին տառապանքի և նոր տեսածի դեմ. «Տեսա, որ բարիները կը տառապեն հոն, և չարերը երջանիկ են ու հզոր: Սկած եմ քեզի հարցնել այս անիրավության բացատրությունը: Բայց կը նշմարիմ, որ հոն քու սեղանդ ընդունելու ես ոչ թե մեր աշխարհին ժրաջանները, այլ սրիկաներն ու ճիվաղները: Իրա՞վ է ուրեմն, որ դուն մարդոց հայրն ես, իրա՞վ է, որ դուն բարի ես: Պատասխան տուր»:

Աստված, վիրավորված, հրամայում է, դուրս նետել «այդ պղտիկ սատհակը»: Իսկ սա, առելության ու կատաղության պոռթկումի մեջ, բռունցք է ցույց տալիս Աստծուն և թքում դեպի նա, ցանկանալով «օդը հանել բոլոր այդ սուրբյան տունը՝ այդ գեղ հայրովը մեկտեղ»: Պատիկին դուրս են նետում, և երբ գտհավետ սուրում է անդունդ, մի «մթին դեմք» երևում է նրան, «սև ու տաք թևերը» բռնում են նրան, և մի ձայն փսփսում է

ականջին. «Նկուր ինձի հետ, ես Վռնդվածն եմ ու Ապստամբը. ես Եղբայրն եմ դժբախտներուն, նկուր ինձի հետ, մենք պիտի կործաննենք Աստծո Տունը»:

Երկմտելու տեղ չի մնում, որ այդ «Աստծո Տունը» Զոպանյանի մոտ աշխարհի վրա տիրող կարգն ու սարքն է՝ իր սոցիալական, քաղաքական, կրոնա-նկեղեցական հաստատություններով: Այդ Տան կործանումն է, ըստ հնքիաթի տրամաբանության, միակ ելքը:

«Պզտիկ հայ գնդջուկին պատահարը» հնքիաթի վերջավորությունը բացատրում է սպառիչ կերպով, թե ինչու Ա. Զոպանյանը Ալֆրեդ դը Վինիի «Ելոա»-ին մոտենում էր ուրույն մեկնաբանությամբ, ընդգծելով ու չափազանցելով Սատանի կերպարը: «Պատահարի» «մթին դեմքը» նույն Սատանն է, վռնդվածը և ապստամբը: Բայց Վինիի Սատանը դեռ սոցիալական չարիքի դեմ ապստամբողը չէ, նա պարզապես ազատության, ընդվզումի, արժանապատվության մարմնավորումն է: Զոպանյանի «մթին դեմքը», որ պատրաստվում է կործանել «Աստծո Տունը», դըժբախտների եղբայրն է:

Գալով «Քերթվածներ» հատորին, պետք է արձանագրել, որ այդ գիրքը լավագույն ապացույցն է այն բանի, թե Զոպանյանի տեսական դրույթները «հանրային շարժումներուն, հավաքական հակումներուն ու շահերուն» արվեստի հետու լինելու մասին, միշտ չէ, որ ինքը՝ Զոպանյանը կիրառում է բանաստեղծական պրակտիկայում: Այո, կան այստեղ «հանրայինն» խոսափելու մոտիվներ, բայց առավել են հանուն այդ շահերի հնչող լարերը: Ժողովածուն ընդգրկում է քերթողական գործերի շարքեր՝ «Արշալույս», «Ժամերուն կարավանը», «Անձկություն», «Տեսիլներ», «Գիշերին մեջ» և «Բլուրին վրա»: Այդ գիրքը, ինչպես բանաստեղծն է գնահատում, իր հոգու քերթողական վեպն է: Եվ, թեպետ բանաստեղծությունների զգալի մասը արդեն հրատարակված է եղել, այնուամենայնիվ, անցնելով որոշ վերամշակման ու, մանավանդ, հեղինակի բծախնդիր ընտրության ցանցով, դրանք ստանում են բոլորովին նոր հնչեղություն և դառնում բանաստեղծի ստեղծագործական հաշվեհավությունը նրա ապրած ամենափոթորկուն և քաղաքականապես հագեցած ժամանակաշրջանի համար:

Իրոք որ բանաստեղծի հոգու քերթողական վեպն է այդ հատորը, որի մեջ շողշողում է պատանեկան «Արշալույսի» արևը, երիտասարդ սրտի սիրո «Անձկությունն» ու տվայտանքներն են

խայտում տարբեր գույներով, ապա Հասուն տարիքում ալգին հասած դժբախտությունները «Տեսիլներ» են առաջացնում նրա հոգում, որոնք խամրում են ազատագրական պայքարի ժամանակավոր պարտության խավար «Գիշերին մեջ», որպեսզի քիչ անց նորից կենդանանան և բարձրանան հույսերի «Բլուրին վրա»:

Հատկանշական է, որ «Արշալույս», «Ժամերուն կարավանը» և «Անձկություն» բաժինները, որոնք պարունակում են 90-ական թվականների սկզբին արտադրված քերթվածները, գրեթե բոլորովին մաքրվել են այն «մահապաշտ դպրոցի» գործերից, որոնց մենք առիթ ունեցանք արդեն հանդիպելու:

Հատորը սկսվում է այգաբացի բնանկարով, երբ արշալույսի ալաքները ժայթքում են երկնքի մռայլ անդունդից և պատռում գիշերվա խավարը ու ապա, քնարական հերոսը, հրեշտակի բերանով իր կոչումն է ազդարարում՝ կյանք արծարծել երգերով հրածորուն և ավյուն բաշխել սրտերին:

Սրիտասարդական հույզերի, առողջ զգացումների, սիրո վայելքի ու տենչերի քնարերգություն է առաջին բաժիններում տիրապետողը, որ արտահայտվում է դյուրաբեկ ու ոստոստուն բանաստեղծական ձևերի այլազանությամբ.

«Սիրո կյանքին դեմքդ է բագին,
Ժպիտդ անուշ սուրբ ամպիոն,
Որմե սիրվիներ, ջինջ կը ժայթքին
Ջերդ հակիներ ու սարդիոն»

(«Արշալույս», Ը)

Սիրած էակի գովերգության արևելյան շքեղությունը զուգորդվում է սիրո՝ բառիս դրական իմաստով, «եսականության» առողջ խանդի զգացումի պոռթկումով: Քնարական հերոսը պատրաստ է ատելու ամեն ինչ, որ սիրածի ուշադրությունը շեղում է իրենից՝ երկինքը, դեպի ուր հափշտակված նայում է աղջիկը, մատյանը հրաշակերտ, որի մեջ սուզվում է հոգով, խոհերն ու երազները նրա, և Աստծուն իսկ, որին աղոթքի ժամին մերթ ուղղում է նա իր սիրտն ու աչքերը: Բանաստեղծը տենչում է, որ նա միայն իրենը լինի և ամեն ինչով իրեն պատկանի, այլապես.

«Ես հուրն ըլլալ կուզեի, տարր անարատ ու վայրագ,
Եվ պատել քեզ անհամար բազուկներով շառաչուր,
Լափել մազերդ ու մոխիր դարձնել լանջդ անապակ,
Մարդոց ընդեն անմատույց ընել համբույրդ երկնաբույր»:

(Թ)

Բանաստեղծի սիրտը ծաղիկ է նիկոտարաշատ, թող գա մեղուն-սիրուհի և քամի, քամի նիկոտարը, որ անսպառ է. նրա հոգին ծով է կապուտակ, թող գա կարապ-սիրուհին և թևերով լուսածիր հավիտյան պատռի նրա ծոցը: Պատանեկան սիրո հնչտանքի մեջ միանգամայն բնական ու քաղցր է հնչում սիրուհու հետ առանձնանալու, հեռավոր ծովերի խորքերում բյուրեղյա պալատում փակվելու տենչանքը: Նրա սիրած էակի նմանը չկա աշխարհում, և տեսեք, թե ինչ տարրերից է կազմում բանաստեծը լուսեղեն իր ձոներգը.

«Ու սիտի հալքեմ դեռ բառեր բուրյան,
Բառեր փետուրի պես գիրգ ու փափուկ,
Բառեր խրոխտ՝վ անրիծ ինչպես քամելյան,

Բառեր, որ ցոլքեր ունին խուսափուկ,
Բառեր, որ աստղի քթթոմաններ ունին,
Եվ անոնք որ նուրբ են գիրդ տերևիուկ.

Հետո՝ լույս հրճվանքն անմեղ գարունին
Փոխ սիտի առնեմ, և գնիյուռին սույլ,
Ու դայլայլն անուշ սիրո թռչունին,

Թիթեռնիկներեն իրենց վաղքը հույլ,
Այգեն իր ժպիտն ու լուսընկային
Լայն մազերն արծաթ թափած հույլ ի հույլ...»

(ԻՍ.)

Բառերի և պատկերների այս հեղեղը պայմանավորում է քնարական հերոսի հոգեկան վերելքը, բարձր ու վեհ ճախրելու տենչանքը: Նա բաղձում է թռչուն լինել ու ջրի վրա տարածել իր կուրծքը, կոհակների հետ ելևէջել անդադար և ալիքից ալիք անվեհեր սուրալ: Բայց ահա սևը իր փշերն է ցույց տալիս և, եթե սիրուհու աչքերի քաղցրությունը ամենամահացու վերքերն իսկ կարող էր բուժել, բանաստեղծի հոգում բացված վերքը ահավոր է, որովհետև նույն անզութ աչքերից է առաջացել, և սպեղանի դառնել այլևս անհնարին է:

Ջերմ ու քաղցր է բանաստեղծի երիտասարդ քնարական հերոսի տրտմությունը, չկա այլևս կեղծ մահաբաղձությունը, գերեզմանի տենչը: Այո, ծանր է առանց սիրածի, աշխարհը «ոչինչ է», բայց փնտրում է սիրտը, որպեսզի նորից լցվի այդ աշխարհը: Ջե որ աշխարհն ինքնըստինքյան շատ գեղեցիկ է: Բանաստեղծը կապված է նրան բոլոր թելերով ու նույնիսկ դատապարտելի և

աննկարելի է պահում, որ հետաքրքիր մի օր երկրագունդը պետք է իր վախճանը ունենա։

Այս մարդկային, իմաստավորված ցնծությունն ու թախիծը, սակայն, մերթ ընդ մերթ, ընդմիջվում են բառերի ինքնանպատակ երաժշտականությամբ։ Բավարարվենք մեկ օրինակով.

«Երբ այգուն քաղցր նշույլ
Կ՚ինկա մութին ջինջ քողեն,
Կը հածի սյուքն համր ու թույլ։

Կը երգեն, կանչնի համր ու հույլ,
Սիրված՝ խոտեն ու ցողեն
Աննյութ բևովն աղվաստույլ։

Փայփայելով հույլ ի հույլ
Ծաղիկները բաշշնդեն,
Կը հածի սյուքն համր ու թույլ»։

(«Ժամերուն կարավանը», ԻԱ)

Չոպանյանի երիտասարդ քնարական հերոսին արդեն խորթ չէ խրոխտության և ընդվզման ոգացմունքը, որը հետագայում առավել պիտի շեշտվի հասուն տարիքի բանաստեղծի քնարից։ Իսկ այստեղ նա դիմում է ծովին.

«Տուր ինծի վսեմ ոգիդ կատաղի,
Սիրտս անդունդներուդ զայրույթովն աղի
Իբրեւ ացուր ինչպես քրնար բազմաղի,
Տուր ինձ խրոխտության և ուժդ ընդվզման...»

(ԻԲ)

Քերթված ատ քերթված ծավալվում է բանաստեղծի հոգու վեպը, տարիքի հատաջացմանը զուգընթաց, առնական ու խրոխտ շեշտերի հետ, հայտնվում է նաև անշտապ ու պարզ, բայց դեռևս միշտ լուսավոր հայացքով իրերի քննելը։ Սերը այլևս միայն սրտի նյութ չէ, այլև փիլիսոփայության. բառերի ու պատկերների մրրիկի փոխարեն, մերթ ծանրախոհ մտածումն է հյուր գալիս։ Բայց նա դեռ միայն հյուր է, իսկ բանաստեղծի սրտի մեջ բավականին կրակ է անթեղված, որ երբեմն բոց է տալիս.

«Չէ Թող Թույնն հոգիս այրե բոցավառ,
Եվ Թող սիրելն իմ մահս ինծի գա»։

(Ա)

Այդ կրակից ծնված հետևյալ տողերը արդյոք Տերյանի «Էտոնական երգի» ցոլքերը չե՞ն պարունակում.

«Ախ, դէթ երբ սիրտդ փուշն ըզգա տրտմութեան,
Երբ ձանձրոյթի կամ ղվիանքի վայրկեաններ
Հոգիդ վրա թույներն իրենց թափել դան,

. . . . . .

Դէթ այդ մաղձոտ վրդովումի պահերուդ,
Երբ անձուկ մը կըմրոթաե շուրթդ բուստե,
Հիշե, րոպե մ'հիշե դժբախտ սերըս մութ»:

(ԽԱ)

Բայց ահա նորից մտածումը հյուր եկավ և ստիպեց բանաստեղծին միտք անել արդեն նաև հասարակական կյանքի հարցերի վրա: Սքանչելի է «Սպին» խորագրով քերթվածը: Երկրագործի այդ քաղցր ընկերը, որին հին եգիպտացիները իբրև աստված մեծարում էին, իրոք ավելի էր արժանի հարգվելու, քան հրեշային Եհովան, ասում է բանաստեղծը: Սա զվարճանում էր,

«...ազգ ազգի դեմ արձակելով փրփրուն,
Կը պարծենար իր գոհերի դահիճի սև պաշտոնով
Ու բոռները կը պատժեր մեղքին համար պապերուն»:

(ԽԴ)

Մերժված սերը, հասարակական կյանքի անհարթությունները նոր էջ են գրում բանաստեղծի հոգու վիպի մեջ: Եվ այդ էջը լեցուն է անձկությամբ: Իրիկնամուխն արդեն տրտմության թախիծ է ծորում, սիրո սպասումի վախճանը անստույգ է, կյանքի առեղծվածներն էլ մտածումի խորություն և լրջություն են պահանջում: Ներքին անհանգստությամբ քնարական հերոսը զգում է «Լենկ Թեմուրի երազի» մեջ գալիք արհավիրքները: Բայց սրտի ջերմությունը պետք չի սառել, նույնիսկ մեռելների համար ցավում է, թե մրսում են նրանք սառնամանիքին: Այդ ջերմության հայացքով էլ կարողանում է տեսնել այն ղույգ աղվոր աչուկները, որոնք տրտմության խավարի միջից երևում են իրեն, գուցե մերժման վերջին խոսքն արտասանելու համար, թեպետ չի մարել դեռ հույսը, որը թիկնոցի նման գցել է ուսին ու սպասում է, ինչպես ձուկ բռնելիս,

«Երազին կարթը ի ձեռին»:

(«Անձկություն», ԺՋ)

Բանաստեղծն արդեն քննում է կյանքի իմաստը, հակադրում այն մահվան, փնտրում երջանկությունը, և թեպետ չի գտնում

ոչ քաղաքում, ոչ լեռներում, ոչ քամիների, ոչ աստղերի մոտ, ոչ իսկ աստվածն է կարողանում պատասխանել, թե որտեղ է երջանկությունը, բայց քնարական հերոսը չի վհատվում, կյանքը նրա համար պայքար է, և տառապանքը նախընտրում է երեւակայական երջանկությունից.

«Չէ, իմ տառապանքն ես կը նախընտրեմ,
Ինչպե՞ս ապրիլ կյանքն, երբ Անծանոթին
Տննդն ամեն վայրկյան չի ցցվիր մեր դեմ,
Թող միշտ պայքարիմ, նրազեմ, հուսամ,
Թող որ իմ անվերջ իղձով արբենամ»։

(ԻԱ)

Բանաստեղծի հոգու վիճակը, անկախ այն բանից, թե նախադրանում ինչ է պնդում ժողովածուի հեղինակը, հարատաւ արտացոլումն է սևիլական ժողովրդի հասարակական-սոցիալական կյանքի։ Գրքի հաջորդ երեք բաժինները միայն այդ են վկայում։ Դրանք գրված են 1894—96 թվականների աղետից հետո ընդհուպ մինչև 1907 թվականը և, դժբախտաբար, դրանց մի մասը մամուլում չի տպագրվել։ Ասում ենք «դժբախտաբար», որովհետև որոշ գործեր իրոք կարող էին դրական նպաստ բերել հասարակական պայքարի մարտիկ Չոպանյանին, նրա դժվարին պայքարում։ Ապացույցի համար հետու գնալու պետք չկա։ Նույն այս ժողովածուի «Տեսիլներ» բաժնում հրատարակված է «Մայր Հայաստանին» հռչակավոր քերթվածը, որը ժամանակին շատ հաճախ զարդարում էր հայկական հավաքույթները, թարգմանվում օտար լեզուներով, արտասանվում բեմերից։ Անգլո-բուրական պատերազմից հետո, երբ բուրերի ներկայացուցիչներին ընդունեցին Փարիզում, նրանց պատվին կազմակերպված երեկույթներից մեկում նույնպես հնչեց Չոպանյանի «Մայր Հայաստանին», որպես պայքարի կոչող ու հաղթանակի հավատով ոգորված քերթված։

Նման մի դեր կարող էր վերապահվել (անշուշտ, համեմատաբար նվազ դեր, որովհետև արվեստի տեսակետից զիջում է առաջինին) նաև «Վերհիշում» քերթվածին, որի մեջ քնարական հերոսը փոխադրվում է հին Անի, անկախության համար կռվի թեժ օրերին.

«Ես հոն էի, սուրը պայքարին մեջ հրափայլակ
Ըստվերները կ'երգեի հին հերոսներուն
Եվ անուշությունը Հայրենիքի համար մահուն»։

Եվ, ահա, երբ տեսիլը անհետանում է.

«Ախ՛, ո՞վ դարձնե սիտ՝ ինձ բամբիռը երբեմնի,
Ու փչե մեջս աստվածային շունչը հրեղեն,
Որ ես կոռամ, ո՛վ իմ ցեղս, երգը զարթոնքի,
Ու ցցվելով սարկուբյան անարդ մոխրեն,
Բոցավառված նորեն խանդովդ դյուցազնի,
Վերականգնես արևուն տակ Տունդ Հայրենի»։

Բնական է, որ Հոդու վեպի այս շրջանը լեցուն լինի հարցականներով ու տարակույսներով։ Բանաստեղծը իր սրտում խոր թաղում է երազը։ Ի՜նչ սքանչելի քերթված է այդ «Երազը». կյանքը նրա համար այլևս նման է դժոխքի, որտեղ ստվերների նման անարյուն են Սերը, Հավատը, Քերթությունը, Պատրանքը, Երազը, և միակ իրական տիրուհին է Տարակույսը։ Ու բացականչում է բանաստեղծը.

«— Բայց նլքն ո՞ւր է, դրթություն,
Նլքն այս բավղին, ուր ամեն հույս է մեռած։
Ոչ մեկ ձայն ինձ պատասխանեց և անհուն
Խավար մ'իջավ ծածկեց ամեն բան հանկարծ»

(«Ստվերները»)

Ահա և՝ գիշերը վրա հասավ, բերելով իր հետ խոհեր կյանքի ու Մահվան, Ջանձրույթի, Դժոխքի մասին։ Եվ այդ խավարի մեջ էլ բանաստեղծը անխմաստ մահեր չի փնտրում այլևս, քաղաքացիական շունչը կենդանություն ու համամարդկային հնչեղություն է հաղորդում նրա տողերին։ Նա պատրաստ է կործանել այն հասարակությունը, որը դժոխք ու գիշեր է դարձրել կյանքը։ Լսենք, թե ինչպես է նա ծովին կոչում՝ ընդվզել ու ալիք տալ.

«Թող ջնջվի աշխարհ մը, որ լիրբ, կը տիրե
Կեղծիքը վատ ու չարությունը գծուծ,
Որջ նենգության, ուր ոչ մեկ սիրտ կը սիրե,
Ուր կը սիգա հաղթող սճիրն հինավուրց։

Կը սընանին անողության ուրիշին,
Ու կը հրճվին իրենց եղբորը ցավով.
Կը կոխոտեն անմեղն անդոր, կը բծնին
Գարշապարին շուրջ անոր, որ է ուժով»։

(«Ծովուն»)

Տիրող համապարփակ խավարում բանաստեղծը դժվարանում է գտնել լույսի թույլ նշույլ անգամ։ Կյանքի քաղաքական թե սոցիալական ախտերը վարագուրում են ամեն ինչ և, երբ երազի

Թևով ուրիշ աստղեր է թռչում, այնտեղ էլ ճակատագրականորեն նույն պատկերն է տեսնում: Այդ է պատճառը, որ նրա աչքում կյանքը մի պահ կորցնում է ամեն իմաստ ու նպատակ. «ամեն բան սուտ է և սին ու խաբեբա» («Սփինքսը»): Նույնիսկ մահը բանաստեղծի գրչի տակ դեմ է այդ կյանքի կարգ ու սարքին.

«Երևա իրոք պիտի լլլար լավագույն,
Որ կարգն այսպես չլլլար գծված իրերուն,
Տկարությունն ու ցավ ստեղծված չլլլային,
Ու չլլլայի անհրաժեշտ ես կյանքին»:

(«Գառունն ու մահը»)

Առավել իմաստնանում է, սակայն, բանաստեղծը հոգու քնարական վեպի հոլովույթում, ճանաչում է իր կոչումը և, վաստակով բեռնավորված, հաշիվ է տալիս վաղամեռիկ մորը.

«Ով ամեն հեղ, որ իմ կյանքիս մեջ կրցած
Եմ կատարել գործ մը հօգուտ մարդկության
Կամ միս—արյուն տալ երազի մը սիրուն,
Քեզ եմ խորհած, ու խորեն իմ հոգիին
Քեզ եմ ոգած և մրմնջած եմ. Ո՛վ դո՛ւն,
Որ կըհսկես վրաս սիրով կաթոգին,
Տե՛ս, արժանի՞ եմ քեզ, գո՞հ ես ինձմե...»

(«Մուրս»)

Արդեն պայքարի ու մտածման «բլուրին վրա» է կանգնած բանաստեղծը: Այո, տողերը ոստոստուն չեն վարարած լեռնային գետակի նման, բայց լայնահուն են ու խոր: Հետադարձ հայացք ձգելով հաղթված խավարին՝ նա ասում է.

«Բայց վայ, եթե վիշտն հոգվույն սիրասիրտ բոնագին.
Ինչպես երկինքն, երբ ամպերն հորդակուռակ թանձրանան,
Կանհետանա ու կմեռնի, այնպես հոգին՝ խեղդված,
Կանէանա, երբոր վիշտը հոն իշխի հաղթական:
Վիշտը պետք է ըլլա ոսոխն հարկավոր ու պարտված»:

(«Պատառ աղչկան եղերերգը»)

Կամ

«Եթե ամեն բան իրոք աշխարհի մեջ ունայն է,
Ջգուշացիր դուն նորեն լալկանի դեմք առնելե»:

. . . . . .

«Քու կյանքդ իրեն ունենա Թող նպատակ մը պայծառ»:
« . . . . . Թող հիդդ միշտ մաքառի
Ջարին դեմ, նույնիսկ երբ հույս չունիս հաղթելու»:

(ԺԹ)

Անշուշտ, վերջին այս տողերը ավելի իրատական են, քան բանաստեղծական (հենց դրա դեմ իրավունք ուներ պայքարելու Զոպանյանը), բայց ներելի այնքանով, որ դրանք եզրափակում են հատորը և գաղափարական ընդհանրացուցիչի դեր կատարում։

Մեզանում տարածված կարծիք կա, թե 80-ականներից մինչև Սիամանթո իրավ բանաստեղծության կատարյալ ամլություն է տիրել արևմտահայ գրականության մեջ (խոսքը, անշուշտ, միայն բուն Պոլսի մասին չէ)։

Պիտի ուղենք, որ մեր գրականագետները ընկալյալ կարծիքի ուժով անտարբեր չանցնեին Արշակ Զոպանյանի բանաստեղծական արտադրանքի կողքից։ Իրավացի են, իհարկե, բոլոր նրանք, ովքեր Զոպանյանի գեղարվեստական ստեղծագործությունը տոթրատաստում են նրա իսկ գործունեության մյուս բնագավառներին, բայց դա դեռ չի նշանակում, թե այն զուրկ է գեղագիտական արժեքից։ Մեր խորին համոզմունքով Զոպանյանի պոեզիան ինչ-որ չափով կարող է լրացնել այն բացատը, որ հիշատակեցինք վերը։

Վարուժանը, որ նույնպես բարձր կարծիքի չէր դարավերջյան արևմտահայ պոեզիայի վերաբերյալ, դեռ իր ժամանակին հիացմունքի տողերով է գնահատել Զոպանյանի «Քերթվածներ» հատորը։

«Ձեր քերթվածներն ընդունեցա շնորհակալությամբ և ուրախությամբ,— գրում է նա Զոպանյանին։— Ան Ձեր հոգվույն իսկությունն է, դանձն է, որ խանդաղատանքով քովս պիտի պահեմ։ Հոն անթիվ գոհարներ կան մաքուր և վսեմ ծովու մը հատակեն դուրս բերված, որոնց մասին իմ գնահատումս բարձր է։ Մեր ժողովուրդը պետք է Ձեր վրա երկար մտածեն ու երկար խոսի, իսկ եթե այդ ըրանը պետք եղածին չափ չըներ ան, հանցանքը իր կուսակցականության մոլեռանդությունն է»[1]։

***

Արշակ Զոպանյանի քնարի մոտիվները իրենց տրտմության հենքով, սոցիալական անարդարության դեմ ընդվզումի երանգներով ու պայքարի նոր վերելքի ակնկալությամբ այս կամ այն չափով արձագանք են գտնում «Անահիտ» էջերում հյուրընկալ-

[1] Դանիել Վարուժան, *Նամականի*, Երևան, 1965, էջ 134։

ված մյուս գրողների ու բանաստեղծների արձակ թե չափածո գործերում։

Երվանդ Օտյանը, որն իր «Գործի մարդիկ»[1] վեպում ժամանակակից կյանքի սոցիալական հարկաբաժնի տանիքն է վեր առնում և մերկացված պոլսական բարքերի արատները հուժկու խարազանում, «Բարի դահիճը», «Մոսապ լեսիմ» և ուրիշ գործերում դառն հեգնանքով ծաղր է անում, որովհետև ծաղրը, ոմ գիտե, «գուցե լալու մեկ դառնագույն ձևն է»։

Չոպանյանի լուսավորական ծրագրին յուրօրինակ արձագանք է Լևոն Բաշալյանի «Ցեղին ձայնը» պատմվածքը, որը տպագրված է Հանդեսի հենց առաջին համարում։ Ջարդ տեսած ժողովըրդի փոքրիկ որբուկը աստծուց ուղում է, որ խնդը տա իրեն։ «Ցեղին ձայնն էր, որ կը խոսեր իր բերնովը։ Անգիտակցաբար, բնականորեն, կը խնդրեր այն ընդը, որ պիտի ապրեցներ զինքը ներկա քաղաքակրթության մեջ, միակ ուժը, որ իրեն անհրաժեշտ էր։ Արյունին մեջ ուներ այդ պետքը դեպի իմացականությունը, դեպի գիտությունը, դեպի հառաջադիմությունը, դեպի հաղթանակը։ Ատով էր, որ իր ցեղը տևեր էր, ու պիտի տևեր»։

Երուխանի «Համբին վրեժը» հոդեբանական մի փոքրիկ գլուխգործոց է, որը, սակայն, հասարակական հետաքրքրության հարցեր չի շոշափում։ Բայց նրա «Հուսությքը» բալղակի շունչը ունի իր մեջ կապիտալիստական հասարակության նեխած բարքերի քննադատության ոլորտում։ Երուխանի հերոսը, նախկինում հարուստ և ընկերների վատոով շրջապատված, այժմ սնանկ ու բոլորից լքված, անջնջելի խարան է այդ վիճակը ծնող հասարակության ճակատին։

«Անահիտի» առաջին տարիներին մշտապես աշխատակցում էր Արամ Չարըգը, հատկապես չափածո ստեղծագործություններով։ Չարըգի գործերում տիրապետողը տրտմության, վշտի ու լքումի եղանակներն են. հայրենի երկրում ավերակներ, մոխիրներ, անտեր ու անտուն դիակներ և բողոք աստծուն, որի գոյությունն իսկ կասկածի է առնվում («Պատմիր աստծուն»), բախտից ծաղրված ու հալածված եղբայրներ, որոնց համար բանաստեղծն իր սիրտն է բացում, որպես հանգրվան («Եկե՛ք, եղբայրներ»), նույնիսկ բնության է արձագանքում կյանքի մեջ երգված ցավերին («Արձագանքը»)։ Բայց մեկ էլ հանկարծ, ամպերի ահ

[1] Օտյանի «Գործի մարդիկ» վեպը «Անահիտում» մնացել է անավարտ։

կուտակները կարծես բախվում են իրար, կայծակ է ճայթում, առժամապես լուսավորելու համար մթնած երկինքը.

«Իմ սիրտը խռոված երգում է մեկտեղ,
Նա էլ մի ծով է, ծով տանջանքների,
Փոթորկից, շանթից, ալիքից ահեղ՝
Հնչում են նորա շնշտերն ամեհի»

(«Երգեր»)

Նվ հենց այդպիսի պահերին բանաստեղծի քնարական հերոսը պատրաստ է գործելու։

«Էլ չեմ խնդրում և ոչ մի բան երկնքից,
Մահվանիցետ ես ոչինչ չեմ սպասում,
Չեմ սարսափում կյանքի վայրագ պայքարից,
Իմ իղձալս անգին ղննբս է այդ կռվում։
Նվ ես գիտեմ զոհվիլ անվախ, անտրտունջ՝
Թշվառ մարդու դատի համար կռվելով...»

(«Երգեր»)

Մակընթացությունը, սակայն, տնղատվության է փոխակերպվում, նորից լսվում է գիտության հայցը առ աստված, նորից դառն օրերի հուշերն են ալիք տալիս, արցունք քամում, և երբ թվում է, թե այլևս ցամաքից ակը, հանկարծ մի ակնթարթ պատռվում է դարձյալ խավարը, քնարական հերոսը փոթորկոտ ծով է տենչում ու մրրիկ, որոնց երգը թնպետ խորհրդավոր գիշերվա լաց է, բայց ազատ երգ է, ուստի՝ իր սրտին ախորժելի։

Անվերջանալի գիշերվա, անափոփ վշտի ու ողբի բարակ մեղեդի է հնչում «Խոսրով» և «Ջավեն» ստորագրությամբ քերթվածներից, իր կորցրած սերն է երգում Գ. Անուշյանը։ Ոսկի Ջաքըրյանի քնարական հերոսը «վշտի հնոց» է, որի բոցերի մեջ այրվում, մոխրանում են, արդեն որևորդ անգամ, հիշողության պահպանած ծանր պատկերները։ Նվ այս միակերպ ու սրտակեղեք վշտի ծովում հանկարծ նորից մի ձայն, գարնան ու կյանքի, արևի ձայնը, հնչում է Պարույրի «Գարունին երգը» արձակ քերթվածի մեջ։ «Սկսիր ինծի, կյանքով ուռած սրտեր, որ նոր կը բացվիք լույսին, սկսիր իմ պուրակներուս բարեկամ սովերին մեջ մխրճիլ, սկսիր ձեր նորածիլ սերը խառնիլ իմ անսահման տարիանքիս, որուն կրակը կը դողդողացնե երկնքին աստղերն ու

դաշտերուն ծաղիկները... Թող կյանքը վերանորոգվի ու վերածաղկի և Թող հավիտենական գործը վերսկսի»:

Սրտին պատած սառույցն է հալվել, և արևով է ողողվել Մանիկ Պերպերյանի քնարական հերոսը: Հեղինակի «Արձակ երգեր» խորագրված արձակ բանաստեղծությունը քնքուշ, բրթռացող սիրո երգ է, կյանքի և արևի պաշտամունք: Արև է հերոսի սրտում, արև՝ ձայնի, բիբերի, մազերի մեջ, կյանք ու արև է նրա շուրջը:

Մ. Պերպերյանը, սակայն, իր շռայլ արևը «Անահիտի» էջեր է բերում 1911 թվականին, իսկ մինչ այդ Լևոն Էսաճանյանի հերոսը այրում է բոցերում իր քնարը, որպեսզի հոդու մեջ ընկած կայծերով վառի ամեն բան, վրնջ լուծի անարդար աշխարհից, որը իր մայրերին ու քույրերին Թողել է այրի, սափորով արցունքը, մանկանց արյունն ու մոխիրն է հանել նրանց բաժին:

«Անահիտի» էջերը միշտ բաց են եղել որևէ սկսնակի առջև, որ ապագա էր խոստանում իր գրական երախայրիքի ոճով ու բովանդակությամբ: Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի աշակերտ Հովսեփ Սիբաստացին երկու ոտանավոր է տպագրում հանդեսում: Եվ ահա, Ա. Զոպանյանը, որ հաճախ է գրական ուսուցչի իր փորձառու ձեռքով ուղղում և վարում սկսնակներին, բարեկամաբար, այլև գործնական ու խոր, դիտում է, Թե երիտասարդը կարող է ապագա ունենալ, Եթե դադարի Վարուժանի հաջողակ հետևող լինելուց ու դառնա ինքնատիպ ստեղծագործող: Սիբաստացին «Պիտի չապրիս» ոտանավորում ստիպում է հերոսուհուն մահվան դատավճիռ արձակել մանկան նկատմամբ, որ դեռ իր արգանդում է, այն բանի համար, որ պտուղը քուրդ ելույթից բռնաբարվելու արդյունք է: «Կմբռնեմ ցավը, ամոթը, հուսահատությունը, կատաղությունը, որով այդ զաղիր ու վայրագ պայմաններուն մեջ բռնաբարված աղջիկ մը պետք է գալարվի՝ զգալով իր ծոցին իյնալը անիծված ու գարշելի համբույրի մը պտուղին»,— նրբությամբ դիտում է Ա. Զոպանյանը: Բայց նա չի ուզում ըմբռնել, որ այդ կատաղությունը փոխանակ ելույթի դեմ ուղղելու, կամ նույնիսկ իր տան պատիվը պաշտպանելու անկարող հայ տղամարդու դեմ, «երեք ծանրանալ ահավոր ճակատագրի մը անդիտակից ծնունդ անմեղ երեխայի մը վրա»: Բանաստեղծական այդ մտահղացման մեջ, իրավացիորեն նկատում է Զոպանյանը, պակասում է աղնվություն: «Հայ տղամարդը լուռ կը համբերի իր աղջկան, իր քրոջը լղճվելուն, ու

հայ վիժաուբյան զգացումը ուրիշ կերպով չի հայտնվիր, բայց եթե խնդճ նորածին մը ջախջախելու դյուրին ու անպիտան արարքին մեջ»[1]։

***

«Անահիտում» տպագրված մի շարք գրողներ մասնավոր հետաքրքրություն են ներկայացնում հանդեսում գրավված իրենց տեղով, որով նպաստում էին «Անահիտի» ծրագրի դրծադրությանը և մի տեսակ եղանակ ստեղծում, կամ նրանց և Զոպանյանի հարաբերությունների տեսակետից, որոնք խմբագրապետին բնութագրող շահեկան նյութ են տրամադրում։

Երաժիշտ և բանաստեղծ Վահրամ Սվաճյանը 90-ական թվականներին արդեն հանդես էր գալիս Պոլսի մամուլում և իր ժամանակին արևմտահայ մտավորականության շրջանում բավականին ճանաչում ուներ։ «Անահիտ» հանդեսի էջերում նրա անունը հաճախ է հանդիպում, և Զոպանյանը որոշակի հույսեր էր կապում նրա բանաստեղծական ապագայի հետ։ Շուտով, սակայն, Սվաճյանը ամբողջությամբ նվիրվում է երաժշտությանը և միայն երեսնական թվականների վերջերին կրկին երևում բանաստեղծության ասպարեզում, «Անահիտի» նոր շրջանում հրատարակելով մի քանի ոտանավորներ։

1898 թվականին Արշակ Զոպանյանը «Անահիտի» առաջին իսկ համարում հայտնում է այն միտքը, որ հանդեսը պետք է շարունակի Սրվանձտյանցի, Տեկեյանցի ու մյուսների գործը ժողովրդական բանահյուսության հավաքման, մշակման ու հրատարակման գծով։ «Որքան դյուցազներգություններ, ողբերգություններ, վեպեր, հեքիաթներ, բալլադներ, «լիդեր» կը քնանան այդ ժողովրդական գանձարանին մեջ, սպասելով արվեստագետ մատներուն, որոնք պիտի գան զանոնք հանել իրենց նախնական միամիտ, մերկուբյուններ...»[2]։ Զոպանյանը այդ աշխատանքի համար լավագույն թեկնածու էր տեսնում Վ. Սվաճյանին և մի քանի համարներում հրապարակում է ժողովրդական բանահյուսության նրա մշակումները՝ «Հայգիրք» ընդհանուր խորագրով։ Տպագրվում են «Ոսոզ թագավորի սուրը», «Աստվածուհվույն լո-

---

[1] «Անահիտ», Թ տարի, 1908, թիվ 3—4—5, էջ 95։

[2] «Անահիտ», Ա տարի, 1898, թիվ 1, էջ 29։

գանքը», «Նարևկացին», «Աւ Անահիտ» և մի քանի ուրիշ գործեր։ Նվ, թեպետ Զոպանյանը վ. Սվաճյանին անվանում է հայկական Լըքոնտ դը Լիլ, այնուամենայնիվ, Սվաճյանին չի հաջողվում կենդանություն տալ այդ գործերին։ Կնվլական խրթնաբանությունների բանձր քողի հետևում շատ հաճախ կորչում է նույնիսկ ժողովրդի ներդրած պարզուկ գաղափարը։ Չխոսենք այլևս, որ Սվաճյանը շատ հեռու է այդ «ժողովրդական դանձարանին» «անոնց ներքին նշանակությունն ու խորհուրդը» «դուրս ցատկեցնելուց» և «զանոնք մինչև գիտակից ու հավիտենական բանաստեղծությունը» բարձրացնելուց, ինչպես սպասում էր Ա. Զոպանյանը։ Համեմատաբար հաջող է «Աստվածուհվույն լոգանքը» պատկերը, որը Զոպանյանը տեղադրել է նաև ֆրանսերեն լույս տեսած իր «Poemes Arménien encien et modern» հատորում։

վ. Սվաճյանը «Անահիտում» հանդես է եկել նաև ինքնուրույն գործերով, չափածո թե արձակ բանաստեղծություններով և պատմվածքներով։ Նրա ստեղծագործության լեյտմոտիվը հույսի և լույսի որևէ նշույլից զուրկ հոգու դեպերումն է ունայնության ու ձանձրույթի մեջ։ Սվաճյանի լիրիկական հերոսը ձգտում է մենության, միստիկական ինքնամփոփումի։ Թեև «Մենավորը» արձակ բանաստեղծության մեջ այդ ձգտումը դեռ ինչ-որ չափով հասարակական հնչեղություն ունի, սակա հանդեսում տպագրված գրեթե մյուս բոլոր գործերում դա հիվանդ ուղեղի տարամերժ գալարում է։ Նրա համար մութ ոուն է ոչ միայն աշխարհը, այլև իր իսկ հոգին, որ կանգնել է ունայնության եզրին. վաստահ, թե պիտի վերջին քայլն էլ անի, բայց դեռ, այնուամենայնիվ, տատամսում է («Մութ տունը»)։ Գերեզմանը, սակայն, խորհրդավոր ուժով քաշում է նրան («Արև ու մութ»), իսկ ադեալն էլ գլխավերևում սպասում է ինքնասպանի «ջերմ մահն» («Ադեալ»)։ Երիտասարդ է բնարական հերոսը, դեռ կյանքը բնավ չճաշակած, բայց մեռել են բոլոր հույսերը և իղձերը («Երեք Ճրագ»), որովհետև կյանքի պայքարում ոտքի է ոեցել գոնե ապատամբ վշտեր ժայթքելու, բայց խորհրդավոր հմայիչը թույլ և հեռու է դարձրել դրանք («Օձակոչը»), գեթ քամու դեմ մաքառելու, բայց մարել է նրա շնչից և ուշաթափ եղել («Քամին»)։ Այս համատարած ունայնությունը, սակայն, հաճախ արհեստական է, ուղեղից քամած, բոնահանգիրով մի կերպ իրար բերած։ Միակ լուսավոր կետը, որ մի պահ առկայծում է այդ խավարում, բուլղարուհի Մարայի պատմությունն է, որը կացինը ձեռքին համարձակվում

է պաշտպանել իր պատիվը Թուրք փաշայի տարփալեցուն տանձգությունից («Մարա»)։

Զապել Եսայանի գրական սկզբնավորությունը կապված է Զոպանյանի «Մաղիկ» և «Անահիտ» հանդեսների հետ[1]։ Նվ եթե «Մաղիկում» նա խոստումնալից դեբյուտանտ էր, ապա «Անահիտում» արդեն երևում է ստեղծագործական աճը ռեալիստ գրողի, որի առանձին հատվածներ, երբեմն, հասուն վարպետություն են վկայում։

«Կարմիր ջաղացքը» արձակ բանաստեղծությունը սիմվոլիկ պատկերն է ժամանակակից հասարակության, որի ամենակուլ երախում մարդկության սիրտն է ջրաղացքարի տակ աղվում, քամվում։ Բայց իր ահավորության մեջ գեղեցիկ կերտած այդ պատկերը իմաստից կզրկվեր, եթե Եսայանը չհասցներ վրձնի վերջին թանձր ու խոսուն հարվածը։ «Գերագույն հուզումով մը սարսափած, շուրջս կը նայեի, երբ տեսա անոր աչքերը, որ վերեն իրենց նայվածքով ջաղացքը կը վարեին»։ Սա շատ մոտիկ արձագանքն է Զոպանյանի «Պղտիկ գեղջուկին», և երկուսը միասին՝ արտահայտությունը կյանքի անգութ ու անարդար դրվածքի։ Նույն ասույածն է, որ վարում է այդ կարգն ու սարքը, այդ մարդակուլ «ջաղացքը»։ Ու թեպետ բողոքի հատուկ շեշտ չի դնում հեղինակը, բայց բացահայտ դատապարտությունը ակնհայտ է։

Բովանդակությամբ ցնցող և գաղափարով անհունորեն մարդասիրական է «Անձնասպան տղաքներ» պատմվածքը, որտեղ ժամանակակից հասարակության սոցիալ-բարոյական հիմքն է քննադատում հեղինակը։ Դպրոցում գոյություն ունեցող մանկավարժական վայրենի մեթոդները կոչված են կամազրկել, ստրացնել, հլու հնազանդ դարձնել մատաղ սերնդին։ Ըմբոստն ու ամբարիշտը, սեփական արժանապատվության զգացումով մարդը բնավ անհրաժեշտ չէ այն աշխարհին, որտեղ տիրում է դրամը։ Վարժապետը հետապնդում է փոքրիկ Զվարթին, որովհետև նա աշխույժ էր, չարաճճի ու անհնազանդ։ Մնողները ասում են. «Միսը ձեզի, ոսկորը մեզի»։ «Ալ անկե ետքը դպրոցի պաշտոնյաներուն համար գործ մը սկսավ դասարաններուն մեծ ձանձրույթը մոռնալու կամ իրենց թմրած հոգին ցնցելու համար, և ամենքն ալ որևէրիմ այդ պատիկ աղջկան, միացան միայն անոր

---

[1] Ավելի վաղ շրջանում Զապել Եսայանը մի քանի հոդվածներ է տպագրել Պոլսի մամուլում, դպրոցական-կրթական հարցերի շուրջ։

ոսկորը դարձնելու ծնողքին»։ Բայց Զվարթը չի հանձնվում։ Մնծը և չարչարանքները ավելի են գրգռում նրա ապստամբ ոգին։ Վարժապետը պահանջում է «մեղա» ասել, իսկ նա նյարդային ծիծաղով է դիմավորում։ «Այն աստեն, վարժապետը, տեսնելով որ ոչ մեկ բան կարող պիտի չըլլար այդ խեղճ աղջիկը իր ոտքերուն ներքև ընկճելու», կապում է նրա ձեռքերն ու ոտքերը և պահանջում երեխաներից թքել նրա վրա։ Երեխաները չեն հնազանդվում, ինքն է կատարում այդ սոսկությունը։ Զվարթը մնում է մի քանի օր անց, ուղղի տենդից։

«Վատ, վատ մարդիկներ, այն օրը հանդիսավոր կերպով օրինակը կուտային իրենց խնամքին հանձնված բոլոր այդ պստիկներուն՝ աշխարհիս ամենեն անարգը, ամենեն ցածրը ըլլալու»,— զայրույթով եզրակացնում է դրողը։ Նազյանը, այս պատմվածքով, իրոք ապացուցում է, որ նա գրականությունը ձգտում էր դիտել իբրև զենք «անարդար բաներու» դեմ պայքարելու համար։

Համեմատաբար ավելի թույլ են «Մահը» և «Նաշմաքը» պատմվածքները։ Առաջինը պարզապես մղձավանջի ու միստիկականի խառնուրդ է, որտեղ հերոսի ողբերգությունը չի պայմանավորված սոցիալ-հասարակական իրականությունով։ «Նաշմաքի» հերոսը թեպետ զոհն է տիրող հասարակական կարգի, բայց յուրատեսակ հակատիպարն է Զվարթին։ Նա ոչ մի քայլ չի անում իր մաքուր սիրը գտնելու, պաշտպանելու ուղղությամբ, նահատակվում է, բացարձակապես առանց պայքարի փորձի իսկ փորձ անելու։

«Ծաղիկի» 1895 թվականի թիվ 4-ում Ռուբեն Զարդարյանը տպագրեց իր հեքիաթներից առաջինը։ «Հեքիաթ» խորագրով այդ գործը թե ավանդավեպի մշակում էր և թե՝ կյանքի վրա խորհող փիլիսոփայի նոթ։ Հեքիաթային այդ «օբյեկտիվի» և հեղինակի «սուբյեկտիվի» միախառնումը բնութագրական է Ռ. Զարդարյանի այդ ժանրով գրված հետագա գործերի համար, որոնք տպագրվեցին «Ծաղիկում» և «Անահիտում» (հին և նոր շրջաններում)։ Որքան հուզիչ ու դեղեցիկ է հեքիաթային տարրը, որ առավելապես հյուսված է մարդկային կյանքի և բնության իրար շաղկապող թելերից, իսկ մերթ ընդ մերթ սոցիալական իրականության հենքի վրա, նույնքան խոր են հեղինակային ընդհանրացումները։ Զոպանյանի հանդիսաններում տպագրված այդ շարքի մեջ կատարյալ հրաշակերտ է «Ճախարակին քնքշվածը», որի մասին «Անահիտի» համբագրատուն իրավացիորեն գրում է. «Իր

(Ռ. Զարդարյանի) և հայ գրականության ամենեն հրաշալի էջերին մեկն է»[1]:

Սոցիալական Քշվառության գործած ավերածության վերջին բնկորի, դեղջուկ պառավի պատմությունն է դա, և միևնույն ժամանակ հայ գյուղացու ամբողջական կյանքի պատմությունը, որ մանվում է հինավուրց ճախարակի վրա: Անվերջանալի է թվում պատմության այդ թելը, բայց քուլա-քուլա սպառվում է բամբակը, բարակում, անընդհատ բարակում է դևրձանը, ջահրայի կրծքից ու հոգուց ելնող ողբաձայն երգի ուղեկցությամբ: Մի ժամանակ լեցուն էր այս տունը, մահը տարավ բոլորին, այժմ «կիսակործան օջախն» է մնում: Ինչո՞ւ չի գալիս այդ Մահը, որպեսզի խաղաղեցնի նաև պառավի հոգին, տանի վշտերից ամքած բնկորը: Բայց մոտ է: Շուտով «իր թելը հատած պիտի ըլլա, թևև ջահրայինը՝ կիսավարտ»:

Այս հրաշալի վերջաբանով Զարդարյանը բալմակետ է դնում, չուղենալով գուշակել, թե երբ և ինչպես պետք է ավարտվի ջահրայի թելը, կամ գուցե առհասարակ պիտի չավարտվի՞:

Ծովինէրքի մամռապատ ժայռերը խոկում են ձանձրույթը կյանքի: Այդ ժայռերի միջև պատսպարված մերկ պատուհաննեռով խրճիթը խոկում է ոչնչությունը կյանքի: Պատուհաններից մեկի մեջ նստած աղջիկն էլ խոկում է առանձնությունը կյանքի: («Ծովինէրքին վրա»):

Այս շնչով գրական աստպարեզ ոտք դրեց Վահան Թեքեյանը «Ծաղիկ» հանդեսում: Նոր չէր բույրը, նրանից առաջ էլ պոլսական մամուլում հնչում էին այդ լարերը՝ հնռավոր արձագանքելով ֆրանսիական «դեկադանսին»: Վ. Թեքեյանը քայլից ծանոթ ճանապարհով: Եվ «Ջութակը» արձակ քերթվածը զգացմունքների նրբացման կատարելության էր հասցված արցունք քամելու աստիճան ու հիշեցնում էր Բոդլերին, ոչ միայն ձևով, այլև տրամադրությամբ ու նույնիսկ թեմայով:

Եվ ահա հինգ տարի անց «Անահիտում» երևում է արդեն սեփական ոտքերի վրա կանգնելու փորձ անող Թեքեյանը: Հանդեսում լույս տեսած առաջին իսկ գործերից մեկը՝ «Տունս» արձակ քերթվածը, կարծես կամուրջ է նետում դեպի «Ծաղիկի» «Ծովինէրքին վրա» երկը, ասելու համար, թե այո՛, պատանեկան տագնապը անհայտության առջև դեռ տանջում է իր հոգին, բայց

[1] «Անահիտ», ԺԲ տարի, 1911, թիվ 9—12, էջ 223:

մի բան նրան արդեն պարզ է. բանաստեղծը վերապրել է ազգային ողբերգությունը, և այլևս ձանձրույթի և ունայնության վրա խոկումի թանձր մառախուղը հաճախ պատռվում է երիտասարդական պոռթկումի վայրկենական փայլատակումով: Տունը կանգնած է երկու մթին անտառների մեջ: Հետդարձի ճանապարհ չկա: Քնարական հերոսը ճանաչում է տան հետևում գտնվող անտառը, գիտի նրա «թանձրահոծ մթությունները ու շատ թունավոր տունկերը»: Իսկ առջևում անծանոթ ու գահավիժող արահետներ են նույնքան մռայլ ուրիշ անտառում: Իսկ ո՞րն է ելքը: Այդ տունը հիմքից օդը թոցնելն է, քանի դեռ ուշ չէ, քանի դեռ մարդը չի իջել ավելի վար:

Անորոշ է այդ փայլատակումը, բայց արդեն իսկ ընդվզումի ոգի է պարունակում, բողոք է պոյուքյուն ունեցող «Տան», այսինքն՝ կյանքի կարգ ու սարքի դեմ: «Խարույկը» պատմվածքը նույնպես արտացոլում է այդ ընդվզումն ու բողոքը, բայց արդեն շեշտված լավատեսական շնչով իր ժողովրդի ապագայի նկատմամբ. «Գնա և ըսե, որ չհուսահատին, քանի որ ես չեմ մարած»:

«Անահիտում» տպագրված Թևքևյանի համար բնորոշ են երիտասարդական պոռթկումների այդ վնասվտումները, որոնց թեման և տրամադրությունը անմիջական արձագանքներ են հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կացության: Սիմվոլիզմը, որին առաջին հարողներից մեկն էր Թևքևյանը Ինտրայի հետ միասին, զգացումների իր նուրբ ստեղծագործության համար, աննկատելի հնավից միայն կարող էր դիտել պայքարի կոչերը.

«Ուղեցի զքեզ սեգ ու անընտել.
Ուղեցի մաղերդ օվկիանին խաժ
Ալիքներուն պես ձեռքիս տակ դղվել.
Ուղեցի բազուկդ հզոր ու վարժ
Ուղեցի անզուսպ քեզ իրրև կորյուն,
Իմ փափաքներս, ցասումես ծընած,
Որպեսզի գոչիմ սրտովս «Հաղթություն»,
Երբոր Բարիափին աչքերս հոգնած»:

(«Ջավախս»)

Կամ ուշադրություն դարձնենք այս կտորին.

«... կը դարբնեմ սուրեր
Անթիվ, անհամար, և ամեն ձեռքի
Մեջ հատ մ'անոնցմե երբոր կը ծագի՝

Կը մղեմ բանակս, ինձմով անվեհեր,
Լեռն ի վեր հսկա հաղթանակներուն»։

(«Քաջություն»)

1901 թվականին լույս է տեսնում Թեքեյանի «Հոգեր» հատորը, որի մեջ «Ծաղիկում» և «Անահիտում» տպագրված գործերից միայն փոքր մասն է տեղ գտել։ Արդեն «Ջավախս», «Քաջությյուն», «Կատարշավը», «Գերեզմանը» ավելի ուշ են տպագրվել «Անահիտում», ըստ էության Թեքեյանի բանաստեղծական ուղու նոր հանգրվանը կազմելով։

Զոպանյանը դրախոսական է տպագրում «Հոգերի» առթիվ, որը հետագայում մտցնում է իր «Դիմքեր» աշխատության Բ հատորի մեջ։ Սրամիտ և խորիմաստ գնահատականով նա Թեքեյանի սկզբնավորության շրջանի գործերը համարում է մի պարտեզ, որտեղ աճողը «խրոխտաձիգ ծաղիկներ չեն, որ կը ժայթքեն ցողալից ու հարուստ հողե մը», այլ խորհրդապահ ու փափուկ նուրբ ծաղիկներ։ Այդ ծաղիկների սերմը բխում է սրտից և ոռոգվում բանականությամբ։ Իսկ բանաստեղծն էլ «ֆրակ հագած պարտիզպան մըն է»[1]։

Իրավացի էր Զոպանյանը՝ այդ գնահատականը տալով Թեքեյանի առաջին ժողովածուին։ Հենց ինքն էլ հոդվածի վերջում նշում է, որ Թեքեյանը կանգնած է նոր թռիչքի առջև։ «Անահիտում» հանդես եկող Թեքեյանը պահպանում է և «փափուկ ծաղիկները», և արդեն նրա պարտեզում երևում են «խրոխտաձիգ ծաղիկներ»։ Պատանեկան հոդու հարազատ ղպացմունքները արտահայտող, դեռևս վախվորիկ ու անպատասխան սիրո թախծաշատ այլևս ջերմ տողերին («Իրիկուն», «Հիշատակ») հետևում են պայքարի կոչող առնական աղաղակները. գերեզմանը կլանել է հայրենի քաջերին, արքայորդին կանգնած է նրա նեղին խոժոռադեմ, սևեռն իսկ նրան վերահաս կործանման ռումբ է թվում, ու կանչում է բանաստեղծը.

«Արքայորդի՛, օ՛ն, թոթվի թախիծդ վատ, եսական,
Նզևրամարը Թող հնձեն ու Թող դանձեր բյուրագին
Բաղվին իր հետ ու ըլլան զոհարերումն իր փառքին։
Դեռ Թաց աչքեր համբարձիկ հույսով քեզի տես կուգան
Փնտրել սուր մ'աջիդ մեջ.... Շողացուր զայն'վ եւևեդ
Վայրացուր ամբոխը և տար նոր ափունքներ արիավետ»։

(«Գերեզման»)։

---

[1] *Ա. Զոպանյան, Դեմքեր, Փարիզ, 1929, էջ 91։*

1904—1905 թվականներին «Անահիտում» սիստեմատիկաբար տպագրվում է բանաստեղծ Վահան Մալեզյանը: Բանաստեղծի քնարական հերոսը ճոճվում է տենդատվության և մակընթացության նույն ալիքների վրա, ինչպես «Անահիտում» հանդես եկող բանաստեղծների մի մասը, որովհետև նրանց քնարական արտադրանքի կոչողը կյանքի նույն երևույթն է եղել: Եվ, թևակոխ դեռ իրթին է ոճը, նրա տողերից լսվում է սոցիալական անարդարության դեմ անընդհատ աճող բողոքը: Հանրատան կնոջը բոլորը դատապարտում են, բայց

«Եվ հանցանքը ի՞րն է արդյոք, եթե բիրտ
Օրենքները ընկերության անարդար
Չգնցին, որ իյնա այդ կինն, և իր սիրտ
Խաղ ըլլա քմայքներու վատարար»,

(«Ցոհեր»)

Իսկ եթե՞ այդ կինը պարզ զոհ է լրված սիրո, որին ինքը հավատում էր ամենօրյան, եթե՞, ավելին, ցոփության հոսանքից քշվել է անօգնական ու չքավոր հարազատներին օգտակար լինելու համար.

«Հանցավորը ո՞վ է արդյոք, մե՞նք թե անո»

Հարցեր են սրանք, որոնք պատասխանի կարիք չեն զգում: Բանաստեղծի հոգին չի հաշտվում դոյության ունեցող հասարակական հարաբերություններում տիրող սխտի հետ, որն ստիպում է երիտասարդ կանանց վաճառել իրենց մարմինը, կամ թե, ավելի վատթարը, ևևեղեցուն նվիրաբերել հոգին ու մարմինը համատեղ: Նա դառնացած է կուսանոցներ մտած երիտասարդ աղջիկների համար, որոնք «աղքատության կամ սիրո վատ պատրանքի» զոհերն են և կուսանոց մտնելու ուխտ են արել, «ինչ որ Աստված իսկ մեզք սիտի սեպե»:

Բանաստեղծի հայացքը, սակայն, առհում է սոցիալական կյանքի դառնությունների մակերևույթ, նա տեսնում է այնտեղ բազմաթիվ տառապողներ՝ «ջլախտիկներ», «հոգին թոքախտավորներ», «մխտիկներ», «սուրուկներ», «սինիկներ ալ», որ օրը օրին շատանում են, «ձանձրացածներ», «փոքրեր», և դրանց բոլորի հետ նաև իր սիրտը, բոլորը, ամբողջ աշխարհը.

«Միևնույն տառապանքը կը հերկեն,
Չի հասկնալեն իրար»

(«Անավասիկ»)

«Ինչո՞ւ» հարցը արդեն չի էլ դրվում: Ինչո՞ւ չեն հասկանում իրար: Ինչո՞ւ բանաստեղծի քնարական հերոսը չի հասկանում տառապողներին: Ո՞րն է պատճառը: Այդ հարցը, ըստ էության, համարվում է անճանաչելի, անիմանալի, և քննության չի դրվում: Լավագույն դեպքում ընդհանուր ակնարկ է արվում «անարդար ընկերության բիրտ օրենքներին» («Զոհեր»):

Այսօրվա հասարակական հարաբերությունների անճանաչելիությունը բնականաբար ծնունդ է տալիս վաղվա անիմանալիության, անստույգության: Վաղը «գեշ անակնկալն է, և դատարկին մեջ նայող նայվածք մը սուտ» («Վաղը»):

Բանաստեղծ Ահարոն Տատուրյանի «Անահիտում» տպագրած առաջին քերթվածը, որ «Իդեալը» տիտղոսն է կրում, արդեն բավականին հասուն և ջղուտ գրչի արգասիք է: Պետք է նկատի ունենալ, որ Սիամանթոն էր արդեն բարձրացել երկնակամարում և վարուժանն էր պայքարի մետաղյա քնարը ղարկում: Ա. Տատուրյանի պոեզիան ինչ-որ չափով պայմանավորված էր իր մեծ ժամանակակիցների բացած լայնահուն ճանապարհի ուղղությամբ: Նրա քնարից հնչում են վերնելքի մոտիվներ:

«Համբուրի սա հողը կարմիր պապերուդ
Եվ երդնուդ շնիորով
Անոնց ոգին արթնցուր
Վրեժիդ վրա հերոսորեն հոս ընկիր...»

Նրա քնարական հերոսի հոդում կսկիծը երգի է փոխվել, վերքերը վարդ են բուրում, իսկ փոշեթաթախ արահետները ջրաղաց տանող բանուկ ճանապարհի պես ժպտում են: Ահա թե ինչու՝

«Երբեք պիտի չը վախեմ
Կայծակն ինծի նետ ըրած
Ծովը գետնին դամնու...»

(«Իդեալը»)

Աշխարհում տիրող կարգ ու սարքից դառնացած, սոսկական բողոքող չէ Ահարոնի հերոսը: Զոպանյանի «Մթին դեմքի» և «Պզտիկ գեղջուկի» նման, սա էլ ձգտում է քանդել աշխարհը.

«Հանեմ սուրդ, ով ընկեր, շողշող կամարդ
Եվ նետեմ զայն վերեն անհունի գաղտնիքին՝
Շանթովն անոր այրելու տունն Աստվածին...»

(«Դյուզակները»)

Բանաստեղծն ընդվզել է երկնքում և երկրում տիրողների դեմ, նա եկել է շանթերով այրելու և հովերին ցրելու իշվառությունը, նա «հերոսորեն պաշտելի հայհոյանք» է շարտում պալատին, ինի դա մեծահարուստի թե իշխանավորի պալատ:

Ահարոն Տատուրյանի «Անոթինները» մի փոքրիկ հրաշակերտ է, ողբերգական մի քնարված, որտեղ գեղարվեստական պատկերը իր ուժով չի զիջում գեղեցիկ մտահղացմանը, և դաղափարի ցոլքերը նույնքան գեղեցիկ են, որքան պարզ ու վճիտ, բարեհընչյուն տողերի շարքերը:

Գյուղից երեք օրվա հեռավորությամբ, գործարանն է: Գյուղի երիտասարդները, մի կտոր հացի և վարձու համար փայփայած սին երազների իրականացման հույսով, գործարան են գնում: Մայրը մի օր զիմում է որդուն, թե չի կարող այլևս օրվա հացը վաստակել և թե առավոտյան որդին, իր ավազ եղբայրների նման, պիտի գնա գործարան: Գնում է որդին, ամեն քայլին ետ նայելով ու արցունքի միջից նշմարելով դպրոցը: Ուղևիցը, ավելի տարից մի մարդ, խնդալով ասում է, «թե օր մը ինք և ես շատ մեծահարուստ պիտ ըլլանք»...

Այս դառը հեգնախառն դուշակությունը, որը ավելի շուտ հակատակ իմաստն է պարունակում, գեղջուկի փիլիսոփայական մտածումների իտացումն է, ազատկությունը՝ իրենց դատապարտվածության, և ոգու արիությունը՝ հեգնանքով նշելու այդ: **Գործարանում**

> *«Ջորս անգամ մեր կյանքին անիվն էր դարձել*
> *Իր հետ փաթթած թևերն ոսկի, ապրշում,*
> *Թևերն արծաթ, ծիրանի*
> *Մեր գունագեղ հույսերուն...»*

Հույսերը գունագեղ էին, բայց անիրականալի: Որդին, ընդմիշտ կորցնելով իր ավազ եղբայրներին, տուն է վերադառնում ձմեռ օրով, գործարանից դուրս նետված իր թոքախտի պատճառով: Ինչ հրաշալի պատկերով է նկարում բանաստեղծը գունագեղ ու թափանցիկ հույսերի կորուստը.

> *«Եվ կը դգամ, մայր իմ, կը դգամ,*
> *Որ աչքիս վար կը կաթին*
> *Պերճ երազներս աստղ առ աստղ...»*

Որդին ոչինչ չի վաստակել: Քրտնքի գինը հազիվ պարտքերն է փակել: Երեք օր ձյան տակ ճանապարհ է նկել, մրսել ու քաղ-

ցել և այժմ մորից մի պատառ հաց է ուզում։ Վշտահար մայրը, որ լսում է երկու զավակների կորստյան բոթը, երրորդին էլ տեսնում է մահամերձ և, շանթահար, իր վշտի աղաղակն է բարձրացնում երկնքի դեմ.

«Մարմինս այս ազազուն
Սին չառնես, ո՛վ երկինք,
Պատառ-պատառ ագռավներուն պիտ նետեմ,
Պիտի հոգիս իսկ վնտռտեմ, որ չը գա
Վայրել բարիրդ անօրեն...»

Եվ հետո՝

«Երկինքը զուր պաշտեցի...»

Խտանում են գույները աստիճանաբար, անընդհատ և ահագնանում, մռայլվում ու, կարծես ամպրոպ, պայթում է բանաստեղծի ողբույթը... Բայց Թողնենք, որ ինքը խոսի.

«Ահա ծիծերս, ըսավ, քամե, ով զավակս,
Երկու ձեռքով քամե զանոնք, և ծծեմ
Արյան կաթիլը վերջին...
Կուրծքս իմ գթած է, քան երկինքը վերի...
Ծծեմ, ծծեմ, սիրտս ծեր...
Տղաս, չկա, հա՛ց չկա...»

Քանը դեռ չբոլորած երիտասարդ Ատոմ Եարճանյանի հետ Արշակ Չոպանյանը ծանոթանում է 1897 թվականին, երբ բանաստեղծական սրտատումների համար Վիեննա ուղևորվելու ճանապարհին երկու շաբաթով կանգ է առնում Ժնևում։ «Առաջին րոպենն սիրեցի այդ խանդավառ խառնվածքը, գուշակեցի իր մեջ հրաբորբոք բանաստեղծը, որ հոն կար թաքուն, իրեն մատնանիշ ըրի Վերհառնը, Մեսեռլինգը, Հանրի դե Ռեննիեին՝ խորհրդապաշտ շարժման մեծ քերթողները, որ կրնային ըլլալ և եղան իրեն համար լավագույն առաջնորդներ»։ Ինքնագովասանություն չէ Չոպանյանի հայտարարությունը, թե գուշակել է Ատոմի մեջ «հրաբորբոք բանաստեղծը»։ Իրոք, Չոպանյանը իր առաջնային պարտականությունն էր համարում «գուշակել», տեղ տալ, առաջ քաշել երիտասարդ տաղանդներին և ուներ հրաշալի ինտուիցիա, որը հիմնվում էր նրա բարձր ճաշակի և փիլիսոփայական վիթխարի պաշարի վրա։ Սիամանթոյի դեպքում էլ Չոպանյանը անմիջապես կողմնորոշվում է, իր բարեկամությունն առաջարկելով նրան

և «Անահիտ» էջերը տրամադրելով սկսնակ բանաստեղծի առաջին գործերին։ «Երբ Հետո Փարիզ եկավ ու մնաց քանի մը տարի, իմ ամենեն սիրելի երիտասարդ մտավորական բարեկամներես մին դարձավ ան,— շարունակում է Զոպանյանը,— և անոր առաջին բերթվածներեն լավագուններուն մեկ ամբողջ շարքը «Անահիտի» մեջ է որ երևցավ»[1]։

Հանդեսի առաջին երկու տարեշրջաններում Նարճանյանը հրատարակում է հինգ քերթված[2] և երկու արձակ էջեր։ Սկի բանաստեղծի հետագայում նվաճած բարձունքից դիտենք, ապա, բնական է, որ այդ առաջին գործերը համեմատաբար ավելի շատ թերություններ պարունակեին։ Առաջին ընթերցումից պարզապես անմատչելի խրթնաբանությամբ, սիմվոլների առատությամբ, դույների մոայլությամբ են շնչում դրանք։ Բայց եթե անգիտանանք այն, ինչ դեռ միայն գալիքը պիտի որոշեր, ապա զարմանալի լայնության և խորության ընդգրկումը անմիջապես տարանջատում է երիտասարդ բանաստեղծին ժամանակի, թեկուզև հենց «Անահիտի» էջերում հանդես եկող բոլոր բանաստեղծներից։ Էպիկական շունչը և ամբողջ աշխարհն իր սրտում ընդգրկելու հավակնությունը շեշտում են Նարճանյանի տարբերությունը անհատական «ես»-ի պատուհաններից հաղիվ ու վախվորիկ դուրս նայող իր շատ ժամանակակիցներից։

Այո՛, նույն մոայլ ու հուսաբեկ շեշտերը, դեռևմանոցային պատկերներն են բանաստեղծական տպավորության հիմքում, բայց Նարճանյանը ամբողջ աշխարհին է նայում իր հոգու լուսամուտներից («Հանդիստի իրիկուն», «Հոգևվարքի իրիկուն») և թվում է, թե քերթվածների անները որևէ անմիջական կապ չունեն

---

[1] «Անահիտ», նոր շրջան, ԺԱ տարի, 1940, թիվ 5—6, էջ 22։ Մինչ «Անահիտում» երևալը Սիամանթոն ստրոֆն տպագրվել էր Սուրեն Պարթևյանի «Վաղվան ծայները» հանդեսում, 1898 թվականին։

[2] Հր. Թամրազյանը իր «Սիամանթո» (Երևան, 1964) աշխատության 64-րդ էջի ծանոթագրության մեջ նշում է, թե 1898—1900 թվականներին գրված «Հանդիստի իրիկուն», «Մահերգ», «Հոգևվարքի իրիկուն» բանաստեղծությունները առաջին անգամ տպագրվել են «Ամրողջական գործի» մեջ։ Այդ բանաստեղծությունները տպագրվել են «Անահիտ» հանդեսում. Ա տարի, 1899, թիվ 12, էջ 370, էջ 371 և Բ տարի 1900, թիվ 1, էջ 13։ Այնուհետև, նույն ծանոթագրության մեջ այն միտքն է հայտնվում, թե «Որբերը» գրվել է 1907-ից հետո։ «Որբերը» բանաստեղծությունը ևս գրված է եղել վաղ շրջանում և տպագրվել է «Անահիտի» Բ տարվա 1900, թիվ 3-ում (էջ 59), «Մեռելոցի հաճախանքը» ընդհանուր խորագրի տակ։

իրար հետ, կյանքի այնքան տարբեր ու բազմազան վիճակներն արտացոլող, սակայն, մի ներքին զաղափարի ու տրամադրության թել ուժեղ հանգուցում է դրանք: Փույթ չէ, թե հանգուցվողը տաուսպանքն է, փույթ չէ, որ այս սկսնակ բանաստեղծն էլ պատրաստվում է նավարկելու դեպի հավիտենական Հանգիստը: Սրդեն «տաուսպանքն» ու «հանդիստը» տիրապետող շեշտերն էին ժամանակի պոեզիայի (և ոչ միայն հայկական), ու զարմանալի չէ, որ երիտասարդ բանաստեղծն էլ սկսեր դրանից:

«Ու այն լամբարը, որով Ցնորքը կը հսկենք մեր կտավե վրանին տակ,
Ահավասիկ բնդի կըսեմ, Արշալույսեն դեռ շատ առաջ պիտի մարի...
Օ՜ քանդ քեզ անցուր ու խարխափելին քալե,
Ո՜վ ծանր ու դանդաղ ու հոգնած ուխտավոր.
Որովհետև վաղորդայնը անդթորեն սուտ է...»

(«Հոգնություն»)

Գլխավորը և տարբերիչը, սակայն, ընդգրկումի զանգվածայնությունն է, մի բան, որ արդեն իսկ հասարակական պահանջ էր դարձել: Ահա մի օրինակ. բանաստեղծի հոգու «անդնդային մեռելաստանին» այցի են նկել որբերը քարավան առ քարավան՝ անհունորեն երկար, և որոնում են իրենց հարազատներին.

«Աստված, մտիկ ըրեք սա ընդհարումները մարմիններու,
Ու բոլոր որբերը որ ալ կը փաթթվին
Փոխադրվորեն դերեզմաններեն բարձրացող ամեհի կմախքներուն...
Ու այն բոլորին ձիշերը, որ իրար կճանչնան...
Ու անոնցը, որ խենթորեն իրար կը փնտրեն...
Ու դեռ իրարու նայէ
Բացվող հոգներու մրրկումը ատոնց հետ,
Ու անոնց ալիքը, որ դեռ իրար կուլեն...
Ու երդումները անոնց, որ ալ իրար պիտի պաշտեն առհավետ...
Ու անոնք, որ իրար երբեք չճանչցան...
Ու դեռ անոնք, որ մեկմեկու մեջ ինքզինքնին պիտի գտնեին...
Ու անոնք, որ վերջապես այս դիշեր, այնչափ չարաշուքորեն իրարու բախեցան
Ու փախուստը անոնց, այս ամենուն, այս բոլորին,
Իրարու մեջ, մահագուժորեն վայրագ ու խոլական,
Դեպի ո՞ր հեռավոր հորիզոններն իմ հոգիին
Ու դեպի ո՞ր Աստվածը ներևս ալեկի ոճրականց...

(«Որբերը»)

Մի ամբողջ ժողովրդի ողբերգության այս վիճակարի պատկերի մեջ յուրաքանչյուր տողը գծում է աղետի տարբեր կողմերը (մեկյանց կորցրած հարազատներ, զավակներ, որ ծնողներին

չեն հասցրել ճանաչել, սիրահարներ, որ միմյանց դառնալու հնարավորություն չեն ունեցել և այլն) և միևնույն ժամանակ այդ հավաքականության որբությունը շեշտակի ընդհանրացնում։ Սիամանթոյից առաջ ոչ մի բանաստեղծ կամ արձակագիր այդպիսի ուժով չէր պատկերել հայ ժողովրդի առաջին եղեռնը։

Շահեկան են նաև Սիամանթոյի արձակ էջերը, որոնք կրում են «Փարիզյան նոթեր» ընդհանուր խորագիրը։ Գիշերային և տոնական քաղաքի նկարագրություններ են դրանք՝ կատարված տաղանդավոր դիտողականությամբ։ Ահավոր է գիշերային Փարիզը, որի փողոցներով իրենց սայլակի հետ կյանքի մշտական ծանր լուծն են քաշում մերձակա գյուղացիները, առավոտյան շուկայում օրվա հացի դրամը վաստակելու համար, այդ փողոցները լեցուն են զանազան ընչազուրկներով ու թափառաշրջիկներով։ Նույնքան ահավոր է տոնական քաղաքը, երբ ունևոր դասն է փողոցի տերը։ Սիամանթոյի գրչի տակ փարիզյան ունևոր հասարակությունը խնկազար մի ամբոխ է, որ «պաբապի մեջ մահազուժ» պարում է։ «Դևպի ո՞ր անծանոթ քայքայումը կը քալեն», բազմանշանակ հարց է տալիս հեղինակը։

Սիամանթոն, սակայն, «Անահիտի» էջերից առավել լրիվ ներկայանում է Զոպանյանի գրադատական հոդվածներով։ 1901 թվականին լույս է տեսնում Սիամանթոյի «Դյուցազնորեն» ժողովածուն, և Զոպանյանը, առաջիններից մեկը, գրախոսում է այն իր հանդեսի էջերում։ Նա խորաթափանցությամբ տեսնում է այն նորը, որ բերում էր Սիամանթոն իր երախայրիքի մեջ։ «Նարճանյան հավաքական զգացմանց թարգմանը կը հանդիսանա և պայքարին նվագը կը թնդացնե,— գրում է նա...— Նարճանյան առնական խիզախության փողհարն է և իր ձևը կը շտապե դևպի վերջնական նորությունը, դևպի բացարձակ անսանձությունը»[1]։ Զոպանյանը նշում է, որ մամուլում հրատարակված գործերում Նարճանյանը դեռևս պահպանում էր Վերհառնի ու Մետերլինկի խոշոր ազդեցությունը, բայց արդեն հատորի մեջ այդ ազդեցությունը մնացել է ձևի վրա, իսկ բանաստեղծի նկարչությունը բացարձակապես ինքնատիպ է։ Մանրամասնորեն բնութագրելով բոլոր յոթ քերթվածները և վերհանելով նրանց գաղափարական ընդհանրությունը, Զոպանյանը գրում է. «Դյուցազնորենը» ամենեն

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 3, էջ 50։

հզոր տեսիլքներուն մին է, զոր հայ միտք մը հղացած ու պղնձի մեջ քանդակած ըլլա»[1]:

Այս ամենի հետ միասին Զոպանյանն օգնում է երիտասարդ բանաստեղծին՝ ավելի կատարելագործելու արվեստը, նշելով մի շարք թերություններ, «նաև տեղ-տեղ տափակություններ կամ բոնապրոսություններ»: Այնուհետև Զոպանյանը գտնում է, թե Սիամանթոյի գործում պատկերի և իրականության խիստ անհամապատասխանություն կա: Գրականագետ Հր. Թամրազյանը մանրամասն անդրադարձել է այդ հարցին իր «Սիամանթո» աշխատության մեջ և իրավացիորեն նկատել, որ ռոմանտիկ բանաստեղծ Սիամանթոն «խոսում էր ոչ այնքան անցյալի ու ներկայի, որքան գալիքի մասին»[2]:

1907 թվականին, անդրադառնալով Սիամանթոյի «Հոգևարքի և հույսի ջահեր» ժողովածուին, Զոպանյանն արդեն չի խոսում պատկերի և իրականության անհամաձայնության մասին, թեպետ նույն ուժգնությամբ գնահատում է որոտացող դյուցազնական ոգեմերգը, որը նա համարում է բանաստեղծի քնարի «գերագույն երգը»: Դրա փոխարեն Զոպանյանը նկատում է, թե Սիամանթոն «անխառնորեն ռոմանթիկ է, իրմե ավելի ռոմանթիկ բանաստեղծ չենք ունեցած, նույն իսկ անոնց մեջ, որ պատմականորեն «ռոմանթիկ» կոչված շրջանի մեջ ապրած են»[3]:

Սիամանթոյի գործին նվիրված այս գրադատական հոդվածներում մեկից ավելի շահեկան կետեր կան: Նախ որ Զոպանյանը խորիմաստ ու արդարացի գնահատումով մատնացույց էր անում Սիամանթոյի իրական արժանիքը, շատ բարձր տեղ վերապահելով նրան մեր գրականության մեջ: Պատահական չեն Սիամանթոյի մոր՝ Նազենի Սարճանյանի մահվան առիթով գրված նրա այս տողերը. «Մեր ազգը անոր հավետ երախտապետ պիտի մնա իրեն պարգևած ըլլալուն համար Ատոմին պես հզոր ու հուզիչ քերթող մը, որ հայ դյուցազնական ոգեբերության ամենեն խոր-տնկ ու ինքնատիպ երգիչներեն մին հանդիսացավ»[4]: *Ապա, այդ գրադատականները հատկանշական են Զոպանյանին իսկ բնութագրելու տեսակետից: «Անահիտի» խմբագրապետը չի թաքցը-*

---

[1] *«Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 3, էջ 53:*

[2] *Հրաչ Թամրազյան, Սիամանթո, Երևան, 1964, էջ 42:*

[3] *«Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 3—5, էջ 89:*

[4] *«Անահիտ», նոր շրջան, ԺԱ տարի, 1940, թիվ 5—6, էջ 22:*

նում իր հուշմունքը և հիացմունքը Սիամանթոյի մարտական ոգու առթիվ։ Նա գրում է. «Հոյակապ էջեր են այդ շարքին մեջ «նավարը», ուր երգիչ-մարտիկը, կարծելով մահը մոտալուտ, դինակցի մը կը հանձնե, իր հրաժեշտի խոսքերուն հետ, իր վերարկուն, իր ցուպը, խաղողի ողկույզն ու հացը՝ հայրենի հողեն բուսած, ու քնարը ու սուրը,— «ես երգելով կուղամ մեռնիլը», ուր զինվոր մը, երթալե առաջ նետվիլ կովին մութ ու փառավոր խորհուրդին մեջ, երգ մը կը հայցե սուրը պայքարը երգող բանաստեղծենն և, մանավանդ, «Սուրիա կայծկլտուն առջեը»՝ խորհուրդ փառաբանության մի անարդարության վրեժխնդիր Սուրինն»[1]։ Զոպանյանը հատորի ամենահզոր էջն է համարում «Ասպետին երգը», նրա բոցացայտության, հողմասլացության համար։

Այսպիսով, ոչ թե տեսության ոլորտներում, այլ գործնականում տեղի է ունենում դիրքերի ճշտում. Զոպանյանը հանդես է գալիս նպատակասլաց, առնվնցիող պոեզիայի պաշտպանությամբ ու ջատագովությամբ։ Մնում է ավելացնել, որ Զոպանյանը նաև քաղաքական հայացքների բնագավառում հանձին Սիամանթոյի գտել էր իր համախոհին։ Տարիներ հետո նա վերհիշում է դաշնակցության և երիտասարդ Թուրքերի համաձայնության իր քննադատությունը և այդ առթիվ հայտնում, որ թե Սիամանթոն և թե Վարուժանը 1908 թվականին համախոհ էին «Անահիտի» դիրքին ընդդեմ դաշնակցության[2]։

Դանիել Վարուժանը «Անահիտում» ամենից հաճախ տպագրված բանաստեղծներից մեկն է եղել։ 1905 թվականից մինչև 1911 թվականը հանդեսի էջերը պարբերաբար տրամադրվել են նրա բանաստեղծություններին։ Միևնույն ժամանակ Դանիել Վարուժանի օրինակով ամենից ավելի դյուրին կարելի է բացահայտել Զոպանյանի հոգատար վերաբերմունքը ստեղծագործական երիտասարդ սերնդի վերհանման և աճի նկատմամբ։

1905 թվականի վերջերին Վարուժանը «Անահիտին» ուղարկում է իր «Հայ բժիշկը» քերթվածը և Զոպանյանից կարծիք է հարցնում, թե արդյոք իր տողերը «ունի՞ն ներշնչման նորություն, կա՞ վսեմ կիրք, կա՞ ինքնուրույն արվեստ իրենց ծնունդին մեջ, իրենց գույներուն մեջեն անցա՞ծ է արևելյան վերջալույս մը»[3]։

[1] «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 3—5, էջ 90։

[2] «Անահիտ», նոր շրջան, Ը տարի, 1937, թիվ 5—6, էջ 83։

[3] Դանիել Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 31։

Պատահական չէ, որ Վարուժանին այդքան հետաքրքրում է Զոպանյանի կարծիքը: Մի ուրիշ նամակում նա բացահայտորեն հայտնում է. «Ձեր դատաստանին մեջ հավատքն ունիմ արդի գեղարվեստագետ մտավորականության դատաստանի իտացումը գտնալ»[1]: Իսկ փորը ինչ ուշ, 1910 թվականին, երբ Վարուժանն ստոյն ճանաչված անուն էր հայ պոեզիայի երկնակամարում, նա Զոպանյանին դիմում է «սիրելի վարպետ» ածականով: Ավելին, նա շատ բարձր կարծիք ուներ Ա. Զոպանյանի գործունեության նաև մյուս կողմերի վերաբերյալ: Օտարներին հայ մշակույթի արժեքները ծանոթացնելու ուղղությամբ Զոպանյանի աշխատանքները, ըստ նրա, «օտարականներու առջև այնքան ազդեցություն պիտի ըննեն, որքան (կասկած սեղմումով կըսեմ զայս) երկրորդ հայկական ջարդ մը պիտի չըններ»[2]:

Զոպանյանի պատասխան նամակները լեցուն են հոր՝ իր զավակի նկատմամբ ուշադիր և ջերմ խանդաղատանքով, այլև իմաստուն ու գործնական խորհուրդներով: Վարուժանի անվանը նա հանդիպել է «Բազմավեպի» էջերում և նրա քերթվածներում գտել «տաք շունչ մը, աղնիվ խոր զգայնություն մը... ու ձև մը հաճախ ինքնատիպ, գունագեղ, հզոր»: «Հայ բժիշկը» բանաստեղծությունն էլ նա գնահատում է օբյեկտիվ չափանիշներով, առանց սկսնակությանը տուրք տալու. «Հղացումը շատ արվեստ է, հատակ և ամբողջ զգացումը հոն խոր է, անկեղծ, արվեստ, ընդհանուր շարադրությունը լավ է, կան նոր ու վառ պատկերներ, բայց անհավասար է ձևը, հոս, ինչպես ձեր արդեն հրատարակած քերթվածներուն մեջ, արտահայտումը տեղ-տեղ չէ հասած հղացումին բարձրությանը՝ շփոթ կամ թույլ է մնացած»[3]:

«Հայ բժիշկը» տպագրվում է «Անահիտի» 1905 թվականի դեկտեմբերյան համարում և անմիջապես բարձր շունչ բերում հանդեսի գրականության բաժնին, ուժեղացնում այդ էջերում մերթ ընդ մերթ բռնկվող մարտական տրամադրությունները:

---

[1] Դանիել Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 32:

[2] Դանիել Վարուժան, Նամականի, Երևան, 1965 էջ 31: Հետաքրքրական է, որ Զոպանյանը այս առիթով պատասխանում է, թե «իրավունք ունիք, ջարդի լուրերը նվաստացուցիչ են մեզի համար, անհրաժեշտ է ապացուցանել եվրոպացոց, որ մենք ջարդվելն ուրիշ բան, լավագույն բաներ կրնանք ընել և ըրած ենք» (նույն տեղում, էջ 222):

[3] Նույն տեղում, էջ 221:

«Գուցե, գուցե, ով եղբայր, դու մոլեգին,
Նըշտարակի տեղ՝ սուրն ուղես...»

«Նըշտարակի տեղ՝ սուրն ուղես», ահա թե ինչը նկատի ունի Զոպանյանը, երբ գրում է. «Հղացումը շատ աղվոր է»։

Վրեժի, պայքարի ու հաղթանակի շնչով է գրված «Սևանգիչը» քերթվածը, և չի ուշանում Զոպանյանի հիացմունքի բացականչությունը. «Սքանչելի է ձեր այս քերթվածը, հղացման մեջ ավելի complet *(կատարյալ), արտահայտությանը մեջ ավելի* acheve *(աշխույժ), քան առաջինը։ Դուք մեր մեծագույն բանաստեղծներեն մին պիտի ըլլաք, տարակույս չունիմ»։ Եվ անմիջապես խորհուրդ է տալիս. «Կարդացա՞ծ եք* Barbier*-ի «Jambes Divin» և* Hugo*-ի «Les chatîments»-ը։ Կարդացե՛ք։ Ձեր հոգիին մեջ անոնց քնարին պողպատը կա ի բեև, բայց այդ աղնիվ սրտմտության մեծ եռգնության ընթերցումը կրնա ձեր նետշնչումը խթանել և ճոխացնել»[1]։*

Բարբիեի «Յամբերը» և Հյուգոյի «Հատուցումները» հանձնարարելը ինքնին հետաքրքրական է։ Զոպանյանը հրավիրում է Վարուժանին ծանոթանալ 1830 թ. Հուլիսյան հեղափոխության թեժ օրերը արտացոլող «Յամբերին», որը շնչում է ազատության և ըմբոստության ոգով. նույն ձևով նաև՝ 1848 թվականի հեղափոխությանը նվիրված Հյուգոյի «Հատուցումներ» ժողովածուին, որի քաղաքացիական-հայրենասիրական կրակը առելություն էր ներշնչում Լուի Նապոլեոն III-ի ու նրա վարչության նկատմամբ և մեծ ազդեցություն ունենալ Փարիզի կոմունարների վրա։ Արդեն Վարուժանի առաջին քերթվածներում Զոպանյանը տեսնում էր բանաստեղծի հեղափոխական-հայրենասիրական առաքելը և ձգտում ավելի խորացնել այն, ապահովել այդ ուղղությամբ համապատասխան բանաստեղծական պատրաստություն։

Խրախուսանքը ավելի է ամրապնդում երիտասարդ բանաստեղծի հավատը իր ուժերի նկատմամբ, իսկ Զոպանյանի կյանքի և գործունեության օրինակը ոգեշնչում է նրան։ «Անահիտին» առաքելով «Յեղափոխական ոգին» բանաստեղծությունը՝ նա Զոպանյանին գրում է. «Թեև անոր խորագրին տակ բնաբան մը ուզեի դնել, այդ ամբողջ Ձեր գործունեությունը պետք էր ըլլար...»[2]։

---

[1] Գաբիել Վարուժան, *Նամականի*, Երևան, 1965, էջ 232։

[2] *Նույն տեղում*, էջ 101։

«Շունչիդ վնիւտն ու ճառագայթն աչքերուդ,
Նման դարնան մեր տան սեմերը պճնող,
Քող ճամբորդին հյուղէ հյուղ,
Բնակարանէ բնակարան.
Կանգնին այրերն ու մայրեր,
Ձերը կանգնի, կանգնի տղան,
Ու ամեն որ ապին սիրով լոկ արբշիռ,
Ապին ոգով հաղորդված,
Այնպես վառի, ապստամբի, բորբոքի,
Որ Թորգոմա Տունն զգա,
Ի՛ւ իր օջախը մարած՝
Այսօր հրաբուխ է դարձեր»։

Այսպիսին է այդ բանաստեղծության հիմնական և նշանակիչ միտքը։

Զոպանյանի խորհրդով Վարուժանը վերամշակում է «Արմենուհին» պոեմը, որն այնուհետև նույնպես հրատարակվում է «Անահիտում»։ Զոպանյանը տպել է պոեմի քերթվածներից մեկի «Հղի» խորագիրը և առաջարկում է փոխել այն «Օրհնյալ ես դու ի կանայս»-ի։ Վարուժանն ընդունում է։ «Ապրիլը մերկ համբուրիմ»-ն ալ չեմ սիրեր,— ավելացնում է Զոպանյանը նույն բանաստեղծության մասին,— բարձր ու ազնիվ sexualité *քերթված մըն է ամբողջությունը, ուր այդ «մերկ ապրիլը համբուրելը» գեհհիկ կիվի ինծի»[1]։ Վարուժանը այդ խորհուրդն էլ է ընդունում և վերախմբագրում քերթվածը։

Զոպանյանը առաջիններից մեկն է ջերմ դրախոսականով ընդունում Վարուժանի «Սարսուռներ» հատորը։ Այդ երախայրիքից քննադատը բանաստեղծի մեջ տեսնում է բուռն ու սուր զգայնություն, տաք ու քաղցր սրտի հզոր ու խորունկ բաբախում, որոշակի հարազատություն Պետրոս Դուրյանի հետ։ «Վարուժան ունի Դուրյանին հանկարծական, անդմ ու վառ պատկերները, անոր կարուկ ու սրտոտ ոճղակի ժայթքող ճիշերը, և այն չեմ գիտեր ինչը, որ ժողովրդական է ի բեև ու «հայ» և որ Դուրյանին բնազդական խորքը կը կազմե»[2]։ Հատորի լավագույն քերթվածների մանրամասն վերլուծությունից հետո Զոպանյանը դիտողություններ է անում երիտասարդ հեղինակին, հատկապես նկատի ունենալով նրան օգտակար լինելու հանգամանքը։ Եթե սխալ է

---

[1] Դանիել Վարուժան, *Նամականի*, Երևան, 1965, էջ 263։

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 6—7, էջ 108։

գրողի մեջ միայն թերություններ տեսնելը, գրում է Զոպանյանը, ապա նույնքան սխալ է դրանք բնավ չնկատելը, երբ մանավանդ գրադատը գործ ունի նորածիլ տաղանդի հետ։ Անհրաժեշտ է նրան ցույց տալ առաջին իսկ էջերի դեղեցկություններն ու տկարությունները, դրանով նրան պետք է օգնել հզոր ներշնչումով ու կատարյալ արվեստով բանաստեղծ դառնալ[1]։

Վարուժանի բանաստեղծությունների հյուրընկալումը հանդեսում, «Անահիտի» հայրենասիրական ծրագրի դործադրման լծակ է դառնում։ Լավատեսական շունչը, պայքարի ոգին, բանաստեղծական պատկերի մարտական ցնցող խրոխտությունը կոչված էին ոգևորելու հուսաբեկությյան հորձանուտն ընկած հայ զանգվածներին։

Հայրենի մի բուռ կարմիր հողի մեջ բանաստեղծը տեսնում է հինավուրց ազդի մատղաշ արշալույսը, իր երկրի այդ որբ բեկորը բանաստեղծին մղում է «մերթ արցունքի և ատելի դու մռունչներու» («Կարմիր հողը»)։

«Եկուր, եկուր,— ժամանակն այս է,— եկուր...
Ահա ցեղեդ մաս մը աղնիվ՝
Դաշափարի, գուպարի մեջ հալումաշ
Ճամբուդ վրա կը սփռե
Իր արյունին հետ նոր վարդեր, կակաչներ...»

«Ցեղական ոգիին» է կանչում բանաստեղծը, վստահ, որ ժողովրդի առաջավոր զավակների սկսած գործը ճանապարհ է հարթում ընդհանուրի համար, որի ընդերքում արդեն ապագա աշխուժներն են ձևավորվում.

«Ու վա՜ղը, վա՜ղն, ով հեգ Մայրեր, լսեցեք,
Ձեր արգանդեն մի առ մի
Պիտ ելլեն անոնք հսկա և հերոս։
Մեծ պիտ ըլլան, մորիկն իրենց մազերուն,
Պիտի սարսե վերն աստղերուն մեջ Աստված...

(«Զարդը»)

1906 թվականի ամռանը գրված այս պոեմը («Զարդը»), որ հանդեսում տպագրվելուց հետո «Անահիտի» իսկ հրատարակությամբ բազմացվեց գրքույկի ձևով, լեցուն է քաղաքական մերկացումներով՝ թե սուլթանական Թուրքիայի կառավարողների հայաջինջ ծրագրի և թե «դևմքը նաև դարձուցած» Եվրոպայի

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 6—7, էջ 221։

իրախուսիչ լռության։ Ամենավայրագ ու դաժան աղգասպանության տեսարանները բանաստեղծական արյունածոր պատկերների մեջ մատուցելուն զուգահեռ, վարուժանը մնում է կանգնած վառ լավատեսության դիրքերում։ Նա «վարդահեղեղ արշալույսի ոտնաձայնն է առնում»։ Բանաստեղծի ուղին նրան պատկերանում է դեպի «արևները», դեպի «աղբյուրը լույսի» տանող՝ «կայծքարերով» ու «մուրտի փուշերով» լեցուն դժվարին մի ճանապարհ, որը ճանապարհն է նաև «խաչ հանող եղբայրներից» (քրիստոնյա Եվրոպայից) լքված իր ժողովրդի։ Դժվարին է, այո, այդ ճանապարհը, բայց նա աննկուն գնում է

«... դեպի աղբյուրը լույսին»

(«Աղբյուրը լույսին»)։

Աղգային հալածանքը անխուսափելիորեն բերում է նաև սոցիալական ծանր վիճակ ժողովրդի որբացած բեկորների համար։ «Լվացարարուհին» քնքշվածը սուր բողոք է տիրող իրավակարգի դեմ, որը իր մեջ հանդուցում է թե սոցիալական ճնշումը և թե աղգային հալածանքը։ Նույն մոտիվներն են հնչում «Հրաշքին աղբյուրը» քնքշվածում։

Այսպիսով, «Անահիտ» հանդեսը դառնում է դարասկզբի արևմտահայ գրականության, մասնավորապես պոեզիայի պատմության յուրահատուկ ձևնարկը և, միաժամանակ, մղիչը։ Նրա էջերում անկումայնությունն ու անսփոփելի վշտի տրամադրությունները աստիճանաբար փոխակերպվում են նույն վշտից և արցունքներից ծնունդ առած առնականության, վերածվելով ռազմի գոռ շեփորի։ Այդ ստեղծագործական վերընթաց գծին իր մեծ նպաստն է բերել Ա. Զոպանյանը որպես քաղաքական գործիչ, որպես խմբագիր ու քննադատ և որպես բանաստեղծ։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հայ արվեստը։ Առաջին շրջանի «Անահիտի» դադարումը

Եվրոպական արվեստի պրոպագանդմանը զուգընթաց «Անահիտում» Արշակ Զոպանյանը մասնավոր հոգատարությամբ հետևում և պրոպագանդում է դարասկզբի հայկական արվեստը,

հատկապես գեղանկարչությունը և երաժշտությունը: «Անահիտ» հանդեսի ծրագրի այդ կարևոր բնագավառը Զոպանյանն իրականացնում է մեծ հմտությամբ, միշտ և ամենուրեք հետապնդելով քաղաքական անսթող նպատակ՝ նպաստել հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացմանը, պարտադրել օտարներին հարգալից վերաբերմունք հայ մշակույթի ոչ միայն անցյալի, այլև ժամանակակից արժեքների նկատմամբ:

Թատերական արվեստը, որ ծաղկում էր ապրում Կովկասում, որոշակի արտացոլում էր գտնում «Անահիտի» էջերում: Արևմտահայությունը տեղյակ էր պահվում թատերական կարևորագույն անցուդարձերին: Այնուամենայնիվ, հայ թատրոնը, մանավանդ ժամանակի արևմտահայ թատրոնը նյութ չէր տրամադրում ազգային սահմաններից դուրս գալու և եվրոպական հասարակայնության ուշադրությունը իր վրա հրավիրելու համար: Բնական, երբ առիթը ներկայանում էր, Զոպանյանը ոգևորությամբ խրախուսում էր բարձրացող բոլոր այն ուժերին, որոնք կարողություն էին դրսևորում օտար բեմերում հաղթանակներ նվաճելու ուղղությամբ: Վաղամեռիկ տաղանդավոր ողբերգու Գրիգոր Կյուլպենկի և վերատան Մաքսուտյանի փայլուն ելույթները ֆրանսիական բեմահարթակների վրա առիթ են տալիս «Անահիտի» խմբագրապետին ազգային հպարտության պահեր ապրելու և խանդավառությունը փոխանցելու ընթերցողներին:

Պրոպագանդի համար ավելի դյուրամատչելի նյութ են տրամադրում գեղանկարչությունն ու երաժշտությունը, և հենց այդ գործում էլ մեծ ջանքեր է ներդնում Զոպանյանը: Էդգար Շահինի, Զաքարյանի, Թերլեմեզյանի, Բաշինջաղյանի, Շաբանյանի Մախոխյանի ցուցահանդեսները մշտապես գտնվում են հանդեսի ուշադրության կենտրոնում: Խմբագրապետը հաճախ իր կարծիքներն է հայտնում այդ արվեստագետների մասին, ծավալուն մեջբերումներ անում օտար մամուլի դրվատական հոդվածներից, այլև երբեմն միջամտում է ֆրանսատառ թերթերի ելույթներին, ուղղում վրիպումները կամ թելադրություններ անում:

1900 թվականի միջազգային ցուցահանդեսում Շահինը և Զաքարյանը «Le journal» թերթի հոդվածագիր Գուստավ Ժեֆրուայի կողմից սխալ են ներկայացվում. առաջինը՝ որպես թուրքական, երկրորդը՝ հունական արվեստի ներկայացուցիչներ: Այս առիթով խմբագրությունը առանում է մի շարք նամակներ: Թերթը հաջորդ համարում Ժեֆրուան ուղղում է իր սխալը, վկայակոչե-

լով Ա. Չոպանյանի նամակը, որի մեջ «Անահիտի» խմբագրապետը գրում էր. «Այն պահուն, ուր պաշտոնական Եվրոպան հայ ժողովուրդը կը լքանի հրեշային բռնապետության մը ձեռքը, որ կը ջանա ամեն միջոցներով պայն բնաջինջ ընել, մենք ուրախ պիտի ըլլայինք տեսնելով, որ գոնե մտավորական Եվրոպան արդարության հարկ մը կը մատուցանի այս ժողովրդին, որ արժանի է— միշտ պիտի կրկնեմ— աշխարհի համակրությունը գրավելու ոչ թե միմիայն որովհետև դժբախտ է, այլ, մանավանդ, որովհետև քաղաքակրթության տարր մըն է»[1]:

Չոպանյանի մշտական գործի և խրախուսանքի առարկան ու նրա մտերիմ բարեկամը եղել է էդգար Շահինը:

Էդգար Շահինի հետ Չոպանյանը ծանոթացել է Փարիզում, 1896 թվականին, և անմիջապես հափշտակվել նրա տեսնելու, զգալու, հասկանալու եղակի և ինքնատիպ կարողությամբ: Ծանոթությունը շուտով փոխվել է սերտ մտերմության: Դրա լավագույն վկայություններից մեկն է այն մակագրությունը, որ Շահինը արել է Չոպանյանին նվիրած իր կտավներից մեկի վրա. «Արշակ Չոպանյանին, բանաստեղծին... պայքարողին և իմ միակ բարեկամիս, որ վիս խրախուսից իմ ճամբուն մեջ»[2]:

Չոպանյանը Շահինի մեջ տեսնում էր այն անձը, որը իր արվեստի ուժով պիտի բարձրանար եվրոպական մշակույթի երկնակամար և իր հետ բարձրացներ ու աշխարհին ցույց տար նաև հայ ժողովրդի մշակութային պոտենցիալ բաղում կարողությունները:

1900 թվականի մայիսի 12-ին Փարիզի «Վոլտեր» սրճարանում, Չոպանյանի նախաձեռնությամբ, ճաշկերույթ է կազմակերպվում էդգար Շահինի և երիտասարդ գիտնական Երվանդ Մանվելյանի պատվին: Բարեկամական զգացումով չէր առաջնորդվում Չոպանյանը և ոչ իսկ Շահինի ու Մանվելյանի վաստակած պաշտոնական գնահատումներով, որովհետև պաշտոնական դափնիների հաճախ հասնում էին նաև «ազդեցիկ հարաբերություններով հովանավորված բացարձակ ապուշներ»: Չոպանյանի եղակիտը և չափանիշը իր ժողովրդին մատուցած ծառայության աստիճանն էր. «անոնք մեր ցեղին մտավորական ու գեղեցկագիտական կարողության վրա եվրոպացվոց տվին

---

[1] «Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 6—8, էջ 177:

[2] «Անահիտ», նոր շրջան, ԺԴ տարի, 1948, թ. 2, էջ 7:

ամենաբարձր դաղափար մը. մեր պարտականութիւնն է դիրենք հրապարակաւ շնորհաւորել ու իրենց մեր երախտագիտութիւնը հայտնել այն բարոյական անդին ծառայութեանը համար, որ մատուցին մեր ցեղին»[1]:

Հատկանշական է, որ Շահինի ստեղծագործութեան մեջ Զոպանեանը ամենից ավելի դնահատում է նրա ռեալիստական մեթոդը: «Անահիտը» արտատպում է ժամանակի խոշոր քննադատներից Ժոժ Մարքսի, Ջիման Ժաննիի, Գուստաւ Ժեֆրուայի, Գաբրիել Մուրիի, Գուստաւ Սուլիեի հոդվածները, բավականին թվով քաղվածքներ բերում եվրոպական մամուլից, բայց այդ հեղինակներից և ոչ մեկը չի նկատում Շահինի ռեալիզմի ակունքները այնպիսի հստակութեամբ, ինչպես Արշակ Զոպանեանն է տեսնում: Իտալիայում, Շահինի ուսումնառութեան շրջանում, գրում է Զոպանեանը, երիտասարդ նկարիչը որոշակի ազդեցութեան է կրում իր ուսուցչի՝ Թիեպոլոյի «մոդեռն» ու «խել մը իրապաշտ» խառնուրդից, բայց Շահինի ստեղծագործական մեթոդի ձևավորման վրա խոշոր ազդեցութեան է թողնում գեղանկարչութեան հետ անմիջականորեն կապ չունեցող թատերական արվեստի երկու մեծ գործիչների՝ Նովելլիի և Դուզեի ռեալիզմը:

«Շահին,— գրում է Ա. Զոպանեանը,— գացեր էր Փարիզի փողոցին դտնել տիպար մը, որ իրեն թվեր էր գեղեցկութեաններ պարունակել, և անոր տղմի ու ցավի հոգին ուզեր էր կտավին վրա հավերժացնել... Խեղճերը, ինկածները, թշվառութեան ու մոլութեան մեջ փտած խարխուլ ուրվականային ու սրտաճմլիկ մարդկութեան մը ու մասնավորապես «Փարիզի փողոցին խեղճերը» իրենց թվականի ու միջավայրի որոշ անհատականութեամբ, ահավասիկ «աշխարհը», զոր Շահին տեսավ ու հասկցավ Փարիզ հասնելուն պես, և որուն որոշից թարգմանը ըլլալ»[2]:

Զոպանեանը անսխալ կարողանում է դուշակել երիտասարդ Շահինի ուղին՝ բարձր արվեստի ուժով վերարտադրել կյանքը իր բազմակերպութեան մեջ: Շահինը, ասում է Զոպանեանը, մտադիր է կյանքի ամբողջ «ցիկլ» պատկերել և դրա մեջ ներդնել իր կենսափիլիսոփայութեանը «մտածող-դիտողի և համագրող-

---

[1] «Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 4—5, էջ 143:

[2] Նույն տեղում, թիվ 6—8, էջ 151—152:

իրապաշտ» տեսանկյունից։ Իսկ թե ինչպիսին էր այդ տեսանկյունը, ամենից ավելի պերճախոս բացահայտել է ինքը՝ արվեստագետը, Շանղ—Էլիզեի սալոններում ցուցադրած իր նկարների շարքը տեղափոխվել ընդհանուր՝ «Ողորմելի կյանք» խորագրի տակ։

Գեղանկարչությանը զուգահեռ, Չոպանյանի ջանքերը մասնավոր մեծ նպաստ են բերում հայ աղգային երաժշտությունը մեր ժողովրդի իսկ սեփականությունը դարձնելու և արտասահմանում պրոպագանդելու գործին։ «Անահիտը» օգտվում է բոլոր առիթներից, որպեսզի ընթերցողներին ծանոթացնի հայազգի կոմպոզիտորների ու կատարողների հետ։ Վահրամ Սվաճյանի, Մուղունյանի, Մարգարիտ Բաբայանի, Արմենակ Շահմուրադյանի, Սղիազարյանի, Բոյաջյանի և ուրիշների գործունեությունը սիստեմատիկաբար արտացոլվում է հանդեսի էջերում։

Չոպանյանը պրվատանքով է խոսում Գալուստ Բոյաջյանի կազմած և հրատարակած հայ ժողովրդական երգերի հավաքածուի մասին, որի տեքստերը ֆրանսերեն է թարգմանել ինքը՝ Չոպանյանը։ Նա խրախուսում է Փարիզում 1901 թվականի դեկտեմբերի 1-ին Լ. Սղիազարյանի կազմակերպած հայ ժողովրդական երգերի ցերեկույթը, բայց ցավով արձանագրում, որ կատարված գործերից շատերը ժողովրդական չէին և դեպի թյուրիմացություն էին առաջնորդում հասարակության։ Նա գործուն մասնակցություն է ունենում 1906 թվականի փետրվար-մարտին Փարիզի Կովկասյան ընկերության (որի կազմում ընդգրկված էին հայեր, վրացիներ և ռուսներ) կազմակերպած երաժշտական երեկույթներին, որոնք բարձր դնահատականի են արժանանում Ռոմեն Ռոլանի կողմից «Le mercure musical» ամսագրում։ Չոպանյանը բանախոսել է այդ երեկույթներից մի քանիսին։

Պետք է հիշել, որ Փարիզի Կովկասյան ընկերությունը գործունեություն է ծավալում Կովկասում ցարիզմի հրահրած ազգամիջյան ընդհարումների օրերին։ Հենց այդ տեսակետից էլ խիստ կարևոր են Չոպանյանի բանախոսությունները, որոնցում նա ժողովուրդների եղբայրության և միացյալ ուժերով ազատության ու քաղաքակրթության գործին ծառայելու կոչ է անում։

Փարիզի կովկասցիների դաշինքը դրվատելով՝ նա ասում է. «Մաղթենք, որ համաձայնության այս դաշինքը, գեղեցկության և ընկերական ներդաշնակության իդեալով մը խանդավառված մարդկանց ձեռքով կնքված այստեղ, տարածվի ամբողջ Կովկաս-

մեջ, ընդգրկվի հոն միասին ապրող բոլոր ցեղերուն, այնտեղ տիրել տալու համար համերաշխությունը, փոխադարձ հարգանքն ու համակրությունը, ու բաղձանքը՝ ազատության ու քաղաքակրթության գործին նվիրելու այդ բոլոր ուժերը՝ ներդաշնակորեն համախմբված և յուրաքանչյուրը պահելով իր ուրույն ինքնատիպությունը»[1]: Պատահական չէ, որ Ռոմեն Ռոլանը այդ բանախոսությունը կոչում է «շատ հստակ ու շահեկան»[2]:

Հայ ազգային երաժշտության պրոպագանդման գործին Զոպանյանի մատուցած անգնահատելի ծառայությունը մարմնավորվում է Կոմիտասի գործունեության ճանաչման, խրախուսման և պաշտպանության մեջ, որի համար Զոպանյանը չխնայեց իր վիթխարի ճիգն ու եռանդը:

Կոմիտասի վերաբերյալ հայ մամուլում տպագրված առաջին ծավալուն, լուրջ և խոր վերլուծական հոդվածը՝ «Կոմիտաս վարդապետ» տիտղոսով, պատկանում է Արշակ Զոպանյանի գրչին[3], թեպետ Կոմիտասի (ավելի ճիշտ Սողոմոն սարկավագի) անունը մինչ այդ արդեն երևացել էր Պոլսի «Հայրենիքում» դեռևս 1892-ին[4], իսկ այնուհետև նաև դարավերջի կովկասահայ մամուլում՝ «Արարատում», 1897 թվականին, և ուրիշ օրգաններում:

«Անահիտի» մեջ իսկ է,— հպարտությամբ ասում է Ա. Զո-

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 3—5, էջ 90:

[2] Նույն տեղում, էջ 91:

[3] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 6—7:

[4] Մեր՝ «Կոմիտասը «Անահիտ» հանդեսի էջերում» խորագրով հոդվածում («Սովետական գրականություն», 1969, № 10) դրել ենք, թե «Կոմիտասի անունը հայ մամուլի մեջ երևացել է 90-ական թվականների վերջերին»: Իրականում, Հրաչդանը (Արփիար Արփիարյանը) Պոլսի «Հայրենիքում» 1892 թվականին (թիվ 309, 21 նոյեմբերի) արդեն իսկ հոդված է հրապարակել «Սողոմոն սարկավագ» խորագրով: Հրաչդանը շարադրում է իր զրույցը խմբագրության այցելած Կոմիտասի հետ, որը հայտնում է, թե ինքը շրջել է Արարատյան նահանգի շատ գյուղեր ու բնակավայրեր և հավաքել մոտ 200 երգեր: Հրաչդանի խնդրանքով Կոմիտասը երգում է այդ երգերից մեկը.

Տըվիլ եմ կընկնեմ սարը,
Հասըր պան օյ, օյ
Չը գտա ֆիդան յարը,
Հասըր պան օյ, օյ,

Դեռևս Կոմիտասի մասին այդ առաջին հոդվածում կարդում ենք. «Հին երգերու հետքերը պտնել, նախնիներու բանաստեղծությունները հավաքել ոչ թե միայն խոսքերովին այլ եղանակներովը, նորերն ալ անոնց մեջ խառնել ու տոհմային ժողովրդական երգերու հավաքածու մը մեզ տալ. ահա ինչ որ այդ երի-

պանյանը մի առիթով,— որ գրած եմ իր մասին առաջին հոդվածս, որ և այդ մեծ հայուն նվիրված առաջին հոդվածը եղավ մեր մամուլին մեջ»[1]: Եվ, այնուհետև, ինքն իսկ գնահատելով այդ հոդվածը, այն համարում է մեկը «ամենեն խանդավառ հոդվածներեն զոր գրած ըլլամ կյանքիս մեջ»[2]: Իրավունք ուներ Արշակ Զոպանյանը, որովհետև ոչ միայն իրոք առաջինն էր, որ բովանդակալից, վերլուծող և կանխատեսող հոդված տպագրեց, այլև եղավ եղերաբախտ վարպետի մերձավոր մտերիմը, Կոմիտասի՝ հանրությանը հայտնի դառնալուց էլ դեռ առաջ և մինչև այն պահը, երբ, մանավանդ, Զոպանյանի իսկ անձնական ջանքերի շնորհիվ, վարպետի աճյունը փոխադրվեց Մայր Երկիր[3], ու դեռ ավելին, Կոմիտասի գործի խոր և պիտակ գնահատողն ու պրոպագանդիչը եղավ տասնյակ տարիներ շարունակ:

Կոմիտասի հետ առաջին հանդիպումը Զոպանյանը ունենում է նույն 1901 թվականին, երբ Կոմիտասը Բեռլինից մեկ ամսով անցել էր Փարիզ: Այդ հանդիպումը այնպիսի վիթխարի տպավորություն է թողնում Զոպանյանի վրա, որը, նրա իսկ խոսքերով, համազոր էր այն ցնցումին, ինչ Զոպանյանը ապրել էր 1898 թվականին Վենետիկում, Քուչակին հայտնագործելիս[4]:

Պատահակա՞ն պիտի համարել այդ նոր ցնցումը, որ ապրեց Ս. Զոպանյանը Կոմիտասին ծանոթանալով, լսելով նրա երգը Փարիզի Ռյու-դը Վիննի հայկական մատուռում, ակնթարթ թվացող ժամեր առհավետ ապրելով նրա հետ: Եվ միայն երկու անձանց մարդկային համակրանքո՞վ պիտի բացատրել նրանց խոր բարեկամությունը, Ս. Զոպանյանի հայրական (թեպետ ավելի

տասարդ սարկավագը իրեն կնա նպատակի դրած էր»: Այս հոդվածը, որ պարզ հարցազրույցի սահմաններից չէր անցնում, բնականաբար, մնում է աննկատ կամ շուտով մոռացվում: Զոպանյանն էլ, որ այդ շրջանում «Հայրենիքի» գործուն աշխատակիցներից մեկն էր, որևէ տեղ չի ակնարկում այդ հոդվածը, ավելին, հայ ազգային երգերի հավաքման մասին նույն «Հայրենիքում» չորս ամիս անց տպագրված իր հոդվածում չի հիշատակում այդ շահեկան նյութը:

[1] «Անահիտ», նոր շրջան, 9 տարի, 1931, թիվ 1—2, էջ 103:

[2] Նույն տեղում, էջ 104:

[3] 1951 թվականի հուլիսի 26-ին Զոպանյանը գրում է կաթողիկոս Գևորգ Զորեպիսկոպոսյանին. «Եթե Կոմիտասի մահվընե հետո մարմինը դրկվեցավ Երևան... մեր հանձնաժողովին կոչն ես ինքս էի, որ խնդրանք ներկայացուցի նամակով մը ս. Հայաստանի կառավարությանը: Կոմիտասի մարմինը մեր հանձնաժողովին ծախքով փոխադրվեցավ մինչև Բաթում...» (Նամականի, էջ 361):

[4] «Անահիտ», նոր շրջան, 9 տարի, 1931, թիվ 1—2, էջ 103:

տարեցը Կոմիտասն էր) հոգատարությունն ու խնամքը բարեվամի նկատմամբ, հոլովվող տարիների շղթայում:

Ս. Զոպանյանը հոգեբանորեն պատրաստ էր այդ Հանդիպմանը, ավելի ճիշտ այդ Հայտնությանը: Կոմիտասը «սպասված, երազված մարդն» էր:

1893 թվականին Պոլսի «Հայրենիքում» Արշակ Զոպանյանը հոդված է գրում, որի մեջ բարձր գնահատելով հայ ազգային եկեղեցական երաժշտությունը, խնդիր է դնում հանրության սեփականություն դարձնել այն: «Պետք էր, որ այդ քերթվածներն իրենց ղուտ կրոնական գույնին հետ սկսին գեղարվեստական գույնն ալ ստանալ, այնպես որ զանոնք միայն եկեղեցիին մեջ չը լսինք, այլ մեր տունը, մեր գրադարաններուն մեջ ունենայինք անոնց հավաքածուն... Պետք էր, որ մեր երաժշտագետները ավելի ուշադրություն դարձնեին այդ եղանակներու վրա, ճշդեին զանոնք և վերջնականապես արգիլեին եղծվելն, ինչ որ կը սկսին ըլլալ քմահաճ ու տգետ երգողներու բերնին մեջ, և նույնիսկ անոնց ուղղակի ներշնչման տակ երաժշտական գործեր արտադրեին...»[1]:

Ժամանակի մտավորական շրջանակներում որոշ անձանց մոտ այս դիտողությունները արժանանում են քմծիծաղի ու հեգնանքի. հեղինակին ծաղրում են «տիրացությանը» հարելու, «ծիռած ու անարվեստ լալկանություններու» նկատմամբ նրա հետադարձ հիացումի համար:

«Քնացուցիչ շարականներու վրա զմայլիլ Բեթհովենի ու Վագների դարուն մեջ...— հեգնում է արդեն Ա. Զոպանյանը «Կոմիտաս վարդապետ» հոդվածում,— և «մոդեռնիզմով» տոգորված, որևէ ասիականության հանդեպ անհաշտ արհամարհանքի որոշում տված այդ «եվրոպացյալները» իմ աքանչացմանս մեջ... ժամասիրությամբ շաղախված ցնդի մը առհավական վերապարթումը կը կարծեին տեսնել և կարպահատնին վրաս... Ճիշտ Բեթհովենն ու Վագները խորապես հասկնալուս համար էր, որ ես աքանչացում կ'ունենայի մեր հին երաժիշտներուն վրա, որոնք շատ ավելի պարզ ու նվիրական ոլորտի մը մեջ կրցեր էին, քան իս, ուրվագծել անկեղծ, հոգեբուխ ու վսեմ երգերով՝ ինչ որ այդ տիեզերական հանճարները հակա սահմանի մը մեջ պիտի իրագործեին մեր դարուն: «Նորին» սերը երբեք պետք չէ փակե

[1] «Հայրենիք», 1893, թիվ 431:

քննադատին ու գեղասերին՝ հինին գեղեցկության ըմբռնումը։ Վագներ ու Բեթհովենն իրենք իսկ, անտարակույս, պիտի զմայլեին մեր եկեղեցական երաժշտության վրա՝ եթե զայն ճանչցած ըլլային...»[1]։

Ո՛չ, պատահական պիտի չհամարել, որ Ա. Զոպանյանը Կոմիտասի անձի մեջ տեսավ «երազված մարդ», չէ որ այդ երազն ինքն իսկ օրորում էր արդեն տասը տարիներ շարունակ։ Կոմիտասի հայտնությունն անելով իր համար՝ նա շտապում է ավետելու հայ ժողովրդին. «Ինծի կը թվի, որ ինքը այն մարդն է, որ անհրաժեշտ էր, որպեսզի հայ երաժշտությունը արմատապես վերանորոգվի իր աղավաղումեն ու անկումեն, և որպեսզի ան ծանոթանա Եվրոպայի երաժշտագետներուն և համաշխարհային երաժշտության մեջ սկսի գրավել այն տեղը, որուն արժանի է և զոր չունի դեռ»[2]։

«Անահիտի» խմբագիրը ափից ափ և մակերևույթից մինչև խորքերի խորքը ըմբռնում է այն գործի նշանակությունը, որին արդեն ձեռնարկել էր Կոմիտասը ու պիտի դեռ զարգացներ, առաջ մղելով մեր ազգային երաժշտության գետը, մաքրելով նրա հունը խոչընդոտից ու խութերից։ «Եվ այս բարդ, այս վիթխարի գործին համար անհրաժեշտ է ունենալ, հմտություն զատ, բանաստեղծի հոգի և ստեղծագործ երաժշտի տաղանդ,— շարունակում է Զոպանյանը։— Ինծի կը թվի, որ Կոմիտաս վարդապետը ունի այդ բոլորը... խորասես կապված իր ցեղին ու հողին, իր սիրտը Բեթհովենին կամ Շոպենին թողություններն չէ դրված մինչև իր ցեղին անշուք բայց թաքուն գեղեցկություններով հուռթի արվեստը արհամարհելու իմաստակության հասնելու աստիճան, ընդհակառակն, Արևմուտքի դիտությունովն ամրացած իր միտքը իրեն նպատակակետ ըրած է իր ամբարած հմտությունը կիրարկել իր ցեղին արվեստը վերակենդանացնելու»[3]։

Սևիական ու նաև ուրիշ գրողների և արվեստագետների կյանքի անձուկ պայմանների օրինակը թելադրում էր Ա. Զոպանյանին նույն այդ առաջին հոդվածում Կոմիտասի վրա հրավիրելու հայ ժողովրդի ուշադրությունը, որպեսզի նա ամբողջապես գլուխ բերեր իր ուսերին ծանրացած պարտականությունը, «որ ինք քսաներորդ դարու Շնորհալին պիտի կացուցանեն»։

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 6—7, էջ 142։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 143։

Կոմիտասը ավելին եղավ, քան «քառասնորդ դարու Շնորհալին» հայ երաժշտության մշակույթի պատմության մեջ, բայց, այնուամենայնիվ, նրա գիտակցական կյանքն ամբողջ, մինչև 1915-ի խավարումը, անցավ այնպիսի նյութական պայմանների մեջ, որոնք բավականին հեռու էին բնականոն կոչվելուց։ 1906 թվականին, կարդում ենք «Անահիտում», Ա. Չոպանյանի թելադրությամբ Կոմիտասը գնում է Փարիզ՝ այնտեղ հաստատվելու մտադրությամբ։ Չոպանյանը ենթադրում էր, թե նրան կհանձնվի հայ եկեղեցու դպրապետի պաշտոնը, հոյակապ հայկական երգչախումբ կստեղծի, և, նյութապես ապահով, նա իր գործունեությամբ «հայ դատին ու հայ մշակույթին գեղեցկագույն ձևով փրփրականտին ամենաթանկագին նպաստ մը պիտի բերեր»։ Չոպանյանը չէր կասկածում իսկ, թե այդ ծրագիրը դյուրությամբ պիտի իրողություն դառնար։ Բայց հոգաբարձության պատասխանը անողոք էր. «Տարեկան ինչ հասույթ որ ունի եկեղեցին՝ պարտավոր ենք անոր ավելցուկը ամբողջությամբ պանքան դնել, եկեղեցվույն ապագան ապահովելու համար։ Մեր այժմյան պայմաններուն մեջ, դպրապետ ու խումբ՝ մեզի համար լյութս են...»[1] Եկեղեցու հոգաբարձությունը երիցատան ավելյալներից մեկը հատկացրել է Կոմիտասին, որպեսզի պանդոկի ծախսեր չունենա, և «առիկա բավական կը համարին իրենց համակրությունը հայտնելու համար»։

1906 թվականի դեկտեմբերի 1-ին Ֆրանսիայի մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնությունը ունենում է Կոմիտասի հայտնությունը։ Փարիզի Հայկական Միության նախաձեռնությամբ կազմակերպված համերգ-երեկույթը տեղի ունեցավ Սալ դեզ Ագրիքուլթուրի սրահում։ Արշակ Չոպանյանը բանախոսում է հայ երաժշտությունը և բանաստեղծությունը թեմայով։ Համերգին մասնակցում են Կոմիտասը (դեկավարում է խումբը և ինքը երգում), երգչուհի օր. Մարգարիտա Բաբայանը, երգիչներ Շահմուրադյանը և Մուղունյանը։ Հետաքրքրական է համերգի ըրամական հաշվեկշիռը։ Կազմակերպման վրա ծախսվել է 2321 ֆրանկ տոմսակների և ծրագրի վաճառքից, ինչպես նաև նվիրատվություններից գոյացել է 2498 ֆրանկ։ Միությունը որոշում է հասույթից հազար ֆրանկ հատկացնել Կոմիտասի հավաքած և

[1] «Անահիտ», նոր շրջան, Գ տարի, 1931, թիվ 1—2, էջ 121։

պաշնական հայ ժողովրդական երգերի մի հատոր հրատարակելու նպատակին[1]։

Անիրավի չէ, որ մանրամասնորեն ոգեկոչում ենք այդ երեկույթը, չխորշելով նույնիսկ դրամական հաշվեմատյանից ներս նայել։ «Այդ երեկույթը եղավ մին ամենեն կարևոր ճիգերեն՝ հայ ցեղը համաշխարհային քաոսերաբեմին վրա իբր սիրելի և հարգելի տարր մը ցույց տալու ձգտող»[2]։ Այսպես է հանրագումարի բերում Արշակ Չոպանյանը, և հենց կարևորն ու առաջնայինը հայ մշակույթի պրոպագանդման նպատակն էր անտեղյակ, հաճախ մոլոր, երբեմն կեղծիքով առաջնորդվող հասարակական կարծիքի առջև։ Դա իրոք պատմական մի երեկո է եղել, երբ Փարիզին, ապա, ֆրանսատառ մամուլի միջոցով, աշխարհին ներկայացել է Կոմիտասի ընդարձակ ու բազմալար տաղանդը։

Առաջին անգամ էր Կոմիտասի ձեռքով գրված ու մաքրված հայ երաժշտությունը վեհապանծ ու ամբողջական հնչում փարիզյան սրահում։ Առաջին անգամ չէր, սակայն, որ այդ սրահների բեմերն էր բարձրանում Արշակ Չոպանյանը՝ կարդալու իր հերթական փայլուն բանախոսությունը։ Հայ ժողովուրդը, ասում է նա, բնազդական հավատ ունի մարդու կորովի և ճակատագրի դեմ մաքառելու կարողության նկատմամբ։ Եվ, թեպետ դժբախտությունների անվերջանալի շարանին, միշտ պահել է կյանքի իսկության զգացումը, հույսը՝ լավագույն ապագայի համար։ «Հույսի այս լույսը դուք պիտի գտնեք հայ երաժշտության և բանաստեղծության գրեթե բոլոր արտադրությանց մեջ, նույնիսկ ամենեն մելամաղձիկներու խորը... Խորին գորով մը կ'արտաշնչվի այդ բանաստեղծություններ, ցավն իսկ այնտեղ կծու շեշտ մը չ'արձակեր. ան ինքզինքը քաղցր կը հայտնե կամ ուժգին, երբեք հեռու»[3]։

Ա. Չոպանյանը ներկայացնում է Կոմիտասին Ֆրանսիայի արվեստասերներին։ Ներկայացնում է որպես հարազատ հայ երգեցողությունը գտնողի, հայ գույնով բազմաձայն երաժշտության հիմնադրի, ինքնեցական ու ժողովրդական երգերը մեկնա-

---

[1] ԳԱՓ, ԱՉՖ, IV բաժին, № 191։

[2] «Անահիտ», Բ տարի, 1907, թիվ 1—2, էջ 23։

[3] Նույն տեղում, էջ 25։

բանող երաժշտագետի, աննման երգչի, հեղինակավոր ու խանդավառ ուսուցիչ խմբավարի և տաղանդաշատ կոմպոզիտորի։

Մինչ Կոմիտասը, հայ ազգային երաժշտությունը խաթարված էր օտար ազդեցությունից, և աշխարհը զլանում էր ճանաչել նրա ինքնուրույն գոյությունը։ Նվ հանկարծ, ասես անտիկ աշխարհի փլատակները լինեին հառնած վերածննդի Եվրոպայի ապշած աչքերի առջև, Կոմիտասի մեջ ու Կոմիտասի միջոցով աշխարհի զմայլված հայացքի հանդեպ հասակով մեկ հպարտ կանգնում է հայ ազգային երաժշտությունը։ Օտար մամուլի հիացական բացականչություններն ու խանդավառությունը արձանագրումն էին կատարված իրողության և տուրքը հինավուրց ազգի հանճարին։

«Մերֆյուր մյուզիֆալ», 1906, 15 դեկտեմբերի։ Տնօրեն Լուի Լալուան գրում է. «Մենք ոչ մեկը, կարծեմ, բացի այդ մասին ծանոթություն ունեցող սակավաթիվ անձերև, կրնար մտքեն անցնել դեղեցկություններն այդ արվեստի, որ իսկապես ոչ Եվրոպական է, ոչ արևելյան, այլ ունի նկարագիր մը՝ աշխարհիս մեջ մեկ հատիկ՝ շնորհալի քաղցրության, խորաթափանց հուզման և ազնիվ զորովի... Արև կա այդ երգերուն մեջ, բայց ոչ լափող արևը Սրաբիո և Պարսկաստանի անապատներուն, լույս մը ոսկեզօծ, համակ երկնային, որուն ջերմությունը փայփայանք մըն է սարերու ապիտանության, անտառներու կանաչության և կարկաչող առվակներու ցոլքերու...

...Կոմիտաս վարդապետը, որ քաջություն ունեցավ զալ խմբերգը դեկավարելու և ինքն իսկ մելոտիներ երգելու, «Տիրամայր»-ին մեջ բարձրացավ հուզմունքի այնպիսի ներուժության մը, որ դրեթե արցունք բերելու աստիճանին կը հասներ և որուն համար հասարակությունը օվասիոն մը ըրավ իրեն»[1]։

«Գիդ մյուզիֆալ» (Բրյուսել), 1906, 9 դեկտեմբերի։ «Այժմ ամեն ոք համաձայն է ժողովրդական երաժշտության բարձր ու այլազան շահեկանությունն ընդունելու, և, դրեթե երեք քառորդ դար առաջ ռուսերու տված օրինակին հետևելով, շատերը ջանադիր կըլլան ցեղերու անանուն ներշնչման դանձերը շահագործելու...

...Կոմիտաս վարդապետը ինքզինքը հայտնեց իբր թանկագին ծառայող դատի մը, որ այդպիսի անձնվիրության արժանի էր.

---

[1] Քաղվածքը ըստ «Անահիտ», Թ տարի, 1907, Բիվ 1—2, էջ 27—28—29։

խորապես ցնցիկ է գեղեցկությունը այդ բոլոր հայկական մելոտիններուն, որ, իր շնորհիվ, արվեստագետներու ռեփերթուարին մեջ կը մտնեն, ճոխացնելով հանդերձ Արևելքի ժողովրդին մասին մեր ծանոթությունը»[1]:

«Լը Փուրիեր մյուզիքալ», 1906, 15 դեկտեմբերի:

«Այնքան ուժեղ, որքան մասնահատուկ է համն այդ հայկական երաժշտության»: Եվ Կոմիտասի մասին. «Ներհուն երաժշտագետ և խանդավառ տարածիչ իր ցեղին բնիկ արվեստին»[2]:

«Լը Մոնդ մյուզիքալ», 1906, 15 դեկտեմբերի: «Ահա նվագահանդես մը, որ մեզի կուտա նորություն, որ մեզի կուտա անտիպ բան մը, որ մեզ կը տանի հեռուն և մեզ կ'ապրեցնի կյանքը ժողովրդի մը, զոր չենք ճանչնար...

...պետք է անձամբ ղեկավորությունը, քաղցր մելամաղձությունը, հնչական շքեղությունն այդ երգերուն, որ Ամենակարողին կ'աղերսեն կամ կը պանծացնեն բարությունները բնության, սիրական զեփյուռը, դռան առջև ծաղկող «խնկի ծառը», բարերար անձրևը, «ջան նվը», «աղբեր նվը»[3]:

Առաջին համերգին հետևում է բանախոսությունների և համերգների շարքը: 1907 թվականի հունվարի 17-ին «Արվեստի պարոցի» հրավիրով Փյու դը լա Սորբոնի սրահում ունկնդիրները լսում են Կոմիտասի բանախոսությունը հայ ժողովրդական երգերի, դրանց ստեղծման ձևերի և ոճերի, տեղի ու ժամանակի վերաբերյալ: Վարպետը խոսում է օտար ազգությունների մասին և անմիջապես, լուսաբանելու համար, երգում «Տեր ողորմեա», «Տիրամայր», «Լուսնակն անուշ» և ուրիշ երգեր, մաքուր հայկական ոճով և նույնը՝ պարսկածև:

«Անահիտը» պատմում է նաև Կոմիտասի ու Զոպանյանի Շվեյցարիա համատեղ ուղևորության մասին: Վանի սովյալներին ի նպաստ, ժնևի հայ ուսանողությունը 1907 թվականի հունիսի 1-ին համերգ է տվել կոնսերվատորիայի մեծ սրահում: Հրավիրվել են Կոմիտասը՝ երգեցիկ խումբը կազմակերպելու և նվագահանդեսը ղեկավարելու, Զոպանյանը՝ բանախոսության, Շահմուրադյանը՝ երգելու համար: Խմբին մասն են կազմել հայ և ռուս ուսանողներ: Նվագահանդեսի հովանավոր Լեոպոլդ Ֆավրը

---

[1] Քաղվածքը ըստ «Անահիտի», Թ տարի, 1907, թիվ 1—2, էջ 29:

[2] Նույնը, էջ 30:

[3] Նույնը:

իր վրա է վերցնում ծախսերը, որով ամբողջ հատույթը, մոտ 2000 ֆրանկ, ուղարկվում է Վան։ Նման մի երեկույթ կազմակերպում է Լոզանի հայ ուսանողների «Արմենիա» ընկերությունը, դարձյալ Կոմիտասի ու Ա. Չոպանյանի մասնակցությամբ։

Նույն 1907 թվականին, ընդունելով երաժշտագետ և հրատարակիչ Պիեռ Օպրիի առաջարկությունը, Կոմիտասը սկսում է դիտական ուսումնասիրություն գրել հայ ժողովրդական երաժշտության մասին, իսկ Չոպանյանը ֆրանսերեն է թարգմանում ընտրված երգերի տեքստերը և Կոմիտասի ուսումնասիրության արդեն ավարտված մասերը։ Աշխատանքը, սակայն, մնում է թևերի, որովհետև Կոմիտասը նյութական անձուկ կացության պատճառով մերժում է Օպրիի առաջարկած պայմանները հրատարակվելիք գրքի նկատմամբ իր հեղինակային իրավունքների վերաբերյալ։ Հետագայում բանաստեղծ Թորոս Ադամյանը գրոնում է անավարտ ուսումնասիրության ձեռագիրը և ուղարկում «Անահիտին»։ Այն տպագրվում է հանդեսի նոր շրջանի համարներում։

Հայ մշակույթի սպասավորների սրտառուչ մտերմությունը շարունակվում է նաև այն բանից հետո, երբ Կոմիտասը մեկ տարի անց Փարիզից վերադառնում է Կովկաս։ 1908 թվականին կաթողիկոսական ընտրություններին համար պատգամավորի հանգամանքով էջմիածին ժամանած Ա. Չոպանյանը հյուրընկալվում է Կոմիտասի կողմից։

«Ամեն որոշ գպացի հոն ինչքան շրջապատը նեղ կր իրեն համար. անթիվ ընելիք ուներ, միջավայր չկար, հարկ եղած օգնությունը չկար։ Տարօրինակ բան է, որ Մայր Աթոռը... ոևէ գումար չէ տրամադրած այդ մեծարժեք արվեստագետին, որ իր երաժշտական գործերը հրատարակե, գնի իր դաշնակած պատարագը տպագրե»[1],— գտնում էր ունենալ արձանագրելու Ա. Չոպանյանը։

Այնուհետև շարունակվում է դեռ 1901 թվականից սկսված նամակագրությունը, և նամակատուփերի մեջ նկրփակված զգացմունքներն են խոսում միմյանց մոտ թևրթիռների էջերից։ Չոպանյանը հեռվից ակնդետ հետևում է բարեկամի յուրաքանչյուր քայլին, խորհուրդներով օգնության ձեռք երկարում նրան։ «Ես եղա գինք մղողը, որ 1910-ին Պոլիս երթար», և՝ «Այո, Պոլիս եր-

[1] «Անահիտ», նոր շրջան, Դ տարի, 1931, թիվ 1—2, էջ 119։

Բալը ի վերջո ապետաբեր եղավ իրեն», ապա՝ «Մերթ կը մղվիմ մտածել, Հիմա ին լավագույն էր թերևս, որ ան երբեք հեռացած չըլլար Կովկասեն»։ Ա. Չոպանյանի սրտի շմարող վերքն է կսկծում, անթեղված կրակի ծխի աներևույթ թելի նման միալար ձգվելով։

«Ժեան-Թուրք ոեժիմին հանդեպ ոևէ համակրություն ու վստահություն չունեի, և մեր բոլոր քաղաքական գործիչներուն հոն դառնալու փութալը և Իթթիհատի կատածելի «վերանորոգիչներուն» հետ ձեռք ձեռքի գործել ուզելը անիմաստուն գտած էի ու մեր գաղին համար վնասակար, և իմ մասիս՝ համառած էի դուրսը մնալը նախընտրել։ Բայց եռաժիշտի մը համար՝ Պոլիս անպատեհություններ չկային, և կային, այդ շրջանին, որոշ առավելություններ։ Ո՞վ կրնար երևակայել... լսեց անգամ մը ևս իմ բարեկամական խորհուրդիս ու գնաց Պոլիս»[1]։

Մինչև որ խավարը, սակայն, կհասցներ թևածել նրա ուղեղի մեջ, ինքը հասցրեց Պոլսում կատարել աներևակայելին։ «Կազմեց հսկա խումբեր, հասցուց աշակերտներ, տվավ բազմաթիվ համերգներ, հրատարակեց երկու երգատետր, կատարելագործեց իր պատարագը, դաշնակեց բազմաթիվ հայ երգեր, հառաջ տարավ իր քննական ուսումնասիրություններր, հայ թերթերու մեջ հրատարակեց մերթ հոդվածներ մեր երաժշտության վրա, հայության պարծանքը եղավ այդ քաղաքին մեջ, պոլսեցին հոգևպես հայաստանցի դարձնող մոգիչ ուժ մը հանդիսացավ, հայ երաժշտության արժեքը և իր գործին նշանակությունը այդ հայկական մեծ կենդրոնավայրին տարածեց ու ճանչցուց աշխարհի չորս կողմը հանուր հայության, մեր ցեղին վարկը բարձրացուց Արևելքի և Արևմուտքի բոլոր ազգերուն առջև»[2]։

«Անահիտ» հետագա տարիների առանձին համարներում, հատկապես Կոմիտասի մահվան առթիվ, տպագրվել են հուշեր, որոնք արձագանքում են նրա Պոլսի շրջանի գործունեության առաջին քայլերին։ Դրանցից երկուսը մանավանդ, իրենց շահեկանության համար, կուզեինք հյուրընկալել ներկա էջերում, համառոտած շարադրանքի ձևով։

Պատմողը Մելինե Գումանջյանն է (Բրյուսել)։ Մի Ավագ հինգշաբաթի օր գնում է Գալաթիո եկեղեցին քառաձայն պատարագը

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Դ տարի, 1931, թիվ 1—2, էջ 120։

[2] Նույն տեղում, էջ 122։

լսելու, որը նորություն էր իր համար: «Պատարագը կը սկսի հանդիսավոր ու, երբ վարագույրը կը պոցվի, ու մեղեդին կը սկսի երգվիլ, ևլևքտրական հոսանք մը կ'անցնի կարծես ունկնդիրներու էությունեն ներս, որ համակ սարսուռ է: Անբացատրելի երանություն մը կ'ուտեցնե, կ'ողողի հոգիս և քաղցր արցունքներ կը հոսին, հեղեղի նման, աչքերես: Երբ ինքզինքիս կուգամ, ջանքեր կընեմ տեսնելու համար ակը այդ ոսկեձայն աղբյուրին, որ երկնասլաց շատրվանի մը պես կը բարձրանա, ու բազմության մեջեն հազիվ թե կը նշմարեմ սուր վեղարին տակեն երկու փայլուն աչքեր: «Կոմիտաս վարդապետն է», կը շշնջե քովես հուզված ձայն մը: Հետո կարդը կու գա «Տեր ողորմեա»-ին: Այս անգամ հայտնապես կ'որոշեմ զինք, ծունկի եկած, իր աստվածային «Տեր ողորմեա»-ով կը լացնե եկեղեցին համակ հևհևկանքով»[1]:

Մյուսը Բագուհի Եղիազարյանն է, որ 1910-ին Պոլսի ամերիկյան քոլեջում դաշնամուրի դասեր է ավանդել: Եվրոպական երաժշտական կրթության տեր Բագուհին, թերահավատությամբ լցված դեպի արևելյան երաժշտությունը, համառորեն մերժում է իրեն ուղղված հորդորները՝ գնալ, լսել Կոմիտասին: «Ատեն չունիմ կորսնցնելու հայ երգահանդեսի մը երթալու, կըսեի, կոկորդային և ռնգային ձայներ լսելու, ինչպես կը լսենք Պոլսո հայ եկեղեցիներուն մեջ»:

Այնուամենայնիվ, հաջողվում է համոզել բարձրաճաշակ երաժշտուհուն: Ընկերուհու հետ գնում է Բեյազի Փըթի-Շանի թատրոնը: «Տեսակ մը չորսհարկանի ախոռ, որ սակայն, վերեն վար լեցուն էր... Չէի կարծեր, որ գեղարվեստին անտարբեր Պոլսո ժողովուրդը, սոսկ նյութական կյանքով թաթախուն, կարենար այդ կյանքեն դուրս ելլել ու նոր աշխարհի մը գոյությունը տեսնել»[2]:

Ընդմիջենք մի պահ ակնատեսին ու կրկին մտաբերենք Ա. Զոպանյանի բանախոսությունը Փարիզի կոմիտասյան համերգում: Մեծ քաղաքներում բնակվող հայությունը արհամարհում էր ժողովրդական երգերը, պարզաբանում է Զոպանյանը, նախընտրում էր երգել եվրոպական եղանակներ, ու Կոմիտաս էր պետք, որպեսզի, թափառելով գյուղից գյուղ, հավաքեր ազգային երաժշտության հրաշակերտները, ցույց տալու համար մեծ քաղաք-

---

[1] «Անահիտ, նոր շրջան, Ը տարի, 1936, թիվ 6, էջ 46:

[2] Նույն տեղում, թիվ 1—2, էջ 68:

ներին թե գյուղերի հայ մարդուն իր իսկական դեմքը, անփակաբաժշտական արվեստի մեջ արտացոլված։

«Հանկարծ հարյուր սուիրանոներու բերնեն փիանիսիմո մը պարուրեց մթնոլորտը,— պատմողը նորից ականատես երաժշտուհին է,— նախ շատ մեղմ, ապա հուշիկ հուշիկ ավելի լայն համեմատություններ առնելով, փայլակնացայտ բարձրացավ, ինչպես գարնանային արևածագի վարդագույն լույսերը, որոնք մեղմիվ կը սկսին լուսավորել մեր լեռներու կատարները...

...Կոմիտաս դաշնամուրին առջև նստած էր, սրահին հարյուրավոր ունկնդիրներու շունչը կուրծքերնուն մեջ թափ առավ դողդոջուն...

Կոմիտաս երգեց «Կռունկ»-ը։

Այս բոլորը նոր աշխարհի մը հայտնություն էր ինծի համար։ Իր բարիտոնի հովվական ձայնի շեշտը թավշային էր, ինչպես հայ աչքերը, բուղխ էր, ինչպես մեր տաքուկ հացը, ջերմ էր, ինչպես մեր ղպայուն սիրտը։ Այդ ձայնը բարձրացավ, բարձրացավ և ինձ թվեցավ, որ Բաստրոնին պատերը անհետացան, ու ես տեսա Սևանի մոգական լիճը, Արարատը, Ալագյազը, համայն հայրենիքս, որ, ծիրանափայլ տեսիլքով մը, դիմացս լուսավորվեցավ. տեսա բոլոր բարձր լեռները, դաշտերը, գյուղացիները, արորը, ոչխարները, հողմածածան բարդիները. ինչ կըսեմ, վարդապետը ինքն ալ անհայտացավ, իր սև սքեմը մեր Լոռիի կանաչ անտառներուն դուն առավ, աչքերը մեյ մեկ աստղ դարձան, թևերը արեգակի երկայն ճառագայթներ, որ մեր աղգային լուսավորությունով լուսավորեցին ամբողջ տիեզերքը»[1]։

Չոպանյանի հետ պոլսական շրջանի նամակագրությունը բացում է վարպետյրը հայության աղգային ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ Կոմիտասի հայացքների վրա։ Բանակամությունը, որ ծիլեր էր արձակել աղգային մշակույթի զարգացման ու պրոպագանդման շահերի ընդհանրության հողի մեջ, անվել ու հագեցել անձնական համակրությամբ տրոփող սրտերի նյութով, կռանվել էր քաղաքական հայացքների համախորհուրդ քուրայում։

«...Չիք փրկություն արտաքո Ռուսիո,— գրում էր Կոմիտասը իր բարեկամին 1912 թվականի դեկտեմբերի 25-ին...— Չպետք է բաժնվինք, չպետք է խաբվինք Եվրոպայի դանդաղան խոս-

[1] «Անահիտ», նոր շրջան, Ը տարի, 1936, թիվ 1—2, էջ 69։

ստամնալից խաբկանքներեն, միանալու ենք և գործնական ճամբան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության տակ»[1]:

«Ո՞վ կրնար երևակայել...»: Թանգր, անթափանցելի շղարշ ուղեղի և նրա արտադրանքի միջև: Մարմինը մնաց գերի հիվանդասենյակի չորս պատերին: Մարմնի արտադրած հանճարը շարունակեց հաղթարշավը, ինչպես վիթխարի գետն է դեռ հոսում, թեպետ ակունքը սպառվել է արդեն, այն տարբերությամբ միայն, որ ակունքն այստեղ՝ ժողովրդի ստեղծագործական շռնմարանը, անսպառելի էր:

Ստեղծվեց հոգատար մի հանձնաժողով, Ա. Զոպանյանի ամենագործուն մասնակցությամբ: Կոմիտասի անձի նկատմամբ հոգ տանելուն զուգընթաց, հանձնաժողովը մասունք առ մասունք ժողովում էր կոմիտասյան պատառիկները:

«Անահիտը» նոր շրջանում բոլոր հնարավոր առիթներով հրապարակում էր նյութեր վարպետի մասին, նրա ժառանգության նորահայտ էջերը: Այսպես է, որ «Հայ գեղջուկ երաժշտությունը» ուսումնասիրության, նրա անտիպ մի բանախոսության կողքին երևացին Կոմիտասի բանաստեղծությունները[2]:

Կոմիտասի ծննդյան 60-ամյակի առթիվ Արշակ Զոպանյանը մի երկարաշունչ ուսումնասիրություն է տպագրում «Անահիտում»՝ «Կոմիտաս վարպետ և հայ երաժշտությունը» վերտառությամբ[3]: *Տեսական ընդհանրացումների հիման վրա Կոմիտասի կատարած գործի բազմակողմանի հմուտ վերլուծության փայլուն օրինակ է այդ հոդվածը:*

Չի եղել որևէ ազգ, ասում է Զոպանյանը, որի արվեստը իր բոլոր տարրերով միմիայն իր ուղեղի և սրտի արգասիքը լինի: Ամենից ինքնատիպ ազգային արվեստները կազմվել են ավելի հին օտար արվեստներից, տարբեր փոխառություններով: Բայց իրապես ազգային արվեստ արտադրել են այն ժողովուրդները, որոնք կարողացել են փոխառյալ տարրերը իրենց հատուկ ճաշակով կերպարանափոխել, իրենց սեփական ոգու համեմատ ղեկավարել և, դրանք միացնելով իրենց իսկ ստեղծած տարրերին, առաջ

---

[1] ԳԱԹ, Ա. Զոպանյանի արխիվ, 1 բաժին, № 3416:

[2] «Անահիտ», նոր շրջան, ԺԱ, տարի, 1939, թիվ 3:

[3] «Անահիտ», նոր շրջան, Գ տարի, 1931, թիվ 1—2:

ևն բևրել խառնուրդ, որը ինքնուրույն բնույթ է ստացել, դարձել է ամյսալ ժողովրդի ստեղծագործությունը և ներկայացրել է նրան հատուկ գեղեցկագիտություն: Արդյոք հայերն էլ ունե՞ն իրենց հատուկ գեղեցկագիտությունը: Իննհարյուրական թվականների վերջին այս հարցին ճշգրիտ պատասխանող գրեթե չկար:

«Ոմանք հարաղատ հայկական կը նկատեին ամեն ինչ, որ մեր նախահայրերեն մեզի հասած էր, և այդ բոլորը կը գտնեին գեղեցիկ, հոյակապ, անթերի, քանի որ հայերե արտադրված... ատիկա շովինական մոլեռանդ կուրացումն էր. այլը մեր ունեցածին մեջ ամեն ինչ օտարին հետևողություն կը նկատեին և իրենց ցեղը անկարող կը կարծեին ինքնատիպ արվեստ մը և գրականություն մը ստեղծելու, ատ ալ դարավոր սարկության հառաջ բերած ինքնաարհամարհանքի մտայնությունն էր, որ անկողմնակալության, ճշմարտասիրության տեղ կառնվեր»[1]:

Ազգային անապարծության և ազգային նիհիլիզմի դեմ պայքարը Ա. Զոպանյանի գործունեության կարևոր ուղենիշն է եղել ոչ միայն որպես տեսական դրույթ, այլև պրակտիկ ուղեցույց, սկսած այն օրից, երբ նա ոտք է դրել ինքնուրույն գրական-բանասիրական գործունեության ճանապարհին: Եվ միշտ էլ ըստ արժանվույն գնահատել է այն գործիչներին, որոնք ջանացել են վեր հանել ազգայինը մեր մշակույթի տարբեր բնագավառներում՝ Բ. Թորամանյան, Գ. Հովսեփյան, Գ. Սրվանձտյանց, Ե. Լալայան, Մ. Աբեղյան, Ս. Կանայան, Չիթունի և ուրիշներ: Եվ Կոմիտաս, որի «առաջին ու կարևորագույն գործը հայ երաժշտականոճը վերադտած ըլլալն է»[2]:

Խիստ շահեկան են հոդվածում Կոմիտասին տրված Զոպանյանի գնահատականները ըստ կարևորության կարգի:

Հայը բազմաձայն երաժշտություն չի ունեցել երբեք, նկատում է Զոպանյանը, Չուխաճյանի հորինածը եվրոպական արվեստ էր, Կարա-Մուրզայի առաջին փորձերը բևրի են եղել, որովհետև չի կարողացել ընտրել դուտ հայադրշմ ժողովրդական երգեր և դաշնակել է իտալական ոճով: Հայ բազմաձայն երաժշտության առաջին լուրջ ստեղծագործությունը տվել է Նիմալյանը, բայց դաշնակել է ոուս արվեստի ոգով և ոճով: Կո-

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Գ տարի, 1931, թիվ 1—2, էջ 105:

[2] Նույն տեղում, էջ 104:

միտան էր, որ առաջինը ամբողջության մեջ հարազատ ազգային ոճով դաշնակից հայ երգը։

Այնուհետև հնդինակը գնահատում է Կոմիտասին որպես հայ երաժշտական ֆոլկլորի, ինչպես նաև արևելյան ֆոլկլորի բանասեր-հավաքիչի, որպես արտակարգ երգչի («հայ երգին մեծ օրով մեծագույն արտահայտիչը»), որպես հայ երաժշտության մեծ պրոպագանդիստի ԲՌ օտարների և ԲՌ իր իսկ ժողովրդի մոտ, որպես խանդավառող ուսուցչի և արտակարգ խմբավարի, որպես գիտնականի, որ հետազոտություններ էր կատարում հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության կազմության, հատկանիշների, ճյուղավորումների, պատմության և հարակից հարցերի վերաբերյալ և, վերջապես, որպես ստեղծագործող կոմպոզիտորի։

Մեր օրերում, հայ ազգային երաժշտությանը և ընդհանրապես մշակույթին Կոմիտասի մատուցած ծառայության հարցում, գնահատությունների մեջ երկմտություն հնարավոր չէ, և այն ամենը, ինչ ժամանակին գրել ու հայտարարել է Զոպանյանը Կոմիտասի մասին, այսօրվա ակնոցով դիտած, աբսիմատիկ է թվում։ Բայց որքան դժվարին պայքարի գնով հենց իրենն՝ Կոմիտասին և նրա գործը պրոպագանդողներին, այդ թվում և Զոպանյանին, հաջողվեց ընդհանրական դարձնել այդ կարծիքը։ Լուսաբանության համար բերենք մեկ օրինակ։

1914 թվականին Պոլսի կրոնական ժողովը որոշում է կայացնում Կոմիտասի դեմ, դատապարտելով նրան այն բանի համար, որ հայ եկեղեցական երգերը գրամոֆոնով ամբողջ աշխարհին է ներկայացրել։ Զոպանյանը կրքոտ հանդես է գալիս այդ որոշման դեմ, գտնելով, որ նրա խավարամիտ հնդինակները ձգտում են մեզ նո տանել դեպի միջին դարերը[1]։ Զոպանյանի դեմ հանդես է գալիս երաժշտության ուսուցիչ Լևոն Չիլինգարյանը, որը առհասարակ վիճարկում է Կոմիտասի դերը և ծառայությունները հայ մշակույթին, իսկ նրան մասամբ պաշտպանում է նաև «Բյուզանդիոն» օրաթերթի խմբագրությունը[2]։ Եվ այս բոլորը 1914 թվականի ամռանը, երբ Կոմիտասը ըստ էության արդեն իսկ արել էր այն ամենը, ինչը նրա անունը ոսկե տառերով գրեց մեր մշակույթի պատմության մեջ։

---

[1] «Բյուզանդիոն», 1914, ԲԲ. 5384, 5385։

[2] Նույն տեղում, թիվ 5397։

* * *

«Անահիտի» գիտական-լուսավորական ծրագիրը որոշակի սահմաններում շեշտված նպատակ էր հետապնդում: Այստեղ էլ Չոպանյանի, որպես խմբագրի, մատենագրության առարկան հիմնականում իր ժողովրդի ծոցից ելած անհատ գիտնականների վերհանումն էր, գիտնականներ, որոնք ազգային շրջանակներում կամ օտար երկրների գիտական մտքի մեջ որոշակի դիրք էին նվաճել և ուղղակի կամ օբյեկտիվորեն նպաստում էին հայ մշակույթի և հայ անվան տարածմանը թե՛ հայության և թե՛ ուրիշ ժողովուրդների մեջ:

Հայագիտական մտքի զարգացման պատմության մեջ ուրույն տեղ ունի «Անահիտի» աշխատակից Գաւոնիկ Ֆնտգլյանը (1864—1937): «Մեր ժամանակի ամենեն լեցուն, ամենեն ծաղկյալ մըտքերեն մեկն էր ան»,— այսպես է գնահատում Ֆնտգլյանին Ս. Չոպանյանը:

Ծնվել է Պոլսում, ուսանել տեղի «Ռոպերթ քոլեջում», ապա ավարտել Մանչեստրի համալսարանը: Ֆնտգլյանը գրաբարին քաջատեղյակ էր և միևնույն ժամանակ 80-ական թվականներին աշխարհաբարի տարածման ամենաջերմ ջատագովներից մեկը: Աշխատակցում էր Պոլսի «Արևելքին», «Մասիսին» և «Հայրենիքին»: Համիդյան կոտորածների շրջանում, ինչպես 80-ականների շարժման մյուս ներկայացուցիչները, այնպես էլ Ֆնտգլյանը թողնում է Պոլիսը և փոխադրվում Մանչեստր ու մշտական բնակություն հաստատում այնտեղ: Նրա աշխատությունները ցրված են պարբերական մամուլի էջերում և վերաբերում են ընդհանուր պատմության, հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվաբանական-բանասիրական հարցերին:

Մանչեստր փոխադրվելուց հետո Ֆնտգլյանը աշխատակցում է գլխավորապես «Անահիտին», տպագրելով մեկ տասնյակից ավելի ուշագրավ հոդվածներ հայ ժողովրդի ու նրա պատմության, լեզվի, արևելյան մշակույթի վերաբերյալ: Առանձին հատորների ձևով Ֆնտգլյանը տպագրել է Օմար Խայամի քառյակների իր թարգմանությունը և ընդարձակ ուսումնասիրությունը, Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրան» իր թարգմանությամբ, Կոլյունի «Վարք Մաշտոցի» քննական հրատարակությունը: Գ. Ֆնտգլյանի նյութական օժանդակությամբ և բարոյական ջերմ

աջակցությամբ Ս. Զոպանյանը իրականացրեց իր «Նահապետ Քուչակի դիվանը» հատորի հրատարակությունը:

«Անահիտի» հին և նոր շրջանների համարներում Զոպանյանը խանդավառությամբ պրոպագանդում է Պոլսի կենտրոնական վարժարանի իր դասընկեր, ժամանակի խոշոր գիտնական Եր-վանդ Մանվելյանին, որը համաշխարհային երկրորդ պատերազմից հետո ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Մանվելյանի ուսումնասիրությունները ֆիզիոլոգիայի և, մասնավորապես, հյուսվածաբանության բնագավառում ակնառու տեղ էին ապահովել նրան համար եվրոպական գիտության մեջ: «Անահիտի» խմբագրապետի համար Մանվելյանի գործունեությունը աղգային հպարտության աղբյուր էր:

«Անահիտի» էջերում պարբերաբար երևում էր բժիշկ Պողոս Քոլոլյանը, որը նույնպես արևմտահայ 80-ականների սերնդի ներկայացուցիչ էր ու հաճախ հանդես էր գալիս այդ շրջանի պոլսահայ դեմոկրատական մամուլում ժողովրդական առողջապահության վերաբերող հոդվածներով: «Անահիտում» հրատարակած նրա ուսումնասիրություններում հատկանշական է բժշկական գիտության հարցերի սերտ կապակցումը հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակի հետ:

Զոպանյանի հայացքները և խմբագրական գործունեության նախասիրությունները բացահայտելու տեսակետից հատկանշական է նրա վերաբերմունքը դարասկզբի ամերիկահայ գործիչ Մ. Մանկասարյանի նկատմամբ: Մանկասարյանը 1902 թվականին հրատարակում է «Նոր կրոնագիտություն» վերտառությամբ աշխատություն, որը անմիջապես վերահրատարակվում է մի շարք երկրներում, ընդ որում ֆրանսերեն հրատարակությունը կրում է «Աշխարհ առանց Աստծո» բնութագրական խորագիրը: Դա «Աստվածաշնչի» և կրոնական դոգմանների հանդուրժամտաշնչի և ամբողջական քննադատության մի փորձ էր, որը դրվատանքի է արժանանում Զոպանյանի կողմից: «Ճշմարտության անկեղծ հետախուզումը... օր մը պիտի առաջնորդած է... նշմարելու կրոնական վարդապետության պատիպդիության՝ անկաշկանդ ու տոկուն արամաբանության հանդեպ»,— գրում է Արշակ Զոպանյանը[1]:

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 9, էջ 174:

Ճիշտ նույն դիրքերից հատկանշական է Տրդատ Եսայանի «Պատճառաբանություն» հոդվածի հրատարակությունը «Անահիտում»։ Այս հոդվածում էլ հեղինակը մատերիալիստական եզրակացություններից բացահայտում է մարդու իմացականության հնարավորությունները, հայտարարելով, թե առայժմ մարդու բանականության համար դեռ անբացատրելի երևույթներն ու իրերը որևէ կապ չունեն ինչ-որ գերբնական ուժի գործունեության հետ և ամենաբնական պիտի ճանաչելի դառնան գիտության առաջընթացին զուգահեռ[1]։

***

Ա. Չոպանյանը անխոնջ կերպով առաջ էր տանում «Անահիտի» հրատարակությունը և անընդհատ նամակագրությամբ աշխատակցության հրավիրում ժամանակի հայ նշանավոր գրողներին։ 1905 թվականին նա մի նամակով հիշեցնում է Բուլղարիա փոխադրված Ռուբեն Զարդարյանին, որ սպասում է վերջինիս աշխատակցությանը։ Զարդարյանի պատասխան նամակը շատ սրտառուչ է, այլև ազնվորեն գնահատող Ա. Չոպանյանի վաստակը. «Ձեր պատկերը ամենեն հարգալից տեղը կը գրավի իմ գրական պաշտամունքներուս մեջ, չկա բացարձակապես, ինծի համար, ամբողջ հայ գրականության մեջ մեկը, որուն գիտակցությանը, գրական դատաստանին ու արվեստին վրա նախապաշարված վստահություն ունենամ, որքան ձերինին, և ասիկա համոզում մըն է, որ երբեք չպիտի խաբեք իմ մեջս, ուստի, կրնաք երևակայել, թե ինչ բաղձանք է, որ փայփայած եմ տարիներով և հեռավորության մը մեջեն՝ անգամ մը անձնապես Ձեզ տեսնելու և հայտնելու սրանչացումս Ձեր բեղմնավոր տաղանդին համար։ Պիտի ջանամ, որ հառաջիկային այդ առիթը գտնեմ վերջապես։ Եվ տեղն է, որ ըսեմ, թե շատ բան պարտական եմ Ձեզի։ Առաջին քաջալերությունը Ձեզմե լսած եմ իմ գրական սկզբնավորությանս մեջ և Ձեր գնահատումը բարերար եղած է ինծի, ուստի, երբ «Անահիտի» աշխատակցության հրավեր կընեք, մխիթարական պարտականություն մըն է, որ կը հիշեցնեք»[2]։

---

[1] «Անահիտ», Ա. տարի, 1899, թիվ 8, էջ 242։

[2] ԳԱՐ, ՍԶԳ, I բաժին, № 2095։

1909 թվականին Զոպանյանը աշխատակցության խնդրանքով դիմում է Հովհաննես Հարությունյանին (Ալկաթինցուն)։ Հատկանշական է նույնպես Ալկաթինցու պատասխանը, որի մեջ նա «Անահիտը» դնահատում է որպես «հոյակապ գրական պարբերական», իսկ նրա խմբագրապետին մեծարում «մեծ վարպետ» տիտղոսով[1]։

Աշխատակցության հրավերներ ուղղվում են նաև շատ ուրիշ գործիչների ու գրողների. Զոպանյանը ջանքեր է գործադրում ամսագրի հրատարակությունը, որքան հնարավոր է, երկարաձգելու համար։ Այնուամենայնիվ նյութական միջոցների պակասը զգալ է տալիս։

Դեռևս 1906 թվականին Արշակ Զոպանյանը գրում էր Վարուժանին. «Նյութի պակասը վիս երբեք չէ նեղած, ընդհակառակն, «Անահիտ» շատ նեղ կը դտնեմ։ Միս մինակ ալ եթե մնամ, դեռ քսան տարի «Անահիտ» լեցնելու չափ բան ունիմ ըսելու... միայն միջոցներ ունենալու է, նյութական միջոցներ»[2]։ Երկու տարի հետո, դարձյալ Վարուժանին ուղղված մի նամակում, խոսելով «Անահիտի» պարբերականության մասին, Զոպանյանը նկատում է. «Հաճախ երևալը մեծ նշանակություն չունի, կարևորը՝ ազդող, նոր ճամփաններ բացող, մեր գրականության սահմանները լայնցնող, մեր ազգության հիմունքն ամրապնդող organe մը ըլլալն է, այդպես եղած է, կարծեմ, «Անահիտը», և այդպես ալ պիտի ըլլա այսուհետև[3]։

Այսպիսով, նյութական դժվարությունները և, մանավանդ, հառաջացող նյարդային հիվանդությունը ստիպում են Զոպանյանին դադարեցնել «Անահիտի» հրատարակությունը։ 1911 թվականի 9—12 միացյալ թիվը հանդեսի եղրափակիչ համարն է դառնում։ Զոպանյանը «Հուսկ բանք» վերտառությամբ խմբագրականում գրում է.

«Երբէ մը, որ ըբոսուցիչ ոևէ հանգամանք չունի, ոչ ալ օրաթերթի «գործնական» նկարագիրը, թերթ մը, որ դուտ մտավորական դեր մը կուզե կատարել, մեր մեջ չի կրնար դեռ գտնել իր նյութական ծախքերն իսկ հանելու չափ բաժանորդ և գտնված բաժանորդներեն ալ, սակավաթիվ բացառություններե զատ,

---

[1] ԳԱԹ, ՍՋՖ, I բաժին, № 2352։

[2] Դանիել Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 245։

[3] Նույն տեղում, էջ 268։

բաժնեգիններն պահանջը Արևելյան խնդիրը լուծելն ավելի դժվար է»[1]:

Գոյության տասնհինգ տարիների ընթացքում «Անահիտը» իրոք հանդիսացավ այնպիսի օրգան, որի մասին խոսում էր Ա. Զոպանյանը վարուժանին գրած նամակում: Հայ մշակույթի և մասնավորապես մամուլի պատմության մեջ «Անահիտը» գրավում է իր առանձնահատուկ պատվավոր տեղը: Նոր պայմաններում, շարունակելով արևմտահայ ԶՕ-ականների մամուլի առաջադիմական ավանդույթները, «Անահիտը» ամբողջությամբ ձգտում էր նպաստել հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության հասունացմանը, նրա բազմակողմանի լուսավորության գործին և ազգային արժանապատվության զգացմունքի զարգացմանը: Հայ ժողովրդի, մանավանդ նրա արևմտյան հատվածի, ներքին կյանքի և նրան արտաքին աշխարհի հետ կապող բազմապան հանգույցների վերաբերյալ անգին հանրագիտարան եղավ «Անահիտը» XX դարի առաջին տասնամյակում:

Ելի պատկերացնել, որ այդ վիթխարի վաստակը Արշակ Զոպանյանի բազմարդյուն գործունեության կարևոր, հերթական մեկ օղակն էր միայն:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Հասարակական-պրոպագանդիստական գործունեությունը: Հայ մշակույթի տարածումը Եվրոպայում

«Անահիտի» միջոցով Զոպանյանը խոսում էր հայ ժողովրդի հետ, միևնույն ժամանակ ու զուգահեռաբար ոչ մի րոպե չէր դադարում նրա ղրույցը օտար ժողովուրդների հետ, գերմարդկային ջանքեր ներդնելով, որպեսզի աշխարհին պարզաբանի մեր ժողովրդի պատմությունն ու նրա քաղաքակրթական դերը, տարածի հայ մշակույթի անանց արժեքների հրապույրը: Ֆրանսերեն լեզվով բանախոսությունների շարքը, օտար մամուլի զանազան օրգաններին սիստեմատիկ աշխատակցությունը,

[1] «Անահիտ», ԺԲ տարի, 1911, թիվ 9—12, էջ 193:

Ֆրանսիոն հրատարակած գրքերը մեծագույն նպաստ էին բերում հայ ժողովրդի քաղաքական դատի օգտին եվրոպական առաջադիմական հասարակական կարծիքի մշակման գործում:

«Ռևյու Ենսիքլոպեդիք» շաբաթաթերթի 1899 թվականի հուլիսի 8-ի համարում Չոպանյանը հոդված է տպագրում ժամանակակից հայ պրականության վերաբերյալ: Նույն թվականին նա կլանված աշխատում է Ֆրանսիոն լույսը տեսած երկու հատորների պատրաստության վրա՝ «Հայ վիպասաններ» և «Հայ բանաստեղծներ» տիտղոսներով: Այդ հատորները մաս էին կազմում Ա. Չոպանյանի ծրագրի, որով նա ձգտում էր մի ամբողջ շարք գործեր հրատարակել Ֆրանսիոն, այդ թվում Եղիշե, Նարեկացի, Աբովյանի «Վերք Հայաստանի» և այլն:

1899 թվականի վերջերին և 1900 թվականի հունվարին Ֆրանսիական Աշխարհագրական ընկերության հրավերով Ա. Չոպանյանը մի շարք դասախոսություններ է կարդում տարբեր քաղաքներում: Այսպես, դեկտեմբերի 6-ին Չոպանյանը հանդես է գալիս էբինալի ֆրանսիական լսարանի առջև, 8-ին Նանսում, 10-ին՝ Բար դը Դյուքում, հունվարի 13-ին՝ Բուրգուանում, 14-ին՝ Ռուենում, 15-ին՝ Լիլում, 13-ին՝ Նանսում: Չոպանյանի բանախոսությունների թեման էր «Հայերն ու Ֆրանսիան», որի մեջ նա դատապարտում էր պաշտոնական Ֆրանսիայի դիրքն ու դերը հայ ժողովրդին վերաբերող դարավերջյան քաղաքական անցքերի առնչությամբ, միաժամանակ վեր հանում ու գրվատում առաջադիմական, մտավորական Ֆրանսիայի լավագույն զավակների գործունեությունը: Չոպանյանը ջանում էր լսարանի ուշադրությանը հասցնել հայության քաղաքակրթական արժանիքները ու դերը պատմության մեջ:

Տեղեկանալով, որ La Ligue des droits de l'Homme et du citoyen *(Մարդու և քաղաքացու իրավունքների լիգա) կազմակերպությունը, որը վճռական դեր խաղաց Դրեյֆուսի գործում, նախաձեռնություն է վերցրել և դիմումներ արել հայկական ջարդերն արգելելու ուղղությամբ, «Փարիզի հայ հայրենասիրական ընկերակցության» անունից նրա նախագահ Հ. Խրիմյանը և ատենապետ Ա. Չոպանյանը նամակ են ուղարկում* Ligue-*ին: Ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ նամակի հեղինակները շնորհակալություն են հայտնում ձեռնարկված գործի առիթով և, միաժամանակ, ձգտում ավելի կորովի ու*

իմաստավորված ուղղություն հաղորդել Ligue-ի գործունեությանը[1]։

«Ոռոռ» թերթում հրապարակված մի հետագրից տեղեկանալով, թե էնիս փաշան Այնթափի շրջանում նոր ջարդեր է մըտմըտում, Ա. Չոպանյանը հրապարակային դիմում է կատարում Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելքասեին՝ խնդրելով միջամտել և կանխել սպանդը։ Չոպանյանի իսկ խնդրանքով կառավարությանը դիմումներ են կատարում նաև Ֆրանկո-հայկական միության անդամներ Բեռարը, Լավիսը, Շարմբթանը։ Կառավարությունը երեք ռազմանավեր է ուղարկում Միջերկրականի արևելյան ափերը «սովորական պատրվի», որոնք այցելում են Մերսին նավահանգիստը։ Նախատեսվող սպանդը տեղի չի ունենում[2]։

Այսպիսի առանձին հաջողությունները ավելի են ոգևորում Չոպանյանին և հույսի թևեր տալիս, պայմանավորելով նրա գործունեության հետագա վերելքը, որը քաղաքականության բնագավառում թեպետ ավարտվում է ցավալի անպտղությամբ, մշակույթի տարածման ու պրոպագանդման հարցում, սակայն, տալիս է անգնահատելի արդյունքներ։

1900 թվականի սկզբներին Հունգարիայի (Տրանսիլվանիայի) Սամոդուշվար քաղաքում հրատարակվող «Արմենիա» հունգարերեն թերթը տպագրում է Չոպանյանի «Երկնքին Համփան» հեքիաթը։

Ligue des droits de l'Homme-ի հովանավորությամբ Ա. Չոպանյանը 1900 թվականի հունիսի 16-ին կազմակերպում է քրաական-երաժշտական ցերեկույթ Վոդվիլի թատրոնի դահլիճում, ի նպաստ Հայաստանի որբերի։ Ցերեկույթի նպատակն էր նաև ֆրանսիական հասարակությանը ծանոթացնել հայ մշակույթին։ Ցերեկույթին մասնակցել են փարիզյան թատրոնների նշանավոր արվեստագետները, բանախոսել է Անատոլ Ֆրանսը։

Ֆրանսը, նախապես, հունիսի 13-ին «Ֆիգարոյում» «Որբերուն համար» վերտառությամբ հոդված է հրապարակում, որը այնուհետև, որոշ փոփոխություններով կարդում է ցերեկույթում։

Ֆրանսը այդ հոդվածում հայտնում է, թե հայ որբերի օգտին իր ելույթը ինքնաբուխ ղգացմունքի հետևանք է այն բանից հետո,

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1899, թիվ 1—2, էջ 41։

[2] «Անահիտ», Գ տարի, 1901, թիվ 2, էջ 56։

երբ իմացել է, թե Սրշակ Չոպանյանը, «խրոխտ ու գրովալից հոգիով շատ բարձր բանաստեղծ մը» կազմակերպել է այդ ցրեկույթը: Ֆրանսի հոգվածը մեծ տպավորություն է գործում ոչ միայն Ֆրանսիայում, այլև Եվրոպայի զանազան անկյուններում: Շատ թերթեր նրանից քաղվածքներ են տպագրում, իսկ Բելգիայի և Հոլանդիայի մի քանի թերթեր հրապարակում են ամբողջովին: «Օտոռի» հոգվածագիր Շարլ Մարթելը, օրինակ, գնահատելով Ֆրանսի բանախոսությունը, գրում է, որ հայկական կոտորածների իրականացման գործում Ֆրանսը «ցույց տվավ, թե Թուրք կառավարությունը միակ պատասխանատուն էր՝ կառավարական Ֆրանսիայի մեղսակցությամբ»[1]:

Ցերեկույթում եղրափակիչ բանախոսությամբ հանդես եկավ Սրշակ Չոպանյանը՝ «Հայ ցեղին դերը պատմության մեջ» թեմայով: Չոպանյանը շնորհակալություն հայտնեց Ֆրանսիայի առաջադեմ մտավորականությանը հայ ժողովրդի բախտի հարցում բռնած մարդասիրական դիրքի համար, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ կառավարությունն ու նրա դիվանագետները «անտարբեր ու նույնիսկ թշնամական դիրք մը բռնեցին զոհերուն նկատմամբ»: Համառոտակի շարադրելով հայ ժողովրդի պատմության հանգուցային էջերը՝ Չոպանյանը քաղաքակիրթ աշխարհից պահանջեց հարգանքի արտահայտություն իր ժողովրդի նկատմամբ, այլ ոչ թե համեմատ լոկ գթության համակրանքով[2]:

Ցերեկույթի «Հայկական մասում» ֆրանսերեն արտասանվեցին հայ բանաստեղծների մի շարք գործեր, որոնց թվում՝ Ա. Չոպանյանի «Օրոր Մայր Հայաստանին»:

Ֆրանսիական մամուլը ժլատ չգտնվեց արձագանքների մեջ: «Լա Ֆրոնտը» գրեց. «Այս մարդասիրական ձեռնարկը միանգամայն հայտնություն մը եղավ հայ հանճարին: Բրքական լուծին տակ կքած ազգին բանաստեղծներն ու երաժիշտները, արվեստի և գաղնակության խորին զգացումով մը, մեզի արտահայտեցին իրենց հայրենիքին տառապանքներն ու անձկությունները և անշեջ սերը, զոր անոր համար կը տածեն: Շահեկան բանախոսությամբ մը պ. Չոպանյան հաստատեց այն տպավորությունը,

---

[1] *Ըստ «Անահիտի», Բ տարի, 1900, թիվ 6—8, էջ 171:*

[2] *Բանախոսության ամբողջական տեքստը տպագրված է «Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 9—11:*

զոր ունեցած էինք արդեն։ Խոսելով այն մեծ արվեստագետների վրա, որ Հայաստանի պարծանքը կը կազմեն ու ներբողեց իր աղգին կենսունակ ուժն ու կորովը»[1]։ *Դրվատական հոդվածներ տպագրեցին նաև «Օտոռը», «Ժուռնալը», «Էքո դը Պարին», «Դևպան», «Բյուլբիենը»։ Ցերեկույթից գոյացած դումարը (4611 ֆրանկ 25 սու) ուղարկվեց Պոլսի Հայոց պատրիարքարանին՝ նպատակին տրամադրելու համար*[2]։

1900 թվականի նոյեմբերյան համարում «Մերքյուր դը Ֆրանս» ամսագիրը հրատարակում է Արշակ Չոպանյանի «Ուսումնասիրություն Գրիգոր Նարեկացու վերաբերյալ» («Etude sur Gregoire de Narek») հոդվածը։ Մի քանի ամիս անց, 1901 թվականի հունվարին, «Կավկազսկի վեստնիկը» վեսելովսկու թարգմանությամբ հրատարակում է Չոպանյանի ուսումնասիրությունը։ Այսպիսով, «Մերքյուր դը Ֆրանսի» և «Կավկազսկի վեստնիկի» միջոցով Արշակ Չոպանյանը սկիզբ է դնում հայ միջնադարյան պոեզիայի խոշորագույն ներկայացուցչի պրոպագանդի ու տարածման գործին։ Չոպանյանը օտար ընթերցողի առջև շռայլորեն փոում է Նարեկացու քնարերգության վերաբերյալ իր մտքերը, որոնք նա զարգացրել էր «Ծաղիկ» հանդեսի էջերում։ Նարեկացու «գործը իր ժամանակից առաջ է անցնում,— ընդհանրացնելով, գրում է Չոպանյանը,— խտացնում է այդ ժամանակաշրջանի ամբողջ Հայաստանը, մխրճվում անցյալի մեջ և, նույնիսկ, ընդգրկում ապագան։ Նա միստիկ է և մեծավայելուչ, հզոր է և բուռն, մռայլ է և շողարձակ, ինչպես խավարի մեջ առկախված հնքիաթային մի պալատ»[3]։

Նույն 1900 թվականին Արշակ Չոպանյանը մասնակցում է «Տիեզերական ցուցահանդեսի» «Համեմատական պատմության համաժողովին», որտեղ կարդում է «Ֆրանսիական գրականության ազդեցությունը հայ արդի մատենագրության վրա» տիտղոսով դեկուցում, և՝ «Ժողովրդական ավանդությունների համաժողովին», որտեղ հանդես է գալիս Դավթի ու Մհերի դյուցազներգության վերաբերյալ ուսումնասիրությամբ։ «Դավիթ և Մհեր» վերտառությամբ ուսումնասիրությունը այնուհետև հրատարակվում է «Revue des Revues» հանդեսում, բանիմաց ու խոր վերլուծու-

---

[1] *«Անահիտ», Բ տարի, 1900, թիվ 6—8, էջ 172։*

[2] *Նույն տեղում՝ թիվ 9—11, էջ 224։*

[3] Poèmes armeniens anciens et modernes, Paris, 1902, p. 23.

Բյամբ, ինչպես նաև «Շահնամեի» հետ համեմատությամբ, ցուցադրելով հայկական ժողովրդական դյուցազնավեպի իրական գանձերը։ Շահենան է, որ, ինչպես միշտ, այնպես էլ այս առթիվ, Ա. Չոպանյանը հավատարիմ մտահոգ է Բև Եվրոպայում հայկական մշակույթի տարածման ուղուն նպաստակով և Բև գործին արդիական քաղաքական հնչեղություն հաղորդելու խնդրով։ Չոպանյանը շեշտում է, Բև դյուցազնավեպը ծնվել է Սասունում, որտեղ ժողովուրդը «այս պահուս Բուրք զինվորներով և համիդիե-քուրդերով պաշարված, վերագույն պայքարը մղելու վրա է իր գոյությունը պահպանելու համար»[1]։ Եվ, այնուհետև, ընդգծում է, որ ի հակադրություն Ռուստամի, Դավթի պայքարը աշխարհակալական նպատակ չուներ, «բայց ևՒՒ պաշտպանությունն իր հայրենիքին և զայն հափշտակող բռնավորին չբացումը»[2]։

1901 թվականի գարնանը փարիզաբնակ մի խումբ հայերի նախաձեռնությամբ կազմակերպվում է «Հայկական միություն», որի կազմում, որպես առենապետ, գործուն աշխատանք է ծավալում Ս. Չոպանյանը։ «Հայկական միության» դիվանի մեջ մըտնում են նաև Խբենեները (առենապետ), Մ. Բամամշյանը, Ս. Փրիդոնյանը, Բլենկըրը, Դամբարյանը, Մինաս Չերազը, Փեհլիվանյանը և Տիրան Խան Քելեկյանը։

1901 թվականի հոկտեմբերի 1-ի համարում «Ըրվյու բլանշ» թերթը հրատարակում է Քուշակի «Սիրո երգերից» մի քանիսը Ս. Չոպանյանի թարգմանությամբ։ Խմբագրությունը իրապես գնահատում է քուշակյան տաղերի գեղեցկությունը և մի նամակով խնդրում Չոպանյանից ուրիշ ոչ մի տեղ չհրատարակել քուշակյան տաղերի նոր թարգմանությունները, մինչև որ դրանք լույս չտեսնեն «Ըրվյու բլանշում»։ Այսպիսով, Չոպանյանը Ֆրանսատառ մամուլում համեմատաբար ավելի վաղ է սկսում պրոպագանդել Քուշակին։ Նույն թերթի հոկտեմբերի 15-ի համարում Չոպանյանը հանդես է գալիս քաղաքական հոդվածով՝ «Հայերը և երիտ. Բուրքիան» ենթագոտով, որի մեջ, արդեն 1901 թվականին, ցույց է տալիս, որ երիտԲուրքերի ծրագիրը հակադիր է հայ ազգային ձգտումներին։

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1901, թիվ 9, էջ 205։

[2] Նույն տեղում, էջ 211։

1902 թվականի փետրվարին Բրըքինգտոնի (ԱՄՆ) «Ինթերնեյշընըլ մանսլի» ամսաթերթում հրապարակվում է Ա. Չոպանյանի «Հայկական հարցը և Եվրոպան» հոդվածը, որտեղ հեղինակը ամերիկյան ընթերցողներին պատմում է դարերի հոլովույթում հայ ժողովրդի կողմից քաղաքակրթությանը բերած լումայի մասին, քննադատում պաշտոնական Եվրոպայի մեղսակցական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ դարավերջին և ընթացիկ դարասկզբին։

Վիկտոր Հյուգոյի ծննդյան 100-ամյակի պաշտոնական հանդիսություններին, որ տեղի ունեցան 1902 թվականի փետրվարին, փարիզաբնակ հայ գրասերների և արվեստագետների անունից մասնակցում են Ա. Չոպանյանը և Է. Շահինը։ Շահինյան է Չոպանյանի ճառը քաղաքապետարանում։ Իր հարգանքը մատուցելով մեծ պրոլին ու նրան ծնունդ տվող երկրին, Չոպանյանն ասում է. «Վիկտոր Հյուգոյի անունը սրբազան անուն մը դարձած է հայոց համար, որոնք զայն կ՚արտասանեն այնքան երկյուղածությամբ, որքան անունը Բաֆֆիին, մեր ազգային մեծ վիպասանին, որ հրեղեն էջերու մեջ վերապրեցուց մեր հայրերուն փառավոր պայքարները և իր եղբայրները մղեց պապենական արի ավանդությունը վերանորոգել՝ ջիրենք խեղդող ու նվաստացնող լուծը թոթափելու համար»[1]։

Չոպանյանը և Էդգար Շահինը, Ատոմ Եարճանյանի, Տիրան Խան Քելեկյանի և ուրիշների գործուն օժանդակությամբ, մայիսի 29-ին «Սալ գնե-Ապրիքուլթուր դը Ֆրանսում» կազմակերպում են հայ արվեստի երեկույթ ի նպաստ Կիպրոսի հայկական որբանոցի։ Հայ բանաստեղծության և արվեստի մասին բանախոսությամբ հանդես է գալիս Գաբրիել Մուրևը։ Այդ բանախոսությունն էլ քիչ հետո տպագրվում է Չոպանյանի հրատարակած «Poèmes arméniens anciens et modernes» հատորում, որպես առաջաբան։

Երեկույթի առթիվ Չոպանյանը գրում է. «Հայկական արվեստի երեկույթը ավալ բարոյական այն արդյունքը, որ կը ցանկային ստանալ զայն կազմակերպողները։ Այն բոլոր օտարազգիները, որ ներկա էին, մեկնեցան հարգանքով տոգորված դեպի հայ ցեղին քաղաքակրթական հատկությունները, որոնք շատ նվազ ծանոթ են քաղաքակիրթ աշխարհին մեջ, քան հայկական տառա-

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 2, էջ 35։

պանքը, և որոնք շատ ավելի փոքր տեղ մը կը բռնեն օտարներու մեղի համար ցույց տված համակրանքին մեջ, քան մեր չարչարանքներուն ազդած արդահատանքը»[1]:

Երեկույթի հայտարարի կարևոր կետերից են նաև կարդացված մի քանի հատվածների և Քուչակի տաղերի ֆրանսերեն արտասանությունները «Օդեոնի» և «Կոմեդի Ֆրանսեզի» արտիստների կատարմամբ, ինչպես նաև բազմաթիվ հայ ժողովրդական բանաստեղծությունների՝ սիրո և պանդխտության երգերի անմոնքումը: Բոլոր այդ բանաստեղծությունները, ինչպես նաև հայտարարում տեղ գտած գրական մյուս նյութերից շատերը, կազմեցին «Poèmes arméniens anciens et modernes» հատորի առաղձը, որը լույս տեսավ նույն 1902 թվականին:

Հատորն, այդպիսով, ընդգրկում էր հատվածներ Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից, Քուչակից 17 տաղեր, ժողովրդական երգեր, Սբովյանի «Երևանի բերդը», Դուրյանի «Իմ ցավը», Պեշիկթաշլյանի «Քնար կուսին», «Հայ քաջուհին», Ս. Զոպանյանի «Հիվանդանոցը», «Օրոր Մայր Հայաստանին» և մի շարք ուրիշ գործեր, բոլորն էլ Ս. Զոպանյանի թարգմանությամբ:

Առաջաբանում Գ. Մուրեյը գրում է. «Այսօր Եվրոպայում, բացի որոշ շրջանակներից, մարդիկ իՙնչ գիտեն այն դերի մասին, որ կատարեց... այս հերոսական ժողովուրդը մարդկային պատմության մեջ. ոչինչ կամ գրեթե ոչինչ... Քաղաքակիրթ աշխարհը,— ասում է պարոն Սրշակ Զոպանյանը ամերիկյան հայտնի ամսագրերից մեկում վերջերս հրատարակած իր մի հոդվածում[2],— հայկական տաղտապի այս օրերին ընդհանրապես հետաքրքրվեց ոչ թե հայ ժողովրդով, այլ հայ ժողովրդի տառապանքով: Քաղաքակիրթ աշխարհը չէր ճանաչում հայ ժողովրդին կամ ճանաչում էր քիչ և այն էլ շատ վատ, և այդ անգիտությունը թերևս ավելի աղետալի եղավ հայերի համար, քան թուրքական դանակի հարվածները»[3]:

Ս. Զոպանյանի նպատակն էլ հենց այն էր, որպեսզի այդ հատորի օգնությամբ պարտադրեր «քաղաքակիրթ աշխարհին» պատկերացում կազմելու հայ պոեզիայի, նրա հին ու նոր շրջանների նմուշների վերաբերյալ:

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 6, էջ 133:

[2] Նկատի ունի "The International Monthly", February, 1902:

[3] Poèmes arméniens anciens et modernes, Paris, 1902, p. 22.

Մուրնյը, առաջիններից մեկը եվրոպական մտավորականներից, գնահատում է Նարեկացուն և Քուչակին: «Այդ ժամանակաշրջանի ամենաղարմանահրաշ, ամենաճաշակավոր և բառիս արդիական իմաստով ամենից ավելի արվեստագետ միստիկ բանաստեղծը Գրիգոր Նարեկացին է, նա, որ կարողացավ ամենաուժգին, ամենացայտուն և գունեղ ձևերով արտահայտել իր զգացումները»[1],— կարդում ենք առաջաբանում:

Հեղինակը գնահատանքի խոսք է ասում նաև Արշակ Չոպանյան բանաստեղծի մասին: Կսկծագին հուզում է բխում նրա բանաստեղծություններից, ասում է Մուրնյը, իսկ, հատկապես, «Օրոր Մայր Հայաստանին» քնարվածը, «որի մեջ ամբողջ մի ազգի սիրտն է տրոփում, ամբողջ մի ժողովրդի հոգին իր որդիական սերն է հևևկում, տառապանքի և հույսի աննման մի երգ է»[2]:

Առաջաբանում խիստ հատկանշական են հայ ժողովրդի նպատակներն ընդհանրացնող այն տողերը, որոնք Մուրնյին ներշնչել է Արշակ Չոպանյանը: «Այն, ինչ նա (հայ ժողովուրդը—կ. Դ.) ցանկանում է այսօր, իր վրա ծանրացող թշվառությունների ու տանջանքների նկատմամբ ամբոխների մեջ կարեկցանք արթնացնել կամ անզոր վրդովմունք առաջացնել չէ բնավ, այլ այն, որ շարունակի ցույց տալ, թե ինքը գոյություն ունի բարոյապես, մտավորապես, արվեստագիտորեն, մի խոսքով՝ դրսևորել որքան իր գեղագիտական հանճարը, նույնքան և իր քաղաքական իրավունքների օրինականությունը»[3]:

1902 թվականին լույս տեսած «Նահապետ Քուչակի դիվանի» հետ միասին «Poèmes» ժողովածուն Արշակ Չոպանյանի գործունեության կարևոր օղակն է այդ ժամանակահատվածում: «Poèmes...» հատորը մեծ ընդունելություն գտավ ֆրանսերեն ընթերցող հասարակայնության շրջանում: Այդ են վկայում անհատների տասնյակ նամակները և մամուլի բազմաթիվ արձագանքները:

Չոպանյանին հասցեագրված նամակում քննադատ Մաքս Նորդաուն գրում է. «Դուք հայրենասիրի գործ է, որ կատարած եք, ձեր բանաստեղծության գանձերը ճանչցնելով: Ահա պատ-

---

[1] Poèmes arméniens anciens et modernes, Paris, 1902, p. 23.
[2] Ibid. p. 33.
[3] Ibid., p. 39.

վական եղանակ մը՝ իր ժողովրդին և իր հայրենիքին ծառայություն մատուցանելու»[1]։

Օգոստոսի 8-ին Փարիզի «Petit Bleu»-ն և 10-ին Բրյուսելի համանուն թերթը դրախոսականներ են տպագրում ժողովածուի վերաբերյալ։ Բրյուսելի թերթը հատկապես շեշտում է Զոպանյանի նպատակը հայ մշակույթի արժեքները Եվրոպային ճանաչել տալու ուղղությամբ, իսկ փարիզյան օրգանը բարձր գնահատականներ է տալիս հայ հին ու նոր բանաստեղծներին, մասնավորապես առանձնացնելով Գրիգոր Նարեկացուն և Նահապետ Քուչակին։

«Mercur de France»-ում հանդես է գալիս Պիեռ Քիլհաուը։ «Այսօր, ամենեն զարհուրելի արյունահոսություններ հետո,— գրում է նա,— անասելի անձկության մը մեջ, ջարդերուն, հարըստահարումին, սովին դեմ կը հանեն (հայ ժողովուրդը— Կ. Դ) անխորտակելի կենդանության մը թաքուն ուժը։ Եվ ապշեցուցիչ բան մըն է, որ միշտ ջախջախված ու հոշոտված ըլլալով հանդերձ, այս ողբերգական ժողովուրդը դրականություն մը ունեցած ըլլա և դեռ այսօր իսկ պատմաբաններ ու բանաստեղծներ արտադրե։ Բայց... հայ դրականությունեն ուրիշ բան չկա ֆրանսերեն, գերմաներեն կամ անգլերեն, բացի հատվածական թարգմանություններե, հանդեսներու կամ գրեթե անգտանելի տետրակներու մեջ կորսված։ Կյանքի պայքարին մեկ ուրիշ ձևն է, ուրեմն, զոր ի հայտ կը բերե պ. Զոպանյան քանի մը հայկական բանաստեղծության ֆրանսերեն թարգմանությունը հրատարակելով»[2]։

«Poèmes...» ժողովածուի քաղաքական նպատակամղվածությունը նկատում են նաև ուրիշ օրգաններ։ «La Plume» կիսամսյա գրական գեղարվեստական հանդեսում Էդմոն Փլոնը հենց այդ կետն էլ ընդգծում է, գրելով. «Սուր այժմեության մ'ունի «Հայկական բանաստեղծության» այս հավաքածուն, զոր պ. պ. Ս. Զոպանյան և Գաբրիել Մուրնյ կը հրատարակեն այն պահուն, ուր Բերևս Սասունի մեջ կարմիր գազանին վերջին ոճիրները տեղի կունենան։ Ցեղի մը ամբողջ հոգին անոնց մեջ կը կողկողի, կարծես ծովերուն ու ցամաքներուն վրայեն մեղի հասած»[3]։ Է. Փլոնը բարձր է գնահատում Եվրոպայի առջև նորահայտ նա-

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 8, էջ 177։

[2] Նույն տեղում, թիվ 9, էջ 206։

[3] Նույն տեղում, թիվ 10—11, էջ 225։

ընկացու քնարի բազմազանությունը, որը նա համեմատում է Դանթեի ամենից քնքուշ զեղումների և ամենից ահեղ պատկերների հետ։ Նարեկացին, Մովսես Խորենացու հին դրվագներից հետո, մի տեսակ ջահ է, որը լուսավորում է հայ բանաստեղծության հետագա ճանապարհը։ Նահապետ Քուչակին հոդվածի հեղինակը համարում է գեղջկական Սոֆոկլես, որը երգել է Հայնրիխ Հայնեի նման, բայց նրանից հինգ վեց-դար առաջ։

«Poèmes...»-ի հրատարակությունը արձագանքներ է գտնում նաև Իտալիայում և ԱՄՆ-ում։ «Հելլենո-լատին ընկերության քրոնիկում (*«Chronache della civilta elleno—latina»*) տպագրվում է Անջելո դը Գուբերնատիսի հոդվածը և Բոստոնի «Woman's journal»-ում՝ հանդեսի տնօրինուհի Ալիս Սթոուն Բլաքուելի դրախոսությունը, Ա. Չոպանյանի «Օրորի» անգլերեն թարգմանության հետ միասին»[1]։

1903 թվականի փետրվարի 15-ին Փարիզում Ա. Չոպանյանի գործուն մասնակցությամբ կազմակերպվում է հայ արվեստին նվիրված մի նոր երեկույթ, որտեղ, գեղարվեստական-համերգային բաժնից բացի, հանդիսականների առջև հանդես է գալիս Ա. Չոպանյանը՝ «Հայ աշուղների բանաստեղծությունը» թեմայով։ Բանախոսությունում Չոպանյանը մեկ անգամ էլ հիշեցնում է, թե Փարիզում կազմակերպվող հայ արվեստի երեկույթների նպատակն է Եվրոպային ներկայացնել հայ ժողովրդի հոգևոր մշակույթը, որպեսզի հասարակական կարծիքը բազմակողմանի ու ճիշտ պատկերացում ունենա քաղաքական դեպքերի վերաբերյալ ու արժանի հարգանքը, այլ ոչ խղճահարության զգացումը, հասցեի հայությանը։

Չոպանյանը դարձյալ անդրադառնում է հայ գրականության պատմությանը, վեր հանելով և օտարների համար մատչելի համեմատություններով գնահատելով հին ու նոր շրջանի հայ գրողներին ու բանաստեղծներին։ Միևնույն ժամանակ նա ուշադրություն է հրավիրում հնագույն, նախաքրիստոնեական շրջանի հայ բանաստեղծության վրա։ Համադրելով հայ բանաստեղծության հեթանոսական և քրիստոնեական շրջանները՝ դեռևս 1897 թվականին ֆրանսիական լսարանի առջև կարդացած իր դասախոսության մեջ նա գտնում էր, որ աշխարհիկ, արևոտ, կենսատու տարրը միշտ էլ կազմել է հայ բանաստեղծության կարևոր բաղ-

---

[1] *Տե՛ս «Անահիտ», Դ տարի, 1902, թիվ 10—11, էջ 227։*

կացուցիչ մասը: «Ինչքան էլ սահմանափակ, նկնդեցական այդ գրականությունը երբեմն բարձրացավ ամենաբարձր ներշնչումների աստիճանին,— գրում է նա:— Քրիստոնեությունը ի վիճակի եղավ հեթանոսությունից դուրս բերելու հայ ազգի մտածողությունը, բայց չկարողացավ նրանից վերցնել նրա քնարական և խանդավառ հոգին: Պարզապես շրջանակի փոփոխություն կատարվեց: Հին դուսանի հոգին շարունակեց բրթռալ շարականասաց բանաստեղծի մեջ: Ոչ միայն ինչ-որ բան վերապրեց հեթանոս բանաստեղծի խանդավառությունից, այլ նաև վերապրեցին դիցաբանական բանաստեղծության լուսավոր ուրախությունն ու արևոտ խաղաղությունը: Եվ բոցաշունչ քնարականության ցոլքերը լուսավորեցին քրիստոնեական այդ պոեզիայի միստիկական խավարը: Արև, լույս, ճառագայթ բառերը, որոնք մեր հնադույն բանաստեղծության հիմնական մոտիվներն էին, արտացոլվում են հաճախ մեր կրոնական բանաստեղծության մեջ»[1]:

Այս մտքերը յուրովի կրկնվում են նաև 1903 թվականին արտասանված բանախոսությունում: Ավելին, Զոպանյանը համարին գծում է հայ բանաստեղծության զարգացման ուղին, ցույց տալով միջնադարյան, հատկապես Քուշակի օրինակով, աշուղական բանաստեղծության ներմուծած մոտիվները նկնդեցական մատենագիրների համեմատությամբ: Այդ գրականությունը «աշխարհային ղգացմանց աղաւո երգը լսել է ըրած, մինչ նկնդեցական մատենագիրները գրականությունը զուտ կրոնական սահմանի մեջ կը պահեին, այդ աշուղներու գրականությունը հայ մտքին ամենեն ինքնատիպ, ամենեն կենդանի ու գեղեցիկ արտադրությունն է գրական ոլորտին մեջ»[2]:

Փետրվարի 15-ի երեկույթի հասույթը նույնպես տրամադրվում է որբախնամ նպատակի և վռամշապուհ քահանայի միջոցով ուղարկվում Շապին Գարահիսարի դպրոցի հոգաբարձությանը:

Նույն օրերին Զոպանյանը «Անահիտում» հայտարարում է, որ ինքը ձեռնարկել է ֆրանսերեն լեզվով «Անահիտի» մատենաշարի հրատարակությանը, նպատակ ունենալով հայ գրականության լավագույն էջերը թարգմանաբար տրամադրել օտար ընթերցողին: Ծրագիրը լայն էր: Առաջին հերթին պետք է լույս

---

[1] L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient. Paris, 1897, p. 40—41.

[2] «Անահիտ», ը տարի, 1903, թիվ 2—3, էջ 44:

տեսներ հայ ժողովրդական բանաստեղծության մի հավաքածու, ապա Քուչակի, Նարեկացու, Շնորհալու, Եղիշեի, Աբովյանի, Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Րաֆֆու, Դուրյանի, Պարոնյանի և ուրիշների գործերը[1]: Չոպանյանին չհաջողվեց իրականացնել այդ ծրագիրը ամբողջությամբ: Այնուամենայնիվ, նա իրագործեց մտահղացման կարևոր մասը իր «Հայ ժողովրդական երգեր», «Հայ աշուղներ», «Վարդենիք Հայաստանյաց» հատորներում:

«Chants populaires arméniens» («Հայ ժողովրդական երգեր») հատորը լույս տեսավ 1903 թվականին, ընդգրկելով ավելի քան երկու հարյուր ժողովրդական բանաստեղծության նմուշներ, այդ թվում սիրո, հարսանեկան, տոնական, օրորոցային, կատակային, ոգո երգեր, հոգևոր բանաստեղծություններ, պանդխտական երգեր, ազգային-հայրենասիրական երգեր և այլն:

Հատորի առաջաբանում Պոլ Ադանը գրում է. «Հայերը միշտ ցանկացել են ու ցանկանում են մեծ խնամքով պահպանել իրենց ոգու անաղարտությունը, որպեսզի ազատության պահին այն լինի առողջ, մաքուր և վերծ օտար ամեն տեսակի ազդեցությունից: Ահա թե ինչու հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկը (նկատի ունի Արշակ Չոպանյանին—Կ. Դ.): նա, որ գուցե լավագույնս օժտված է պաշտպանելու և սիրելի դարձնելու համար այդ ոգին ու միաժամանակ համակրանք, սեր և հիացում առաջ բերելու մարդկանց մեջ այդ ոգու նկատմամբ, ֆրանսիական հողի վրա առաջին քարն է դնում այն հուշարձանի, որ նա մտածում է բարձրացնել ի պատիվ մարտնչող, տառապող, բայց իր հույսը երբեք չկտրող հայ ժողովրդի հանճարի»[2]:

Հայ գրականությունը, Արշակ Չոպանյանի ջանքերով, այլևս մութ կետ չէր եվրոպական հասարակության գիտ մտավորական շրջանակների համար: Այդ մասին են վկայում ժամանակի անվանի բանաստեղծի տված գնահատականները հայ գրականության առանձին գործիչներին և, մասնավորապես, Նարեկացուն ու Քուչակին, որոնց ճանաչման գործում Չոպանյանի վաստակը առանձնապես մեծ է: «...Նարեկացու ղղջական աղոթքների մեջ կան այնպիսի հոյակապ հատվածներ, որոնք բյուզանդական վարպետների արվեստին հատուկ ճոխ ձևերով են զարդարում հայկական հանճարի առանձնահատուկ նկարագրի այս գեղեցիկ

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1903, թիվ 2—3, էջ 40:

[2] Archag Tchobanian. Chants populaires arméniens. Paris, 1903, p. VI.

տգեղությունները»[1]*։ «Ճակատագրի ուժի առաջ մարդկային անզորության գիտակցությունը մանկական հմայիչ քաղցրության շեշտեր է հաղորդում Նահապետ Քուչակի՝ սիրո այդ մեծ երգչի քնարին։ Նրա մոտ սերը խոնարհ է, թուլուն, մանկունակ և, երբեմն, արտահայտվում է բարձրագույն քնարականության անակնկալ թռիչքներով»*[2]*։*

«Chants populaires arméniens» *հատորում Չոպանյանը գիտակցել է նաև իր ներածական խոսքը, որի մեջ համառ հետևողականությամբ բացահայտում է իր մշակութային-պրոպագանդիստական գործունեության քաղաքական նպատակները։ Նա պնդում է, որ աշխարհը հայ ժողովրդին պետք է ճանաչի ոչ թե նրա դժբախտություններից ու տառապանքներից, այլ նրա ստեղծած մշակութային գանձերից և համապատասխան կարծիք կազմի նրա մասին*[3]*։ «Հայ ժողովրդի հասցեին ուղղված բոլոր սին բարբաջանքների լավագույն պատասխանը գտնվում է նրա պատմության և գրականության մեջ, բարբաջանքներ, որոնցով փորձեցին կեղտոտել հայ ժողովրդի թափած հեղեղանման արյունը։ Ահա թե ինչու մենք ձեռնարկեցինք «Հայկական գրադարան» անվան տակ հրատարակել գրքերի մի ամբողջ շարք, որտեղ եվրոպացի ընթերցողին կներկայացվեն հայ ժողովրդի հանճարի գրական գլխավոր արտադրանքները՝ սկսած հայ ժողովրդական պոեզիայից մինչև ժամանակակից հայ գրականության այն ընտիր էջերը, որոնցում այս ժողովուրդը ինքնաբուխ կերպով արտահայտել է իր սրտի ճախրանքները, հոգևոր ձգտումները, իր տառապանքների սարսուռներն ու վշտի հառաչանքները, իր ոգալու, մտածելու և ապրելու եղանակը, մեկ խոսքով՝ իր հոգու կենդանի պատկերը»*[4]*։*

«Chants» *հատորի համար, որպես օտար գրական արժեքների լավագույն թարգմանություն, ֆրանսիական ակադեմիան Արշակ Չոպանյանին շնորհում է Լանկլուա մրցանակը։ Այս հատորը նույնպես ունեցավ լայն արձագանքներ։ Չոպանյանը մասնավոր ջանքեր էր թափել, որպեսզի առավել ցայտուն երևար հայ ազգային խառնվածքը։ Հատորի նախապատրաստման ժամանակ նա*

---

[1] Archag Tchobanian. Chants populaires arméniens, Paris, 1903, p. XII.

[2] Ibid., p. XIII.

[3] Ibid., p. XXII.

[4] Ibid., pp. XXXII—XXXIII.

նայել էր շուրջ 20000 կտոր և ընտրել միայն 200[1]։ Պատահական չէ, որ հատորի առթիվ ծայր առած արձագանքներում եվրոպական մտավորականներից շատերը ընդգծում են հենց այդ հանգամանքը։

Ջեմս Բրայսը, օրինակ, գրում էր Ա. Զոպանյանին. «Կտորներեն շատը մեծ հրապույր ու թարմություն ունին, ինքնուրույն ազգային նկարագրով մը, որ իրենց հատուկ կնիք մը կուտա անոնց։ Արևելյան համ մը կա անոնց մեջ, բայց շատ տարբեր արաբական ու պարսկական բանաստեղծություններեն և շատ կտորներու մեջ զգացման իրական խորություն մը»[2]։ Նույն բանը շեշտում և, առհասարակ, դրվատական հոդվածներ են տպագրում Փարիզի «Petit Bleu» լրագիրը հունիսի 18-ի համարում և La Revue» ամսագիրը՝ օգոստոսյան համարում։ Հոդվածներ են տպագրվել վիեննայի «Wiener Abendpost» թերթի օգոստոսի 22-ի համարում և Փարիզի «L'Européen»-ում[3]։

Զոպանյանն օգտվում է բոլոր առիթներից, որպեսզի ավելի լայն շփումներ ունենա Փարիզի մտավորական կյանքի հետ։ 1903 թվականին նա մասնակցում է Բրանդեսի, Միրպոյի, «La Blume» գրական հանդեսի 15-ամյակի պատվին կազմակերպված երեկույթներին։ Հետաքրքրականն այն է, որ բոլոր այդ առիթները Զոպանյանը ձգտում է օգտագործել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը պրոպագանդելու և առաջնակարգ մտավորականների մեջ նոր համակիրներ շահելու նպատակով։

Գրական քննադատ Գեորգ Բրանդեսի պատվին կազմակերպված հացկերույթում Ա. Զոպանյանի ճառը շահեկան է նաև մեր այլ տեսակետից։ Արվեստի նպատակների, իրականության և արվեստի փոխհարաբերության հարցերն է շոշափում Զոպանյանը, մեկ անգամ ևս շեշտելով ռեալիստական արվեստի առավելությունները։ Դիմելով Բրանդեսին՝ նա ասում է. «...ձեր մտքին լույսը սևեռած եք այնքան ընկերական հարցերուն, որքան գեղեցկագիտական հարցերուն վրա, անոնց հարակցությունը ցույց տված, զանոնք իրարմով լուսավորած եք. դուք ապացուցած եք, որ մեծ արվեստը անհրաժեշտ բարիք մը, նվիրական հաց մըն է մարդկային ընկերության համար, ընկերական պայմաններու

---

[1] «Անահիտ», է տարի, 1905, թիվ 9, էջ 190։

[2] «Անահիտ», ե տարի, 1903, թիվ 8, էջ 124։

[3] Նույն տեղում, թիվ 11, էջ 200։

բարելավումը, նախապաշարումներու, մոլեռանդություններու, հինավուրց անասնականության բոլոր մնացորդներուն քանդումը, ամբողջապես աղատագրված մարդկության մը հիմնարկումը՝ գերագույն նպատակն են ճշմարիտ արվեստին ու անոր ամենեն լիակատար ու ամենեն վեհ փիլիսոփային անհրաժեշտ պայմանը»[1]:

Ֆրանսիայի մտավորականության շրջաններում որոշակի և ծանրակշիռ հեղինակության նվաճումը Չոպանյանի համար ապահովում է նրա ճանաչումը նաև ուրիշ երկրներում: Փարիզում ծավալած գործունեության տասնամյակը դեռ չբոլորած՝ Ա. Չոպանյանն արդեն հրատարակվել էր, ֆրանսերենից բացի, նաև անգլերեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն լեզուներով: 1903 թվականի նոյեմբերին այդ ցանկը լրացնելու է գալիս Դանիայի «Dansk tidsskrift» ամսագիրը, որը Մ. Նալբանդյանի «Ազատություն», Գամառ Քաթիպայի «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունների կողքին տպագրում է նաև Ա. Չոպանյանի «Օրոր Մայր Հայաստանին»:

1903 թվականի տարեվերջին Չոպանյանն ու իր ամսագիրը ամենաեռանդուն գործունեություն են ծավալում Չեյթունի որբերի օգտին հանգանակություն կազմակերպելու ուղղությամբ: «Անահիտի» մի շարք համարներում էջեր են հատկացվում այդ հարցին, կոչեր և հաշվետվություններ են հրապարակվում:

1904 թվականին Փարիզում ստեղծվում է տեղի «Հայ աշխատավորաց միությունը», որը ի շարս այլ միջոցառումների ձեռնարկում է նաև մշակութային երեկույթների կազմակերպմանը: Այդպիսի երեկույթներից մեկում Չոպանյանը բանախոսում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի հասարակական և գրական գործունեության վերաբերյալ: Թեմայի ընտրությունը պատահական չէր, որովհետև ճիշտ նույն թվականին նա առանձին հատորով հրատարակել էր «Մկրտիչ Պեշիկթաշլյանի քերթվածներն ու ճառերը»:

Փարիզահայ մտավորականության հասարակական գործունեությունը 1905—1906 թվականների ընթացքում վերջնականապես ստանում է կազմակերպված ձև: 1905 թվականին ստեղծվում է «Մասիս» գրական-երաժշտական ակումբը, որը ամիսը մեկ անգամ երեկույթներ է կազմակերպում, իսկ 1906 թվականի մարտին այդ ակումբի բազայի վրա հիմնվում է «Փարիզի հայկական միությունը»: Միության տնօրեն խորհրդի կազմի մեջ են

---

[1] *«Անահիտ», Ե տարի, 1903, թիվ 5, էջ 81:*

մանում Ներսես խան Ներսեսյանը (առնապետ), Շիրվանզադեն (փոխառնապետ), Համբարձում Միլիքյանը (դանձապահ), Արշակ Չոպանյանը (առնադպիր), Ա. Բաբայանը, Հ. Իսքենտերը, Մ. Հովակիմյանը:

«Միությունն» ընդունում է կանոնադրություն, որի մեջ նորաստեղծ կազմակերպության նպատակներն են համարվում. նպաստել Հայության բարոյական և նյութական շահերի պաշտպանմանը, քաղաքակիրթ աշխարհին ճանաչել տալ Հայության անցյալ ու ներկա կյանքը և մտավոր գործունեությունը, հայ ժողովրդի մեջ տարածել արևմտյան քաղաքակրթություն: Կանոնադրությունում շարադրված ծրագիրը, ելնելով նպատակներից, կրում է լայն մշակութային-լուսավորական կրթական բնույթ: Հատկանշական է, որ այդ կանոնադրությունը մշակող հանձնաժողովի մեջ գործուն մասնակցություն է ունեցել Ա. Չոպանյանը: Եվ արդեն «Միության» նպատակներն ու ծրագիրը միանգամայն համահնչուն են Չոպանյանի գործունեության նպատակներին և ուղղությանը:

«Փարիզի հայկական միությունը» ծավալից բազմաճյուղ գործունեություն: Ամենակարևոր միջոցառումները եղան 1906 թվականի դեկտեմբերի 1-ին կազմակերպած կոմիտասյան առաջին համերգը Փարիզում և հայ մատենադարան-ընթերցարանի ստեղծումը, որի առաջին տնօրեն նշանակվեց Ա. Շահմուրադյանը:

Այդ տարիներին էլ Չոպանյանը շարունակում է իր մշակութային-արտագաղթական գործունեությունը ֆրանսիական հասարակության մեջ: 1905 թվականի հունվարին տպագրվում է նրա հոդվածը Նահապետ Քուչակի բանաստեղծության մասին, «Les Arts de la Vie» ամսագրում, որի խմբագիր հրատարակիչն էր քննադատ Գաբրիել Մուրեյը: Իսկ նույն թվականի ամռանը հրատարակային դասախոսություն է կարդում Փարիզի Թևեն թաղի «ժողովրդական համալսարանում», նյութ ունենալով հայ ժողովրդական բանաստեղծությունը:

1906 թվականի գարնանը լույս է տեսնում Արշակ Չոպանյանի հերթական ֆրանսերեն հատորը՝ «Les Trouvères arméniens» («Հայ աշուղներ»), Պողոս Նուպար փաշայի նյութական աջակցությամբ: Հատորը օտար ընթերցողներին ծանոթացնում է հայ հին և նոր աշուղների գործերին, ընդգրկելով Նահապետ Քուչակ, Հովհաննես Պլուզ, Կոստանդին Երզնկացի, Ֆրիկ, Առաքել Բաղիշեցի, Մկրտիչ Նաղաշ, Քերովբե, Օհաննես, Բերդակ սարկավագ,

Հովհաննես Բլկուրանցի, Գրիգոր Աղթամարցի, Ղազար Սեբաստացի, Ներսես Վարդապետ, Երեմիա Քյոմուրճյան, Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Դանիէլ Վանեցի, և, վերջապես, Չիվանի:

Ա. Չոպանյանի հմտալից առաջաբանը ուղղություն է տալիս ֆրանսերենով ընթերցողին՝ ճիշտ հասկանալու և գնահատելու հայ աշուղական բանաստեղծական արվեստը: Հայ աշուղներին համեմատելով ֆրանսիական միջնադարյան տրուբադուրների հետ՝ Չոպանյանը գրում է.

«Գլխավոր տարբերությունն այն է, որ մեր աշուղները, գեթ ժամանակով մեզ ավելի մոտ եղողները, իրենց կյանքով և բանաստեղծություններով, պրովանսական պերճախոս տրուբադուրներին հակառակ, ավելի շուտ ժողովրդական նկարագիր ունեն, քան արիստոկրատական: Նրանք իրենց երգերը չէին ուղղում պալատական նրբակիրթ հասարակությանը կամ դղյակներում ապրող ավատատերերին: Նրանք իրենց տաղերը երգում էին... մանավանդ ժողովրդական հավաքույթների, հասարակական տոնախմբություններուն ... ժամանակ»[1]:

Չոպանյանը վերլուծում է հայ աշուղների ստեղծագործության բովանդակության և ձևի բազմազանությունները, լեզվական առանձնահատկությունները, խոսում հարևան ազգերի մշակույթների հետ փոխադարձ ազդեցությունների հարցի մասին: Այնուհետև նա գնահատում է առանձին աշուղների գործերը և վեր հանում նրանց բոլորին հատուկ աշխարհիկ տարրը:

«Եթե այդ տաղերից ոմանք, ինչպես Մկրտիչ Նաղաշի կամ Պլուզի տաղերը, ներթափանցված են կրոնական մտածողությամբ, մեծ մասը, սակայն, ազատ մտածողության և ներշնչման արգասիք են և արտահայտում են զերազանցապես աշխարհիկ զգացումներ,— գրում է նա:— Նրանց մեջ կրոնական տարրը ևթե հաճախ միջամտում է, դա միայն նրա համար է, որպեսզի հեղինակներին պաշտպանի այն հավանական մեղադրանքի դեմ, թե մոռացել են իրենց եկեղեցականի հանգամանքը: Նույնիսկ իրենց բնույթով հիմնականում կրոնական շատ տաղերի մեջ կան այնպիսիք, ինչպես Ֆրիկի «Դանգատ» բանաստեղծությունը, որոնք կասկածի և ըմբոստության իրենց շեշտերով պատում են վանական մտածողության խավարը և կամ, ինչպես Կոստանդին Երզնկացու որոշ տաղեր, լուսավորում և մեղմացնում են միստի-

[1] Archag Tchobanian. Les Trouvères arméniens, Paris, 1906, pp. 6—7.

ծական տխրությունը ամենևրական կյանքի ուրախ և գրեթե հեշտային պաշտամունքով»[1]։

Մանավանդ Ֆրիկին և Կոստանդին Երզնկացուն Եվրոպայում պրոպագանդելու հարցին Զոպանյանը առանձնահատուկ նշանակություն էր տալիս։ Մինչ այդ «Անահիտում» նա հայ հասարակության համար արդեն վեր էր հանել միջնադարյան հայ մշակույթի այդ երկու խոշոր գործիչներին։

Ֆրիկին, օրինակ, նա այսպես է բնութագրում. «Գանգատ» բանաստեղծությունը, հակառակ ձևի միամիտ պարզությանը, առանձնապես հետաքրքրական է իր արտահայտած ըմբոստության ղգացումով։ Մինչդեռ Հայաստանի հին գրողներից շատերը (համարյա բոլորն էլ հոգևորական), հրեա մարգարեների օրինակին հետևելով, հայերի գլխին եկած դժբախտությունները վերագրում են նրանց գործած մեղքերին, Ֆրիկը մեղադրում է հենց իրեն՝ աստծուն, և դանգատվում է այն անտարբերության համար, որ սա ցուցաբերում է հայ ժողովրդի նկատմամբ՝ նրան մատնելով մարդասպանների և կողոպտիչների ձեռքը։ Նա ավելի առաջ է գնում և բողոքում բնական և սոցիալական ամեն տեսակ անարդարությունների դեմ, որոնց հավիտենական թատերաբեմն է հանդիսանում այս աշխարհը, և որոնք մի պահ կասկածանք են առաջացնում նրա մեջ աստծո բարության նկատմամբ, այն աստծո, որը առանց զգացվելու հանդիսատես է լինում թույլերի, չքավորների, անպաշտպան, անմեղ մարդկանց խողխողումին և բիրտ ուժի, կույր բախտի ու ննդության հաղթանակին»[2]։

Պատահական պիտի չհամարել, որ օտար մամուլի շատ օրգաններ և մտավորականներ «Les Trouvères...» հատորի մասին իրենց կարծիքներում մասնավոր ուշադրություն են դարձնում հատկապես Ֆրիկին[3]։ *Իսկ նահապետ Քուշակը, որին ֆրանսիախոս ընթերցողը արդեն ծանոթ էր Զոպանյանի հոդվածներից ու*

---

[1] Archag Tchobanian. Les Trouvères arméniens, Paris, 1906, pp. 17—18.

[2] Ibid., p. 125.

[3] *Լուսաբանության համար բերենք նշանավոր բանաստեղծ Ֆրեդերիկ Միսթրալի նամակից մի հատված, նա գրում է Ա. Զոպանյանին. «Հայ աշուղները եշմարիտ ազնվացնող բանաստեղծներ են։ Իրենց ազգին հոգին անոնց երգերուն մեջ ինչպես ավելի պայծառ կը շողա, քան ազգային պատմության մեջ։ Արևելքի լույսը և արևելյան երազին շլացուցիչ Թովչությունը կը լուսավորեն հոն մեր քրիստոնեական տրամադրությունը։ Ձեր այեդները մահմեդական չեն, բայց Հաղար ու մեկ գիշերներու հնքիաթները իմացած են, ու ձեր Ֆրիկը Հոբա սերունդն է»։ («Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 6—7, էջ 114)։*

նախորդ հատորներից, իրավամբ պրավում է առաջին տեղը թե այս հատորում և թե արձագանքների մեջ:

Առաջաբանում Զոպանյանը գրում է. «Սահակին իր նշանավոր «Գյուլիսաանի» առաջաբանում ներբողում է Աբու-Բեքր միապետին, շնորհակալություն հայտնելով նրան այն բանի համար, որ գնահատել է իր գործը: Քուչակը զերծ է այս թերությունից... Նա ոչ մի սուլթանի, ոչ մի իշխանի կամ խանի առաջ չի խոնարհվում: Միակ սուլթանը, որի հզորությունն ու փառքը նա գովերգում է, Սերն է»[1]:

«Les Trouvères-ի արձագանքները եվրոպական մամուլում զերազանցում են բոլոր սպասելիքները: 1906 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում պրահոսականներ են տպագրում «Ռևիւ-բլիք ֆրանսեզը», «Ռևվյու դյու Նիվերնեն», «Ռևվյու դը Պարին», «Իլլյուսթրասիոնը», «Գալեր դը Ֆրանսը», «Օտոը», «Փըթի Փարիզիենը», «Ռըվյու դյու Մուան», «Լ'Էրմիթաժը», «Դեպեշ դը Բուլուզը», «Լը ժուրնալ դը ժնեվը», «Մերքյուր դը Ֆրանսը», «Մոմենտոն» (Իտալիա) և այլն: Բոլոր այդ նյութերը շնչում են հիացմունքով հայ աշուղական բանաստեղծության նկատմամբ և գնահատանքի խոսքեր են պարունակում Արշակ Զոպանյանի հայրենասիրական գործունեության վերաբերյալ:

Բերենք միայն մեկ համառոտած հոդվածը, որի բովանդակությունը և ոգին բնութագրական է բոլորի համար: «Օտոը» 1906 թվականի սեպտեմբերի 10-ին տպագրում է Պոլ Քիոյի պրահոսությունը, որի մեջ ասված է. «Հայաստանը, ցավի երկիրը թվի միանգամայն ըլլալ երկիր մը բանաստեղծներու: Այնպես, արդարև, կերևա ան լիառատ և ժրաջան հրատարակության մեջեն այդ տաղանդավոր հայուն, որ կը կոչվի Ա. Զոպանյան... պ. Զոպանյան կը շարունակե իր հայրենասերի բեղմնավոր գործը: Այսօր «Հայ աշուղներուն» նվիրված հատոր մըն է, որ կընծայե Ֆրանսիական հասարակության...

...Ժողովրդին հետ իրենց մշտական շփման պատճառով «աշուղները» ժողովրդական բանաստեղծի կատարյալ տիպարներ կը ներկայացնեն... Ամենեն ինքնաբեր տպավորությունը զոր կը կրենք, կարդալով իրենց բանաստեղծությունները, զոր մեր բարեկամը հանճարեղորեն թարգմանած է, իրենց զուտարիկ ժողովրդականության տպավորությունն է, թե երբ սիրո վրա խո-

[1] Les Trouvères... p. 26.

սին, ինչպես Նահապետ Քուչակ կամ Դրիդոր Աղթամարցի, թե երբ, ինչպես Կոստանդին Երզնկացի, կյանքի ունայնությունը մեզ հիշեցնեն, թե երբ, ինչպես Ֆրիկ, մեզ հրավիրեն թվել անարդար դործերը իրը թե արդարության աստծո մը, միշտ կը զգացվի, որ իրենց լեզուն կղզիացած երգչի մը լեզուն չէ, այլ ամբողջ մարդկության մը, որ ինք իր վրա կ'ամփոփվի խորհրդածելու համար:

...Բանաստեղծը, որ կը տառապի, ինչպես ամեն անոնք, որ կը սիրեն, պետք կը զգա վինքը շրջապատող բնությունը իր ցավերուն հաղորդակից ընելու: Ժողովրդական բանաստեղծին հատկանիշն է ատիկա: Ան չուզեր մինակ ըլլալ, ռոմանտիկներու հպարտ մեղությունն կը տոկա: Քուչակ իր «յարեն» լքված, լեռներուն և ձորերուն վկայությանը կը դիմե...

...Հույսը իր համակերպված և համբերատար քաղցրությամբ ամեն ժողովրդական բանաստեղծության խորը կը գտնվի: Քուչակ մեզի համար սքանչելի թարգման մըն է այդ էականապես հավաքական զգացման, զոր հմուտ բանաստեղծներն ընդհանրապես վանած են արհամարհանքով:

Ուրիշ աշուղ մը, Կոստանդին Երզնկացի, իր քերթվածները կը նվիրե աստվածային բաներու ներբողման: Սակայն երկրավոր բաներու գեղեցկության մեջ է, որ կը տեսնե աստծո դործը... Լորպասը հոտառես է («Այս կյանքս ունայն է»...), բայց ինչպե՞ս կրնա ինքն իսկ հոտահատիլ կյանքեն, քանի որ այնքան գեղեցիկ է ան: Առավոտը կուգա խավարչտին դիշերն մը նոքը... ոչինչ ավելի արբեցուցիչ է քան առավան անուշ բուրումը: Կը տեսնե արևը, դեռ «տղա» արևը, որ «կը լուսավորե հոգին ինչպես աչքերը»... և չի կրնար դիմանալ կյանքի և սիրո թովչության:

...Ֆրիկը ըմբոստ մըն է... Կապշի տեսնելով, ինչ որ կանցնի կը դառնա աշխարհիս մեջ...

...Կրնայի դեռ երկար շարունակել հիշատակումներս, որովհետև ամեն բան պ. Զոպանյանի հատորին մեջ արժանի է կարդացվելու և միտք պահվելու:

...Բոլոր այդ բանաստեղծներուն գեղեցկագիտությունը պարզ է, միամիտ, հրաշալի մաքրությամբ մը, բնության և գեղեցկության զգացումը խոր է անոնց մեջ: Մերթ միստիկական, մերթ ըմբոստ... անոնք ցեղին ինքնատիպ զգայնությունը կը խտացնեն, ինչպես այնքան լավ կըսե իրենց մեկնիչը այն սքանչելի հառաջաբանին մեջ, որ հատորին սկիզբը դրված է: Եվ այդ ցեղն

է, որ Թրքական վայրագությունը կուզե ջնջել, պայն իր հարբա-տահարություններովը ջանջանելի հետո։

Պետք ապրի ան և գործել բանաստեղծներ ու հերոսներ պետք տա»[1]։

Մամուլի արձագանքներից բացի Ա. Զոպանյանը տանում է շահեկան բովանդակությամբ տասնյակ նամակներ, որոնց հեղինակները շնորհակալություն են հայտնում նրան կատարած աշխատանքի համար։ Ինչպես մամուլը, այնպես էլ նամակների հեղինակները բարձր են գնահատում Զոպանյանի թարգմանական արվեստը։ Երաժշտագետ Պիեռ Օբրին, օրինակ, գրում է. «Ինչ անուշաբույր բառեր կարձակվին, սիրելի բարեկամ, երբ մարդ կը բանա ձեր վերջին գիրքը... Չէի գիտեր, որ մեր ֆրանսերեն լեզուն այդքան ատակ ըլլար հայկական մտածումը արտահայտելու»[2]

1906 թվականի նոյեմբերի 15-ին «Մերքյուր դը Ֆրանս»-ում Արշակ Զոպանյանը հոդված է հրատարակում Մկրտիչ Խրիմյանի կյանքի և գործունեության վերաբերյալ։ Զոպանյանի նպատակն էր մեկ անգամ ևս վեր հանել «հայկական հարցի» պատմությունը և օտար ընթերցողներին ծանոթացնել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի էևէջներին։ Զոպանյանի իսկ վկայակոչությամբ, նրա հոդվածը որոշակի ազդեցություն է գործում։ Բուրքական մամուլը փորձում է պատասխանել և ցրել տպավորությունը։ «Լհալի» թերթում հրատարակված պատասխանը, սակայն, փաստարկների փոխարեն, հայհոյանքների առատությամբ է աչքի ընկնում[3]։

Երկար ժամանակ Արշակ Զոպանյանը իր ազատ պահերը տրամադրում էր սևիսական բանաստեղծությունների թարգմանությանը, որոնց մի չնչին մասը նա լույս է ընծայում բնագրով («Անահիտում») կամ ֆրանսերեն[4], իսկ ամբողջական ժողովածուն հայերեն՝ 1908 թվականին։ Ջուպահևոաբար նա պատրաս-

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 10—12, էջ 224—225։

[2] «Անահիտ», Ը տարի, 1906, թիվ 6—7, էջ 114։

[3] «Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 1—2, էջ 1։

[4] 1907 թվականին իտալական «Լա վիտա Լիթերարիա» թերթում, Դոմենիկո Զամպոլիի թարգմանությամբ, լույս է տեսնում Զոպանյանի «Հիվանդանոցը» բերվածը («Անահիտ», Թ տարի, 1907, թիվ 6—9, էջ 160)։

տում է իր քնքշածնների ֆրանսերեն հատորը, որը նույնպես լույս է տեսնում 1908 թվականին[1]:

Այդ ժողովածուի առաջաբանի հեղինակն է Զոպանյանի վաղեմի բարեկամ, լրագրող և բանաստեղծ Պիեռ Քիլհաուը, որը Զոպանյանի մասին գրում է. «Երբ նա ծառայում է իր հայրենիքին, հայրենի պրականության տալով իր բանաստեղծությունների հայերեն բնագրերը, որոնց հրատարակումը հետաձգված էր մինչև այսօր, ապա նա նույն այդ հայրենիքին է ծառայում միաժամանակ՝ ֆրանսիական պրականությանը նվիրելով Ասիայի հնագույր հողերից պոկված հինավուրց դաինու մի ճյուղ»[2]:

Բարձր գնահատելով Զոպանյանի պոեզիան՝ Քիլհաուը նկատում է, որ բանաստեղծի ստեղծագործության ձևը ինչ-որ չափով կարող է փոխառնված լինել ֆրանսիական կամ իտալական պոեզիայից, բայց մտածման եղանակը խորապես ազգային է, հայկական: Զոպանյանի գործունեության արձագանքների գնահատման տեսակետից հատկապես արժեքավոր է նախաբանի հեղինակի այն հիշատակությունը, որտեղ նա իր միտքը հաստատելու համար հենվում է Անատոլ Ֆրանսի և Ստեֆան Մալարմեի ասույթների վրա:

Քիլհաուը գրում է. «Արշակ Զոպանյանը միանգամայն արդարացնում է իր մասին պր. Անատոլ Ֆրանսի վերջերս ունեցած հետևյալ արտահայտությունը. «Բարձր որակի մի բանաստեղծ, խրոխտ և քնքուշ հոգով»: Իսկ Ստեֆան Մալարմեն այսօր, ավելի քան երեկ, երբ գտնվում էր հայ պրականության մասին նրա կարդացած դասախոսության անմիջական տպավորության տակ, պիտի կարողանար գրել նրան. «Այն, որ դուք կարողացաք Ձեր ժողովրդի թափած արյան լճից, որի կարմրությունն արտացոլվում է ժամանակակից յուրաքանչյուր մտածող մարդու դեմքի վրա, դուրս բերել մի ղմայլելի դաս՝ հաղորդակից դարձնելով մեզ մի ամբողջ պոեզիայի, իմ աչքին երևում է որպես մի գրողի մատուցած ամենաարդյունավետ և ամենանուրբ մեծարանքը իր ավերված ու ծվատված հայրենիքի հանդեպ, որն ընդունակ է վերածնվելու նման ոգևորումներից»[3]:

1908 թվականին, երիտթուրքերի «սահմանադրական» թատերախաղի բնամարության օրերին հայ մտավորական ընտրանու մի

[1] Archag Tchobanian. Poème. Paris, 1908.

[2] Ibid., p. VI.

[3] Ibid., p. XI.

խումբ ներկայացուցիչներ Արշակ Չոպանյանին առաջարկում են վերադառնալ և մշտական բնակություն հաստատել Պոլսում: Գրիգոր Զոհրապը մասնավոր համաոությամբ հորդորում է նրան անել այդ քայլը:

1908 թվականի օգոստոսի 5-ին (18-ին) նա Պոլսից գրում է Ա. Չոպանյանին. «... որքան կը բաղձայի, որ հոս քովս ըլլայիր և ձեռք-ձեռքի աշխատեինք և իրարու ես ու ինկունք ըլլայինք այն պարտականություններուն առջև, որոնք զիս վախցնելու չափ— ես դյուրավ վախցողներեն չեմ— մեծ են...

...քու աջակցությունդ թանկագին է և հասնի տեսակետով մը՝ անոր համար, որ մեր գրական esthétigue-ն մարմնացնող էն պայծառ դեմքն ես»[1]:

Դանիել Վարուժանին գրած իր մի նամակում Չոպանյանը հայտնում է, որ 1908 թվականի սեպտեմբերին մտադիր է երկու ամսով Ստամբուլ գնալ: Բայց նորաստեղծ ռեժիմի նկատմամբ նրա ունեցած վերապահությունները հուշում են զգույշ լինել: «Այնտեղ վերջնապես վերահաստատվելս ցանկացողներ շատ կան. իհարկե, նյութապես ինձ համար շատ ավելի նպաստավոր է հոն ապրել... բայց տակավին որոշած չեմ ինչ ընելիքս: Հաստատապես պիտի դառնամ նոյեմբերի վերջը Փարիզ, այդ որոշած եմ ու պիտի մնամ մինչև գալ ամառ: Հետո, տեսնենք»[2]:

Պոլսում այդ օրերին տիրող կացությունը ավելցուկով հաստատում է Չոպանյանի՝ երիտթուրքերի նկատմամբ ունեցած անվստահությունը: Ահա թե նա ինչպես է նկարագրում իրերի վիճակը: «Պոլիս ամեն ինչ զիս վերահաստատեց իմ համոզումներուս մեջ: Այդ մեկ ամսվան միջոցին, ուր հոն մնացի, Պեշիկթաշ, ուր կը բնակեի, թուրք ամբոխը երիտասարդ հույն մը բռնելով ոստիկանատուն տարավ ու հոն ոստիկանության աչքին տակ կտոր-կտոր ըրավ, որովհետև այրի թրքուհիի մը հետ համարձակեր էր սիրային հարաբերություն ունենալ... բոլոր ռայա ցեղերու ներկայացուցիչներեն բաղկացած պատգամավորություն մը գնաց մեծ եպարքոսին՝ խնդրելու, որ պատժվին այդ մարդասպանները, և սակայն ոչ ոք պատժվեցավ: Իրիկուն մը Ատոմ Եարճանյանին տունը հյուր էի, մեզի ըսին, թե հետևյալ օրը խոհեմություն պիտի ըլլար չիջնել Պոլիս, վասն զի մոլեռանդ մահմեդականները

---

[1] ԳԱԹ, ԱՉՖ, I բաժին, № 2171:

[2] Դանիել Վարուժան, Նամականի, Երևան, 1965, էջ 268:

մտադիր էին ջարդ մը փորձել։ Ատոմ և նա միասին իջանք Պոլիս։ Փակ էին խանութները, Սթամպուլի փողոցները պրեթե ամայի էին. սակավաթիվ անցորդներուն դեմքերը՝ մռայլ ու սպառնագին, կամ անձկոտ։ Եվ ահա տեսանք հանկարծ ոհմակ մը ջարդարարի երթալով մարդերու, կանաչ փաթթոցավոր գաժան դեմքով մըլլա մը գահավորակի մը վրա նստեցուցած՝ զայն ուսերնուն վրա առած և ամեն կողմն պաշարած, ոռնոցներ արձակելով փողոցն մը կանցնեին։ Ջարդ տեղի չունեցավ, բայց անոր շունչը կը տիրեր քաղաքին մեջ, անոր ոգին՝ կենդանի, համառ, դարանակալ կը սպասեր մթնոլորտին մեջ»[1]։

Երկու ամսվա ընթացքում Չոպանյանը Պոլսում բազմաթիվ հնություններ ու բանախոսություններ է ունենում հայկական լսարանների առջև, որոնցից նրա կենսագիրը հիշատակության արժանի է գտնում Գում Գափուում կարդացված բանախոսությունը՝ «Հայ գրականության աղբյուրները աղգային շարժման և ընդհանուր Արևելքի վերածնության վրա» թեմայով, և իսկույտարում՝ Ակնա ժողովրդական բանաստեղծության մասին[2]։ Նույն օրերին նա գրում է «Գնդոն ի պատիվ հայ լեզվին» արձակ քերթվածը, որը տպագրվում է Թևոդիկի «Ամենուն տարեցույցում»[3]։ Հզոր շնչով գրված այդ գործը, որ ձևի և բովանդակության տեսակետից կոչված էր «Օրոր Մայր Հայաստանին» քերթվածի հետ նույն աստիճանի վրա տեղ գրավելու, ղգաստության յուրատեսակ մի հրավեր էր խաբեպատիր խոստումների և քաղաքական պատրանքների մոլորանիներում արբեցած պոլսահայության։

Պոլսում Չոպանյանն ընդունում է Մուշի և Շապին Գարահիսարի պատգամավորի հանգամանքով էջմիածին մեկնելու և կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու առաջարկությունը։ 1908 թվականի ուշ աշնանը նա ժամանում է էջմիածին, հյուրընկալվում Կոմիտասի խցում, լինում Կովկասի հայաշատ կենտրոններում, անձնական ծանոթություններ հաստատում ժամանակի արևելահայ մշակույթի խոշորագույն դեմքերի հետ։

Արդեն այդ ժամանակ, սակայն, ջղային հիվանդությունը սկսում է հառաջանալ և հատկապես սրվում է դեպի Փարիզ

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Բ տարի, 1930, թիվ 3, էջ 6։

[2] Հասլիշեան Հայկազն, Արշակ Չոպանեան, կենսագրական դիծեր, Փարիզ, 1924, էջ 24։

[3] Թևոդիկ, «Ամենուն տարեցույց», 1909։

դարձի երկարատև ճանապարհորդության ընթացքում: «Անահիտ» հանդեսի դադարեցման հիմնական պատճառներից մեկը, ինչպես տեսանք, Չոպանյանի առողջական վիճակն էր:

Բայց, չնայած դրան, վերադարձից անմիջապես հետո գործուն մասնակցություն է ունենում կիլիկյան ջարդերի դեմ 1909 թ. ապրիլի 25-ին Փարիզի հայերի բողոքի միտինգի կազմակերպման գործում ու Շիրվանզադեի, Շահմուրադյանի և ուրիշների թվում ինքը ևս կրակոտ ճառ է արտասանում: Մասնակցում է նաև Տիրան խան Քելեկյանի նախաձեռնությամբ ծայր առած հանգանակության կազմակերպմանը՝ կիլիկիայի սովյալներին ի նպաստ:

1910 թվականին Չոպանյանը թարգմանում է Շիրվանզադեի «Յավագործը» և հրատարակում որպես Ֆրեդերիք Մաքլերի «Petite Bibliotheque Arménienne» մատենաշարի առաջին հատոր:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

«Պատմությունը օր մը մեզ ամենքս ալ պիտի դատե և ամենուս ալ ինքնությանց ու հատկությանց վրա իր անաչառ վճիռը պիտի արձակե»

(Ա. Զոպանյան)

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Քաղաքական գործունեության նոր փուլը

Իտալո-թուրքական (1911—12) և բալկանյան պատերազմները (1912—13) նոր կացություն ստեղծեցին Թուրքիայում: Այդ պատերազմները զավթողական բնույթ ունեին: Իտալիան, մասնավորապես, ձգտում էր նոր հողեր նվաճել Աֆրիկայում և ամրապնդել իր դիրքերը Միջերկրական ծովում: Բալկանյան պատերազմները մղվում էին բալկանյան երկրների միապետների դինաստիական տների շահերը և ազգայնական բուրժուազիայի նկրտումները բավարարելու համար: Այնուամենայնիվ, այդ պատերազմները օբյեկտիվորեն առաջադիմական դեր խաղացին թուրքական բռնապետության ճիրաններում հեծող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի աշխուժացման տեսակետից: Իտալիայի դեմ մղած պատերազմում Թուրքիայի պարտությունը մեծապես նպաստեց բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը: Բալկանյան առաջին պատերազմը, իր հերթին, տրամաբանական ավարտին հասցրեց թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրման գործը: Առաջին բալկանյան պատերազմը, ինչպես ասում էր Վ. Ի. Լենինը, հանդիսանում էր «Ասիայում և արևելյան Եվրոպայում միջնադարի փլուզումը նշանավորող համաշխարհային իրադարձությունների շղթայի օղակներից մեկը»[1]:

Արտաքին նպաստավոր պայմանները նոր շունչ ներարկեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական ձգտումներին, մանա-

[1] Վ. Ի. Լենին, *Երկ*, Երևան, 1979, հ. 23, էջ 44:

վանք, նկատի ունենալով, որ Ռուսաստանը, իր իսկ շահերից ելնելով, հանդես էր գալիս «հայկական հարցի» հրահրողի և պաշտպանի դերում:

Մյուս կողմից՝ ներքին քաղաքականության մեջ թուրքական ռեակցիան էլ ավելի էր սեղմում հայ ժողովրդի պարանոցին նետված օղակը: Բոլշևիկյան «Պրավդան» 1912 թվականի հունիսի 27-ին գրում էր. «Երիտթուրքերը, առաջին իսկ քայլերից, կործես դիտավորյալ, սկսեցին իրենցից վանել օսմանյան կայսրության ժողովուրդների համակրանքը: Նրանք դրսևորեցին թուրքական լիբերալ բուրժուազիայի բոլոր արատներն ու թուլությունները, իսկ մյուս կողմից՝ իշխանության գլուխ կանգնած ռազմա-սպայական կաստայի ամբողջ բռնակալությունը: Խոսքով լիբերալ, գործնականում նրանք լեցուն են ամենաթունդ տեսակի ահհարյուրյականային նացիոնալիզմով և անհոդի բուրժուական էգոիզմով... Օսմանյան կայսրությունում ապրող սլավոններին, հայերի, հրեաների, հույների և այլոց թուրքացման նրանց ձգտումները ընդունել են էլ ավելի կոպիտ և համառ բնույթ, քան Աբդուլ Համիդի օրոք»[1]:

Բնական է, որ այսպիսի պայմաններում Արշակ Զոպանյանը գլխովին նետվեր քաղաքական գործունեության ոլորտը: Որոշակի նպաստավոր պայմանները հուսավառել էին նրան և համոզմունք ներշնչել, թե այդ պահին արտաքին միջամտությամբ հնարավոր էր գրականապես լուծել հայ ժողովրդի ազատագրության գործը: Այդ ժամանակահատվածի ընթացքում Զոպանյանի քաղաքական գործունեության մեջ նկատվում է ավելի շուտ հայրենասեր բանաստեղծի և մշակութային գործչի զգացական մղումներից սնված խանդավառությունը, քան քաղաքական ծանրակշիռ ու խոհուն հաշվենկատությունը:

Մի պահ նա հավատում էր, թե Ֆրանսիան և Անգլիան գեթ հայության նկատմամբ ունեցած «պարտքին» մոհացում տալու համար պիտի աջակցեն Ռուսաստանին, Արևմտյան Հայաստանի նահանգների նկատմամբ վերջինիս առաջարկած ծրագիրը իրականացնելու գործում: Հավատում էր ու լարված գործունեություն ծավալում այդ ուղղությամբ Լոնդոնում և Փարիզում: Այդ մասին 1912 թվականի աշնանը Զոպանյանը գրում է Լևոյին. «Կը հու-

---

[1] Ըստ «Геноцид армян в османской империи» գրքի, Ереван, 1966, стр. 222.

անք, որ Ֆրանսիա և Անգլիա աջակցին ռուսին, և երեքը միասին ապատան Թրքահայաստանը: Հավանական է, որ արդյունքը լլլա Հայկական Լիբանան մը՝ Ռուսիո հովանավորության տակ,— ինչ-որ լավագույն լուծումը պիտի լլլար»[1]: Հետաքրքրական է, որ նույն այս նամակում, Չոպանյանը հայտնում է հնարավոր պանիսլամական ջարդերի վերաբերյալ իր նախազգացումը և ասում, թե ինքը համապատասխան աշխատանք է տանում Ֆրանսիական իշխանությունների մոտ, դրանք կանխելու համար: «Կարծեմ թե,— ավելացնում է Չոպանյանը,— արված լլլալով Ռուսիո բռնած դիրքը... իսկական կատարած տեղի չպիտի ունենա: Ուրիշ հարց, եթե եվրոպական ընդհանուր պատերազմ տեղի ունենա, այն ատեն ահավոր կլլլա կացությունը, բայց չեմ կարծեր, որ տեղի ունենա այդպիսի պատերազմ մը, որուն հետևանքները ամբողջ մարդոցը համար կրնան սարսափելի լլլալ»:

Չոպանյանի քաղաքական հայացքների համար, սակայն, ամենահատկանշականը նրա սկզբունքային և անդրդվելի կողմնորոշումն է դեպի Ռուսաստանը: 1913 թվականի սկզբներին Վիկտոր Բերարին ուղղված նամակում Չոպանյանը գրում է. «Ըստ իս ապերախտություն պիտի լլլար հայու մը համար՝ չընդունիլ այն բարոյական ու նյութական օգուտը, զոր իր ցեղին մեկ սուրբ մասը ունեցած է ռուս կառավարության հովանավույն տակ և ռուս ազգին հետ իր շփման մեջ... Ռուսիա կոչված է գերակշիռ դեր մը կատարել հայկական հարցին լուծման մեջ, ինչ ձևով ալ լլլա այդ լուծումը»[2]: (Ընդգծումը իմն է— Կ. Դ.):

Այս կամ այն էտապում, մասնավորապես Կիլիկիայի հարցում, նա առանձին հույսեր է կապում Ֆրանսիայի կամ Անգլիայի հետ, հետո հուսախաբվում բավականին արագ, բայց Ռուսաստանի նկատմամբ կողմնորոշման հարցում Չոպանյանը մինչև վերջ մնում է կայուն և ամուր դիրքերի վրա: Փարիզյան իր հնաոտանից նա ձգտում է միջոցներ գտնել ազդելու Պետերբուրգի կառավարության վրա և համապատասխան բղեմակցություն է վարում զանազան հայ և ռուս գործիչների հետ:

1912 թվականի նոյեմբերի 12-ին նա գրում է դումայի անդամ Մ. Պապաջանյանին. «Անհրաժեշտ է ռուս կառավարական շրջանակներուն մեջ արմատապես ջնջել այն համակրությունը, որ

---

[1] ԳԱԲ, Լևոյի ֆոնդ, № 38/1:

[2] «Մշակ», 1913, № 34:

հայոց հանդեպ կարիքն՝ հիմնվելով սխալ հասկացողության և սուտերու վրա։ Թրքահայաստանը ամբողջ այժմ ռուսին դալատյան կսպասան, ուսանն կը հուսա իր ազատումը։ Պետք է ջանանք, որ ռուսը չուշացնի Թրքահայաստանի մեջ իր մուտքը։ Այդ որոշված բան է, օր մը չէ, օր մը պիտի կատարվի. եվրոպական տերությունները ալ... համակերպված են այդ ծրագրին։ Այդ, քանի որ անխուսափելի է այդ, և Թրքական ռեժիմին բաղդատմամբ ռուսական հովանավորությունը անհունապես նախընտրելի է, մենք պետք է ջանանք, որ շուտ կատարվի այդ մուտքը։ Այժմ, որ սարսափ կը տիրե Թրքահայաստանի մեջ և ջարդի երկյուղ կա ամեն օր, ինչո՞ւ ռուսը դեռ քիչ մը զորք չմտցնի հոն՝ գոնե կոտրածի առաջքն առնելու համար»[1]։

Հետաքրքրություն են ներկայացնում նաև Զոպանյանի և ռուսական կառավարության մինիստր Միլյուկովի միջև փոխանակված նամակները, որոնք վերջինս ստացավ Հանձնել «Речь» թերթում։ Զոպանյանը պնդում է, որ Ռուսաստանը չահմանափակվի միայն վնց վիլայեթներով, այլ կցի նաև Կիլիկիան։ «Հարցի ամենալրիվ և հիմնական լուծումը Հայաստանի ավտոնոմիան է, վնց վիլայեթների և Կիլիկիայի՝ Ռուսաստանի հովանավորության տակ... Դուրս գցելով Կիլիկիան ավտոնոմ Հայաստանից, կամ Հայաստանի ավտոնոմիան անկարելի համարելով հայերի թվի պակասության շնորհիվ, Եվրոպան սանկցիա տված կը լինի Թուրքերի ոճրագործություններին և կը դառնա նրա դործակիցը»։ Այդ ինքնավարությունը ըստ Զոպանյանի բնավ «չի նշանակում մյուս ազգերի ճնշում, այլ, ընդհակառակն, աջակցություն նրանց մտավոր կուլտուրական բարձրացմանը»[2]։

«Անահիտ» հրատարակությունը դադարեցնելուց հետո Ա. Զոպանյանը աշխատակցում է հիմնականում Պոլսի «Բյուզանդիոնին» և Թիֆլիսի «Մշակին»։ «Բյուզանդիոնում», բնականաբար, նա քաղաքական հարցեր չի շոշափում, բավարարվում է միայն մշակութային և կրթական թեմաններով։ Հատկանշական է Զոպանյանի հոդվածաշարքը կեդրոնական վարժարանի վիճակը բարելավելու վերաբերյալ։ Թեպետ նա բացահայտ չի ասում, բայց այդ հոդվածների նպատակը միանգամայն հասակ է։ Արև-

---

[1] Նամականի, էջ 112։

[2] «Հորիզոն, 1915, № 55։ Հիշյալ նամակների լրիվ տեքստը տե՛ս «Մշակ», 1915, № 54, և № 108։

մտահայ մտավորականության երբեմնի վառարանին նոր շունչ հաղորդելը, որի պահանջը նա դնում է, կոչված էր ազգային-ազատագրական պայքարին նոր, զարգացած ուժեր հասցնելու։

«Մշակը» արտոնյալ պայմաններով (3,5—4 կոպեկ հոնորար յուրաքանչյուր տողին, մինչդեռ ուրիշ հեղինակների վճարում էր 2—2,5 կոպեկ) հրավիրում է նրան աշխատակցության[1]։ Այստեղ Զոպանյանը համեմատաբար ազատորեն արտահայտվում է հուզող քաղաքական հարցերի մասին, առաջ քաշում իր տեսակետներն ու առաջարկություններ անում։

Առաջին իսկ առիթով նա քննադատում է թուրքական կառավարության հերթական խաղերը, որ ձեռնարկվել էին արևմտահայ հասարակական կարծիքը բթացնելու և խաբելու համար 1912 թվականի վերջերին։ Հայերի մեջ նկատվող աշխուժությունից անհանգստացած կառավարությունը ինքն է փորձում բանակցություններ վարել որոշակի խավերի հետ։ Զոպանյանը «Մշակի» միջոցով զգուշացնում է, որպեսզի Պոլսի հայերը խուսափեն կառավարության հետ գլուխ գլխի հարցը կարգադրելուց։ «Ինչպես կիմանամ,— գրում է նա,— Պոլսի հայ ազանների շրջանակներին ոմանց մեջ ձգտումներ կան թուրքին հետ գլուխ գլխի խնդիրը փակելու, և «Լուսարձակ» ու «Ժամանակ» թերթերը այդ ձգտումին արձագանք կը հանդիսանան, անգիտակից գործիքները դառնալով դավի մը, որուն արդյունքը պիտի ըլլա, եթե հաջողի, հայկական գաղթն ապահովը... նույնիսկ Ադանայի կոտորածին ու այս վերջին սահմանադրական չորս տարիներուն շնական կառավարություններ հետո թուրք կառավարության բարյացակամությունն որևէ արդյունք սպասող մեր միամիտ հայրենակիցները շատ լավ պիտի ընեին, եթե, երբ դեռ ուշ չէ, նետ քաշվեին այդ սխալ ճամփեն»[2]։

Ինչպես, ինչպես նշեցինք վերը, այս շրջանում Զոպանյանի գործունեության մեջ հատկանշական էր զգացական տարրի գերակշռությունը, այնուամենայնիվ մի շատ և կարևոր կենսական հարցում նա դրսևորում է բոլոր հանգամանքները սառնասրտորեն կշռադատող քաղաքական գործչի ձեռնահասություն։

1913 թվականի գարնան սկզբներին Զոպանյանը նամակներ է ստանում ռամկավար գործիչներից, որոնցում նրան հայտնում են,

---

[1] *Տե՛ս Համբ. Առաքելյանի՝ Արշակ Զոպանյանին ուղղված նամակը, գրված 14/27 փետրվարի, 1913 թ., ԴԱՔ, ԱԶՖ, I բաժին, № 666։*

[2] *«Մշակ», 1913, № 3։*

*Թե Կիլիկիայում շուտով ապստամբություն պետք է բռնկի: Մարտի 20-ին Չոպանյանը անհապաղ պատասխան նամակ է գրում Լևոն Մկրտչյանին: Նա գտնում է, որ ապստամբության համար պայմանները խիստ անբարենպաստ են: Չոպանյանը հաշվի է առնում, որ բալկանյան պատերազմը մոտենում է իր ավարտին, իսկ այդ պարագայում ապստամբները մեն-մենակ կմնան կառավարության դեմ և արդյունքը կարող է միայն զանգվածային ջարդը լինել: Չոպանյանը պնդում է հրաժարվել այդ մտքից. «Իմ խիղճը ինձի չի ներեր՝ այսպիսի պայմաններու մեջ՝ հոս փարիզ նստած՝ «քալեցեք» ըսել, երբ հետևանքը կրնա այնքան զարհուրելի ըլլալ»,— գրում է նա: Նամակագիրները Չոպանյանին պարզապես խաբում են, թե իբր ամեն ինչ պատրաստ է ապստամբության համար՝ զենք, զինամթերք, մարտական ջոկատներ, ժողովրդի տրամադրությունը և այլն, որպեսզի նրա օգնությամբ որոշ դրամ կարողանան հանգանակել: Այդ պայմաններում, պատահական չէ, որ Չոպանյանը, թեպետ տախտված, բայց իր անձը տրամադրում է գործին: Նա գրում է. «Ըրի ինչ որ կրնայի՝ նա կեցնելու համար, բայց եթե այլևս անխուսափելի է, եթե պիտի պայթի գործը քիչ օրեն, ես իմ պարտս պիտի կատարեմ: Թե պիտի շարունակեմ դրամ գտնելու համար ջանքերս և թե դիվանագիտական դիմումներ, լրագրության մեջ հրապարակություններ և այլն, և այլն, պիտի ընեմ, ինչքան որ կրնամ: Երբ ազգի մը դրոշակը engage եղած է, այլևս համաձայն կամ անհամաձայն ըլլալու խնդիր չի մնար, պետք է օգնության հասնիլ, որպեսզի դրոշակին պատիվը փրկվի»[1]:

Չոպանյանը իրոք լայն գործունեություն է ծավալում իր նախագծած ծրագրով, բայց շատ շուտով իր համար էլ պարզ է դառնում, որ ձեռնարկվածը սոսկ արկածախնդրություն է: Արդեն ապրիլի 9-ին նույն հասցեով ղրկած իր նամակում Չոպանյանը կտրականապես պահանջում է կասեցնել շարժում առնելու որևէ փորձ, նորից զգուշացնելով, որ նման արկածախնդրության հետևանքը միայն Կիլիկիայի և ամբողջ Հայաստանի հայության կոտորածի համար առիթ հայթայթելը կարող է լինել[2]:

---

[1] ԳԱԹ, Միքայել Կյուրճյանի ֆոնդ, Ա. Չոպանյանի նամակը Լևոն Մկրտչյանին, 20 մարտի, 1913 թ.:

[2] Նույն տեղում, Ա. Չոպանյանի նամակը Լ. Մկրտչյանին, 9 ապրիլի 1913 թ.:

1913 թվականին ստեղծվում է Ազգային պատվիրակությունը Պողոս Նուպարի գլխավորությամբ, որի հրավերով էլ Ա. Չոպանյանը ստանձնում է պրոպագանդայի մարմնի ատենադպիրի պարտականությունները: Նույն շրջանում (հունիսի 2-ին), ֆրանսիական պետական գործիչ Բրնի Քոշենի նախագահությամբ հրապարակային մի հավաքույթում, Չոպանյանը ֆրանսերեն բանախոսում է «Le peuple arménien» («Հայ ժողովուրդը») թեմայով: Քիչ անց այդ բանախոսությունը հրատարակվում է առանձին գրքույկով, ինչպես նաև «Pour les peuples d'Orient» հանդեսում:

1913 թվականի աշնանը Գրիգոր Զոհրապի նախաձեռնությամբ, Պոլսահայ մտավորականությունը որոշում է տոնել Չոպանյանի գրական և հասարակական գործունեության քառհինգամյակը: Կազմվում է բավականին ծանրակշիռ մի հանձնաժողով. Նիշան Դուրյան՝ պատվավոր նախագահ, Զավեն պատրիարք՝ նախագահ, Գրիգոր Զոհրապ՝ ատենապետ, դ-ր Սերբյան՝ ատենադպիր, անդամներ՝ Ռուբեն Զարդարյան, Սիպիլ, Բյուզանդ Քիշյան, Տիրան Քելեկյան և այլն: Չոպանյանը, որ այդ ժամանակ արդեն ձեռնարկել էր «La Roseraie d'Armenien» («Վարդենիք Հայաստանյաց») հատորի տպագրությունը և խստորեն ծանրաբեռնված էր նաև այլապես գործերով, խնդրեց հետաձգել տոնակատարությունը մի քանի ամսով: Նա մտածում էր 1914-ի ամռանը մեկնել Պոլիս, մասնակցել հոբելյանական հանդեսին, ապա ուսումնասիրությունների համար անցնել Արևմտյան Հայաստան և Թիֆլիս: Վրա հասած պատերազմը, սակայն, խաոնեց բոլոր ծրագրերը:

Չոպանյանը համաշխարհային առաջին իմպերիալիստական պատերազմը դնահատում էր այն դիրքերից, որոնցից հարցին մոտենում էր Ֆրանսիայի և Անգլիայի տիրող բուրժուական հասարակական կարծիքը: Նրա համար այդ պատերազմը ազատության և դեմոկրատիայի պատերազմն էր կենտրոնական միլիտարիզմի դեմ: Նա չէր կարողանում տեսնել, որ պատերազմին մասնակցող բոլոր տերությունների էլ հետապնդում էին իրենց ուրույն՝ զավթողական, իմպերիալիստական շահերը: Բայց Չոպանյանը, ի տարբերություն լիբերալ և շովինիստական բուրժուազիայի ձայնափողերի, չէր կնճռում, չէր ձգտում թաքցնել իրական նպատակները դեմոկրատիայի և ազատության անունից հնչեցվող լոզունգների տակ: Նա անկեղծորեն հավա-

տում էր Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի ազատագրական մխիթարին։ Հավատում էր, մանավանդ, այն պատճառով, որ Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի նկատմամբ Անտանտայի, մասնավորապես Ռուսաստանի հաղթանակի հետ որոշակի հույսեր էր կապում նաև իր ժողովրդի ազատագրության շահերի տեսակետից։ Եվ վերջին կետում Չոպանյանը ինչ-որ չափով իրավունք ուներ։ Ռուսաստանը թեպետ պատերազմում իմպերիալիստական շահեր էր հետապնդում, բայց Արևմտահայաստանի կցումով օբյեկտիվորեն առաջադիմական դեր պիտի կատարած լիներ։

Ահա թե ինչու սկսած պատերազմը նա անվանում է «ազատարար, լծակոտոր, փրկարար պատերազմ»[1]։ «Բայց պետք չէ մոռնալ, որ այս պատերազմը,— գրում է Չոպանյանը 1914 թվականի նոյեմբերին,— ուս-գերման պատերազմ մը չէ, երկու ազգի միջև տևղի ունեցող և աշխարհակալության միայն իրեն նպատակ ունեցող պատերազմ մը չէ, ասիկա պատերազմ է եվրոպական երկու խմբակցության միջև ու երկու քաղաքական աշխարհայացքներու միջև... Դաղափարի պատերազմ մըն է ասիկա»[2]։

Չոպանյանի քաղաքական հայացքների համար, որոնց ուղն ու ծուծը կազմում էր թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրության դաղափարը, անընդունելի և անբացատրելի էր համաշխարհային առաջին իմպերիալիստական պատերազմի դեմ պրոլետարիատի դասակարգային դիրքերից տարվող արդարացի քննադատությունը։ Նույն նկատառումներով էլ, տարիներ հետո, անդրադառնալով հասարակական գործիչ, հայ ժողովրդի ազատագրական պայքարի բարեկամ տիկին Սևրինի գործունեությանը, Չոպանյանը գրում էր. «Այդ ահավոր շրջանին (առաջին համաշխարհային պատերազմի—կ. Դ.) Սևրին կարուհայտեր դաղափարներ, որոնց համաձայն չէի կրնար ըլլալ։ Ան բոլոր կառավարությունները հավասարապես պատասխանատու կը նկատեր աղետին և փոխանակ իր երկրին հաղթությունը ցանկալու և անոր նպաստելու, պատերազմին դադարիլը միայն կը ցանկար»[3]։

---

[1] «Մշակ» 1914, № 234։

[2] Նույն տեղում, № 261։

[3] «Անահիտ», նոր շրջան, Ա տարի, 1929, թիվ 2, էջ 67։

Քաղաքական դիրքորոշումը պայմանավորում էր նաև Զոպանյանի աշխույժ գործունեությունը, հատկապես 1914 թվականի երկրորդ կեսում, Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի օգտին: Նա այդ երկրներում բնակվող հայ երիտասարդության կոչ է անում մանել բանակի շարքերը, ոգեներթի խոսքեր է ասում ֆրանսիական զորամասերի կազմում ռազմաճակատ մեկնող հայ զինվորներին, պահանջում է «ամեն ինչով օգնենք ռուս զորքին»[1]: Ֆրանսիական «Le Gaulois» թերթում Դրնի Քոշևին ուղղված բաց նամակ է տպագրում: Հայկական հարցի մասին բանախոսություններով հանդես է գալիս ֆրանսիական զորամասերի առջև պատերազմական գործողությունների շրջանում, ինչպես նաև Բորդո, Մարսել, Նանտ, Բևրդ, Ռոշֆոր և այլ քաղաքներում:

1914 թվականի վերջերին, մասնավորապես կովկասյան ճակատում ռուսական բանակի հաջողություններից ոգևշնչված, Արշակ Զոպանյանը նորից փորձում է կենդանություն տալ «կիլիկյան երազին»: Մի առիթով Զոպանյանը գրում է. «Թրքահայ հարցին, ավելի ճիշտ՝ «հայ ազգային դատին» հնարավոր լավագույն լուծումը կիլիկյան ապստամբությամբ մը հայ պետության մը կորիզին ստեղծման մեջ միայն կը տեսնեի»[2]: Սա վերաբերում է դարասկզբի իր գործունեությանը, երբ, վերակազմյալ հնչակյանների հետ համախոհ, նա իրոք նման երազ էր փայփայում, ավելին՝ համապատասխան, բայց ապարդյուն, փորձ էր արել՝ ապահովելու ֆրանսիական կառավարության աջակցությունը: Հետագայում, մանավանդ երիտթուրքերի և դաշնակցության գրկախառնումից հետո, Զոպանյանը հրաժարվել էր այդ ծրագիրը հետապնդելուց: Ինչպես տեսանք, 1913 թվականի գարնանը, նա ինքն առաջինը պահանջից կասեցնել որևէ զինվածախնդրական շարժում Կիլիկիայում: 1914 թվականի վերջերին և 1915 թվականի սկզբներին, սակայն, հաշվի առնելով արտաքին նպաստավոր պայմանները, Զոպանյանը աշխատանք է տանում նույն հարցը հաջողացնելու համար: Ընդամին, նրա կարծիքով, պետք էր հենվել երեք ուժերի՝ Ֆրանսիայի, Անգլիայի և հատկապես Ռուսաստանի վրա: «Նույնիսկ եթե էրզրումին մինչև Սիս ռուսը գրավի և պարզապես կցի, նորին հայտնե

---

[1] «Մշակ» 1914, № 276:

[2] «Անահիտ», նոր շրջան, 2 տարի, 1935, թիվ 3—4, էջ 31:

համար շատ լավ է,— գրում էր նա վերակազմյալ հնչակյան վահան Արզույանին։ ... Ամեն բանի մեջ հայը, ու նույնիսկ կիլիկիո շարժման ծրագրին մեջ, նախ ուսին պիտի նայի»[1]։

Չոպանյանի դժբախտությունն էր, որ քաղաքականության մեջ նա այդ շրջանում առավել ենթում էր զգացական տարրից, երբեմն չափից ավելի հավատ ընծայելով այս կամ այն պետական գործչի «հայասիրական» հայտարարություններին։ «Կիլիկյան երազը» իրականում էլ միայն երազ էր ու դատապարտված էր մնալու ներքին տանկությունների ոլորաններում։ Չոպանյանը ստացավ ֆրանսիական իշխանությունների բացարձակ ժխտական պատասխանը[2]։ Նման բախտ վիճակվեց նաև 1915 թվականի սկզբներին նրա լոնդոնյան ուղեւորությանը, ուր նա մեկնել էր կառավարության և, մասնավորապես, լորդ Բրայսի հետ բանակցություններ վարելու։

Հայ ժողովրդի կյանքում վրա է հասնում ահավոր 1915 թվականը։ Դաժան հարվածը հոգեկան ծանր ապտակներն է պատճառում Արշակ Չոպանյանին։ «Հրեշային ոճիրը դիս ցավատանջորեն կը մորմոքեցնի, բայց չի հուսահատեցներ»[3],— գրում է նա 1915 թվականի դեկտեմբերին։ Ողջ ապրելու, հայ ժողովրդի ապագայի նկատմամբ լուսե հավատի ամրությունը Չոպանյան գործչի անկապտելի հատկանիշն էր։ Նա, այո, ապրում էր ժողովրդի ու մտավորական ինքնության անդադրելի կորուստը։ Սրտահույզ խոսքերով էր ոգեկոչում Չոպանյանը իր դրչակից ընկերների թարմ հիշատակը. «Չարպարյան, որուն շքեղ ու մշտադալար գործը հայ երկնքին արևով լեցուն զմայլելի վարդենիի մը պես կը թրթռար ու կը շողար, թարմ ու բուրումնավետ, երբ աշխարհի դեղեցկությունը կը տարփողեր, առույգ ու վճիտ, ու կարմիր՝ նույնիսկ երբ ցավը կը նրկեր։ Ենրճանյան, որուն քերթությունը, ուր նարնկացվո մը մոայլ ու հզոր հանճարը կը փայլատակեր, կարծես անոտաս մըն էր, ուր ցավատանջ ցաւման հոդմը կը մռնչեր ահագնագանչ, և ուր եղերական լույսի մը տակ խավարին դեմ մարտնչող ապտանները դյուցազնության երիվար-

---

[1] ԳԱՔ, Անդրանիկ Անդրեասյանի ֆոնդ, Արշակ Չոպանյանի նամակը Վահան Արզույանին, 1914 (դեկտեմբերի վերջերը)։ Եվ, որոշ տարբերակով, Նամականի, էջ 120—121։

[2] Տե՛ս նույն տեղում, Ա. Չոպանյանի նամակը Վ. Արզույանին, 1914, 7 դեկտեմբերի։

[3] «Հորիզոն», 1916, № 21։

նրան վրա նրկիւղ կը սուրային. Վարուժան, մեծ ու ճոխ ու բազմազան քերթող, որուն արուեստի շրթնեին հայ Հոգւոյն մը փառապանծ շնիորը կը պատար»[1]։ Եվ այդ փայլուն համաստեղության «բուն հանցանքն այն էր, որ հարազատ ու մեծարժեք հայեր էին, ազգին հոգևկան ուժին վառարաններն էին, ազգին ապագա վերածնության գլուխներն ըլլալ կոչված էին»[2]։

Միևնույն ժամանակ, ապրուց առավել, Ա. Չոպանյանը պահանջում էր գործել. մեկ կողմից՝ մեկուսանալու համար ոճրագործներին, կյուս կողմից՝ փրկելու համար մնացորդը։

1915 թվականի նոյեմբերի 18-ին հանդես գալով Փարիզի ամերիկյան ակումբում, նա հատակորեն և անվերապահորեն ցույց է տալիս ոճրի իսկական հեղինակներին։ Դա մի ամբողջական գաղափար էր, ասում է նա, որի առաջին գործադրությունը նորից դարում կազմակերպեցին երիտթուրքերը Ադանայում դեռ 1909 թվականին, իսկ 1915 թվականի ամեսը նույն ծրագրի վերջին արարվածն էր[3]։ Այդ տեսակետը նա ավելի հստակ ձևակերպում է 1918 թվականի հունվարի 17-ին կարդացած իր մի բանախոսության մեջ, որը տեղի ունեցավ Սորբոնի մեծ ամֆիթատրոնում, «L'Effort de la France et de ses Alliés»-ի նախաձեռնությամբ։ Չոպանյանն ասում է, որ 1909 թվականին Ադանայում երիտթուրքերը «ձեռքերնին կը վարժեցնեին ի հաշիվ ապագա ամբողջական գործադրության այն ծրագրին, որ հղացած էին իշխանության գլուխ անցնելեն իսկ, որովհետև որոշապես ապացուցված է, թե այդ կարծեցյալ ազատականները իրենց գաղտնի հավաքումներուն մեջ ծրագիրներ կը պատրաստեին ոչ թուրք տարրերը բրքացնելու կամ ջախջախելու համար։ Այս համաշխարհային պատերազմը, որ կը փափաքեին և որուն մեջ իտնդավառությամբ նետվեցան Գերմանիո եռևնն, անոնց պատեհ առիթ մը թվեցավ իրենց կանխորոշ ծրագիրը լիովին իրագործելու, և Գերմանիա քաջալերեց զանոնք գործադրել այդ հակա ոճիրը»[4]։ Նույն, 1915 թվականի ամռանը և աշնանը նա գործուն աշխատանք է տանում աղետյալ զանգվածներին ու նշանավոր մտավորականներին փրկելու ուղղությամբ։ Չոպանյանը կոչով դիմում է Կովկասի և արտասահմանի հայությանը.

---

[1] «Վերածնունդ», 1917, թիվ 5—6, էջ 137։

[2] Նույն տեղում, էջ 135։

[3] «Հորիզոն», 1916, №№ 14, 15։

[4] «Վերածնունդ», 1918, թիվ 8, էջ 171—172։

«Ամեն ձևով, ամեն միջոցով աշխատանք կորուստն փրկել թուրքահայության մնացորդները երկրին մեջ ու երկրեն դուրս. այդ է էականը»[1]: Բազմաթիվ դիմումներ է նա կատարում եվրոպական զանազան կառավարությունների ու ազդեցիկ մտավորականների հասցեով, փորձելով նրանց միջամտությամբ աքսորից վերադարձնել նշանավոր մտավորականներին:

Հետաքրքրական է հետևյալ դեպքը: 1939 թվականին «Արինճ» Մուրատ-Ռաֆայելյան նախկին սանուց միության «Տեղեկատու» ամսաթերթը նշում է, որ Իպպանիայի Ալֆոնս XIII թագավորը 1915-ին ջանքեր է կատարել Դանիել Վարուժանին փրկելու համար: Ամսաթերթը հետաքրքրվում է, թե ո՞վ է արդյոք դիմել թագավորին և հայտնել Վարուժանի անունը: Այս առիթով Արշակ Չոպանյանը գրում է. «Մենկ ավելի դիմումներ պետք է եղած ըլլան: Ես զոնե ատոնցմե մենկը որոշ գիտեմ, դեռ պահած ունիմ պատճենը այն խնդրագրին, զոր այդ օրերուն մենք հասնող լուրերուն առթած մղձավանջային անձկության մեջ ուղղեցի Ալֆոնս ԺԳ թագավորին. նամակի ավելի հուշագիր մըն էր, ուր թված էի աքսորի ղրկված հայ մտավորականներուն անունները, անոնց մեծադույններուն բացառիկ արժեքը մատնանիշ ընելով և իրմե խնդրելով միջամտել այդ քաղաքակրթական արժեքները կորուստե ազատելու համար»[2]:

1916 թվականի ապրիլի 9-ին, Արշակ Չոպանյանի նախաձեռնությամբ և առանդուն ջանքերով, Սորբոնի մեծ ամֆիթատրոնում պատկառազդու ժողով է կազմակերպվում, որը բողոքում է հայկական զանգվածային կոտորածների դեմ: Ժողովի նախագահն էր Ֆրանսիայի պառլամենտի նախագահ Պոլ Դեշանելը: Բանախոսների թվում էին Անատոլ Ֆրանսը և Հանրային կրթության մինիստր Պենլեվենն: Ժողովի նյութերը առանձին գրքույկով հրատարակում է «Փարիզի հայ մտավորական միությունը», որի հիմնադիր ու գործուն անդամներն էին Ս. Չոպանյանը, է. Շահինը, Տ. Ալեքսանյանը, Պ. Քոլոլյանը և ուրիշներ: «Միությունը» կազմակերպում է բազմաթիվ դրական ու քաղաքական հավաքույթներ, ճրանաներեն լույսով գրքույկներ է հրատարակում՝ նվիրված հայկական հարցին և մշակույթին: Այդ գրքույկներից մեկը պարունակում է աշուղ Ջիվանու լավագույն

---

[1] «Մշակ», 1915, №№ 262, 263:

[2] «Անահիտ», նոր շրջան, 9 տարի, 1931, թիվ 1—2, էջ 165:

երկերի բարգմանությունները, որ կատարել էր Արշակ Չոպանյանը։ Սորբոնի ժողովի մասին Չոպանյանը զոհունակությամբ գրում է Լևոյին. «Սորբոնի ցույցը հոյակապ եղավ, շատ գոհ եմ, բայց դեռ շատ բան կա ընելու, և ուժերս հազիվ կը բավեն»[1]։

1916 թվականին, ընդունելով աշխատակցելու վերաբերյալ Թիֆլիսի «Հորիզոնի» առաջարկությունը, Ս. Չոպանյանն առաջին իսկ տողով ճշտում է իր քաղաքական հայացքները։ Նա գաղափարում է ազգայնական կուսակցությունների գործելակերպը, մանավանդ, ազատագրական պայքարում նրանց դրսևորած անօգնականությունը, որը, նրա կարծիքով, անմիաբանության հետևանք էր։ Մեկ անգամ էլ, նույն տողով, Չոպանյանը հուշում է իր հավատո հանգանակը, որ մշակել էր դեռ դարասկզբին. «Կուսակցությունը, որուն կը պատկանիմ, կը կոչվի «Հայոց ազգ», և մինչև որ հայկական ձգնաժամը չվերջանա, մինչև որ հայոց հարցը չլուծվի, պիտի չդադրիմ մեր ազգային գործունեության մեջ կուսակցական կռիվին դեմ կռվելե և մեր դատին բարեհաջող լուծման համար մեր ազգին բոլոր ուժերուն միացման անհրաժեշտությունը քարոզելե»[2]։ Ամատունի Բուրքիայի կարգ ու սարքի դեմ բարձրացող հեղափոխական բուրժուազիայի, որ իր դասակարգային շահերը նույնացնում էր ամբողջ ազգի շահերի հետ, գաղափարախոսի հավատո հանգանակն էր դա։ Այն պահպանում էր իր գոյությունը և իմաստը, որովհետև հիմնական հարցը՝ ազգային-ազատագրական շարժումը, պահպանում էր իր բնույթը և չէր հանդիլ լուծման։

Չոպանյանի քաղաքական հայացքների բովանդակության անսակարծիք միանգամայն բնական էր այն գոհունակությունը, որով նա ընդունեց Ռուսաստանում ցարիզմի տապալման լուրը։ «Ցարականության անկումը, հակա Ռուսիո ազատագրումը, այս պատերազմին հոյակապ արդյունքներեն մեկն է»[3], գրում է Չոպանյանը Փարիզի «Վերածնունդ» հանդեսում, որին նա սկսել էր աշխատակցել։ Նույն շրջանում Վալերի Բրյուսովին ուղղված մի նամակում նա գրում էր. «Ազատության մուտքը Ռուսաստան... պատմության մեծագույն և երջանկագույն իրադարձություններ է ֆրանսիական հեղափոխությունից հետո»[4]։ Նույնպես բնական

---

[1] Նամականի, էջ 129։

[2] «Հորիզոն», 1916, № 21։

[3] «Վերածնունդ», 1917, թիվ 1, էջ 13։

[4] Ըստ «Աշխարհ», Բերթի, 1968, 3 ապրիլի։

պետք է ասենք, որ Զոպանյանը հույս էր կապում, թե Ռուսաստանում հաստատված ժամանակավոր կառավարությունը մինչև հաղթական վախճանին կհասցներ պատերազմը, քանի որ պաշնակիցների հաղթանակի մեջ նա առաջին հերթին տեսնում էր Բուրքիայի պարտությունը և հայկական հարցի լուծման հնարավորությունը։ Այստեղից էլ Զոպանյանի անհամաձայնությունը «խաղաղություն առանց անեքսիաների» բոլշևիկյան լոզունգի հետ, որ նրա աչքին «Հայաստանը Բուրքին վերադարձնելու ահավոր պատահականություն իսկ կրնար ներկայացնել»[1]։

Զոպանյանը Ռուսաստանում կատարվող իրադարձությունների մասին տեղեկանում էր եվրոպական բուժական աղբյուրներից ու ենթակա էր այդ աղբյուրների մենաշնորհության ազդեցությանը։ Արդեն ինքն իսկ խոստովանում էր, որ որոշապես ոչինչ չգիտի, թե ինչ անցուդարձեր են տեղի ունենում այնտեղ[2]։ Ինֆորմացիայի պակասությամբ ու, մանավանդ, միակողմանիությամբ, ինչպես նաև իր աշխարհայացքի պատմականորեն սահմանափակությամբ պետք է բացատրել, որ Զոպանյանը չկարողացավ անմիջապես ըմբռնել ու հասկանալ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նշանակությունը ինչպես ամբողջ մարդկության, այնպես էլ, մասնավորապես, հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար։ Այդ վիթխարի իրադարձության ընկալմանը նա դեռ պիտի հանգեր աստիճանաբար, մի քանի տարի հետո, ինչպես հին սերնդի շատ ու շատ առաջադեմ ներկայացուցիչներ ամբողջ աշխարհում։

Եվ այդ ճանապարհին արված առաջին քայլը Արևմտահայաստանի մասին լենինյան դեկրետի գնահատությունն էր։ Զոպանյանը խանդավառությամբ ողջունեց այն «կարևոր ու բնիկ-թառիթ դեպք մը,— գրում էր նա 1918 թվականի հունվարի վերջերին,— մաքսիմալիստ (բոլշևիկ— Կ. Դ.) կառավարության հրովարտակն է Թրքահայաստանի գրավյալ հողերու մասին, այդ հրովարտակը անգամ մը ևս ցույց կուտա մաքսիմալիստներու դևկավարներուն մեջ գաղափարական ձգտումներու հավատարմության տարրը... Հրովարտակը... ազնվությամբ ու անկեղծությամբ ներշնչված է անտարակուսելի կերպով և Ռուսիո այն հա-

---

[1] «Վերածնունդ», 1917, թիվ 1, էջ 14։

[2] Նույն տեղում, թիվ 4, էջ 123։

յները՝ մաքսիմալիստ կամ ոչ, որ թելադրած են պայն, շնորհավորության արժանի են»[1]:

Հետաքրքրություն է ներկայացնում մի պարագա Զոպանյանին ոչ այնքան հուզում էր առհասարակ սոցիալական հեղափոխության հարցը և իր հայացքների համար իդեալ հանդիսացող բուրժուական կարգի տապալման փաստը, որքան սովետական նորահաստատ պետության կողմից պատերազմի հնարավոր դադարեցումը և կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի նեքաշումը: Ահա թե ինչու նա չի կարողանում համակերպվել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետ, բայց միևնույն ժամանակ նույնիսկ համակրանքով է խոսում կենտրոնական Եվրոպայում պրոլետարական հեղափոխության հնարավոր հաղթանակի մասին, միայն թե այդ հաղթանակը արագացներ Գերմանիայի, հետևաբար նաև Թուրքիայի ռազմական պարտությունը: Այդ առթիվ Զոպանյանը գրում է. «Աւոր (Ավստրիայում գործադուլային շարժմանը— Կ. Դ.) անհնար չէ, որ հետևի Գերմանիո մեջ հեղափոխական շարժումին (որուն նախանշանները և քանի մը տարրերը արդեն իսկ կան) բռնկումը, ինչ որ պիտի մեծապես նպաստեր այս պատերազմի շուտ և լավագույն ձևով հերակացության մը հանգելուն... Անհնար չէ, որ մաքսիմալիստները իրենց գլխավոր նպատակներեն մեկուն հասնելու մոտ ըլլան, այն է Գերմանիո և Ավստրիո մեջ բռնկցնել ընկերավարական հեղափոխական կրակը, և այդպիսով փութացնեն ընդհանուր հաշտության կնքումը, և, եթե հասնին այդ նպատակին, իրենց մեղքերուն մեկ մեծ մասը քաված պիտի ըլլան»[2]: *Իսկ այդ «մեղքերը», ըստ Զոպանյանի, իրը բանակը կազմալուծելն է և պատերազմը դադարեցնելու փորձերը:*

Սկսած 1917 թվականի ամռանից Զոպանյանը հարց է բարձրացնում ընդհանուր հայկական համագումար հրավիրելու մասին, որը պիտի քննարկեր ապագա քաղաքական գոյավիճակի հարցերը, քննադատում Ազգային պատվիրակության գործունեությունն ու պահանջում վերակառուցել այն: Միևնույն ժամանակ Զոպանյանը լայն գործունեություն է ծավալում «Փարիզի հայկական մասվորական միության» գծով, կազմակերպում է բազմաթիվ երեկույթներ ու հանդիսաններ, ամենուրեք,

---

[1] «Վերածնունդ», 1918, թիվ 3, էջ 55:

[2] Նույն տեղում, թիվ 3, էջ 56:

Փարիզում մի զավառում հանդես է գալիս բանախոսություններով, ընդամին մեծ մասամբ ֆրանսիական լսարանների առջև, աջակցելով «L'Effort de la France et de ses Allies» ընկերության գործունեությանն ու նրա հրավերով։ 1917 թվականին հրատարակում է «Ֆրանսիան և հայ ժողովուրդը» (էդգար Շահինի նկարագարդումով), «Հայաստանը և թուրքական լուծը», 1918-ին լույս է ընծայում «Հայ կինը»։ Ֆրանսերեն հրատարակված այս հատորները և մանավորապես վերջինը ունենում են դրական արձագանքներ։ Գուստավ Շլյումբերժեն գրում է «Le journal des Debat»-ում. «Ես վստահ եմ, որ Զոպանյանի էջերուն որևէ ընթերցող չպիտի կրնա արցունքներուն վազելը չդադալ ի լուր այդքան վսեմ անձնվիրության, ի տես զոհաբերության մեջ ցույց տրված այդքան վեհության»[1]։ 1917 թվականի փետրվարից Զոպանյանն ընտրվում է ֆրանսիական «Societe des gens des letters Français»-ի անդամ։

1918 թվականին Զոպանյանն իր վրա է վերցնում «Վերածնունդ» երկշաբաթաթերթի խմբագրապետի պարտականությունը։ 1919 թվականից սկսած «Վերածնունդը» աստիճանաբար ընդունում է շեշտված դաշնակցական ուղղություն, և Զոպանյանը ոչ միայն հրաժարվում է խմբագրապետությունից, այլև առհասարակ դադարում է նրան աշխատակցելուց։ «Վերածնունդի» խմբագրությունը, ավելին, սկսում է նյութեր տպագրել նախկին խմբագրապետի դեմ։

Զոպանյանի «հանցանքն» այն էր, որ նա նախ չի ուզում ճանաչել դաշնակցական հանրապետությունը. «Պզտիկ հայկական, անունով անկախ, տերություն մը կազմված է, ցավագին ահռելի պայմաններու ճնշման տակ և մեր արյունը խմող բշնամիներուն հետ, իհարկե, սոսկալի կսկծալի համաձայնության մը հետևանքով,— գրում է նա։— Մենք, ազատ երկիրներու հայերս, ոչ միայն զայն մեր ամբողջ ուղին կատավարությունը չենք կրնար նկատել, այլև պարտք ունինք չընդունիլ զայն, չճանչնալ անոր վավերականությունը...»[2]։ Իսկ քիչ անց Զոպանյանը քննադատում է նաև այդ կառավարության Եվրոպա առաքած պատվիրակության գործունեությունը։

---

[1] «Վերածնունդ», 1918, թիվ 14—15, էջ 323։

[2] Նույն տեղում, թիվ 16—17, էջ 357։

1919 թվականի դարնանը Փարիզում տեղի է ունենում ազգային համագումարը, որը նոր Ազգային պատվիրակություն է ստեղծում։ Ս. Զոպանյանը նշանակվում է պատվիրակության անդամ։ Նույն միջոցին նա գործնական քայլեր է անում նոր կուսակցություն ստեղծելու ուղղությամբ։ 1919 թվականի մայիսի 26-ին շրջաբերական է ուղղում իր մի խումբ համախոհներին՝ նրանց ժողովի հրավիրելով կուսակցություն հիմնադրելու համար։ Անհաջող փորձից հետո ձախողվում են նաև այդ ուղղությամբ նույն տարում կատարած մի քանի ուրիշ ձեռնարկումները։ Հատկանշական է, որ 1920 թվականի փետրվարին հանդես գալով մի երևույթում, նա հայտարարել է, թե շուտով «կարելի պիտի ըլլա կազմել այն հակայական կուսակցությունը, որպեսզի կարելի ըլլա պայքարիլ մյուս մեծ կուսակցության՝ Հ. Հ. դաշնակցության դեմ, պայքար, որ անհրաժեշտ է և օգտակար»[1]։ Նոր կուսակցությունը ռամկավար-ազատական կուսակցությունն էր, որ ստեղծվեց 1921 թվականին և իր առաջին ատենապետ ընտրեց Ս. Զոպանյանին։

1920 թվականի ամռանը ազգային երկրորդ համագումարը նոր քաոանդամ պատվիրակություն է ընտրում, որը Ս. Զոպանյանին հրավիրում է գլխավորել պրոպագանդայի մարմինը։ 1923 թվականին, Լոզանի դաշնագրից հետո, Զոպանյանը պաշտոնապես հրաժարվում է Ազգային պատվիրակությանը աշխատակցելուց, մնալով խորհրդատուի և աջակցողի դերում։ Միևնույն ժամանակ նա տարիներ շարունակ մասնակցում է Ազգային պատվիրակության ստեղծած «գաղթականական հանձնաժողովին» որպես անդամ և, հետագայում, իբրև նախագահ։

1920 թվականի աշնանը Ազգային պատվիրակությունը Արշակ Զոպանյանին ուղարկում է Բիլյութ, ֆրանսիական դեսպանի կոմիսարի հետ բանակցություններ վարելու և Կիլիկիայում ազգային օջախ ստեղծելու ուղղությամբ գործունեություն ծավալելու համար։ Դարձյալ Զոպանյանը տարվում է «կիլիկյան երազով», հավատ ընծայելով «լավ» կամ «քաղաքակիրթ» ֆրանսիական իշխանավորների «հայասիրական» զգացումներին։ Տարիներ հետո, ընդհանրացնելով «կիլիկյան երազի» բոլոր էտապները և մանավանդ վերջին՝ 1920—21 թվականների ժամանակաշրջանը, նա ցավով պիտի արձանագրի, թե այդ

---

[1] «Վերածնունդ», 1920, թիվ 5, էջ 80։

հույսերը անհիմն էին, թե դրանք «ծայրահեղ համեմատության հասցնելու սխալը գործեցինք» և փոխանակ այդ երազները իրականացած տեսնելու, «ընդհակառակն, ավելորդ միայն կը տեսնենք այդ շրջաններուն մեջ»[1]։

1920—21 թվականներին, սակայն, Չոպանյանը լիահույս էր, թե Ֆրանսիան Կիլիկիան չի պարպի, կպահպանի այնտեղ իր ռազմական ուժը և հնարավորություն կընձեռի հայությանը կազմակերպվելու համար։ Այդ հույսը նրա մեջ չմարեց նույնիսկ, երբ 1920 թվականի մարտին՝ Լոնդոնում, իսկ ապրիլին՝ Փարիզում, դարձյալ մերժումներ առացավ Կիլիկյան ծրագրի հարցում։ Ապրիլի 7-ին Չոպանյանը Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ-ի հետ միասին այցելում է Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրություն, որտեղ արևելյան բաժնի պետ Մ. Բարժբոնը նրանց պատասխանում է. «Ֆրանսիայի նպատակն է քաղաքակիրթ և ինքնավարական կառավարություն մը կազմել, թուրք դրոշակը պահել Կիլիկիո մեջ՝ յուրաքանչյուր ցեղի և ազգի առանձնաշնորհումով։ Մի՛ կարծեք, թե մենք, այլ քաղաքականությունը և քաղաքակրթությունը այսպես կը պահանջեն»[2]։

Մերձավոր արևելքում Չոպանյանը մնում է մինչև 1921 թվականի օգոստոսը, այդ ժամանակամիջոցում բազմաթիվ ճանապարհորդություններ կատարելով Բեյրութ, Ադանա, Տարսոն, Մերսին, Ալեքսանդրետ, Սրուսադեմ և այլ կարևոր կենտրոններ։ Ընդ որում, բոլոր այն վայրերում, ուր այցելում էր, Չոպանյանը քաղաքական գործունեությանը զուգահեռ կազմակերպում էր նաև հայ բանաստեղծությանը և երաժշտությանը նվիրված երեկոներ։ Թուրքական իշխանությունները կասկածել էին Ա. Չոպանյանի առաքելության առթիվ և հետևում էին նրա գործունեությանը։ Ադանայից գրված նամակները նա ուղարկել էր մի անձնավորության միջոցով, որին թուրքական իշխանությունները բանտարկել էին և նամակները վերցրել[3]։

Մերձավոր արևելքում Չոպանյանը հանդիպում է նաև դաշնակցության քայքայիչ աշխատանքին, որը ուղղված էր, մասնավորապես, իր դեմ։ Ադանայի դաշնակցական «Կիլիկիա» թերթը նրա դեմ հրապարակում է «ամենազզվելի հոդվածաշարք մը»։

---

[1] «Անահիտ», նոր շրջան, Ա. տարի, 1929, թիվ 1, էջ 3։

[2] ԳԱՔ, ԱՉՖ, IV բաժին, № 272—276։

[3] Նույն տեղում, № 271։

Չոպանյանը զայրույթով գրում է. «Այդ սրիկաները անգամ մը ևս ծնծ կը մուրան կոր, իրենց պատիժը պետք է տալ»[1]: Նա «Միքրոպներ» անունով մի հոդվածաշար է ուղարկում «Արև» թերթին: «Բավական երկար եղավ, բայց այդ վնասակար մանրէներով,— այսպես է դաշնակցականներին անվանում Չոպանյանը,— զբաղվելու որոշումը տալն հետո պետք էր լիակատար աշխատանք մը մեջտեղ դնել...»[2]:

Մեծամասնությունը կառավարած ուղևորության շրջանում էլ Չոպանյանը ակնառու կերպով տեսնում է այն հակասությունը, որ կար առաջին համաշխարհային պատերազմում Անգլիայի և Ֆրանսիայի «ազատասիրական» լողունգների ու նրանց գործունեության արդյունքների միջև: Այստեղ է, որ դաշնակիցների իրական նպատակների նկատմամբ կասկած է ծնվում նրա սրտում: Երուսաղեմից նա գրում է Միքայել Կյուրճյանին. «Քաղաքական կացության վրա չեմ խոսիր. ահռելի է: Դաշնակիցների հալածանքը Արևելքին վերածնության բերելու տեղ մահ բերավ, և աշխարհիս խաղաղություն տալու տեղ ամենավատանդավոր ենդի մը մեջ նետեց զայն»[3]:

Այնուամենայնիվ, նույնիսկ Կիլիկիայից վերադառնալուց հետո ամիսներ անց, երբ Ֆրանսիան ըստ էության արդեն լուծել էր հարցը հօգուտ Թուրքիայի, Չոպանյանը ինչ-որ չափով հույսեր էր կապում իր փայփայած երազի հետ: Քաղաքական գործիչը այդ հզոր խառնվածքի մեջ սկսել էր մեծապես զիջել զգացմունքի մարդուն: Եվ դա Չոպանյանի հանցանքը չէր, այլ ողբերգությունը:

«Տեսակ մը ողբերգություն ալ իմ կյանքս է, մեր ցեղին հսկա ողբերգության մեջ՝ խոնարհ մանրադիտական տուամ մը. բայց որ իր հատուկ տրամաբյունն ունի,— գրում էր նա Միքայել Կյուրճյանին Փարիզ վերադառնալուց մեկ տարի անց:— Նետվեցա Փարիզ անօրինակ աղետի մը մատնված ազգիս դատին կրցած չափովս ծառայելու համար: Կը կարծեի, թե վեց ամիսն, մեկ տարին կը լուծվեր այդ դատը, և ես նորեն կը դառնայի իմ բնական կենցաղին: Քանյոթ տարի անցավ անկից ի վեր,

---

[1] Նամականի, էջ 141:

[2] ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, Ա. Չոպանյանի նամակը Մ. Կյուրճյանին, 1921, 15 հուլիսի:

[3] ԳԱԹ, Մ. Կյուրճյանի ֆոնդ, Ա. Չոպանյանի նամակը Մ. Կյուրճյանին, 10 հուլիսի, 1921:

ու դեռ չէ լուծված այդ հարցը, ու ես կը շարունակեմ ապրիլ կյանք մը, որ իմս չէ: Կը սիրեմ գործը, զոր կը կատարեմ, պարտականութեան զգացումը զիս կը զորացնէ, կը սփոփէ, միտս կուտայ ինծի այս լուծը տանելու, բայց ինչքան ավելի երջանիկ պիտի ըլլայի, եթե վերջապես իրական, գործնական, վերջնական արդյունքի մը հասնէին այս խնդճ ալգին այնքան զոհողութիւններն ու ճիգերը, և ես կարենայի հանգիստ սրտով դառնալ գրականութեան, ինչ որ նորեն ալգին զորացմանը ծառայել պիտի ըլլար, ավելի քաղցր, նվազ դժնդակ, ավելի պայծառ ձևով մը»[1]:

Բարեբախտաբար, Արշակ Չոպանյանի գերմարդկային կորովը և ճիգը հնարավորութիւն էր տանջծում, որպեսզի նա, նույնիսկ ամենաղբաղ պահերին, փորը-ինչ ժամանակ արամադրեր նաև իր ամենասիրելի գործին, իր կոչմանը՝ գրականութեանը: Եվ պատկերացնել միայն, որ այդ «փորը-ինչ ժամանակին» արգասիքը, որ նա տանջծնց հայ ժողովրդի կյանքի փոթորկուն թվականներին գրականութեան, գրականագիտութեան, հայ մշակույթի պրոպագանդման մարզերում, լիովին բավական կլիներ փառքի դափնեպսակ հյուսելու նրա անվան շուրջը:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գրականությունը պայքարի զենք

«Անահիտ» հրատարակության դադարեցումը թեպետ ծանր անդրադարձավ Չոպանյանի հոգեկան վիճակի վրա, բայց որոշակիորեն նպաստեց, որպեսզի նա ջերմվեր ձևերի տակ կուտակված նյութը առանձին հատորով հրատարակելու գործով: Այդ հատորը, որ կրում էր «Հայ էջեր» խորագիրը, լույս տեսավ 1912 թվականին:

«Հայ էջերը» պարունակում էր էջմիածնի մատենադարանի ձեռագրերից քաղված հայտնի և անհայտ հեղինակների մի ամբողջ շարք գործեր և էջմիածնի մայր տաճարի գեղարվեստական իրերի 52 լուսանկարներ: Դա, ինչպես Չոպանյանն է ասում,

[1] *Նամականի, էջ 146:*

ուսումնասիրության չէր, այլ հայ արվեստի և բանաստեղծության անծանոթ մնացած էջերի մի ալբոմ: Ինչպես իր նախորդ բանասիրական պրպտումներում, այնպես էլ այս դեպքում Զոպանյանի նպատակն էր «մեր նախնյաց բոլոր գործերը երևան հանել»:

«Զգանք, որ չափազանց, բայց հրեշային կերպով չափազանց անտարբեր պահված ենք ցարդ դեպի մեր նախնյաց գրական ու մանավանդ գեղարվեստական գործը,— գրում է Զոպանյանը,— և գեթ այժմ փութանք դարմանել մեր հանցանքը: Ներկա հատորը այս նպատակին ուղղված փոքրիկ ճիգ մըն է, որ իրեն գլխավոր նպատակ ունի մղել ուրիշները նույն բանն ընել ավելի լայն չափով ու ավելի մանրամասնյալ ձևով»[1]:

Այսպիսով, Զոպանյանը շարունակում էր այն կարևոր գործը, որ ձեռնարկել էր 1895 թվականից սկսած: Իր ուժերի և հնարավորությունների ներածին չափով ձգտում էր հայ հասարակությանը ծանոթացնել նախնիների մշակութային գանձերին: Այդ գործը գիտական-բանասիրական էր, նույնքան և քաղաքական նպատակ էր հետապնդում, նպաստում էր ազգային ինքնաճանաչմանը, ազգային կոնսոլիդացիային: Թեպետ գիրքը առանձին ուսումնասիրություն չէր, բայց ուներ Զոպանյանի գրչին պատկանող ծավալուն նախաբան, որի մեջ նա համառորեն վերլուծում է հայ միջնադարյան պոեզիայի աշխարհիկ և կրոնական տարրերը, գնահատում առանձին հեղինակներին ու հատորում տեղ գտած գրվթի բոլոր գործերը: Հայ միջնադարյան պոեզիայում ի՞նչն էր ամենից ավելի գրավում բանասերին: Այս հարցին հետաքրքիր պատասխան է տալիս ինքը՝ Զոպանյանը: Նա քրքրում է էջմիածնի «Տաղարաններն» ու «Գանձարանները»: «Գանձարանները արդեն գրվթի միշտ շնորհակալությաներ են չոր ու ցամաք աստվածաբանական քրիշեններով վխտացող անհոգի ոտանավորներու. ահագին համբերություն պետք է այդ անհամության բուրգերը, մերթ շահեկան կտորի մը հանդիպելու հույսին միայն, ծայրեծայր քննելու համար»[2]: Եվ ահա նա ընտրում է, դեն նետելով «չոր ու ցամաք անհոգի աստվածաբանական ոտանավորները» և հատորի մեջ տեղադրում «շահեկան կտորները»:

---

[1] Արշակ Զոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ Դ:

[2] Նույն տեղում, էջ ԺԸ-ԺԹ:

Այդ նյութերի ընտրությունն էլ նա կատարել է տարբեր նպատակներից ու չափանիշներից ելնելով: «Այս բոլոր գրվածքները ոչ նույն չափով, ոչ ալ նույն տևական շահևկան են: Մեկ քանին գրական էջեր են առաջնակարգ արժեքով, որ մը ծաղկաքաղներու մեջ անցնելու սահմանված. այլք, թեպետ անհավասար իրենց ամբողջության մեջ, կարժեն կորստան փրկվիլ՝ քանի մը գմայլելի հատվածներու կամ հոյակապ տողերու համար. ուրիշներ դեռ ունին իրենց գրական նյութերեն, իրենց քերթողական բնդուն տարր, որ հոտառություն ու ճաշակ ունեցող բանաստեղծի մը ձեռքը կարող է շքեղ քերթվածներու հիմունք դառնալ. ամենուն մեջ ալ, այս կամ այն չափով, զեղեցկագետ հայ ընթերցող մը գինքը հետաքրքրող բան մը պիտի գտնե»[1]:

Վերլուծության ընթացքում Զոպանյանը, մասնավորապես, շեշտում և ուշադրություն է հրավիրում այն գործերի վրա, որոնց մեջ հնչում են սոցիալական բողոքի (Թրիկ, «Ընդդեմ ֆալաքին») և հայրենիքի ազատության համար պայքարի մոտիվները («Տաղ իշխանացն Հայոց», «Ողբ և կոծ ի վերայ Հայաստանեայց աշխարհին» և այլն): Վերջին տաղի մասին, նա, օրինակ, գրում է. «Եթե ներողամիտ աչքերով նայինք քանի մը թույլ տողերու և քանի մը կրկնաբանությանց, ամբողջությունը զմայլելիորեն արտահայտ էջ մըն է, մին ամենեն ղգացված էջերեն, զոր մեր նախնիք մեզի ձգած ըլլան. «գրականություն» չէ, ժողովրդի մը սիրտն իսկ է, որ վիշտեն, դառնությունեն, ամոթեն ալ ջախջախված, կը հեծե ու կը տքա այս տողերուն մեջ»[2]:

Հատորում զետեղած լուսանկարները հայթայթելու գործում Զոպանյանին օգնել են Կոմիտասը, Գարեգին Հովսեփյանցը, Նիշան Թադևոսյանը և ուրիշներ: Լուսանկարների հրատարակությամբ, ինչպես և Հովնաթանյաններին նվիրված հատորում, Զոպանյանը ձգտում էր հասարակայնության հետաքրքրությունը արթնացնել աղգային արվեստի նկատմամբ, կոչ անելով մասնագետներին՝ ուսումնասիրել այդ հարուստ ժառանգությունը:

***

1912 թվականին Գ. Սունդուկյանի մահվան առիթով Զոպանյանը գրեց իր լավագույն գրականագիտական հոդվածներից

[1] Արշակ Զոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԺՌ:

[2] Նույն տեղում, էջ ԺԵ:

մնկը՝ «Գաբրիել Սունդուկյանց» խորագրով, որը նա հրատարակեց Պոլսի «Բյուզանդիոնում»[1]: Դա ինչպես հակիրճ, բայց մի ամբողջական և խոր ուսումնասիրություն էր, որի մեջ Զոպանյանը ոչ միայն գնահատում էր Սունդուկյանի ստեղծագործությունը, այլև, ըստ էության դրսևորում իր էսթետիկական հայացքները գեղարվեստական գրականության էության և հասարակական դերի հարցում:

Այս հոդվածում մեկ անգամ ևս Զոպանյանը հանդես է գալիս ռեալիզմի համոզված պաշտպանի դերում: Սունդուկյանը, գրում է նա, ռեալիզմին հարել ֆրանսիական և ռուսական ռեալիստական գրականության ազդեցության տակ, «բայց այնքան բնական էր իրեն այդ ուղղությունը, որ կարծես, ինչ օտար վարպետներն իրեն չտային ստոր օրինակը, ինքն իսկ պիտի հնարեր զայն»: Զոպանյանը շեշտում է, որ գրականության խնդիրը Սունդուկյանն ըմբռնում էր որպես կյանքի հարազատ արտացոլում, և դա նրա հասնվածքի էությունն էր: «Աշխարհիս մեջ քիչ գրագետ կա, որ Սունդուկյանցին չափ ղուտ, անխառն իրապաշտ եղած ըլլա. իր մեջ՝ ոչ մեկ հետք ռոմանտիզմի, ոչ մեկ ջանք իրականությունը շտկրտելու, ոսկեզօծելու, ոչ մեկ փափաք տարօրինակ, խորհրդավոր կացություններ և էակներ ստեղծելու»[2]:

Գրականությունը պարտավոր է ճիշտ պատկերել իրականության հակասությունները, այլ ոչ թե «շտկրտել», «ոսկեզօծել» կյանքը: Գրականության հասարակական դերի նկատմամբ այդ հայացքը Զոպանյանի կոնցեպցիան էր, որ, նրա մեջ ստեղծագործաբար հասունանալով, վճռականապես ձևավորվել էր 1895 թվականի վերջերին: Վերհիշենք, թե որքան խստորեն էր նա քննադատում Դյումա-որդու ստեղծագործությունը: Սունդուկյանի գործի մեջ Զոպանյանը անհնում է ռեալիզմի տեսության կատարյալ մարմնավորումը գրական պրակտիկայում: Պատահական չէ, որ նա Սունդուկյանին համարում է «հայոց մեջ ճշմարտապես իրապաշտ» ուղղության հիմնադիրը:

Հետաքրքրական է դիտել, թե Սունդուկյանի ռեալիստական արվեստի բուռկացուցիչ տարրերից որոնք են մասնավորապես գրավում Զոպանյանի ուշադրությունը:

---

[1] Հետագայում նույն այդ հոդվածը Զոպանյանը լույս ընծայեց իր «Դիմբերի» Ա. հատորում, 1924 թվականին:

[2] «Բյուզանդիոն», 1912, թիվ 4717:

Առաջին հերթին՝ դիտողականությունը: «Ամիկա կարճատեսի մանրախույզ հատվածական դիտողություն չէր, այլ թափանցող հայացքը, որ նկարագրիներու հիմքը, տիպարներու ներսիդին, կյանքի պատկերներու թաքուն նշանակությունը կը նկատե ու կը հասկանա»: Եվ ըմբռնելով ու հասկանալով կյանքը, նկատում է Զոպանյանը, Սունդուկյանը կարողանում է չպատճենահանել այն, այլ կրճատում է ավելորդ մանրամասնությունները և ցույց տալիս էականը[1]:

Զոպանյանի համար առանձնակի նշանակություն ունի ռեալիստական արվեստի առավելագույն անկմությունն ու խտացությունը, և նա Սունդուկյանի գործի մեջ հենց այդ կողմն է ընդգծում. «Ոչ մեկ ավելորդաբանություն կա հոն: Այդքան հակիրճ, անկմ, խիտ հեղինակ քիչ կարելի է գտնել»[2]:

Զոպանյանի հայացքների համար խիստ բնութագրական է նրա անհանդուրժողականությունը ռեալիստական արվեստի գործի մեջ մերկապարանոց քարոզի դոյության նկատմամբ: Զոպանյանը բարձր է գնահատում, որ Սունդուկյանը օբյեկտիվ, անաչառ դիտող չէր, միևնույն ժամանակ բարձր է գնահատում նաև այն հանգամանքը, որ Սունդուկյանը իր հայացքները կարողանում էր թաքցնել գեղարվեստական ստեղծագործության խորքում, թույլ տալով, որ դրանք դրսևորվեին տվյալ ստեղծագործության գեղարվեստական տրամաբանության բերումով: «Այդ ճշմարիտ արվեստագետի բնազդն ու զարգացած դրամատուի ճաշակն է դարձյալ, որ արգիլած է Սունդուկյանցը հրապարակախոսության վտանգին մեջ իյնալե,— գրում է Զոպանյանը:— Այդ վտանգը մանավորապես կը սպառնար իրեն, որովհետև ինքը, ըլլալով հանդերձ բացարձակ կրապաշտ մը արվեստի մեջ, կյանքի առջև իբր մարդ՝ անտարբեր և անզուն հանդիսատես մը չէր սակայն, ուներ որոշ հակումներ, սկզբունքներ, շեշտված նախասիրություններ և ատելություններ, այդ բոլորն ուզած է արտահայտել իր խաղերուն մեջ, և այդպիսի պարագաներու մեջ հրապարակադրական բեմբասացության և միակողմանիության խումին ազատիլ շատ դժվար է: Բայց Սունդուկյան բոլորովին վերծ մնացած է այդ վտանգեն իր գործը ամբողջովին տոգորված է այն մոլեգին ատելությունովը, որ այդ ազնիվ մարդը կը տածեր

---

[1] «Բյուզանդիոն», 1912, թիվ 4717:

[2] Նույն տեղում:

անխիղճ ու դևհիկ հարուստին, լիրբ փարիսեցիին, վայրագ նահապետին դեմ, բոլոր տղրուկներուն ու բոլոր թարթյուններուն դեմ, և ան համակ խնկավեուված է նաև այն ջերմ պիությամբ ու աղապատանքովը, զոր այդ ոսկի սիրտը կը զգար հալածված անմեղության, խորտակված տկարության համար, և այն գորովալի զմայլմամբը, զոր ուներ պարզ, բարի, մաքուր, քաջ հոգիներուն համար. բայց այս ամենքը երբեք քարոզի ձև չեն ստանար, ասոնք «կարտաշնչին» իր գծած տեսարաններուն, իր նկարած տիպարներուն»[1]:

Ռեալիստական արվեստի այս կարևոր պահանջին հավատարմության համար է, որ Զոպանյանը Սունդուկյանին համարում է «մեր գրականության ամենից «կատարյալ» արվեստագետներին մին»: Պատահական չէ, որ Զոպանյանը բարձր գնահատելով «Պեպոն», այդ գործի հիմնական հատկանիշներից մեկն է համարում, որ նրանում սոցիալական-հասարակական հարցերը: բարքերի նկարագրությունը, երգիծանքը, ֆոլկլորը, բանաստեղծությունը, նկարչությունը, հոգեբանությունը, ամեն, ամեն ինչ «հալած են Արվեստի համաձույլ քուրայի մեջ»: «Պեպոն» ամեն բանի առաջ արվեստի գործ մըն է (ընդգծումը հեղինակինն է),— գրում է Զոպանյանը,— և մին այն գործերեն, որ կարդարացնեն այն հավատքը, թե Արվեստը գերագույն բանն է կյանքի մեջ, վասն զի ինչպե՞ս այլևս կարելի է այդ մասին տարակուսիլ, երբ կը տեսնենք, որ անիկա ոչ միայն հաճույքներու մեծագույնը, մտավոր հեշտությունը կը շնորհե մեզի, այլև մարդկային հրեշությանց ամենեն ուզո պատուհասողը կը հանդիսանա (ընդգծումը իմն է— Կ. Դ.): Զիմզիմոֆի մը սև դեմքը, Սունդուկյանցի մը արդար ու հուժկու ձեռքովը դարուց ի դարս խայտառակության այտունին դամված,— ինչ պաշտելի վրեժխնդրություն»[2]:

Շահեկան է նաև հոդվածի այն մասը, որտեղ Զոպանյանը անդրադառնում է Սունդուկյանի կյանքի առանձին կողմերին: Հոդվածագիրը մանավոր համակրանքով շեշտում է, որ մեծ դրամատուրգը Կովկասի բոլոր ազգությունների կողմից սիրված էր, նրա հանդեսները և ակնածանք ունեին հասարակության տարբեր խավերը, «բայց մանավանդ ժողովրդական դասակարգը,—

---

[1] «Բյուզանդիոն», 1913, թիվ 4717:

[2] Նույն տեղում:

ընդգծում է Չոպանյանը,— որուն Սունդուկյանցի համար ունեցած դպացումը պաշտումի կը հասնի»[1]։ Նվ, վերջապես, իր ժամանակի համար մեծ հասարակական հնչեղություն էր ստանում Չոպանյանի պահանջը՝ «Սունդուկյանցի գործը պետք է տարածել ժողովրդին բոլոր խավերուն, բոլոր հասվածներուն մեջ»։

Նույն շրջանում Չոպանյանը «Բյուզանդիոնում» տպագրում է Հովհաննես Հովհաննիսյանին նվիրված մի ուսումնասիրություն, որի հարցադրումները որոշակիորեն արձագանքում են «Գաբրիել Սունդուկյանց» հոդվածի հարցադրումներին։

Հովհաննես Հովհաննիսյանին Չոպանյանը համարում է «ղուտ արվեստագետ», ի հակադրություն նախորդ սերնդի որոշ հայ բանաստեղծների, որոնց արվեստում հրապարակախոսական տարրը կարևոր տեղ էր գրավում։ Բայց անմիջապես Չոպանյանը մեկնաբանում է իր միտքը. «այո, «ղուտ արվեստագետ», «ղուտ բանաստեղծ» բացատրություններն ալ պետք ունին հստակորեն սահմանվելու։ «Ղուտ արվեստագետ» մը կամ «ղուտ բանաստեղծ» մը ըլլալ չի նշանակի որևէ աշխարհայացք չունենալ, միմիայն շնորհալի պատկերներ և ներդաշնակ բառեր քով-քովի շարելով շատանալ, կան այդպես ընողներ, բայց անոնց գործը շինծու ծաղիկ մըն է և չի կրնար համարվիլ ճշմարիտ արվեստ, որուն առաջին պայմանն է կենդանություն, ինչ որ կը ստացվի միմիայն անձնական ինքնատիպ հոգիի մը անկեղծ ինքնին արտազեղմամբ։ Արվեստագետը ունի ուրիշն իր ուրույն խառնվածքը, աշխարհայացքը, ձգտումները, բայց ատոնք կերգն կամ կը նկարն փոխանակ քարոզելու...»[2]։

Սա, «ըստ էության, «արվեստն արվեստի համար» տեսության քննադատություն էր։ Չոպանյանը պահանջում էր կատարյալ, բարձր արվեստ, բայց ոչ երբեք անբովանդակ, ինքնանպատակ արվեստ։ Բնավ պատահական չէ, որ ճիշտ նույն հոդվածում նա «ամենամաքուր քնարերգության հավիտենական անցամաքելի և ամենավճիտ աղբյուրը ժողովրդական երգերուն մեջ» էր գտնում[3]։ Այսպիսով, արվեստագետի կապը իր ժողովրդի հետ, «ժողովրդական դասակարգի» հետ, նրա կյանքի, շահերի և հույզերի ճշմարտացի արտացոլումը արվեստի կատարյալ ձևերի

---

[1] «Բյուզանդիոն», 1912, թիվ 4718։

[2] Նույն տեղում, թիվ 4761։

[3] Նույն տեղում, թիվ 4762։

մեջ—այսպիսին էր չոպանյանական «դուտ արվեստագիտ» կամ «դուտ բանաստեղծի» բովանդակությունը, որը միանգամայն հակադիր բնեռում է դնվում «արվեստ արվեստի համար» տեսության նկատմամբ։

***

Հատկանշական է, որ եվրոպական ընթերցող հասարակայնությանը հենց ժողովրդայնությունն էլ մատնանիշ էր անում որպես Չոպանյանի արձակի բնորոշ ոպին, երբ նա 1913 թվականին լույս ընծայեց իր ֆրանսերեն հատորը՝ «Կյանք և երազ» խորագրով[1]։

Հատորը պարունակում է արձակ բանաստեղծություններ, հեքիաթներ, քմածին էջեր, որոնց գերակշռող մասը ժամանակին լույս էր տեսել Պոլսի 90-ական թվականների մամուլում, Չոպանյանի «Արշալույսի ձայներ» ժողովածուում, «Ծաղիկ», «Անահիտ» հանդեսներում և ուրիշ պարբերականներում[2]։ Որոշ գործեր հրատարակվեցին առաջին անգամ։

Չոպանյանը դիմել էր անվանի բանաստեղծ Էմիլ Վերհառնին, որի հետ անձնական բարեկամություն ուներ, խնդրելով առաջաբան գրել այդ հատորի համար։ Վերհառնը պատասխանել էր մի նամակով, որը Չոպանյանը հրատարակից հատորի սկզբում, առաջաբանի փոխարեն։ Բելգիացի բանաստեղծը խիստ բարձր է գնահատում Չոպանյանի արվեստը, երբեմն նույնիսկ թույլ տալով չափազանցություններ։

Չոպանյանը իրոք խոշոր վարպետ էր արձակ բանաստեղծության։ Նրա «Գնդոն ի պատիվ հայ լեզվին», «Երգեր», «Պատուհանին քնքշվածը», «Արցունքն ու ծիծաղը» և մի շարք ուրիշ գործեր փոքրիկ պլուպործոններ են, որոնք անանց գեղագիտական արժեք ունեն և կարող են պարզարել որևէ պրակտիկության։ Դրանցից ոմանք ժամանակին շատ տարածված են եղել, թարգմանվել են տարբեր լեզուներով և, նույնիսկ, արտասանվել բեմահար-

---

[1] Archag Tchobanian, La Vie et la Rêve. Paris, 1913.
Այդ ժողովածուն, աննշան հավելումներով, լույս տեսավ հայերեն, 1945 թվականին։

[2] *Չոպանյանի գեղարվեստական արձակի այդ գործերին մենք անդրադարձել ենք աշխատության նախորդ գլուխներում։*

բակներից: Միանգամայն բնական է, ուրեմն, Վերհառնի (ինչպես նաև ուրիշների) խանդավառությունը:

Է. Վերհառնը գրում է. «...Ձեր երկիրը ձեր մեջ կը շնչե... Չկա ձեր ցեղին վերաբերող բան մը, զոր դուք յուրացուցած չըլլաք, այնպես որ մենք ձեր ձայնին մեջ կը լսենք ամբողջ ժողովուրդ մը, որ կը խոսի, կը սիրե, կը տառապի, կ'ոգևարի, առանց սակայն երբեք մեռնելու:

Դուք, այսպիսով, կիրականացնեք ամենեն հին և ամենեն աստվածային գաղափարը, զոր մարդկությունը հղացած է բանաստեղծին նկատմամբ: Դուք կը դարձիք ձեր ինքնությունն ունենալեն, երկրի մը մարդկային հոգին դառնալու համար»[1]: Վերհառնը պիտել է տալիս, թե Զոպանյանը ջանում է իր արձակ քերթվածներում ավելի մեծ չափով անհատականություն և անձնական շեշտ դնել, բայց դա նրան կիսով է միայն հաջողվում, և Վերհառնը դա համարում է բարեբախտություն: «Ինչ ալ ընեք, ձեր բոլոր քերթվածները կը թվին նորեն բխիլ ոչ թե ձեզմե, այլ ձեր ցեղեն ու ասիկա մեծագույն դովեստն է, որ կրնամ ընել անոնց մասին... Պետք ա՞ր, որ ձեզ ապահովեմ, թե «Լուսնյակ դիշերը», «Երգերը», «Արցունքն ու ծիծաղը», «Պատուհանին քերթվածը», «Ջյունին քերթվածը» բոլորովին ֆոլկլորական են: Ամեն ինչ ատոնց մեջ հավաքական է, ամեն ինչ հոն զգացված է՝ սերունդներու մեջեն՝ մեկու մը կողմե, որ զանոնք կը ծծե ու կը խտացնե:

Ձեր սիրտը հոն կը բաբախե, սիրելիդ իմ բանաստեղծ, ոչ թե սրտին դիմացը, այլ սրտին իսկ մեջ ձեր հայրենիքին: Եվ այդ է գերբնական այն տեղը ուր կը մաղթեմ, որ ան մնա գարեր ու գարեր»[2]:

«Կյանք և երազ» հատորը մեծ ընդունելություն գտավ ընթերցողների շրջանում: Մամուլի տարբեր օրգաններում մեկը մյուսի հետևից լույս էին տեսնում գրախոսականներ, Զոպանյանի հասցեով տաղանդավոր նամակներ էին գալիս:

Այդ հատորին անդրադարձավ նաև Յուրի Վեսելովսկին, որը Մոսկվայի «Արմյանսկի վեստնիկում» տպագրեց «Արշակ Զոպանյանը էմիլ Վերհառնի գնահատությամբ» հոդվածը: Վեսե-

---

[1] Արշակ Զոպանյան, *Երկերու ամբողջական ժողովածու*, «Կյանք և երազ», *Փարիզ, 1945*, էջ է:

[2] Նույն տեղում, էջ Ը:

լովակին լավ գիտեր Չոպանյանի մշակութային գործունեությունն ու նրա ստեղծագործությունը[1] և իր գնահատության մեջ ելնում էր ոչ միայն վերհանի կարծիքից։ Այնուամենայնիվ, նշելով վերհանի գնահատականների որոշ չափազանցությունները, մատնացույց անելով Չոպանյանի որոշ արհեստականությունը, նրբամոլությունը, դրքայնությունը, վենելովակին հիմնականում համակարծիք է վերհանի հետ։

Հատկանշական է վենելովակու վերլուծությունը։ Նա վերցնում է այն գործերը, որ առանձնացրել էր վերհանը, գտնելով, որ բելգիացի բանաստեղծը բարձր ճաշակ էր դրսևորել դրանց ընտրության մեջ։

«Լուսնյակ գիշերը»,— գրում է վենելովակին,— զեղչիկ ու բանաստեղծական գործ է, որի մեջ յուրօրինակ և վառ գծագրվում է լուսնյակ գիշերվա պատկերը. երկնքի անհուն դաշտում հազարներով ծագկում են աստղերի ոսկյա մանուշակները ու նրանց մեջ բացվել է լուսնի արծաթե վարդը, որ ճյուղեր չունի և որ բույրի տեղ լույս է տարածում։ Հորիզոնի վրա, որտեղ իրար են ձուլվում երկինքն ու ծովը, կարծես հսկա մի մատ լայն ճերմակ շերտ է քաշել, որ երկարում է ծովի հղկերով անծայր լուսաշող ճանապարհի նման։ Թևեթև սպիտակ մշուշը, ասես ծովի շունչը, ծփում է լուսնի արծաթափայլ լույսով ողողված ծովի վրա և մեղմ օրորվում հանց անուրջի մեջ։

Կախարդական գիշերվա այս բնանկարի հետ հայ բանաստեղծը զեղչիկ ու ինքնատիպ տողերով պատկերում է փոխակերպումները սիրո դյութանքների, որոնք լուսնալուսյա գիշերվա ներքո իրենց են ենթարկում և՛ կանաչի մեջ սարսռացող ծաղիկները, և՛ ալեծուփը ծովի, և՛ սաղարթի մեջ դայլայլող թռչուններին, և՛ սրտերը կույս աղջիկների, որ կոթնել են իրենց պատուհաններին ու ընկղմվել հեշտական, ալեկոծող երազների մեջ։ Լուսինը, երկնքի արծաթյա վարդը, տեսնելով այս ամենը, ծիծաղում է իր կախարդական ծիծաղով, կարծես մեղսակիցը լինի նրանց, ովքեր սիրո անձկության կրակով են համակված»[2]։

Նույնքան ջերմությամբ վենելովակին վերլուծում է «Երգեր» արձակ բանաստեղծությունը, հատկապես նրա չորրորդ երգը։

---

[1] Տե՛ս «Популяризатор армянской словесности во Франции» հոդվածը «Очерки армянской литературы и жизни» գրքում, Армавир, 1906։

[2] «Армянский вестник», М., 1917, № 45—47, стр. 3.

Ինչպես Հայնեն և նախորդող ռոմանտիկները, այնպես էլ Զոպանյանը, ասում է Վահելովսկին, սիրում է բնությանը շնչավորվել. ծաղիկներն զգում են, խորհում, արցունք թափում, դիմում են բանաստեղծին, խնդրում խնայել իրենց, չվնասել, չկտրել հարազատ ցողունից, հիշել, որ իրենք դեռ շատ երիտասարդ են, դեռ ապրել են ուզում ու սիրել[1]:

Արդեն Վերհառնի առաջաբանը խոսում էր այն մասին, որ արևմուտքի առաջավոր մտավորականությունը նոր հատորի լույս ընծայումը դիտում էր ոչ միայն որպես գրական, այլ նաև որպես քաղաքական երևույթ: Պատահական չէր, որ Վերհառնը իր նամակ-հոդվածի մեկը դարձրել էր ժողովրդի ոգու հարազատ արտացոլման գիծը: Բայց, եթե Վերհառնը հարցը ուղղակիորեն չէր կապում քաղաքական շահերի հետ, ուրիշ մտավորականներ հարմար նկատեցին ծանրանալ հենց այդ կողմի վրա: Եվ դա բնական էր, նկատի ունենալով ժամանակաշրջանը: Զոպանյանի գիրքը նոր ուժ էր ընծայում քաղաքական ընդհանրացումների համար:

Ֆլորանսի «Մարձոքո» իտալերեն թերթի 1913 թվականի օգոստոսի 31-ի համարում Ալդո Սորանիի ստորագրությամբ տպագրվեց «Հայաստաննեն ձայն մը» խորագրով հոդվածը[2]:

Սորանին հարց է տալիս, թե ինչպես է պատահել, որ այնքան կոտորածներից հետո Հայաստանը դեռ կենդանի է և ապատագրվելու կամք է դրսևորում: Այդ հարցի պատասխանը նա գտնում է մի շարք գործոններում, որոնց շարքում առաջնակարգ տեղ հատկացնում է մշակույթին: «Իր բանաստեղծները մինչև իսկ Արևմուտք եկած են ըսելու համար, թե հայերը ինքնահատուկ կյանքի նյութ ու իմոր չունեցող, ասիական թմրած ազգ մը չեն եղած... Արևմուտքի հայ բանաստեղծներն են, որ ոչ միայն քուրդ ու թուրք կոտորածներու արհավիրքներուն վրա մեզ լացուցած են, այլև մեզի ապացուցած են, թե Հայաստանը ոչըն զատ ուրիշ բանով երգելու ձայն ունի, և որ մեզի աված են իրենց ցեղին և իրենց ազգայնության ներքին կենսունակության ապացույցները»: Դրանցից մեկը Արշակ Զոպանյանն է: Արևմուտքը նրան պարտական է ոչ միայն բողոքի ջերմաշունչ ձաների, այլև

---

[1] «Армянский вестник», М., 1917, № 45—47, стр. 3.

[2] Նյութերը քաղում ենք Տ. Նազարյանի «Ուշագրավ գնահատականներ» հոդվածից, որը հրատարակվեց «Մշակի» 1914 թվ. 86 և 87 համարներում:

հին ու նոր բանաստեղծների, աշուղների թարգմանությունների, ինչպես նաև իր իսկ սեփական գեղարվեստական ստեղծագործությունների համար,— ասում է հոդվածագիրը։ «Ինչպես իր ժողովուրդը կը համառի կենդանի մնալ, ան ալ կը սիրե ու կուզե կյանքը։ Իր նոր հատորը կը վերջանա քերթվածով մը. «Կյանքի տոնը»[1], որուն մեջ երգիչը կը հայտարարե, թե տարեվերջը (կաղանդը) մահվան տոնախմբությունը չէ ու պետք չէ, որ, ուրեմն, ըլլա մահաշուք հանդիսավորություն մը, այլ, ընդհակառակն, կյանքի հաստատում մը, կյանքին ուղղված կոչ մը։ Բովանդակը անմահ է, կյանքը կը վերանորոգվի, և կյանքը աղնիվ է, և կյանքը գվարթ է, և կյանքը անսահման է, ինչքան ալ օրերը լեցուն ըլլան ցավով...»։

Ալդո Սորանին գնահատում է Զոպանյան գեղարվեստագետի ձայնի մաքրությունն ու թարմությունը, կենսասիրությունը, միշտ երգելու սերը. «Նորեն ու միշտ երգել, ու ոչ թե միայն մահը, ու ոչ թե միմիայն կոտորածը»։

Բարձր կարծիքներով դրախոսականներ են տպագրել «Թան», «Ֆիգարո», «Ռյուբրիք նուվել», «Պարի միդի», «Լը Սինքլը», «Մերքյուր դը Ֆրանս» և մի շարք ուրիշ պարբերականներ։ Ստացված գնահատական նամակների հեղինակների թվում են Անատուան Մեյեն, բանաստեղծներ Ֆրեդերիկ Միսթրալը, Հանրի դը Ռենյեն, տիկին Ալֆոնս Դոդեն, Հանրի Պոերը, Ալիս Բլաքուելը, Ալեքսանդր Մերսըրոն և շատ ուրիշներ։

Գաբրիել Մուրեյը գրում է. «Այնտեղ կան բազմաթիվ քերթվածներ, որ տոգորված են իրապես հոյակապ ներշնչումով մը, մանավանդ այդ «Գեղոն ի պատիվ հայ լեզվին», այնքան հաղորդական և այնքան բարձր հուզմունքով մը լի»[2]։

Հատկանշական է գերմանացի բանաստեղծ և գրական քննադատ Օ. Հախթմանի նամակը։ Ըստ նրա՝ Արշակ Զոպանյանի ստեղծագործության ամենաուշագրավ դիծը անմեղությունն է։ Բայց դա պարզամիտ անմեղություն չէ և ոչ էլ բռնազբոսիկ միամտություն, ավելացնում է նամակի հեղինակը, «որ շատ հաճախ, ավաղ, հանդուրժել ստիպված ենք մերօրյա գրական ստեղ-

---

[1] «Կյանքի տոնը» արձակ բանաստեղծությունը գրված է 1909 թվականի դեկտեմբերի վերջերին և լույս է տեսել «Բյուզանդիոնի» նույն թվականի № 4022-ում «Ամանոր» խորագրով։

[2] Գեղամ Յենիշեհեան, Արշակ Զոպանեան, 1938, Փարիզ, էջ 59—60։

ծագործության մեջ, ոչ, առնական անմեղության մըն է, որ հիմնովին ճանչնալով հանդերձ կյանքի ախտավոր տպեղությունը՝ կը շարունակի հավատալ անոր ջնմնանդ հավատքով մը տղու, կամ լթե կը նախընտրիք, ժողովրդի, ինչպես այնքան լավ մատնանիշ ըրած է աքանչելի Վերհառնը...»[1]:

«Կյանք և երազ» դեղարվեստական արձակի ժողովածուն ստեղծագործական և յուրօրինակ քաղաքական հաշվեհավությունն էր գրողի, առաջին հերթին իր իսկ առջև: Թե դեղարվեստագետը և թե քաղաքացին այլևս տարաձայնություն չունեին կյանքում իրենց վիճակված դերերի շուրջ: Կյանքի համար պայքարը, լավատեսությունն ու կենսասիրությունը ընդհանուր նշանաբան էր մեկ անձի մեջ մշտապես անբաժանելիորեն մարմնավորված գրողի ու քաղաքացու համար:

***

Սկսած 1895 թվականից Զոպանյանը խորապես պահանջ էր զգում թարգմանաբար աշխարհին ներկայացնելու հայ մշակույթի դանձերը: Նա ինքն արդեն դարասկզբին բեղուն գործունեություն էր ծավալել այդ ուղղությամբ, բայց կատարված գործը գտնում էր խիստ թերի: «Զարմանքն ու խանդավառությունը,— գրում է Զոպանյանը մի առիթով,— զոր զգացեր են Բալմոնտները, Բրյուսովները ու Իվանովները՝ առաջին անգամ կարդալով Քուչակի, Նարեկացիի, Սայաթ-Նովայի և այլ հայ բանաստեղծներու էջեր, տարօրինակ պետք չէ թվի մեզի: Այդ զարմանքը որոշ ցույց կուտա, թե ինչքան սխալ գաղափար ունեին այդ ռուս բանաստեղծները մեր ցեղի մասին, և թե ինչքան անհրաժեշտ է լիակատար ու խնամոտ կերպով ներկայացնելու օտարներուն մեր ցեղին ամբողջական պատկերը, որպեսզի մեր մասին տարածված սխալ կարծիքները հիմնովին ցրվին»[2]:

Զոպանյանի համար, ուրեմն, միանգամայն բնական էր այն բուռն խանդավառությունը, որով նա ընդունում էր հայ մշակույթի արժեքները թարգմանաբար օտար ընթերցողներին ներկայացնելու ձեռնարկները: Առավել ևս ողջունում էր, երբ նման գործ կատարվում էր ռուսերին լեզվով, որովհետև քաղաքական

---

[1] «Մշակ», 1914, № 87:

[2] «Մշակ», 1916, № 33:

հայացքներում և գործունեության մեջ հիմնովին կանգնելով ռուսական կողմնորոշման ուղու վրա, Զոպանյանը տարիներ շարունակ ձգտում էր ոչ միայն ռուսական մշակույթը տարածել հայության մեջ, այլև ռուս ընթերցողներին ծանոթացնել հայ մշակույթի լավագույն գործերին: Ինքը ի վիճակի չլինելով դա կատարել, նա դանազան առիթներով թելադրություններ էր անում Կովկասի և Ռուսաստանի հայ մտավորականներին՝ ձեռնարկելու այդ գործը:

1915 թվականի վերջերին իմանալով պատրաստվող բրյուսովյան ժողովածուի լուրը, նա ոգևորությամբ գրում էր. «Մեր դատին հաջողման ամենեն ավելի նպաստելու կարող տարրերենն մին, ամենեն էականը, կարելի է ըսել, մեր ցեղային «ուժին» ապացուցումն է: Այդ ուժը ռազմական գործողություններու մեջ չէ միայն, որ կը հայտնվի, այլև մտավոր ու գեղեցկագիտական կարողության հանդիսաբերությամբ... Ռուս հասարակությունը ուրեմն ճարտար ու կյանքոտ թարգմանության մը շնորհիվ պիտի ծանոթանա Քուչակի, Նարեկացիի, Սայաթ-Նովայի, Թումանյանի, Սունդուկյանի, Շիրվանզադեի և այլ նշանավոր հայ բանաստեղծներու և գրագետներու[1] գլուխգործոցներուն: Ասիկա մեծ ու լուսավոր դիսք մըն է և այդ գեղեցիկ հաջողության համար մենք ամենքս երախտապարտ ենք Մոսկվայի հայկական կոմիտեին»[2]:

Օտար ժողովուրդների մեջ հայ մշակույթի տարածման գործում Զոպանյանի իսկ կատարած ծառայությունները արդեն այդ ժամանակ շատ բարձր էին գնահատվում հայ անվանի մտավորականների կողմից: Բրյուսովի «Поэзия Армении» ժողովածուի առթիվ գրված մի հոդվածում Լեոն ասում է. «Բրյուսովից առաջ հայոց գրականության մասին հիացմունքով խոսել են Անատոլ Ֆրանս, Ջեյմս Բրայս, Պոլ Ադան, Գաբրիել Մուրնյ Բայց դրանցից ոչ ոք հայերեն չգիտեր: Ինչպե՞ս էին կարողանում նրանք ոգևորվել հայ հանճարով և վեր հանել հայկական ոգին: Շատ պարզ է պատասխանը. նրանց առջև դրված էր Արշակ Զոպանյանի մեծ գործը...

...այդ թրքահայ մտավորականը Փարիզում, մեն մենակ, առանց նույնիսկ ապրուստի միջոցների, հոգնաջան աշխատանք

[1] Զոպանյանը կարծում էր, թե ժողովածուն ընդգրկելու է նաև արձակ ու դրամատիկական գործեր:

[2] «Հորիզոն», 1916, № 23:

էր բաժում մի հսկայական, անհեռահայելի դժվար մարտի համար...

Բյուռոնն էլ մեծ չափերով օգտվել է Չոպանյանից և նա համոզված եմ, որ նրա գեղեցիկ Բարգմանությունների մեծ մասը ֆրանսերենից է։ Նվ եթե վաղը մի ուրիշ օտարազգի կամենա ռառնալ հայ սրտին ու զգացմունքին, նա էլ պիտի գնա նախ և առաջ որոնելու Չոպանյանին»[1]։ «Բայց Չոպանյանը մենակ է,— շարունակում է Լևոն նույն հոդվածում,— և նա կդժվարանայի մի ուրիշին գտնել, նրա մոտ կանգնեցնելու համար»[2]։ Հոդվածի հեղինակը պահանջ էր դնում այն մասին, որ այդ գործը պետք է դառնար ընդհանուրի գործ, պետք է սիստեմատիկ կատարվեր։

Լևոն իրավացի էր երկու կետում էլ։ Հայ մշակույթի պրոպագանդման գործը բերի էր մնում ոչ միայն համապատասխան ուժերի պակասության պատճառով, այլև, որ վճռական նշանակություն ուներ, նյութական միջոցների ցավալիորեն չնչինության կամ չգոյության պատճառով։ Լևոյի հոդվածի առիթով Չոպանյանը նրան հասցեագրված իր նամակում ահա թե ինչ է պարզում. «Դուք, անշուշտ, լսել չէիք ուզած, թե մեծագույն ես հրապարակած եմ այդպիսի գրքեր, ուրիշներն ալ ինձմե առաջ և ինձի հետ նույն ատեն, կատարած են նույն գործը. բայց իմ գրքերս կարդացված և ազդեցություն գործած են։ Եվ եթե իմ ուճեռոր հայրենակիցներս ավելի լուրջ կերպով ինձի օգնած լլլային, այսօր 4—5 հատորի տեղ 10—15 հատոր հրատարակած կլլայի. և գոյացած ազդեցությունն ավելի մեծ կլլար։ «Les Trouvères arméniens» գիրքս, որ Բյուռոնի առաջնորդը եղած է մեր միջնադարյան բանաստեղծության համար, երեք տարի ձեռագիր վիճակի մեջ մնացած է, և տասը տեղ գիմելի հետո հազիվ միջոցը գտած եմ հրատարակելու։ Իսկ մեր դասական բանաստեղծության մասին տակավ գործս կը մնա գարդ. ձեռագիր (գիտեք, թե մեր Բաբելի հարուստ մատենադարանները, որոնց գիմեցի Ձեր հանձնարարականով, ինչպես վարվեցան[3]), նույնպես և կարգ մը կիսատ գործեր։ Ուրախ եմ, սակայն, Ձեզ կարենալ հայտնելու, թե ունիմ մամլո տակ կարևոր գիրք մը

[1] «Հորիզոն», 1916, № 43։

[2] Նույն տեղում, № 45։

[3] Չոպանյանը նկատի ունի իր այցելությունը Բաքու 1909 թվականի սկզբներին։

ֆրանսերեն, որ պատերազմի վերջերը, կամ վերջանալեն անմիջապես հետո, լույս կը տեսնի (աստր համար տպագրության միջոց դատած եմ)[1]:

Այդ «մամլո տակ» եղած «կարևոր դիրքը» «վարդենիք Հայաստանյացն» էր:

Բալկանյան պատերազմների օրերին, երբ նորից օրակարգի մեջ դրվեց հայկական հարցը, Արշակ Զոպանյանը ֆրանսերեն բազմահատոր աշխատության մի վիճակագրի ծրագիր հղացավ:

«Ինչ որ ֆրանսերեն լեզվով ընդունելություն կը գտնի՝ աշխարհիս մեջ տարածվելու, ամեն կողմ ընդունելություն գտնելու ապահովություն ունի,— գրում էր Զոպանյանը մի նամակում:— Աստր համար ես անհրաժեշտ կը գտնեմ շարունակել ֆրանսերեն լեզվով մեր գրականության ամենեն ինքնուրույն էջերու եվրոպական հասարակության ծանոթացնելու գործը, որուն նվիրած եմ իմ ուժերուս մեկ ստվար մասը»[2]:

Այս անգամ նրա մտահղացումն էր աշխարհին ներկայացնել հայ հին ու նոր գրականության, մանրանկարչության և գեղանկարչության ծաղիկների մի երկար շարք, որոնք պետք է փնջվեին առնվազն վեց հատորների մեջ: «La Roseraie d'Armenie» էր շարքի ընդհանուր խորագիրը: Հայկական մշակույթի այդ «վարդենիքը» պետք է ծառայեր որպես պայքարի ամենաստուր զենք. աշխարհին ցույց էր տալու մի ժողովրդի տաղանդի արդասիքը և յուրօրինակ մեղադրական էր դառնալու այն բռնակալության դեմ, որը ձգտում էր ոչնչացնել այդպիսի «վարդենիք» արտադրող ժողովրդին:

Արդեն 1914 թվականի կեսերին առաջին երկու հատորների արքադրական փորձերն էին արվում: Պատերազմը մի քանի տարով հետաձգեց աշխատանքը: Վերջապես Ա հատորը լույս տեսավ 1918 թվականին:

«Վարդենիքի» Ա հատորը պարունակում է հեղինակի նախաբանը, ապա «Առաքել Սյունեցի» խորագրով ծավալուն ուսումնասիրությունը: Հատորը նվիրված է Առաքել Սյունեցու ստեղծագործություններին. «Դժոխքի և երկնքի տեսիլներ» բաժնում զետեղված են չորս բանաստեղծություններ, «Խոհական և խրա-

---

[1] *Նամականի, էջ 129—130:*

[2] *Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, Կաթողիկոսի դիվան, թղթ. 238, վավ. 311:*

տական բանաստեղծություններ» խորագրի տակ՝ հինգը, և «Ադամագիրք» բաժնում՝ 6 բանաստեղծություններ: Բացի այդ, Հատորում տեղ են գտել 37 մանրանկարների և գծանկարների լուսանկարչական վերարտադրություններ, որոնցից յուրաքանչյուրի մասին մանրամասն ծանոթություններ են տրվում Հատորի վերջում:

Նիստ կարևոր է նախաբանը, որի մեջ Զոպանյանը բացահայտում է իր հայացքները իր իսկ մշակութային-պրոպագանդիստական գործունեության նկատմամբ: 1914 թվականին պայթած պատերազմը, ասում է հեղինակը, իրեն հարկադրում է թողնել այդ գործը և ժողովրդի նկատմամբ իր պարտքը ամենաշատ կերպով կատարել քաղաքական գործունեության ձևով: Բայց ահա, նա նորից ձեռնարկել է Հատորի տպագրության աշխատանքներին, և այժմ այն դպացումն ունի, որ եթե նույնիսկ պատերազմի ամենաթեժ օրերին ներկայացրած լիներ այդ գործը Արևմուտքի ընթերցողներին, ապա բնավ հետացած չէր լինի իր քաղաքական անմիջական խնդիրներից և ոչ էլ շեղած կլիներ ընթերցողներին «աղատության համար մղվող պայքարից»: «Գեղեցկության և ազատության պաշտամունքն ունեցող մեծ ազգերի աչքի առաջ պարզելով մի հին ժողովրդի ստեղծագործական կարողությունների այս նոր ապացույցները, ժողովուրդ, որի դեմ դաշնակիցները ամենաարյունարբու բռնակալության բոլոր ուժերը, բարոյական մի նպաստ բերած չի՞նք լինի արդյոք այն պայքարին, որ այնքան խիզախորեն և համառորեն մղում են մինչև օրս... Նվ այսպես շարժվելով՝ մի անգամ ևս ցույց տված չե՞նք լինի, որ թուրքերի կողմից գործադրված ոճիրը ոճիր է ոչ միայն ընդդեմ մարդկության, այլև ընդդեմ քաղաքակրթության... Հայաստանի ոգևկան վարպետությունից քաղված այս դրոշմի ծագկեփունջը, հետևաբար, ոչ միայն հայ ազգի հանճարին մատուցված մեծարանքի երկյուղած մի արտահայտություն է, այլև միաժամանակ բողոք այն հրեշների դեմ, որոնք նման մի ազգ սպանելու որքան ոճրային, նույնքան և անիրագործելի ծրագիրը հղացան»[1]:

Առաքել Սյունեցուն նվիրված իր ուսումնասիրության մեջ Զոպանյանը խորությամբ և համակողմանի վերլուծում է միջնադարյան հայ բանաստեղծի ստեղծագործությունը, ցույց տալիս

[1] La Roseraie d'Arménie. T. I, Paris, 1918, p.p. V—VIII.

ֆույլը և ուժեղը, վեր հանում անանց արժեքները։ Ա. Սյունեցու գործի ուսումնասիրությամբ մի փորձ Զոպանյանն արել էր դեռևս «Անահիտում», երբ գրախոսում էր Պոտուրյանի աշխատությունը։ Նվ «Անահիտում» իսկ տված գնահատականները հիմնականում կազմել են «Վարդենիք Հայաստանյաց» հատորում դետեղված ուսումնասիրության հիմքը։ «Առաքել Սյունեցի մեր միջնադարյան գրականության առաջնակարգ դեմքերեն մին է։ Նրա Կ. Նրպնկացի քնքուշ ու քաղցրաշունչ միստիկականն է, Առաքել Սյունեցին վայրագ, մոլեռանդ, արհավրաշունչ, հզոր քնրիողն է վանական ցնորքներուն, տեսակ մը ռամիկ Նարեկացի, անճաշակ ու վայրենի, բայց նույնքան ինքնատիպ, և իր լավ կտորներուն մեջ՝ իսկական և ուժեղ բանաստեղծ»[1]։

Հատկանշական է, որ Զոպանյանը չի խորշում մատնացույց անելու Սյունեցու ստեղծագործության արատները։ Նա գտնում է, որ բանաստեղծի մեջ միախառնված են աստվածաբանը, քարոզիչը, բարոյախոսը, աղոթողը և քնարերգակը, դյուցազներգակը, աշուղը։ Նվ Զոպանյանը դրվատում է ու գնահատում Սյունեցի քնարերգակին, դյուցազներգակին, աշուղին։ Այն ամենը, ինչ կապված է աստվածաբանության, «վանական սքոլաստիկ իմաստակության» և «տիրացուական ճահճի» հետ, մերժվում է Զոպանյանի կողմից որպես բանաստեղծության հետ առնչություն չունեցող։ Զոպանյանին մասնավորապես դուր են գալիս «Ադամապրքի» մի քանի բանաստեղծություններ, որոնցից վեցն էլ նա թարգմանել և հրատարակել է «Վարդենիքում»։ «Տաղանդը, որ ատոնց մեջ կը հայտնվի, բավական է Առաքել Սյունեցիին անունը անկորուստ պահելու»[2]։

«Վարդենիքը» լայն արձագանքներ է գտնում ֆրանսիական և օտար մամուլում։ Այդ արձագանքներից դատելով, կարելի է ասել, որ Զոպանյանը իր ուսումնասիրությամբ և իր բարձրարվեստ թարգմանությամբ կարողացել է Եվրոպայի ընթերցողներին և մտավորականներին ամբողջական պատկերացում տալ հայ բանաստեղծի գործի վերաբերյալ։ «Revue des Etudes Armeniennes»-ը, օրինակ, ճիշտ Զոպանյանի լուսաբանության և մատուցման հնարքերով է գնում, երբ Սյունեցու գործի մեջ շեշտը դնում է աշխարհական մոտիվների վրա («իր օրով ճանչցավ

---

[1] «Անահիտ», Ժ տարի, թիվ 1—4, 1908, էջ 1։

[2] Նույն տեղում, էջ 4։

ժողովրդականության հրճվանքները») և նախընտրում «Ադամապիրքը»։ «... անմիջապես, որ իր միտքը կը դառնա դեպի ղեպի կյանքը,— գրում է Սիկին Կապրիել Ռիվալը հանդեսում,— դեպի փորձությունը, դեպի ապարածին վրդովմունքը, մեծ բանաստեղծը կ'երևա և իր «Ադամապիրքը» կը դառնա հոյակապ դիրք մը»[1]։

«Վարդենիք Հայաստանյացի» Բ հատորը, վերամշակումից և լրացումներից հետո, լույս տեսավ 1923 թվականին։ Այս հատորում առաջին հերթին բացատրվում է Զոպանյանի վերաբերմունքը քաղաքական, լրագրային և գրական-մշակութային այլազան դրծիքով, ինչպես նաև նյութական միջոցների բացակայությամբ։ Հատկանշական է մի դեպք։ 1921 թվականին, Բրուսաղեմի մատենադարանում Զոպանյանին հաջողվում է հայտնաբերել մի քանի տասնյակ հոյակապ մանրանկարներ, որոնք նա որոշում է լուսանկարել և օգտագործել «Վարդենիքում»։ Բայց լուսանկարչին վճարելիք 200 ոսկու հանգանակությունը (Եգիպտոսում և Բրուսաղեմում) ամիսներ է տևում, հաճախ հուսահատության մատնելով նրան։ «Երեսուն տարվան դործունեություն ունեցած մեկը առաջին անգամ կ'երևա Եգիպտոսի հայոց մեջ, փոքրիկ մասնակի աջակցություն մը կուզե ոչ անձնական հեղինակություն մը, այլ հայ հանճարը ծանոթացնող գործի մը հրատարակման համար, և այս վարմունքը կը դտնե...»[2]— դառնացած դրում է նա այդ առիթով։

Մեծավոր արևելքից վերադառնալուց հետո Զոպանյանը գրեթե անմիջապես ձեռնամուխ եղավ «Վարդենիքի» երկրորդ հատորի առաջաբանի շարադրմանը և ավարտեց 1921 թվականի դեկտեմբերին։ 341 էջից բաղկացած այս շքեղ հատորը պարունակում է հայկական ճարտարապետության, մանրանկարչության, որմնանկարչության և զարդարվեստին վերաբերող շուրջ երկու հարյուր լուսանկարներ, Ներսես Շնորհալու, աշուղ Սարգսի, Կոստանդին Երզնկացու, Խաչատուր Կեչառեցու, Ֆրիկի, Գրիգոր Խլաթեցու, Զաքարիա Գնունյանցի, Հովսեփ Սեբաստացու, Հովհաննես Բլկուրանցու, Սիմեոն Ապարանցու, Նահապետ Քուչակի, Մովսես Եպիսկոպոսի, Հակոբ Պատուկենցի, Բալ-

---

[1] Ֆեններճեան Դեղամ, Արշակ Զոպաննան, 1938, Փարիզ, էջ 63։

[2] ԳԱՔ, Միքայել Կյուրճյանի ֆոնդ, Արշակ Զոպանյանի նամակը Մ. Կյուրճյանին, 1921, 9 հունիսի, Պեյրութ։

դասալ Դպիրի, Նաղաշ Հովնաթանի, Չիլանու և անհայտ հեղինակների մի քանի տասնյակ բանաստեղծություններ: Բնականաբար, Զոպանյանը նախաբանում ընդհանուր գծերով բնութագրում է Բն ժամանակաշրջանը և Բն հեղինակներին, ցույց տալիս հայկական միջնադարյան բանաստեղծության զարգացման ուղին:

Նկարագրելով ժամանակաշրջանը՝ Զոպանյանը գրում է. «Այդ անընդմեջ փոթորիկների ընթացքում հայ ժողովուրդը, կամքի և հավատի, համբերության և աշխատանքի անօրինակ մի հրաշքով, ոչ միայն կարողացավ պահպանել իր ազգային գոյությունը, այլև շարունակից իր մտավոր գործունեությունը... Քաղաքական և ռազմական ազատ կյանքից զրկված հայ ժողովուրդը մտավոր ու հոգևոր բոլոր ուժերը այնքան ամբողջականորեն և այնքան ուժգնորեն կենտրոնացնում է գեղարվեստական գործունեության մեջ, որ իր երկարամյա գոյության այս շրջանում հատկապես արտադրում է ազգային պոեզիայի ամենագեղեցիկ և առանձնահատուկ էջերը»[1]:

Խոսելով միջնադարյան պոեզիայի անցած ճանապարհի մասին՝ Զոպանյանը շեշտում է, որ դա աշխարհիկ բովանդակության աստիճանական հաղթանակի մայրուղին էր: Ահա, օրինակ, Բն ինչ է իմանում օտար ընթերցողը այդ մասին. «... այս հեղինակը (Ներսես Շնորհալին— Կ. Դ.), որի դասական հայերենով գրված գործերը կրոնական ու պատմական թեմաներ են շոշափում միայն, մի շարք այլաբանություններ և հանելուկներ գրից, որպեսզի ժողովուրդը, ըստ իր ժամանակակից Կիրակոս Գանձակեցի պատմիչի վկայության, «գրանք արտասանի ժողովըրդական խնջույքների կամ հարսանեկան տոնախմբություններին ժամանակ, փոխանակ ստահոդ և առասպելապատում բաներ պատմելու»: Շնորհալու կողմից դա մի տեսակ դիջում էր ժողովրդական հաշակին... Շնորհալու օրինակով շուտով մի շարք հոգևորական հեղինակներ սկսեցին իրենց սեփական առեղծվածագործություններին նյութ գարձնել աշուղներին սիրելի թեմաներ, կամ իրենց բանաստեղծությունների մեջ երկրավոր կյանքի երգը միահյուսել հոգևոր կյանքի երգին: 14-րդ գարից հետո է, որ հայ գրչագիրներն սկսում են իրենց ձեռագրերում տեղ տալ

---

[1] Archag Tchobanian, La Roseraie d'Arménie. T. II, Paris, 1923. p. XIII.

աշուղների ստեղծագործություններին և անանուն ժողովրդական երգերին, ինչպես նաև հմուտ և կրթված կրոնավորների կողմից նույն լեզվով և էսթետիկական նույն ճաշակով, հորինված գործերին»[1]:

Հատորում զետեղված արվեստի գործերի վերաստուգությունների առթիվ Չոպանյանը գրում է, թե ինքը նպատակ է ունեցել շոշափելիորեն ցույց տալ V—XVI դարերի ընթացքում հայ ժողովրդի գեղարվեստական հանճարի արդասիքի նմուշները: Չոպանյանը կրքոտ, այլև դիտական փաստարկներով հերքում է այն կարծիքը, թե իբր հայ ժողովուրդը չի ստեղծել իր ինքնատիպ արվեստը (Ժորժ Պևռոն և ուրիշներ)[2]:

Ներածական հոդվածը Չոպանյանը նվիրափակում է դարձյալ անդրադառնալով ժամանակակից քաղաքական հարցերին: Նա հիշատակում է, որ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքական բռնակալությունը գործադրեց հայության ոչնչացման ծրագիրը, որ նույնիսկ զինադադարից հետո էլ ալեհոները վերջ չեն դրել, նկատի ունենալով քեմալական արշավանքը և Կիլիկիայի պարպումի հետևանքով առաջացած սպառնալիքը: Չոպանյանը, սակայն, վստահություն է հայտնում, որ հայ ժողովուրդը կկարողանա շարունակել իր իմացական և մշակութային գործը և կարևոր նպաստ կբերի ամբողջ Արևելքի վերածննդին: «Վարդենիքի» երկրորդ հատորը նա ձոնում է բռնակալությանը զոհված հայությանը[3]:

«Վարդենիքի» II հատորի լույս ընծայումը համընկավ Լոզանի կոնֆերանսի ավարտին և, ըստ էության, դարձավ քաղաքական ակտ ընդդեմ հայ ժողովրդի շահերը ոտնատակ տված արևմտյան դիվանագիտության:

Նախաբանից զատ, Չոպանյանը յուրաքանչյուր հեղինակի ներկայացնում է բավականին ծավալուն և խոր վերլուծականներով, ինչպես նաև ծանոթագրություններով ուղեկցում է բոլոր լուսանկարները:

«Վարդենիք» Հայաստանյայցի» երկրորդ հատորը նույնպես արժանացավ ջերմ ընդունելության:

1925 թվականի հունվարի 3-ին, հանդես գալով Ա. Չոպան-

---

[1] Archag Tchobanian. La Roseraie d'Arménie. T. II, Paris, 1923.
[2] Ibid., p. XV.
[3] Ibid., pp. XX—XXI.

յանի գրական-հասարակական գործունեության 35 ամյա հոբելյանին նվիրված հավաքույթում, Շիրվանզադեն ասաց. «Դուք դարերի փոշիների տակից զարմանալի տոկունությամբ դուրս եք բերել ազգի անցյալի ստեղծագործությունները և դրել մեր ու օտարների առջև իբրև մի կենդանի ապացույց, որ հայ ժողովուրդը նույնքան ստեղծագործող, հետևաբար և նույնքան արժանի է ազատ ու երջանիկ գոյության, որքան բոլոր կուլտուրական բարձր ազգերն ու ժողովուրդները: Հանուն հայրենիքի դուք օտարների դռները բախել եք ոչ գաւառիկ ձեռքերով, ողորմություն խնդրելու համար, այլ արդարություն, այլ հատուցում իր պարտքի: Ձեր հոյակապ «La Roseraie d'Arménie»-ն միայն բավական է իբրև մուրհակ ազգերի դիմաց և իբրև ապացույց, թե որքան գնահատելի և որքան պանծալի է մեզ համար այսօրվա օրը»[1]:

1923 թվականի դեկտեմբերի 29-ին Ավետիք Իսահակյանը գրում է Վենետիկից. «... Նորից պիտի ասեմ, Roseraie մի գանձարան է, մի դյութական պարտեզ մեր փառքի, մեր լույսերի, մեր հանճարի, թերթում եմ, նայում եմ սքանչելի նկարները, որ կարծես համադրումը լինին հին և նորագույն արվեստների. կարդում եմ հոգուս ու վշտիս մտերիմ հաղարամյա սրբազործված էջերը և ասում եմ ինձ. ահա մի ժողովուրդ՝ մեծ իր հանճարով, երազով ու ողբերգությամբ...

Նվ Ձեր վերը, սիրելի մեծանուն եղբայր, հսկայական է մեր մեջ, ու անսպառ է Ձեր հայրենասիրությունը, Ձեր նվիրումը մեր ազգին, իսկ Ձեր վարձը գրիչն ոչինչ, քաղքենի մտքով, բայց անմոռանալի է ու պիտի մնա անմոռանալի Ձեր անունը»[2]:

Ֆրանսիական մամուլի շատ օրգաններ տպագրեցին դրվատական հոդվածներ, որոնցից մի քանիսից քաղվածքներ ենք բերում ստորև:

«Ժուռնալ դե Դեբա»: Հոդվածագիրը՝ Դուսսաւ Շլումբերժե:

«... Հայ մշակույթը նվաղ ծանոթ է: Այդ այնքան հինավուրց, այնքան շահեկան, այնքան դժբախտ ցեղին մեկ մեծ ու սիրելի բանաստեղծը, Արշակ Չոպանյան, մեծ հայրենասեր մը

---

[1] Գ. Ֆեներճեան, *Արշակ Չոպանեան, 1938, Փարիզ, էջ 78—79, տե՛ս նաև «Ավետիս» (Սամսրուլ), 1925, 13 Հունվարի:*

[2] *«Գրական Ընթ», 1965, № 44: Ինչպես նաև ԳԱՓ, ԱՀՖ, I բաժին, № 2765:*

հրատարակեց քիչ օր առաջ Փարիզի մեջ «Վարպետները Հայաստանյացի» երկրորդ հատորը։ Ատիկա հոյակապ նպաստ մըն է ծանոթացմանը այնքան նրբարվեստ, այնքան այլազան դեղեցկագիտական գործին, զոր ստեղծած է հայ հանճարը։ Մարդ հիացմամբ կը համակվի, կարդալով ժողովրդական լեզվով շարադրված այդ բանաստեղծությունները... Բայց, ավելի ևս մեծ հրապույր, բաղմաթիվ պատկերներ, տավարատույն մասամբ հին ձեռագիրներու զմայլելի մանրանկարներ... մեկի կը ծանոթանանն հայ արվեստի ինքնահատուկ դեղեցկությունները... Ինչ երկար ու հարատև տքնություն է, որ այս այնքան օժտված ժողովուրդը նվիրած է արվեստին, ինչ անդրդվելի անձնվիրություն քաղաքակրթության գործին, հակառակ այնքան աղետներու, այնքան դարերու մեջեն...»[1]։

«Լ'Էվեր»։ *Հոդվածագիր՝ Քամիլ Մոքլեր։*

«Այս հավաքածուն շարադրողն ու հրատարակողը պ. Ա. Ջոպանյանն է։ Ան ինքն իսկ բանաստեղծ է և, եթե իր մայրենի լեզվով չգրեր իր քերթվածները, պիտի ողջունվեր իբրև ամենեն աղնիվ քնարերգականներեն մին ժամանակակից բանաստեղծության։

... Այդ հին քերթվածներուն մեջ կը գտնենք անկաշկանդ վեհություն, որուն Քլոդել երբեմն հասած է. հոն կան այն զգայական նրբերանգները, որոնք կը կապեն Հանրի Հայնեն, որ միանգամայն այնքան գերման և նույնքան արևելցի է, Ֆիրդուսիի, Օմար Խայամի, Հաֆեզի կորովամիտ, խորունկ տեսիլներուն։

Հոն կը գտնենք կարծրությունները, խստությունները, մելամաղձությունները մեր «Ռոլանդի երգին», մեր հին տաղերուն, մեր միջնադարյան բալլադներուն, և հանկարծ սիրային շնորհալիության ու չարաճճի ղվարթամտության առղախառմբ մը կանցնի այդ վեհափառ խստամբերության մեջեն, ինչպես թռչուն մը մրրկային երկնքի մը մեջեն... Հայ բանաստեղծությունը իր մեջ կը պարունակ պպացումին բոլոր թևքումները։

... Այժմեն իսկ «Վարպետները Հայաստանյացը» ժողովրդական բանահյուսության թանկագին դանձարանին ճոխացում մը կավելացնեն՝ մեր գրահմուտներուն հրճվանքին և երախտագիտության համար»[2]։

---

[1] Գ. Ցեներճեան, *Արշակ Ջոպանեան, 1938, Փարիզ, էջ 66—67։*

[2] *Նույն տեղում, էջ 67—68։*

«Ռրվյու Բլո»: Հոդվածագիր՝ Ռընե Փիյո:

«... պ. Արշակ Չոպանյան իր ժրքախտ հայրենիքին խանդակաթոռին հավատարիմ մնացած է և անոր սրտաճմլիկ դատին պաշտպանությանը կը նվիրե գեղեցկագույն տարիներն իր արդեն երկարատև ասպարեզին: Ան մասնավորապես ջանադիր եղած է Հայաստանի գրական գանձերը ճանչցնելու: Իր հաջորդական հատորները՝ «Հայ ժողովրդական երգեր», «Հայ աշուղներ», «Ջիվանիի ամենեն գեղեցիկ երգերը», ամենաբարձր արժեքով վավերաթուղթեր են: Վերջապես «Վարդենիք Հայաստանյաց» տիտղոսին տակ, ան ձեռնարկած է պերճաշուք հրատարակության մը, որուն երկրորդ հատորը նոր լույս տեսավ և որ ամենեն բանկապին ծաղկաքաղն է, որ ունինք հայ գրականության մասին»[1]:

«Ռրվյու ղեզ էքյուդզ Աումենիեն»: Հոդվածագիր՝ Անթուան Մեյե:

«Գիտենք, թե ինչպիսի թարգմանիչ է պ. Չոպանյան, ան բանաստեղծներու միտքը բանաստեղծի պես կարտահայտե և իրապես բանաստեղծություն է, որ կուտա իր ընթերցողներուն: Հաճախ ըսված է, թե հայկական բանաստեղծություն չկա և իրավ է, որ հայ գրականության հնագույն շրջանը արձակով շարադրված գործեր միայն կը հաշվե, բայց պ. Չոպանյան կապացուցանե, իրողություններով, թե հայերը ունին բանաստեղծություն մը՝ արտահայտիչ ու խորապես հուզումնալից: Հակիրճ ծանոթագրություններ յուրաքանչյուր հեղինակի ժամանակը մատնանիշ կընեն և այդպիսով միջին դարու հայ բանաստեղծության և մեզի ավելի մոտիկ ժամանակներու ժողովրդական բանաստեղծության զարգացման ընթացքին վրա ընդհանուր դաղափար մը կուտան: Գեղեցիկ նկարներ բնագրին մեջ ու բնագրեն դուրս քերթվածներուն շուրջ արվեստի մթնոլորտ մը կը ստեղծեն: Հուշարձան մըն է, զոր պ. Չոպանյան երկյուղածորեն կանգնած է ի պատիվ հայ ազգին»[2]:

«Վարդենիք Հայաստանյաց» 3-րդ հատորը լույս տեսավ 1929 թվականին: Այն հիմնականում նվիրված էր հայ արվեստին, մասնավորապես մանրանկարչությանը:

Ի տարբերություն առաջին երկու հատորների, այս հատորում զետեղված բանաստեղծությունները լրացնում, պսակազար-

---

[1] Գ. Ֆեներճեան, *Արշակ Չոպանեան, 1938, Փարիզ, էջ 68:*

[2] *Նույն տեղում, էջ 70:*

դում են մանրանկարչության և զարդարվեստի գործերը: Հատորի ընդարձակ ներածականում Զոպանյանը մանրամասն շարադրում է հայ մանրանկարչության զարգացման առանձին շրջանների պատմությունը, վերլուծում և յուրց տալիս առանձին գործերի գեղագիտական արժեքը, բնութագրում հայ մանրանկարչության մեծ վարպետների՝ Ռոսլինի, Պիծակի և ուրիշների արվեստը:

Բանաստեղծական գործերի ընտրության սկզբունքը հատկանշական է Զոպանյանի համար: Աշխարհական թե հոգևորական բանաստեղծների ստեղծագործություններից նա թարգմանել և հրատարակել է բոլոր այն արժեքավոր էջերը, որոնք դուվերգում են կյանքը, բնությունը, սերը, հայրենասիրությունը: «Թարմ գույներով, բարեխառն կյանքով և բրիտաստարդության համակված այս էջերը, որոնք բավականին մեծ թիվ են կազմում նաիրյա անթոլոգիայում, հատուկ խնամքով ընտրել եմ ոչ միայն որպես մեր հին ձեռագրերից քաղված նկարներում ծաղկող զարնանային համայիլ գեղեցկության հետ զուգադրելու նպատակով, այլ նաև մի անգամ ևս հերքելու համար արևելագետների մեջ երկար ժամանակից ի վեր տարածված այն կարծիքը, ըստ որի հայկական հին պոեզիայում իբր բացառապես գերիշխում են նկեղեցական, ասավածաբանական, պատմական և խրատական ուսուցողական թեմաներով ստեղծագործությունները: Այս հատորը կապացուցի, որ գարունը, արևը, երկինքը զարդարող թռչունները, երկիրը գեղեցկացնող ծաղիկները և կյանքը լուսավորող սերը նմանապես նույնքան ուժգնությամբ ու գեղեցկությամբ երգվել են իրը միջնադարում հայկական քնարի լարերի վրա»[1]:

Այսպիսով, 291 մեծադիր էջերից բաղկացած այս հատորում 230 մեծ ու փոքր լուսանկարների հետ միասին տեղ են գտել Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու, Առաքել Սյունեցու, Առաքել Բաղիշեցու, Դրիդորիս Աղթամարցու, Հովասափ Սեբաստացու, Բնրզակ Սարկավագի, Հովհաննես եպիսկոպոսի, Դավիթ Սալաձորեցու, ինչպես նաև անհայտ հեղինակների բազմաթիվ բանաստեղծությունները:

«Վարդանիքի» երրորդ հատորը նույնպես արժանացավ ջերմ ընդունելության: Մի շարք պրոֆեսորականներ և դրվատական

---

[1] Archag Tchobanian. La Roseraie d'Arménie. T. III, Paris. 1929, p. XVI.

հոդվածներ տպագրվեցին ինչպես սփյուռքահայ, այնպես էլ եվրոպական տարբեր լրագրերում ու հանդեսներում:

Չոպանյանի մտահղացումը, սակայն, չպսակվեց ամբողջական հաջողությամբ: «Վարդենիքի» հաջորդ երեք հատորները այդպես էլ լույս չտեսան, թեպետ Չոպանյանը բավականին աշխատանք ու ճիգ ներդրեց դրանց ստեղծման գործում: Այնուամենայնիվ, հրատարակված երեք հատորները բավական էին, որպեսզի Եվրոպայում հայ մշակույթի պրոպագանդման և տարածման գործում Չոպանյանի արդեն իսկ պատկառելի վաստակը լրանար ևս մի վիթխարի հավելումով: «Վարդենիքը» հուշարձան է Եվրոպայի սրտում ի պատիվ հայ մշակույթի: Այն հուշարձան է նաև հայ երախտագետ ժողովրդի սրտում՝ ի պատիվ իր մեծ զավակի:

Միանգամայն իրավացի էր «Զարյա Վոստոկա» օրաթերթը, երբ, ընդհանրացնելով հայ մշակույթի պրոպագանդման ուղղությամբ Չոպանյանի վաստակը, գրում էր. «Չոպանյանի գլխավոր ծառայությունը... այն վիթխարի աշխատանքի մեջ է, որ նա մեն-մենակ տարավ իր ուսերի վրա՝ արևմտաեվրոպական ընթերցողին հայկական ժողովրդական պոեզիայի հետ ծանոթացնելը: Այդ գործը իրապես անգնահատելի է: Եվրոպական գրական շրջանակների և ընթերցող հասարակության առջև բանալով Հայաստանի միջնադարյան և մեր ժամանակակից պոետական ստեղծագործության դանձարանը, Չոպանյանը, առավել քան որևէ մեկը, նպաստեց հայ մշակույթի հետ Եվրոպայի ծանոթացմանը»[1]:

---

[1] «Заря Востока», *1924*, № *615*:

«Ի՞նչ է մեր պատմությունը, եթե ոչ երկար հաջորդություն մը անկումներու և վերականգնումներու։ Միայն թե մենք հանցավոր պիտի ըլլայինք մտածելով, թե ատիկա ճակատագրական անխուսափելի օրենք մըն է մեր ազգին ընդհանուր կյանքին... Համառ ոչ։ Մենք՝ ամբողջ հայերս, պետք է ցանկանք և աշխատինք, որ մեր ազգն հասնի այնպես ինքզինքը վերանորոգել, իր ցեղային և կուլտուրական դոյությունը դնել այնպիսի ամուր հիմերու վրա, որ այլևս որևէ անկում անհնար դառնա»։

Ա. Ջոպանյան

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ծրջադարձ դեպի Սովետական Հայաստան

Ինչպես վերը նշեցինք, Արշակ Ջոպանյանը աստիճանաբար եկավ այն համոզման, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը փրկության դուռ էր բացում հայ ժողովրդի համար։ Նրա ինֆորմացիայի աղբյուրը եվրոպական բուրժուական մամուլն էր, որը խեղաթյուրված ու միտումնավոր ղրպարտչական բնույթի նյութեր էր մատակարարում իր ընթերցողներին։ Պատահական չէ, որ այդ մամուլի ոգով որոշ հոդվածներ են տպագրվում 1918 թվականի «Վերածնունդում»։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման օրերին, մինչև 1921 թվականի օգոստոսը, Ջոպանյանը գտնվում էր Մերձավոր արևելքում և, ըստ երևույթին, ձգտում էր ձեռնպահ մնալ նոր իշխանության մասին արտահայտվելուց։ Առաջին նամակը Հայաստանից, որին նա կարող էր լիակատար հավատ ընծայել, ստանում է Հովհաննես Թումանյանից։ 1921 թվականի հոկտեմբերի 6-ին մեծ բանաստեղծը գրում է Թիֆլիսից.

«Ես նոր եմ վերադարձել Երևանից։ Մեր երկիրը շատ է ավերվել վերջին տարիների ընդհարումներից։ Սակայն անգամ, որ թուրքերն առաջ են անցել, աշխատել են հիմնովին փշացնել երկիրն ու ցեղը։

Դուք արդեն գիտեք իմ հին կարծիքը, թե Էս հանգամանքներում Ռուսաստանն է մեր փրկությունը։ Նվ էս անգամ էլ— նույնիսկ էս հարթած վիճակի մեջ— ուսանները մեզ ազատեցին վերջ-

նական վիշացումից: Ավերումի վրա ավելացավ էս տարվա հրաշտը մեր երկրում:

Բայց պետք է վկայել, որ մեծ ջանքով ու մեծ անկեղծությամբ են մարդիկ աշխատում փրկել ժողովրդին ու վերաշինել երկիրը: Ով անշուշտ պիտի հաջողին, եթե արտաքին մի որևէ զբաղատ անակնկալ չխանգարի:

Նախագահ Մյասնիկյանը և իր ընկերները արժանի են ամեն գովասանքի և աջակցության: Ես համոզված եմ՝ մտրիկ ապագան պիտի ապացուցի իմ խոսքերի ճշմարտությունը: Ամեն կողմից պիտի նրանց սիրեն ու գործակցեն: Հենց նրանց գործակցելու համար էր, որ հավաքվել էինք Երևան և կազմեցինք Հայաստանի օգնության կոմիտեն...

... Թեև Ձեզ առանձնապես հետաքրքրեր սրանց վերաբերմունքը դեպի զրակատությունն ու գեղարվեստը. պետք է պատասխանեմ, որ աննախընթաց լավ է: Դեռ սկիզբն է: Բայց եթե էսպես շարունակվի, որին չեմ կասկածում, մեր աշխատանքում, կարող եմ ասել, արդեն ապահով են զրականության և գեղարվեստի մարդիկ: Շուտով կը կարդաք դեկրետները, որով կենսաթոշակ են նշանակում 18 հոգու առաջին հերթին: Բայց գլխավորը կենսաթոշակը չի, այլ են պայմանները, որ նույնպես կը հրատարակվին: Նույնն են անում և վրաստանում»[1]: Թումանյանը խնդրում է իր բարեկամի գործուն մասնակցությունը ՀՕԿ-ի աշխատանքին:

Թումանյանի խոսքը խոր ազդեցություն է ունենում Զոպանյանի վրա: Նույն տարվա դեկտեմբերի 5-ին խոսելով նորաստեղծ Սովետական Հայաստանի մասին, Զոպանյանը Ազգային պատվիրակության նախագահ Նորատունկյանին առաջարկում է հաշվի նստել այդ իրողության հետ և հնազանդել նոր Բուսաստանի զորությանը վրա[2]: Իսկ մինչ այդ ռամկավար ազատական կուսակցության առնչմամբ հոկտեմբերի կեսերին հանդես գալով մամուլում, Զոպանյանը, թեպետ դեռ կասկածում էր սովետական իշխանության ամրությանը, ելնելով հայ ժողովրդի քաղաքական ծանր կացությունից, կոչ է անում գործակցել այն բոլոր ուժերի հետ, որոնք կարող են օգտակար լինել նրա փրկության հարցում, այդ թվում բոլշևիկների հետ[3]:

---

[1] ԴԱՐ, ԱՀՅ, I բաժին, № 2658:

[2] Նույն տեղում, IV բաժին, № 389:

[3] «Ապագա», 1921, թիվ 44:

Ռուսաստանի դրության վրա հենվելու հարցում, բնականաբար, վճռական նշանակություն ուներ Զոպանյանի սկզբունքային կողմնորոշումը դեպի Ռուսաստան, անկախ երկրի վարչակարգից։ Այդ է վկայում նրա նամակը Միքայել Կյուրճյանին 1922 թվականին[1]։ Այնուամենայնիվ, կարևորն այն էր, որ Զոպանյանը, հակառակ բուրժուական հանրապետության վերաբերյալ իր դաղափարական իդեալին, քաղաքական հողի վրա սկսում էր ճիշտ դիրքորոշում գտնել։ Դեպի Սովետական Հայաստան շրջադարձի այդ պրոցեսը, այնուամենայնիվ, ընթանում էր դանդաղ, որոշակի վերապահումներով ու ակնկալություններով։ Լոզանի կոնֆերանսը (1922—23) վերջնական հարված հասցրեց բոլոր ակնկալություններին ու վերապահություններին։ Կոնֆերանսում բացարձակ մոռացության մատնվեցին հայ ժողովրդի շահերը։ Ոեալ մտածող բոլոր առաջադեմ գործիչների և հայրենասեր ուժերի համար ակնհայտ դարձավ, որ այլևս միակ գործնական ծրագիրը Սովետական Հայաստանի շուրջ համախմբումն էր։ Սա, ըստ էության, Լոզանի կոնֆերանսի միակ դրական արդյունքն էր։

«Մենք պետք է հիմա, ավելի քան երբեք փարվինք ռուսերուն և դևսավորապես անոնց վրա կռթնելով ջանանք հասնիլ մեր ազգային վերակենդանացման նպատակին իրագործմանը»[2],— գրում էր Ա. Զոպանյանը Ազգային պատվիրակության նախագահին 1923 թվականի հունվարին, երբ արդեն պարզ էր դարձել Լոզանի կոնֆերանսի ընթացքը։

Միայն Սովետական Միության պատվիրակությունն էր, որ Լոզանի կոնֆերանսում հայ ժողովրդի տարադիր զավակներին ի նպաստ առաջարկություն արեց։ ՍՍՀՄ կառավարության անունից Չիչերինը պատրաստակամություն հայտնեց ընդունել տասնյակ հազարավոր հայ տարագիրների։

«Այսօր,— գրում է այդ առթիվ Զոպանյանը Գ. Նորատունկյանին,— լրագրաց մեջ կարդացի Չիչերինի առաջարկության լուրը հայ փախստականներուն համար ռուսական հողի վրա foyer մը ստեղծելու մասին։ Քուպանի ծրագիրն ըլլալուն և ձեզի առաջարկելն հետո, հիմա պաշտոնապես կառաջարկի դաշնակիցներուն։ Կարևոր իրողություն մըն է ատիկա։ Դաս մը և ապ-

[1] ԳԱՖ, Մ. Կյուրճյանի ֆոնդ. Ա. Զոպանյանի նամակը Մ. Կյուրճյանին, 20 նոյեմբերի 1922 թվական։

[2] ԳԱՐ, ԱԶՖ, IV բաժին, № 415։

տակ մը կուտա Չիչերին ատով դաշնակիցներուն ու գործնական առաջարկ մը կը ներկայացնե»[1]:

Այդ շրջանից սկսած Չոպանյանը նամակագրական կապ է հաստատում Հայաստանի գործիչների հետ: 1923 թվ. ապրիլի 13-ին Պողոս Մակինցյանին գրած նամակում նա հայտնում է, որ ձգտում է դաղութահայությունը դարձնել դեպի Հայաստան[2]: Իսկ մեկ տարի անց, Ազգային պատվիրակության հրավերով կայանալիք համաժողովի օրակարգի համար որպես հիմնական հարց, նա առաջարկում է քննարկել «արտասահմանի դաղութներուն մեջ ազգային կյանքը վառ պահելու և այդ դաղութները Հայաստանին հետ կապելու գործը»[3]:

Մի այլ առիթով նա Չապել Նալյանին հասցեագրված 1925 թվականի հոկտեմբերի 3-ի նամակում այն միտքն է հայտնում, թե որքան ջանք թափվի Հայաստանն ու դաղութներն իրար մոտեցնելու, իրար ճշտորեն ճանաչելու ուղղությամբ, այնքան ավելի կշահի ամբողջ հայ ժողովուրդը[4]:

Իր հրապարակային ելույթներում և հոդվածներում Չոպանյանը պրոպագանդում է հայրենի իրականությունը, հուսադրիչ գտնում տնտեսական շինարարությունը և մշակութային կյանքը: Նման հոդվածներ սիստեմատիկաբար երևում են «Ապագա», «Արև», «Պայքար» թերթերում: Առհասարակ ռամկավարական (ինչպես նաև հնչակյան) մամուլը այդ տարիներին կանգնում է Սովետական Հայաստանի պաշտպանության քաղաքական գծի վրա: Այս ուղղությունը իր պաշտոնական հաստատումն է դտնում այդ կուսակցությունների համագումարում 1924 թվականի սկզբին[5]:

---

[1] ԳԱՒ, ԱԶՖ, IV բաժին, № 415: Տե՛ս նաև Ա. Չոպանյանի «Անվհատ և անվհանգ» հոդվածը, «Ապագա», Գ տարի, 1923, թ. 13:

[2] ԳԱՒ, ԱԶՖ, IV բաժին, № 325:

[3] Նույն տեղում, № 428:

[4] Նույն տեղում, № 85 ա:

[5] «Ապագա», Դ տարի, 1924, թիվ 15: Եգիպտոսի «Արև»-ը արդեն 1922 թվականի փետրվարին գրում էր. «Խորհրդային Հայաստանի արդի վարիչները ավելի լավ ըմբռնած են անկախության իմաստը, քան իրենց ազգայնական նախորդները, որոնց կարճատև իշխանության օրով պանծացուցած անկախությունը, դառնով հաջորդող դեպքերին, պատրանք մը միայն եղած է... Մյասնիկյան և Մռավյան, իշխանության գլուխ անցնելով... ցույց տվին հայրենասիրական դիտակցության և քաղաքական ողջմտության, քան անոնք, որոնք Զանգեզուր քաշվելով անտի տապալել փորձեցին Խորհրդային կառավարությունը» (թիվ 119):

«Արտասահմանի հայերը հիմա աչքերնին պարզուցած են դեպի Երևանի հանրապետությունը, որ իրենց ազգային կենտրոնն է, իրենց ազատ հայրենիքն է, անոր օդնելը իրենց գլխավոր իդեալը, իրենց մեծագույն պարտականությունը և մխիթարությունը կը նկատեն»,— գրում է Արշակ Չոպանյանը[1]:

Չոպանյանը դերազանց գիտակցում է, որ պաղեստինյան և Սովետական Հայաստանի միջև կապը փոխադարձաբար անհրաժեշտ է ոչ միայն երիտասարդ երկրին, այլ նաև, որ պակաս կարևոր չէր, գաղթահայության ազգային գոյատևության մաքառման գործին նոր շունչ և ավյուն ներարկելու համար:

«Այս ամենը,— գրում է նա,— կը հայտնեն նոր իանդամանության մը հառնումը արտասահմանի հայության մեջ՝ վերաոության և շվարման շրջանե մը հետո, իանդամանություն մը, որ այս անգամ օդին մեջ չէ, որ կը բորբոքի, հույսերու և երազներու վրա չէ միայն, որ կհենու, այլ համեստ, բայց կենդանի, ինքնիրմով զարդանալու, ընդլայնվելու կոչված իրականության մը վրա կը հիմնվի»[2]:

Հետևելով երիտասարդ Սովետական Հայաստանի օրավուր առաջընթացին, Չոպանյանը շուտով կարողանում է ըմբռնել, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը ժողովուրդների կյանքում վիթխարի նշանակություն ունեցող արմատական հեղաշրջում էր: Արդեն 1923 թվականին նա գտնում է, որ մարքսիստական ուսմունքը, ըստ տեղական պայմանների ճիշտ կիրառված, «ինչ որ Լենին կը հանձնարարեր Մյասնիկյանի ուղղած համբավավոր նամակին մեջ», օգտակար է եղել իր ժողովրդի կյանքում[3]:

1924 թվականին, Անգլիայի կողմից Սովետական Միության ճանաչման լուրի առիթով, Չոպանյանը գրում է. «Պոլշևիկ ըլլաս կամ ոչ, դիտել և ըմբռնել դիտցող միտք մը չի կրնար չընդունիլ, որ մեծամասնական հեղափոխությունը կատարից գործ մը, որ այլևս վճռական է. ոչ միայն ընկերական մեծ հեղաշրջում մը հառաջ բերավ, այլև ջնջեց ընդմիշտ ցարական Ռուսիան և անոր տեղ ստեղծեց նոր Ռուսիա մը, իր շուրջ ունենալով իրեն հետ դաշնակցական կապերով կապված քանի մը ազատ ազգեր: Լենին բացավ նոր ու մեծ շրջան մը՝ Ռուսիո պատմության մեջ, փակելով նախկին շրջանը, զոր Մեծն Պետրոս բացած էր: Պոլ-

[1] «Ապագա», Գ տարի, 1923, թիվ 40:

[2] Նույն տեղում, Գ տարի, 1924, թիվ 35:

[3] Նույն տեղում, Գ տարի, 1923, թիվ 23:

շևիզմին... քաղաքական հեղաշրջումը անդառնալի է այլևս, ինչպես և ինչ որ կա դրական՝ կատարված ընկերական վերանորոգման ճիգին մեջ։

... Երևիլան ռուս կայսրության սահմաններուն մեջ տեղի ունեցած և արդեն ամուր հիմերու վրա հաստատված «իրողությունը» ճանչնալը, զայն իբր անհերքելի իրականություն ընդունիլը և նույնիսկ իբր առաջադիմական երևույթ մը բարեկամության ու համակրության ընդունիլը՝ իմաստություն է»[1]։

Անշուշտ, այս տողերը չեն նշանակում, թե Զոպանյանը բաժանում էր բոլշևիզմի գաղափարախոսական դրույթները, բնական նա հեղաշրջման մեջ որպես դրական նվաճում նշում է «սոցիալական վերանորոգման ճիգերը» և առհասարակ ամբողջ կատարվածը դիտում որպես առաջադիմական երևույթ։ Ավելին, հեղափոխության կատարած գործի մեջ նա տեսնում է «ամբողջ աշխարհի համար լավագույն շրջանի մը նախապատրաստությունը»[2]։ *Հատկանշականն էլ հենց այն է, որ, չբաժանելով բոլշևիզմի սկզբունքները, Զոպանյանը համակրանքով կարողանում է դնահատել Հոկտեմբերյան հեղափոխությունն ըստ արժանվույն։ Հետաքրքրություն է ներկայացնում նաև Զոպանյանի այն դիտողությունը, թե միայն սովետական վարչակարգն է ապահովում Հայաստանի անկախությունը։ Եթե մի պահ, ասում է նա, ցարիզմը կամ նույնիսկ «կադետական» Ռուսաստանը վերականգնվեր, ապա Հայաստանը անմիջապես մի նահանգ կդառնար*[3]։

«Նոր Ռուսիան, որ աշխարհիս մեծագույն ուժերեն մեկն է ներկա շրջանին,— գրում է Ա. Զոպանյանը,— և որ վաղը պիտի ըլլա ավելի ևս մեծ, կազմակերպված ու հարաճուն ուժ մը, իր (Հայաստանի— Կ. Դ.) դաշնակիցն ու պաշտպանն է, և հայկական քաղաքականության հիմնական անխախտ դիծը պետք է ըլլա այլևս՝ հայ տերության միշտ դաշնակից ու պաշտպան ունենալ այդ մեծ զորությունը։ Խորհրդային Միության... քաղաքական հղացումը մեծապես նպաստավոր է իրեն, ինչպես Ուկրաինային, Վրաստանին և Միության բոլոր ոչ-ռուս ազգերուն. ան ազգերու ընկերություն մըն է, տերություններու ընկերակցություն մը, ուր։

---

[1] «Արև», 1924, թիվ 61։

[2] «Ապագա», 1924, թիվ 17։

[3] «Պայքար», 1924, թիվ 206։

յուրաքանչյուր անդամ, փոքր կամ մեծ, հավասար իրավունքներ ունի, ուր յուրաքանչյուր անդամ իր ազգային ուրույն գոյությունը կը պահպանե... Քաղաքական այս սիստեմը այնքան նպաստավոր է մեր փոքրիկ Հայաստանին, որ որևէ ողջմիտ հայ չի կրնար Հայաստանի վերապահված լիակատար անկախության իրավունքին (ՍՍՀՄ սահմանադրությամբ՝ Կ. Դ.) փութկոտ դործադրությունը հիմարություն չնկատել»[1]:

Հայաստանում գոյություն ունեցող այդ սիստեմի պաշտպանությունը, նրա հզորացումը և ամրապնդումը Սովետական Միության հանրապետությունների ընտանիքի մեջ,— ահա այսպիսին էր այն քաղաքական ծրագիր-պատասխանը, որ Զոպանյանը տալիս էր «ներկա րոպեին արտասահմանի հայության համար ընդգրկվելիք լավագույն քաղաքականությունը ո՞րն է» հարցին[2]:

Հատկապես կարևոր է շեշտել, որ Զոպանյանը անդնահատելի էր գտնում սովետական հանրապետությունների բարեկամությունը և այդ բարեկամության ընդմիշտ նվիրվածության մեջ տեսնում հայ ժողովրդի ապագան: «Բանկապին բարեկամություններու պարիսպով մը պաշարված է մեր փոքրիկ Հայաստանին նորահաստատ բույնը,— դրում է նա:— Հայ ժողովրդին բոլոր հաստվածները, ուր ալ գտնվին, նույն բարեկամական ջերմ զգացումները կը տածեն Խորհրդային Միության անդամ եղող բոլոր ազգերուն համար, որոնց բախտին հետ իրենց ապրին բախտը այլևս ընդմիշտ կապված է»[3]:

Տատանումների և վերապահությունների կարճատև շրջանից հետո Զոպանյանն այլևս ամուր կանգնել է այդ «ընդգրկվելիք լավագույն քաղաքականության» դիրքերում: Նա լրջմտորեն վերլուծում էր մոտակա անցյալի դեպքերը և կարողանում ճիշտ գնահատել կոմունիստական կուսակցության դերը հայ ժողովրդի փրկության ու վերածննդի գործում: Արդեն 1924 թվականին նա հայտարարում է. «Նույն պոլշևիզմին շնորհիվ է, որ մինչ դաշնակիցները վերջ ի վերջո բոլորովին լքեցին ու մատնեցին մեզ, հայկական տերություն մը... մնաց կանգուն, ստացավ ներքին իրական ինքնավարության լայն իրավունքներ և, հենվելով սովետական հանրապետության միության խոշոր ուժին վրա,

---

[1] «Պայքար», 1927, թ. 29:

[2] Նույն տեղում, թ. 26:

[3] «Ապագա», 2 տարի, 1925, թիվ 5:

լրջորեն ամրացուց իր գոյությունը, որով և ապահովեց գոյությունն իսկ հայ ազգության, հայ մշակույթին, հայ քաղաքական-ազատագային...

Ռուսիան... նշավ հայ փոքրիկ տերության համար... այն հոգատարը, որ մենք երկար տասն իղուր փնտրեցինք Ատլանտյանի անդին... Ու Ռուսիո հովանավորությունը Հայաստանի վրա տարածվելեն ի վեր, հոն ալ ոչ ջարդ տեղի ունեցավ, ոչ պատերազմ, ոչ սով, ինչ-որ ինքնին արդեն արտակարգ բարիք մըն է, որուն հետ բաղդատություն չեն կրնար մտնել Սևրի մեջ թղթի վրա դրված անկախության խոստումները, թղթի մը, որ հետո պատռեցին զայն խմբագրողներն իսկ»[1]:

Զոպանյանը բնավ չի թաքցնում և մի քանի առիթներով ընդգծում է, որ իր և ռամկավարների կուսակցության քաղաքական իդեալը բուրժուական հանրապետությունն էր, և որ այդ իդեալին շատ ավելի մոտ էին 1918—1920 թվականների Հայաստանի հանրապետության հասարակարգի սկզբունքները, որոնք, ըստ նրա նշձվեցին դաշնակցության կողմից: Միևնույն ժամանակ Զոպանյանը քաղաքական արիություն է դրսևորում խոստովանելու և ընդգծելու այն վիթխարի դերը, որ վերապահված էր հայ կոմունիստներին իրերի պատմական վիճակի բերումով:

«Այդ դևրադույն վտանգի օրերուն, ուր Հայաստանի ամբողջական ջնջումին մատ մը մնացած էր, հայոց մեջ համայնավար խմբակի մը գոյությունը և անոր շնորհիվ Հայաստանի՝ իբր տերության, պահպանումը և խորհրդային ուժիմին հոն հաստատմամբ անոր ապահովումը, հայրենասեր հայերու համար՝ նույնիսկ ղուտ ազգային տեսակետով, ուրիշ կերպ չի կրնար նկատվիլ, բայց եթե փրկարար իրողություն մը: Ենթադրեցեք, որ հայոց մեջ գոյություն չունենար այդ համայնավար խմբակը, որ կամուրջ եղավ խորհրդային Միության մեծ ուժին և հոգևվարք Հայաստանի միջև, և հայությունը ամբողջությամբ դաշնակցության հետ մնկեղած, մինչև վերջը դիմադրեր թե ռուսերուն և թե թուրքերուն, ի՞նչ պիտի ըլլար հետևանքը...» Եվ Զոպանյանը անվարան խնդիր է դնում «բոլորվիլ գոյություն ունեցող խորհրդային Հայաստանին շուրջ և անոր պարպացման ու ղորացման աշխատիլ»[2]:

Զոպանյանը անդրադառնում է հայ քաղաքական կյանքի-

---

[1] «Պայքար», 1924, թիվ 207:

[2] «Պայքար», 1927, թիվ 28:

առջև պատմական ժամանակահատվածի կողմից դրած բոլոր հարցերին: Թեպետ շատ արագ պարզվեց Սևրի դաշնագրի և վիլսոնյան լուծման անպատեղությունը, այնուամենայնիվ, դրանք հայության մի սավառ հատվածի մեջ առաջացրել էին պատրանական բարդույթներ, որոնք, նույնիսկ Լոզանից հետո էլ, պահպանում էին իրենց ուժը: Չոպանյանը սփյուռքահայ այն եզակի գործիչներից եղավ, որ կարողացավ այդ ժամանակաշրջանում մերժել աղպային զգացմունքների վրա խաղալով՝ էժանագին ժողովրդայնություն ու հեղինակություն վաստակելու ուղին: Նա ռեալիստորեն գնահատեց սովետա-թուրքական համաձայնագիրը[1], պաշտպանեց երիտասարդ Սովետական Հայաստանի կառավարության քաղաքականությունը այդ հարցում[2]:

***

Ժամանակի առաջադրած կարևորագույն հարցերից մեկը արտասահմանի հայկական գաղթօջախներում բույն դրած պաշնակցության քաղաքականության մերկացման խնդիրն էր, քաղաքականություն, որի նպատակն էր գերակշռող դիրք ապահովել դաշնակցության համար սփյուռքում և դրա շնորհիվ սրատել գաղթօջախների նոր բողբոջող կապերը Սովետական Հայաստանի հետ, քաղաքականապես մեկուսացնել Սովետական Հայաստանը, ջանալով ձախողել այնտեղ ձեռնարկված սոցիալ-տնտեսական ու բարոյական վերանորոգման միջոցառումները:

Սովետական Հայաստանի նկատմամբ քաղաքական բարեկամական դիրքորոշումն էլ կանխավճռում էր Ա. Չոպանյանի գործունեությունը այդ հարցում: Դաշնակցության դեմ վարվող քաղաքականությունը, ըստ Չոպանյանի, կախված էր այն բանից, թե ինչպիսի դիրք կբռներ ինքը դաշնակցությունը սովետական նորաստեղծ հանրապետության նկատմամբ[3]:

1929 թվականին գրած մի հոդվածաշարում Ա. Չոպանյանը սպառիչ գնահատականներ է տալիս սփյուռքում դաշնակցության գործունեության նպատակներին ու միջոցներին: Համակիրների և դաշնակցության միջև, ասում է նա, գաղափարախոսական և ծրագրային մեծ տարակարծություններ չկան, բայց

---

[1] «Արև», 1926, թիվ 2094:

[2] «Պայքար», 1927, թիվ 30:

[3] «Ապագա», 1924, թիվ 15:

վան անհարիր հայացքներ քաղաքական բնագավառում։ Մինչ ռամկավարները պաշտպանում են Սովետական Հայաստանը, ջանում օգնել նրան, դաշնակցությունը հույսը դրել է Մուսոլինիի վրա[1]։ Անշուշտ, տվյալ ժամանակաշրջանի համար, «դաշնակցության հույսի» տեսակետից, իտալական ֆաշիզմի հետ միասին հատկանշական էր ֆրանսիական և անգլիական իմպերիալիզմը։ Բայց միայն ֆաշիզմին ակնարկելը ավելի շուտ ապագայի համար քաղաքական կանխատեսում էր, որը հիմնված էր դաշնակցության էության և գործելակերպի գերազանց իմացության վրա։ «Դաշնակցությունը այսօր գաղութներու մեջ,— բնութագրում է Զոպանյանը այդ կուսակցության էությունը, նպատակը և մեթոդները,— մշտական տենդի մը պես է, խռովքի, իրարանցումի, սպառնալիքի, մտքերու շփոթության, տակնուվրայնության, ներքին անընդհատ կռիվի տպավորություն մը դարձած է, աղմուկ, բատնյական գործունեություն, Հայաստանի մեջ կատարվող շինարարական ճիգերուն սիստեմատիկ ուրացում, հայրենիքի ժողովուրդն ու գաղութներու հայությունը ...կառավարության դեմ դրգռելու մշտական ջանք, գաղութներու մեջ ամեն բանի դեկավարությունը իր ձեռքն առնելու մոլեգին (թեև անհաջող) աշխատանք, իր հակախոսները լռեցնելու համար բռնի ու գռեհիկ միջոցներու դիմելու կամ օտար իշխանության ստահոդ ըրպարտիչ ցուցմունքներով մատնելու սիստեմատիկ ու անպատիվ մեթոդ և այլն, և այլն»[2]։

1929 թվականին արված այս բնութագրումը ճշգրիտ արտացոլումն էր այն պատկերի, որ իրենից ներկայացնում էր դաշնակցությունը Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո։

Սկսած փետրվարյան արկածախնդրություններից մինչև զանազան միջպետական կազմակերպություններում, հրապարակային գործունեության մեջ և մամուլի էջերում դաշնակցության յուրաքանչյուր քաղաքական ակտը, Սովետական Հայաստանի դեմ ուղղված յուրաքանչյուր արարքը արժանանում է Զոպանյանի դատապարտությանը և հատու հակահարվածին։

Անգլային պատվիրակության նախագահին ուղղված մի նամակում, 1923 թվականի հունիսին, Զոպանյանը խիստ քննադա-

---

[1] «Ազդ», 1929, թիվ 3207։

[2] Նույն տեղում, թիվ 3206։

տում է դաշնակցական կուսակցության մանիֆեստը, որ հրատարակվել էր «Հայաստանի ձայն» թերթում: Սովետական Հայաստանի դեմ դաշնակցության ոտնձգությունը նա համարում է պրովոկացիա[1]:

Դաշնակցական մամուլի դեմ պայքարում Զոպանյանը հաճախ օգտվում էր ոչ միայն Սովետական Հայաստանի ներքին կյանքին վերաբերող փաստական նյութից, այլև իր ստացած անձնական նամակներից, որոնց հեղինակները ճանաչում և կշիռ ունեին ժողովրդի մեջ: Պատասխանելով դաշնակ մամուլի հերթական հերյուրանքին՝ Զոպանյանը տպագրության է հանձնում Մարտիրոս Սարյանից ստացած նամակից մի հատված:

«Նամակի մը մեջ,— գրում է նա,— ղոր ինծի կուղղեր, Սարյան կըսե. «Պետք է գալ Հայաստան, տեսնելու համար, թե շինարարական ինչ հոսանդուն աշխատանք է կատարվում այնտեղ, մասնավորապես ինչ ճիդեր են թափվում ազգային արվեստը զարգացնելու համար»: Ահա մարդու ձայն մը Հայաստանեն, կուսակցական նկրտումներեն շատ բարձր,— ավելացնում է Զոպանյանը, մատնացույց անելով, որ նամակի հեղինակը անկուսակցական է,— ղուտ արվեստագետի ձայն մը, որ կըսե բոլորովին տարբեր բան, քան ինչ-որ կաղաղակեն դաշնակցական թերթերը»[2]:

Ճիշտ նույն նպատակով նա հաջողությամբ օգտագործում է պատմաբան Լեոյի նամակը, այն իր մեկնաբանություններով հանդերձ տպագրելով «Ապագա» և «Պայքար» թերթերում: Հետաքրքրական է, որ Լեոն նամակի սկզբում բավականին ջերմ և բարձր դրվատական խոսքեր է ասում Արշակ Զոպանյանի հասցեին[3], բայց վերջինս հրապարակում է միայն նամակի երկրորդ մասը, որը հրատապ քաղաքական խնդիրների պատասխաններ էր բովանդակում:

Լեոն շոշափում է անկախության հարցը, համոզվելը ցույց տալիս, որ դաշնակցության օրոք ժողովուրդը «կախված էին ամենքից և ամեն ինչից», որ դա «անկախություն չէ, դժբախտություն է»: Սովետական իշխանությունը, շարունակում է Լեոն, կրկնակի պրահապատել է երկրի սահմանները, ստեղծել կատարյալ ապահով վիճակ[1]: Լեոյի նամակի առթիվ Զոպանյանը գրում

---

[1] ԴԱԲ, ԱԶՖ, IV բաժին, № 422:

[2] «Պայքար», 1924, թիվ 195:

[3] ԴԱԲ, ԱԶՖ, I բաժին, № 2843:

է «Հայաստանի անկախությունը» խորագրով հոդվածաշար, որը ուղղված էր ինչպես դաշնակցության, այնպես էլ ամբողջ կուսակցության առանձին դիվանների հակասովետական ելույթների դեմ: Անդրադառնալով դաշնակցական հանրապետությանը՝ Զոպանյանը գրում է. «Երկիրը անվանապես անվտանգ, գրապես դաշնակիցներուն ջմահաճույքին կախված էր արտաքուստ, իսկ ներքուստ՝ հանձնված դաշնակցության միահնծան տիրապետության: Դժվար է այս պատկերին մեջ իրական անկախության, ազատության և բարօրության որևէ նշույլ տեսնել»[2]:

Ինչպես վերը հիշատակեցինք, ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինը առաջարկել էր տարագիր հայերի խմբեր ընդունել, պայմանով, որ նրանց փոխադրության հետ կապված ծախսերը հոգային միջազգային կազմակերպությունները: Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում կանգնած գործիչները, Արշակ Զոպանյանի ակտիվ մասնակցությամբ, առաջարկեցին միջոցներ հայթայթել և ներգնել Սարդարապատի դաշտի ոռոգման համար, հիշյալ տարագիրներին այնտեղ փոխադրելու նպատակով: Դաշնակցությունը, սակայն, այլ կերպ էր մտածում: Նա ջանում էր ամեն գնով վիժեցնել այդ ծրագիրը և հայթայթված միջոցները իբր տրամադրել արտասահմանում գաղթօջախների ամրապնդմանը: Նույն նպատակով, դաշնակցության նախաձեռնությամբ 1924 թվականի սեպտեմբերի 1-ին Ժնևում հրավիրվում է այսպես կոչված հայասերների համագումար, որը ուրիշների թվում մասնակցության հրավեր է ուղարկում նաև Արշակ Զոպանյանին:

Զոպանյանը «Ապագայում» հրապարակում է իր պատասխանը՝ ուղղված Հայասիրական լիգայի նախագահ էդուար Նավիլին: Նա կտրականապես մերժում է մասնակցել այդ համագումարին, հայտարարելով, թե ինքը այդ համագումարի օրակարգի մեջ տեսնում է դաշնակցական կուսակցության տեսակետների դիրակշռությունը, տեսակետներ, «որոնք արդի կացության անճիշտ դնահատման մը վրա հիմնված, մեր ժողովրդի մեծամասնության կողմն հավանություն չեն գտած և աղետաբեր նկատված են»[3]: Ի հակադրություն դաշնակցության, շարու-

---

[1] «Ապագա», 1924, թիվ 40:

[2] «Պայքար», 1924, թիվ 206:

[3] «Ապագա», 1924, թ. 42:

նակում է Զոպանյանը, և առանց բոլշևիզմի սոցիալական ըմբռնումներին համախոհ լինելու, ինքը գտնում է, որ դաշնակցությունը պարտավոր է օգնել երիտասարդ Սովետական Հայաստանի կառավարությանը՝ երկրի վերաշինության գործում։ Զոպանյանը մեծ բաժին ունեցավ այն հարցում, որ հիշյալ համագումարը բոյկոտ արեցին ռամկավարները, բարեգործականը և Ազգային պատվիրակությունը[1]։

Հայասերների ձախողված ժողովին հաջորդում է Ազգերի լիգայի բանաձևը, որը ջուր էր լցնում դաշնակցության ջրաղացին։ Զոպանյանը չի հապաղում մերկացնելու այդ բանաձևի հեղինակներին. «Այս սնամեջ բանաձևին հեղինակը միայն Ազգերու ընկերությունը չէ, սակայն,— գրում է նա,— անոր առանդապին աշխատակցած են մեր դաշնակցական «լիդերները», որ ժեն հավաքված էին և որոնք հայասերներու ժողովին մեջ հաջողցնել չկրցածնին Ազգերու ընկերության շրջանակին մեջ հաջողցուցեր են, այն է, անվստահություն, հակակրություն տարածել հանդեպ Խ. Հայաստանին, ջուրը ձգել տալ Սարդարապատի ծրագիրը, որուն իրականացումը այդ Հայաստանին բնակելի և հերկելի հողերուն տարածությունը պիտի ընդլայներ, որով և ձևոք ձգած են այդ բանաձևը, որ ավելի ամպ է ու գոլորշի, քան նախորդ բոլոր բանաձևերը»[2]։

Այդ տարիներին ակտիվ հակասովետական գործունեությամբ աչքի է ընկնում այսպես կոչված Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը։ 1924 թվականի վերջերին հանդես գալով «Ֆրանս Օրիան» թերթում, Ահարոնյանը պրովոկացիոն հայտարարություններ է անում Սովետական Հայաստանի հասցեին։ Արշակ Զոպանյանի սկզբունքայնությունը բնութագրող երևույթ է, որ նա, այլևայլ առիթներով դնահատելով գրող Ահարոնյանին, մշտապես կանգնում է քաղաքական ձախող «գործիչ» Ահարոնյանի դեմ, մերկացնում նրա հակահայրենասիրական արարքները։ Ի պատասխան «Ֆրանս Օրիանում» տպագրված հարցազրույցի, Զոպանյանը հատկանշական հայտարարություն է անում, թե Սովետական Հայաստանի ուղղությունը լավագույնն է իր ապագան ապահովելու համար[3]։

---

[1] «Ապագա», 6 տարի, 1924, թ. 46։

[2] Նույն տեղում, թիվ 1։

[3] Նույն տեղում, թիվ 4։

Դաշնակները և, մասնավորապես, Ա. Ահարոնյանը մեծ աղմուկ են բարձրացնում Սովետական Հայաստանի 5-րդ տարեդարձի առնակատարման առթիվ։ Ահարոնյանը «Հուսաբերում» և «Ալիքում» հայհոյանքով լեցուն հոդվածներ է տպագրում Հայաստանի կառավարության և սիրուդահայության այն խավերի դեմ, որոնք մասնակցել էին առնակատարությանը։ Նա ստրուկներ է անվանում Շիրվանզադեին, որ այդ ժամանակ գտնվում էր Փարիզում, Զոպանյանին և ուրիշների։

Այդ առթիվ մամուլում անհապաղ երևում է գաղթահայ տասնչորս մտավորականների (Շիրվանզադե, Ա. Զոպանյան, Տ. Կամսարական, Լ. Բաշալյան, Վ. Մալիդյան, Ռ. Որբերյան, Հ. Փուշման, Հ. Գյուրջյան, Է. Շահին, Ս. Խաչատուրյան, Շ. Ադամյան. Պ. Քոլոլյան, Ալիխալյան, Ն. Մանվելյան) բողոքը[1]։

«Մենք պարտք կը համարինք հանուն հայ մտավորականության բողոքել այն աղգալնաս ընթացքին դեմ,— ասված է այդ վաստաթղթում,— որ կը կոխոտե ճշմարտությունը, կը ղրպարտե ու կանարգե Հայաստանի վարիչները ու մեր ազգին բարիքին համար դանազան մարզերու մեջ աշխատող մեր երկրի մտավոր և տեխնիկական լավագույն ուժերը...

Մեզի համար անհերքելի իրողություն մըն է, որ Հայաստան մը գոյություն ունի այսօր։ Մենք համոզված ենք, որ ան իր գոյությունը կրնա պահպանել ու զարգանալ միմիայն Խորհրդային Միության հետ դաշնակցած»[2]։

Մի քանի օր անց, հանդես գալով մամուլում, Զոպանյանը ավելի ընդարձակ մեկնաբանություններ է տալիս բողոքին։ Նա հայտարարում է, որ աննկրելի է բարյացակամ չլինել Սովետական Հայաստանի կառավարության նկատմամբ, քանի որ ամեն պարագայում սովետական վարչակարգը լավագույն է «դաշնակցական անխնայք, անկասակից, անխոհեմ, աղետաբեր ռեժիմեն»[3]։ Զոպանյանը աշխատանք է տանում, որպեսզի մտավորականության բողոքը լայն արձագանք գտնի գաղթահայության շրջանում և նպաստի Սովետական Հայաստանի շուրջ նրանց համախմբման գործին[4]։

---

[1] «Արև», 1926, թիվ 2132։ «Ապագա», 1926, թիվ 14։

[2] «Արև», 1926, թիվ 2132։

[3] «Ապագա», 1926, թիվ 17։

[4] Նույն տեղում, թիվ 18։

Պատասխանելով դաշնակցական մամուլին՝ Զոպանյանը հայտարարում է, որ բոլշևիկները իրենց ինտերնացիոնալիստական և դասակարգային իդեալի հետ միասին կատարում են հայրենաշեն, ազգապահպան գործ։ «Հայրենիքի» իմբապիրները արդյոք կերևակայե՞ն, թե իրենք ավելի հայ են, հայության ավելի՞ օգտակար են, քան Մյասնիկյան մը, որ... իր ժողովրդասեր բազմաձև ենթադա գործունեությամբ մեր փոքրիկ հանրապետության ամրանալուն, զորանալուն մեծապես նպաստողը եղավ,— դրում է նա—... Ավելի՞ հայ են, քան Սրապիոնյան մը, որ Հայաստանի տնտեսական ապագան կը պատրաստե լրջորեն, ցարդ գոյություն ունեցած այդ երկրին մեջ արդյունաբերություն, ճարտարվեստ ստեղծելով։ Ավելի՞ հայ են, քան այդ ամբողջ խումբը Հայաստանի այժմյան քաղաքական վարիչներուն, որ երկրին մեջ հայ լեզուն կը պահպանեն ու կը տարածեն, հայ դպրոցներու թիվը կը քառապատկեն, ազգային համալսարան, մատենադարան, նրաժշտանոց, թատրոն, մուսեոն, դեղարվեստից վարժարան կը կազմակերպեն ու կը ծաղկեցնեն՝ աջակցությամբ երկրին մտավորական լավագույն ուժերուն»[1]։

Մեկ անգամ և ընդմիշտ ճշտելով սիյուռքահայ հայրենասեր ուժերի դիրքորոշումը նոյեմբերի 29-ի տոնակատարության հարցի վերաբերյալ, Զոպանյանը անվարան գրում է հետևյալ տողերը. «1920 նոյ. 29-ն ի վեր հայոց պատմության մեկ նոր շրջանը կը բացվի, այդ օրը հայ ազգային ինքնավար կյանքին մեկ նոր փուլը կը սկսի, այդ օրը կատեղծվի խորհրդային Հայաստանը, որ այժմյան կենդանի Հայաստանն է, որ մեր հիմակվան միակ ուրախությունն ու մխիթարությունն է, և մեր ապագայի կարելիության միակ խարիսխը, զայն տոնել՝ ազգասիրական պարտականություն մը կատարել է։ Մենք, հողով, որ այդ օրը գաշնակցական զինակալները տապակվին իրենց նստյող մաղձին մեջ, զայն կը տոնենք Մայր Հայրենիքին ուղղված օրհնության ու փառաբանության որդիական ժեսթով մը»[3]։

Զոպանյանը հմտություն ու խորաթափանցություն էր ցուցաբերում քաղաքական թվականներին դարձօջախների որոշակի շրջաններում հակադաշնակցական պայքարը կազմակերպելու և

---

[1] «Պայքար», 1927, թիվ 31։

[2] Նույն տեղում, թիվ 34։

[3] Նույն տեղում։

վնկավարելու գործում: Բավականին լավ ուսումնասիրած լինելով դաշնակցության քաղաքականությունը և տակտիկան, նա արագորեն կողմնորոշվում էր կոնկրետ իրավիճակներում, ձգտելով միշտ պահպանել նախաձեռնությունը, երբեք թույլ չտալ կոմպրոմիսներ ի վնաս Սովետական Հայաստանի: Դաշնակցությունը, օրինակ, իր դիրքերն ամրապնդելու լավագույն առիթ նկատեց Լենինականի երկրաշարժը, ջանալով իր մականի տակ այսպես կոչված ազգային միասնություն ստեղծել: Չոպանյանը, որ այդ պահին գտնվում էր ԱՄՆ-ում, կարողացավ մերկացնել դաշնակցության մտադրությունը: Նա վստահ էր, որ դաշնակցության հետ համագործակցելու կոչը պիտի նշանակեր միայն ապակողմնորոշել, իսկ ինչո՞ւ էր դաշնակցությունը, որ մշտապես հանդես էր գալիս Սովետական Հայաստանի թշնամու դերում, հանկարծ դիմակափոխվել ու ձգտում էր համագործակցել հայրենասիրական ուժերի հետ: «Բացատրությունը պարզ է,— գրում է Չոպանյանը:— Դաշնակցության քուն նպատակը, հանդանակության (աղետյալ Լենինականի օգտին— Կ. Դ.) հաջողումն ավելի արտասահմանյան կազմակերպություններն իրեն հետ միկտեղ համագործության մարմնո մը մեջ միացնել և հետո ջանալն էր սակարկության մտնել Հայաստանի կառավարության հետ, անոր վրա ճնշում բանեցնել, պայմաններ դնել, պահանջներ ներկայացնել ու նաև հանդանակության փակումեն հետո փորձել այդ համագործությունը, զեթ անոր մեկ վերածյալ մասը պահպանել, տևականացնել, ժնևի «ֆիլարմենիենին» (հայասերների— Կ. Դ.) ձեռքով սարքված ու վիժած ծրագիրը անգամ մը ևս ջանալու համար իրականացնել...

Այդպիսի հոին մարքերով կազմված մարմին մը, եթե նույնիսկ հաջողեր քանի մը հազար դոլար ավելի հավաքել (ինչ որ տարակուսական է), քաղաքականապես՝ միլիոններու արժողությամբ վնաս պիտի բերեր մեր ժողովրդին»[2]:

Դաշնակցության մերկացման գործում Չոպանյանը օգտվում է իր տաղանդի վինտոցի ամենաստուր զենքերից, գործելով թե ամրակուռ տրամաբանությամբ, լամքի հատատուկամությամբ ու հետևողականությամբ, թե պատկերավոր ու երգիծական ոճի

---

[1] «Պայքար», 1927, թիվ 23:

[2] Նույն տեղում, թիվ 26:

դորությամբ։ Ասես իր ժամանակակից, համախոհ և բարեկամ Երվանդ Օտյանի դրչին պատկանելիս լինեին հետևյալ տողերը. «Ի՞նչ ըսել է «մարտական», մա՞րտ ամսու կուսակցություն, այսինքն այն ամսուն, ուր կառուները կառոյած կը պոռան, կը կանչեն, իրար կը խածնեն և պիշերային վեհ խաղաղությունը կը վրդովին։ Բարին այս սուտպաբանական բացատրությունը բավական խելքի մոտ պիտի ըլլար և պիտի պատշաճեր դաշնակցական պոլիտիկանության պարագային, սա վերապահմամբ, որ կառուները տարվան մեջ ամիս մը միայն կը կանչվռտեն, մինչ դաշնակցական պարապմունքները՝ ամբողջ տարին, կառուները գոնե սերնդագործության բարի կենան նպատակին համար այդ բոլոր աղմուկը կը հանեն, մինչ մեր դաշնակցական հրապարակագիրները իրենց ինքնամոլությունը, ամբարտավանությունն անին իբր նպատակ... Այս կերպով ըմբռնված «մարտականությունը» փորձանք է, բարոյական ծանր ախտ, ֆրանկախտեն ավելի ծանր, և անհրաժեշտ է արմատապես ապաքինել մեր ժողովուրդը այս ախտին պահպանման ու տարածման վտանգեն»[1]։

Բնական է, որ դաշնակցական պարագլուխները չէին կարող «ներել» Զոպանյանի մերկացումները։ Այլևս ի վիճակի չլինելով խոսքով պատասխանել, նրանք որոշում են գործի դնել իրենց տակտիկայի հին զենքը։ Եվ օգտագործում են առաջին իսկ պատեհ առիթը։ 1929 թվականի ապրիլյան սգահանդեսին, որին նախագահում էր Արշակ Զոպանյանը, մի խումբ երիտասարդ դաշնակցականներ փորձ են կատարում իրենց կամքը թելադրել, իսկ երբ դա չի հաջողվում, ծեծի են ենթարկում ներկաներին։ Նրանցից մեկը հարձակվում է ծերունազարդ Զոպանյանի վրա և գետին տապալում նրան։ Սովետական Հայաստանի նկատմամբ որպես քաղաքական ցույց՝ այդ խումբը երգում է «Մեր հայրենիքը»։ Տեսարի և խուլիգանության այս ակտը մեծ վրդովմունք է առաջացնում սիւյուրքում։ Զոպանյանի հասցեով սուտվում են բազմաթիվ համերաշխական նամակներ։ Իր զայրույթն է հայտնում հակադաշնակցական մամուլը։

Այդ առիթով հանդես գալով «Ապագայում», Զոպանյանը մատնացույց է անում ակտի իսկական հեղինակներին՝ դաշնակցական ղեկավարներին, որոնք սիստեմատիկ կերպով ղրպարտում, հայ-

[1] «Պայքար», 1928, թիվ 2։

հոյում են Սովետական Հայաստանին ու նրա արտաահմանյան բարեկամներին, դրդում ու պատակում գաղթօջախները։ Մ. Նալբանդյանի «Մեր հայրենիքը» քնարվածն էլ, դաշնակցության հիմնի վերածված, ասում է Զոպանյանը, այժմ օգտագործվում է որպես հակադրություն Սովետական Հայաստանին։ Բայց «այդ խնդճ մոլորած տղաքը,— գրում է նա,— որոնց դաշնակցական ղեկավարները սորվեցուցել են «Մեր հայրենիքը» այդ ձևով և այդ իմաստով երգել, պետք է վիտնան, որ ևիմ երգ գրող Նալբանդյանն ողջ ըլլար այսօր ու ներկա գտնվեր այդ երեկույթին, իր պայծառ ու հզոր ուղեղով, իր ազնիվ, շիտակ ու լուրջ նկարագրով ու նաև իր առաջին հայ ընկերավարականի հանգամանքով ինքն իսկ «սո՛ւս եղեք, տեղերնիդ նստեցե՛ք» պիտի պոռար այդ տղոց, և արդեն, ևիմ Նալբանդյան ողջ ըլլար, անտարակուսելի է, որ Հայաստան կը գտնվեր հիմա»[1]։ Այս հոդվածը, որ շարունակաբար տպագրվել է Ինքի մի քանի համարներում, կրում է «Ցավն ու դարմանը» խորագիրը։ Ցավը գաղթօջախներում բույն դրած դաշնակցությունն է, նրա գործելակերպը, դարմանը՝ այդ կուսակցությունից բոլոր այն տարրերի դուրս գալը, որոնք իրենց աղնիվ են համարում,— եզրակացնում է Արշակ Զոպանյանը։

ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Մասնակցություն Հայաստանի օգնության գործին

Հովհաննես Թումանյանի վերոհիշյալ նամակը անմիջական ազդեցություն է ունենում Զոպանյանի վրա։ Արդեն 1922 թվականին նա հանդես է գալիս «Արև» (Եգիպտոս) և «Ազգ-պահակ» (ԱՄՆ) Ինքերում, գաղթահայության ուշադրությունը հրավիրելով երիտասարդ սովետական հանրապետությանը օգնություն կազմակերպելու անհրաժեշտության վրա[2]։ Լոզանի կոնֆերանսից հետո, սակայն, քաղաքականության հողի վրա արմատական շրջադարձ կատարելով դեպի նորաստեղծ հայրենիքը, Զոպանյանը շատ ավելի ակտիվ մասնակցություն է ունենում Հայաստանի օգտին կատարվող հանդանակությունների և ուրիշ միջո-

[1] «Ապագա», 1929, Ինվ 69։

[2] «Ապագա», 1923, Ինվ 14։

ցառումների կազմակերպման գործում։ Ֆրանսիայում ՀՕԿ-ի ստեղծման առաջին օրից մի քանի տարի շարունակ անդամակցում է այդ մարմնին։ Լոզանի կոնֆերանսից հետո Չոպանյանը նոր ծրագիր է առաջադրում գաղթահայությանը։ Այդ ծրագրի հիմնական կետերն են. օգնություն Սովետական Հայաստանին, գաղթօջախներում պահպանել ազգային կյանքը և մշակույթը, ղեկավարել որբերի և փախստականների տեղավորումով[1]։ Դա գաղթահայության կյանքում սկիզբ առած «նոր շրջանի», ինչպես Չոպանյանն է կոչում, առաջ քաշած ծրագիրն էր։ Բազմաթիվ հոդվածներում, ճառերում, բանախոսություններում, ելույթներում Չոպանյանն անդադրում պրոպագանդում է նորաստեղծ Սովետական Հայաստանին օգնություն հասցնելու անհրաժեշտության հարցը[2]։ Գաղթօջախներում վայելած իր վիճակարի հեղինակությամբ նա տարբեր ժամանակներում անձնապես աջակցում է Արամայիս Երզնկյանի և ՀՕԿ-ի մյուս պատվիրակների առաքելության հաջողության գործին։

Նյութական օգնությունը, որի կարիքը այն ժամանակ մեծապես զգում էր Սովետական Հայաստանը, ըստ էության չնչին էր։ Չոպանյանը զանազան ուխտներով կշտամբում, հորդորում է գաղութահայությանը ավելի մեծ թափ հաղորդել այդ գործին։ «Մենք կխոսինք, կը վիճինք, կը բաղձանք, կը երազենք, բայց տեղերնես շատ քիչ կը շարժինք»,— գրում է նա ցավով[3]։ 1923 թվականի գարնանը նա իր մի շարք աշխատություններն է ուղարկում Լուկաշինին՝ «Հայաստանի ազգային մատենադարանին» իբր նվեր, և մամուլում կոչ է անում սփյուռքահայ մտավորականներին՝ գրքեր հավաքել և ուղարկել Հայաստանի կրթական օջախներին[4]։

Նույն նպատակով 1924 թվականի մարտի 15-ին Չոպանյանը ցերեկույթ է կազմակերպում, որի հասույթով գրքեր են գնվում և ուղարկվում Հայաստանի համալսարանին[5]։ Այդ ցերեկույթից ստացվում է ընդամենը 1500 ֆրանկ, բայց, ինչպես Ա. Մռավ-

---

[1] «Ապագա» 1923, թիվ 36։

[2] «Արև», 1923, թ. 167, 1924, թթ. 49, 50, 96, 1726։ «Ապագա», 1923, թթ. 26, 40, 45, 46, 1924, թթ. 14, 19, 28, 34, 44, «Պայքար», 1923, թ. 95, 1924, թ. 199 և այլն։

[3] «Ապագա», 1923, թ. 14։

[4] Նամականի, էջ 151։ «Ապագա», 1923, թ. 26։

[5] «Ապագա», 1924, թթ. 23, 34։

յանին հասցեագրած նամակում հայտնում է Զոպանյանը, մասնավորապես, հրապարակված իր կոչերը որոշ արդյունք ունենալու մասին։ «Պայքարի» բացած հանդանակությունը 2.000 դոլարի է հասել[1]։

1924 թվականի սեպտեմբերին Զոպանյանը հատուկ դիմում է ամերիկահայությանը, որով ջերմորեն պաշտպանում է այդ օրերին ՀՕԿ-ի հրապարակած կոչի դաղափարները։ Երիտասարդ Սովետական Հայաստանին օգնության հարցը նա համարում է ամենակենսական խնդիրը[2]։ Արդեն այդ դիմումից որոշ ժամանակ առաջ նա գրում էր. «Հայաստանի վերաշինության աշխատանքները,— անջրպի հողերու ոռոգում, ճահիճներու չորացում, ճանապարհներու շինություն և այլն,— զոր հանրապետության կառավարությունը հղացած է և սկսած է մասամբ գործադրել, իբր արդյունք պիտի ունենան, երբ լիուլին կատարվին, մեր հայրենիքին այժմյան տարածության ընդարձակումը և ճոխացումը, բնակավորումը, քանի որ այդ փոքրիկ տերության շատ մը ամայի, խոպան ու անտառաբեր մասերը պիտի դառնան բնակելի ու մշակելի, հազարավոր կյանքեր հնձող մալարիան պիտի անհետանա, գաղթականներու և որբերու տակավ թիվի մը հայրենիքին ծոցը հավաքումը պիտի դյուրանա, երկրագործությունը, արհեստները պիտի ծավալ գտնեն։ Ազգին ապագային համար կենսական կարևորություն ունեցող գործ մըն է ատիկա, կարևորություն, որ այս թերթին մեջ ավելի քան տարիի մը ի վեր կը բացատրվի բազմաթիվ հոդվածներով»[3]։

Գաղթականների և որբերի մի մասին Հայաստան ուղարկելու հարցում Զոպանյանը նույնպես բերել է իր գործուն աջակցությունը, բազմաթիվ առիթներով պաշտպանելով և քաջալերելով այդ կարևոր ձեռնարկումը։ Նա ջերմորեն ողջունում է առաջին քարավանը, որի կազմում 110 մարդ Պոլսից մեկնում են հայրենիք Դանուշ Շահվերդյանի ջանքերով։ Զոպանյանը գտնում է, որ հայրենադարձի գործին պետք է ավելի լայն, զանգվածային բնույթ հաղորդել և, մանավանդ, արագացնել այն[4]։

Ինչպես նշեցինք, գաղթահայության նյութական օժանդակու-

[1] «Գրական թերթ», 1969, թ. 9։
[2] «Ապագա», 1924, թ. 44։
[3] Նույն տեղում, թիվ 28։
[4] Նույն տեղում, թիվ 23։

թյունը շատ ավելի խորհրդանշական և բարոյական նշանակություն ունեցավ, քան գործնական: Այդ հանգամանքն էլ ավելի ավելց խիստ քննադատության ծավալմանը, որ տեղ գտավ Սովետական Հայաստանում: Քննադատությունից բավականին բաժին ընկավ նաև Զոպանյանին: Հատկանշականը, սակայն, այն է, որ պաշտպանվելով և պատասխանելով քննադատությանը, Զոպանյանը քաղաքական հողի վրա բոլոր դեպքերում մնաց Սովետական Հայաստանի գործուն օգնականի դիրքում:

Այդ քննադատությունը, որը «դասակարգայնության» անունից մերժում էր որևէ գործակցություն բոլոր ոչ պրոլետարական և ոչ աշխատավորական ուժերի հետ, մերժում էր հայրենասիրական քաղաքական ճակատի ստեղծումը սփյուռքում ընդդեմ դաշնակցության և հակասովետական կազմակերպությունների, «ձախության» մանկական հիվանդության դրսևորման օրինակ էր մեղանում:

ՍՄԿԿ համագումարները վերջին երեսուն տարիների ընթացքում ակնառու ցուցադրեցին զանազան քաղաքական-հասարակական (մինչև իսկ կրոնական) ուժերի հետ գործակցելու կենսական անհրաժեշտությունը այս կամ այն կարևորագույն հարցում (օրինակ՝ կայուն խաղաղություն ապահովելու գործում) միասնական ճակատ ստեղծելու համար:

Մինչդեռ քանակական թվականներին «ձախության» այդ դրսևորումը օբյեկտիվորեն նպաստում էր արտաքին աշխարհում Սովետական Հայաստանի մեկուսացմանը, նրա իրական թշնամիների զորացմանը և ազդեցության տարածմանը: Հատկանշական է, որ այդ քաղաքականությունից առավելապես տուժեց ՀՕԿ-ը և հող նախապատրաստվեց նրա շուտափույթ վերացման համար: Հայաստանի օգնության կոմիտեն ստեղծվել էր որպես մի կազմակերպություն, որի նպատակն էր առավելագույն չափով բարեկամներ շահել արտասահմանում, տարածել երիտասարդ սովետական իշխանության համբերը, նյութական օգնություն հայթայթել ամենալայն խավերի շրջանում: Մինչդեռ այդ օրերին նպատակ է դրվում ՀՕԿ-երից դուրս քշել ոչ աշխատավորական տարրերին... «Նա պետք է դառնա աշխատավորական լայն մասսաների կազմակերպման մի օրգան, որ, վերջ տալով ներհակ դա-

սակարդների համագործակցության սին մտայնությանը, նպաստելու է ազգության դասակարգային շերտավորմանը»[1]:

Տարիներ հետո ՀՕԿ-ի քաղաքականության մեջ տեղ գտած խեղաթյուրումների դեմ հանդես եկավ նրա կենտրոնական վարչությունը: «Տալ ՀՕԿ-ին կուսակցական բնույթ, որդեգրել ՀՕԿ-ի համար կուսակցական գործելակերպ, դա նշանակում է պարզապես խեղաթյուրել նրա իսկական դիմագիծը,— գրված է 1934 թվականի սեպտեմբերին հրապարակված շրջաբերականում,— սահմանափակել, նեղցնել նրա մասսայական-դեմոկրատական բազան և այդպիսով արգելք լինել նրա աճմանն ու զարգացմանը:

... ՀՕԿ-ի թշնամիները, բոլոր հակահեղափոխական տարրերը, ներկայացնելով մեր կազմակերպությունը որպես Կոմկուսի մի հատվածը, մի վարիանտը, ուրիշ նպատակ չունեն, եթե ոչ սարսափի ենթարկել միամիտ մասսաներին և նրանց հետ պահել ՀՕԿ-ից:

Նույնքան վտանգավոր են ՀՕԿ-ի այն անդամները, որոնք ձախության հիվանդությունից բռնված, շփոթում են ՀՕԿ-ը Կոմկուսի, Կարմիր սինդիկանների կամ Կարմիր օգնության հետ: Դրանք դյուրացնում են, կամա ակամա, մեր թշնամիների հակահեղափոխական աշխատանքը»[2]:

Իսկ մինչ այդ շրջաբերականը, ՀՕԿ-ի դերի գնահատման հարցում շատ ավելի իրավացի էր Ա. Զոպանյանը: Ըստ նրա, ՀՕԿ-ը «կրցածին չափ նյութական օգնություն հավաքելե և Հայաստան ղրկելե զատ՝ ուրիշ դեր մը, ավելի կարևոր դեր մը ունի կատարելու, այն է. արդի Հայաստանը ճանչցնել գաղութի հայերուն, անոր մասին մանրամասն ու ճշգրիտ տեղեկություններ տարածել, արտասահմանի հայերը համախմբել հայրենիքին բարոյապես ու նյութապես օգնելու գաղափարին շուրջ»: Զոպանյանը խոսում է բոլոր հայերի մասին, որոնք ուզում են կամ ունակ են համախմբվելու հայրենիքին օգնելու գաղափարի շուրջ[3]:

Զոպանյանը հավատարիմ է մնում իր որդեգրած քաղաքական ուղղությանը: Այդ վճռին զուգահեռ նա շարունակում է աշխատանք ծավալել Հայաստանին օգնություն կազմակերպելու ուղղությամբ: Շիրվանզադեին հասցեագրած իր նամակներից մե-

[1] Ա. Հովհաննիսյան, *Գաղութահայ խնդիրներ*, Երևան, 1926, էջ 23:

[2] «ՀՕԿ», 1934, № 9:

[3] «Ապագա», 1926, թ. 43:

կում (1926, 30 Հուլիսի) Չոպանյանը գրում է. «Ամեն անգամ երբ պ. Փերոմյան (Սովետական Հայաստանի ներկայացուցիչը — Կ. Դ.) ինձմե կը խնդրե դիմում մը ընել, րոպեին կը կատարեմ դիմումը, և միշտ հաջողությամբ, ասիկա իմ պարտքս է հայրենիքին հանդեպ»[1]:

1926 թվականի սկզբին, Փարիզի սովետական դեսպանատանը հանդիպում և զրույց է ունենում նա Չիչերինի ու Լունաչարսկու հետ և այդ առիթով գրում «Մասնակցինք Հայաստանի վերաշինության» խորագրով հոդվածաշարը: Չոպանյանը շնորհակալություն է հայտնում ՍՍՀՄ ներկայացուցիչներին իր հայրենիքի ապահով կացության և շինարարական աշխատանքի համար[2]: Դիմելով սիրուհահայությանը, նա գրում է. «Անհուն գործ կա կատարելիք, և կարելիություն կա կատարելու, մեզի՝ արտասահմանի հայերուս կը մնա ցույց տալ, թե ինչքան լրջությամբ պիտի ըմբռնենք այդ գործին մասնակցելու մեր պարտքը և թե ինչ չափով այդ պարտքը պիտի կատարենք»: Հայրենիքի վերաշինությանը մասնակցելուց առավել ի՞նչ ավելի արտաշարժ, ավելի դեղեցիկ, ավելի ևվիրական գործ»,— բացականչում է Չոպանյանը[3]:

1926 թվականի Հննինականի ավերիչ երկրաշարժի լուրը Չոպանյանը առանում է ԱՄՆ-ում, որտեղ գտնվում էր այդ ժամանակ: Առաջին իսկ բանախոսության մեջ նա անդրադառնում է երկրաշարժից տուժած քաղաքին օգնության կազմակերպելու խնդրին, այդ գործը համարում է «անմիջական պարտք մը»[4], կազմակերպում է «Պայքար» օրաթերթի հանդանակության այդ նպատակով և ինքն իսկ մուծում իր ավելի քան համեստ միջոցներից 5 դոլար[5]: Կարճ ժամկետում հանգանակության բերում է ավելի քան 15 հազար դոլար: Հննինականի օգտին հանգանակություններ կատարվում են ամենուրեք՝ ցեղեկություններին, երեկույթներին, բանախոսություններին, բարեկամական հավաքույթներին, հարսանիքներին և այլն: Նոյեմբերի 7-ին Նյու Յորքում տեղի ունեցած բանախոսությունից հետո, որի թեման կրկին ու կրկին Հայաստանին, մասնավորապես Հննինականին օգնության հարցն

---

[1] Նամականի, էջ 162—163:

[2] «Արև», 1926, թ. 2093:

[3] Նույն տեղում, թ. 2094:

[4] «Պայքար», 1926, թ. 254:

[5] Նույն տեղում:

էր, կազմակերպվում է հանգանակություն և հավաքվում է 600 դոլար[1]: Զոպանյանի գործունեության այդ կողմին ուշադրություն է դարձնում նաև ամերիկյան մամուլը: «Ուստր Դեյլի Թելեգրաֆի» նոյեմբերի 17-ի համարում ասվում է, թե Ա. Զոպանյանը կոչ է անում իր ամերիկաբնակ հայրենակիցներին. ամեն գնով նպաստել իրենց հայրենիքի վերածնունդին և տնտեսական բարգավաճմանը[2]:

Բոստոնից Զոպանյանը դեկտեմբերի 29-ին գրում է Ա. Երզնկյանին, իր հիացմունքը հայտնելով երկրաշարժի հետևանքները վերացնելու ուղղությամբ կառավարության կորովի գործունեության համար: «Ամեն ջանք կրենենք մղելու համար ամերիկահայ գաղութը, որ մեծագույն չափով մասնակցի Լենինականի վերաշինության ի նպաստ բացված հանգանակության,— շարունակում է նա, մասնավորապես ուրախություն հայտնելով, որ շարժումը ընդգրկում է մեծամասնությանը...— Այս զանգվածային սրտաբուխ շարժումն է, որ գեղեցիկ է ու սրտապնդիչ... Ամեն պարագայի մեջ գաղութահայությունը, հակառակ դաշնակցական թերթերու այսպիսի եղերական առիթով մը իսկ ցույց տված ղղվելիորեն հեռու դիրքին... ամենաստվար մեծամասնությամբ սըրտակցություն մը ի հայտ կը բերի Խ. Հայաստանի և անոր կառավարության հանդեպ, ինչ որ բարոյական մեծ նշանակություն ունի»[3]:

Հայաստանին օգնության գործը կազմակերպելու հարցը Զոպանյանի ամերիկյան շրջագայության խնդիրներից մեկն էր: Հատկանշական է, որ ողջերթի ճառում նա, հանրագումարի բերելով իր գործունեության արդյունքները, ասում է, թե սկզբում շատերը տարակուսում էին մոտենում իրեն տեղեկություն ստանալու համար Հայաստանի կացության շուրջ, իսկ այժմ տարակույսը մասամբ փարատվել է, ամենուրեք մարդիկ խոստանում են օգնել Հայաստանին[4]:

Փարիզ վերադառնալուց հետո մի շարք բանախոսություններում և մամուլում Զոպանյանը Հայաստանին նյութական օգնություն հասցնելու հարցը դարձյալ դնում է առաջին պնագծում:

---

[1] «Պայքար», 1926, թ. 267:

[2] Նույն տեղում, թ. 272:

[3] ԴԱԲ, ԱՀՖ, IV բաժին, № 87:

[4] «Պայքար», 1927, թ. 149:

Բնութագրական է նրա «Հայաստան և դաղութները» խորագրով հոդվածը: «Վերաշինության գործը,— գրում է նա,— որ կը կատարվի Հայաստանի մեջ կառավարության ու ժողովրդին ձեռքով, գերազանցապես ազգասիրական գործ մըն է, անոր աջակից տարրական ու հրամայական պարտականություն է ամեն ազգասեր հայու համար: Գիտենք, որ բերված ամեն աջակցություն այնտեղ լրջորեն կը հատկացվի այդ նպատակին և այդ աջակցության արդյունքը հավերժական օգուտ է մեր հայրենիքին ու մեր ժողովուրդին: Վարանելու, դանդաղելու որևէ տեղիք չկա: Հանցանք է այդպիսի հայրենաշեն աշխատանքի մը շամանակիլը»[1]:

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Թերթելով կենսագրության էջերը

Քսանական թվականներին նույնքան բեղմնավոր և բազմաճյուղ է եղել Արշակ Զոպանյանի կյանքը, անսպառելի՝ նրա հետաքրքրությունների և գործունեության շրջանակը: Մեկ կողմից նվեներից մազապուրծ հայ գանգվածների ֆիզիկական և ազգային պահպանման, գաղթօջախների կազմակերպման, նրանցում կրթական ու մշակութային գործի գարգացման և հարակից բազում ուրիշ հարցեր, մյուս կողմից՝ նորաստեղծ Սովետական Հայաստանի հետ կապերի հաստատման ու ամրապնդման, նրան նյութական օգնության և բարոյական աջակցության կազմակերպման, երիտասարդ հանրապետության պրոպագանդման, նրա շուրջ սիրտուրքահայ գանգվածների համախմբման խնդիրներ. վերջապես, հայ պատմության ու ժամանակակից կյանքի հետ աշխարհին ծանոթացնելու, հայոց հին ու նոր մշակույթի պրոպագանդի պարտականություններ.— այսպիսին էր, ամենահամ դծերով, Ա. Զոպանյանի գործունեության շրջանակը մեր պատմության այն բեկումնային հատվածում, որ ընկնում էր Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին տասնամյակին: Եվ այդ ամենի համար շուրջ մեկ տասնյակ գրքեր ու գրքույկներ, հարյուրավոր հոդվածներ հայ և օտար մամուլում (այդ թվում առնվազն երեք օրգաններում՝ «Ապագա»,

[1] «Արև», 1927, թ. 2931:

«Արև», «Պայքար», մշտական աշխատակցությամբ գրված հոդվածներ), անհաշիվ բանախոսություններ, ճառեր, հլուչքներ հայերեն ու ֆրանսերեն, հանդիպումներ, բանակցություններ, և այլն, և այլն: Մենք պիտի ջանանք ընթերցողին ներկայացնել Ա. Զոպանյանի կյանքի այդ հարուստ ժամանակահատվածի միայն հիմնական կետերը համառոտ տարեդրության կարգով:

Սևրի դաշնագիրը որոշ հույսեր ներշնչեց Ա. Զոպանյանին, թե հնարավոր պիտի լինի դաշնակիցների օգնությամբ լուծել Թուրքահայաստանի և կիլիկյան հարցը: Այդ հույսից դրդված՝ նա ձեռնարկեց իր կիլիկյան ուղևորությանը, որը, ինչպես տեսանք, անցավ ապարդյուն: Նույն հույսն էր փայփայում Ա. Զոպանյանը 1922 թվականի կեսերին՝ ճառով հանդես գալով Աղդերի լիցեյի Պրադայի ժողովում[1]: Լողանի կոնֆերանսը, որտեղ նախատեսում էր «պետրոն ու յաթաղանը» (Զոպանյան), վերջնականապես թևաթափ արեց դաշնակիցների հետ հույսեր կապող արտասահմանի հայ գործիչներին, և նրանցից առավել հեռատես, ռեալիստ և հայրենասեր տարրերը այլևս առմիշտ հայացքը ուղղեցին Սովետական Հայաստանին: Զոպանյանը առաջիններից մեկն էր:

Այդ իրողությունը ժամանակին գնահատել է Անդրկովկասի օրգան «Զարյա Վոստոկա» լրագիրը, որի էջերում Պողոս Մակինցյանը գրում էր. «Սովետական Հայաստանի և ՍՍՀՄ-ի նկատմամբ Արշակ Զոպանյանը անմիջապես ճիշտ ընթացք ընտրեց: Ով հետևել է նրա «Ապագային» վերջին երկու տարում, նա դիտի, որ շաբաթաթերթը իր մակերևի երեք քառորդը տրամադրում է Սովետական Հայաստանին: Արշակ Զոպանյանը՝ իրքահայ գրողը, դարձավ մեր լավագույն ուղեկիցը»[2]:

1923 թվականին Զոպանյանը հրատարակում է իր «Տղու հոգիներ» արձակ ստեղծագործությունների ժողովածուն, և «Վարդենիքի» երկրորդ հատորը: 1923 թվականի փետրվարի 20-ին Փարիզում կազմակերպում է հանդիպում անվանի հայագետ Մառի հետ և հանդես է գալիս ճառով: Մարտ ամսին երկու կարևոր դասախոսություններ է կարդում Մուզե Սոսիալի սրահում հայկական երաժշտության մասին և ինժիներ Սիվիլի սրահում՝ Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության

---

[1] «Ապագա», 1922, թիվ 32:

[2] «Заря Востока», 1924, № 727:

վերաբերյալ։ Մայիսի 17-ին բանախոսում է Բյուսելում։ Բանախոսությունը նվիրված էր Սովետական Հայաստանին։ Զոպանյանը վեր է հանում երիտասարդ հանրապետության նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, ջատագովում է նրա կառավարության ուշիմ ու նպատակասլաց գործունեությունը[1]

1924 թվականին Զոպանյանն ավարտում է իր «Հրաշք» քաղաքական թեմայով թատերգությունը, որի բովանդակությունը անմիջապես կապվում է Լոզանի կոնֆերանսից հետո Հայության համար ստեղծված կացության հետ։ Նույն թվականին Գերմանիայում Հանս Բեթգեի թարգմանությամբ լույս է տեսնում քուչակյան տաղաշարքի մեկ հարյուրյակը։ Բեթգեն ամբողջովին հիմք էր ունեցել Ա. Զոպանյանի աշխատությունները[2]։ Հոկտեմբերի 17-ին Զոպանյանը հայրենասիրական ճառով հանդես է գալիս ՀՕԿ-ի նախագահ Ա. Սրվանձտյանի պատվին կազմակերպված ճաշկերույթում։

1924 թվականին լույս է տեսնում նաև Զոպանյանի հոդվածների ժողովածուի առաջին հատորը՝ «Դեմքեր» խորագրով։

***

1924 թվականից նախաձեռնվում է Արշակ Զոպանյանի 35 ամյա գրական-հասարակական գործունեության հոբելյանի տոնակատարումը։ Փարիզում ստեղծված հանձնաժողովի նախագահն էր Շիրվանզադեն։ Տոնակատարությունը տեղի է ունենում 1925 թվականի հունվարի 3-ին Փարիզում, իսկ մի շարք ուրիշ քաղաքներում՝ տարբեր ժամկետների։

Հոբելյանի նախապատրաստության օրերին Պ. Մակինցյանը գրում էր «Ջարյա Վոստոկայում». «Պետք է կարծել, որ ՍՍՀՄ-ում գտնվող հայկական մամուլը կարձագանքի ծնրունազարդ գրականագետի հոբելյանին, որ նրա համար լավագույն նվերը կլինի այն եռանդուն պրոպագանդի փոխարեն, ինչ նա մեր օգտին տանում է Փարիզում»[3]։

Հոբելյարի հասցեով հարյուրավոր շնորհավորական հեռագրեր են ստացվում աշխարհի տարբեր կողմերից, նույնիսկ հե-

---

[1] «Ապագա», 1923, թ. 27։

[2] ԴԱԲ, Ա.Զ.Ե, «Անահիտ» արխիվ, № 69։ «Ապագա», 6 տարի, 1924, թ. 5։

[3] «Заря Востока», 1924, № 727։

ռավոր Զինաստանի փոքրաթիվ հայ գաղթօջախից[1]: Սովետական Հայաստանի լուսավորության ժողկոմ Մռավյանի անունից հոբելյարին ողջունում է գրող Կոստան Զարյանը: Նիստին ներկա է լինում նաև Ա. Երզնկյանը: Երևանից ստացվում է մտավորական ընտրանու հեռագիր, որի մեջ ասված է. «Հայաստանի մայրաքաղաքի մտավորականությունը, կազմակերպելով հավաքույթ ի պատիվ Ձեր գրական գործունեության, շնորհավորում է Ձեր 35-ամյա հոբելյանը: Մեր գրականության համար գնահատելի են Ձեր գրչի գեղեցիկ արտադրությունները և Ձեր ջանքերը հայրենի բանաստեղծության գոհարները փոշիներից լույս աշխարհ հանելու գործում: Հավատում ենք, որ Դուք, թեև ոչ երկրում, կշարունակեք Ձեր գրիչը դնել ի սպաս Խորհրդային Հայաստանի գրականության և կուլտուրայի»: Հեռագիրը ստորագրել էին Հովհաննես Հովհաննիսյանը, Լևոն, Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Մանուկ Աբեղյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Երվանդ Լալայանը, Միքայել Մանվելյանը, Յոլաք Խանզադյանը, Արսեն Տերտերյանը, Ստեփան Զորյանը, Հակոբ Մանանդյանը, Ռոմանոս Մելիքյանը և ուրիշներ[2]:

Ուշագրավ է Բուխարեստից բանաստեղծ Երվանդ Գոլանճյանի վկայությունը, թե ինչ ազդեցություն էր թողնում Զոպանյանը Սովետական Հայաստանի մասին իր պրոպագանդիստական գործունեությամբ սիյուրքահայության վրա: Տոնակատարությունից որոշ ժամանակ անց նա գրում էր Զոպանյանին. «Գիտեմ... թե մեկն ավելի հանդիսավոր տոհմիներով Փարիզի սրահներուն մեջ, Ձեր հայանվեր անսպառ պերճախոսությունը լսելի եղավ ամենազգի հանդիսականներու առջև, Ձեր բազմերանգ, բազմաշեշտ, խանդավառության առանցքը կազմելով Խորհրդային Հայաստանի այժմու հորիզոնը, որ մասնավորին մեջ ընդհանուր ու ալ գրեթե սինկերական պատկեր մըն է՝ մեր ամենուս սրտին մեջ ծվարած»[3]:

Հոբելյանի տոնակատարության օրերին Վենետիկից ստացվում է Ավետիք Իսահակյանի նամակը. «Երկար և հերոսական և գեղեցիկ է եղել Ձեր անցած ուղին, և արդար են Ձեր վաստակ-

---

1 ԳԱԹ, ԱՋՖ, I բաժին, № 2891:

2 ԳԱԹ, ԱՋՖ, I բաժին, № 3485:

3 ԳԱԹ, ԱՋՖ, I բաժին, № 1514:

նները և լիուլի արժանի եք Հայրենիքի երախտապիտությանը»[1],— *գրում է նա։*

Ֆրանսիայի պրեմիեռնաի 1925 թվականի հուլիսի 23-ի դեկրետով ֆրանսիական մշակույթին մատուցած ծառայությունների համար Արշակ Չոպանյանը պարգևատրվում է «Պատվո լեգիոն» շքանշանով[2]։

Սփյուռքահայ անվանի գործիչների հոբելյանների կազմակերպումը մեծարանքի հետ մեկտեղ հետապնդում է նաև գրամական միջոցների հայթայթման նպատակ, միջոցներ, որոնք տրամադրվում են հոբելյարին նրա գործերի տպագրությունը ապահովելու կամ հետագա գործունեությանը նպաստելու համար։ Չոպանյանը, որ միշտ գտնվել է կարիքի մեջ, այդ հոբելյանից շատ չնչին նյութական հատույցներ ունեցավ։ Ասես կռահելով նման ելքը, անվանի գերասան Հովհաննես Աբելյանը, որ այդ ժամանակ Չիկագոյում էր, գրում է Չոպանյանին, թե ինքը ցանկանում էր մի հարուստ նվեր ուղարկել այդ «հարուստ երկրից», բայց «հայ գեղարվեստագետը,— շարունակում է նա,— այստեղ նույնքան աղքատ է, որքան ամեն մի գործավոր։ Ուստի ուղարկում եմ քեզ իմ բարեմաղթություններից և բուռն սիրուց հյուսված մի պսակ, որ զարդարե քո քրանաթոր ճակատդ։ Գիտեմ՝ իմ ուղարկածը փոր չի կշտացնիլ, բայց գոնե եռանդ կավելացնի»[3]։

Չոպանյանը իրոք որ նոր եռանդով անցավ իր աշխատանքներին։ 1925 թվականի գարնանը նա մեկնեց Լոնդոն և Մանչեստր, ունեցավ հայ մշակույթին և Սովետական Հայաստանին նվիրված հրապարակային ելույթներ, ղեկավարեց հայագիտական սրպատումներով։ Նոյեմբերի 21-ին Բրյուսելում, իսկ 25-ին Անվերսում հանդես եկավ բանախոսություններով՝ նվիրված հայ դրականությանը, որոնց ժամանակ անդրադարձավ նաև Սովետական Հայաստանի հնգամյա գոյությանը, քաղաքական իրավիճակին, շինարարական եռուզեռին ու մշակութային վերելքին։ Նույն թվականին լույս ընծայեց իր «Հայրենի քնար» բանաստեղծությունների ու արձակ գործերի ժողովածուն։ Գրչի և եռանդի ամբողջ ուժով պրոպագանդեց ու պաշտպանեց Ֆրիտյոֆ Նան-

---

[1] *ԳԱՐ, ԱՉՖ, I բաժին, № 2766։*

[2] "Journal officiel de la République Française", 31 juillet, 1925.

[3] *ԳԱՐ, ԱՉՖ, I բաժին, №22։*

սենի՝ Սովետական Հայաստանին և հայ ժողովրդին ի նպաստ գործունեությունը, այդ մասին հոդվածներ տպագրելով նաև ֆրանսատառ մամուլում («Revue de Genève»-ի 1925 թ. սեպտեմբերյան համարում)։

1926 թվականին Չոպանյանը հրատարակեց «Մեր գրականությունը», «Հատընտիր էջեր քուչակյան տաղաշարքեն», «Հայ ազգը մեղավոր չէ» գրքերը, ինչպես նաև «Տղու հոգիներ» հատորը՝ ֆրանսերեն[1]։

Հատկապես եռանդուն գործունեություն ծավալեց Չոպանյանը իր ամերիկյան ուղևորության ընթացքում։ Նա ԱՄՆ հասավ 1926 թ. հոկտեմբերի 2-ին և Փարիզ վերադարձավ 1927-ի հունիսի 2-ին։ Ինն ամիսների ընթացքում այցելեց արևելյան և արևմտյան ծովափերի ու կենտրոնական մասերի գրեթե բոլոր հայկական փոքր ու մեծ գաղթօջախները, եղավ ամերիկյան մի շարք խոշորագույն քաղաքներում, հանդիպումներ ունեցավ ու դասախոսություններ կարդաց նաև հայկական շրջանակներից դուրս։

Չոպանյանի ամերիկյան շրջագայությունը կազմակերպվել էր ռամկավար կուսակցության կողմից և հետապնդում էր հետևյալ նպատակները. 1) պրոպագանդել նորաստեղծ հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, այդ հիման վրա ամրապնդել ամերիկա-հայ գաղութի հավատը հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, 2) ղորացնել ռամկավար կուսակցության թուլացած կազմակերպությունները ԱՄՆ-ում, նյութական միջոցներ հայթայթել կուսակցության համար[2], 3) բարձրացնել հայ ժողովրդի վարկը, պրոպագանդել նրա մշակութային արժեքները ամերիկացիների շրջանում[3]։

Հայ ժողովրդի նորաստեղծ պետության և նրա մշակութային հին ու նոր արժեքների պրոպագանդը Չոպանյանը տանում է գերազանց։ Առաջին իսկ հրապարակային ճառում, հոկտեմբերի 12-ին Բոստոնի Լևնոքս հյուրանոցում, ճաշկերույթի ժամանակ, նա հայտարարում է. «Ես կը պարմանամ, որ դեռ կան հայեր, որ

---

[1] Archag Tchobanian. La Soeurette lointaine et autre. Histoires d'enfants. Paris. 1926.

[2] Ռամկավարների փարիզյան կենտրոնը ակնկալում էր առնվազն 8000 դոլար, որ պետք է հանգանակվեր ԱՄՆ-ում ի նպաստ կուսակցության, Չոպանյանի շրջագայության առիթով (ԳԱՔ, ԱՀՅ, I բաժին, №№ 1627, 1646)։

[3] «Պայքար» 1927, թ. 22։

վհատություն ու տարակուսանք կը հայտնեն Հայաստանի պետության նկատմամբ։ Երբ աշխարհահռչակ ծերունի օտար քաղաքական գեմք մը՝ հանձին Նանսենի, կերթա Հայաստան և տեսնելով հոն կատարվող շինարարական հսկա աշխատանքները, հիացումով կը խոսի հայոց մասին Ազգերու դաշնակցության առջև, մե՞նք է, որ թերահավատ պիտի ըլլանք մենք մեզի հանդեպ։ Հայրենասերի մը պարտքն է սիրել ու ծառայել իր հայրենիքին, ինչ ռեժիմի տակ ալ գտնվի ան»[1]։

Ամերիկահայ գաղութում Չոպանյանը տեսնում է ազգային ոգեղենից շփոթված և շվարած երևույթ ու ջանում է ցրել այն, հույս ներշնչել մարդկանց, նրանց հայացքը դարձնելով դեպի մեկ ուրիշ փարոսը՝ Սովետական Հայաստանը. «Մի՞թե ասկա ավելի ամուր կռվան մը չէ ազգապահպանական խանդավառության»,— հայտարարում է նա «Պայքար» թերթին տված հարցազրույցի մեջ[2]։ Բոստոնում, հոկտեմբերի 24-ին, հրապարակային մեծ ժողովում բանախոսելիս, Չոպանյանը այն միտքն է հայտնում, թե վերջին մի քանի հարյուր տարվա պատմության մեջ նեղակացությունը, երբ կա Սովետական Հայաստանի հանրապետությունը, ամենահարուստ ժամանակն է։ Ամբողջ բանախոսությունը նվիրված էր նորաստեղծ հայրենիքի զարգացության, նրա կառավարության ջանքերի գրվատանքին[3]։

Հաջորդում է բանախոսությունների ամբողջական շարք Նյուարքում, Նյու Յորքում, Փրավիդենսում, Ուսթերում, Ուայթինավիլում, Լորենսում, Ըլըսիում, Լինում, Բրոյում, Նյու Բրիթեյնում, Ֆրեզնոյում, Սան Ֆրանցիսկոյում, Չիկագոյում, Դեթրոյտում, Քլիվլենդում, Ֆիլադելֆիայում, Վաշինգտոնում, Ռիչմոնդում և այլն։ Ամենուրեք ունկնդիրներին ներկայացնում է Սովետական Հայաստանը, հարցին մոտենալով տարբեր կողմերից։ «Կար ատեն մը,— հայտարարում է նա Ուսթերում,— որ աչքերը օտարներու հառած էինք, մեր փրկությունն անոնցմե կը հուսայինք, անոնց դռներուն վրա կը փնտրեինք և, սակայն, ատենը եկած է, որ ինքնամփոփվինք, մեր ուժերուն տերն ըլլանք, մեր Հայրենիքին կառչինք...»։ Չոպանյանը կոչ է անում հայ ժողովրդին՝

---

[1] «Պայքար», 1926, թիվ 240։

[2] Նույն տեղում, թ. 247։

[3] Նույն տեղում, թ. 261։

կանգնել Հայաստանի կառավարության կողքին, աջակցել նրա շինարարական գործունեությանը[1]։

Իսկ Ֆրեզնոյում 2000-ից ավելի ունկնդիրներին նա պարզաբանում է. «Ներկայիս իսկ հաուվածի մը (դաշնակցության— Կ. Դ.) սխալ քայլերը և արկածախնդրական ձեռնարկները ի վնաս մեր վերածնող հայրենիքին,— գրում է «Արև»-ի թղթակիցը,— կոչ ըրավ հայ ժողովրդին, որ անցյալի դառն փորձառություններն օգտվելով, իր ուժն ու ուշադրությունը դարձնեն մեր նորակազմ հայրենիքի վրա»[2]։

Չոպանյանի շրջագայությունը լայնորեն լուսաբանվում է ոչ միայն հայկական, այլև տեղական անգլիատառ մամուլում։ Բոստոնի «Քրիսչըն Մոնիթորը» հոկտեմբերի 12-ին հրապարակում է հարցազրույց Չոպանյանի հետ։ Հարցազրույց են տպագրում նաև Փրավիդենսի «Իվնինգ բուլետինը» (նոյեմբերի 12-ին) և «Փրավիդենս Ջըրնըլը»։ Չոպանյանի մասին հոդված է երևում «Ուստր Դեյլի Թելեգրաֆի» նոյեմբերի 17-ի համարում։ Նույն թերթը հինգ օր անց տպագրում է Չոպանյանի հրապարակային բանախոսության տեքստը, դիմանկարով։ 1927 թվականի ապրիլի 21-ի համարում «Դիտորյթ նյուզը» տպագրում է Չոպանյանի դիմանկարը և հարցազրույց նրա հետ, որի ժամանակ Չոպանյանը ներկայացնում է «այժմյան մեր փոքրիկ Հայաստանի մշակութային առաջադիմական վիճակն ու ապահով կերպով ընդհանուր բարգավաճումը՝ համագործակցական օգնությամբ Խորհրդային Միության»[3]։ Նույն հարցազրույցում, դիմելով ամերիկացի թղթակցին, Չոպանյանը հետևյալ հատկանշական խոսքերն է ասում. «Դուք կրնաք սովիեթներու մասին խորհիլ այն, ինչ որ կուզեք։ Մեր ստծած ղեզումները հանդեպ սովիեթներու երախտապիտական են, և երբ «մեր»-ը կըսեմ, ըսել կուզեմ ամբողջ հայ ազգինը»[4]։

Մի շարք վայրերում Չոպանյանը հայերեն ու ֆրանսերեն բանախոսություններ է կարդում հայ հին ու նոր մշակույթի մասին։ 1927 թ. հունվարի 18-ին դասախոսում է Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում՝ «Հայ բանաստեղծությունը և արվես-

---

[1] «Պայքար», 1926, թ. 285։

[2] «Արև», 1927, թիվ 2501։

[3] «Մնձն Տիթրոյթ», 1927, թիվ 12։

[4] «Պայքար», 1927, թիվ 99։

տը» թեմայով։ Ջորս օր անց Բոստոնում ամերիկահայ ուսանողության միության մասնաճյուղի հրավերով խոսում է «Հայ արգիծաբանությունը և Երվանդ Օտյանի գործերը» թեմայով։ Իսկ հունվարի 25-ին Բրաունի համալսարանում կրկնում է իր «Հայ բանաստեղծությունը և արվեստը» դասախոսությունը։ Հայ մշակույթի զանազան հարցերի մասին բանախոսություններ է անում Քեմբրիջում, Բոստոնում և այլուր։

Ջոպանյանի ամերիկյան շրջագայության արդյունավետության մասին վկայում է ժամանակի սիյուրքահայ մամուլը։ Բավարարվենք միայն մեկ քաղվածքով։ Կահիրեի «Արևը» տպագրում է իր ամերիկյան տեղեկատուի թղթակցությունը, որի մեջ կարդում ենք. «Ջոպանյանի ներկայությունը ազգային արթնության մը տեղի ունեցավ ամեն տեղ... Անոր երևումը բեմերուն վրա կողջունվի որոտընդոստ ծափահարություններով և հաճախ հոսքնկայս... Ամեն տեղ փնտրված է ան՝ ուսանողական, գեղարվեստական, հայրենակցական և այլ երեկույթներու մեջ խոսելու համար։

...Օտար շրջանակներն ալ ներս գտած է արդեն հմայքը մեր բանաստեղծին։ Ամերիկյան մամուլն «Նյու Յորք Թայմզ», «Փրավիդենս Ջըրնըլ», «Քրիսչըն Սայընս Մոնիթոր», «Ոսթր Բեյլգրաֆ» և այլ սյունակներ նվիրեցին ներկա Հայաստանի մասին անոր ըրած լավատես նկատողությանց... Հայաստանի կառավարությունը հաղիվ թե ուզեր ունենալ Հայաստանի գոյության ու պետականության ավելի հավատացյալ ջատագով մը՝ քան պ. Ջոպանյան, որ ամենաբեր առաքյալի մը եռանդն ունի, անխոնջ ու անսպառ»[1]։

Փարիզում, հուլիսի 14-ին, Սոսիեթե Սավանթի սրահում հրապարակային դասախոսության մեջ Ջոպանյանն ինքն է հանրադումարի բերում իր ամերիկյան շրջագայությունը, լավատեսորեն արտահայտվելով սիյուրքահայության գերակշռող մեծամասնության Սովետական Հայրենիքին շուրջ համախմբելու անհրաժեշտության և հնարավորության մասին։ Ավելի ուշ, տարեվերջին, Ջոպանյանը ձեռնարկում է բանախոսություններ Ֆրանսիայի զանազան քաղաքներում՝ Լիոնում, Դևսինում, Վիենում և այլն, հիմնականում շոշափելով այն թեմաները, որոնցով հանդես էր գալիս ԱՄՆ-ում։ 1927 թվականի դեկտեմբերի 7-ին Փա-

[1] «Արև», 1927, թիվ 2411։

բիզում կազմակերպվում է Սովետական Հայաստանի յոթերորդ տարեդարձին նվիրված հրապարակային երեկույթ, որտեղ բանախոսում է Չոպանյանը: Նույն առիթներով նա հանդես է գալիս նաև հետագա տարիներին:

1928 թվականին Չոպանյանը բրոնաջան աշխատանք է տանում, հրատարակության պատրաստելով միանգամից չորս տուվար հատորներ՝ «Վարդենիքի» երրորդ, «Դևմքերի» երկրորդ հատորները և Բումմաս Բերդյանի բանաստեղծությունների ամբողջական ժողովածուի երկու հատորները, որոնք բոլորն էլ լույս են տեսնում 1929 թվականին: Այնուամենայնիվ, նա ժամանակ է գտնում ոչ միայն մամուլին սիստեմատիկաբար աշխատակցելու, այլ նաև տարբեր քաղաքներում ու տարբեր առիթներով բանախոսություններ կարդալու: Հիշարժան են 1928 թ. մայիսի 1-ին Մարսելում կարդացած «Հայ ժողովրդի պատմական դերի, ազգային բանաստեղծության և արվեստի մասին» բանախոսությունը, որ կազմակերպվել էր Ալյանս Ֆրանսեզի հրավերով, և 1929 թ. հունվարին Բրյուսելում՝ հայերեն, ու Անվերսում՝ ֆրանսերեն դասախոսությունը, «Հայ ժողովրդի ու հայ գրականության ներկա կացությունը» թեմայով: Բացի այդ Չոպանյանը կատարում է նաև մի քանի արձակ թարգմանություններ:

Եվ, վերջապես, 1929 թվականին, Չոպանյանը գոհացում է տալիս իր և մտավորական որոշակի շրջանակների տարիների բաղձանքին: Նա վերսկսում է «Անահիտ» հանդեսի հրատարակությունը:

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գրականության և արվեստի նոր վերելքի համար

Հայաստանի նորաստեղծ սովետական հանրապետության և գաղթաշխարհի հայության զուգահեռ գոյությունը XX դարի առաջին քառորդի բախտորոշ դեպքերի պատմական արդյունքն էր: Հայ մշակույթի ընդհանրապես, գրականության և արվեստի, մանավորապես, վիճակի և զարգացման հետագա ուղիների հարցը ժողովրդի երկու հատվածների տարանջատ գոյության պայմաններում Արշակ Չոպանյանին հուզող ամենաէական հարցերից մեկն էր: Բազմաթիվ առիթներով Չոպանյանը մանրա-

կրկին քննության է ենթարկում այդ խնդիրը, ընդհանրացումներ ու թևլադրություններ է անում:

Քանանյան Թևականների հայ մշակույթի վիճակը գնահատելիս, ըստ նրա, անհրաժեշտ էր մոտենալ պատմական չափանիշներով, հաշվի առնել ժողովրդի ամած նյութական և մարդկային (այդ թվում բազմաթիվ մտավորականների) կորուստները: Ահա հենց այդ չափանիշներից ելնելով, նա չէր կարող համաձայնել այն կարծիքների հետ, որոնք միայն բացասական, ամուլ վիճակ էին տեսնում սփյուռքահայ մշակութային երևնակամարում: Հին սերնդի մի շարք վերապրող գրողաբվեստագետների կողքին (Օտյան, Թեքեյան, Նազարյան և այլն) հանդես էին գալիս նորերը (Համաստեղ, Մ. Զարիֆյան, Կ. Զարյան և այլն), որոնց մեջ Զոպանյանը տեսնում էր գալիք ծաղկման ծիլերը:

Սփյուռքահայ գրականության ծաղկումը, սակայն, պայմանավորված էր մի հիմնական գրավականով: Զոպանյանի խորին համոզումով այդ գրավականը Սովետական Հայաստանի քաղաքական գոյությունն էր: «Արտասահմանի մեջ, երևի, քաղաքական խոշոր ծրագրներու կապված երազներն ու ձիգերը գրաված էին մտավոր ուժերուն շատերը, հետո, հուսախաբությունները, աղետները, ցրվումը, շվարումը լքում հատաջ բերին մտքերուն մեջ, դանդաղեցուցին գրական գործունեությունը և եթե այս վերջին տարիներուն մեջ համեմատաբար ավելի մղում սաացած է այդ գործունեությունը, մղում, որ հետզհետե պիտի զորանա, պատճառը այն է, որ արտասահմանի հայոց գեթ մեծամասնության միտքը, շարք մը բարեփոխումներն հետո, այլևս դադած է կռվան մը, այն է՝ ինքնավար փոքրիկ Հայաստանի մը գոյության սփոփիչ դաղափարը և անոր մեջ հայրենիք տունը վերաշինող ժողովրդին սխրալի ճիգին հրճվեցուցիչ տեսիլը, այդ ապրող հայրենիքին զարգացման ու զորացման հույսը, անոր պահպանման, բարգավաճման ու ընդարձակման օգնելու պարտականության զգացումը. կռթնած այդ էական կռվանին, արտասահմանի հայ գրականությունը այսուհետև հետզհետե ավելի հզոր ու կյանքոտ գործերով պիտի շարունակե իր բնաշրջությունը»[1]:

Հայ ազգային մշակույթի և զարգացման հեռանկարներ

---

[1] Աւրշակ Զոպանեան: *Մեր գրականությունը*, Փարիզ, 1926, էջ 34—35:

անակնկալից առնջված պատմական նոր կացության դխաւոր հատկանիշը Զոպանյանը տեսնում էր Սովետական Հայաստանի գոյության մեջ, որը հիմնված էր Սովետական Միության ընդհանուր ապահովության և «խորհրդային աշխարհը դեկավարող քաղաքական լայնոդի սկզբունքների վրա»: Այդ իրադրության մեջ,— ասում էր նա,— «մեր ազգային մշակույթին կյանքն ու զարգացումը կրնանք այլևս ամբողջն երաշխավորված նկատել»[1]:

Դարձյալ Զոպանյանի համոզումով հայ մտավոր կյանքի կենտրոնը այլևս Սովետական Հայաստանում պետք է լիներ, ու վաղ թե ուշ այնտեղ պետք է կենտրոնանային ժողովրդի բոլոր մտավոր ուժերը: Բայց, քանի որ այդ գործը անմիջապես իրականացնել հնարավոր չէր, քանի դեռ պետի պահպանվեր սփյուռքը, ուրեմն որոշ ժամանակի համար անհրաժեշտություն էր «հայ գրականության արտասահմանյան բաժնի գոյությունը»:

Ինքը՝ Զոպանյանը, առավելապես նպաստն է բերում սփյուռքում հայ մշակույթի խթանման ու զարգացման գործին: Նա հրատարակում ու վերահրատարակում է ոչ միայն սեփական գրչի արտադրանքները, այլև մեր գրականության հին ու նոր շատ նմուշներ, համապատասխան դիտական առաջաբաններով ու մեկնաբանություններով: Ուշի ուշով հետևում է գրականության և արվեստի նորություններին, սիստեմատիկաբար գրախոսում դրանք «Քրոնիկ», «Նոր հրատարակություններ», «Մեր արվեստագիրները» հոդվածաշարերում կամ առանձին ծավալուն ուսումնասիրություններում: Գր. Մխալյան, Թ. Ալպատյան, Շ. Ադամյան, Մ. Քնապսպճյան, Ն. Սարաֆյան, Փուշման, Համաստեղ, Մ. Զարիֆյան, Ա. Ֆնթվաճյան և շատ ուրիշներ գնահատվում են արվեստի և գրականության հեղինակավոր գիտակի ձևքով:

Բոլոր այդ հոդվածներում Զոպանյանը մտահոգում է հարցերի և դեղարվեստական երկերի քննության որպես ռեալիստ: Համաստեղի տաղանդի առաջին գնահատողներից մեկն է նա, և անմիջապես մատնանշել է անում հատկապես պրոզի ռեալիզմը: Համաստեղի ստեղծագործության մեջ, շեշտում է Զոպանյանը, դյուրն ինքն իրեն է նրպում, հեղինակը «մտած է իր նկարած տիպարներուն մորթին մեջ, խառնված է անոնց. յուրաքանչյուր պատմվածքի մեջ, անոր դերակատարները միայն կը տեսնենք, որ

---

[1] Արշակ Զոպանեան, *Մեր գրականությունը*, Փարիզ, 1926, էջ 8:

կը շարժին, կը խոսին, կը գործեն՝ իրենց ուրույն հոգեբանության համեմատ. հեղինակը թաքուն է անոնց մեջ, անոնց շարժիչ ուժն է»[1]: Այդ բնավորությունները, նշում է Չոպանյանը, չեն լուսանկարված տեսածն ընդօրինակողի համբերատար և չոր արվեստով: Նրանք գրքի էջերից դուրս են ցատկում և ապրում իրենց ուրույն կյանքով: «Համաստեղ,— շարունակում է Չոպանյանը,— Շիրվանզադեն ի վեր մեր մեջ երևցած ամենեն ճշմարիտ ու կատարյալ իրապաշտն է»[2]: Խիստ բնութագրական է Չոպանյանի եզրակացությունը: Ըստ նրա երիտասարդ գրողը կոչված է նոր բարձունքներ նվաճելու, բայց այդ անելու համար նա պետք է կապվի իր մայր հողի հետ, պիտի Հայաստան գնա. «այդ հայ հողի ծաղիկներով հորինված նրանգապնակն ունեցող բանկագին արվեստագետը պետք չէ ձգել, որ Ամերիկայի գործարաններուն մուխին մեջ տժգունի, Հայաստան է իր տեղը»[3]:

Բնութագրական կոչեցինք այս միտքը, որովհետև դա Չոպանյանի խորին համոզումն էր, թե յուրաքանչյուր տաղանդավոր հայ գրող և արվեստագետ պարտավոր է մեկնել հայրենիք, ավյուն ստանալ նրանից և օգնել նրա մշակույթի ծաղկման գործին: Չոպանյանը առաջինն էր, որ սիրով ողջունեց Շիրվանզադեի ու Իսահակյանի՝ հայրենիք մեկնելու որոշումը: Փանոս Թերլեմեզյանի՝ Սովետական Հայաստան մեկնումի առթիվ, նա «Ապագա» թերթում գրեց. «Ան կարոտն զգաց հայրենի միջավայրին, հայտնեց իր բուռն փափաքը՝ երթալ խորհ. Հայաստան և հոն իր կյանքին վերջին տարիները նվիրել հայ ազատ հողի վրա հայ արվեստի զարգացման: Հոն էր, արդարև, Թերլեմեզյանին տեղը, հոն է, որ ան Սարյաններու, Թադևոսյաններու, Քոչարյաններու կողքին պիտի կարենա մասնակցիլ հայ աղգային նոր գեղարվեստ' մը երկնման թանկագին գործին... իր հավատքն ու սերը վերշինվող Հայաստանին հանդեպ այնքան մեծ են, որքան իր պ չտումը արվեստին»[4]:

Նորաստեղծ հայրենիքը՝ նկատելի թե արտաքնապես անդիտելի, առկա է Չոպանյանի բոլոր հոդվածների մեջ ըստ էության:

---

[1] Արշակ Չոպանեան, Դեմքեր, Փարիզ, 1929, էջ 154:

[2] Նույն տեղում, էջ 156:

[3] Նույն տեղում, էջ 159: Այս հոդվածը գրվել է 1924 թվ., սկզբնապես տպագրվել «Պայքարի» 1924, թթ. 251—252, 254—257-ում:

[4] «Ապագա», 1928, թ. 37:

Ասես ոչ մի կապ չկա, օրինակ, Հովսեփ Փուշմանի փարիզյան ցուցահանդեսի և Սովետական Հայաստանի միջև: Զոպանյանը հմտորեն և խոր դիտակցությամբ վերլուծում է Փուշմանի արվեստը: «Ոչինչ «անշունչ» է այս արվեստագետին համար, որ դիտե թափանցել արտաքին երևույթներուն ներս ու հասնիլ մինչև ոպին, որ ամեն տեղ, ամեն բանի մեջ, հաղար ձևով, բայց միշտ շարժուն ու արտիտուն կապրի»[1], որի մոտ կյանքով է շնչում նույնիսկ «մեռած նյութը» (նատյուրմորտը),— գրում է Զոպանյանը: Բայց ինչ-որ տեղ Զոպանյանը բավարարված չի զգում, երբ զմայլված դիտում է ցուցահանդեսը: Մտովի նա կամուրջ է նետում դեպի հայրենիք, բաղձանք է ծնվում, որպեսզի հայազգի մեծ արվեստագետին ճանաչեն նաև իր հայրենիքում: «Երանի թե գոնվեր... մեկենաս մը, որ Փուշմանի մեկ գեղեցիկ գործը գներ ու Հայաստանի ազգային մուզեոնին նվիրեր»,— սրանք ծավալուն հոդվածի վերջին բառերն են[2]:

***

Հայ ազգային մշակույթի զարգացումը Զոպանյանը անվերապահորեն կապում է մայր հողի վրա ստեղծված սովետական պետականության հետ: Նրա քաղաքական հայացքների համար միանգամայն բնական է, որ Սովետական Հայաստանում ստեղծված «օրհնելի պայմաններից» ելնելով, հայ մշակույթի ապագան տեսնում է լուսաշող ու «շքեղ բարգավաճման սահմանված»[3]:

Այդ պայմանների ամբողջության մեջ մտնում էին նաև մշակույթի զարգացման ուղղությամբ Հայաստանի կառավարության ձեռնարկած միջոցառումները: «Այն մեծ կարևորությունը, զոր հայ կառավարությունը կուտա մտավոր կյանքի Հայաստանի մեջ լույջ ու մեթոդիկ զարգացման, ղեհաբերությունները, զոր հանձն կառնե՝ հակառակ պետական բյուջեին անձկության՝ հայ գրականությունը նորանոր հրատարակություններով ճոխացնելու, ինչպես և ազգային համալսարան, մատենադարան, թատրոն ու քոնսերվատոր հիմնելու համար, մեր բովանդակ ազգին երախ-

---

[1] «Արև», 1923, թ. 31:

[2] Ս. Զոպանեան, «Դեմքեր», Փարիզ, 1929, էջ 190:

[3] Ս. Զոպանեան, Մեր գրականությունը, Փարիզ, 1926, էջ 9:

տապիտության արժանի կը կացուցանեն վինք»[1],— գրում է նա: Չոպանյանը առանձին ջերմությամբ ընդգծում է պետական թատրոնի ստեղծման փաստը և նրա նշանակությունը որպես վերածնված հայրենիքի բարոյական կյանքի այուններից մեկի[2]:

Այն ամենը, ինչ անում է Հայաստանի կառավարությունը ազգային մշակույթի զարգացման համար, Չոպանյանը դնահատում է որպես նախընթացը չունեցող խոշոր նորություն հասարակության կյանքում: Վճռականությամբ պաշտպանելով Սովետական Հայաստանի կառավարության մշակութային գործունեությունը, Չոպանյանը նույնքան վճռականությամբ հակահարված է տալիս բոլոր նրանց, ովքեր քաղաքական հաշիվներից դրդված զրպարտում են հայրենի իրականությունը, մատնացույց լուրեր տարածում ազգային լեզվի ու մշակույթի «կործանման» մասին: Երևանից ստացված «նոր ուղի» ամսագրի վերլուծության առիթով Չոպանյանը մեկ անգամ ևս համոզիչ ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանի կառավարությունը միայն խրախուսում և օգնում է ազգային մշակույթի զարգացմանը: Հետաքրքրական է նրա տեսակետը ազգային մշակույթների նկատմամբ Սովետական Միության կառավարության քաղաքականության վերաբերյալ: «Սթե խորհ. կառավարությունները ուզին ազգային մշակույթները ջնջել, լեզուն խաթարելով...— գրում է նա,— ժամանակ կորանցնելու պետք չունեին... ազգային բարբառներու տեղ ռուսերենը կընդունեին իբր խորհրդային ընդհանուր լեզու. ճիշտ հակառակը կընեն և այդ ճիշտ հակառակն ընելնին, ազգային բարբառը յուրաքանչյուր ցեղին հայրենիքին մեջ տիրական ու պաշտոնական լեզու հռչակելնին՝ էական իրողություն մըն է, որուն ազգօգուտ նշանակությունը չըմբռնել և չդնահատել ամոթ է արտասահմանյան որևէ ճշմարիտ ազգասերի համար»[3]:

Քանակական թվականներին շատ թույլ էր զարգացած հաղորդակցությունը Հայաստանի և ամբողջի միջև: Երկրում հրատարակված գրականությունը և մամուլը ոչ միշտ էին հասնում արտասահման: Չոպանյանը, այնուամենայնիվ, հնարավորության սահմաններում հետևում էր Սովետական Հայաստանի գրական-գեղարվեստական կյանքին, հրապարակով, կամ նամակներում՝

---

[1] «Արև», 1924, թ. 49:

[2] «Ասպագա», 1924, թ. 21:

[3] «Ասպագա», 1929, թ. 33:

հասցնապրված, մասնավորապես, Պ. Մակինցյանին և Շիրվանզադեին, արտահայտվում այդ ասպարեզի նորությունների մասին: Նա ընթերցողների ուշադրությունն է հրավիրում Պ. Մակինցյանի կողմից Պոլսում հրատարակված «Վահան Տերյանի երկերի ժողովածուի» վրա, համապատասխան վերլուծությամբ քննարկելով Տերյանի ստեղծագործությունը: Գրախոսում է «Նորք» հանդեսը, անդրադառնում դերասան Միքայել Մանվելյանի հոբելյանին, արտահայտվում Շուշանիկ Կուրղինյանի մահվան առթիվ, գրախոսում է Սուրխաբյանի «Հին հունական գրականություն» և «Գրական զոհարներ» աշխատությունները և այլն:

Չոպանյան գրականագետին առավելապես բնութագրող աշխատությունները, սակայն, նրա հոդվածներն են Ե. Չարենցի վերաբերյալ: Չոպանյանը հանդիպում է հեղափոխության ծնունդ մեծ բանաստեղծին, որ իր հետ բերում էր հեղափոխական փոթորկալից շունչ և նոր բովանդակություն, ու չի վարանում ընդունելու և ողջունելու նրան: Չարենցի ասպարեզ գալը նա գնահատում է որպես հուսադրիչ երևույթ ամբողջ ազգի ճակատագրի տեսակետից: Դեռ 1923 թվականին Չոպանյանը գրում է. «Չարենցի երևումը իբր նոր աստղ գրական երկինքին մեջ... մեր ազգին վրա խուժող ֆնդղիչ, սպառիչ, քանդիչ արհավիրքներեն հետո, ամենեն մխիթարական դեպքերեն է ներկա րոպեիս մեր ցեղին անկորուստ կենսունակության և քաղաքակրթական բարձր արժեքին վրա մեր հավատքը խորապես զորացնող»[1]:

Չարենցի գնահատման մեջ Չոպանյանը ելնում է «Ռուսաստանն ու Կովկասը հեղաշրջող ու արմատական վերանորոգման մը ճամփուն մեջ գնող պոլշևիկ հեղափոխության փաստից: Եվ քանի որ բանաստեղծի գործերը «ամենեն զորեղ ու անձնադրոշմ արտահայտություններն են Չարենցի, էջեր՝ ուր ամեն ինչ, մտածում ու ձև, ստեղծագործությունն է հեղինակին, մարդկային պատմության արտասովոր շրջանի մը ուղղակի ներգործության տակ երևված՝ այդ մեծ շրջանին հոգին արտահայտելու համար ճարկ եղած ուժն ու շունչն ունեցող բերդողի մը կողմե, որ խառնվածքի հաղվագյուտ բարդությամբ մը Հայենի մը քնարական արամադրությունը կը միացնի վերհարնի մը դյուցազներգական ամեհի ավյունին», քանի որ Չարենցը «բարձր մշակույթի բանաստեղծ մըն է, արվեստագետ բերդող մը», Չոպանյանը նրան հա-

[1] «Ապագա», 1923, թ. 21:

մարում է «հայոց մեծագույն բանաստեղծներեն մին» և «մին ամենեն ինքնատիպ ու բազմազան բանաստեղծներեն, որ որևէ ազգի մեջ երևան եկած ըլլան»[1]:

Մենք ընդգծեցինք վերի տողերը, որոնք պարունակում են հեղինակի համակրանքը այդ «մեծ շրջանի» և նրա «հոգին արտահայտող» բանաստեղծի համար: Եվ թեպետ Չոպանյանը վերապահություն է անում, թե ինքը կարող է համամիտ չլինել Չարենցի աշխարհայացքի և գեղեցկագիտության ինչ-ինչ կետերին, միևնույն ժամանակ դրականապես ընդգծում է այն հանգամանքը, որ Չարենցը հարից հեղափոխությանը և դարձավ այդ «վերանորոգչական մեծ շարժման հայ երգիչը», շեշտում է սքանչացումը բանաստեղծի գործով, որը արտացոլում է «նորիկա պատմական արտասովոր ու բեղուն րոպեն, որ ամբողջ աշխարհի համար լավագույն շրջանի մը նախապատրաստություն է (ընդգծումն իմն է— Կ. Դ.), իսկ մեր ցեղին համար՝ հայրենի հողի վրա՝ արդեն կընծայի նորիկա մը իրական վերածնության»[2]:

Չոպանյանը համոզիչ վերլուծում է Չարենցի գործերը: Հետաքրքրական է նրա կարծիքը «Ամբոխները խելագարված» պոեմի մասին: Դա սոցիալական արդարության հավատի և կռվի մեծ ու անմահ քերթվածն է, ասում է Չոպանյանը, որը ուղղակի բխում է կյանքից, հրդեհվում իրականության ջերմությամբ և իր գործի արդարության նկատմամբ հավատի ջերմությամբ: Բարձր դնահատականներ է տալիս Չոպանյանը նաև Չարենցի մյուս ստեղծագործություններին: «Ես իմ անուշ Հայաստանին», օրինակ, նա համարում է «մեծ տաղանդով լիցուն», «անկորուստ մնալու սահմանված», «հոյակապ տաղ, որ հայ գրականության ծաղկաքաղներուն հավիտենական զարդերեն մին պիտի ըլլա»[3]:

Միանգամայն իրավացի է էդ. Ջրբաշյանը՝ Չոպանյանի այս հոդվածը համարելով Չարենցի մասին գրված առաջին և լավագույն դնահատականներից մեկը[4]:

Չոպանյանն անկեղծ է թե իր սքանչացումի և թե «ինչ-ինչ կետերում» Չարենցի աշխարհայացքն ու գեղեցկագիտական

---

[1] «Ապագա», 1924, թիվ 16:

[2] Նույն տեղում, թ. 17:

[3] «Ապագա», 1924, թիվ 16:

[4] էդ. Ջրբաշյան, Արշակ Չոպանյանի հոդվածը Եղիշե Չարենցի մասին: «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3/33/, էջ 135:

ըմբռնումները չբաժանելու մեջ: Խոսքը, այստեղ, իհարկե, մասնավորապես Չարենցին չի վերաբերում: Չոպանյանը չի բաժանում գրականության և արվեստի մարքսիստական ըմբռնումը, համակապես դասակարգայնության ու կուսակցականության կատեգորիան: 1927 թվականի փետրվարին Բոստոնում ունեցած «Կուսակցություն ու գրականություն» թեմայով բանախոսության[1] մեջ, ինչպես նաև 1929 թվականին Փարիզում «Հարդպող» գրական միության կազմակերպած «Արվեստը դասակարգայի՞ն թե ազատասակարգային պետք է ըլլա» թեմայով հրապարակային բանավեճում[2], որտեղ ընդդիմախոսի դերում հանդես էին գալիս Դրաստամատ Սիմոնյանը և Տիգրան Չալխնը, Ա. Չոպանյանը գարգացնում է արվեստի ու գրականության անդասակարգայնության, անկուսակցականության տեսությունը: Սուրխաթյանի «Հին հունական գրականություն» աշխատության գրախոսության մեջ էլ Չոպանյանը վիճում է հեղինակի հետ՝ ձգտելով նվազեցնել դասակարգային պայքարի դերը հասարակական գիտակցության ձևերի գարգացման հարցում[3]:

Տեսության ոլորտում գրականության կուսակցականությունից Չոպանյանի սահմանազատումը նորություն չէր նրա էսթետիկական հայացքներում: Ըստ էության դա նույն «ամենայն անկախության», «ոչ մեկ դիջում հանրային շարժումներուն, հավաքական հակումներուն կամ շահերուն» տեսության էվոլյուցիան էր, տեսություն, որը նա որոշակիորեն ձևակերպել էր իր «Քերթվածներ» (1908) հատորի նախաբանում: Մենք արդեն առիթ ունեցանք տեսնելու, որ գրական պրակտիկայում Չոպանյանը չի հետևում կամ գրեթե չի հետևում իր տեսական դրույթների այդ կետին և դեռ առիթ կունենանք դիտելու այդ երևույթը նրա «Հրաշք» բառերախաղի օրինակով: Առանձին դեպքերում նույնիսկ տեսության մեջ նա տուրք էր տալիս արվեստի ու գրականության միտումնավորության դրույթին: Վերհիշենք Գեորգ Բրանդեսի պատվին տրված ճաշկերույթում նրա արտասանած ճառի հետևյալ հատվածը. «Ընկերական պայմաններու բարելավումը... ամբողջապես ազատագրված մարդկության մը հիմնարկումը՝ դերապույն նպատակն է ճշմարիտ Արվեստին ու անոր

---

[1] «Պայքար», 1927, թ. 39:

[2] «Ապագա», 1929, թ. 44

[3] «Պայքար», 1924, թ. 130:

ամենեն լիակատար ու ամենեն վեհ փիլիսոփային անհրաժեշտ պայմանը»[1]: Սա, ըստ էության, արվեստի ու գրականության այնպիսի դերի ընդունում էր, որի նպատակն էր ապահովել որոշակի հեղափոխական կուսակցության շահերը:

Զոպանյանի էսթետիկական հայացքների ամբողջության վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ «ամենայն անկախության», կամ այս դեպքում, «անկուսակցականության» կառուցումները նա բարձրացնում է արվեստը և գրականությունը մերկապարանոց քարոզչությունից փրկելու համար:

Հետաքրքրական է նաև մի ուրիշ պարագա: Թե բոստոնյան բանախոսությունում և թե Գր. Սիմոնյանի հետ բանավեճում Զոպանյանն ընդունում է, որ համաշխարհային գրականության բազմաթիվ խոշոր դեմքեր հետևել են դասակարգայնության և կուսակցականության, և որ այդ հանգամանքը ավելի ևս նպաստել է նրանց արվեստի բարձրացմանը:

Սուրխաթյանի «Գրական դոհարների» գրախոսությունում Զոպանյանը մեկ անգամ ևս առիթ է գտնում քննադատելու ազգային սնապարծությունը և թե ազգային նիհիլիզմը: Նա միանգամայն համաձայն է ազգային սնապարծության ավերիչ հետևանքների գնահատման հարցում: «Շովինիզմը ես ալ չեմ սիրեր,— գրում է նա,— ան չափազանցությունը, խաթարումը, այլանդակումն է հայրենասիրության, որ իր չափավոր ու առողջ ձևին մեջ բնական, աղնիվ ու արդյավանդ զգացում մըն է... Մեր հայրենասիրական գրականության մեջ մենք ունինք պոռոտախոս, ինքնամոլ, մեծամիտ, ուռուցիկ էջեր, զոր ես ալ հեռու եմ սիրելե»[2]: Միևնույն ժամանակ Զոպանյանը չի կարողանում համաձայնել, երբ մայր հայրենիքին ուղղված իրոք հայրենասիրական, ժողովրդի իրական արժանիքները գրվատող, նրա բարի և շինարար գործերը գովաբանող դեղարվեստական երկերը նույնպես մերժվում են՝ ազգային սնապարծության մեջ անհիմն մեղադրվելով:

***

Պարբերական մամուլում, ինչպես նաև «Դեմքեր» գրականագիտական հոդվածների երկհատոր ժողովածուում Զոպանյանը

---

[1] «Անահիտ», Ե տարի, 1903, թ. 5, էջ 81:

[2] «Պայքար», 1924, թ. 134:

զանազան առիթներով անդրադառնում է հայ գրականության դասական ներկայացուցիչներին։ «Դեմքերում» տեղ գտած հոդվածներից շատերը մասին գրված հոդվածներին մենք ծանոթացել ենք նախորդ բաժիններում։ Հարկ ենք համարում այստեղ հակիրճ կերպով ներկայացնել Զոպանյանի բնութագրումները, որ նա տվել է Հովհ. Թումանյանին, Երվանդ Օտյանին, Հրանտ Ասատուրին, Ալիսինցուն, Թումաս Թերզյանին։

Թումանյանը Զոպանյանի համար եղել է մեծագույն հարգանքի ու պաշտամունքի առարկա։ Թումանյանին նա համարում էր հայ գրականության ամենաժողովրդային դեմքը։ 1923 թվականին, առանալով Թումանյանի մահվան լուրը, Զոպանյանը «Հովհ. Թումանյան» խորագրով հոդված է հրապարակում «Ապագայում» և առաջին հերթին շեշտում հենց նրա ժողովրդային արմատները։ «Կարելի է ասել,— գրում է նա,— թե նույն ինքը հայ ցեղն էր, որ անոր մեջ ինքզինքը կերգեր իր հատուկ ղպայնությամբ ու մտայնությամբ, իր բնորոշ ոգով և ճաշակով»[1]։ Զոպանյանը բարձր է գնահատում Թումանյանի հատկապես լավատեսական ոգին։ «Մեր գրականության մեջ մելամաղձոտությունը, ողբը կը տիրեն,— գրում է նա։— Թումանյանի գործը փթթում մըն է հոգեկան լուսավոր ու արու առողջության, անոր երգը ուժի, վարքության, հավատքի, լավատեսության պոռթկում մըն է, պայծառ ու խրոխտ՝ նույնիսկ ցավի արտահայտության մեջ»[2]։

Դարձյալ մահվան առիթով, Զոպանյանը հոդված է գրում նաև Երվանդ Օտյանի մասին։ Նա Օտյանին համարում է հայ երգիծաբանության մեծագույն արվեստագետը, արդի մատենագրության պոլսական դպրոցի պարծանքներից մեկը, անմահ Պարոնյանի արժանավոր հաջորդը։ Զոպանյանը արժեքավոր մտքեր է հայտնում երգիծանքի էության, ժողովրդի կյանքում նրա դերի մասին։ Նա գրում է. «Պարոնյանի, Օտյանի պես երգիծաբաններն ժողովուրդը զվարճացնող խնդամոլիկներ՝ չեն, այլ... ներքնապես շատ լուրջ ու տխուր մարդիկ, որ մարդկային կենցաղին բոլոր դառնությունները կը տեսնեն ու կը զգան, բայց ողբալով զանոնք արտահայտելու տեղ, անոնց թարմման կը հանդիսանան արի ժպիտով մը։ Երգիծաբանությունը իր պինդ ու բարձր ձևին

---

[1] «Ապագա», 1923, թ. 19։

[2] Նույն տեղում։

մեջ ժողովրդի մը հոգևկան առողջության, մտավոր քաջության պայծառ մեկ ապացույցն է»[1]:

Օտյանի հետ միասին Ասատուրը ութսունականների փայլուն սերնդի ներկայացուցիչն էր, որոնց շնչի տակ և բարեկամական աջակցությամբ հասակ էր նետել նաև Զոպանյանը: 1928 թվականին ութսունականների սերնդի այդ վերջին մոհիկաններից մեկի մահվան առիթով Զոպանյանը դառն կսկիծով վերհիշում է համատեղ ապրած փոթորկոտ տարիները: Զոպանյանը սիրահար էր գրականության, Ասատուրի համար գրականությունը պաշտամունք էր: «Քիչ մարդ տեսած եմ որևէ տեղ, որևէ ազգի մեջ, որ Հրանտ Ասատուրի չափ խելահեղորեն, իր բոլոր սրտով գրականությունը պաշտեր իբր մարդկային գոյության մեծագույն վայելքն ու բարձրագույն պատիվը: «Ամեն բանե ավելի կը սիրեմ գրականությունը, կնոջմե իսկ ավելի», կըսեր ինծի օր մը»[2],— ասես բարի նախանձն էր խոսում Զոպանյանի սրտում այս տողերը գրելիս:

Թլկատինցու մասին հոդվածաշարը մի ամբողջական ուսումնասիրություն է՝ նվիրված մեծ գյուղագրի կյանքին ու գործունեությանը: Այն հրապարակվել է նաև որպես Թլկատինցու հատորի (1927) առաջաբան: Զոպանյանը Թլկատինցու գործի գլխավոր հատկանիշը համարում է նրա մեջ հայ շինական տոհմիկ շեշտի տիրապետությունը: Քննադատը շեշտում է, որ Թլկատինցին բառերը չէր ծամծմում, իրերը կոչում էր իրենց անունով, այսինչ սուտ տերտերին սրիկա էր ասում, այնինչ թաղականին՝ ավազակ[3]: «Թլկատինցի ուզած է իր վիպականերուն մեջ գլխավորապես նկատել ընդ շրջապատող մարդկային կյանքին արատները, ախտերը, տգեղությունները...— գրում է Զոպանյանը,— և որովհետև իր մեջ բարոյախոս մը, ժողովրդին բարոյական առաջնորդ մը միշտ ներկա է ու հաճախ, առանց ինքզինքը ցուցադրելու, կիշխե գործին, էն ղուտ գեղարվեստական գործերուն խորն ալ թաքուն ու կենդանի, ան խորհած է նաև հավանորեն, որ վեպը ժողովրդին թերությունները ցույց տալու պետք է ծառայե, զայն մղելու համար, որ սրբագրե զանոնք»[4]:

---

[1] «Արև», 1926, թ. 2370:

[2] «Արև», 1928, թ. 2880:

[3] «Պայքար», 1927, թթ. 229, 232:

[4] Նույն տեղում, թ. 236:

Չոպանյանը մանավորապես բարձր է գնահատում «էնդի դևմենն» թատերախաղը, իսկ երբ խոսում է թերությունների մասին, ապա մատնացույց է անում տեղական բարբառի ասույթներով չափազանց խճողված լեզուն և բացասական տիպարների ճնշիչ ու սրտնեղիչ գերակշռությունը[1]: Հետաքրքրական է այս վերջին դիտողությունը: Չոպանյանը, բարձր գնահատելով ռեալիստական արվեստը, այդ արվեստի կարևոր հատկանիշն է համարում ոչ միայն մերկացումը, այլև դրականի, լավատեսականի հաստատումը: Հարցի այդ կողմի վրա նա նկատելի կերպով շեշտ էր դնում Սունդուկյանի «Պեպոյի», Թումանյանի գործերի և ուրիշ ստեղծագործությունների վերլուծության ժամանակ:

1926 թվականին հրատարակած «Մեր գրականությունը» գրքույկում Ա. Չոպանյանը առաջնահերթ խնդիր էր համարում հավաքել ու հատորների մեջ ամփոփել հայ գրականության հին ու նոր վարպետների գործերը: Դեռևս վաղ շրջանից Չոպանյանը մտադրություն ուներ հավաքելու և հրատարակելու իր տաղանդավոր ուսուցչի՝ բանաստեղծ Թումաս Թերզյանի գործերը: Նվ, երբ առիթը ներկայացավ, 1929 թվականին, Չոպանյանի անմիջական մասնակցությամբ կազմվեց ու հրատարակ հանվեց բանաստեղծի երկհատորյակը: Առաջաբանը և ծանոթագրությունները պատկանում էին Չոպանյանի գրչին:

Թումաս Թերզյանի մասին մի ուսումնասիրություն էլ Չոպանյանը գրել էր 1909 թվականին «Անահիտում» և այնուհետև տպագրել «Դեմքերի» առաջին հատորում:

Չոպանյանը ռոմանտիկ բանաստեղծ Թերզյանին բավականին բարձր է գնահատում, գրեթե կարևորություն չտալով դրամատուրգ Թերզյանին: Բանաստեղծին նա դնում է Պեշիկթաշլյանի և Դուրյանի միջև, և երեքին միասին համարում ամենաքնքուշ քնարերգակներ: Այդ քնարը հատկապես շեշտեր երբեք չէ արձակած,— գրում էր տարիներ առաջ Ա. Չոպանյանը,— ան եղած է՝ այդ անբացատրելի ճաշակով արվեստագետին ձեռքին մեջ՝ անթերի գործիք մը, որով զմայլելիորեն փափուկ և ազնվական խառնվածք մը ինքզինքն արտահայտած է մոգիչ քնքշությունով մը»[2]:

Թերզյանի մեջ Չոպանյանը տեսնում է «տիեզերական կյանքն

---

[1] «Պայքար», 1927, թ. 237:

[2] «Բյուզանդիոն», 1912, թ. 4703:

ու ամբողջ մարդկության ճակատագրին արտահայտող» («ատոր համար իր բանաստեղծության տարողությունն ավելի մեծ է ու տևական, և անոր լավագույն էջերը, թարգմանելով, որևէ օտար բարձր հասարակություն կրնան շահագրգռել») և հայկական խառնվածքը դրսևորող բանաստեղծի[1]։ Նրա մեծագույն հատկանիշը համարում է բանաստեղծության մեջ պայծառ, խաղաղ, ներդաշնակ ոգու ներմուծումը։ Թերզյանը, ասում է Զոպանյանը, կյանքի, շարժումի, ուրախության, դյուցազնության, գեղեցկության, նույնիսկ ցավի մեջ վեհության և հանդարտության երգիչ է. ողբը անծանոթ չէ նրան, բայց տիրական էլ չէ նրա գործի մեջ[2]։

Թերզյանի բանաստեղծությունների հրատարակումը և մեկնաբանումը Զոպանյանի ծառայությունն էր հայ դրականության պատմության անջատ էջերը հավաքելու գործում։

* * *

Հանարտականան, բանասիրական, հրապարակախոսական այլազան աշխատանքներով ծանրաբեռնված Զոպանյանի գրիչը աստիճանաբար դադարում էր գեղարվեստական գործեր արտադրելուց։ Քառնական թվականներին լույս տեսած «Տղու հոգիներ» և «Հայրենի քնար» ժողովածուները կազմված էին նախորդող զանազան տարիներին գրված ու հրատարակված (մի քանիսը նույնիսկ երկու-երեք անգամ) գործերից։ Միայն «Աստված պապան» և «Փոքրիկ սամարացին», որ Զոպանյանը գրել է 1889—1893 թվականներին, լույս էին տեսնում առաջին անգամ «Տղու հոգիներ» հատորում։ Այդ ժողովածուների գրեթե բոլոր գործերին անդրադարձել ենք նախորդ բաժիններում։ Հարկ է միայն նշել, որ Զոպանյանը թե «Տղու հոգիները», թե «Հայրենի քնարը» հրատարակության էր պատրաստել բավականին խիստ և նպատակասլաց ընտրությունից հետո։ «Տղու հոգիների» մեջ աչքի է զարնում սոցիալական թեման։ «Ողբուկը», «Պեպեքը» քերթվածներում, «Շիշը», «Աստված պապան», «Երկու ծեծ», «Հեռավոր քուրիկը», «Անուրջը», «Փոքրիկ սամարացին» պատմվածքներում Զոպանյանը սիրով ու գուրգուրանքով պատկերում

---

[1] Թովմաս Թերզյան, *Բանաստեղծության ամբողջական հավաքածու*, առաջին հատոր, Փարիզ, 1929, էջ խԲ։

[2] Նույն տեղում, էջ խԶ-խէ։

է ընչազուրկ մարդկանց, մերկացնում տիրող իրականության սոցիալական անարդարությունը: Սոցիալական թեման տեղ է գտել նաև «Հայրենի քնար» ժողովածուում, բայց այստեղ իշխողը քաղաքացիական ընդոստ մոտիվներն են, հայրենասիրական և հայրենիքի ազատագրության համար պայքարի տարրերը:

«Հրաշքը» թատերգությունը, ըստ էության, միակ ծավալուն գործն էր, որ Չոպանյանի գեղարվեստական տաղանդը արտադրեց այդ տարիներին: «Մութ խավերից» հետո դա նրա երկրորդ ու վերջին դրամատիկ գործն էր, որը տպագրվեց միայն տարիներ անց, 1952 թվականին, Բեյրութում: «Մութ խավերի» համեմատ, սակայն, «Հրաշքը» ունի թե շեշտված առավելություն և թե նկատելի պակասություն: Այդ թատերգությունը որպես արվեստի գործ գալիս էր ապացուցելու Չոպանյանի՝ տարիների հոլովույթում մշակած տեսական ելրահանգումների արդյունքն ճիշտ հակառակը: Չոպանյանի էսթետիկական հայացքներում վճռական տեղ էր գրավում պայքարը մերկապարանոց միտումնավորության, անսքող քարոզի և ճառի դեմ: «Հրաշքը» գրված էր հենց նման միտումնավորության և քաղաքական ճառի դիրքերից: Այդ իսկ տեսակետից թատերգությունը, ըստ էության, ավելի շուտ գեղարվեստական ձևի որոշ միջոցներ հագած քաղաքական բանախոսություն էր: Հենց այդ քաղաքական շեշտված միտումնավորությունն էլ թատերգության առավելությունն էր և միաժամանակ պակասությունը «Մութ խավերի» համեմատ:

«Հրաշքը» բեմադրվել է 1946 թվականի դեկտեմբերի 1-ին, Փարիզում: Եվ եթե թատերգությունը հանդիսատեսի կողմից ընդունվեց ընդհանուր առմամբ դրական, ապա դրա վճռական պատճառը արտաքին պայմաններն էր՝ Սովետական Միության պատմական հաղթանակը հիտլերյան ֆաշիզմի նկատմամբ, որը աննախընթաց ոգևորություն էր առաջացրել աշխարհի ժողովուրդների, այդ թվում սիլիտուրահայ զանգվածների մեջ: Այդ արտաքին պայմանը, ընդհանուր ոգևորության և վերելքի իրադրությունը մեծապես նպաստում էր «Հրաշքի» նման շեշտված քաղաքական գործի հաջողությանը, գործ, որի հիմնական բովանդակությունը Սովետական Հայաստանի պաշտպանության գաղափարն էր, իսկ այդ գաղափարը պատմական նման էտապում առանձնապես ջերմ էր խոսում սիլիտուրահայ մարդու սրտին: Այսօր «Հրաշքի» արժեքը պատմական-ճանաչողական է:

Չոպանյանը մի քանի տարիով և, մասնավորապես, Թատերախաղի բեմադրությանը նվիրված հայտարարում նշում էր, որ գործը գրված է Լոզանի կոնֆերանսի փակումից մոտ մեկ տարի անց։ Նա պահանջում է, որ նման լուսաբանություն տրվի բոլոր այն տեղերում, ուր մտադիր են կազմակերպել բեմադրություն[1]։ Չոպանյանն իրավացի է այդ կետը կարևոր նկատելիս։ «Հրաշքը» գրված է քաղաքական իրողության անմիջական ազդեցության տակ, «այն ատելության իրաց վիճակին ու հոգեբանությունն է, որ հոն ներկայացված է առարկայական (objectif) ոգիով մը»[2]։ Այդպիսի ծանուցումը կոչված էր մեծապես նպաստելու գործի ընկալմանը։

Պետք է ափսոսալ, որ «Հրաշքը» բեմադրվել և հրատարակվել է գրվելուց 20—30 տարի անց. այն շատ ավելի օպտակար կարող էր լինել հենց Լոզանի կոնֆերանսից անմիջապես հետո, քաջալերելով և դյուրացնելով պաղեհայության քաղաքական կողմնորոշումը դեպի Սովետական Հայաստան։

Արշակ Չոպանյանը պաղեհայ առաջին արվեստագետներից մեկն էր, որ գեղարվեստական կտավի վրա փորձեց մարմնավորել Սովետական Հայաստանի նկատմամբ պաղեհայ զանազան խավերի կողմնորոշման հարցը։ Թատերախաղի գլխավոր հերոսները՝ դյուղացին, մանր առևտրականը, արվեստագետը ընդունում, ճանաչում են Սովետական Հայաստանի իրականությունը, պաշտպանում են այն և այնտեղ ընդմիշտ մեկնելու որոշում են տալիս։ Դրանց հակառակ, ավելի ունևոր խավերի ներկայացուցիչները վերապահ են կամ հակառակորդի դիրք են բռնում։ «Կարծես թե միևնույն ժողովուրդին չենք պատկանիր», դիտում է Հայաստան մեկնելու որոշում տված Համբարձումը, նկատի ունենալով որոշակի դիրքի և կարողության տեր Մարտիկյան ամուսիններին, որոնք ձգտում են ևս դույներով պատկերել Հայաստանի կացությունը և համոզել Համբարձումին հրաժարվել մեկնելու մտքից։ Այսպիսով, Չոպանյանի Թատերախաղում արտացոլվում է միջուբրահայ դաղթօջախների դասակարգային շերտավորումը։ Հատկանշական է, որ հեղինակի համակրանքը շեշտված կերպով աշխատավոր խավերի կողմն է։ Նա իր հերոսի շուրթերով մերժում է Սովետական Հայաստանի

---

[1] ԴԱԲ, ԱՀՖ, IV բաժին, № 361։

[2] Նույն տեղում։

հացին տարածվող հիվանդությունները: «Հոն կա հայ ժողովուրդ մը, հոն է բուն հայ ժողովուրդը, որ ունի իր հայ կառավարությունը, որ կապրի հայ կյանք մը. և այդ վերականգնացած իրական Հայաստանին մեջ նետված հայ մը այլևս չուզեր անկից բաժնվիլ: Այո, ռեժիմը, որ հոն կը տիրե, վարդապետությունը, որ այդ ռեժիմին հիմքը կը կազմե, ունին կետեր, որ մեր ավանդական կարգ մը գաղափարներուն համաձայն չեն, բայց մենք էն առաջ այդ ռեժիմին լավ կողմերը տեսնելու ենք... Միլիոններ դիզելը իրեն կյանքի նպատակ ըրած մարդիկ պետք չէ անշուշտ հոն երթան, հոն կառավարությունը միայն կրնա մեծ հարստություններ դիզել, որով ձեռք ձգված հարստությունները ամբողջ ժողովուրդին է, որ կը պատկանին և անոր օգուտին համար է որ կը գործածվին»: «Պոլշևիկները...— ասում է թատերախաղի մի ուրիշ հերոսը,— հարուստին թշնամի, աղքատին պաշտպան են, և կուզեն, որ մարդիկ հարուստ և աղքատ, շահագործող և շահագործվող չբաժնվին»:

«Հրաշքը» թատերախաղը խորհրդանշում է անդամալուծության շեմին հասած գաղթահայության «հրաշքով» բուժումը, երբ նա հարում է Սովետական Հայաստանի նկատմամբ դրականապես կողմնորոշվելու, նրա շուրջ համախմբվելու գաղափարին=

«ԱՆԱՀԻՏԻ» ՆՈՐ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

«— Կա՞ արդյոք բան մը որ չի դիտեր այս մարդը։

— Կա։

— Ի՞նչ...

— Հոգնել»։

(«Ապագա», ՀՍՍՀ 15 ամյակին Ա. Չոպանյանի ճառի առթիվ)

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«Հանդես մտածման և արվեստի»

1928 թվականի վերջերից Ա. Չոպանյանը գործնական նախապատրաստական աշխատանքներ է տանում տարիների փայփայած գաղափարին մարմին տալու ուղղությամբ։ «Անահիտ» հանդեսի վերահրատարակությունը պահանջում էր ոչ միայն ղեկավարի նյութական միջոցներ, որ Չոպանյանը ձեռք էր բերում մեծագույն դժվարությամբ, հաճախ իր անձնական պետքերի համար նախատեսված դրամը զոհաբերելու գնով, այլև կազմակերպչական մեծ գործունեություն. հեղինակների հետ բազմապան ու մեծաթիվ նամակագրություն, առաջին համարների նյութերի ապահովում, ամսագրի տարածման հոգս և այլն։ Այս ամենը նա կատարում էր հսկայական գրական-հրապարակախոսական աշխատանքին զուգահեռ։ Լուսաբանության համար բավական է նշել, որ հանդեսի վերելման տարում նա հրատարակից չորս ծավալուն հատորներ, որոնց մասին արդեն խոսել ենք վերը, տասնյակ հոդվածներ տպագրեց սիյուռքահայ մամուլի զանազան օրգաններում, մանավանդ, «Ապագայում», որին նա աշխատակցում էր սիստեմատիկաբար, բազմաթիվ առիթներով հանդես գալով բանախոսություններով ու ճառերով հայ և ֆրանսալեզու լսարանների առջև։

1929 թվականի սկզբին Չոպանյանը մամուլում մի հայտարարություն տարածեց «Անահիտ» հանդեսի վերելման մասին, որը, ըստ էության, պարունակում էր նախատեսվող պարբերականի ծրագիրը։ Հանդեսի նոր շրջանի առաջին համարը լույս

տեսավ 1929 թվականի մայիսին, որի մեջ Չոպանյանը լրացրեց ու զարգացրեց հիշյալ հայտարարության պարունակած ծրագրային դրույթները:

Վերահրատարակելով «Անահիտը»՝ Չոպանյանի նպատակն էր նպաստել հայ գրականության զարգացման գործին: Նա գտնում էր, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդին ու մշակույթին հասած դաժան հարվածը թեպետ ողբերգական էր իր հետևանքներով, բայց չէր կարողացել մինչև վերջ ջլատել ժողովրդի ստեղծագործական ուժերը: Նոր զարթոնքի շրջան էր սպրում ժողովրդի արտասահմանյան հատվածի մշակույթը, իսկ այն, ինչ կատարվում էր Սովետական Հայաստանում, ազգի նեղկյաի և ապագայի համար ուներ վճռական նշանակություն: «Մենք այսօր մեր ազգային կյանքին մեջ ունինք մեծ ու ոգևորիչ նորություն մը, այն է մեր հայրենիքի մեկ մասին մեջ հայ ինքնավար տերության մը գոյությունը և անոր ծոցին մեջ հայ ազգային մշակույթի պաշտոնական տիրապետությունը և ուրույն հաստատություններով ու մեթոդիկ ճիգերով զարգացումը,— գրում է Չոպանյանը:— Այս մեծ առավելությունը, որմե զուրկ էինք պատերազմեն առաջ և որուն ահագին նշանակությունը վեր է որևէ վարդապետության ու ռեժիմի հարցերեն, Հայաստանի մեջ արդեն իսկ տված է իր բարերար արդյունքները մեր մշակույթի շատ մը ճյուղերու վերածաղկման ու վերանորոգման մեջ և կը պատրաստե հայ քաղաքակրթության նոր շրջան մը, որ, հայ հողին վրա ու հայկական միջավայրի մեջ զարգացած, պիտի ապահովապես ըլլա, վաղը, ավելի հարուստ, այլազան ու զորեղ, քան երեկվանը»[1]:

Հայ ժողովրդի երկու հատվածների մշակույթի մեջ Չոպանյանը տեսնում էր տարբեր ուղղություններ: Իր ժամանակի սփյուռքահայ գրականությունը նա կոչում էր «ազգասիրական, ավանդասիրական ու դեղասիրական»: Սովետական Հայաստանի գրականությունը, ասում էր նա, «կը զարգանա պլխավորապես մարքսյան մտայնությամբ, համամարդկային ոգով վենկավարված, ռուսական նոր մշակույթին, հայրենի բնավայրի տեսիլներուն, հոն կերտվող նոր կյանքի երևույթներուն ազդեցության տակ»[2]:

Այս երկու ուղղություններն էլ Չոպանյանը գտնում էր բնա-

[1] «Արև», 1929, թիվ 3036:

[2] Նույն տեղում:

կան ու հարազատ, յուրաքանչյուրը որպես իր հատուկ միջավայրի արտահայտիչը: Ընդամին, կարևորն ու էականը Չոպանյանը համարում էր հայրենիքում կատարվող գործը. սփյուռքում արվող ճիգերը նա գտնում էր անհրաժեշտ, բայց միայն լրացուցիչ ու ժամանակավոր՝ սփյուռքահայության ազգային գոյատևության սատարելու կոչված: «Անահիտ» հանդեսի հիմնական խնդիրներից մեկը Չոպանյանը տեսնում էր այդ երկու գրականությունների միջև հաղորդակցություն և, ավելի լայն բանաձևումով, Սովետական Հայաստանի ու սփյուռքի հայության կապերն ապահովելու և ամրապնդելու մեջ:

Ժամանակի մամուլի որոշ օրգաններ, թե՛ Սովետական Հայաստանում, թե՛ սփյուռքում, քնադատության կրակի տակ առան գրականության երկու հատվածների միջև հաղորդակցություն ապահովելու վերաբերյալ Չոպանյանի ծրագիրը: Գնի տեսակետորեն, մերժվում էր որևէ հարաբերություն բոլոր այն գրողների ու արվեստագետների հետ, որոնք, եթե նույնիսկ քաղաքական հողի վրա չեմորեն պաշտպանում էին Սովետական Հայաստանը, բայց գաղափարախոսության հարցերում տարակարծություններ ունեին: Չոպանյանին, մասնավորապես, վերագրվում էին անհեթեթ և արտառոց մտքեր ու նպատակներ[1]: Ըստ էության նախապատրաստվում էր այն հողը, որի վրա ավելի ուշ մեղադրանք ներկայացվեց Ա. Խանջյանին[2], և Ա. Չոպանյանի անունն իսկ շուրջ երկու տասնամյակ լռության մատնվեց մեր մամուլում:

---

[1] «Երևան» (Փարիզ), 1929, թթ. 536—537: Չոպանյանը մասնավորապես մեղադրվում էր այն բանում, թե իբր նա իր ամսագրով ձգտում էր գաղափարական հող նախապատրաստել երկրում բուրժուական կարգեր ստեղծելու համար: Չոպանյանը, իրոք, վերապահություններ ուներ և քննադատում էր, մասնավորապես, այն կարգի բերումները, որոնք ավելի հիմնավոր, խոր ու լայն քննադատվելին մեզանում հետագայում: Բայց նրա քննադատությունը բնավ չէր միտում թուլացնել մեր հասարակության ուժը: Արփեն ինքը մի առիթով գրում է. «Ու երեն ևս հառնելով կը նկատեմ ու կը գնահատեմ խորհ. Հայաստանի գրականության և արվեստի մարզին մեջ հորիզոնի այդ լայնացումը, անոր համար չէ, որ ատոր մեջ տկարացում մը կը տեսնեմ նոր ոգիին, այդ տկարացումը չկա և ցանկալի ալ չէ (ընդգծումը իմն է— Կ. Դ.), քանի որ այդ նոր ոգին, գաղափարապաշտ հոսանքի մը ծնունդ, ինչքան ալ որոշ կետերու մեջ մեր գաղափարականությունն տարբեր, վերանորոգիչ, մարդապործիչ, աղնվացուցիչ, զորացուցիչ, բեղմնավորիչ ուժ մըն է մեր ժողովուրդի մտայնության, բարքերուն ու մշակույթին համար» («Անահիտ», Ե տարի, 1933, թիվ 3—4, էջ 20):

[2] «Правда», 19 августа, 1936, «Խորհրդային Հայաստան», 30 հոկտեմբերի, 1936:

«Անահիտի» ծրագրի կարևոր մասն էր կազմում նոր սերնդի ծանոթացումը հայ հին դրականության լավագույն էջերի աշխարհաբար թարգմանության հետ: Չոպանյանը նպատակ ուներ նաև ձայն տեղ հատկացնել համաշխարհային դրականության հրաշակերտների թարգմանությանը: Ծրագրի այդ կետերը, ինչպես նաև ազգ. գրական սերնդի դաստիարակության խնդիրը «Անահիտի» նախորդ շրջանի ավանդների շարունակությունն էր: Ամսագիրը անվաննելով «Հանդես մտածման և արվեստի», Չոպանյանը ձգտում էր ավելի ղորացնել «մտածման» բաժինը, որը, նրա կարծիքով, նվազ էր ժամանակի սփյուռքահայ պարբերական մամուլում, ավելի շատ ու հաճախ արծարծել փիլիսոփայական, ազգային-հասարակական, իրավաբանական հարցեր:

Հանդեսի հրատարակությունը որոշ ընդմիջումով (1940—1946) տևեց շուրջ քսան տարի: Ծերունազարդ խմբագիրը նյութական անասելի դժվարություններ էր հաղթահարում հանդեսի հրատարակության գործը անթերի գլուխ բերելու համար: Առաջին տարիներին նա տարեկան հրատարակում էր վեց համար, ապա զույգ-զույգ միացյալ համարներ, այնուհետև երեքական ամիսները մեկ համարի մեջ: 1946 թվականից սկսած Չոպանյանը ստիպված էր հանդեսը լույս ընծայել վեց ամիսը մեկ: «Մեր այն բոլոր հայրենակիցներուն, որոնք տարիներն ի վեր կը ստանան «Անահիտը», կամ որոնց վերջերս միայն սկսա ղրկել այս թերթը, կը խնդրեմ, որ հաճին ներկա թիվը ինծի դարձնել, եթե չեն ուզեր վճարել բաժնեգինը,— գրում է Չոպանյանը «Անահիտի» ընթերցողներուն» տիտղոսով մի շրջաբերականում,— իսկ եթե կուզեն թերթը այսուհետև կանոնավորապես ստանալ, կը խնդրեմ, որ ներկա տարվան իրենց բաժնեգինը, կամ եթե մը տարիներու անվճար մնացած բաժնեգինները ինծի ղրկելու բարությունը ունենան» (ընդգծումը իմն է— Կ. Դ.). Վերջին համարն ընդգրկում է 1949 թվականի առաջին կիսամյակը, որից հետո նյութական հնարավորություններն այլևս սպառվում են: Չոպանյանը, այնուամենայնիվ դեռ հույս ուներ վերակենդանացնելու հանդեսը, ավելին, նա հերթական համարների նյութերն էր հավաքում: 1950 թվականի մարտի 2-ի թվակիր նամակում Լևոն Շահաղիզյանին գրում էր. «Տարին մը ի վեր զանազան պատճառներով նյութական դժվարությանց մատնվեցա ու չկրցա ի լույս ընծայել «Անահիտի» 1949-ի երկրորդ թիվը: Հիմա ստիպված եմ բոլոր

ուժերս լարել 1949-ի երկրորդ թիվը և 1950-ի առաջին թիվը համբագրելու և միասին հրատարակելու համար»[1]: «Անահիտի» հրատարակությունը շարունակելու հույսը Զոպանյանը վայելում էր նաև հետագայում և 1951 թվականին Անդրանիկ Անդրեասյանին խնդրում է նյութական «լուրջ օգնություն» հասցնել ԱՄՆ-ում իր հոբելյանները կազմակերպելու միջոցով[2]:

Այդ հույսը, սակայն, անիրականալի էր: Տարիների հառաջացած բեռը հնարավորություն չէր տալիս պրպտելու ու պրակտիկ աշխատանքներով, թե նյութական միջոցներ հայթայթելու տաժանելի գործով: «Ուրիշ կևրպ ալ չէի կրնար ընել,— բացատրում է նա հանդեսը դադարեցնելու փաստը,— «Անահիտի» խմբագրությունը դեռ տարիներով կրնայի կատարել, բայց 82 տարեկան եմ, «Անահիտի» վարչության գործը հոգի կլանող աշխատանք է, այլևս չէի կրնար կատարել»[3]:

«Անահիտը» հիմնականում իրականացրեց այն խնդիրները, որոնք իր առջև դրել էր Զոպանյանը: Գրականության, արվեստի, առհասարակ հայ և համաշխարհային մշակույթի պրոպագանդը, սոցիալ-հասարակական իմացաբանական զանազան հարցերի լուսաբանությունը, ժամանակի քաղաքական հարաբերությունների վերլուծությունը նպաստում էին սփյուռքահայ ընթերցողների հայացքների ձևավորմանն ու զարգացմանը: Հատկապես դնահատելի էր հանդեսի դերը սփյուռքահայ գրականության զարգացման գործում: Նա իր շուրջը համախմբեց հին ու նոր սերնդի մի շարք գրողների: Զոպանյանի գրականագիտական խորիմաստ վերլուծությունները օգնեցին նրանց վարպետության կատարելագործմանը, իսկ քաղաքական ռեալիստական վերաբերմունքն ու ջերմ սերը Սովետական Հայաստանի նկատմամբ՝ նպաստեցին նրանց քաղաքական ճիշտ կողմնորոշմանը:

Ամսագրում հյուրընկալվում են լրագրային ու գրական բոլոր ժանրերը: Ինքը՝ Զոպանյանը, սակայն, հանդես է գալիս միայն հոդվածներով և, երբեմն, թարգմանություններով: Ինչպես առաջին, այնպես էլ մանավանդ երկրորդ շրջանի «Անահիտում»

---

[1] ԳԱՔ, ԱՀՖ, IV բաժին, № 435:

[2] ԳԱՔ, Ա. Անդրեասյանի ֆոնդ: Ա. Զոպանյանի նամակը, 1951, 12 հունվարի:

[3] ԳԱՔ, ԱՀՖ, IV բաժին, № 174:

կարևորագույն դեր է հատկացվում քրոնիկներին, որը Զոպանյանի նախասիրած լրագրային ժանրն է և որից նա օգտվել է իր ժուռնալիստական գործունեության բոլոր ժամանակաշրջաններում: Քրոնիկներում Զոպանյանն արծարծում է բազմազան հարցեր, սկսած արվեստի ու գրականության տեսությունից մինչև քաղաքական հարաբերությունների իրավիճակը, լուսաբանում է օրվա և ժամանակահատվածի եղելությունները, գնահատանքի խոսք ասում այս կամ այն գրողի, արվեստագետի, գործչի մասին: Զոպանյանը քրոնիկի ժանրը հասցնում է կատարելության, այդ ձևի մեջ տեսնելով փաստին ու երևույթին օպերատիվ, այլև խորությամբ արձագանքելու հնարավորություն: Պատահական չէ, որ նրա քրոնիկները միշտ փնտրված են եղել ընթերցողների կողմից: Զոպանյանի քրոնիկների մի զգալի մասը բարձրարժեք գործեր են և մնայուն նշանակություն ունեն:

Երկրորդ շրջանի «Անահիտը», բնականաբար, շատ կողմերով զիջում է առաջին շրջանի «Անահիտին», որովհետև պատմական տարբեր ժամանակահատվածները տարբեր դերեր էին սահմանել նրանց համար: Սովետական Հայաստանի գոյության փաստը, այնտեղ պետական հիմքի վրա և պետական հովանավորությամբ զարգացող ազգային մշակույթը, հսկայազանգված տնտեսական շինարարությունը, հայ ազգի իսկ կոնսոլիդացիան իր հանրապետության տարածքում այլևս դարձել էին վճռական իրողություն ամբողջ հայ ժողովրդի կյանքում, որի պատմական ճակատագրում սփյուռքը, որքան էլ կարևոր, այնուամենայնիվ, երկրորդական նշանակություն ուներ: Բնականաբար, արևմտահայության գրական օրգան «Անահիտի» դերը շատ ավելի նշանակալի ու լայն սիրո լիներ, քան սփյուռքահայության գրական պահանջները հոգալու կոչված «Անահիտինը»:

Ինչպես նշեցինք, սակայն, երկրորդ շրջանի «Անահիտն» էլ կարողացավ կատարել իր համար սահմանված դերը ընդհանուր գծերով: Բայց, մանավանդ, անգնահատելի եղավ «Անահիտի» ու նրա խմբագրի ծառայությունը սփյուռքահայ գանգվածներին մայր հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության ոգով դաստիարակելու գործում:

Սովետական Հայաստանի աննկեղծ բարեկամը

1929 թվականին սկիզբ առած համաշխարհային տնտեսական ճգնաժամը հանգեցրեց նաև բարոյա-քաղաքական խառնաշփոթության և լճացման մի վիճակի, որը տիրապետող էր Արևմուտքի երկրներում երկար տարիների ընթացքում: Գաղափարազրկությունը, բարոյական նորմերի փլուզումը, անհնազանդությունն ու անհայտությունը մոնոպոլիստական կապիտալի երկրների հասարակական կյանքի բնութագրական հատկանիշները դարձան: Ֆաշիզմի տարածումը և, մասնավորապես, Գերմանիայում պետական իշխանության գլուխ անցնելը, որի հետևանքով նոր համաշխարհային պատերազմի սրհավիրքը կախվեց մարդկության գլխավերևում, էլ ավելի սրեց իրադրությունը: Ահռելի դաստակերգային պայքարի հողի վրա տեղի էր ունենում մտավորականության արագ շերտավորում, որից անմասն չմնաց նաև սիյուրքահայ մտավորականությունը:

Հանդես նկավ նրիտասարդ մի սերունդ, որը, բանվոր դասակարգի շահերն արտահայտելով, կարճ միջոցում առաջատար ուժ դարձավ սիյուրքահայ գաղթօջախներում, մասնավորապես Ֆրանսիայում: Սիյուրքահայ մտավորականության ուրիշ խավերը նույնպես նոր պայմաններում հարկադրված էին էլ ավելի ցայտուն ու բացահայտ ընտրություն կատարել քաղաքական կողմնորոշման հարցում: Եվ բարեբախտություն պիտի համարել, որ նրանց գերակշռող մասը այդ ընտրությունը կատարեց ճիշտ, կանգնելով առաջադիմական ուժերի կողքին՝ ընդդեմ ռեակցիայի և ֆաշիզմի:

Սրշակ Չոպանյանի անցած ուղին որևէ կասկածի տեղ չէր թողնում, որ նա պետք է լիներ այդ առաջադիմական մտավորականության առաջին շարքերում, նույնիսկ նրա գործունեության վերաբերյալ եղած աննպաստ քննադատության առկայության պայմաններում և չնայած այդ քննադատությանը:

Հասարակության զարդացման օրենքների վերաբերյալ Չոպանյանի հայացքների համար միանգամայն բնական էր, որ նա, քննադատելով կապիտալիստական աշխարհում ստեղծված կացությունը, բարոյա-քաղաքական խառնաշփոթությունը, դաղափարազրկությունը, իդեալների կորուստը, բարոյական նորմերի

Նղծումը, ափսոսալով այդ ամենի համար, միևնույն ժամանակ բացատրում էր այդ երևույթը մարդու բնության էվոլյուցիայով։ «Անահիտ» ամսագիրը բազմիցս անդրադառնում է այդ լուրջ պրոբլեմներին։ Զոպանյանը տեսնում է, որ «աշխարհը հիվանդ է», որ «գաղափարները, սկզբունքները, որոնց վրա կը հենու արդիական ընկերությունը, կը դավաճանվին ու կը բռնաբարվին», որ «բարոյական ընդհանուր անկում կա. հսկականության ընդհանուր շղթայազերծում մը կը տիրե. բառերով մարդասիրություն և, իրականին մեջ, մոլեգին ինքնասիրություն»[1]։ Նա գրտնում է, որ կապիտալիզմի «ամենաիդեալական» երկիրը՝ ԱՄՆ-ը «գանգրբրներու երկիր մը դարձեր է, ուր հանդուգն, շնական ու վայրագ ավազակներ, ոստիկանության ու խորհրդարանի պատկանող որոշ խումբ մը մարդոց մեղսակցությամբ, ամենեն ժժգալի ոճիրները կը գործեն»[2]։ Իսկ ո՞րն է լուծումը։ Այդ հարցին պատասխանում են «Անահիտում» հրատարակված հոդվածների հեղինակները՝ Մ. Դավիթ-Բեկը և Զորիկը, ու նրանց հետ միանգամայն համակարծիք է Զոպանյանը։

Մ. Դավիթ-Բեկը Վիրգիլիոսի 2000-ամյակի առթիվ գրած հոդվածում նկարագրում է հռոմեական հասարակության բարոյազրկման, կաշառակերության, կեղեքումների, ոճիրների, արյունահեղությունների մի շրջանը, որից փրկության ելքը ըստ հոդվածագրի, Կիկերոնի առաջարկած ծրագիրն էր, այսինքն՝ «ոչ թե քաղաքացիներու մեկ դասակարգին բացարձակ տիրապետություն, այլ ընկերական բոլոր խավերու, բոլոր դասակարգերու հաշտություն և համերաշխություն»[3]։

«Անահիտի» աշխատակից Զորիկը «Տնտեսական պատերազմը 1914-ին առաջ և վերջը խորագրով մի ուսումնասիրություն է հրատարակում, որը այլևայլ ինդիրների լուսաբանության տեսակետից բավականին նպաստ է բերում հանդեսի «մտածման» բաժնին։ Կան, սակայն, քննադատության չդիմացող մի շարք դրույթներ։ Դրանցից մեկը ձևակերպված է այսպես. արդյունաբերական ազգը, հայտարարում է հեղինակը, «կրնա աճիլ և բարգավաճիլ երբ գործարանատեր և գործավոր կարենան համերաշխ ապրիլ»[4]։

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1931, թ. 3—4, էջ 159։
[2] «Անահիտ», Գ տարի, 1932, թ. 5—6, էջ 158։
[3] «Անահիտ», Բ տարի, 1930, թ. 2, էջ 57։
[4] «Անահիտ», Բ տարի, 1931, թ. 5—6, էջ 148։

Վերջապես, ինքը՝ Զոպանյանը, ամբողջացնում է «Անահիտ» առնականը այդ հարցի վերաբերյալ։ Ժամանակակից պայմաններից ելքը հանգնեի իմպերատրության էլ տևնում է դասակարգային հաշտության մեջ ու ցավ հայտնում, որ այդ հաշտությունը չի իրականացվում։ «Դասակարգերու միջև, փոխանակ իմաստուն ու անկեղծ համերաշխության և համագործակցության, աներեսությունն ու պայքարը ավելի քան երբեք սուր են դարձած»[1]։ Դասակարգային հաշտության վերաբերյալ Զոպանյանի դրույթը նրա աշխարհայացքի սահմանափակության արդյունք էր և հենց այս կետում էլ նա արժանանում էր իրավացի քննադատության։ Քննադատությունը, սակայն, չէր տևնում նրա հայացքների և գործունեության մեջ, այդ շրջանում, ամենակարևորը, որը, վերջին հաշվով, շատ ավելի էական էր ու, մանավանդ քաղաքական հողի վրա, արդյունավետ։

Այդ ամենակարևորը Զոպանյանի՝ ժամանակակից կապիտալիստական հասարակության ախտերի մերկացուցիչ քննադատությունն էր և, ի հակադրություն այդ հասարակարգին, սոցիալիստական հասարակարգի դրվատումը, որը նա տանում էր հետևողական կերպով թե ամբողջ Սովետական Միության և թե Սովետական Հայաստանի օրինակների լուսաբանությամբ, վերապահումներ անելով միայն այն երևույթների նկատմամբ, որոնք մեղանում քննադատվեցին ու դատապարտվեցին ՍՄԿԿ XX համագումարում։

Հակադրելով կապիտալիստական աշխարհին՝ Սովետական Միության մասին Զոպանյանը դրում է, թե «ան կը ներկայացնի քաղաքական խաղաղության, զինք կազմող ազգերու սերտ համերաշխության ու տևական գործակցության տևսարան մը, որ իրապես սփոփիչ է և Միության կատարած գործերուն լավագույնն է»։ Իր ժամանակակից աշխարհի խայտաոաակ կացության ֆոնի վրա միակ «սփոփիչ» իրադրությունը Զոպանյանը տևնում է Սովետական Միությունում։ Նա շարունակում է. «Ճիշտ է, որ ատոր ան հասած է ոչ միայն, որովհետև ազգայնամոլությունը, որ ազգասիրության բնական ու առողջ զգացումին թունավորված ու ախտավարակ ձևն է, չնջած կամ գեթ զսպած է իր սահմաններուն մեջ, այլ, որովհետև մանավանդ հոն կա կենդրոնական մեծ ու հզոր ազգ մը զինք շրջապատող փոքր ազգերին քաղա-

[1] «Անահիտ», Գ տարի, 1931, թ. 3—4, էջ 159։

քակրթությամբ ավելի հառաջացած, ուս ապգը, որ առանց բռնանալու մյուս ապգերուն վրա և գանոնք ձուլել ձգտելու (ինչպես կրնար ցարական ռուսը), իր մեծությունն ու զորությունը դնելով ի սպաս քաղաքական լայնամիտ ըմբռնումի մը, միացուցիչ, կանոնավորիչ, վարիչ ուժ կը կազմե»[1]:

Հատկանշական է, որ դրվատելով սոցիալիզմի երկրի ներքին կացությունը, Զոպանյանը շեշտը դնում է նացիոնալիզմի դատապարտման վրա, որը այդ օրերին մեծ չափերով պլուս էր բարձրացնում Եվրոպայում, մանավանդ Գերմանիայում, և Սովետական Միության ժողովուրդների անքակտելի բարեկամության վրա, որը նա համարում է ՍՍՀՄ-ի ամենամեծ նվաճումը: Արդեն ուրիշ առիթներով էլ Զոպանյանը միշտ բարձր է գնահատել ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության փաստը: Նար-Դոսի 45-ամյա և Գևորգի Գեմիրճյանի 35-ամյա գրական գործունեության հոբելյանների կատարման առիթով նա արժանին է համարում մյուս հանրապետությունների մասնակցության երևույթին, որը գնում է «դրացի կամ դաշնակից ապգերու և անոնց մշակույթներու միջև համերաշխության, փոխադարձ ճանաչման և գնահատման ու փոխադարձ օգնության երևույթ, մեծապես գովելի է և նոր ոեժիմին գրական լավագույն գծերեն մին կը կազմե»[2]:

Զոպանյանը, սակայն, չի սահմանափակվում լուսաբանելով և կապիտալիստական հակասությունների մեջ խճճված ու պառակտված Եվրոպային հակադրելով ՍՍՀՄ ապգային համերաշխությունը: Նա հակադրությունը կատարում է նաև հասարակության սոցիալական ու բարոյական հողի վրա, բացահայտորեն առավելությունը տալով սոցիալիզմի երկրին: «Անտարակուսելի է, սակայն,— գրում է Զոպանյանը,— թե մարդկային ընկերությունը վերանորոգելու հանդուգն փորձը, որ հոն կը կատարվի, իր բոլոր թերություններով մեկտեղ, ունեցած է բարերար ազդեցություն մը ամբողջ մարդկության վրա, իբր սանձ՝ ընչահնձ, սիրամոլ, վայելամոլ մարդոց կամ խմբակցությանց նսակատության դեմ, իբր ներշուկ ճնշվածներու, կեղեքվածներու պա-

---

[1] «Անահիտ», Գ տարի, 1932, թ. 1—2, էջ 161:

[2] «Անահիտ», Գ տարի, 1931, թ. 1—2, էջ 162—163:

հանջմանց աստիճանական հաջողման, և պիտի ունենա այդ ապագությունը հետզհետե ավելի լայն չափով»[1]:

Շատ ավելի լայն, մասշտաբային և խոր է լուսաբանում Զոպանյանը Սովետական Հայաստանի իրականությունը, Լենինի ճիշտ պատկերը ներկայացնելով հայրենասերի ջերմ զգացմունքներով լեցուն սրտի պրիզմայով: Եվ այդ պատկերը, բուրժուական երկրների բարոյազուրկ, նասիրական միջավայրի պատկերի համեմատ, իրոք գրավիչ է ու վեհ և վարակիչ, որովհետև ճշմարիտ է, որովհետև գծված է այլևս արդեն ոչ թե լուրերի ու մամուլից քաղած նյութերի հիման վրա, ինչպես քանանական թվականներին գծում էր Զոպանյանը, այլ ականատեսի աչքով, արդյունք է Զոպանյանի համոզմունքների, և 1932 թվականի ձմռանը Սովետական Հայաստան կատարած նրա ուղևորությունից քաղած կենդանի ու շոշափելի տպավորություններին:

Սովետական Հայաստանի իրականության գնահատության հարցում Զոպանյանը ծանրանում է հիմնական ու վճռական կողմերի վրա՝ սոցիալական-տնտեսական և բարոյական-մշակութային, դրանով իսկ վերաբերմունք ճշտելով հասարակության զարգացման ամենաէական հարցերի նկատմամբ, ձգտելով վեր հանել հասարակության կենսունակության մեխանիզմի հիմնական մասերը:

Դեռ երեկ, ասում է Զոպանյանը, քննելով հարցի սոցիալական կողմը, ազգի մեծ մասի իդեալը՝ ազգային ազատագրության իդեալն էր, իսկ սոցիալական հարցը զբաղեցնում էր միայն փոքրաթիվ մարդկանց: Այսօր սփյուռքում փոքրաթիվ մասը հետապնդում է հին իդեալը, առանց հաշվի առնելու Սովետական Հայաստանի գոյությունը, «ու կը շարունակն չորս հովերուն սպասել միացյալ ու անկախ Հայաստանի մը... ստեղծումը». մեծ մասը, որի մեջ նա իրեն էլ է դասում, հայկական հարցի լուծման իդեալն է փայփայում, բայց Սովետական Հայաստանի գոյությունը, զարգացումը և հետագա հզորացումը դիտելով որպես դրա հիմքը և հիմնական կռվանը: Այս հատվածը ի տարբերություն առաջինի, ասում է Զոպանյանը, պահպանելով իր գաղափարախոսական ինքնուրույն հայեցակետը, շահագրգռվում է միջազգային համամարդկային այն մեծ հարցերով, որոնց որոշակի ուղղությամբ լուծման փորձ կատարվում է ՍՍՀՄ-ում: Եվ,

[1] «Անահիտ», Դ տարի, 1932, թ. 1—2, էջ 162:

վերջապես, անդրադառնալով Հայրենիքում բնակվող հայությանը, Զոպանյանը գրում է. «Իսկ մեր երկրին մեջ ապրող հայ ժողովուրդին ու մանավանդ անոր ղեկավարներուն համար ընկերական հարցն է որ մղիչ իդեալը կը կազմե, իրեն հիմք եղող մարքս-լենինյան իմաստասիրական, քաղաքական, գիղեցկագիտական ըմբռնումներու խուրձով: Մարդկային նոր ընկերություն մը— ավելի արդար, ավելի եղբայրական ընկերություն մը— հիմնելու և այդ իդեալով առաջնորդված նոր մշակույթ մը կերտելու կամքն է, որ կը կազմե հրայրքը Հայաստանի ժողովրդին... Խելացի ու հնարամիտ հայ մը, ինչ վարպետության ալ հարած ըլլա,— շարունակում է Զոպանյանը ճշտելով իր դիրքերը,— կրնա՞ չդրավվիլ այդ շարժումին և անոր մեջ իր բաժինն ունենալ չուզել, երբ ակներև է, թե այնտեղ կատարվող աշխատանքը, ընկերական նոր իրավակարգ մը հաստատելու ձգտելն զատ... հայ ժողովրդի իր Հայրենիքին մեջ բազմացումը, զորացումը, պետական ինքնուրույն կյանքով վարպետումը ունի իբր արդյունք»[1]:

Ինչ վերաբերում է տնտեսական կողմին, ապա Զոպանյանը այստեղ ընդգծում է երկու հանգամանք: Առաջինը, ըստ նրա, աշխատանքն է, կամ, ինչպես ինքն է արտահայտվում, «աշխատանքի կրոնքը», այսինքն՝ աշխատանքի նկատմամբ պաշտամունքի հասնող մեծագույն սերը, որը նոր որակ է ստացել Հայրենիքում՝ ուժ տալով նրա «աղվոր ու հզոր ապագայի մեծ շարժման»: Դա «նյութական վերաշինության տենդն է, մեր երկրի ճարտարարվեստականացման (ինդուստրալիզացիայի), արդիականացման համար թափված մեծ ճիգը: Ատիկա նշանավոր նորություն մըն է մեր երկրի պատմության մեջ...— հայտարարում է Զոպանյանը:— Բազմատեսակ գործարաններու հիմնարկում, բնության այդ երկրին պարգևած անսպառ քարին ու ջուրին գիտական ոգով բազմապիսի օգտագործում, էլեկտրակայաններու կառուցում, հանքերու հետախուզում և անոնց պարունակած հարստության արտահանում և մշակում, երկաթուղիի և թրամվայի գիծերու տեղծում, ինչպես և արդիական ձևով երկրագործության և արհեստներու զարգացում, ճամփաներու շինություն, անջրդի հողերու ոռոգում, ճահիճներու չորացում, համաճարակ հիվանդությանց դեմ մեթոդիկ պայքար, այս բոլորը կը ձգտին հանել մեր երկիրը զարավոր հետամնացությունն մը...»

---

[1] «Անահիտ», Ե տարի, 1933, թիվ 3—4, էջ 11—12:

Աշխատանքի նկատմամբ սերը, ասկայն, միշտ էլ եղել է ժողովրդի հատկանիշը: Ինչո՞վ, ուրեմն, բացատրել հնի և նոր ժամանակների տարբերությունը, վիթխարի առաջընթացը: Զոպանյանը չի խոսում սոցիալիստական սիստեմի և երկրում գործադրվող ազգային արդարացի քաղաքականության արդյասաբեր պտուղների մասին, այդ կատեգորիանները նրա մոտ բուն էության ընդհանրանում են «խորհրդային Միության» հասկացության մեջ: «Այս բոլորին մեջ,— շարունակում է Զոպանյանը, մատնանշել անելով հաջորդ կարևոր գործոնը,— արդար չէ տեսնել միմիայն արժանիքը մեր ժողովրդին աշխատասեր ու շինարար ոգևույն, առող մեջ մեծ դեր ունին խորհ. Միության բարոյական ու նյութական աջակցությունը, ապահովությունն ու խաղաղությունը, զոր Միության անդամակցությունը տված է մեր երկրին, այդ բոլոր շինարարական գործերուն մերի թևլապրությունը ու միշտ իրախույսն ու օժանդակությունը, զոր մեր ժողովուրդը գտած է Միության կենդրոնական կառավարության մոտ: Կուրության և ապերախտության է ասիկա չըմբռնելն ու չդնահատելը»[1]:

Բարոյական-մշակութային կյանքում էլ Զոպանյանը արձանագրում է մեծ վերելք, մի ամբողջ վերածնություն, որը իրր շարժում նախընթացը չունեցող հզորության և տարածման է հասնել: Նա կարևորապես տեղ է հատկացնում կուլտուրական հեղափոխության բարիքներին ժողովրդի անգրագիտության վերացման,— «քիչ ատենեն՝ գրել կարդալ չգիտցող մեկ հատ հայ պիտի չմնա հանրապետության սահմաններուն մեջ»,— և նոր կենցաղի արմատավորման գործում: Վերջին հարցը, կապվելով որոշ ավանդույթների հետ, իրենից շատ փափուկ խնդիր է ներկայացնում, և Զոպանյանը այդ խնդրին մոտենում է նորի պաշտպանության դիրքերից: «Ժողովրդական կենցաղը ոչ միայն չի համառոր նույնը մնալ, այլ անտարակուսելի կերպով բնաշրջելու վրա է ու լավ է, որ այդպես է, այդ բնաշրջումը բանդիչ ու եղծիչ չէ, այլ նորոգիչ ու զորացուցիչ»:

Հատկանշական է, որ եղրակացնելով, թե Սովետական Հայաստանում ազգային մշակույթի նոր, մեծ շրջան է սկսվել և հիմք է դրվել ապագա մշակույթի առավել ճոխ շրջանի, Զոպանյանը

[1] «Ապագա», ԺԹ տարի, 1933, թ. 28:

այստեղ էլ անվարան կերպով հաջողության գլխավոր աղբյուրներից մեկը փնտրում է երկրում գործադրվող ազգային քաղաքականության մեջ: «Տիրող կարգերը և մեծամասնականներու քաղաքականությունն է,— հայտարարում է նա,— որ ոչ թե կը թույլատրեն, այլ կը պահանջեն, կը մղեն ու կօգնեն (ընդգծումը իմն է—Կ. Դ.), որ Միության մաս կազմող խորհ. Հանրապետությանց յուրաքանչյուրին մեջ տեղական ժողովուրդն բուռն ուժերուն կազմվի այդ «ազգային հանրապետությանց» կառավարությունը, որ տեղական լեզուն տիրապետող իբր պաշտոնական լեզու, բնիկ ժողովրդին տոհմապրոշմ պրականությունն ու արվեստը պարպանի, որ այդ երկրի ֆոլկլորը, պատմությունը, հնությունները ուսումնասիրվին»[1]:

Կուլտուրական հեղափոխության մեջ Զոպանյանն ըմբռնում և դնահատում է կոմունիստական կուսակցության հետապնդած սոցիալ-քաղաքական և դաստիարակական նպատակները: «Ուսման տարածումին նվիրված այդ մեծ ու հարաճուն ճիգը, զոր ի գործ կը դնեն խորհ. ռեժիմին դեկավարները, իր կուսակցական ներքին մասնավոր նպատակն ալ ունի, բացի ազիտության դեմ պայքարի ընդհանուր նպատակեն,— գրում է նա:— Անոնք ազիտությունը նեցուկ մը, գործակից մը կը նկատեն, և իրավամբ, հին ռեժիմի բռնակալ, դրամապաշտ, կղերամոլ ոգիին: Ուստի առանալով, յուրաքանչյուր դյուղացի, յուրաքանչյուր բանվոր կարող պիտի ըլլա կարդալ նոր ռեժիմի ոգիով տողորված գրքվածքներ, և, սակավաթիվ ուսյալ ու տիրող դասակարգի մը կիման կույր մնալու տեղ, նոր ռեժիմին գիտակից, անկեղծ, համոզված կողմնակից մը պիտի դառնա»[2]:

Այս ամենից հետո պատահական պիտի չնկատել, որ Սովետական Հայաստան կատարած այցելությունից վերադառնալով, Զոպանյանը մեկ անգամ էլ շեշտում է այն միտքը, թե հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցում դանազան կուսակցությունների ծրագրերն ու դաստիարնները սնանկ դուրս եկան, պատմության քննությունը չբռնեցին նաև իր դաստիարնները, և միայն հայ բոլշևիկները ապացուցեցին իրենց հետապնդած ուղու իրավացիությունը, քանի որ Հայաստանի ու հայ ժողովրդի

---

[1] «Ապագա», Ժ տարի, 1933, թիվ 29:

[2] «Անահիտ», ե տարի, 1933, թ. 3—4, էջ 7:

փրկության հարցը կապել էին Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ[1]:

Այդ համոզմունքը, բնականաբար, հիմք է ծառայում, որպեսզի Զոպանյանը առավել կրքոտությամբ քննադատի դաշնակցության ու նրա պարագլուխներին, որոնք, դառ չառնելով պատմությունից, դեռ շարունակում էին բշնամական վերաբերմունք ունենալ Սովետական Հայաստանի նկատմամբ, ձգտում էին պառակտել սիյուռքահայությունը, կտրել նրա կապերը մայր հայրենիքից, ձախողել հայրենադարձի փրկարար գործը: Հենց դաշնակցության էլ նա մեղավոր է տեսնում երևանական թվականներին սիյուռքահայ գաղթօջախներում ներքին քաղաքական կացության սրման գործում, որը ստանում է ամենաայլանդակ դրսևորումներն ընդհուպ մինչև հայրենասեր գործիչների սպանությունները (Միհրան Աղազարյան, Ղևոնդ Դուրյան): «Արտասահմանյան կուսակցական պայքարը եթե ամենացավալի կերպով սաստկացած է վերջերս, հայրենիքի վերաշինության ու անոր հարակից ներգաղթին արտասահմանի հայության բերած ու բերելիք աջակցությունը խանգարել ուզող ափ մը հայրենակիցներու անխելք ու կրքոտ վարմունքին արդյունքն է ատիկա»,— գրում է նա 1933 թվականին[2]:

Դաշնակցությունը քրանաթոր շարունակում էր թունավորել արտասահմանի հայության միտքը, ձգտելով սևացնել Սովետական Հայաստանի իրականությունը, ուրանալ նրա նվաճումները: Հատկապես մեծ նսեմանդ էր ներկնում Սիմոն Վրացյանը, որը, առանց վարանելու, հայտարարեց, թե 1920 թվականից հետո տասներկու տարվա ընթացքում 60-հազարանոց ֆրանսահայ գաղութը ավելի շատ շինարարություն է իրականացրել, քան մեկ միլիոնանոց Սովետական Հայաստանը, թե վերջինիս մեջ ոչինչ նոր բան չի կառուցվել, այլ պարզապես կոմունիստները իբր մասամբ պահպանել են դաշնակցականների ստեղծած ձեռնարկությունները, կամ էլ մի քիչ ընդարձակել դրանք: «Կը կարծեմ, թե հայ գիրը հնարվելեն ի վեր այսքան ապուշ բան չէր տպված այդ օրհնյալ գրով»[3],— ծաղրում է Զոպանյանը Ս. Վրացյանին:

---

[1] «Անահիտ», Դ տարի, 1932—1933, թիվ 3—6, էջ 88—89:

[2] «Ապագա», ԺԴ տարի, 1933, թիվ 1:

[3] «Անահիտ», Ե տարի, 1933, թ. 1, էջ 15:

Նա հարուստ փաստերով ու համոզիչությամբ ապացուցում է դաշնակցության քաղաքականության սնանկությունը և դատապարտվածությունը։

Երբ անհրաժեշտ էր լինում, իսկ նման բան հաճախ էր պատահում, Զոպանյանը չէր վարանում օգտագործելու երգիծական, սուր և մերկացնող միջոցներ, պաշտպանելու համար Սովետական Հայաստանը և նրա ղեկավարներին դաշնակցության հարձակումներից։ Միքայել Վարանդյանի՝ Սովետական Հայաստանի ղեկավարների դեմ ուղղված մի հոդվածի առթիվ, օրինակ, Զոպանյանը գրում է, թե նա հնդհեղում է «Հուսաբեր» հիմարանոցային թերթին գարշելի բանաձևը ներքին թուրքին մասին», մինչդեռ դա «գոյություն ունի,— հայտարարում է Զոպանյանը,— միմիայն հիվանդ ուղեղին մեջ քանի մը այսահար դաշնակցական հրապարակագիրներու»[1]։

Քաղաքական հայացքներում սկզբունքայնությունը թելադրում էր սկզբունքայնություն նաև Զոպանյանի գործելակերպի մեջ։ Նա, գնահատելով Ա. Ահարոնյանի գրական վաստակը, այնուամենայնիվ, հրաժարվեց մասնակցել գրողի հոբելյանին, իրավացիորեն կանխատեսելով, թե այդ հոբելյանը վեր է ածվելու դաշնակցության և նրա հակասովետական աշխատանքի փառաբանման հանդեսի։ Ավելին, երբ հանդեսին արտասանած իր ճառում Ահարոնյանը «դժխեմ» է հայտարարում հայ ժողովրդի այդ օրերի կացությունը, Զոպանյանը պատասխանում է նրան. «... խոստովանինք, որ վերածնած Հայաստանին մեջ ան երկկ է որ իրապես «դժխեմ» էր, երբ ցեղը կը նվաղեր, կը փճանար, տասը ձևով աղետներու մեջ, ու մոլորեցնող, գինովցնող ծայրահեղ, անհիմ և ամուլ հույսերու մեջ։ Այսօր, օտար երկիրները ցրված և անհայրենիք մնացած հարյուր հազարավոր հայերու կացությունն է որ արդարև տխուր է, բայց ան ավելի ևս տխուր պիտի ըլլար առանց Արագածի ոտքը ապրող, աշխատող ու կարելիության սահմանին մեջ հառաջադիմող Հայրենիքի մը սըրտապնդիչ գաղափարին»[2]։

---

[1] «Անահիտ», ԺԱ տարի, 1934, թ. 5—6, էջ 113։

[2] «Անահիտ», Բ տարի, 1930, թ. 2, էջ 121։

Նույն իմաստով հատկանշական է նաև մի ուրիշ փաստ։ 1947 թվականին, դաշնակցության մականի տակ գոնվող «Համազգային» կազմակերպությունը միտք է հղանում հրավիրել սփյուռքահայ գրողների համագումար։ Այս կապակցությամբ հրավեր է ուղարկվում նաև Ա. Զոպանյանին։ Զոպանյանը մերժում է։ Գրող Անդրանիկ Ծառուկյանին հասցեագրած իր 1/2—48 թվակիր նամակում նա ասում է. «Շատ լուրջ պատճառներով անհնար կը նկատեմ ձեր ծրագրած գրական համագումարին մասնակցելս։ Ես կընդունիմ, որ ձեր մտքին մեջ այդ ձեռնարկը կուսակցական բնույթ չունի, այլ զուտ մշակութային։ Բայց— դուք ալեկոչուիք— այդ ձեռնարկը, որ թելադրողը կուսակցական մըն է և որ պիտի դրվի շատ որոշ ու աւոր ուղղության մը հետևող կուսակցության մը կողմը դիրքորոշված «Համազգայինին» հովանավորության տակ, կուսակցական գույն պիտի առնե և խորհ. Հայաստանի գրականության ու գրողներուն դեմ ցույցի մը ձևը պիտի առնա»[1]։

Անհրաժեշտ է նշել, որ այդ տարիներին նրա նկատմամբ բնավ էլ նպաստավոր չէր պաշտոնական կարծիքը Սովետական Հայաստանում, և Զոպանյանին դա լավ հայտնի էր։ Առավել ևս դնահատելի է նրա ակզբունքային աննկուն դիրքորոշումը մայր հայրենիքի հանդեպ։

Սովետական Հայաստանի անկեղծ բարեկամին և հայրենասերին անհուն ցավ էր պատճառում երկրում առկծված իրավությունը, երբ անհատի պաշտամունքի տարիներին մի շարք արժեքավոր մտավորականներ անիրավի մեղադրանքների ու դատապարտման արժանացան։ «Այդ ոտամբ միշտ կը ձնշե արտիա վրա իբր մեծ զբաղաւորություն մը մեր ժողովուրդին ու հայրենիքին համար»[2],— գրում է Զոպանյանը։ Նա չի կարողանում համակերպվել այն մտքի հետ, թե մեղադրված մտավորականությունը կապ է ունեցել արտոկիզմի հետ, եղել է իմպերիալիզմի օգտին գործող դավադիրների խումբ, անտրամաբանական է համարում այդ։ Անտրամաբանական է համարում հայ ժողովրդի իսկ պատմական ճակատագրի բերումով, որովհետև գիտում է, որ Սովետական Միությունը միակ փրկարար ուժն է հայ ժողովրդի համար, և անհնարին է, որ այդ ժողովրդի մտավորական-

---

[1] ԳԱՓ, ԱԶՅ, IV բաժին, № 165։

[2] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 116։

նները դավաճանին Միությանը, դրանով իսկ դավաճանելով հայ ժողովրդի շահերին: «Հայեր, որ պիտի դավին այդ Միության դեմ վերավար ուժերուն դեմ,— գրում է Զոպանյանը,— ոչ միայն համայնավար կուսակցության տեսակետով, այլ դուռ հայ ազգային տեսակետով դավաճանական արարք գործած պիտի ըլլային»[1]: Ուստի, ամբողջ էությամբ չհավատալով այդ ամբաստանությանը, նա սպասում է հարցի արդարացի լուծում, երբեմն-երբեմն այդ առթիվ դիմումներ անելով Հայաստանի կառավարությանը:

Սովետական Հայաստանի նկատմամբ Զոպանյանի անկեղծ նվիրվածությունը և չերմ բարեկամի դիրքը գնահատելու տեսակետից խիստ կարևորություն է ստանում այդ ծանր կացության մեջ նրա գրավոր հայացքների քննարկումը: Այդ օրերին Զոպանյանի իսկ կուսակցության որոշ թևերի միայն «մութ ամպեր» էին տեսնում, իսկ դաշնակցությունը տոնախմբում էր, փորձելով «այդ բոլորին հետևցնել, թե ռուս մարքսյան հեղափոխության և անոր Հայաստանին մեջ կատարած դերին վերջնական փլուզման է, որ հանդիսանաս կըլլանք,— ասում է Զոպանյանը և շարունակում,— Չեմ ուզեր և չեմ կրնար ընդունիլ, թե մենք... խ. Հայաստանի քաղաքական ու մտավորական ղեկավարներուն ձեռք երկնցուցինք այնտեղ կատարված հայրենաշեն ու մշակութային գրական գործերուն և ներգաղթի դերազանցապես ազգասիրական ձեռնարկին մեջ անոնց գործակցելու համար, սխալած ենք, և թե դեպքերը ցույց կուտան, որ դաշնակցականները, որոնք ամեն կետի մեջ խորհրդային ուժիմին ու խորհ. Հայաստանի ղեկավարներուն հանդեպ ժխտական հոգեբանություն մը ի հայտ բերին և դուռ քննադատական ու մշտապես ներհակ կեցվածք մը բռնեցին, իրավունք ունեին: Ո՛չ, այն դիրքը, զոր մեր իրատես ու հեռատես հայրենասիրությունը մեզ մղից բռնելու, ճըշտագույնն էր և միշտ կը մնա ճիշտ»[2]: Զոպանյանը վստահ համոզմունք է հայտնում, որ «փոթորիկը պիտի անցնի, ամպերը պիտի փարատին և պիտի գան օրերը, ուր լույսը ավելի քան երբեք պայծառ պիտի սերի մեր հայրենիքին մեջ»[3]:

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 117:

[2] Նույն տեղում:

[3] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 119:

Արդարև, ամերիկահայ մի գործչից, որ իր գաղափարախոսությամբ հեռու էր կոմունիզմից ու սոցիալիզմից, քաղաքացիական մեծ արիություն էր պահանջվում նման բարդ իրադրության մեջ, գտնվելով երկկողմանի քննադատության, նույնիսկ ամբաստանության կրակի տակ, որդեգրած հայրենասիրական ուղուն, Սովետական Հայաստանին նվիրվածության գաղափարին մինչև վերջ հավատարիմ մնալու համար։ Զոպանյանի օրինակը այդ վառ հայրենասիրության ապացույց է։ Եվ երբ ընթերցողը ծանոթ է այդ օրինակին, անվերապահ հավատում է թե զգացմունքի մաքրությանը, թե համոզմունքի աննկուությանը, որ Զոպանյանը դրել է դեռևս 1935 թվականի դեկտեմբերի 30-ին գրված այս տողերում.

«Ատենով մեր մեջ ամենեն ահռելի ուխտադնացությունը՝ Երուսաղեմ սուրբ տեղիքը երթալ տեսնելու և հոն աղոթելու համար կատարված ճամփորդությունն էր, և այդ ճամփորդությունը կատարողը իր թևին վրա կը կրեր դրոշմված կապտորակ նշան մը և կը դառնար «մահտեսի» կամ «հաջի»։ Այսօր հայրենասիրական ուխտադնացություն մըն է, որ տեղը բռնել սկսած է այդ հին կրոնական ուխտադնացության։ Օտար երկիրներ գտնվող հայրենազուրկ հայերու համար, երթալ իրենց աչքով տեսնել վերականգնված և զորացման ու զարգացման համար դիշեր ու ցերեկ ճգնող Հայաստանը, հրճվիլ անով և արտասահման վերադարձին այդ վերաշինության հոյակապ ճիգին ավելի ուժեղ կերպով մասնակցելու ձգտիլ, ուխտադնացությանց ամենեն քաղցրն է այսօր, ամենեն կազդուրիչը և ամենեն բեղմնավորը։ Այս նոր ուխտադնացություննեն դարձողը թևին վրա նշան մը չի կրեր, բայց նշան մը կը կրե դեմքին վրա, այն է՝ պայծառ և ուրախ արտահայտությունը, զոր հոն դրած է խորհրդային Հայաստանի մեջ մեր ժողովուրդին կատարած գեղեցիկ գործերուն և օրհնյալ խաղաղության մը մեջ այդ գործերուն կատարումեն անոր զգացած երջանկության տեսիլը»[1]։

---

[1] *Հայտնարերված է ամերիկահայուհի Օվսաննա Պետրոսյանին պատկանող թղթերում։ Պահպանվում է ԴԱԲ-ում։*

Գրականության հարցերը

Սրշակ Զոպանյանը, որ «Անահիտի» առաջին շրջանում մեծագույն նուանդով, լայնորեն և խորությամբ պնդում, հայտնաբերում ու պրոպագանդում էր թե հայության, թե Եվրոպայի հասարակության մեջ հայ միջնադարյան բանաստեղծությունը, նույն գործը, համեմատաբար ավելի սահմանափակ շրջանակներում, շարունակեց նաև Հանդեսի հրատարակման երկրորդ էտապում։

Նա պատրաստեց և առանձին հատորով հրատարակեց քուչակյան տաղերի մի նոր, համալրված ժողովածու՝ «Հայրեննեղրու բուրաստանը» խորագրով[1]։ Բացի այդ, «Անահիտ» Հանդեսի զանազան տարիների տարբեր համարներում հրատարակում և մեկնաբանում է Հովհաննես Թլկուրանցու, Հովհաննես Երզնկացու, ինչպես նաև Քուչակի առանձին անտիպ գործերը։ Հանդեսը տեղ է հատկացնում նաև միջնադարյան բանաստեղծությանը վերաբերող այլ հոդվածների, որոնցից կարևոր է մասնավորապես Ն. Ակինյանի ուսումնասիրությունը Նիկողայոս Ստամբոլցի տաղաչացի մասին։

Հատկանշական է ծերունազարդ Զոպանյանի խանդոտ համառությունը, որով նա հետևողականորեն, պատառիկ առ պատառիկ հավաքում, համեմատում և հրատարակում է հայ միջնադարյան պոեզիայի քիչ թե շատ շահեկանություն ներկայացնող էջերը։ Նույն խանդով նա պնդում է դրանցից լավագույնների առանձին հատորներով հրատարակության վրա։ Հովհան-

---

[1] *1932 թվականի աշնանը Սովետական Հայաստան այցելության ժամանակ նրան առաջարկվում է մի աշխատություն գրել Երևանում հրատարակելու համար։ Զոպանյանը նախընտրում է պատրաստել Քուչակի լիակատար ժողովածուն՝ երկու հատորով։ Առաջին հատորը, որ պարունակում էր քուչակյան տաղերը այն ձևով, ինչ ձևով ինքը դրանք հայտնաբերել էր զանազան ձեռագրերում, Սովետական Հայաստան է ուղարկում Դանուշ Շահվերդյանի միջոցով 1936 թվականին։ Գործը մնում է անտիպ։ Հետագայում, թե մինչև պատերազմը և թե պատերազմից հետո մի շարք նամակներով, որոնք հասցեագրված էին Ս. Հայաստանի զանազան անվանի գործիչներին, այդ թվում և Ավ. Իսահակյանին (ԳԱԹ, ԱՉՑ, IV բ. № 126 ա), խնդրում է գտնել նյութը և իրեն վերադարձնել։ Հատորի հետագա ճակատագրի մասին մեզ հայտնի չէ։ Երկրորդ հատորը, որ պարունակում էր նույն տաղերը, պակասները լրացնելուց, դասավորելուց, սխալներն ու թյուրիմացությունները ուղղելուց, սրբագրելուց հետո, Զոպանյանը հրատարակում է Մելքոնյան ֆոնդի միջոցով Փարիզում, 1940 թվականին։*

նաև Երզնկացուն (Պլուզին) նվիրված մի հոդվածում 1940 թվականին նա ցավով բացականչում է, թե ամոթ է, որ այդ «մեծատաղանդ հայ մատենագրին» և «նվիրյալ վկոդի բանաստեղծին» գործը կենսագրական ու քննական ուսումնասիրությամբ դեռ չի հրատարակվել: Չոպանյանը կոչ է ուղղում վենետիկի և Երուսաղեմի միաբանություններին՝ ձեռնարկելու այդ գործին[1]:

Երևնական թվականներին հայ միջնադարյան պոեզիայի մեջ Չոպանյանի կատարած պրպտումների կարևոր արդյունքը Ստեփանոս Դաշտեցի բանաստեղծի տաղերի հրատարակությունը և պրոպագանդն էր: Չոպանյանը որոշում է Դաշտեցու տեղը, նշելով, որ նա դիջում է Կոստանդին Երզնկացուն և Հովհաննես Օձնեցուն իսր ներշնչման և ինքնաբուխ նորը ոճի տեսակետից, որ նա սիրում է ճոխ հանդն ու արվեստականությունը, բառախաղը և հաճախ դրանց է զոհում իմաստի հստակությունը և տրամաբանական հաջորդականությունը: Միևնույն ժամանակ Չոպանյանը գնահատում է այն հատվածները, որոնք պարունակում են «կյանքի սուր դիտողություններ, բարոյական ուժեղ խորհուրդներ, սիրտ ջերմ զեղումներ... արտահայտված սեղմ ու կուռ տողերու մեջ, հյուսված ճարտար տաղաչափությամբ»[2]:

Հայ միջնադարի բանաստեղծության նմուշների հրատարակությունը երբեմն էլ բերում է նախկինում թույլ տված սխալը ուղղելու անհրաժեշտությունից: Չոպանյանը չի վարանում ընդունելու, թե իր «Roseraie»-ում կամ այլ հրատարակություններում, ինչպես նաև «Անահիտ» տարեգրքի շրջանում թույլ է տվել տառձին սխալներ ու անճշտություններ (այս կամ այն հեղինակին սխալմամբ վերագրված տաղեր և այլն), որոնք, սակայն, բնավ չեն իջեցնում նրա կատարած գործի արժեքը:

Հայ հին դրականության էջերի հրատարակմանը զուգընթաց Չոպանյանը «Անահիտ» երկրորդ շրջանում մեծ տեղ է հատկացնում արևմտահայ և արևելահայ դասականներին, տպագրում է մեր նոր դրականության նահատակ և վերապրող արևմտահայ գեմքերին՝ Գր. Զոհրապ, Ռուբեն Զարդարյան, Թլկատինցի, Արտաշես Հարությունյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Վահան Թեքեյան, Վահան Մալեզյան, Տիգրան Կամսարական, Ահարոն Տատուրյան և այլն: Ամսագրի խմբագրականը հանդես է գալիս

---

[1] «Անահիտ», ԺԱ տարի, 1940, թ. 1—3, էջ 9:

[2] «Անահիտ», Ժ տարի, 1939, թ. 1—2, էջ 1:

գրականության պատմությանը վերաբերող մի շարք հոդվածներով և ուսումնասիրություններով, որոնցից մանավորապես կարևոր են Գրիգոր Զոհրապին և Բաֆֆուն նվիրված հոդվածները:

Զոպանյանը բացում է սուլթանական կառավարության դեմ Զոհրապի գաղտնի գործունեության վարագույրը, գործունեություն, որը ծանոթ էր միայն հայկական խիստ նեղ շրջանակի: «Անահիտի» խմբագրապետը պատմում է, որ համաշխարհային պատերազմից առաջ Զոհրապը ֆրանսերեն գործ է գրել հայկական հարցի վերաբերյալ, ձեռագիրը ուղարկել է Զոպանյանին, խնդրելով բացարձակ գաղտնապահությամբ հրատարակել ու ցրել: «Գիրքը ապվեցավ և երեցավ «La guestion arménienne a la lumiere des documents» տիտղոսով,— գրում է Զոպանյանը,— և Ազգային պատվիրակությունը զայն գրկեց ամբողջ Եվրոպական ու ամերիկյան մամուլին, հեղինակը կը ներկայանար իբր ֆրանսացի մը՝ Marcel Léart անունով: Իր փաստացի հատակ, չափավոր, համոզկիր պարունակությամբ և գրված թեզին հշմարտությունը պայծառորեն ապացուցանող դոքյումաններով, այդ գիրքը, ուր հեղինակը Թրքահայ հարցին բանավոր լուծումը ոչ միայն արդարության անվիճելի պահանջ մը, ոչ միայն քաղաքակրթության ու խաղաղության մատուցվելիք գնահատելի ծառայություն մը, այլև նույնիսկ Բուրքիո հիմնական շահերին նպաստավոր լլալը կը փաստեր...[1]

Զոպանյանը «Անահիտում» հրապարակում է Զոհրապի (մինչ այդ անհայտ) նամակը, որը գրված է հայկական բարենորոգումների մասին Թուրքիայի և Ռուսաստանի դեսպանատան միջև համաձայնագրի կնքման թարմ տպավորության տակ, 1914 թվականի հունվարի 18(31)-ին: Այդ նամակում հատկանշական է ռուսական կողմնորոշման նկատմամբ Զոհրապի, ինչպես նաև, ըստ Զոհրապի վկայության, Զոպանյանի վերաբերմունքը: «Մեկ ուժ մը միայն,— գրում է Զոհրապը,— որուն ես դոնե անձնապես, և դուն ալ ինծի հետ, փարած էի սկիզբեն ի վեր... ուժ մը, զոր, երբ անդին բոլոր հայերը կը հարվածեին, կը նախատեին, մենք կը փայփայեինք, ուժ մը, զոր հաջողեցանք հայոց պաշտպան դարձնելու... այդ ուժը, ըսելու պետք կա՞ միթե, ռուսական պետությունն է»[2]:

---

[1] *«Անահիտ», Բ տարի, 1930, թիվ 3, էջ 2:*

[2] *Նույն տեղում, էջ 12:*

Չոպանյանը Բաֆֆուն մանրամասնորեն ուսումնասիրել և անդրադարձել է բաղմաթիվ առիթներով հատկապես «Անահիտ» առաջին շրջանում, հայ ազգային-ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ իր հայացքները շարադրելիս, բայց մեծ վիպասանին նվիրված հատուկ աշխատություն գրելու առիթ ունեցավ միայն 1937 թվականին, Բաֆֆու ծննդյան հարյուրամյակի առթիվ։ «Բաֆֆի» տիտղոսով հոդվածը[1] ծավալուն, իսոր և բաղմակողմանի մի ուսումնասիրություն է, որի մեջ հեղինակը բարձր է գնահատում Բաֆֆի գեղարվեստագետին և շարադրում է իր կարծիքը Բաֆֆու քաղաքական ծրագրի վերաբերյալ։ Անհրաժեշտություն չենք տեսնում մանրամասնորեն վերլուծելու այդ հոդվածը, քանի որ ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ Չոպանյանի հայացքներին, իրենց ամբողջության մեջ, մենք արդեն անդրադարձել ենք։ Այնուամենայնիվ, մի քանի էական գծերը շեշտելու հարկ կա։

Բաֆֆու ստեղծագործության վերլուծությունը և ժամանակակից սերունդների վրա նրա թողած հզոր ազդեցության քննությունը հիմք են տալիս Չոպանյանին խիստ կարևոր եզրահանգումներ անել գրականության հասարակական դերի և կոչման վերաբերյալ։ «Գրականության պատմության մեջ քիչ անգամ տեսնված է, որ գրագետ մը այդպիսի արագ և ուժեղ ազդեցություն ունեցած ըլլա իր ժողովուրդին մեկ կարևոր մասին նկարագրին և ամբողջ ճակատագրին վրա,— գրում է Չոպանյանը։— Մեր ժամանակներու ազատագրական շարժումը իբր ներշնչող ու պատրաստող ունեցած է խումբ մը հայ մեծ մտքեր, զոր արդեն հիշատակեցի,— Մխիթար, Աբովյան, Նալբանդյան, Բաղրատունի, Ալիշան, Խրիմյան Հայրիկ, Պեշիկթաշլյան, Գամառ-Քաթիպա, Շերենց և այլն,— բայց այն գրագետը, որ այդ նախապատրաստված էլեկտրականությունը պայթեցնել տվավ, կուտակված ու բորբոքված ուժերը գործի մղեց, Բաֆֆի վիպասանը եղավ։ Բաֆֆին առավ մեծագույն ապացույցներեն մին հանդիսացած է գրականության բարոյական ու հաղափական խորունկ ու թանկագին զորություն մ'ըլլալուն»[2]։ (Ընդգծումն իմն է—Կ. Դ.)։

Հատկանշական է, այնուհետև, որ Չոպանյանը Բաֆֆուն համեմատելով համաշխարհային գրականության մեծ ռոմանտիկ-

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 5—6։

[2] Նույն տեղում, էջ 30—37։

նների հետ, նրան համարում է «Հյուգոյի տեսակեն», այն բանի համար, որ նրա հերոսները «ժողովրդի ծոցեն ելած ու մարդկային ընկերության անարդարություններեն ղղված ըմբոստ ու պայքարասեր» մարդիկ են, որոնք պայքարում են «չքավոր ժողովուրդը կեղեքող ու շահագործող պետ հովիվներուն դեմ»[1]: Պատահական չէ, որ Զոպանյանը խիստ բարձր է դնահատում «Խաչագողի հիշատակարանը», «Ոսկի աքաղաղը», «Խաղփուշը» և այլն: Միևնույն ժամանակ նրա հերոսները ազգային ազատագրության պայքարի հզոր դեմքեր են: Բաֆֆին, ասում է Զոպանյանը, «հավատարիմ հետևորդ իր վարպետ Մ. Նալբանդյանին, կը սիրեր միացնել երկու իդեալները»՝ սոցիալական և ազգային ազատագրության իդեալները[2]: Այդ կապակցությամբ, հետաքրքրություններից դուրկ չէ այն համեմատականը, որ անց է կացնում Զոպանյանը Բաֆֆու և Շերենցի միջև: Ըստ Զոպանյանի, Շերենցի իդեալը միայն ազգայինն էր, որը բացատում էր սոցիալական հարցը, դասակարգային պայքարը ազատագրական պայքարի էտապում: Բաֆֆու մեջ նույնպես, հայտարարում է Զոպանյանը, գերակշիռը ազգային իդեալն էր, «բայց ռուս վիպասաններու և Միքայել Նալբանդյանի աղդեցությունը կրած է ան հայտնապես և անոր «Խնդիր»-ին ու «Կայծեր»-ուն մեջ դասակարգային պայքարին շունչը կը զգացվի, ընկերավարական ոգին կը խառնվի ազգասիրական զգացումին»: Ահա թե ինչու նա Բաֆֆուն համարում է «ավելի բազմալար, ավելի մեծաշունչ» քան Շերենցը[3]:

Վերջապես, Զոպանյանի համար հատկանշական է, որ Բաֆֆու սոցիալ-քաղաքական իդեալը քննարկելիս, նա համադրում է այն արդի սոցիալիստական Հայաստանի հետ: Վարդանի երազը, ասում է նա, մասամբ իրականացել է Սովետական Հայաստանում: «Խորհրդ. Հայաստանին մեջ է, որ իրականացան ու զարդացան, և իրենց զարդացումը պիտի շարունակեն ազգային մշակույթի այն մեծ հաստատությունները, զոր Բաֆֆի Վարդանի երազին մեջ երկու հարյուր տարի հետո իրականալի ցույց կուտար... Ներկա պայմաններու մեջ,— շարունակում է Զոպանյանը,— ուրիշ ոչինչ ունին հայերը, բացի այժմու Հայաստանեն,

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 5—6, էջ 46:

[2] Նույն տեղում, էջ 48:

[3] Նույն տեղում, էջ 53:

և,— Րաֆֆին ու Միքայել Նալբանդյանը ուրիշ բան պիտի չլսեին, եթե ողջ լլային հիմա,— ոչ միայն այդ գոյություն ունեցող հայ պետությունը թանկագին է մեզի համար, այլև, հակառակ բոլոր գանգատներուն, զոր կրնաք ունենալ խորհրդային Միության վարչաձևին այս կամ այն սկզբունքներուն մասին, այդ Հայաստանին խորհրդ. Միության մեջ մնալը, անոր վրա կռթնելով իր գոյությունն ապահովելը անվիճելի անհրաժեշտություն է»[1]: Հարկ է նկատի ունենալ, որ այս տողերը Չոպանյանը գրել է 1937 թվականին, մեկ անգամ ևս գրսևորելով ոչ միայն նվիրվածությունը Սովետական Հայաստանին, այլև քաղաքական հեռատեսությունը:

Րաֆֆուն, Չոհրապին, ինչպես նաև Թումանյանին, Իսահակյանին, Շիրվանզադեին, Նար-Դոսին և հայ դասական գրականության բազմաթիվ ուրիշ ներկայացուցիչներին պարբերաբար անդրադառնալը «Անահիտի» և նրա խմբագրական գործունեության կարևորագույն ծրագրային կետերից մեկն է եղել: Առհասարակ հեռավոր և մոտավոր անցյալի հոգևոր ժառանգության ընդունման հարցը օրվա հրամայական հարցերի թվում էր, և Չոպանյանը այդ հարցը լուծում էր ոչ միայն գործնականորեն՝ ամսագրում տեղ տալով դասականներին ու հանդես գալով նրանց վերաբերող հոդվածներով, այլև փորձում էր լուծել խնդիրը տեսականորեն: Ինչպես կտեսանենք ստորև, նա այդ առթիվ ծանր վիճաբանություններ ունեցավ Շահան Շահնուրի հետ: Միաժամանակ, Չոպանյանը չէր կարողանում ընդունել պրոլետկուլտի ժամանակներից մնացած՝ անցյալի ժառանգության նկատմամբ հախուռն արհամարհանքով լեցուն, հայացքների դրսևորումները և խստորեն պայքարում էր դրանց դեմ:

Պատահական չէ, որ Գորկու մահվան առթիվ, անդրադառնալով նույն հարցին, նա աշխարհահռչակ դրողի կարևոր ծառայություններից մեկը համարում էր այն, որ Գորկին սովորեցնում էր նոր գրողներին, հեղափոխությունը երգող գրողներին՝ կապերը չխզել անցյալի մեծ հնդինակների գրական ժառանգության և ժողովրդական բանահյուսության հետ, օգտվել հին վարպետներից ու ֆոլկլորի դասերից[2]:

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 5—6, էջ 57—58:

[2] «Անահիտ», է տարի, 1936, թ. 5, էջ 19:

«Մարդ անշուշտ իր ժամանակը պիտի արտահայտե...— գրում էր Զոպանյանը մի նամակում։— Անցյալին դեղնցիկ և անմահ արտահայտություններն արհամարհելով չէ, որ մարդ իր ժամանակին հարազատ արտահայտիչը կըլլա։ Ներկան անցյալին թըշնամին չէ, զավակն է։ Զավակ մը պետք չէ կապկե իր հայրը, պետք է տարբեր ըլլա, ինքնատիպ ըլլա, բայց անոր համար անհրաժեշտ չէ հորը կռնակ դարձնել։ Պետք է գիտնալ անցյալին մեջ գտնել անցավորն ու անկորնչելին, մշտականը»[1]։

Անցավորն ու անկորնչելին միմյանցից գտնելու բնույթը Զոպանյանը ավելի հանգամանորեն գարգացնում է 1933 թվականին Աղասի Խանջյանի արտասանած մի բանախոսության առթիվ, որի մեջ Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղարը գրողների առջև խնդիր է դնում ճանաչել և օգտվել նախորդ ժամանակաշրջանների գեղարվեստական հրաշակերտներից։ Շարադրելով Խանջյանի մտքերը՝ Զոպանյանը գրում է. «Մեր նոր գրականությունն ու արվեստը կերտողները, կըսե Խանջյան, պետք է ճանչնան նախկին շրջաններու գործերը, գնահատեն անոնց մեջ ինչ որ կա անթառամորեն գեղեցիկ և օգտվին այդ գեղեցկություններեն՝ իրենց նոր աշխարհայացքը արտահայտելու, իրենց նոր արվեստը կերտելու համար, բայց պետք չէ տարվին այդ հին գործերու մեջ արտահայտված այն գաղափարներեն ու ձգտումներեն, որ հակառակ են նոր աշխարհայացքին, պետք է այդ հին գործերուն գաղափարաբանությունը ենթարկեն իրենց «մարքսլենինյան քննադատության», պետք է հետու մնան անոնց հին ոգիեն և օգտվին միայն անոնց մեջ գտնվող մարդկային առողջ ու մնայուն տարրերեն ու մանավանդ անհատական հանճարի կամ տաղանդի հոն ստված արվեստի օրինակելի գեղեցկություններեն, պետք է ջանան իրենք ալ ըլլալ այնքան վարպետ արվեստագետ, որքան այդ հինները, բայց իրենց ժամանակի ոգին, իրենց ընդգրկած նոր վարդապետության շունչն ունենան միշտ իրենց առաջնորդ»։

Միանգամայն համաձայն այդ պահանջներին՝ Զոպանյանը շարունակում է. «Մենք իսկ, որ համայնավար չենք, երբ Նարեկացին կը կարդանք, անոր քնարերգական զորությունը սքանչացմամբ կը գնահատենք, բայց ատոր համար անոր միջնադարյան

---

[1] Նամակ Մարի Արմաճյանին, 5/2—1944։ Նամականի, էջ 288։

*կենսատյաց մոլեռանդ վանականի աշխարհայացքը չենք բաժ-
ներ»*[1]։

Անցյալի ժառանգության նկատմամբ գաղափարական այս դիրքերից ելնելով Զոպանյանը մոտենում է Շիրվանզադեի ու Նար-Դոսի ստեղծագործության գնահատմանը, ձգտելով շեշտել այն ամենի առկայությունը, որոնք նպաստում էին սոցիալական հեղափոխության հաղթանակին։ Նար-Դոսը, ասում է Զոպանյանը, ժխտական գույներով է ներկայացնում հարուստ ջոջին և մամոնայի երկրպագու կղերականին։ Նրա ըմբռնությունը չի արտահայտվում հեղափոխական տեսություններով ու մարդկային հասարակության անարդարությունների դեմ մարտնչող հերոսների պատկերումով, բայց նրա ստեղծագործությունները օբյեկտիվորեն հարուցում են ընդվզման և վերանորոգիչ պայքարի տրամադրություններ, «ընկերական հեղափոխություն պատրաստող գործեր են, ճիշտ ինչպես և Սունդուկյանցի ու Շիրվանզադեի գործերը»[2]։

Շիրվանզադեի՝ արտասահմանից Սովետական Հայաստան փոխադրվելու առթիվ Զոպանյանը խորհրդում է, թե «Քաոսի» հեղինակը ուրիշ ընթացք չէր կարող ունենալ, որովհետև նրա հիմնական գործը իր ոգով արդեն շատ մոտ էր այնտեղ տիրապետող դարձած գաղափարախոսությանը[3]։ *«Անոր գրականությունը, գրում է Զոպանյանը, ըլլալով հանդերձ հարազատ հայկական, չէ ունեցած երբեք նեղ աղդայնամոլ ոգի, անոր ուսումնասիրության դաշտը հայ պուրժուազին եղած է գլխավորապես, և չըլլալով հանդերձ ընկերավարական՝ ան այդ դասակարդին թերություններն է, որ ձաղկած է առավելապես, դրական գծերն ալ չանտեսելով, ան մանավանդ խոնարհներուն, կեղեքվածներուն, գյուղացիին ու բանվորին, ոչ շողոքորթող, այլ կարեկից ու անկեղծ բարեկամը եղած է, անոնց ոչ միայն տառապանքներն ու խավարի մեջ փտումը, այլ և անոնց թերությունները անաչառորեն նկատելով հանդերձ՝ անոնց ընտիր տիպարներուն մեջ ի հայտ եկող տիրական առաքինությունները, ժողովրդական սրտին պարզությունը և մաքրությունը ի վեր հանած է։ Անոր համար այդ «երևելիան» դրագետը այսօրվան կարմիր Հա-*

---

[1] «Անահիտ», Ը տարի, 1933, թիվ 3—4, էջ 19—20։

[2] «Անահիտ», Ը տարի, 1933, թիվ 1, էջ 60։

[3] «Անահիտ», Զ տարի, 1935, թիվ 6, էջ 44։

յաստանին մեջ ալ կը հարգվի անկեղծորեն, ոչ միայն իբր գրական վարպետ, որուն տաղանդի բարձրութիւնը ամենքին կընդունվի, այլ և իբր գրող մը, որ մարդկայինը նախընտրած է թէ՛ ազգայնամոլականին, որուն գործը հեղափոխական չէ, բայց պատրաստող է ընկերական հեղափոխութեան»[1]:

Մարքսիստական գրականագիտութեան հետ ծանոթութիւնը և շփումը, քաղաքական-հայրենասիրական շահագրգռութիւնը Սովետական Հայաստանի բարօրութեան և բարգավաճման նկատմամբ, ակնհայտաբար իրենց ազդեցութիւնն են թողնում Զոպանեանի էսթետիկական հայացքների վրա, նպաստելով այն բանին, որպեսզի Զոպանեանը ավելի խոր ընկալի հայ դասական ռեալիստական գրականութեան սոցիալ-հասարակական արժեքն ու նշանակութիւնը: Սունդուկեանին ու Շիրվանզադեին նվիրված նրա նախորդ հոդվածներում էլ, որոնց ծանոթացել ենք սույն աշխատութեան առաջին բաժիններում, արդեն առկա է այդ հայեցակետի սաղմը: Կատարված էվոլյուցիայի հիմնական բովանդակութիւնն այն է, որ Զոպանեանը հայ դասական ռեալիստական գրականութեան արտադրանքը սկսում է կապել սոցիալական հեղափոխութեան հետ:

***

Նոր շրջանի «Անահիտին» որոշակի դեր է վիճակվել սփյուռքահայ գրական զարթոնքին նպաստելու գործում: Նրա էջերում հյուրընկալվել են տասնյակ ու տասնյակ նորաբողբոջ բանաստեղծներ ու արձակագիրներ, որոնցից մի քանիսին, ինչպես օրինակ Հակոբ Գույումճեանին, Բենիամին Նուրիկեանին, Վահե Վահեանին, Պետրոս Զարոյանին, Զարեհ Որբոնուն, Նիկողոս Սարաֆեանին, Սեմաքին, Միսաք Մանուշեանին, Բուզանդ Թոփալեանին, Գրիգոր Գյուլլեանին, Ավետիս Ալիքսանեանին, Մաուի Աթմաճեանին և ուրիշների, գրական խոստումնալից ապագա էր սպասվում: Տարբեր էին հանդեսում տպագրվող ստեղծագործողների ուղղութիւնները, երբեմն միմյանց ներհակ գաղափարախոսութիւններ էին հանդիպում ամսագրի էջերում, անփոփոխ մնում էր հանդեսի սկզբունքը՝ ժամադրավայր լինելու սփյուռքահայ բոլոր գրողների համար, առանց քաղաքական և գաղա-

[1] «Անահիտ», Ա տարի, 1930, թիվ 5, էջ 117:

փարախոսական զանազանությունների։ 30-ական թվականների սկզբներին սփյուռքահայ գրականությունը ապրում էր գարնանքի մի շրջան, երբ չէին սպիացել արևմտահայության մարմնին պատյացած վերքերը, ծանր ու համառ տնքում էր ցավը, զգալ տալով իրեն քաղաքական անորոշ կացություններին մեջ ձգված դաղթօջախների կյանքում և այդ կյանքն արտացոլող գրականության մեջ։ Բնական է, որ այդ շրջանում «Անահիտ» հանդեսում նույնպես երևում են անատուցության, ամայության երանգներ։

Ի՞նչ կրնամ տալ քեզի, քույր,
Սրտիս մեջ կա ափեղերք,
Թշվառության՝ ափիս մեջ,
Քույր, ի՞նչ կրնամ տալ քեզի։

Կամ.

Ընդվզումի ոչ մեկ ձայն
Կ՚ելլե կուրծքես չայրայուն,
Կամքիս զենքն է չախչախվեր,
Դիպվածը պիս կը բշե։

Բանաստեղծ Հովանի Շահենի դեղեցիկ տողերն են արտանք, որ հարատատորեն թարգմանում են սփյուռքահայ որոշ հատվածի անափփելի կացությունը։ Բայց ահա, ճիշտ նույն համարում «Անահիտը» հրատարակում է Հակոբ Գույումճյանի արձակ բանաստեղծությունը։ Կապիտալիստական աշխարհի անհաշտելի հակասությունների խտացված, խորհրդանշական պատկերն է այն, այդ հակասությունների լուծման միակ հանապարհի ցուցադրումը.

«Խավարը հզի է կյանքով ու նոր օրերու օրհնությունով...
Եվ ահա ափեղերքը կը ճեղքվի ու դուրս կը հոսի
Արևին լույսը մայրության պես բերրի ու արդարության պես առատ
Կարմիր, կարմիր արև...»

Այս կոնտրաստը մենք բնութագրինք լուսաբանելու համար հանդեսում տեղ գտած գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակության ամպլիտուդը։ Անշուշտ, բնական էր և՛ մեկի, և՛ մյուսի գոյությունը ժամանակի առաջընթացի հետ, սակայն, մանավանդ մայր հայրենիքի օրավուր ամրապնդվող կացության շողշողուն լույսի ներքո, առավել բյուրեղանում, հստակ են դառնում սփյուռքահայ առաջադիմական գրականության զարգաց-

ման ուղիները: Եվ, թևակոտ, «Անահիտը» պարզել էր լայն ու բաց դաշտի դրոշակը, այնուամենայնիվ ինչ-որ կետում սահմանափակումը տեղի էր ունենում: Հանդեսում ավելի հաճախ են սկսում երևալ սոցիալական պայքարի և հայրենասիրության, Սովետական Հայաստանին որպիսական նվիրվածության թեմաները: Այս երևույթն էլ հանդեսի բնութագրական հատկանիշներից մեկն է և ամենակարևորը: «Անահիտի» գրական բաժնի երկրորդ բնութագրական գիծը գեղարվեստական ստեղծագործությունների մեջ կյանքը հասատատող, լավատեսական ոգու գերակշռությունն է: Եվ, վերջապես, մի ուրիշ էական հատկանիշ ևս. գրական ուսուցչի դերում հանդես էր գալիս ինքը՝ խմբագրապետը, խնամքով ու հոգատարությամբ ուղղություն տալով, ճենճելով գրական նոր սերունդը:

«Արվեստի, ինչպես և գրականության ու գիտության մեջ, մարդ մինչև իր մահը սովելիք ունի, և ան որ կը կարծե թե գրագույն կատարելության հասած է, իր իսկական կատարելագործումը իր ձեռքովը կ'արգիլե»[1],— գրում էր Արշակ Չոպանյանը: Ճիշտ այդ սկզբունքից ելնելով նա պահանջում էր գրողներից ու արվեստագետներից՝ անընդհատ սովորել, սովորել կյանքը, սովորել գրականությունը: Արձակագիր Ա. Կապենցը այսպես է վերհիշում իր առաջին հանդիպումը Ա. Չոպանյանի հետ. «Փարիզ մուտքիս, անմիջապես իր տունը հրավիրեց զիս Չոպանյան: Դպրոցս, ընթերցումներս և գրական սևռին նախապատվությունները հասկնալի հետո՝ քանի մը ֆրանսացի հեղինակներու ընթերցումը հանձնարարելե վերջ, կանգ կառներ ան Գի դը Մոպասանին:

— Կարդա և նորեն կարդա: Ճամփադ կը փնտրես, կը գրտնաս»[2]: Հատկանշական և բնութագրական է Չոպանյանի համար որ նա երիտասարդ արձակագրին որպես ուսուցիչ մատնացույց է անում Գի դը Մոպասանին:

Անշափ ուշադիր և հոգատար սկսնակ, խոստումնալից գրողների նկատմամբ, վիթխարի ժամանակ տրամադրելով նրանց յուրաքանչյուր տողի կամ հանդի բարեհնչյունության, նրանց արվեստի կատարելագործմանը՝ Չոպանյանը տանել չէր կարող գոռոզամտությունը, ժամանակից շուտ «վարպետության» հովեր

---

[1] «Անահիտ», Ժ տարի, 1939, թիվ 6, էջ 26:

[2] «Լուսաբերյուր» (Փարիզ), Ը տարի, 1954, թիվ 21—22, էջ 238:

առնելը։ «Կը գնահատեմ Ձեր համեստությունը,— գրում է նա Անդրանիկ Անդրեասյանին,— որը մեծ հայտնություն է ու բարեբար, ինչ որ նորերու մեջ դժբախտաբար գոյություն չունի։ Միշտ էլ մնացեք այդպես. իրական մեծության հասնելու ու հետզհետե ավելի բարձր ելլելու ճամփանատ է»[1]։

Հուդիչ է երիտասարդ բանաստեղծ Սարգիս Ապտալյանի (Վահե Վահյան) և Զոպանյանի բարեկամական փոխհարաբերությունների պատմությունը։ Վահե Վահյանը 1930 թվականին իր առաջին բանաստեղծությունները ուղարկում է Զոպանյանի դատավճռին... Արժե մեջ բերել այդ սրտդող նամակը, որ երիտասարդական սրտի մաքրության վավերաթուղթն է և, նույն ժամանակ, Զոպանյանի ճանաչված ու ծանրակշիռ հեղինակության վկայությունը։

29 հուլիս, 1930, Պեյրութ

«Հարգելի պ-րն Արշակ Զոպանյան
խմբագիր «Անահիտ» պարբերաթերթի
Փարիզ

Մեծանուն վարպետ,

Ինչ որ կը զգա պատանի մը, որ իր մեջ հայտնվող անդրանիկ ու անարատ սիրույն խոստովանությանը համար կը հետևի քաղերուն առաջնորդությանը ու կը հասնի մինչև դուռը վինք համբոյող գեղուհիին... կը զգամ ես ալ այսօր, երբ կը պատրաստվիմ տղու մը միամտությամբ, իմ մեծագույն սիրուհիին՝ գրականության, բնակարանը մտնիլ։ Սեմին վրա քայլերս կը վարանին, թոթովելիք բառերս կորճամ անդադար, նախադասություն մը չավարտած, մյուսը մոռանալով, և մերժումի մը վախեն ու ամոթեն գույն կը փոխեմ, ասուված գիտե քանի անգամ։

Ահավասիկ այդ բառերս, թոթովանքներ անկասկած, երեք երգեր, երգված տարբեր ժամանակներու մեջ՝ պատանեկության մինչ երիտասարդություն։ Մեծ հավատք մը չունիմ անոնց վրա, կը զգամ մանավանդ, թե սկսնակի թափառումներ են, և Ձեզի հրամցնել համարձակելուս պատճառը, զանոնք անպայման տպագրված տեսնելու սնամիտ փառասիրությունը չէ անտարակույս։ Մետաղի կտորներ են անոնք, զորս կուզեմ փորձաքարի

[1] Նամականի, էջ 234։

վճռին տանել։ Կարևորը անոնց իսկությունը ճշտելն է, ոչ անպատճառ դանոնք ցուցադրելը։ Ի՞նչ կըսեք, վարպետ, կը տեսնե՞ք անոնց վրա արժեքի հետքը, շարունակե՞մ տալ անոնցմե երբեմն, թե հանքը կեղծ է ու շահագործումը չի վճարիր ծախքը։ Ահավասիկ ասոնք են դիս մտահոգող հարցերը, զորս Ձեզի նման հեղինակավոր անձնավորության մը կողմե լուսաբանված տեսնելը մեծ բախտավորություն մը պիտի ըլլա ինծի համար։ Եթե նույնիսկ հուսադրիչ ոչ մեկ նշույլ գտնեք անոնց վրա և պատասխարտեք խմբագրատան զամբյուղին, հաճեցեք գոնե երկտողով մը հաղորդել ինծի Ձեր դատաստանը, մեծապես երախտապարտ թողելով դիս...

Կրկին շնորհակալություններ ու խորին հարգանքներ
միշտ Ձերդ՝ Սարգիս Ապտալյան»[1]։

Դատավճիռը նպաստավոր է լինում. «Աղոթք» բանաստեղծությունը տպագրվում է Սարգիս Մինյան ստորագրությամբ։ Իր ժողովրդի տարաբախտ սրտի շշնջյունն է այդ աղոթքը, անհույս և անելույս։ Գուցե թե երկնավորը դարձյալ շենացնի այդ «թողլքված տնակը»։ Հետաքրքրական է բանաստեղծի ուղին հենց «Անահիտ» էջերում, ուղի, որը գծվել է ոչ առանց Զոպանյանի հայրական խորհուրդների և դաղափարական ազդեցության։ Երկնավորը, որին դիմում է բանաստեղծը, անդրդվելի է մնում։ Այլևս լրիվ մենակ է նրա քնարական հերոսը, բայց դեռ չի հուսահատված.

«Պիտի կամքիս ու մտքիս հաղթ մուրճերուն զարկին դեմ
Փականքները խորտակեմ ճգնարանիս դռներուն
Ու արևին վազեմ ես՝ կյանքի սիրով պատարուն»։

(«Առանձնություն»)

Դյուրին չէ, սակայն, արևին վազելը։ Կյանքի բավիղներում հոգնում է մարդը, մոլորվում։ Թափառումը կարծես այլևս իզուր է թվում, և քնարական հերոսի շրթից կախվում է անպատասխան հարցը.

«Պիտի մնա՞մ ես այսպես պատահարին անձնատուր,
Ճամփաններու մեջ մթին, կույր հույսն իրեն ինձ կանիծ»

(«Թափառում»)։

---

[1] ԳԱԹ, ԱՋՑ, I բաժին, 651։

Այդ հույսը՝ արևմտահայության ազգային երազանքի մարմնավորումը, վերջնականապես մարում է կյանքի բերումով, մարում է նաև բանաստեղծի սրտում: Այլևս այդ հույսը նրա աչքում պճնազարդ մի պոռնիկ է, իսկ ինքը՝ քնարական հերոսը, մաքառում է «լույսի և սովերի» խաչմերուկներում, երբեմն կառչում անցյալի թևին, մերթ էլ դեն նետում «անկենդան հանդարտությունն» ու ձգտում հոգու խարույկի:

Խարխափումների, մտամոլար ոգորումների ճանապարհով վահյանը «Անահիտի» էջերում տակավ առ տակավ առնականանում է, արմատներ ձգում, վերջնականապես գտնում իրեն: Նրա կյանքի ուղին լուսավորում է հորիզոնում կանգնած փարոսը՝ Մայր հայրենիքը: Բանաստեղծի շեփորը այլևս միայն «կյանք, կյանք, կյանք» է շեփորում, նրա քնարական հերոսը պատրաստ է կուրծք տալու իրականության նիզակներին, պատրաստ է հասատատ, ուղիղ քայլով, լանջաբաց ընդառաջ գնալ գալիք «մեծ երկունքին»՝ վազվա լուսաբացին («Շեփոր»), որովհետև ապահով է ուղին:

«Երազ մ'ուրիշ, նոր ճաճանչն մ'առած փայլ՝
Արագածի կողերն ի վար բացող թև,
Թող լեռնանա հինին մոխրեն վեր մագլ՝
Կատարներով մշտաթև»:

(«Ձեպել մուսա»)

1930 թվականին Զոպանյանի ուշադրությունը գրավում է «Ջանք» ամսագիրը, որի շուրջ համախմբված երիտասարդ բանաստեղծների թվում էին Ա. Սևման (Դեղամ Աթմաճյան) և Միսաք Մանուշյանը: «Չեմ կրնար հաճույքով չհիշատակել քանի մը բոլորովին նոր ու շատ սիրուն դեռատի բանաստեղծներու հայտնությունը, զոր կը գտնեմ «Ջանք» ամսաթերթին մեջ»,— գրում է նա իր քրոնիկներից մեկում[1]: Սկսած հենց այդ շրջանից էլ թե Սևման և թե Մանուշյանը պարբերաբար աշխատակցում են «Անահիտին», նրա էջերում տպագրելով իրենց բանաստեղծությունները:

Հատկանշական է, որ Զոպանյանը երկու բանաստեղծների մեջ էլ դրվատում և խրախուսում է հեղափոխական ոգին, բռնության դեմ պայքարի արդարությունները: «Անահիտում» երևում են

[1] «Անահիտ», Բ տարի, 1930, թիվ 2, էջ 112:

Մանուշյանի «Պայքար», «Ամբոխին կանչ», Սեմայի՝ «Ժառանգորդն եմ», «Կռվի երթ» և մի շարք ուրիշ գործեր, որոնց կենտրոնական թեման աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությունն է ընդդեմ բռնության ու ֆաշիզմի: Պատահական պիտի չհամարել, որ «Անահիտ» խմբագրատունը իր հանդեսում արդեն պատերազմից հետո երկրորդ անգամ արտատպում է Մանուշյանի և Սեմայի որոշ բանաստեղծություններ, որոնցում տիրապետողը պայքարի շունչն է:

«Երեք հերոսական նահատակներ» խորագրով հոդվածում, որը գրվել է Ցրանսիայի ազատագրումից հետո, Չոպանյանը բարձր է գնահատում Սեմայի, Մանուշյանի և Լուիզա Ասլանյանի (Լաս) կյանքն ու գործունեությունը, «որոնք ինքնաթիռ ու սիրուն տադանդի մը ապագույցները տված էին և որոնք կռվելով մահվան ընդառաջ գացին, հերոսական նահատակներ եղան»[1]: Մանավանդ Սեմայի հետ Չոպանյանը բարեկամական կապերի մեջ էր, հաճախ նամակներ էին փոխանակում, հատկապես առաջինի՝ ռազմաճակատ մեկնելուց հետո: Սեման անշափ բարձր էր գնահատում Չոպանյանի վաստակը և անհրաժեշտ էր գտնում այն լայնորեն ու խորությամբ ծանոթացնել հայ ժողովրդին: Նա մտադիր էր, ըստ Մարո Աբմաճյանի վկայության, մի մենագրություն պատրաստել Ա. Չոպանյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ[2]: Իր հերթին Չոպանյանն էլ Սեմայի մեջ ընդգծում էր հատկապես նրա քնարերգության գաղափարայնությունը: Լևոն Մոլյանին գրած մի նամակում, խոսելով վազգեն Շուշանյանի և Սեմայի մասին, Չոպանյանը գրում է. «Առաջինը ղոհ գնաց վայրագ հիվանդության մը, երկրորդը՝ բռնապետական ուժերուդեմ կռվելով և իր երկրորդ հայրենիքին ու ազատության դասը գնի ի ձևին պաշտպանելով կյանքը կորանցուց: Երկուսն ալ տաղանդավոր երիտասարդ գրողներ էին, խառնվածքով, ճաշակով իրարմե տարբեր, բայց երկուքն ալ արժեքավոր, ինքնատիպ գրողներ...

... Գեղամ Աբմաճյանը գրած է հոդվածներ, պատմվածքներ, քննադատ է եղել, բայց ամեն բանե առաջ քնարերգակ բանաստեղծ մըն էր. թարմ ու թրթռուն, ապնվաշունչ, խանդավառ, գաղափարապաշտ քնարերգակ մը»[3]:

---

[1] «Անահիտ», ԺԲ տարի, 1946, թիվ 1, էջ 1:

[2] ԳԱԹ, ԱՀՖ, 1 բաժին, № 142:

[3] Նամականի, էջ 299:

Սփյուռքահայ գրականության զարգացման պրոցեսում՝ նրա մեջ գաղափարական բովանդակության հարստացման հարցերին Զոպանյանը առանձնակի ուշադրություն էր դարձնում, մասնավորապես, ձգտելով հագեցնել այդ բովանդակությունը մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի իրականության նյութով։ 1930 թվականին արդեն նա խորհուրդ էր տալիս սփյուռքահայ գրողներին, որոնք այցելում էին Հայաստան, լայն կտավի նյութ դարձնել հայրենիքի կյանքը, գաղթահայությանը պատմել նրա ժողովրդի ստեղծագործ առօրյան։ «Ինչո՞ւ սիկին Նազյան չէ մտածած բուն իսկ վեպ մը հանել իր Հայաստան ճամփորդությունեն, և հոն դնել գաղութային անդաստական ու անաստույգ կյանքեն ղրկած հայրենադարձ հայու հոգի մը,— գրում էր Ա. Զոպանյանը՝ դիմելով Զապել Նազյանին,— որ կ'երթա Հայաստան և հոն տեսնելով նոր շունչով մը ոգևորված կյանք մը, տեղոտ ու երիտասարդ, և ուր հայ տարրը, հայ լեզուն կը տիրեն, ամեն ինչ գեղեցիկ կը դտնե, իր սիրտը սփռփված, երանությամբ լեցուն կը զգա ու նույնիսկ— ինչո՞ւ չէ— ալգասիրական զգացման գերագրգռությունեն՝ պուշկինը կը գտնա։ Վիպական հզոր գործ մը կա գրելիք այդ նյութին վրա, որուն դեռ ոչ ոք չէ մոտցած։ Տիկին Նազյան կրնա ուրիշ մեկեն ավելի լավ գրել այդ վեպը, և ես կը ցանկամ, որ գրե զայն, որովհետև գլուխգործոց մը կրնա ըլլալ անիկա»[1]։

Գեղարվեստական ստեղծագործության բովանդակության գաղափարական հարստության պահանջը Զոպանյանը դնում էր որպես արվեստի կատարելության, ձևի և բովանդակության բարձր համապատասխանության անհրաժեշտություն։ Նա չէր կարողանում հաշտվել այն երկերի հետ, որոնք գեղեցիկ են միայն գեղեցիկ լինելու համար։ Նման գործերում, շեշտում էր նա, պակասում է «էական բան մը», և այդ էականը Զոպանյանը համարում էր գաղափարայնությունը։ Ահարոն Տատուրյանի «Մադաղաթներ» խորագրով ժողովածուն գրախոսելիս՝ Զոպանյանը նկատում է. «Ամբողջ հատորին մեջ կը գտնենք գեղեցիկ հայերեն և ընտիր տաղաչափություն... կը գտնենք հոն գեղերով նոր բացատրություններ, իսկատիպ պատկերներ, քերթողական փափուկ տեսիլներ, բայց այդ գեղերը կը մնան հաճախ շփոթ, մութ, և չեն ալդեր մեր սրտին, հուզական չեն, վասնզի չափա-

[1] «Անահիտ», Ա տարի, թիվ 5, էջ 116։

զանց տարտամ, անհարիր, անհատակ է այդ պատկերները տարափին նաև դրված մտածումը, յուրաքանչյուր տալի ղեկավար մտածումը, առանց որուն տաղը կը դառնա զարդարուն լապտեր մը, որուն ճրագը չէն վառած»[1]:

Ձևի և բովանդակության միասնությունը կազմում է ճշմարիտ ու մնայուն գրականություն, ասում է Զոպանյանը, գտնելով, որ այդ ներդաշնակ միասնության խախտումը հանգեցնում է գեղարվեստական գործի խաթարման: Սփյուռքահայ գրականության մեջ օտարամուտ գրական հոսանքների ազդեցության տակ հաճախ այդ միասնությունը խախտվում էր հօգուտ ձևի: Ու ստացվում էին ոչ միայն ճրագը չվառած զարդարուն լապտերներ, այլև մանվածապատ, խրթին և, վերջին հաշվով, ոչինչ չասող գրական գործեր: Գրախոսելով սկսնակ Մինաս Թեոլեոլյանի «Նախերգանք» ժողովածուն, Զոպանյանը ուշադրություն է դարձնում հարցի հենց այդ կողմի վրա: Այդ ժողովածուի հեղինակը, ասում է Զոպանյանը, ընդհանրապես ձգտում է դեպի «հանելուկային գրականությունը», շփոթելով մանվածապատն ու խրթինը խորության հետ, նրա գործերի մեծ մասը «արվեստակյալ, բրոնզաղբոսիկ էջեր են, ուղեղի ճանկռտուք, որ կրնա մերթ ղարմացնել, կամ հետաքրքրական թվիլ, բայց հաճախ սրտնեղություն կը պատճառե, որովհետև շատ քիչ կը գտնենք հոն սրտի ու մտքի բնական ներդաշնակ խառնուրդը, որ կը կազմի ճշմարիտ ու մնայուն գրականությունը»[2]:

Բարձր գաղափարայնության, վերընձյուղված հայրենիքի իրականության արտացոլման անհրաժեշտության պահանջով է Զոպանյանը, առաջիններից մեկը, գրախոսում ժամանակի գրական երևույթները՝ Զարեհ Որբունու «Փորձը» և Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպերը: Մանրամասնորեն վերլուծելով և ցույց տալով գրականն ու հաջողությունները՝ Զոպանյանը որպես հիմնական թերություն արձանագրում է, որ երկու վեպերն էլ կտրված են ժամանակի հասկացողությունից: Նրանցում, ըստ Զոպանյանի, չկա գիտակցությունը ազգային աղետի, որի հետևանք են, ըստ էության, վեպերում ծավալվող իրողությունները, չկա ներկա Հայաստանի գիտակցությունը: Զոպանյանի կարծիքով վեպերի հերոսները պետք է «մանավանդ իրենց մտքին

---

[1] «Անահիտ», Թ տարի, 1938, թիվ, 4, էջ 113:

[2] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 105:

առջև ունենային միշտ, թե տարանջատված հայության մը հետ— որուն մեջ հետզհետե աճող ու ծաղկող այնքան կարևոր ուժեր կան,— մենք ունինք այսօր հայրենի հողի վրա հավաքված հայ ժողովուրդ մը, որ... իր տունը կը վերաշինե... և թե հոն է մեր ազգին ապահով, ամուր, գեղեցիկ ապագան, որուն չհավատալը մեծագույնն է ապստամբությունն»[1]:

Շահան Շահնուրի ստեղծագործության, մանավանդ, նրա գրաքննադատական և հրապարակախոսական հոդվածների առթիվ Զոպանյանը հանդես է եկել բազմիցս, սկզբունքային վեճեր մեջ մտնելով թե Շահնուրի և թե ժամանակի մամուլի մի շարք օրգաններին, մասնավորապես «Ապագայի» հետ: Հատկանշական է «Առողջն ու վատառողջը Շահան Շահնուրի գրականության մեջ» հոդվածը, որ Զոպանյանը հրապարակեց իր ամսագրում[2]: Բարձր գնահատելով արձակագիր Շահնուրի տպագրվող՝ Զոպանյանը անողոք քննադատության կրակի տակ է առնում Շահնուրի բացահայտ նիհիլիստական վերաբերմունքը հայ գրականության և հայ մշակույթի մի շարք երևույթների նկատմամբ, որը արտահայտվել էր երևնական թվականներին «Յառաջ», «Ապագա» թերթերում հրատարակած նրա հոդվածներում: Զոպանյանը համորեն և ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ մերժում ու վանում է հայ գրականության և մշակույթի հասցեին նետված անհիմն մեղադրանքները, ցույց տալիս այն կարևորն ու գրականը, որ ժառանգել է հայ ժողովուրդը իր գրողներից՝ Նարեկացուց մինչև Սիամանթո ու Վարուժան, մինչև Չարենց:

* * *

Սփյուռքահայ գրականության արագ զարգացումը, մանավանդ շեշտված առաջադիմական ու հայրենասիրական ուղղության առաջացումն ու վերելքը անհնարին էր առանց հայրենիքի՝ ծաղկող ու բարգավաճող Սովետական Հայաստանի իրականության և նրանում հասակ նետող բարձր գաղափարականությամբ հագեցված գրականության գոյության փաստի: Սփյուռքահայ գրականության վերելքի ապահովման գործում «Անահիտ»

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1930, թիվ 6, էջ 114:

[2] «Անահիտ», Ժ տարի, 1939, թիվ 1—2, էջ 79—93:

տրոշակի ծառայությունը Սովետական Հայաստանի պրականության պրոպագանդի ու տարածման մեջ է: Հանդեսի գրական բաժնի մասին ճիշտ ու լրիվ պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է նկատի առնել, որ հրապարակվող ստիւուքահայ գրողների կողքին զուգահեռաբար և գրեթե յուրաքանչյուր համարում զետեղվում էին սովետահայ գրողների արձակ ու չափածո գործերը, կամ գրախոսական-գրադատական նյութեր էին հրատարակվում նրանց ստեղծագործությունների, ինչպես նաև առհասարակ Սովետական Հայաստանի մշակութային կյանքի վերաբերյալ: Այդպիսով հարստանում և առավել շեշտվում էր կենսահաստատ, լավատեսական գրականության բաժինը, բարձրանում էր հանդեսի ընդհանուր գաղափարական մակարդակը:

Յավոք, պետք է նշել, որ Զոպանյանի ծրագիրը շատ ավելի լայն էր հղացված, քան իրականացավ հանդեսի էջերում: «Անահիտը», ըստ խմբագրապետի մտահղացման, պիտի յուրատեսակ կամուրջ դառնար հայ գրականության երկու հատվածների միջև: Զոպանյանը, սակայն, ստիպված էր բավարարվել հիմնականում միայն Հայաստանի գրական հանդեսներից ու առանձին հրատարակություններից կատարված արտատպություններով, նրան չհաջողվեց ապահովել հայրենիքի գրողների անմիջական աշխատակցությունը իր ամսագրում: Կատարված գործն էլ, այնուամենայնիվ, բավականին կշիռ ուներ:

Զոպանյանը, հնարավորության սահմաններում, ուշի ուշով հետևում էր հայրենիքի գրական-մշակութային կյանքին: «Անահիտի» էջերում տարբեր ժամանակներում տպագրվել են Ե. Չարենցի, Ա. Իսահակյանի, վ. Միրաքյանի, Գ. Մահարու, Մ. Սրմանեի, վ. Նորենցի, Գ. Զուբարի, Ալազանի, Ս. Տարոնցու, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Սարմենի, Ն. Զարյանի, Խ. Դաշտենցի, Ա. Գրաշու, Ազալյու, Ա. Արմանի, Ա. Թերլեմեզյանի և ուրիշների գործերը: Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ Զոպանյանը իր ժամանակին կարողանում էր տեսնել և գնահատել Սովետական Հայաստանի երիտասարդ և ապագա խոստացող գրական ուժերին: Նրա գնահատանքին արժանացան Նորենցը, Մահարին, Ալազանը, Գ. Սարյանը, Մ. Արմենը, Տարոնցին, Ս. Վահունին, Հ. Շիրազը և մի շարք ուրիշներ: Շիրազի «Գարնանամուտ», «Սիամանթո և Խչեզարե» գրքերի առթիվ Զոպանյանը, օրինակ, գրում է, թե ինքը «հայ նոր ու զմայլելի բանաստեղծի մը բերկրաւոիթ հայտնությունը» ունեցավ: Երեկ, ասում է Զո-

պանյանը, Շիրազը «խուժանային» որբ տղեկ մը եղած է Ս. Հայաստանի մեջ և այսօր, ըստ իս, Երևանի և ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մեջ ինքնուրույն տեղ մը գրավելու արժանի նկարչական քնարերգակ մըն է»[1]: Հատկանշական է, որ գրական նոր ու տպավորիչ սերնդի երևումը հայրենիքում, նրա զարգացումը Չոպանյանը կապում է երկրում տիրող իրականության ստեղծած հնարավորությունների հետ: «... աղքատ տղաք կամ պատերազմի որբեր,— գրում է Չոպանյանը,— որոնք մեկ օրեն մյուսը, խորհրդային ուժիմին ընծայած պաշտպանությամբ զորացած, իրենց կարողությունները լիովին զարգացնելու, իրենց տաղանդն արտահայտելու, իրենց արտադրությունները հրատարակելու միջոցները կը գտնեն իրենց տրամադրության տակ ու սրտով հարած այն վարդապետության, որուն վրա հիմնված է իրենց այդպիսի կյանք մը կարելի դարձնող ուժիմը, երջանիկ են՝ ինչպես ոևէ երիտասարդ հայ գրող չէ եղած յարդ»[2]:

Չոպանյանը խորությամբ ըմբռնում է, որ հայ գրականության ու մշակույթի աննախընթաց զարգացումը իր հերթին պայմանավորված է Սովետական Միությունում ստեղծված վարչակարգով, նա լավ է գիտակցում Սովետական Միության ժողովուրդների կյանքում գրականությանն ու մշակույթին վիճակված դերը որպես ժողովուրդների բարեկամության ու մերձեցման հզոր ազդակի: Չոպանյանը բազմաթիվ առիթներով ոչ միայն իր ուրախությունն է հայտնում գրական ու մշակութային փոխադարձ շփումների ու կապերի զարգացման համար, այլև ջատագովում և պրոպագանդում է այդ երևույթը: Այս տեսակետից էլ հատկանշական է «Անահիտ» հանդեսի երկու համարներում, շարունակաբար, Կարեն Միքայելյանի «Արվեստների օլիմպիադը Մոսկվայում» հոդվածի զետեղումը: Չոպանյանը միանգամայն համաձայն է Սովետական Միությունում տարվող ազգային քաղաքականության այն գնահատականին, որ, մշակույթի ասպարեզի վերաբերյալ, դրվում է հիշյալ հոդվածում. «Անահիտում» կարդում ենք օլիմպիադի կազմակերպիչ կոմիտեի նախագահ Ֆեդիքա Կոնի հայտարարության շարադրանքը. «... Մենք այս օլիմպիադով ուզում ենք ցույց տալ համայն աշխարհին, թե մեծ ցարա-

---

[1] «Անահիտ», է տարի, 1936, թիվ 5, էջ 30:

[2] «Անահիտ», ը տարի, 1934, թիվ 5—6, էջ 59:

կան Ռուսաստանում, ինչպես և մինչև օրս կապիտալիստական այլ երկրներում, ազգային ինքորոշման և մշակույթի խնդիրները լուծվել են և լուծվում են ինդանոքներով, հրացանազարկությամբ, բանտով, տնտահանությամբ ու կոտորածով, սովետական իշխանությունը հնարավորություն է տալիս իր դաշնակից ամեն մի ազգության՝ իր ուզած չափով զարգացնելու իր լեզուն, գրականությունը, արվեստը... Ցարական Ռուսաստանում հպատակ ժողովուրդների համար մի երաժշտություն կար, դա «շղթաների երգն» էր, երբ նրանց հեղափոխական գործերի համար աքսոր էին ուղարկում, իսկ այսօր այդ նախկին հպատակ ժողովուրդները ևկել են այստեղ իրենց պետական թատրոնական խմբերով, իրենց արվեստի մշակներով, կինոներով և երգչախմբերով, ոչ թե իբրև մի դեկորատիվ զարդ մի ինքնակալ պետության, այլ իբրև իսկական տերեր սովետական լայնածավալ երկրի»[1]: Բնական է, որ «Անահիտում» հայկականի կողքին մեծ տեղ է հատկացվում ռուսական, ուկրաինական, բելոռուսական, հրեական, վրացական, ադրբեջանական, ուզբեկական, թուրքմենական, բաշկիրական, կիրգիզական, մարիական, լատիշական, թաթարական արվեստի օջախների գործունեության մանրամասն նկարագրությանը:

Զոպանյանը, հետևելով սովետահայ երիտասարդ գրականության զարգացման բուռն ընթացքին, լավատեղյակ էր այդ պրոցեսի թե հիմնական ուղուն, որը արժանանում էր նրա պաշտպանությանը, և թե աճի թերություններին, որոնք նա քննադատում էր սկզբունքորեն սովետահայ գրականության կատարելագործման շահերից իսկ ելնելով: Հիմնականում, ըստ էության, նրան անհանգստացնում էր երկու կարևոր հարց: Առաջինը գրականության և արվեստի տենդենցիոզության հարցն էր: Դեռևս 1892 թվականին, ինչպես տեսանք, Զոպանյանը ձևակերպում էր և հետագա տարիներին զարգացնում իր հայացքները ռեալիստական արվեստի մեջ հեղինակի տենդենցը խորապես թաքցնելու անհրաժեշտության մասին: Նա պայքարում էր արվեստի մեջ դոնհիկ ուտիլիտարիզմի, մերկապարանոց քարոզի և ճառախոսության դեմ: Զոպանյանի հայացքներում այդ խնդիրը գրավում է կենտրոնական տեղերից մեկը: Նա հավասարաչափ անընդունելի էր գտնում թե սերճ փիսուրներով զարդարուն, բայց

[1] «Անահիտ», Բ տարի, 1930, թիվ 2, էջ 83:

անբովանդակ գրականությունը («Ճրագը չվառած լապտեր») և իր անարվեստ ու ճակատային քարոզչությունը, որ հրամցվում էր արվեստի անվ: Երկու դեպքում էլ նա տեսնում էր գաղափարայնության ու գեղարվեստականության միասնության խախտում, արվեստի մահ: Եվ երբ սովետահայ երիտասարդ գրականության, մանավանդ գրական քննադատության մեջ, որպես աճին ուղեկցող թերություններ, տեղ էին գտնում մերկապարանոց տեսլականի ցուցադրման երևույթներ, Չոպանյանը, բնականաբար, հանդես էր գալիս դրանց դեմ:

Մկրտիչ Արմենի «Երջում էր Լեոնուֆիասը» պատմվածքի առթիվ «Գրական դիրքերում» ամսագրում հրապարակված մի գրախոսականում հեղինակը քննադատվում է այն բանի համար, որ նրա հերոսը՝ Լեոնուֆիասը, փոխանակ իդեալ ունենալու պրոլետարիատի գործը, տարված է անհայտ, անմարմին, քմածին մի աղջկա իդեալով: «Վայ արվեստին ու գրականության,— բացականչում է Չոպանյանը,— երբ պանոնք անդունդ այդ տառճան նեղ ու քառակուսի վանդակի մը մեջ, ուր գեղեցիկին թռչունը, առանց որուն Արվեստ չկա, բոպե մը չի կրնար ապրիլ: Արմեն հեղինակ, անշուշտ, պետք է ունենա իր աշխարհայացքը,— շարունակում է նա, շարադրելով իր տեսական դրույթը,— իր տիրական ոգին, որ սակայն պետք է դիցվի իր գործին մեջ և ոչ բռնաբար ու բրտաբար փուվի ու իշխի հոն. ճշմարիտ ու տեսական գրագետը այն է, որ կյանքը իր բոլոր երևույթներով կըմբռնի և, իր նախասիրություններն ունենալով հանդերձ, կը ձգտի արտահայտել մարդկային հոգվույն բոլոր շարժումները... Երբ մանավանդ միմիայն «թեորին», կուսակցական բանաձևը կը մնա, վնասը կամ բանաստեղծությունը կը դադրի գրականության հետ ունել կապ ունենալն և, ինչքան ալ մարքսիզմին կամ ունե իզմի հավատարիմ արձագանք ըլլա, կը դառնա լրագրական ֆրազաբանություն, և այդպիսի էջեր... «պրոլետ» են ինչքան կուզեք, բայց «գրականություն» չեն...»[1]:

Չոպանյանը իրավացիորեն հանդես է գալիս գրականության սահմանների նեղացման դեմ, մի երևույթ, որը երբեմն իր դրսևորումներն էր գտնում պրոլետկուլտի որոշ ներկայացուցիչների մոտ: «Շատ լավ կըմբռնեմ ընշաղուրկներու կյանքն ու հոգին արտահայտող արվեստ մը և գրականություն մը,— գրում է Չո-

[1] «Անահիտ», Ը. տարի, 1930, թիվ 5, էջ 110:

պանյանը,— որ արդեն գոյություն ունեցած ալ է անցյալին մեջ, ընչազուրկ կամ ոչ ընչազուրկ գրագետներու ձեռքով հորինված, կըմբռնում հեղափոխական մարքսյան ոգով գրականություն մը, բայց պայմանով, որ նա արվեստի սահմանին մեջ դիտնա մնալ, ճշմարիտ ներշնչումի արդյունք ըլլա, կենդանի ու հուզիչ ըլլա ամենքին համար առանց դասակարգի խորության, «մարդկային» շեշտ կրե և ոչ նեղ-կուսակցական, և, մանավանդ, չհավակնի կարծել,— ինչպես կընեն պրոլետ-գրողները,— թե ամբողջ մարդկային արվեստն ու գրականությունը աստր մեջ սահմանափակված է: Կյանքը, ամբողջ մարդկության կյանքը, ամբողջ սիրելքին կյանքը, իր այլազան երևույթներով, իր անթիվ խորհուրդներով, հավիտենական ու բյուրաձև նյութ է արվեստի»[1]: Որոշ ժամանակ անց, երբ աստիճանաբար շտկվում են թերությունները, մանավորապես գրողների առաջին համագումարում դրվում են սովետական գրականության հետագա զարգացման առողջ հիմքեր, Զոպանյանը հաճույքով արձանագրում է կատարվող առաջընթացը:

Զոպանյանին հուզող մյուս կարևոր խնդիրը գրականության ազգային ձևի հարցն էր, որը մանավորապես 30-ական թվականների երկրորդ կեսին խիստ հրատապություն էր ստացել այն պատճառով, որ ոմանք ազգայինը նենդափոխում էին ազգայնամոլության, այդ նենդափոխումից բխող բոլոր ծանր հետևանքներով հանդերձ: Զոպանյանը մի քանի առիթներով հանդես է եկել, պարզելով իր հայացքները խնդրի էության վերաբերյալ: Նրա համար ազգային ձևի կարևոր հատկանիշներն են «տեղական կամ ցեղային գույնը, բնիկ միջավայրի, բնավայրի տեսարաններու նկարագրությունը» Առանց դրանց որևէ կենդանի արվեստի գործ չի կարող երևան գալ, ասում է Զոպանյանը և գրտնում, որ չի կարելի դա շփոթել ազգայնամոլության հետ: «Գորկիի ամբողջ գործը խորապես ռուսական է շատ տեսակետներով,— շարունակում է նա,— բայց ազգայնամոլական չէ, առանց սակայն տեսակ մը անգույն, անդրշմ, անհամ, աննկատելի համամարդկայնության մեջ իյնալու»[2]: Զոպանյանի հայացքների համար նորություն չէր այդ հարցադրումը: Դեռևս դարասկզբին նա պայքար էր հայտարարում երկու ճակատով՝ թե ազգային նի-

---

[1] «Անահիտ», Ա տարի, 1930, թիվ 5, էջ 110:

[2] «Անահիտ», Ը տարի, 1937, թիվ 3—4, էջ 120:

հիլիզմի և ֆի ազգայնամոլության, ազգային բացառիկության դրսևորումների դեմ։ 30-ական թվականներին առավել ցայտուն կերպով նա ընդգծում է արվեստի ու գրականության ազգային և համամարդկային էության փոխհարաբերությունը, շեշտելով, որ ազգայինն ու համամարդկայինը դրսևորվում են միասնության մեջ և առանց առաջինի անհնարին է երկրորդը։

***

Գրականության և արվեստի մեջ ազգայինի ու համամարդկայինի միասնությունը մեկնակետ էր ծառայում ժողովուրդների փոխհարաբերություններում գրականության ու արվեստի վերաբերյալ Զոպանյանի հայացքների համար։ «Գրականություն, արվեստ,— գրում է նա մի առիթով,— ահա մեծ, անդիմադրելի ու բարերար միության գծերը բոլոր ազգերու մեջ»[1]։ Եվ ևի Զոպանյանի ամբողջ կյանքն ու գործունեությունը նվիրված է եղել նաև համաշխարհային գրականության հրաշակերտների թարգմանության ու տարածմանը հայ ժողովրդի մեջ, ապա նա հետապնդել է ոչ միայն իր ժողովրդի լուսավորության նպատակը։ Դրան զուգահեռ, նրան առաջնորդող միտքն է եղել նպաստել համամարդկային փոխըմբռնողությանը, միմյանց ճանաչելուն, ժողովուրդների եղբայրական բարեկամության, «մեծ, անդիմադրելի ու բարերար միության» հաստատմանը։ «Անահիտի» խմբագրական գործը ոչ մի բացառություն չէր անում։ Զոպանյանի համար միանգամայն բնութագրական է, որ ճիգեր գործադրելով տարբեր ժողովուրդների գրականությունը հայերեն թարգմանելու ուղղությամբ, նա անվարան կերպով պահանջ էր առաջ քաշում ավելի ու ավելի լավ ուսումնասիրել նաև թուրքական գրականությունը, դրանով նա շահեկանորեն առհմանազատվում էր արտաքսհմանյան շատ ու շատ գործիչներից, որոնց հայացքներում սուլթանական կառավարողների գործադրած հայաջինջ քաղաքականությունը առաջացրել էր մի բարդույթ, որը խոչընդոտում էր թուրքական մշակույթի և գրականության ճանաչման ուղղությամբ քայլեր կատարելուն։ Եվ իր գործելակերպի մեջ խիստ սկզբունքային ու հետևողական էր Զոպանյանը։ Այդ պահանջը նա առաջ էր քաշել դեռ դարասկզբին, «Անահիտի» նախորդ շըր-

[1] «Անահիտ», Ա. տարի, 1929, թիվ 1, էջ 100։

ջանի բավմաթիվ էջեր տրամադրելով դրա իրագործմանը, այդ խնդիրը նա դնում էր նաև երևանյան թվականներին։ Ողջունելով Թերլիպաշյանի՝ Ֆիլուլիին նվիրված աշխատության լույս ընծայումը, Զոպանյանը գրում էր. «Հայոց համար հարկ կա Թուրքերու հին ու նոր գրականության մասին ավելի մոտիկ տեղեկություն ստանալու համար ընել ավելի մեթոդիկ ու հարատև ջանքեր, քան ինչ որ փորձված է ցայսօր»[1]։

«Անահիտի» երկրորդ շրջանի թարգմանական գրականության հունձքը բավականին առատ է ու բազմազան։ Զոպանյանը ձգտել է հայ ընթերցողին տալ հնարավորին չափ լայն պատկերացում աշխարհի տարբեր ժողովուրդների գրականություններից, ընդգրկելով Եվրոպան ու Ասիան, մինչև չինական ու ճապոնական գրականության առանձին նմուշների թարգմանությունը։ «Անահիտում», այսպիսով, տեղ են գտել Էսքիլևսը, Ֆիրդուսին, Ռուդաքին, Հյուգոն, Շելլին, Միցկևիչը, Տուրգենևը, Դոստոևսկին, Գորկին, Էդգար Պոն, Էմինեսկուն, Միսթրալը, Ռոսթանը, Վիլհելմ Լիլ Ադանը, Զովանին, Պասկալին, Ուիլյամ Բլեյքը, Բոդլերը, Ռոժե դյու Գարը, Պասկուալե Պիացոլյան և մի շարք ուրիշներ։ Դրանց մի մասը, ինչպես օրինակ, պատնաստական Վիլհելմ դը Լիլ Ադանը, առաջին անգամ էր ներկում հայերենով։

Ինքը՝ Զոպանյանը այլևս քիչ ժամանակ էր տրամադրում թարգմանություններին։ Ուշագրավ է, սակայն, որ նա ձեռնարկում է Էսքիլևսի անմահ գործի՝ «Պրոմեթևսը շղթայվածի» թարգմանությանը և, նրա իսկ համառ պնդումներով, Հակոբ Անտոնյանը իրագործում է Շելլիի «Պրոմեթևսը ազատվածի» թարգմանությունը. երկուսն էլ հրատարակվում են «Անահիտում»։

Էսքիլևսի Պրոմեթևսի, ինչպես նաև պանպատան ժողովուրդների համանման դյուցազնական հերոսների, այդ թվում հայոց Արտավազդի և Մհերի մեջ Զոպանյանը տեսնում էր բռնակալության դեմ ապստամբ ոգու «հեղափոխական քանդիչ ու վերանորոգիչ մղումին» խորհրդանիշը։ Նրան գրավում էր հերոսական ճիգը, որով այդ դյուցազունները, հակադրվելով սահմանված ու տիրապետող կարգ ու սովքին, մաքառում էին հանուն մարդկության աղատության և արդարության, հանուն այն բանի, որպեսզի մարդուն մղին «բարվո ու չարի դիտության ծառին պտուղը ճաշակել... այսինքն՝ անասնական անգիտակցությունեն

[1] «Անահիտ», Ա տարի, 1930, թիվ 6, էջ 103։

դուրս նլնել, նրա մեխանիզմը լլալն դադրել, իրենց ճակատագիրն իրենց ձեռքով վարելու ձգտել»[1] (ընդգծումը իմն է.—Կ. Դ.)։ Սոցիալական խոր և արմատական հեղաշրջումների դարաշրջանի ազդեցության կնիքն է զգացվում այսպիսի մեկնաբանության վրա։

Հետաքրքրական է այն համեմատությունը, որ անում է Զոպանյանը Պրոմեթևսի ու Հիսուսի միջև։ Երկուսն էլ մարդկության փրկչի հանգամանքով են նկատում, գրում է Զոպանյանը և շարունակում. «Տարբերությունը այն է, որ Պրոմեթևս... մարդոց կը հաղորդե գիտության ու արվեստի ծնուցիչ հուրը, մարդկային կյանքը հեշտացնող, գեղեցկացնող, քաղաքակրթությունը կատարելագործող կարողությունը, մինչ Հիսուս... ամեն բանե առաջ... գնալի Աստված... և գնալի երազված աննյութական ու բացարձակ երանությունը բարձրացման կը հրավիրե»[2]։

Սև, վերջապես, խիստ հատկանշական է Զոպանյանի նկրտակացությունը։ Ըստ հունական դիցաբանության, Պրոմեթևսը մի օր պիտի ազատվի իր կապանքներից։ Դա Զոպանյանը բացատրում է մարդկության խորին հավատով, թե բռնության ուժը ժամանակավոր տիրապետություն ունի, և թե վերջնական հաղթանակը պատկանում է մարդկության սիրո, բարության, եղբայրության և համերաշխության ոգուն։

Գրականության հարցերի դասակարգմանն արտացոլման «Անահիտի» փորձը ուսանելի էր սիլուետահայ շատ ամսագրերի համար, որոնք որդեգրել էին դեմոկրատական ուղղություն։ Հայ հին և նոր գրականությունը, ժամանակակից հայ գրականության երկու հատվածների վիճակը և զարգացման ուղիները, փոխհարաբերությունները ուրիշ գրականությունների հետ, այլ ժողովուրդների գրական արժեքների քարոզությունը, այս ամենը հանդես էին գալիս «Անահիտում» որպես մի ամբողջություն, որպես գրականության ազգային և համամարդկային միասնության դրսևորման յուրահատուկ ձև։ Այդ ամենի դեկավար ու հանգուցող գաղափարը մարդկային հասարակության կյանքում գրականության դերի չոպանյանական ընկալումն էր, քան որ գրականությունը մարդկային կյանքի պայմանների բարելավմանը նպաստող հզոր միջոց էր, ժողովուրդների բարեկամության, եղբայրության ու համերաշխության անփոխարինելի ազդակ։

[1] «Անահիտ», Ա տարի, 1929, թիվ 2, էջ 2։

[2] Նույն տեղում։

Կյանքի տարեգրության վերջին էջերը

1935 թվականի դեկտեմբերի 5-ին Փարիզում, 5000 հանդիսականների ներկայությամբ, տոնակատարվում է Սովետական Հայաստանի 15-ամյա տարեդիցը: Բանախոսների թվում էր նաև Արշակ Չոպանյանը: «Բեմը Արշակ Չոպանյանինն է...— նկարագրում է «Ապագա» թերթի թղթակիցը այդ հանդիսության մասին գրված թղթակցությունում:— Մեծ դրապետը բեմին վրա՝ համակ սեր է հայրենիքին համար, համակ հավատք անոր ներկային, համակ հույս անոր ապագային համար»: Մինչ Չոպանյանը բանախոսում է, նրա մասին թղթակցի ու իր հարևանի միջև փոխանակվում են հետևյալ խոսքերը.

«— Կա՞ արդյոք բան մը, որ չի գիտեր այս մարդը:

— Կա:

— Ի՞նչ:

— Հոգնել...»[1]*:*

Արդարև, հոգնել չիմացող այդ մարդը անընդհատ և բազմալար գործունեության մրցանիշներ էր կոտրում նույնիսկ, երբ թևակոխում էր կյանքի յոթերորդ և ութերորդ տասնամյակները:

Դեռևս 1930 թվականի հունիսին Չոպանյանը հրավիրվում է Բուխարեստ, այնտեղ կազմակերպված հայ արվեստի ցուցահանդեսի առթիվ, հայ արվեստի և մշակույթի շուրջ բանախոսությունների համար, բայց հրավերից օգտվել չի կարողանում և Ռումինիա մեկնում է միայն երկու տարի հետո: 1930—32 թվականներին «Անահիտ» հրատարակության, «Ապագա» թերթին մշտական և մի շարք ուրիշ օրգաններին, մասնավորապես «Հայաստանի կոչնակին» պարբերաբար աշխատակցության պատահում, հանդես է գալիս բազմաթիվ բանախոսություններով. գրող Լևոն Գյումուշդիրտանի պատվին արված ճաշկերույթին, հասարակական գործիչ Մխթարիչ Պապաջանյանի ոգեհանդիսին Սոսիկեի Սալմանթի սրահում, բանաստեղծ Ռուբեն Որբերյանի մահվան առթիվ, Նուպարյան մատենադարանում՝ «Բոլմաս Թևրիզյանը և իր շրջանը» թեմայով, Սևրի Մուրադյան վարժարանում՝ Ղևոնդ Ալիշանի մասին և այլն:

---

[1] *«Ապագա», Բ տարի, 1935, թիվ 320:*

Ընդհատումներ չի ունենում նաև Չոպանյանի հասարակական գործունեությունը, որի հիմնական բովանդակությունը Սովետական Հայաստանի հետ սիստեմատիկ կապերի ամրապնդումն էր, հայրենիքի շուրջ նրանց համախմբումը: 1931 թվականի գարնանը Ջանգելոտում տեղի ունեցած երկրաշարժի առթիվ Փարիզում կազմակերպվում է կնոջ հանդանակիչ հանձնաժողով, որին անդամակցում է Չոպանյանը: Այդ առթիվ Maison de la Mutualité-ում հունիսի 21-ին հրապարակային մեծ ժողով է հրավիրվում, որտեղ Չոպանյանը հանդես է գալիս, ընդգծելով հայրենիքի և արտասահմանյան գաղթօջախների միջև ամուր կապերի հաստատման կենսական անհրաժեշտությունը:

Շարունակվող հայրենադարձի գործին աստարելու նպատակով միջոցներ հայթայթելու համար նույն թվականի աշնանը Չոպանյանը՝ «Հայ գաղթականաց կենդրոնական հանձնաժողովի» նախագահի հանգամանքով դիմումներ է կատարում Ազգերի լիգայի համապատասխան մարմիններին, հարց դնելով միջոցներ տրամադրել հայ գաղթականներին Հունաստանից, Բուլղարիայից և մի շարք ուրիշ երկրներից մինչև Բաթում փոխադրելու համար: Նույն նպատակով նա հանգանակություն կազմակերպելու կոչ է անում արտասահմանի հայությանը: Այդ դիմումներից շատերը, մանավանդ միջազգային կազմակերպություններում, մնում են անհետևանք, բայց կարևոր դեր են խաղում հայրենադարձի օգտին հասարակական կարծիքի մշակման գործում:

1932 թվականի հունվարի առաջին օրերին մեկնելով Ֆրանսիայի Վիեն և Սեն Շամոն քաղաքները, Չոպանյանը ոչ միայն դասախոսություններ է կարդում հայկական ու ֆրանսիական լսարանների առջև («Նահապետ Քուչակ» թեմայով), այլև արդյունավետ գործունեություն է ծավալում գործադուրկներին աշխատանքով ապահովելու հարցում:

1932 թվականի փետրվարի 24-ին, խոշոր գիտնական, արևելագետ և հայագետ Նիկոլա Յորգայի հրավերով, որը այն ժամանակ ռումինական կառավարության նախագահն էր, Չոպանյանը այցելում է Բուխարեստ: Ռումինիայի մայրաքաղաքի Աթենեի և Ֆունտացիո Քառոլի սրահներում, Կոնստանցա քաղաքում Չոպանյանը մի շարք բանախոսություններ է ունենում ֆրանսերեն, ռումին հասարակայնությանը ծանոթացնելով հայկական մշակույթի պատմությանը: Հայ մշակույթը օտար ազգերի

մեջ պրոպագանդելու գործում ունեցած խոշոր ծառայությունների համար Զոպանյանը պարգևատրվում է «Ռումինական աստղ» շքանշանով: Այս պարգևատրությունը իր ժամանակին առիթ է տալիս մի շարք թյուր մեկնաբանությունների և Զոպանյանի անձի դեմ հարձակումների: Նյութեր են երևում թե Սովետական Հայաստանի և թե սփյուռքի մամուլում[1]: Այդ ելույթները Զոպանյանն անվանում է «խեղճուխելաո բաներ», որոնք, հայտարարում է նա, բնավ չեն կարող ազդել իմ հայրենասիրական զգացմունքների և հայրենիքին նվիրվածության գաղափարների վրա: Արդեն իսկ մի քանի ամիս անց, Սովետական Հայաստան կատարած ուղևորության ընթացքում Զոպանյանին ցույց տրված ջերմ ընդունելությունը ինքնըստինքյան սրբագրում էր նրա նկատմամբ թույլատրված անարդարությունը:

1932 թվականի հոկտեմբերին Զոպանյանը Լիոնի պատգամավոր է նշանակվում էջմիածնում կայանալիք կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու համար: Այդ ճանապարհորդությունը պիտի արժեր նվազագույնը 15.000 ֆրանկ, որ Զոպանյանը, անշուշտ, չուներ: Ֆրանսահայ գաղթօջախում հատուկ հանդանակություն է կազմակերպվում, որը սկզբում ընթանում է ապարդյուն, և Զոպանյանը արդեն դրնթն հաշտվել էր ձախողման մտքի հետ: Վերջին պահին անհրաժեշտ դրամը անսպասելի գոյանում է, ու Զոպանյանը նշանակված ժամկետից երկու օր ուշացումով, նոյեմբերի 12-ին ժամանում է էջմիածին, հասցնելով մասնակցել քվեարկությանը:

Սովետական Հայաստանում Զոպանյանը մնում է ճիշտ մեկ ամիս, նրևանում ապրելով բանաստեղծ Վահան Միրաքյանի տանը, 20կ-ի շենքում: Նա ծանոթանում է երկրի կյանքին, այցելում հիմնարկներ ու ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, շփումներ ունենում մտավորականության հետ, ընդունվում դեկավար գործիչների, մասնավորապես Ալասի

[1] Թյուրիմացությունը հասնում է մինչև այն աստիճանի, որ Զոպանյանին վերագրվում է ռումինական բանակում հրամանատարական պաշտոնի ստանձնում: «Ռումինական աստղ» շքանշանը, ինչպես նաև ֆրանսիական «Պատվո լեգիոնի» շքանշանը ունի մի քանի աստիճաններ, այդ թվում նաև «հրամանատարի» կամ «սպայի» աստիճան: Զոպանյանի քննադատները այդ աստիճանը շփոթել էին զինվորական կոչումի հետ, մեղադրելով նրան, թե իբր հավաքագրվել է իմպերիալիզմի ծառայությանը՝ Սովետական Միության դեմ պայքարում և ապագա պատերազմում:

խանջյանի կողմից: Նրա վրա ցնցող տպավորություն է թողնում Զորագէսի բացումը, որի հանդիսություններին մասնակցում է պաշտոնական հրավերով: Եղանակը, անբարենպաստ էր, նկարագրում է Զոպանյանը, խոնավ ձյուն էր տեղում. «բայց ի տես այդ հրաշալի կերպարանափոխության, զոր գիտությունը, խորհրդային իշխանության նախաձեռնությամբ ու շնորհիվ հայ մեծատաղանդ ճարտարապետի մը հմտության և հարյուրավոր հուժկու և անձնվեր հայ աշխատավորներու երկարատև չարքաշ ու խանդավառ աշխատանքին, իրագործեր էր կողերուն վրա այդ խոպան լեռան... ի տես մեր հայրենիքը երիտասարդացնող, վերանորոգող, արդիականացնող այդ երևույթին, ոչ ցուրտն ու խոնավությունը կը զգայինք, ոչ ձյունն կը նեղվեինք»[1]:

Փարիզ վերադարձին իր տպավորությունները հրատարակելով և դարձնելով սփյուռքահայ ընթերցողների սեփականությունը՝ Զոպանյանը առանձնակի ուժով շեշտում է Սովետական Հայաստանի իրականության մի շարք ոգևորիչ գծերը, մանավանդ նոր երիտասարդ կադրերի առաջացումը և Միության ժողովուրդների բարեկամության դրսևորումը, որին նա ականատես է լինում Զորագէսի հանդիսությունների ժամանակ:

Զոպանյանը համոզիչ պատասխաններ է տալիս և մերժում Սովետական Հայաստանի հասցեին արտասահմանյան որոշ շրջանակներում տարածվող դրպարտությունները, մանավանդ աշխատավորության վիճակի հարցի շուրջ: «Անոնք պիտակցություն ունին իրենց երկրին տերն ըլլալու,— գրում է Զոպանյանը,— և ոչ թե բռնակալ կառավարության մը կամ տիրող ու շահագործող դասակարգի մը ծառաները»[2]:

Զոպանյանը Փարիզ է վերադառնում դեկտեմբերի վերջերին և անմիջապես ձեռնամուխ լինում Սովետական Հայաստանի գրավոր ու բանավոր պրոպագանդի գործին: Սկզբում «Ապագայում», իսկ այնուհետև նաև «Անահիտում» տպագրում է երկարաշունչ հոդվածաշարեր: Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունների հրատարակությունը «Անահիտում» շարունակաբար տևում է շուրջ երեք տարի:

1933 թվականի հունվարի 26-ին «Փրթի ժուռնալի» ընդարձակ սրահում երկժամանոց բանախոսության մեջ Զոպանյանը վառ

---

[1] «Ապագա», ԺԳ տարի, 1933, թ. 25:

[2] «Անահիտ», Դ տարի, 1932—33, թիվ 3—6, էջ 126:

գույներով և իրեն հատուկ համոզիչ ձարտասանությամբ Սովետական Հայաստանը ներկայացնում է փարիզահայությանը: Մարտի 2-ին Union Chrétienne de jeunes Filles-ի հրավերով ֆրանսերեն բանախոսություն է կարդում հայ մշակույթի մասին, որի ընթացքում հանգամանորեն անդրադառնում է Սովետական Հայաստանի գրական ու մշակութային կյանքին: Նմանապես և Սիպիլի գրական գործունեության 50-ամյակի հոբելյանական հանդեսին, որ տեղի ունեցավ մարտի 11-ին, գլխավոր բանախոս Ա. Չոպանյանը հիմնական թեմային զուգահեռ ցայտուն գծագրեց նաև Սովետական Հայաստանի գրական նվաճումները:

Չոպանյանը մարտի երկրորդ կեսին շրջագայում է Ֆրանսիայի հայաշատ քաղաքներում և հատուկ բանախոսություններ կարդում Սովետական Հայաստանի վերաբերյալ: Մեծ հաջողությամբ ու բուռն խանդավառությամբ ընդունվում են նրա ելույթները Լիոնում և Վալանսում: Ավելի ուշ, հունիսի 3-ին, նա բանախոսում է Մարսելում, հանգամանորեն վերլուծելով Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումները և խանդավառելով ունկնդիրներին: Նույն տեղում նա հինգ օր հետո հատուկ դասախոսություն է կարդում Սովետական Հայաստանի գրականության վերաբերյալ: Մարսելից վերադարձի ճանապարհին, գարձյալ Վալանսում, հունիսի 10-ին Չոպանյանը այս անգամ խոսում է ֆրանսիական լսարանի առջև հայոց պատմության և մշակույթի շուրջ, կարևոր բաժին հատկացնելով Սովետական Հայաստանին:

1934 թվականի հունվարի 21-ից մինչև փետրվարի 4-ը, Բրյուսելի հայ ուսանողական միության հրավերով Բելգիայում գտնվելով, Չոպանյանը մի քանի բանախոսություններ է կարդում, որոնց հիմնական նյութը գարձյալ Սովետական Հայաստան կատարած իր ուղևորությունից ստացած տպավորություններն են լինում:

Փետրվարի 10-ին Փարիզի Սալ Գավոյում նշվում է բանաստեղծ Վահան Թեքեյանի հիսնամյա հոբելյանը: Նույնը նաև Մարսելում՝ փետրվարի 19-ին: Երկու հանդեսներում էլ գլխավոր բանախոսը Արշակ Չոպանյանն էր: Բարձր գնահատելով Թեքեյանի արվեստը՝ Չոպանյանը մասնավորապես նշում է նրա հայրենասիրական էջերը, «որոնք, վհատուած Մասիսին ի տես, ձեր աչքերուն ու սրտին հոգմունքն արտահայտող տաղին մինչև արցունի ու հուսախաբության չքհնդնդի մը հետ մեր ազգին ու

մշակույթին գոյությունը իբրև նոր տապան մը իր ծոցին մեջ պահպանող և անոր ապագան ապահովող մեր այժմյան Հայաստանին ձոնված հնչյակը, մասնահատուկ տեղ մը պիտի միշտ գրավեն հայրենիքի ղգացումը իրական բանաստեղծության շնչտերով թարգմանող քնարերգական էջերու ոսկեմատյանին մեջ»[1]:

Սովետական Հայաստանի պրոպագանդին Չոպանյանը զուգորդում է անխոնջ կազմակերպչական աշխատանք երկու ուղղություններով՝ հօգուտ Հայաստանի դրամական հանգանակությունների և ներգաղթի գործի կազմակերպում: «Անահիտի» և «Ապագայի» միջոցով, ինչպես նաև հրապարակային հավաքույթներում Չոպանյանը բավականին ջանքեր է գործադրում Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի, իսկ այնուհետև նաև կուլտուրայի պատմության ինստիտուտի կարիքների համար դրամ ձեռք բերելու ուղղությամբ: Նյութական համեստ արդյունքը տրամադրվում է նպատակին:

Շատ ավելի արդյունավետ էր Չոպանյանի աջակցությունը հայրենադարձի կազմակերպման գործում: «Հայ գաղթականաց հանձնաժողովի» նախագահի հանգամանքով նա թղթակցություններ մեջ էր մտնում զանազան կազմակերպությունների և պաշտոնական գրասենյակների հետ, հաճախ ինքն էր այցելում այս կամ այն պաշտոնյային՝ դյուրացնելու համար ներգաղթի հետ կապված հարցերը: Մասնավորապես շոշափելի կազմակերպչական օգնություն է բերում Չոպանյանը՝ Ֆրանսիայից 1936 թվականին 1800 հայերի հայրենադարձության իրականացման հարցում: Դա Ֆրանսիայից մեկնողների առաջին խումբն էր: «Հազարութ հարյուր գաղթական հայեր,— գրում էր Չոպանյանը,— կազատին հայրենադուրկի տխուր կացությունեն և կերթան իրենց պապենական հայրենիքը, իրենց մեկ միլիոն եղբայրներուն և քույրերուն հետ մեր ազգային տան վերաշինության ու զարգացման իրենց աշխատանքի բաժինը բերելու»[2]:

Այդ իմբի, ինչպես նաև Ֆրանսահայության հայրենադարձի գործում Չոպանյանի անմիջական գործունեությունը լավագույնս բացահայտվում է Ա. Խանջյանին գրած նրա մի նամակում, որից մեջ ենք բերում մի հատված:

[1] «Անահիտ», Ե տարի, 1933, թիվ 3—4, էջ 110:

[2] «Անահիտ», Է տարի, 1936, թիվ 3, էջ 39:

«Սիրելի ընկեր Խանջյան, 12 Հուլիս 1936

Ֆրանսայի գաղթականներուն 1800-ին Ս. Հայաստան փոխադրության գործը հոյակապ հաջողում մը եղավ ամեն տեսակետով։ Ներգաղթողները, ինչպես կը տեսնենք իրենցմե եկած նամակներեն, շատ գոհ են, արտասահմանի Հայության առողջ մասը— ստվար մեծամասնությունը— մեծապես գոհ է ատոր համար, անշուշտ Ս. Հայաստանի ժողովուրդն ու անոր դեկավարներն ալ գոհ են։ Ֆրանսայեն այդպես եկող հայերուն մեջ կային կարևոր ուժեր՝ ամեն տեսակի, որոնք շատ օգտակար պիտի ըլլան ու ոմանք արդեն սկսած են ըլլալ մեր սիրելի հայրենիքին զարգացման։ Հիմա այդ բազմօրսում ու գեղեցիկ գործը շարունակել պետք է մտածեն ամենքն ալ, Հայաստանի դեկավարները և արտասահմանի Հայությունը։ Դեռ 7—8000 հոգի արձանագրված են Ֆրանսայի մեջ, իսկ այլ երկիրներու մեջ՝ շատ ավելի են արձանագրվողները։ Ազգերու ընկերությունը բարեգործականը միշտ պիտի բերեն իրենց աջակցությունը ներգաղթի նոր ձեռնարկներու...

Մենք կը հուսանք, որ խորհ. Միության կեղծ. կառավարությունն ալ, որ ցարդ բարոյական մեծ աջակցություն շնորհած է հայկական ներգաղթի գործին, այսուհետև իր նյութական օգնությունն ալ կը բերե անոր...»[1]։

30-ական թվականների կեսերին Չոպանյանը մի շարք կարևոր հետքեր է ունենում ֆրանսիական և միջազգային լսարանների առջև հայ մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև համաշխարհային մշակույթի խոշոր դեմքերի հոբելյաններին առթիվ։ «Միջերկրականյան ակադեմիա» կոչվող հասարակության հրավերով (այն ստեղծվել էր Նիցցայում, 1927 թվականին) Չոպանյանը Մոնակոյում 1935 թվականի աշնանը մասնակցում է այդ հասարակության համագումարին, ներկայացնելով «Հայ մշակույթը և միջերկրականյան քաղաքակրթությունները» խորագրով մի ծավալուն ուսումնասիրություն, ինչպես նաև հայտարարությամբ հանդես գալով նիստերից մեկում։

Իսկ մինչ այդ, նույն թվականի ամռանը լայնորեն նշվում է Վիկտոր Հյուգոյի մահվան 50-ամյակը։ Փարիզի Հայ գրողների ընկերակցության վարչությունը նույնպես գրական հանդես է

[1] ԳԱԹ, Ս.Չ.Ֆ., IV բաժին, № 136։

կազմակերպում, որը տեղի է ունենում հունիսի 22-ին: Բանախոսում են Անայիսը և Զոպանյանը: Այդ բանախոսությունները, ինչպես նաև անցյալում հայ գրողների կողմից Հյուգոյին նվիրված քերթվածների, հոդվածների, նրա մահվան 50-ամյակի առթիվ սփյուռքի և Սովետական Հայաստանի մամուլի նյութերի որոշ մասը ֆրանսերեն թարգմանելով, Զոպանյանը լույս է ընծայում առանձին հատորով: Նույն սկզբունքով այդ հատորի մեջ տեղ է տրվում նաև Շատոբրիանին և Լամարթինին: «Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la litterature Arménienne» («Վիկտոր Հյուգոն, Շատոբրիանը և Լամարթինը հայ գրականության մեջ») տիտղոսով այդ հատորը գնահատվեց ֆրանսիական ընթերցող հասարակայնության և մտավորականության կողմից:

1936 թվականին սփյուռքում նշվում է «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության 1500-ամյակը, որպես հայ մշակույթի տոն: Մարտի 29-ին Սորբոնի մեծ ամֆիթատրոնում տեղի ունեցած հանդիսությանը, ուրիշների թվում, բանախոսեց նաև Ա. Զոպանյանը՝ «Աստվածաշունչի» թարգմանությունը ու հայ բանաստեղծությունը» թեմայով: Զոպանյանը խորությամբ վեր է հանում գրերի գյուտի վիթխարի նշանակությունը հայ ժողովրդի կյանքում ընդհանրապես, գրականության զարգացման գործում մասնավորապես: Նկարագրելով հայ բանաստեղծության անցած ուղին՝ Զոպանյանը հայտարարում է, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո սկսվել է հայ բանաստեղծության նոր շրջան, Սովետական Հայաստանի ծոցում, որի էական հատկանիշը համարում է հեղափոխական ոգին[1]:

Այս շրջանում Զոպանյանի բազմաբեղուն գործունեությունը հակիրճ տողերում ներփակելու համար անհրաժեշտ է հիշատակել ամենակարևորները:

«Անահիտի» խմբագրապետը, Փարիզի Նուպարյան մատենադարանի տեսուչ Լևոն Գյումուշգերտանի հետ միասին կազմակերպում է հարգանքի հավաքույթ, որ նվիրված էր խոշոր հայագետ, լեզվաբան Անթուան Մեյեի հիշատակին: Հավաքույթը տեղի է ունենում 1937 թվականի փետրվարի 27-ին, մատենադարանի սրահում, հայ և ֆրանսիացի մեծաթիվ մտավորականության ներկայությամբ: Ճառախոսների թվում հանդես է գալիս նաև Ա. Զոպանյանը, որի խոսքը բովանդակում էր Անթուան Մեյեի

[1] «Անահիտ», է տարի, 1936, թիվ 3, էջ 15—16:

հասարակական գործունեության պատկերը: Զոպանյանը Մեխինե նկարագրում է որպես հայ ժողովրդի անկեղծ բարեկամի, որպես մեկը եվրոպական այն մտավորականներից, որոնք ամենագործուն մասնակցություն էին բերում հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության և նրա դեմ տարվող բնաջնջման քաղաքականության դատապարտման հարցում:

Հիշատակարժան են նաև Զոպանյանի նյութերը Ֆրանց Վերֆելի պատմին կազմակերպված երեկույթներին և «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի գնահատության ու տարածման համար նրա ծախած ջանքերը: Վերֆելի գործը Զոպանյանը անվանում է հայ դյուցազնական ոգեներգությունից ներշնչված հզոր վեպ: «Այդ գործին արտակարգ գեղեցկությունը հասած կուգա մեծ ճյուրի մը և մեծ ապաճղի մը իբարու հանդիպելենն»[1]:

1937 թվականին փարիզահայ մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ հանձնաժողով է առնվում, որը ձեռնամուխ է լինում Ս. Զոպանյանի գրական-հասարակական գործունեության 50-ամյա հոբելյանի կազմակերպմանը: Հանդիսությունը տեղի է ունենում 1938 թվականի հունվարի 7-ին Փարիզում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծմամբ հիտլերյան Գերմանիայի կողմից ծերունազարդ Զոպանյանն ընդունց զայրույթով և գործադրեց իր ուժերի համար հնարավոր ամեն ինչ՝ «ազատության սկզբունքին» հավատարիմ, Ֆրանսիայի անկախության և ազատության գործին նպաստելու ուղղությամբ: Նա առանց վարանելու դատապարտում է ֆաշիզմը, գերմանական նացիստների քաղաքականության մեջ տեսնելով համաշխարհային հրեղեն պատճառը: «Գերման դեղամոլներ են, որ ամբողջ աշխարհի վրա իրենց ազգին տիրապետությունը տարածելու հիվանդագին և ախտաբեր երազը պարծենցին և անոր իրագործման համար երեսուն տարվան ընթացքին երկու ահավոր պատերազմ շղթայազերծեցին մարդկության գլխուն,— գրում է Զոպանյանը:— Պատերազմին, որ միշտ ազնիվ մը եղած է, բայց որ առնուվ դեմ քաջ-քաջին դեմ ապերասական կռվի բնույթ մը ուներ, ուր անպաշտպան քաղաքներու անգեն մարդիկ, կիներ, երեխաներ, ծերեր անվնաս կը մնային, անոնք ալ ենթարկին ու վատոգի վայրագության ձևեր, որոնք մարդը նա կտանին մինչև նախապատմական մարդ—գազանը, բարերար գիտությունը

[1] «Անահիտ», Ը տարի, 1937, թ. 3—4, էջ 54:

դարձուցին քանդումի, մահվան, արհավիրքի գործիք (քաղաքներու խաղաղ անզեն բնակչության վրա հարձակում հրձիգ կամ պայթուցիկ ռումբերով, թունավոր գազերով, ախտասփյուռ միկրոբներու տարափով և այլն)։ Ու մենք հայերս չենք կրնար մոռնալ, որ եթե ունեցանք Լեփսիուսի պես գերման ազնիվ հայրենասեր, գերման ուղեղներ են, որ թելադրեցին 1915-ի քստմնելի տեղահանությունները...»[1]։

Բնական է, որ երբ Փարիզում ստեղծվում է «Ֆրանսիական բանակի հայ զինվորներու օգնության մասնախումբ», Չոպանյանը անմիջապես անդամակցում է այդ մարմնին, եռանդուն գործունեություն ծավալում միջոցների հանգանակության ուղղությամբ, պարբերաբար հանդես գալիս երիտասարդ ռազմիկների առջև, ոգևորում, քաջալերում նրանց ֆաշիզմի դեմ մղվող մարտերից առաջ։ Հատկանշական է, այդ տեսակետից, 1940 թվականի մայիսին նրա կարդացած դասախոսությունը՝ «Հայրենասիրական բանաստեղծությունը Ֆրանսայի մեջ և Վիկտոր Հյուգոյի գործը» թեմայով, որի խորագիրը արդեն խոսուն է։

Ֆաշիստական օկուպացիայի տարիներին Չոպանյանը ստիպված է լինում սահմանափակել իր գործունեությունը հայ մշակույթի հարցերի շուրջ արվող դասախոսություններով, ինչպես նաև «գաղթականաց հանձնաժողովի» լեգալ աշխատանքի շրջանակներում։ 1940—1944 թվականներին նա կարդում է դասախոսությունների մի ամբողջ շարք, Փարիզում, Մութաֆյանի աշխատանոցում։ Այդ դասախոսությունները տեղի էին ունենում 1932 թվականից սկսած, որոշակի սիստեմով։ Չոպանյանը սկզբում կարդում էր Հայ ուսանողական տանը, իսկ երբ ուսանողների թիվը նվազում է, դասախոսությունների վայր է ընտրվում «բարեգործականի տունը»։ Հետաքրքրական է պատերազմի օրերին, օկուպացիայի պայմաններում գտնվող հայության համար կարդացված դասախոսությունների ցանկը։ Չոպանյանը, առանց հատուկ այդ մասին նշելու, շեշտը դնում էր հայրենասիրական թեմայի վրա, մանավանդ մեծ տեղ հատկացնելով արևելահայ հեղինակներին։ Այսպես, նրա առանձին դասախոսություններ նվիրվել են Խաչատուր Աբովյանին, Միքայել Նալբանդյանին, Դաղարոս Աղայանին, Հովհաննես Հովհաննիսյա-

---

[1] «Անահիտ», Ժ տարի, 1939, թիվ 6, էջ 18։

նին, Հովհաննես Թումանյանին, Ավետիք Իսահակյանին, Շուշանիկ Կուրղինյանին և այլն։

Բանաստեղծուհի Մարի Աբմաճյանը, որ հաճախել է այդ դասախոսություններին, շատ բարձր է գնահատում դրանց բովանդակությունն ու շեշտում է այն ազդեցությունը, որ թողնում էր Զոպանյանի խոսքը ունկնդիրների վրա, նրանց մեջ վառ պահելով հայրենասիրական ոգին։ Ֆաշիստական օկուպացիայի պայմաններում, բղխակցության մեջ որոշակի զգուշություն պահպանելով, Մ. Աբմաճյանը 1943 թվականի հոկտեմբերի 3-ին գրում էր Ա. Զոպանյանին. «Ինչ բախտ մնդի, որ պատերազմի սա ահռելի օրերուն, հոգին մնծցնող, սիրտը հանդարտեցնող խոսքեր լսելու առիթը ունինք Ձեր շնորհիվ»[1]։

Արխիվային փաստաթղթերում պահպանվում է Զոպանյանի գրած անթվակիր մի նամակի պատճենը, որից իմանում ենք, որ գիտաապրյան երկու աշխատակիցներ ցանկացել են Փարիզի Ազգային մատենադարանի հարստությունները Բևլին փոխադրել։ Ըստ երևույթին Զոպանյանի միջամտությունն էլ ունեցել է իր նշանակությունը այդ գործի ձախողման մեջ[2]։

«Հայ գաղթականաց կենդրոնական հանձնաժողովի» գծով Զոպանյանը ձեռնարկում է միջոցների հայթայթմանը և սննդամթերքի ու հագուստի առաքմանը ֆրանսահայ ու սովետահայ ռազմագերիներին[3]։

Գերմանական օկուպացիայի տարիներին Զոպանյանը իր առջև խնդիր էր դրել «ֆրանսահայ գաղութին շահերն ու իրավունքները այդ զարհուրելի փոթորիկին մեջ կարելի եղած չափով պաշտպանել»[4]։ Ավելին չէր էլ կարող անել յոթանասունամյա ծերունին, բնական մտքով ու սրտով համախոհ էր գործուն պայքարի բոցերի մեջ գտնվող մարտիկների հետ։ Ահա թե ինչպես է նա նկարագրում Մանուշյանի խմբի գնդակահարության հետ կապված մի դեպք.

«Իր և իր ընկերներուն գնդակահարությունեն հետո գերման գնստապան Փարիզի պատերուն վրա ամեն կողմ փակցուց մնծադիր խմբանկարներ գնդակահարված Մանուշյանին և մյուս «դիմադրող»-ներուն. այդ բազմաթիվ նկարները նպատակ ունեին

---

[1] ԳԱՐ, ՍԶՖ, IV բաժին, № 90։

[2] ԳԱՐ, ՍԶՖ, IV բաժին, № 1։

[3] Նույն տեղում, № 647։

[4] Նամականի, էջ 305։

այնպես մը ցույց տալու ֆրանսական հասարակության, թե բուն ֆրանսացիք չէին այդ հակադրման ցույցերուն ու հարձակումներուն հեղինակները, թե ֆրանսացիք պրեթե բոլորն ալ կուզեին գործակից գերմաններուն հետ և թե ընդդիմադիրները ամենամեծ մասամբ օտարներ էին: Այդ խմբանկարներուն կեդրոնը կը կազմեր Մանուշյանի դեմքը, որուն ներքև խոշոր տառերով նշանակված էր, թե ան օտար փարթիզաններու դեկավար հայ մըն էր և թե վաթսունն ավելի ահաբեկչական արարքներ կազմակերպած կամ վարած էր: Ես աքանչացումով կդիտեի այդ քաջարի երիտասարդին պատկերը և, հայրենակցի մը, որ անմտորեն ինծի կըսեր, թե այդ պատկերը Ֆրանսա ապաստանած հայոց կրնար վնասակար ըլլալ, կը պատասխանեի. «Մենք շատ չանցած պիտի պարծենանք այդ հոյակապ երիտասարդով»[1]:

Պատահական չէ, որ երբ պատերազմից հետո սիլիտքահայ թերթերից մեկը, թյուրիմացաբար, մեղադրում է «դաղթականաց հանձնաժողովին», թե իբր նա աջակցել է Դրոյին՝ արժանի պատժից խուսափելու հարցում, Զոպանյանը զայրույթով մերժում է նման մեղադրանքը. այդ բանը «վերագրել դաղթակ. կեղր. հանձնաժողովին,— գրում է նա,— որ ետրհ. Հայաստանի կողքին կանգնող, ներպաղթը ներբողող... արտասահմանյան հայ մարմին մը եղած է առաջին օրեն և այդպես մնացած է ցարդ, առավելևս անիմաստ է, այդպիսի վերագրում մը հերքման իսկ արժանի չէ»[2]:

Զոպանյանը, մասնավորապես, հպարտությամբ է շեշտում Սովետական Հայաստանի դերը «բռնության դեմ մղված համամարդկային մեծ պատերազմում[3]: Միևնույն ժամանակ նա քննադատում է դաշնակցական կուսակցության դավաճանական քաղաքականությունը, որը լծվել էր գերմանական ֆաշիզմի կառքին: «Դաշնակցությունը կրկնապես սխալ հաշիվ ըրած էր,— գրում է Զոպանյանը,— կարծելով, թե Գերմանիա պիտի հաղթե և ննջադրելով, որ հաղթական Գերմանիան անկախ Հայաստան մը պիտի ստեղծե,— ինչպես որ ատենով սխալ հաշիվ ըրած էր ուժ տալով Ժոնթուրքերուն, օգնելով անոնց հաղթանակին, որ հայոց ազգային դատին վնաս միայն կրնար բերել, ինչպես և բերավ ահավոր չափերով»[4]:

---

[1] «Անահիտ», ԺԲ տարի, 1946, թիվ 1, էջ 7:

[2] ԳԱԹ, ԱՀՖ, IV բաժին, № 212:

[3] Նույն տեղում, № 200:

[4] «Անահիտ», ԺԴ տարի, 1947, թ. 2, էջ 51:

Դեռևս 30-ական թվականներին Չոպանյանը ամենօրյա հրատարակություն ներկայացնող աշխատանքներին զուգահեռ նախանձելի եռանդով ու համառությամբ ձգտում էր գլուխ բերել «Վարպետների» ծրագիրը ամբողջությամբ: Նա աշխատում էր հնգաբաժան երեք հատորների վրա: Դրանցից մեկի նյութն էր «Ալեքսանդրի վեպը», մյուսը նվիրված էր հայ դասական (դրաբար) բանաստեղծությանը և վերջինը՝ ամբողջովին Գրիգոր Նարեկացուն: Արդեն պատերազմի նախօրեին Չոպանյանը բավականին նյութ էր կուտակել, հավաքել էր, մասնավորապես, անհրաժեշտ մանրանկարների վերարտադրությունները: «Վարպետների» ծրագրի ամբողջացման գաղափարը նա փայփայեց մինչև իր մահը ու այդպես էլ չկարողացավ իրագործել:

Այնուամենայնիվ, Չոպանյանին հաջողվեց լույս ընծայել մի քանի գրքեր: 1940 թվականին հրատարակում է «Պատկերներ» ժողովածուն և «Հայրեններու բուրաստան» դիրքը: Առաջինի մեջ հավաքված էին նախորդ շրջաններում գրված և հրատարակված պատմվածքները և արձակ բանաստեղծությունները: Երկրորդը պարունակում էր քույակյան տաղաշարքեր Չոպանյանի կողմից կատարված ճշտումներով, համեմատություններով հանդերձ: 1945 թվականին լույս է տեսնում «Կյանք և երազ» հատորը, էմիլ Վերհարնի առաջաբանով: Դա ֆրանսերեն նույնանուն հատորի հայկական տարբերակն էր: Հրատարակվում են նաև Չոպանյանի կազմած «Ակնա հայրեններ», ֆրանսերեն «Festival de Poesie et de Musique Armeniennes» գրքերը (1945) և իր հեղինակած «La Nation arménienne et son oeuvre culturelle» աշխատությունը (1945): Վերջին գրքի հայերեն թարգմանությունը՝ «Հայ ազգը և նրա հին մշակույթը», լույս է տեսնում 1946 թվականին, Փարիզում:

Ֆրանսիայի ազատագրումից հետո Չոպանյանը դարձյալ լծվում է մշակութային-հասարակական բեղուն գործունեության: Հետպատերազմյան տարիներին Չոպանյանն աշխատակցում է «Պայքար» և «Այս օր» թերթերին, հոդվածներով հանդես է գալիս տարբեր պարբերականներում, գրում և «Պայքարում» հրատարակում է իր հուշերի մի մասը: «Ամեն անկյուն գիրքերու բլուրներ՝ հատակին վրա դիզված, դարակներու մեջ շարված,

սեղաններու վրա դրված...»[1],— նկարագրում է Զոպանյանի բնակարանը Մաոի Ամմաճյանը։

Ֆրանս-հայկական միությունը, որի փոխնախագահն էր Ա. Զոպանյանը, 1945 թվականի ապրիլի 23-ին, Զոպանյանի գործուն մասնակցությամբ, կազմակերպում է հայ մշակույթի փառատոն Սորբոնի ամֆիթատրոնում։ Փառատոնը վեր է ածվում հայ բանաստեղծության, երգի, երաժշտության կատարյալ միտոնախմբության, յուրատեսակ արձագանք լինելով ֆաշիզմի դեմ տարած փայլուն հաղթանակին։ Պատահական չէ, որ այդ փառատոնին Զոպանյանը հանդես է գալիս՝ ընթերցելով ֆաշիզմի դեմ պայքարում զոհված կոմունիստ բանաստեղծ Ա. Սեմայի բանաստեղծությունները, որոնց ֆրանսերեն թարգմանությունը կատարել էր ինքը[2]։

Նույն տարում, դարձյալ ֆրանս-հայկական միության ջանքերով և անձնապես Զոպանյանի նախաձեռնությամբ, կազմակերպվում է հայ և ֆրանսիական մշակույթներին նվիրված մի երկրորդ փառատոն, որը տեղի է ունենում 1948 թվականի ապրիլի 18-ին և անցնում է մեծ հաջողությամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից գրեթե անմիջապես հետո ծայր առած ղանգվածային հայրենադարձը հայրենասիրական ոգևորության նոր աղբյուր է դառնում Զոպանյանի համար։ Նա իր գրիչը անմիջապես տրամադրում է այդ գործի կազմակերպման նպատակին։ «Խորհ. Հայաստանի կառավարությունը մեր ամբողջ ազգին երախտագիտությանը արժանի է...— գրում է նա։— Այդ ղանգվածեղ ներգաղթին ծախքերուն համար Երևանի կառավարության հանձն առած խոշոր զոհողությունները, Մոսկվայի կեդրոնական կառավարության քաղաքական և նյութական աջակցությունը... արտասահմանի հայության մեջ ներգաղթի համար արձանագրվողներուն հետզհետե աճող թիվը, որ քանի մը հարյուր հազարը պիտի անցնի, և այդ հսկա ներգաղթին (որուն նմանն ու հավասարը ոչնչ ժողովուրդի պատմության մեջ դեռ չէ տեսնված) ծախքերուն մասնակցելու համար արտասահմանի մեր գաղութներուն մեջ բացված հանգանակության աննախընթաց հաջողությունը (որմե ավելին

---

[1] ԴԱՔ, ԱՋՖ, 1 բաժին, № 109։

[2] Այս փառատոնի նյութները Զոպանյանը հրատարակում է «Festival de Poesie et de Musique Arméniennes», գրքում, Paris, 1945։

սակայն կը սպասենք ու կը հուսանք իրականացած տեսնել), այդ բոլորը ոևէ հայրենասեր հայու համար մխիթարար ու ոգևորիչ իրողություններ կը կազմեն»[1]:

Բնականաբար, պատերազմից նոր ելած, նյութական վիճակարի կորուստներ կրած և վերքերը դեռ չբուժած երկիրը կենսամակարդակի տեսակետից բավականին զիջում էր արտասահմանյան մի շարք երկրների: Այդ հանգամանքը նկատի ունենալով, Չոպանյանը հպարտությամբ ընդգծում է, որ հայրենադարձի ճանապարհը բռնած հայության ստվար մասը գիտակցաբար հայրենի հողի վրա ապրելու և գործելու անօրինակ քաղցրությունը նախընտրում է ամենից բարգավաճ, ամենից զարգացած երկրների հանգստավետ ու փայլուն կյանքից:

Հենց այս առիթով անհրաժեշտ է հիշատակել Չոպանյանի կենսագրության մի կարևոր մանրամասն: Նա ուներ բոլոր հնարավորությունները ֆրանսիական հպատակություն խնդրելու և անպատճառ ստանալու: Չոպանյանը, սակայն, մինչև կյանքի վերջը մնաց նանսենյան անձնագրով: Նույնիսկ, 1947 թվականին, իտալական կառավարությունը, որը խուսափում էր նանսենյան անձնագրով մարդիկ ընդունել երկրից ներս, մերժից մուտքի վիզա տալ Ա. Չոպանյանին, որ հրավիրված էր մասնակցելու «Բալմամվեպի» հարյուրամյակի տոնակատարությանը: Չոպանյանը պիտակցաբար չէր ուզում «հայ զաղթական ըլլալն դադրիլ և ֆրանսական քաղաքացի դառնալ», բայց, միևնույն ժամանակ, հպարտությամբ և կարոտով գրում էր «հայրենի հողին վրա ապրելու և գործելու անօրինակ քաղցրության» մասին: Ինչո՞վ բացատրել, որ նա չօգտվեց այդ առիթից ու մշտական բնակության չմեկնեց Հայրենիք: Չոպանյանը ինքը տալիս է այդ հարցի համոզիչ պատասխանը դեռևս 1934 թվականին: Նա գրում է.

«... եթե ուզեի հաստատվիլ հոն (Սովետական Հայաստանում — Կ. Դ.), ապահովապես ատ ալ պիտի դյուրացնեին, ինչպես դյուրացուցին հոն հաստատվիլը իմ ընկերներուս... կամ իմ եղբայրակիցներուս՝ Շիրվանզադեին ու Ավ. Իսահակյանին: Ճիշտ է, սակայն, որ այդ խնդրանքը ես չըրի ու չեի կրնար ընել, որովհետև ինչ որ կրնամ ես ընել Հայաստանի մեջ, բավմաթիվ են անոնք, որ առիկա շատ լավ կրնեն հոն: Մինչդեռ ինչ որ տասնեակի ի վեր ես կընեմ Փարիզի մեջ՝ հայ պրականության ու ար-

[1] «Անահիտ», ԻԴ տարի, 1947, թիվ 1, էջ 60:

վեստը արևմտյան մեծ ժողովուրդներուն հանչցնելու, Եվրոպայի մտավոր վարպետներու և հայ ժողովրդին գրականության ու դատին միջև կապ հաստիանալու, եվրոպական մշակույթը մեր ժողովուրդին ծանոթացնելու գործին աջակցելու համար, բավ-մաթիվ չեն ատիկա ընողները:

... Մեր հայրենիքը իր այժմյան ճշմարիտ դեմքով, իր բուն արժեքով ու նշանակությամբ... արտասահմանի հարյուր հազարավոր պանդուխտ հայերուն ճանչցնելու և սիրցնելու, վրացյանական մաղձաթաթախ բամբասողներու դեմ անոր իրական արժանիքները պաշտպանելու, գաղթահայությունը այդ կենդանի ու գործուն հայրենիքին մեջ կատարված կենսական աշխատանքին աջակցիլ հրավիրելու գործը գրեթե նույնքան կարևոր է, ներկա րոպեին, որքան այն գործը, զոր մեր մտավորական եղբայրները մեր հայրենիքին մեջ կը կատարեն»[1]:

1947 թվականի մայիսի 24-ին Չոպանյանը նախագահում է Հակոբ Օշականի գրական գործունեության 40-ամյա հոբելյանին, մինչ այդ, բնականաբար, լծված լինելով նախապատրաստական աշխատանքներին: Մեկ ամիս անց, հուլիսի 1-ին վալանսում բանախոսում է գրական երեկույթում, նյութ ունենալով Վ. Թեքեյանի և Ե. Չարենցի ստեղծագործությունը: 1949 թվականի աշնանից Չոպանյանը սկսում է կազմակերպել Անդրանիկ Զորավարի գրական գործունեության 60-ամյա հոբելյանը, որին և նախագահում է 1950 թվականի մարտի 13-ին:

Շուտով սիլուքահայությունը, երրորդ անգամ, կատարում է Արշակ Չոպանյանի հոբելյանը: Նրա 65-ամյա գրական-հասարակական գործունեությունը Փարիզում նշվում է 1950 թվականի մայիսի 14-ին, Սորբոնի ամֆիթատրոնում: Հոբելյանական հանձնաժողովի նախագահն էր Արտավազդ Մյուսմելյանը:

Հոբելյանական տոնահանդեսների կազմակերպումը Չոպանյանի համար առավել նշանակություն ուներ գրամական միջոցներ հայթայթելու տեսակետից: Նրա բաղում ծրագրերը մնում էին թղթի և անկատար: Մինչդեռ ծայրաստիճան աղքատությունը կյանքի վերջին տարիներին հատկապես ցցուն էր դարձել:

1950 թվականի սկզբներին հրատարակվում է նրա բանաստեղծությունների ժողովածուն, այդ առթիվ նա գրում է Անդրանիկ Անդրեասյանին, որ առանց Գարեգին եպիսկոպոս Խաչատրե-

[1] «Անահիտ», 6 տարի, 1934, թիվ 5—6, էջ 64—65:

յանի բացած հանգանակության հավաքածուն հրատարակել հնարավոր չէր լինի[1]: Չոպանյանի մտերիմներն ու բարեկամները հնարավորին չափով օժանդակում էին նրան, առանց արժանապատվությունը վիրավորող քայլեր թույլատրելու: Նրանցից մեկը, օրինակ, խոշոր գիտնական Գարեգին Հովսեփյանը, որ այդ ժամանակ Կիլիկիայի կաթողիկոսն էր, Արշակ Չոպանյանին մի քանի ամսով Բեյրութ է հրավիրում որպես իր հյուրը: 1952 թվականի ամռանից մինչև 1953-ի գարունը Չոպանյանը մնում է Լիբանանում և Սիրիայում: Նրա նյութական ծանր կացության մասին պատկերացում կազմելու համար բավական է հիշել այն խոր հուզումը, որ նա ապրում է, երբ Բեյրութի դերձակներից մեկը նրան մի նոր կոստյում է նվիրում, իսկ «Տոնիկյան» հրատարակչականը տպագրում է նրա «Հրաշք» թատերախաղը և 100 օրինակ նվիրում հեղինակին[2]:

1954 թվականի հունիսի 9-ին, 82 տարիական հասակում, Արշակ Չոպանյանը գոհ է գնում գժրախտ պատահարի՝ ավտոմեքենայի արկածի: Նրա աճյունը փարիզահայության մեծ ղանգված կազմող հուղարկավորությամբ հողին է հանձնվում Փարիզի հայ մշակույթի գործիչների պանթեոնում:

1934 թվականին, երբ նա գրում էր, թե կուզեր վերջին տարիները ապրել Հայրենիքում, այնուհետև ավելացնում էր՝ «որպեսզի ապահով ըլլամ, թե պանդուխտ ծնած, պանդուխտ ապրած ոսկորներս պիտի կարենանք հանգչիլ մեր մոնմայիճ հիճավուրց հողին մեջ, ուր կը բնանան մեր ազգը կերտող ու դարերու ընթացքին զայն պահպանող ու զարգացնող նախահայրերս»:

Սփյուռքահայ գործիչների և Սովետական Հայաստանի կառավարության ջանքերով Արշակ Չոպանյանի բազմահարուստ արխիվը փոխադրվեց Երևան ու հանձնվեց պետության խնամքին և ապահով պահպանության:

* * *

Դրվեց Ա. Չոպանյանի կյանքի ու գործի շարադրման վերջին կետը, ու անմիջապես հարց է ծառանում. եթե հակիրճ ամփոփումով փորձենք գնահատել, ապա ո՞րն է նրա ղբաղեցրած տեղը

---

[1] ԳԱԹ, Անդ. Անդրեասյանի ֆոնդ, Ա. Չոպանյանի նամակը Ա. Անդրեասյանին, 18 օգոստոս, 1950:

[1] ԳԱԹ, ԱՉՖ, IV բաժին, № 888:

մեր մշակույթի պատմության հոլովույթում, ինչ ծանրակշիռ ավանդ մուծեց նա հայ ժողովրդի կողմից աշխարհի հասարակական-քաղաքական թե կուլտուրական յուրացման մեջ, նրա պատմության ամենավճռական ժամանակահատվածներից մեկում։

Վ. Ի. Լենինը մի առիթով ասել է. «Պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ինչ շեն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»[1]։

19-րդ դարի կեսերին հայ ժողովրդի կյանքի իսկ բերումով նրա առջև ծառացել էր վիթխարի նշանակության հասարակական պատվեր։ Ո՞րը պետք է լինի նրա քաղաքական պատմության զարգացման հետագա ընթացքը։ Աբովյանին վիճակվեց այդ պատվերի կատարումը։

Աբովյանով սկսվեց այն նոր դարաշրջանը, որը մայրուղի հարթեց դեպի հայ ժողովրդի՝ որպես ազգ ձևավորման, համապատասխանաբար, նրա ամբողջ սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի վերափոխման պրոցեսը։ Նա առաջինը ձեռնամուխ եղավ նոր պայմաններում ժողովրդի քաղաքական լուսավորությանը, դաստիարակելով նրա միտքն ու հատկապես հոգեբանությունը՝ պատմությամբ։ Եվ այդ գործի հիմնական ատաղձը ռուսական կողմնորոշումն էր, ռուս ժողովրդի հետ հավիտենական բարեկամության անջնջելի հավատարմություն։

Վերջին հաշվով Աբովյանից, որպես ազգային հողից, սերվեցին Մ. Նալբանդյանն ու Հ. Սվաճյանը, արևելահայ թե արևմտահայ դեմոկրատական շարժման դարավերջի գործիչները, այդ թվում և Ա. Ջոպանյանը։ Նրանց գործը այլ բան չէր, քան հեղափոխական պայքար տիրող ավատական կարգերի դեմ դաղափարախոսական բոլոր մատչելի ճակատներում։ Նրանք եղան աշխատավոր գյուղացիության, այսինքն՝ ժամանակի միակ հեղափոխական դասակարգի և քաղաքի արհեստավորական-աշխատավորական զանգվածի բուրժուա-դեմոկրատական գաղափարախոսները և իրենց ամբողջ կյանքով ու գործունեությամբ օբյեկտիվորեն նպաստեցին հայ ժողովրդի ազգային կոնսոլիդացիային, այն «ինտելեկտուալ կապիտալի» նախնական կուտակմանը, որը Հայաստան աշխարհ բուրժուական արտադրահարա-

[1] Վ. Ի. Լենին, *Սբ.*, հ. 2, էջ 220։

բերությունների ներթափանցմանը դուրսից կոչված էր արագացնելու աղդի ձևավորումը, բառիս մարքսիստական իմբռնումով:

Անշուշտ, նույնը չէին պայմանները Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում, բայց երկուսում էլ, անողոք պատմության բերումով, սրատված էին ժողովրդի դարավոր մշակույթի կապերը, և հայ մարդը իրեն գտել էր անթափանցելի խավարի պայմաններում, որտեղ, կղերականների սիրապետությամբ, հենց արմատից կասեցվում էր որևէ առաջադիմական միտք ու գաղափար:

Եվ, ասես պատմության անդիմադրելի օրինաչափությամբ ու ժամանակի կանչով, ասպարեզ պիտի եկնեին տարբեր բնագավառների գործիչներ, վեր հանելու համար մեր մտավոր ու հոգևոր արտադրության գանձարանը, ժողովրդին տալու համար ինքնաճանաչման և ինքնահաստատման հզոր փաստարկներ ու անխորտակելի խարիսխ: Գարեգին Սրվանձտյանի ջանքերով վերակենդանացավ «Ասենա ծոներ» ժողովրդական էպոսը, Հովհ. Թումանյանի երևումով ասես վերընձյուղվեց մեր գրականության դարավոր կաղնին, Կոմիտասը հատիկ առ հատիկ հավաքեց ժողովրդական երգերը և դարձավ մեր ազգային երաժշտության նահապետը, Թորոս Թորամանյանը ամբողջական համակարգի վերածեց ճարտարապետական ժառանգությունը, Գարեգին Հովսեփյանը շռայլորեն բացեց մեր մանրանկարչության վիթխարի ծրարը, Մարտիրոս Սարյանի վրձնով մեր գեղանկարչությունը պիտի հաստատվեր իր կենսահաստատ արևաբույրով և այլն, և այլն: Եվ, վերջապես, պիտի հրապարակ գար Արշակ Չոպանյանը, որպեսզի պնդեր, մեր իսկ, էլ չասենք քաղաքակիրթ աշխարհի, զարմացած հայացքի առջև առաստաձեռն փռեր միջնադարյան հայ քնարերգության երփներանգը:

Հիրավի, տարբեր էին պայմանները Հայաստանի երկու աշխարհագրական հատվածներում: Ռուսաստանին միացումով Արևելյան Հայաստանում ստեղծվել էր ֆիզիկական գոյատևման, արտադրողական ուժերի զարգացման, սոցիալ-տնտեսական կյանքի անհամեմատ նպաստավոր իրադրություն: Արևմտյան Հայաստանում տիրում էր և օրավուր ավելի դաժան, վայրագ ձևեր ընդունում ազգային-սոցիալական ճնշումը, բացարձակ իրավազրկություն:

Հայ ժողովրդի այդ հատվածի ազատագրական պայքարի անավարտությունը միշտ օրակարգի հիմնական հարց էր պահում քաղաքական կողմնորոշման խնդիրը, որը ի վերջո եղավ գլխավորը հասարակական-քաղաքական հոսանքների ու անհատների գործունեության մեջ մինչև այն պահը, երբ երիտթուրքական վերնախավը պարզապես սրատեց «հայկական հարց» կոչվող գորդյան հանգույցը։

Ա. Զոպանյանն էր, որ ի սկզբանե ու անվարան կանգնեց դեպի Ռուսաստան կողմնորոշվելու կենսական գծանի վրա, համարձակությունը և իմաստությունը ունենալով բացահայտ հրապարակային քննադատությամբ մատնացույց անելու այլազան ուժերի սխալներն ու արկածախնդրությունը, դրանց անդարմանելի հետևանքները արևմտահայության կյանքում։

Նրա քաղաքական ծրագրի հիմնական կետը դարձավ հայ մշակույթի պրոպագանդը քաղաքակիրթ երկրներում։ Եվ այդ կետի մարմնավորմանը տրվեց անմնացորդ ու առանց ետկարկելու, եղակի դիրք դրավելով մեր մշակույթի ամբողջ պատմության մեջ,

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակով բացվող նոր դարաշրջանը նշանավորեց հայ ժողովրդի քաղաքական պատմության զարդացման նոր որակը։ Բնականաբար, նորովի դրվեցին հարցերը նաև հայկական սփյուռքում։ Եվ դարձյալ Արշակ Զոպանյանն էր առաջիններից մեկը, որ իմաստությունն ունենալով մշակելու և փարվելու քաղաքական նոր ծրագրի, որի ողնաշարը քաղաքական կողմնորոշումն էր դեպի Սովետական Հայաստանը, վիթխարի ջանքերը՝ սփյուռքահայության համախմբելու նրա շուրջ, առանց երկնչելու պայքարը թշնամական ու հակառակորդ բոլոր ուժերի դեմ։ Արշակ Զոպանյանը եղավ մայր հայրենիքի ամենամեծ ու նվիրյալ բարեկամներից մեկը, իր բարձր հեղինակությամբ, անխորտակելի կամքով, անսպառ եռանդով իր հետևից տանելով սփյուռքահայության մեծ զանգվածներին, նրանց հայացքը գամելով Սովետական Սոցիալիստական Հայաստանին, որպես «աղբյուրը լույսի»։

ՅԱՆԿ

Նախաբան 3:

Համիդյան ռեակցիայի տարիներին

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ: Ուսումնառություն 8:
ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Արևմտահայ ՏՕ-ականները 26
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Գրական սկզբնավորությունը 36
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ: «Մաղիկ» հանդեսը 64
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Հասարակական գործունեության սկիզբը Փարիզում 92

«Անահիտ» հանդեսի շրջանում

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: «Անահիտի» ծրագիրը 107
ՅՈՓԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Հետադարձ հայացք հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ուղու վրա: 113
ՈՒՓԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Դարաբկրի միջազգային հարաբերությունների գնահատականը և Զոպանյանի հայացքները ազգային-ազատագրական պայքարի հետագա ուղիների վերաբերյալ: 126
ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Ռուսական, եվրոպական և արևելյան մշակույթների պրոպագանդը հանդեսում: 151
ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Հայ հին ու նոր գրականության արժեքները ժողովրդին: 177
ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Արևմտահայ ժամանակակից գրականությունը «Անահիտում»: 223
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Հայ արվեստը: Առաջին շրջանի «Անահիտի» դատաստանը: 269
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Հասարակական-պրոպագանդիստական գործունեությունը: Հայ մշակույթի տարածումը Եվրոպայում: . . . 293

Առաջին համաշխարհային պատերազմի և ժամանակակից սվյուռքի ձևավորման տարիներին:

ՏԱՍՆՋՈՐՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Քաղաքական գործունեության նոր փուլը 319
ՏԱՍՆՀԻՆԳՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Գրականությունը պայքարի ղնդր . . 338

Նոր հանապարհի սկզբին

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Շրջադարձ դեպի Սովետական Հայաստան 364
ՏԱՍՆՅՈՓԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Մասնակցություն Հայաստանի օգնության գործին 381
ՏԱՍՆՈՒՓԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Թևրեվոլ կենսագրության էջերը . . 388
ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Գրականության և արվեստի նոր վերելքի համար 397

«Անահիտի» նոր շրջանը և Զոպանյանի կյանքի վերջին տարիները

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: «Հանդես մտածման և արվեստի» . . . 414
ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Սովետական Հայաստանի անկեղծ բարեկամը 420
ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Գրականության հարցերը . . . 433
ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ: Կյանքի տարեգրության վերջին էջերը 459

Կարլեն Լևոնի Դալլաքյան

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

(Կյանքը և գործը)

Карлен Левонович Даллакян
АРШАК ЧОПАНЯН
(Жизнь и деятельность)

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1987

Խմբագիր՝ Շ. Ա. Դրիգորյան
Նկարիչ՝ Կ. Մարտիրոսյան
Գեղ. խմբագիր՝ Դ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ե. Վ. Ալգայան

ИБ 5762

Հանձնված է շարվածքի՝ 24. 07. 86։
Ստորագրված է տպագրության՝ 22. 12. 86։ ՎՖ 03625։
Ձորմատ՝ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Դրքի սովորական»։
Տպագրություն՝ բարձր, 25,2 պայմ. մամ., 24,1 հրատ. մամ.+1 ներդիր։
Տպաքանակ՝ 15000։ Պատվեր՝ 2072։ Գինը՝ 1 ռ. 80 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մնգապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

E 2 3 2 5

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

A II
75881